ԱԼՄԱՍՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ԿՅԱՆՔԸ, ԳՈՐԾԸ, ԺԱՄԱՆԱԿԸ

ԳԻՐՔ 2

ԵՐԵՎԱՆ - 2003

ДУБЛЕТ

ԱԼՄԱՍՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Կյանքը, գործը, ժամանակը

Գիրք 2

Սույն եռահատոր աշխատությունը ստեղծվել է
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտում

A 11/89/30

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

ՀԳՄ հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ 891.981.0
ԳՄԴ 83.3Հ7
Զ 282ղ

Գիրքը հրատարակվել է պետական պատվերով

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ
ՉԱՐԵՆՑԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ,
ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ,
ՄՐԲԱԶԱՆ ԱՐՑԱԽԻՆ...

Խմբագիր՝ Սերգեյ Սարինյան

Զաքարյան Ա. Գ.
Զ 282ղ «Եղիշե Չարենց. կյանքը, գործը, ժամանակը»:– Եր., ՀԳՄ հրատարակչություն, 2003, 432 էջ:

Սույն հատորը շարունակություն է 1997 թ. հրատարակված առաջին գրքի: Երկրորդ գրքում արդեն՝ Չարենցն է 1923-ի հունվարից 1925-ի կեսեր ընկած ժամանակամիջոցով. դարձյալ ստեղծագործական, փաստական-հուշագրական... վկայակոչումներով ու քննական հիմնավորումներով ներկայացված են Արցախյան հարցերից՝ համուն ՀՕԿ-ի ու ներգաղթի բանաստեղծի արտասահմանյան ուղևորության (առայժմ՝ Կ. Պոլիս, Աթենք, Հռոմ...) իրադարձությունները:

Զ $\frac{4603020102}{0180(01) - 2003}$ 2003

ԳՄԴ 83.3Հ7

ISBN 99941 - 34 - 26 - 4

© Ա. Զաքարյան, 2003

Պատմականն ամեն փաստ անհրաժեշտ է պարզաբանել մարդկայնորեն և խուսափել քարացած արտահայտություններից:

Պատմությունը որպես բնաբան ես կգրեի. «Ոչինչ չեմ թաքցնում»: Քիչ է թե ուղղակի չստել, հարկավոր է ջանալ չստել՝ բացառելով լռելը...

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

ԽՄԲԱԳՐԻ ԽՈՍՔԸ

Պատմությունը հետո է միայն դառնում օբյեկտիվ փաստ, իսկ որպես ստեղծում մշտապես ունի սուբյեկտիվ սկիզբ: Սա մեթոդաբանական հարց է, և ես կարևոր եմ համարում հիշեցումը, քանզի մեր հասարակագիտական միտքը տասնամյակներ շարունակ ընտելացել է «օբյեկտիվ օրինաչափության» բանաձևերին և, տրամաբանական բառակույտերի մեջ դասավորելով դեմքերն ու դեպքերը, աղավաղել է պատմության ստեղծումի, հիրավի, զարմանահրաշ հեքիաթը:

Ամենից առաջ հենց այստեղ եմ ես դիտում Ալմաստ Զաքարյանի «Եղիշե Չարենց. Կյանքը, գործը, ժամանակը» աշխատության գիտական արժեքը: Նման հիմնարար հետազոտությունները բնականորեն չէ, որ ստեղծվում են և պատահական ընտրությամբ չէ, որ կարող են ստեղծվել: Դրա համար անհրաժեշտ է նախադրյալների մի որոշ միասնություն՝ համակողմանի գիտելիքներ, մտավոր զարգացում, ձևավորված աշխարհայացք և անանձնական նվիրում: Այստեղ է «վիճակագրական գրականագիտության» գիտական կուլտուրայի այն մակարդակը, որին դեռ պետք է հասնի գրականության մասին մեր գիտությունը:

Վաղ թե ուշ գրողը պետք է գտներ իր հետազոտողին, և Ալմաստ Զաքարյանը պատժվեց ճակատագրով: 60–ական թվականներին իրագործելով Չարենցի երկերի վեցհատորյա ակադեմիական հրատարակությունը, նա, ճիշտ է, հետագայում անմասն չմնաց գրականագիտական ու քննադատական նորանոր հրապարակումներից («20- րդ դարի սկզբի հայոց բանաստեղծությունը» երկու հատորով), այնուամենայնիվ իր որոնումների կիզակետում մշտապես ունեցավ Չարենցի ֆենոմենը և դարձրեց այն իր կյանքի գործը:

Եվ այսպես, ահա, առաջին ստվար հատորը՝ 966 էջ, Չարենցի կյանքի տարեգրությունը մինչև 1922 թվականը: Բայց դա տարեգրություն չէ սովորական տարբերակով: Նրա էջերում շարժման մեջ է դրված հայոց ժամանակը՝ բեկված հանճարեղ անհատի զգացողություններում և քանի որ բեկված էր իրոք հանճարի զգացողություններում, ուսյի և գրավիչ է առեղծվածների իմացաբանական հայտնություններով: Պետք է դիտել միայն, թե գրականագետի տիրապետող գրիչն ինչպիսի հմտությամբ է շարադասում փաստերը և իմպրովիզացիաների ազատ տողանցումներով հյուսում պատմության ավանդավեպը, որի հուշիկներից ծնունդ են առնում Չարենցի բառը, տողը, բանաստեղծությունը՝ հայոց ճակատագրի տառապանքի ու մաքառման տիեզերական արձագանքները:

Գիտեմ, կգտնվեն կասկածամիտներ, որոնք տողեր կընտրեն ու հարցականներ կդնեն գրքի լուսանցքներում: Ես դա նվիրում եմ գրականությամբ զբաղվող էմպիրիկների սիրողական հաճույքին: Էականը շարունակությունն է, Չարենցի ապրած և չապրած տարիների լեգենդը՝ այնքա՜ն լեցուն դրամատիկ անցումներով, հույսերով ու հուսախաբություններով, հավատարմության դավադիր հետապնդումներով, հանճարի տիտանական բռնկումներով ու ողբերգական վերջաբանով:

Ալմաստ Զաքարյանը հայ գրականագիտության առաջատար դեմքերից է, և նրա վաստակն արժանի է բարձր գնահատականի:

1997

* * *

Սա խմբագրի իմ խոսքն է Ալմաստ Զաքարյանի «Եղիշե Չարենց. Կյանքը, գործը, ժամանակը» աշխատության առաջին հատորին: Եվ այժմ, երբ առկա է երկրորդ գիրքը, վերստին սիրով կրկնեմ, որ նման հետազոտությունների հեղինակները նախանշված են անհատական ընտրությամբ: Գրել՝ նշանակում է պատմել, իսկ պատմելը դժվարին արվեստ է՝ լինել ժամանակագիր, միացնել ներքին շարժման բոլոր օղակները և ստեղծել «պատմության արարումի զարմանահրաշ հեքիաթը»: Այդ հեքիաթում օբյեկտը և սուբյեկտը ներհյուսված են զարմանալի ընդհանրությամբ: Ժամանակը (օբյեկտը) դարբնում է պատմությունը, իսկ բանաստեղծը (սուբյեկտը) գիտակցում է այն և մեկնում նրա իմաստը: Նրանք գրեթե նույնարժեք են, և ազգային հանճարի կենսագրության միջով անցնում, մաքրվում, իմաստավորվում է հայոց պատմության փիլիսոփայությունը: Իրերի այս համադրության մեջ է Ալմաստ Զաքարյանի գիտական ոճի գրավչությունն ու ճանաչման հաճույքը:

Գիրքը ընդգրկում է Չարենցի կենսագրության 1923–1925 թվականները: Հետազոտողի տեսադաշտում են ժամանակի գրեթե բոլոր իրադարձությունները և գրողի ճակատագիրը՝ սոցիալական, քաղաքական ու գաղափարական բարդ ու խճճված հանգամանքների կիզակետում, ուր պատմության փլատակներից Երկիր Նաիրի էր կերտում անզուգական Ալեքսանդր Մյասնիկյանը: Այստեղ հանդես ունեն ժամանակի գրեթե բոլոր գրական ու հասարակական գործիչները, որոնք իրենց դերն են կատարում ձևավորվող «նոր կարգերի» կրկեսում և Չարենցի հետ ունեցած հարաբերություններում գաղտնազերծում իրենց վարքի բարոյականը: Գրականագետը քննական հայացքի տակ է առնում իրերի շարժումը, վերանայում տեսակետներ, դեպքերն ու դեմքերը ենթարկում ուղղամիտ գնահատականի, շատ հաճախ ցրելով հայտնի թե անհայտ անունների միֆը: Կարող է վիճել և անգամ անարդար թվալ առանձին գործիչների վերաբերյալ գրականագետի բնութագրերը, և ես չեմ բացառում մոտեցման երկրորդ տարբերակ: Բայց խնդիրն այն է, որ Ալմաստ Զաքարյանը երևույթը հիմնավորում է փաստերի տրամաբանությամբ և իրերը գնահատում գիտական մի որոշակի աշխարհայեցողությամբ, որը ինքնին արդեն տեսակետ է: Այս իմաստով նրա աշխատության բնագիրը ենթակա չէ խմբագրական միջամտության:

Նույնը վերաբերում է նաև Չարենցի ստեղծագործության վերագնահատության հարցին: Գրականագետը առաջադրում է բնագրային նոր ընթերցում և ըստ այդմ վերանայում դիդակտիկ գրականագիտության լրագրային ոճին յուրահատուկ նորմատիվ սահմանումների ու Չարենցի պոետիկայի գեղագիտական ու գաղափարական բանաձևերի ժամանակային չափանիշները: Այլ է ժամանակի ստանդարտը ուղեկից գրողի ընկալմամբ, և միանգամայն այլ հանճարի զգացողություններում: Եվ եթե ուղղագիծ մեկնությամբ թվում է թե անառարկելի է Չարենցի «տուրքը» ֆուտուրիզմին, լենինիանային, գրական այս կամ այն «դեկլարացիային», ապա այս պարագայում Ալմաստ Զաքարյանը հայտնաբերում է փաստի այլաբանությունը հանճարի ինտուիցիայում: Սա մեթոդաբանական կարևոր մեկնակետ է, որին ձգտում է ակադեմիական գրականագիտությունը:

Եվ այսպես. Չարենցի կենսագրության ժամանակը մինչև 1925 թվականը: Իսկ շարունակությո՞ւնը՝ շուրջ տասներկու տարի: Եվ ի՜նչ տարիներ՝ արկածներով լեցուն, հանգամանքներով խճճված, անձնական ու անանձնական մտահոգություններով ծանրաբեռ: Հիմքն այնքան ամուր է դրված և հայացքի ուղղությունն այնքան որոշակի է, որ արդեն կարելի է գուշակել հետազոտության ավարտը:

Դա կլինի նաև Ալմաստ Զաքարյանի «կյանքի գիրքը»:

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ

1923 ԹՎԱԿԱՆ
ԱՐՑԱԽՑԱՆ ՀԱՐՑԻ ԽԱՉՈՒՂԻՆԵՐՈՒՄ

Բանաստեղծները չճանաչված քաղաքագետներն են:
Շելլի

Սադրիչ նոր իրադարձությունների շեմին

*Բոլոր առումներով, բոլոր չափումներով Չարենցի 1923-ի օրերն ու վաստակները պարտավոր ենք սկսել «Մոսկվա, 1 հունվարի, 1923» տարեթվով՝ «Ա-***մենասիրելի Հով. Թումանյան»** *դիմումով և վեհաշուք-վշտաշունչ տոնայնությամբ շարադրված՝ բոլոր բառերով, նշաններով, խորքային ծալքերով, իմաստներով և նրբիմաստներով խոսուն նամակով: Ուրեմն և պարտավոր ենք քաղել ամբողջությամբ*[1].

«Խորապես ցավում եմ, որ հնարավորություն չունեմ անցնել Ձեզ մոտ և ամենախորին հարգանքներս բերել Ձեզ, մեր խոսքի ամենամեծ վարպետին, մեր ամենասիրելի պոետին: Այսօր ժամը չորսին ես Ալեքսանդր Մյասնիկյանի հետ մեկնում եմ Երևան, գնում եմ մեր երկիրը[2]*, խորապես համոզված լինելով, որ միմիայն այնտեղ, մեր հայրենի եզերքում մենք պիտի հնարավորություն ունենանք ստեղծելու.*

---

[1] Գրքում քաղվածքները Չարենցի Երկերի ժողովածուի վեցհատորյակից (1962–1968) նշված են Եժ համառոտմամբ. բնագրում միայն հատորով և էջերով: Անտիպ և չհավաքված երկերը (1988) նշված է՝ Անտիպ և ... համապատասխան էջերով:

Եթե հրատարակության վայրը Երևանն է՝ առանձնաբար նշված չէ:

[2] Բայց. ուրեմն և խոսքը նախ տանք Հայրենիքի իրավիճակին. այսպես.

«Եվ 1921 հունվարի վերջերը կատարվեցավ, բայց հայ ազգերու ընդհանուր ձեռնարկության եւ տարագրության հետեւանքով հալածված, եւ փետր. 18-ին պայթած ապստամբության ներկա է Բեհաեդդին Շաքիր, որ փետր. 18–24 Ս. Վրացյանի այցելությունը կրկնում է:

Բնականաբար, այդ այցելության միջոցին Ս. Վրացյան պարծանքով եկած էր հայտարարելու, թե գլուխ հանած էր ծրագրված անակնկալ դեպքը, ապստամբությունը. եւ այդպիսով ինք հարգած էր իր խոստումը, եւ խրախուսիք ունէր ակնկալելու, որ Թուրքիա ալ հարգէ Ալեքսանդրապոլի դաշնագրին 5-րդ հոդվածով իր համաձայնությունը: Բեհաեդդին կվստահեցնէ Վրացյանը, թե «իր կառավարությունը համակրանոք հետեւում է այդ հերոսամարտին», ցավ կհայտնէ, որ «Հայ ազգային բանակը» զրկված է շնորհիվ սոցյալական աջակցի, թե «իր կառավարությու-նը Հայաստանի Փրկության Կոմիտեն կճանչնա իբր օրինավոր եւ միակ կառավարություն», թե հետեւաբար «Անգորան չպիտի վարանի ռազմական օգնության գալ Փրկության Կոմիտեին

մեր կուլտուրան, մեր գրական կուլտուրան, որը պետք է բխի Ձեր ստեղծագործության, որպես տեղական ստեղծագործության տրադիցիաներից: Դառը սրտով գնում եմ այստեղից, ցավելով, որ հնարավորություն չունեմ Ձեզ մոտ լինելու և հետևելու Ձեր ամոքմանը, նախրյան խոսքի ավագ Նահապետի ամոքմանը, որից գևո ինքա՞ն իմաստուն և ինքա՞ն լիքը սպասումներ ունի Հայրենի երկիրը:

Սիրելի Թումանյան, ես խորապես հավատում եմ, որ Դուք կառողջանաք, կկազդուրվեք և կնվիրեք մեզ Ձեր «Հազարան բլբուլը», որի մասին լսել եմ ես մանկությունից և սրտատրոփ սպասում եմ կատարմանը: Ընդունեք իմ, Ձեր կրտսերագույն աշակերտի ամենաջերմ հարգանքները, հավատացած եղեք, որ ես Երևանում սրտատրոփ պիտի սպասեմ Ձեր վերադառնալուն և պիտի գամ Թիֆլիս իմ անհուն ակնածանքը բերելու Ձեր վաստակած և իմաստուն կյանքին, որ նվիրել է Հայրենի երկրքին այնքան «չռայլ» ձեռքով հոգեկան բարիքներ ու գանձեր:

Նորից և նորից ցանկանում եմ Ձեզ լիակատար առողջություն, համբուրում եմ Ձեր վաստակած ձեռքը:

Ձեր՝ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ[3] (6, 396–397)

1921 փետր. 18-ի ապստամբության օրերուն Բեհաեդդին Շաքիրի ներկայությունը Երեւանի մեջ եւ շարունակական տեսակցությունները Ս. Վրացյանի հետ ապացույց մըն են, թե Ալեքսանդրապոլի դաշնագիրը եւ փետր. 18-ի ապստամբությունը կանխամտածված շարունակությունն են մեկը միուսին եւ իրարու շաղկապված նիրքնապես: Ասոր ապացույցը կրնա նկատվիլ Վրացյանի սա հեռագիրը, զոր ուղղեց մարտ 15-ին Թուրքիո «Ազգ. Մեծ ժողովի արտաքին գործերի կոմիսարին». «Ազատվելով բոլշեւիզմի անունով Հայաստան մտած օտար լծից, Հայաստանի ժողովուրդը լիքն է կորուկ վճռականությամբ ապրելու ազատ եւ անկախ, եւ ամենամոտիկ բարեկամական հարաբերություններ ստեղծելու իր հարեւանների, առաջին հերթին տաճիկ ժողովրդի հետ, իմ կառավարությունը Տաճկաստանի եւ Հայաստանի ազգային նորմալ եւ բարեկամական հարաբերություններ սկսելու բազա է համարում այն պայմանները, որոնք ձեւակերպված են անցյալ տարվա դեկտ. 2-ին Ալեքսանդրապոլում կնքված հայ-տաճկական դաշնագրի մեջ, եւ հետագային ստեղծված իրական պայմանները»: Կարաբեքիր եւ Բեհաեդդին Շաքիր այդ դավադրական ապստամբությամբ հասած էին իրենց նպատակներուն մեկ մասին»:

Մ. ՍԵՐՈԲՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ, ԿԱՀԻՐԵ, 1950 թ.:

Տե՛ս Հայկական ժամանակ (օրաթերթ), 2002, սեպտեմբեր 28

[1] Գրականագետների միջավայրում երբեմն խոսք է լինում, թե Թումանյանը բացասական վերաբերմունքով տեղյակ է եղել 3-ի դեկլարացիային և այդ առիթով էլ իմացել է Չարենցին: Անտեղի վերապահություն. 1919–1923 թթ. «Նորամուտ» բանաստեղծի գնահատողներն են եղել հերթականորեն Աղբալյանը, Շանթը, Դեմիրճյանը... Ուրեմն և անկարելի է՝ թեկուզ երեքից մեկի պատմածով Թումանյանը իմացած չլինի «Նորամուտ» բանաստեղծին: Գումարած 1919–1921-ի միջոցին Երևանում եղած զավակները, կամ նրանցից մեկն ու մեկը, ասենք՝ Համլիկը: Այդ են հաստատում և 1921-ի հունիսի 8-ի իր 9-րդ դասախոսության համար Դ. Դեմիրճյանի ուսուցիչով շարադրված թեզիսների 3, 4, 5, 6, 7 կետերը. այն է՝ «Поэзия Ованеса Туманяна, Аветика Исаакяна, Вагана Теряна и Егише Чаренца. а) Условия и основные моменты их творчества, б) психологическая основа их творчества, с) эстетический анализ их творчества... 7) Армянский народ в народной поэзии, в армянском эпосе и в литературе». ԳԱԹ Հայք աստղագիտային արխիվ, թիվ 155–159:

Եվ այսպես. 1923-ի հունվարի 1-ին Ալ. Մյասնիկյանը և Եղիշե Չարենցը միասին Մոսկվայից ճանապարհվում են Երևան: Ճանապարհվում են 1922-ի դեկտեմբերի 30-ի խորհուրդների առաջին համագումարում հռչակված ԽՍՀՄ-ի կազմավորումից հետո, որին նախորդել էր նույն թվականի դեկտեմբերի 10–13-ի Անդրկովկասի հանրապետությունների խորհուրդների համագումարը՝ Անդրկովկասյան Ֆեդերացիայի հռչակման իրողությամբ:

Տարիներ առաջ ԵԺ 6-րդ հատորում նամակի համապատասխան ծանոթագրություններում համարձակությունս բավարարել է արձանագրել. թե՝ «Սույն նամակի նախաձեռնությունը, թվում է, պատկանում է այդ օրերին Մոսկվայում գտնվող Ալ. Մյասնիկյանին, որը արտակարգ հոգատարությամբ էր շրջապատել Թումանյանին» (6, 714): Մինչդեռ հաստատելուն պես անհրաժեշտ էր հոգատարության տարածքով դառնալ նրանց համատեղ մտահոգություններին ու տագնապներին. քիչ է ասել... 1921-ի ապրիլին Մյասնիկյանի Թիֆլիս, ապա Հայաստան հասնելու օրից Թումանյան–Մյասնիկյան փոխհարաբերության տարողությամբ սովի ու համաճարակների առաջն առնելուց, Ղարաբաղյան հարցից... մինչև ՀՕԿ-ի ստեղծման, ներգաղթի, որբանոցների, հարևանների հետ հարաբերությունների կարգավորման... տեսա՛կ–տեսա՛կ հազարավոր մտահոգություններ, որպիսիք արդեն նույնությամբ փոխանցվում էին «կրտսերագույն» Չարենցին: Հասկանալի է, անելիքների խոր գիտակցությամբ՝ որպիսիք կուտակվելով դիզվում են՝ օրեր տևած մտերմիկ շարունակականությամբ՝ գնացքում:

Ամեն դեպքում հերթական ամենալուրջ մտահոգությունը համագումարներում առկախված Ղարաբաղի հարցն էր: Կասկած չի կարող լինել, որ բացահայտ կուլիսյան–անդրկուլիսյան բազմաթիվ վիճարկումների ընթացքով Մյասնիկյանը հաստատապես գիտեր, որ սպասվում է կատաղի դիմադրություն, ուրեմն և մտավորական շրջաններից ակնկալում էր օգնություն: Միանգամայն որոշակի այդ նպատակով էլ հետը բերում է Չարենցին, որի ենթաբնագրային վկայությունը դժվար չէ որսալ նամակում. «... դառը սրտով գնում եմ այստեղից, ցավելով, որ հնարավորություն չունեմ Ձեզ մոտ լինելու և հետևելու Ձեր ամոքմանը...»,— և սա նշանակում է թե՝ շեշտվում է մեկնելու դերկարևորությունը:

Իսկ որ այդպես էր՝ հետևում է հենց հակառակ՝ հակամյասնիկյանական կողմի ընթացիկ ու հետագա վարքագծից: Ընթացիկը՝ հունավորված տակավին Երկրի ժողովածուի մոսկովյան երկհատորյակի տպագրության միջոցին, որը՝ ժամանակին անդրադառնալով առաջին հատորի ընդգծված «Երկու խոսքին», անմիջական աղբյուրից վկայակոչել է հանգուցյալ Հակոբ Սալախյանը՝ գրելով. «Ի միջի այլոց ասենք, որ առաջաբանում ոչ բարյացակամ ընթերցողների մասին արտահայտած Չարենցի տարակուսանքները զուրկ չէին հիմքից: Հրատարակչության աշխատողներից մեկը երկհատորյակի կապակցությամբ հայտնում է Անդրերկկոմ, որ իբր թե հայ բանաստեղծի ստեղծագործությունները «պահպանողական–նացիոնալիստական բնույթ ունեն», և այդ իսկ պատճառով անհրաժեշտ է համարում

գրքերը այրել: Սակայն Անդրերկկոմում այլ կարծիքի էին Չարենցի մասին: Գլավլիտի վարիչ Պ. Ի. Լեբեդև–Պոլյանսկուն (հետագայում՝ ակադեմիկոս) ուղղված նամակում Անդրերկկոմի քարտուղարը գրում է. «Վճռական կերպով հայտարարում ենք, որ նշված ստեղծագործությունները (խոսքը երկհատորյակի մասին է՝ Հ.Ս.) պատկանում են հեղափոխական պրոլետարական գրականությանը: Ընկեր Չարենցը հանդիսանում է ամենաշնորհալի հեղափոխական հայ բանաստեղծներից մեկը: Նա կոմունիստ է, նվիրված ընկեր և տաղանդավոր գրող»[1]:

Գրել է «Անդրերկկոմի քարտուղարը» Ալեքսանդր Մյասնիկյանը, իր «Բրոնզաձույլ», «ինքնաբավ, լիակշիռ էությանը» վայել վճռականությամբ: Դե՛, հայտնողն էլ պետք է լիներ քանքարազուրկ Գուրգեն Հայկունի–Վշտունի կամ իր արբանյակներից մեկն ու մեկը: Ուրեմն և նույն հունով խմբակցական սադրիչ համերաշխ գործընթացը շարունակվում է Երևանում:

Ամեն դեպքում՝ լիակատար համընկնումներով ու համաքայլ քաղաքական կյանքին. այս անգամ վերը հիշատակված համագումարներին: Ըստ այդմ պատահական չէ, որ արդեն իսկ 1922–ի դեկտեմբերի 24–ին Վշտունին հասցրել էր ստեղծել «Հայաստանի պրոլետարական գրողների միություն»՝ գործադիր մարմինով, որը և 1923–ի հունվարի 18–ին արժանանում է Լուսժողկոմատի հաստատմանը. միաժամանակ՝ Մոսկվայից Հայկունու նույնատիպ խմբակցության ողջույնի հեռագրին, այլև վստահեցմանը, թե իր խմբակցությունը ևս՝ «... աններկեր ու հավատքով լի պետք է ընթանա պրոլետարական ստեղծագործության պայքարի տենչերով՝ քաղքենի ըմբռնումներով հարուստ հայ իրականության մեջ, այն խոր համոզմունքով–որ ապագան մերն է»[2]:

---

[1] Տե՛ս Հակոբ Սալախյան, Ժամանակից շունչը գարձիր, 1967, էջ 27: Ըստ այդմ ղառնանք Սալախյանին՝ որպես տեղեկությունների. վաննցի ծնողների զավակ, գրականության և արվեստի (հատկապես՝ երաժշտության) զգայորությամբ օժտված բյուրեղյա անհատականություն: Գրականագետներից ամենաարիներին հավասարապես Դ. Դեմիրճյանի և Գ. Մահարու, հետագայում՝ Պ. Սևակի ու Հր. Մաթևոսյանի, Ս. Աղաբաբյանի, Էդ. Թոփչյանի: Վերջինիս հետ 1954–1958 թթ. Գրողների միության վարչության քարտուղար, ինչպես և առաջիններից մեկը՝ «Եղիշե Չարենց» (1957) գրքի հեղինակ: Պաշտոնի բերումով 1957–1958–ին Չարենցի իրավունքների վերականգնման հանձնախմբի քարտուղար. ասել է թե՝ այդ օրերից հանդամանորեն տեղյակ բանաստեղծի չեկայական «գործին»: Եվ քանի որ հանձնախումբը գլխավորում էր նաև այն մեկը, որ ժամանակին հայտարարել էր, թե՝ Չարենցը «ծանր քար է ընկած գրականության ճանապարհին, որին պետք է դեն նետել»,— ուրեմն և այդ «հզոր» մեկի կամքով, զինակիր–զինակիցների հալածանքներով, այլևս անկարող էր ապրել Երևանում: Հենց այդպես էլ՝ ի վնաս առողջության, 1958–ին փոխադրվեց Մոսկվա՝ հավատարմորեն շարունակելով հայոց ճշմարիտ գրականության պահապան հրեշտակի ծառայությունը: Հասկանալի է, նույն պատճառներով էլ հիշատակված չէ ո՛չ «գրքերն այրելու» կոչողը, ո՛չ էլ «սպեցիֆիկյան» տարու Մյասնիկյանը: Անշուշտ, անուն–ազգանունով հայտնի Սալախյանին. ոչ միայն ռուս գրականագետ, 1921–1930 թթ. միութենական Գրաքննության վարիչ Պ. Ի. Լեբեդև–Պոլյանսկու պատմածով, այլև տրամադրած փաստացի վավերագրերով՝ նամակներով: Այլև Դեմիրճյանի, Մահարու պատմածով:

Խորհրդային Հայաստան (օրաթերթ), 1923, 22 հունվ.: Այսուհետև՝ ԽՀ: Տես նաև Ալ. Զաքարյանի՝ «Դառնանք հիշենք ու հիշեցնենք նրախտավորներին» հոդվածը: ԳԹ, 2000, նոյեմբեր 15–30:

«Ռոմանս անսերը»՝ գրապայքարի հարկադիր մարտահրավեր

«Քաղքենի ըմբռնումները», անշուշտ, առաջին հերթին հասցեագրված էր Զարյանցին, ուրեմն և ամենայն հավանականությամբ նամակի հեղինակը Վշտունին է:

Մոսկվայից Երևան և հակառակը փոխանցվող հրահրումներով, պարզապես, Վշտունու հետ հնարավոր չէր «հաշիվները փակել» ներփակ–ծածկագիր «ասպետականով» և գրվեց «Ռոմանս անսերը»՝ «Ոչ սկիզբ» ենթավերնագրով Ազատ Վշտունուն նետված մարտահրավերով.

... Էլ ելի՛ր
ռումբերին առ քո:
Վշտահար, վշտոտ, վշտունեղ,
անհատամ բառերի շարքով
Թող Ազատն ազատ–վշտունեն!.. (Անտոխ և..., 282):

Եվ այդ նույն հասցեով՝

... Ի՞նչ.
չկա՞ն.
չերգած ներկան դեռ –
ի՞նչ
չունի՞ հնչյուններ հազար:
Ուզո՞ւմ եք՝ դադարեմ,
քանդեմ,
ձեզ կիզող հուզումներ հազամ!
Մի՞թե ձե՞զ նայեմ,
մի՞թե ձե՞զ,
էսօրվա կուզիկ պոետներ.
ձեր անծեր ծրի՞ն մոխիրն:
Դուք,
որ ունեք արյան տեղ–մեղ
ու խլինք–խեխքի փոխարեն!..(Անտոխ և..., 280):

Պարզ է. Պրոլետգրողների միությունը շտապ քննության է առնում «Ռոմանս-ը»՝ երկի բուրժուական–քաղքենիական «հեղափոխական արտադրությունները» դատապարտող որոշումով: Քննարկմանը մասնակցում են և Հայաստանի կենտգործկոմի նախագահի տեղակալ Ա. Կարինյանը՝ իր խմբագրությամբ և Կոստան Զարյանի աշխատակցությամբ հունվարի 15–ից լույս տեսնող ԽՀ հավելված «Պայքարի»[6] խստաշունչ բորբոքումներով:

[6] *Այսուհետև՝ Պք*

* * *

Իսկ Չարենցը դեռևս Թիֆլիսում էր[7]: Շուրջ երկու շաբաթ տևած օրերով զբաղված էր հանդիպում–տեսակցություններով, Մյասնիկյանի հաղորդած մտահոգությունների ու տեղեկությունների, հին ու նոր հաշվեհ ու մի տվյալների, փաստերի, տեղեկությունների փոխարկում–փոխադարձումներով՝ Սուրխաթի, Դեմիրճյանի, Ա. Երզնկյանի, Լեյլիի և ուրիշ վստահելիների հետ: Իսկ ամենավերջում, հավանաբար, հունվարի 20–ի շուրջը՝ մի օր էլ, Երևան մեկնելուց առաջ վերջին տեսակցությամբ Մյասնիկյանի հետ. հասկանալի է, լրացուցիչ տեղեկություններ ու հանձնարարականներ ստանալու նպատակով:

Իսկ Երևանում իր համար «Pro domo sua»–ն՝ ասել է թե՝ «Իր տան համար», «իմ անձի, իմ գործի առիթով» հանդես գալն էլ ինքնին անակնկալ չէր: Այս անգամ առավել ևս, քանի որ իրենից առաջ Երևան էր հասել «Ռոմանս անսեր» խորագիրը կրող մարտահրավերը: Եվ պատասխանը քննարկումներին ու որոշումներին, մասնավորապես, Արտ. Կարինյանի հարձակումներին՝ լինում է «Pro domo sua» (Մի պրովոկացիայի առթիվ) վերնագրով հոդվածը ահա այսպիսի հետաքրքիր հարցադրումով. «... Եթե նա (Կարինյանը՝ Ալ. Զ.) մի փոքր բարեխղճություն ունենար և թերթեր իմ Երկերի ժողովածուն – պիտի տեսներ, որ «Ռոմանս»–ում գործածած իմ բոլոր պրիոմներն ու մոտեցումները անմիջապես բխում են իմ նախկին գործերից: ... Երկու խոսք էլ կուզեի ասել «Նէպ»–ի մասին: ... Եթե որևէ կապ կա «Ռոմանսի» և Նէպ–ի մեջ – ապա այդ կապը հարկավոր է հասկանալ հակառակ իմաստով: «Ռոմանսի» բոլոր սրադուլյն անկյուններն ուղղված են այդ «մռութների ռեխին».

... Ուզում եք կամպոտ կամ չի՞ր:
Կամպոտի փոխարեն
էսօր
ձեր կակուղ ծնոտին մոտիկ
թող չաչե երգերիս ղամչին!..(էջ 281):

Երգերիս ղամչիով ես դեռ շատ բան ունեմ ասելու այսօր «կամպոտ» և «չիր» ուզող «մռութներին» – Նէպ–ի այդ խոշական ղավակներին, որոնց սրտում արդեն արթնանալ է սկսել քաղքըրամեշչանիկ սենտիմենտալիզմը...» (6, 43):

Նախ ասենք, որ ժամանակակիցներին լավ հայտնի էին այդ «մռութները», այդ թվում Վշտունին՝ **փափկակենցաղ յուրայիններով**: Ապա պարտավոր ենք նշել չարենցագիտության համար չափազանց կարևոր այն պնդումը, ըստ որի

[7] Ինչպես հետևում է Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի (այսուհետև՝ ԳԱԹ) Եղիշե Չարենցի ֆոնդում (այսուհետև՝ ԵՉՖ) «Սիրելի Լեյլիին Եղիշե Չարենցից» նվիրումով պահպանվող «Ռոմանս անսերի» օրինակի վրա եղած «923, 1–ին, 17, Թիֆլիս և «Pro domo sua» հոդվածի գրության՝ 28. 1, 1923 թ. Երևան» տարեթվերի համադրումից:

«Ռոմանս»-ում գործած իր «բոլոր սիրումներն ու մոտեցումները անմիջապես բխում են» «նախկին գործերից»: Միանգամայն ճշգրիտ խոստովանություն, որ թելադրում է նման «սիրումներ ու մոտեցումներ» որոնել մասնավորապես «Էմալե պրոֆիլից» ու «Բրոնզե երգերից» սկսած՝ հատկապես յոթ բալլադներում ու բալլադների հավելվածներում. այդ շարքի «կնոջը խարանող» մոտիվներում: Մի պայմանով միայն՝ մշտապես հիշելով ա՛յս, և՛ ա՛յս. եթե «Կապուտաչյա Հայրենիքում» Հայրենիքը «Կապուտաչյա Սիրուհի» է, այնուհետև «Հայաստան յար», յոթը բալլադներում մկրատված, ուրիշների «տարփուհի» դարձած «պչրուհի», ապա, 1922–1923 թթ. իրավիճակով Չարենցի «երգած» Ժե՛նեայի դեպքում ինչո՞ւ պետք է բացառվեր կամ չգործեր նույն տրամաբանությունը կամ մտածումը: Եթե «պչրուհու» դեպքում բանաստեղծն իրեն համարում էր խեղկատակ, այս դեպքում ինչո՞ւ չդառնար անառակ ու լպիրշ... արարած: Չէ՛ որ իր Հայրենիքի 9/10-րդը կորցրած բանաստեղծին պարտադրվում էր մոռանալ հայրենացավը և երգել այլ Հայրենիք, այլ տրամադրություններ ու գաղափարներ *(ենթադրենք Արևելք...): Երգ, որը սույն պոեմում խարանվում-հրովարտակվում է որպես «անսեր ռոմանս», այն էլ սույնպիսի գալարումներով.*

— Ժե՛նեա
քե՛զ.
ուզո՛ւմ եմ քե՛զ:
Օրերի սարսափը դեմքիս՝
դա՛մ,
տա՛մ,
արնահամ կիսե՛ս.
կործանե՛ս հիմքից:

Ոնց որ չար մի պառավ ջադու
բարձրանա խարույկ—
հանդիսա
դու ելար
Ժե՛նեա,
դու բարձրացար դանդիս... (էջ 285):

Ժե՛նեա... *գումարած ամեն տեսակի կարինյաններին, հայկունիններին ու վշտունիններին հասցեագրված «պոռնալիքը».* «Երգերիս ղամչիով ես դեռ շատ բան ունեմ ասելու...» *(ընդգծ.՝ Ալ. Զ.):*

Իր հերթին միանգամայն համոզիչ փաստարկ է և այս. 1916–1917 թթ. հյուսված Չարենցի լիրիքական բալլադներին վերաբերող հատվածում արդեն անդրադարձել ենք եղիշեական մշակույթի, խորհրդանիշ-նշանադրոշմների ու պայմանաձևերի Չարենցի իմացությանը: Հարկավ, նույն աղբյուրից անկյալ էր և

փյունիկյան պայմանականություններին ու խորհրդանիշներին, այդ շարքում հմայական խոսքի, հմայիլների ու գուշակությունների քրմական արվեստին, որոնցից բարձրաստիճան ոսկե երեք հմայիլ սովորաբար դրոշմվում էր Աշտարեթ դիցուհու պատկերին: Հմայիլների ուժը նորոգվում էր, հմայիլները փոխանակվում էին. զորավոր հմայիլներից մեկի կարգախոսով էլ, եթե **«գահին բազմում է դաժանությունը՝ նրան ծառայում են անառակությամբ, կամ նրա մասին երգում են անառակ երգեր»** (ընդգծ.՝ Ալ. Ջ.)[8]: «Ռոմանս անսերը» հնավանդ պատվիրանի հայտ է: Ասել է թե՝ գրականից առաջ և հետո այն քաղաքական–քաղաքացիական հռչակագիր է, որով բանաստեղծը՝ մի «զամչիով» բանադրելով Վշտունուն իր «Հուզանք ու զանգերով»՝

... Հանգե՞ր են շարել մինչև էս,
քնարել ցնորքներ կակուղ.
բայց
հանգով
ո՞նց հնչեցնես,
եթե սիրտ է-նավթածով Բաքու... (էջ 289),–

(Հատկանշական է, նկատի ունի «Նավթածով Բաքու» սիրերգող Վշտունուն), մյուսով՝ յուր հզոր ձայնով հրավարտակում է, որ այդուհետև սեփական քնարը ենթարկում է երկփեղկ «ծառայության». ճշմարիտ սիրերգերի կողքին՝ սանձելու է անսեր ռոմանսներ, կամ՝ անառակ... այլև միախառնված երգեր...

Տեղն է ավելացնել, որ ժամանակի՝ մարդկության դարավոր մշակույթին ըստ ամենայնի անտեղյակ մտավորականությունը, իհարկե, հասկանում էր դա: Ըստ այդմ պատահական չէ, որ պարզապես լռելյայն շրջանցել են թե՛ «Ռոմանս անսերը», և՛ թե «Ասպետականը». ինչպես և քննադատական առանձին վերաբերմունքի չեն արժանացել հենց 1923–ից ծայր առած «Կոմալմանախյան» շրջանի ու հետագա բանաստեղծի անսեր — «անառակ» երգերը:

Ամեն դեպքում՝ եթե «գահին բազմում է դաժանությունը...» պատճառակցական օրենքներով. եթե մանավանդ «Ռոմանս անսերում» հիշատակված ենք գտնում եգիպտական Իզիդային, որ պտղաբերության, մայրության, կնոջ հետ միասին համարվում էր արվեստների հրաշագործ աստվածուհի, այն էլ այսպիսի փոխաբերական պատկերավորությամբ.

... Հասկանո՞ւմ ես՝
դուրս կսահի
կրքերիս ահռելի հորդան,
ոնց որ երդ–ցնդած Իզիդի
հանճարեղ մատներից հորդած... (էջ 287):

---

[8] Տե՛ս Բոդլեր, Պրոզա, Փարիզ, 1962, էջ 200–272, 305 և այլն:

* * *

(Այսքանը տողանքից դուրս):

Ինչպես հայտնի է, Եժ մոսկովյան երկհատորյակը և «Պոեզոզուռնան» ու «Ռոմանս անսերը» Զարենցը Երևան հանելուն պես ինչ-ինչ ճանապարհներով կարողացել է հասցնել Ն. Աղբալյանին: Այդ մասին սույն աշխատության առաջին գրքի էջերում արդեն հիշատակված Ա. Աստվածատրյանը գրում է. «... երբ Թավրիզ էինք Նիկոլը Զարենցից (Երևանից), մի նամակի հետ ստացավ նրա բանաստեղծությունների առաջին լրիվ հրատարակությունը – մի հաստափոր գիրք: Այդ նամակում Զարենցը խնդրում էր Նիկոլին՝ անուշադիր թողնել այն գրպարտությունները, որ չարակամ մարդիկ հնարել ու վերագրել են իրեն՝ Զարենցին: Զարենցի նամակին Նիկոլը պատասխանեց, գրելով հատկապես Զարենցի գրքի մասին: «Իմ լավ խոսքը, որ լսել ես, այժմ էլ լսիր իմ խրատը», որքան հիշում եմ, այդպես էր սկսում նամակը: Նիկոլը դժգոհ էր, որ Զարենցը հրատարակել է ինչ որ գրչի տակից դուրս է եկել՝ լավի ու անհաջողի մեջ ընտրություն չանելով: Այդ մտքով էլ տալիս էր իր խրատը»:

Ավելի վաղ 1945-ի «Ակոսի» (Բեյրութ) թիվ Զ-ում «Եղիշե Զարենցը և ես»[9] խորագրով հրապարակված ենք գտնում Աղբալյանին հասցեագրած բանաստեղծի ինքնագիր տողերը՝ բոլորն էլ «923, 1, 28, Երևան» տարեթվով: Այս է՝ «Սիրելի Նիկոլ Աղբալյան, ընդունիր իմ գրքերը որպես և՛ հարգանքի, և՛ համակրանքի նշան»: Այս հատորների վրա՝ «Նիկոլ ջան, ես ոչ մի համար չունեի իմ այս հատորներից, որովհետև առիթ հանդիպացավ՝ Մ-ը վերցեց իր համարները[10]. ընդունիր իմ այս նվերը որպես նշան հարգանքի ու համակրանքի Քո Եղիշե Զարենց 923, 1, 28, Երևան»: «Ռոմանսի» վրա՝ «Սիրելի Նիկոլ Աղբալյանին, իմ առաջին ուսուցչին, որին ես երբեք չեմ մոռանա և չեմ դադարի հարգել»: «Պոեզոզուռնայի» վրա՝ «Սիրելի Նիկոլ Աղբալյանին, շատ սիրով և հարգանքով՝ Եղիշե Զարենց»: «Երբ ձեռքս առա «Ռոմանս անսեր»-ը, որ անպատկառ բովանդակություն ուներ և ոգու անկում է ցուցադրում, զայրույթս պահել չկարողացա: Իր իսկ անպատկառ ոճով մի նամակ գրեցի և իր նորօրինակ տաղաչափությամբ մի «պոեզոկարծիք» շարադրեցի»,— ավելացնում է բանաստեղծի «Սիրելի Ա.-ն»՝ հասկանալի է, չպատկերացնելով, թե հասարակական-քաղաքական ինչպիսի մթնոլորտի ծնունդ են թե՛ մեկը և թե՛ մյուսը... բայց տեսեք, թե որքան ճշգրիտ է ախտորոշում «ոգու անկումը»:

Տարիներ անց պատկերացումն արդեն լիակատար էր, որքանով դարձյալ Աստվածատրյանի վկայությամբ՝ թեև «... Դաշնակցության հնարավորություն-

[9] Ակոս, 1945, թիվ Զ (նոյեմբեր-դեկտեմբեր). Ն. Աղբալյան, Արդի հայ գրականություն, հ. Դ, էջ 246: Բայց չէ՞ որ Աղբալյանն անտեղյակ էր...

[10] Մ-ն՝ Մարտիրոս Սարյանը (կամ էլ Մանկին Գևորգյանը). այդ օրերից սկսած Զարենցի բարեկամները:

ները նեղ էին գալիս Նիկոլին», այդուհանդերձ, երբ «1945 թ. Զորեքչյանի և Իսահակյանի միջոցով Աղբալյանը հրավեր է ստացել խորհրդային իշխանություններից Հայաստան գնալու՝ մերժել է առողջական վիճակի պատճառով»: Ուշմն և հաջորդում է տաղանդավոր գրաքննադատի և հայրենասերի այս բնութագիրը. «Կուսակցական լինելուց առաջ Նիկոլը մարդ է և իր մեծագույն դատավորը իր խիղճն էր, որի թելադրանքներն էին միայն իր համար պարտադիր: Այսպիսի մարդը Երևան գնալ չէր կարող: Այսուհանդերձ, որևէ կասկած չունիմ, որ մեր հայրենիքի հառաջադիմությունները նրան ոգևորում-թևավորում էին ոչ պակաս, քան որևէ մեկին, և տվյալ պայմաններում որևէ փոփոխություն մեր հայրենիքի համար նա չէր ցանկանալ»[11]:

«Правдист» Արտաշես Կարինյանը Չարենցի անեղ քննադատ... Տիգրան Հախումյանը «զինակից»...

Եվ այսպես. ընդդեմ Չարենցի օր առ օր թեժացող դրապայքար, առավել ևս հետագարձ հայացքով՝ մեկը-մեկից անխնա, մեկը-մեկից չար կամ ողորմելի-անճարակ ձևակերպումներով զեկույցներ, որոշումներ, հաղորդումներ, հոդվածներ, հայհոյանքներ... Ըստ Կարինյանի մարտի 16-ի «Գրականությունը և հեղափոխությունը» բանախոսության՝ «... Չարենցի սայթաքելը, և նրա «Ռոմանս անսերը», այժմ կարող է առաջ բերել հակահեղափոխական տրամադրություններ, որովհետև **նա «կիրքը», «կոնքը», «կինը» խառնում է Հոկտեմբերի հետ»** *(ընդգծ.՝ Ալ. Զ.): Եվ ապա՝ «Ընկ. Կարինյանը վերջում այն միտքն հայտնեց, որ պրոլետարական գրողները նույնիսկ ֆուտուրիզմից կարող են անխնիկապես օգտվել, որովհետև* **նա հանդիսանում է մեռնող բուրժուազիայի վերջին գրական ուղղությունը»** *(ընդգծ.՝ Ալ. Զ.)*[12]:

Իսկապես ասած, գաղափարական ասպարեզում ծանր հրետանու դեր ստանձնած «Պրավդիստը» (ինչպես սիրում էր հաճախ կրկնել ինքը՝ «Я же правдист») իր ելույթներով փաստորեն մատնանշում-ուղղություն էր տալիս դրապայքարին. և,ահա՛, խորհրդապաշտության հետ հաշիվները մաքրած՝ «պրոլետմշակույթի» դիրքերից այժմ էլ պայքար էր հայտարարում ֆուտուրիզմին ու իմաժինիստներին՝ համառ բորբոքումներով դրապայքարի շրջագիծը մի կողմից հասցնելով կենտրոն... Մայակովսկի և ֆուտուրիզմ, ապա և՝ Եսենին: Մյուս կողմից մաքրադավան պրոլետարականների գլուխն անցած՝ այն էլ քանի ճակատով, թիրախ էր դարձնում Չարենցին: Մուրճից անցնելով Պք, այս անգամ էլ, «Վտանգավոր սայթաքում» հոդվածով. ճարպկորեն, ինչպես ժողովուրդն է ասում՝ մի ձեռքով քանի ձմերուկ բռնելով, հարվածել-նվաստացնելու իր արվեստով. «... **Ի վերջո, Չարենցի ամենալավ երգերի մեջ իսկ, կա «Տերյանական ոգի»:**

---

[11] *Հայրենիք, 1947, թ. 6, էջ 58, 60–61*
[12] *Մուրճ, 1923, թ. 4, էջ 34. այսուհետև՝ Մճ.*

Իսկ նրանք, որոնք ճանաչում են ողջ Տերյանին, գիտեն, որ այսօրվա տակավին դռնՀիկ, և որ ավելի վատ է ադետ ու մեծամիտ Չարենցը, շատ բան ունի սովորելու «**Կոմունիստ Տերյանից**»...

Կապկորեն կրկնելով Տերյանի Հասցեին այն խոսքերը, որ ասում են ռուս ֆուտուրիստները Պուշկինի Հասցեին, Չարենցը ապացուցանում է միայն իր միամիտ պրովինցիոնալիզմը...

Եթե Չարենցին Հաճույք է պատճառում ոտաչորով ներկան գալ փողոցներում— դա իր գործն է:

Բայց երբ նա Հայտարարում է, որ այդ ամենը անում է Հանուն «Հոկտեմբեր»—ի, մենք ստիպված ենք Հրաժարվել այդպիսի Հասանդուն և էքսպանսիվ մունետիկներից: ԱՀա դրանում է ամբողջ խնդիրը»[13]*:*

Ինչպես տեսնում եք, «պրսուլոպը» մեր օրերում էլ կրկնվում է Հակառակ ծայրից դժվար է լինում ընտելանալ **բանաստեղծի ընդդիմությանը Հոկտեմբերին...**

Մինչդեռ այդ օրերին, աՀա՛, Կարինյանի մատնացույց արած ուղենիշներով քանի՛—քանի՛ Հարձակում. Վիդ. Դարբին, ապա Մեֆիստ ու Ա. Նարեկ, ապա Հ. Նար...ի Հավելումն «Երկիր Նաիրի» առաջին մասին նետվող խայթոցներ՝ ավիտությիւններով ու բանդագուշանքներով շաղախված. «ազդեցություն Մայակովսկուց՝ ըստ ձևի» և Մարինգոֆից՝ «ըստ կերպարի և նյութերի որոշ տարրի», «խարխափում է Մայակովսկինայի մշուշում» և այլն և այլն:

Եվ տասնյակներով տարբերակվող «պրովոկացիաների» դիմաց տեղը—տեղին «Pro domo sua» (Մի պորովակացիայի առթիվ) վերնագրով իր պատասխանը Ա. Կարինյանի, Ալ. Վշտունու և գինակիրների դեմ՝ վերջիններին նաև սույն տողերով. «... Պրոլետարական գրողների ասոցիացիան, որում չկա և ոչ մի գրող, որը այս կամ այն չափով կրած չլինի իմ ազդեցությունը: Նույն Ալազո Վշտունին, որին ես Հանեցի Հրապարակ և տվի նրան իմ գրական պրեստիժը՝ այսօր ամենասղորմելի ձևով կրկնում է իմ անցյալ ամառվա խոսքերն ու թեմաները» (6, 37): Կարինյանին էլ բաժին է Հասնում իրենը. Մայակովսկուն «դռնՀկացնելու» նրա փորձերի դեմ նետում է այս Հիմնավոր տողերը. «... Ինչ վերաբերում է Մարինգոֆին և Շերշենևիչին, թող Հայտնի լինի ընկ. Կարինյանին, որ նրանք այնքան էլ «ձախերի» Համբավ չունեն Մոսկվայում, այլ, կատաղի Հակառակորդներ լինելով

---

[13] *Դբ.— «Պայքար» (պարբերական), 1923, թիվ 2: Հոդվածում Ա. Կարինյանը Հայտնում է, որ Սիմֆերոպոլում լույս տեսած «Կարմիր դանդի» 1923—ի թիվ 36—ում ինքը քննադատել է նաև Չարենցի «Ի՞նչ պետք է լինի արդի Հայ բանաստեղծությունը» Հոդվածը: Պարբերականը չՀաջողվեց գտնել, երևի թե պաՀպանվելիս լինի իր գրադարանում: Այդ դեպքում «լույս կտեսնի» Սիմֆերոպոլի Հայ գաղթականության շրջաններում ծավալած նրա այդ օրերի և Հետագա գործունեության վրա: Ըրքանով Հենց այդ ծառայությունների Համար էր Կարինյանին արտոնագրվել Չարենցի փողոցի այն ոսՀարկանի չենքի առաջին Հարկի ամբողջ Հարկաբաժինը, որի վերջինը զբաղեցնում էր 1966—1974 թթ. Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը: Երկրորդն էլ պատկանում էր կուսակցական—պետական գեկավար պաշտոնյա Զ. Գրիգորյանին: Որպիսի չքե՛ղ արտոնություններ... ժամանակի Համար... Այժմ չենքն ամբողջությամբ զբաղեցնում է գերմանական դեսպանությունը:*

A II 89/30
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

«ձախերին» (Մայակովսկու գրուպային), նրանք այս տարի Մոսկվայում կազմակերպեցին «Разгром левого фронта», հայտարարելով իրենց «ռուսական կուլտուրայի» ներկայացուցիչներ: Այդ խղճուկ իմաժինիստները, որոնց ամբողջ գործունեությունը կայացել էր Մայակովսկու գրական նվաճումները գռեհկացնելում, ոչ մի հմայք չէին կարող ունենալ «պրովինցյալիս» աչքին: Եթե հարկ կա ասելու — ես կարող եմ հայտարարել, որ **շատ բան եմ սովորել Մայակովսկուց, որին պարծանքով կարող եմ համարել իմ ուսուցիչը**» *(ընդգծ.՝ Ալ. Զ. 6, 42):*

Նկատենք, որ կենտրոնում քննադատական ամեն խոսք խլացնելու քաղաքականությամբ Վլ. Մայակովսկու դեմ հավաքագրվել էին համարյա բոլոր խմբակցությունները: Մի առանձին եռանդով լծվել էին իմաժինիստները, որոնց հաջողվել էր ինչ-ինչ ճանապարհներով ներքաշել Եսենինին: Ուստի բնորոշ է. Կարինյանի հետ բանավեճում՝ սկզբունքայնորեն սահմանազատվելով իմաժինիստներից, Չարենցը պաշտպանում էր նաև Եսենինին՝ ճշգրիտ կռահելով, որ քաղաքական մեղադրանքների ալիքը ուղղվելու է նաև Եսենինի կողմը: Իսկ հայ իրականության մեջ թիրախն ինքն էր, առայժմ միայն ինքը: Ոչ միայն աշկարա հակառակորդների, այլև դիմակավոր «բարեկամների»:

Նման իրադրության մեջ և մթնոլորտում, անշուշտ, պահանջվում էր որոշ շրջահայացություն, և առաջին քայլը լինում է հրաժարվելը ԽՀ փետրվարի 4-ի թվում լուրերի տակ տեղեկացվող սույն «ձախ» նախաձեռնությունից. «Եղիշե Չարենցի և Կարո Հալաբյանի խմբագրությամբ ամսվա վերջին լույս կտեսնի «Ավանգարդ» հանդեսը, նվիրված ժամանակակից գրականությանը և արվեստին (թատրոն, երաժշտություն, նկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն, սինեմա և այլն: Խմբագրության հասցեն՝ Նախկին «Ֆրանսիա հյուրանոց №4»[11]:

Եվ այդպես էլ խափանվում են ավանգարդիստական լուրջ մտայնությունները հայ իրականության մեջ. ինչպես և հենց այդքանով էլ սպառվում է եղած-չեղած շրջահայացությունը...

Ուրեմն և խոսքը տանք սպառվածի ազդանշան բանաստեղծի այդ օրերի «գլխակից» Տիգրան Հախումյանին, ընթերցողին խորհուրդ տալով անպայման ծանոթանալ նրա թե՛ ռուսերեն և թե՛ հայերենով հրապարակած հուշերին (վերջինը՝ ՀԵԶմ, 2, 151–165): Ըստ պատշաճի՝ գունավորված Չարենցի բնավորության ու խառնվածքի բնութագրությամբ. «Նա չէր սիրում և չէր կարողանում պահել ի-

---

[11] «Ֆուտուրիզմի շուրջը» նամակում Չարենցը գրում է, թե Կ. Հալաբյանի հետ «... մենք միասին մտադիր էինք հրատարակել ֆուտուրո-կոնստրուկտիվիստական ժուռնալ «Ավանգարդ» անունով, բայց գործը գլուխ չեկավ միջոցների ու համախոհ չունենալու պատճառով» (6, 96):

Միաժամանակ նշենք. դեռևս 1914-ին Վ. Մայակովսկին հավաստում էր. «Մեզ ֆուտուրիստներ են կնքել լրագրերը... ֆուտուրիզմը մեզ՝ երիտասարդ բանաստեղծներիս համար ցլամարտիկի կարմիր թիկնոց է (խե՛ղճ ցուլեր – համեմատեցի քննադատության հետ):

Արդի պոեզիան՝ պայքարի պոեզիա է» (ընդգծ.՝ Ալ. Զ.). В. Маяковский, Полн. собр. соч., т. 1, М., 1955, с. 338:

րեն դիվանագիտորեն քաղաքավարի և վիճելիս չէր ընտրում սովորական արտահայտություններ: Կարող էր հայհոյել ամենակոպիտ բառերով, իսկ վաղը ամենայն անկեղծությամբ մոռանալ այդ ամենը և խոսել այնպես բարեկամաբար, այնպես սիրալիր, որ կկարծեիր, թե ինքը չէր երեկվա աղմկողը: Շատերը նրան չէին հասկանում, և վիրավորվածներից շատերը նրա մասին հնարում էին այնպիսի բազմապիսի լեգենդներ ու մտացածին բաներ, որոնց մեջ ճշմարտության միկրոսկոպիկ հատիկը շրջավորված է վրեժխնդիր բամբասանքի մոմլաններով» (ՀԵԶմ, 2, 158–159): Տե՛ր աստված…

«… Բազմապիսի լեգենդներ ու մտացածին բաներ». **Իսկ հրեշավոր արարքներ…** և շարունակում է պատմել 1923-ի փետրվարի 19-ի իր «Եղիշե Չարենցի ստեղծագործությունը» դասախոսության պատմությունը: Իր հետադարձ հուշարկումով քննության է առել բանաստեղծի «Անցած ճանապարհը, ապա «Պոեզոզուռնան»՝ «որպես նոր էտապ նրա ստեղծագործության զարգացման մեջ, միանգամայն օրինաչափ փուլ…»: «Ռոմանսին» վերաբերող և ոչ մի տող, բայց ահա ժամանակին ՄՃ տպագրված «Հայ ֆուտուրիստների դասախոսությունը» հաղորդումը հեղեղված է «Ռոմանսին» վերաբերող գովեստներով… եզրակացությամբ, թե՝ «… և այստեղից է, որ սկսում է Չարենցի այն զորեղ հակումը, որի էական իմաստն է հին կուռքերի տապալումն»:

Դասախոսությունից մի օր անց էլ ԽՀ տպագրվում է մի այլ հոդված, որից պարզվում է, որ հաղորդման հեղինակ «Ունկնդիրը» նույն ինքը այդ հոդվածի հեղինակ Տ. Հախումյանն է[15]: Ունկնդիրը զվարթ շնչով է ներկայացնում զեկուցման շուրջը լեփլեցուն դահլիճում ծավալված բանավեճը. «Ընկ. Կարինյանի», պրոլետարականի, հատկապես Վշտունու հակաճառություններով, որոնցով նկատվում է՝ «… որպես «Խեղադարված ամբոխների» — մի շարժում» և որ Չարենցը «չի հայտնաբերել դասակարգային մի և կուռ հաստատ տեսակետ»: «… Վշտունին անմիջապես հայտարարեց, որ Չարենցի գրքում ոչինչ իրենը չէ, ոչինչ օրիգինալ չէ, որ այն ամբողջովին գրված է Մայակովսկու նման»: Մեջտեղ է հանվում «Облако в штанах» — «Ամպը փոխանիս մեջ» ապխտությունը, փոխանակվում են մանր ու մեծ «սիրալիրություններ» (Հախումյանի հուշարկումով ասած), որից հետո հայտնվում է, թե Չարենցի ու Հախումյանի պատասխանից հետո երեկոն ավարտվել է գիշերվա 12-ն անց կեսին՝ տեղից տեղ փոխադրվելով:

Ուրախ-զվարթ հաղորդում. առավել ևս հուշարկո՛ւմ. և սակայն, այնուամենայնիվ, այսպիսի հիշարժան մեջբերումով. **«Այդ ամբողջ երեկոյին Չարենցը ոչ մի վայրկյան չկարողացավ հանգստանալ»**: Եվ դրա կողքին այս մյուսը. «… ամբողջ զեկուցումն անցավ ռեպլիկների կրակի տակ… կրքերը բորբոքվել էին կատաղության չափի… դահլիճը մեկ թնդում էր ծափահարություններից, մեկ խուլ շվվացնում…» (ՀԵԶմ, 2, 159–160): Դե՛, իրավագետ-փաստաբան Հա-

[15] ԽՀ, 1923, 21 փետր.

խումյանի կրակի վրա յուղ լցնելով *դասախոսությունը* կատաղի շոուի *վերածելու վարպետությանը ինչպես կարողանար դիմակայել բանաստեղծը իր քայքայված-փխրուն նյարդերով: Եվ հետադարձ հայացքով էլ (կարծես տեսական կռվանքի ու հրեշավոր արարքի տերը ինքը չէր) ազատ-անկաշկանդ չքմեղանար, գրելով, թե. «Հիշում եմ, Մայակովսկուց նա հաճախ արտասանում էր միայն այս քառատողը.*

Уже ничего простить нельзя.
Я выжег души, где нежность растила,
Это—труднее, чем взять
Тысячу тысяч Бастилий —

ընդ որում այդ տողերն արտասանում էր նույն թախծոտ ինտոնացիայով, որով կարդում էր Տերյանին և կարծես ափսոսում էր, որ պոետ «Выжег души, где нежность растила...»:

Ո՛չ, ինչ ուզում եք ասեք, բայց նրա կրծքում խփում ու թպրտում էր շատ քնքուշ, շատ վիրավոր մի սիրտ...» (ՀԵԶմ, 2, 162):

Դժբախտաբար, ՀԵԶմ երկրորդ գրքում Հախումյանի հուշերը զետեղելիս չկար Մահարին, չկային ո՛չ Մ. Գևորգյանը, ո՛չ Մ. Մազմանյանը... լրացուցիչ այլևայլ տեղեկություններ արձանագրելու համար:

Բայց դառնանք հետ՝ արձանագրելու դասախոսությանը հաջորդած քաղաքական կռվանքներն ու սպառնալիքները. նախ անմիջականորեն ավարտին հաջորդած այս մեկը, այն էլ ընդամենը քամահրական հեգնությամբ. «... Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ Միությունս երբեք չի խուսափում և պատրաստ է Չարենցի հետ միասին գնալ ժողդատարան՝ **եթե այդ Չարենցին հաճույք կպատճառի**»:

Բայց ինչ հաճույք է, եթե՝ «Միությո՛ւնս, միությո՛ւնս»... իսկ ովքե՞ր էին միությունը ներկայացնում, և ո՞վ էր, այդ ո՞վ էր թիկունքից **մոմբլանաչափ այդքան ուժ ու վստահություն ներշնչում ինքնակոչ միությանը...**

* * *

Գործը, իհարկե, ժողդատարան չի հասնում, բայց օրեցօր ընդարձակվում է գրապայքարի «ճակատը»՝ ձգվելով Թիֆլիս ու Մոսկվա: Մոսկվա-կենտրոն... նախ և առաջ:

Եվ պայքարը միանգամից շիկանում է, երբ այնտեղից գրոհում է Հայկունին՝ միանգամից «Քուրա» ամսագրով («Օրգան պրոլետարական ստեղծագործության») և դրա «Կոկորդիլոս» հավելվածով: Մաղձի անսպառ զինանոցով ամբաստանվում են Հայաստանի ժամանակի իշխանության ներկայացուցիչները, գերազգական մոլեռանդությամբ Չարենցը և «Երկիրնաիրի «Նորքը»... և դարձյալ

ոչ թե ինչ-ինչ անհատներ, այլ «Մոսկվայի հայ գրակ.-գեղ. խմբակցության» հաշվետվություն-որոշումներով: Ահա՛ որոշ հատվածներ Գ. Հայկունու, Հ. Գյուլի-Քեխյանի և Իվ. Ցիլիպչենկոյի դատախոսությունների հաղորդումներից[15].
«1. Գ. Հայկունին նյութ է ունեցել «Երեքի դեկլարացիան և Չարենցի ստեղծագործությունները: Նա մանրազննին վերլուծելով... չնչանել է այդ դեկլարացիայի բացասական էությունն ու հասարակական արժեքից զուրկ լինելը»:

Դատախոսության երկրորդ մասում Գ. Հայկունին կանգ է առել Չարենցի 2 հատորների վրա և՛ քայլ առ քայլ հետևելով նրա ստեղծագործություններին... բազմաթիվ ցիտատներով ապացուցել է պոետի կղերական, շովինիստական, պոռնոգրաֆիական, հետադիմական ոգին... Կանգ առնելով նրա «հեղափոխական» պոեմների վրա, բնորոշել է նրան որպես գյուղացիական, մանր-բուրժուական երգչի՝ էսէրական-դաշնակցական ու մենշևիկյան իդեոլոգիայով շաղախված:

... Պրոլետարական, կոմունիստական առողջ իդեոլոգիայի բացակայությունը, պոետի հիվանդագին և հեղհեղուկ բնույթը, ահա այն խոցերը, որ ռադիկալ բուժման կարիք են զգում: Չարենցը ինքը թոքախտավոր է...»:

Ասել է ինչպես Տերյանը, որը և հաստատվում է «Գերեզմանների պաշտամունքը Խորհրդային Հայաստանում» ֆելիետոնով՝ ուղղված «Նորքի» դեմ, որ համարձակվել էր հանդեսի առաջին գրքում տպագրել **Ն. Մառի «Իմ ուսանող Վ. Տերյանի հիշատակին»** խոսքը: Ոչ միայն Տերյանի, այլև Թումանյանի, առհասարակ հայոց անցյալի մշակույթի հանդեպ հարգալից վերաբերմունքի համար, որի պատճառով «Նորքի» խմբագիրներ Աշ. Հովհաննիսյանն ու Աս. Մամվյանը նշավակվում են այսպիսի տողերով.

«Սապատավորին միայն գերեզմանը կուղղի:
«Նորքի» խմբագիրները փորում են իրենց գերեզմանը:
Նրանք գերեզմանապաշտների թվին են պատկանում:
Դեպի խավարը-երկերեսանի՛ յանուսներ:

Ամենաթունոտ-մաղձոտն էլ՝ Տերյանի ու Մյասնիկյանի, ապա և Չարենցի մտերիմներից Ց. Խանզադյանի հասցեին եղած հիշոցներն են՝ «Կարմրաթշիկ զուռնաչին և բութ քննադատը» ծանակով... (Ասել է Չարենց ու Խանզադյան...):

Դե՛, մենք էլ գրական պայքարում քաղաքական մեղադրանքները սովորաբար առնչում ենք 1934–1937 թթ. հետ, մոռանալով, թե ինչեր էին թաքնված Կարինյան-Հայկունի-Վշտունի-Արշարունի «առանցքի», ասենք միայն «էսէռական-դաշնակցական» մեղադրանքի տակ: Ինչպես հայտնի է, 1918-ի հուլիսի 6–7-ի արյան մեջ խեղդված ձախ էսէռների ընդդիմությունը, որ մինչև երեկ հա-

[15] Հիշենք. այս Ցիլիպչենկոն այդ ժամանակ «Պրավդա» լրագրի գրական-գեղարվեստական բաժնի վարիչն էր: Միաժամանակ հիշեցնելով. 3-ի դեկլարացիան կրում էր նաև Գ. Աբովի և Ա. Վշտունի ստորագրությունը, իսկ ինչո՞ւ խոսք չկար նրանց մասին: Ինչո՞ւ... զարմանալի է, չէ՞...

մարվում էր խռովությունն՝ սերտորեն առնչակցված է Բրեստի հաշտությանը: Որքանով Հայ հասարակայնությունը հավաքականորեն նույնպես չէր կարող դեմ չլինել պայմանագրին, որքանով ձախ էսէռների առաջնորդներից մեկն էլ Պռոշ Պռոշյանն էր, այլև այդ կուսակցության շարքերում կային նկատելի թվով հայեր... և որքանով հետևում դաշնագրի արդյունքում մկրատված Հայրենիքի ծանր վերքերն էին՝ հիմա էլ Ղարաբաղը կորցնելու, վերստին գետնահարվելու գալարումը... արժե՞ արդյոք շարունակել բացել խաղաթղթերը և ուղղակի չասել, թե ո՞ւմ Սատանի ջրաղացին էր ջուր լցնում «առանցքը» և... հուլիսի 6–7 հիշեցնող ինչպիսի սպառնալիքով...

Չերկարացնենք. այդ քսամնեկի գրապայքարի հրահրումները քաղաքական բացահայտ ահաբեկչություն էր՝ հրահանգված–բորբոքված կենտրոնից, որի նպատակն էր մտավորականությանը զբաղեցնել գաղափարական խժդժություններով, ի վերջո, նույն մեղադրանքների կապանքներով շղթայել Ալ. Մյասնիկյանին...

Պատասխան ...խուլիգանների «գրական» արշավանքին

Ուրեմն և. այդ ամենի դեմ հարկադրված էր գրել «Պրոլետարական գրականությո՞ւն, թե խուլիգանների «գրական» արշավանք» («Բուրա» №1. հավելված «Կոկորդիլոս». հրատարակություն «Մուրճ և մանգաղ»–ի, Մոսկվա, 1923)» – նալբանդյանական թափի պատասխան՝ անքանքարություն–ագիտություն, ստահակություն ու սադրիչություն, պիղծ նախանձ ու չարություն... դատափետող բովանդակությամբ: Ավելին, գայրույթի բուռն, տրամաբանորեն փաստարկվող–հաստատվող–հերքող միատեղ լիցքերով շարադրված թուղթ, որ կարող է դասվել **հայոց դարավոր հրապարակախոսության թղթի ժանրի առաջնակարգ նմուշների շարքը**: *Մանավանդ որ ճշմարիտ գրականության, ճշմարիտ խոսքի, ճշմարիտ ճաշակի պաշտպանությունը՝ նմանատիպ հարձակումներից առ այսօր շարունակում է մնալ կենսական–արդիական անհրաժեշտություն:*

Եվ այսպես «1923 թ. մարտ 23, Երևան» տարեթիվը կրող այդ պատասխանը՝ Եղիշե Չարենց, Եղիա Զուբար, Պ. Ֆոլյան (Զուբարը ԽՀ խմբագիրն էր, Ֆոլյանը՝ խմբագրության աշխատակից) ստորագրությամբ հրապարակվում է ԽՀ մարտի 25-ի թվում: Սկիզբը, կարծես խաղաղ, էպիկորեն հանդիստ, ասես անհատների չնչով, Չարենցը շարունակում է ներկայացնել գրականության անպաշտպան վիճակը, երբ «... օգտվելով, կարճ ասած, այդ միանգամայն **անպաշտպան ֆրոնտի** *միանգամայն լքյալ վիճակից–այսօր, մեր աչքերի առաջ, այդ ֆրոնտ են խուժել հազար ու մի տեսակ ավանտյուրիստներ և կասկածելի անձնավորություններ և անում են իրենց խուլիգանական գործը, ոտնատակ անելով մի կողմից՝ ընդհանրապես* **մարդկային կուլտուրան՝ լեզուն, գրական խոսքը**, *արվեստն ու գրականությունը՝ «պրոլետարական», մի՛շտ «պրոլետարական» կուլտուրայի անունից հասցնելով գրական կուլտուրայի վանդալական վիճակի, կապկային հոտենտո-*

տության: Թե ինչպիսի՞ շփոթ է տիրում այդ ասպարեզում—դժվար է պատկերացնել: «Որոշված է», ինչպես ասում են, «որ պետք է լինի պրոլետարական գրականություն» — և հարցը համարվում է փակված. ամեն ոք, թեկուզ տգետ ու ավանտյուրիստ, եթե միայն ընդունում է այդ «պարտադիր որոշումը» և խոսում է դրա անունից—ինչպես ասում են՝ «տեղ ունի մեր գլխին», ոչ ոք չի էլ մտածի, թե վերջ ի վերջո ովքե՞ր են «պրոլետարական կուլտուրայի» անունից խոսողները. գուցե մաուզերիստներ են դրանք, ո՞վ իմանա: Էլ մենք չենք խոսում տվյալ «պրոլետարականի» գրական քանքարի կուլտուր-կրթական նշանակության մասին. սատանան գիտի, թե ո՛ւմ ինչ կարող է «դուր գալ» (6, 65–66):

Ասված է ամեն ինչ. և ասվածը սպառիչ գնահատականն է խորհրդային, ինչպես և խորհրդահայ գրականության 80-ամյա ընթացքների, որին քայլ առ քայլ ուղեկցել են գրական ապաշնորհների ու միջակությունների արշավանք-դրոհները, կամ համենայն դեպս՝ ընդհատակյա անխափան-անզիջում հալածարշավը: Եվ դարձյալ՝ ինչպես այս օրերին, մշտապես «առանց ամենափոքր ռիսկի» շնորհելով ընդամենը «կարծեցյալ հաղթանակներ և թիթեղե դափնիներ» (6, 65): Իրոք, ուսանելի դասեր: Իսկապես ի՞նչ է մնացել Հայկունու և նրա զինակիցների՝ Արշալույս Արշարունու, «ոմն» Վանդեկի և Եփրեմ Տեր-Մարտիրոսյանի վա՛յ-«կատակից», բացի այս «գրական» թուղթը: Մեկ էլ արդեն հիշատակված է արշարունու հուշավարկածը, ըստ որի Մյասնիկյանը մեծաքանակ կոնյակներ է տրամադրել Մոսկվայում ապրող Չարենցին[17]: Ըստ այդմ նկատի ունենալով նաև «Կոկորդիլոսի» 5-րդ էջում զետեղված այս «Ազդը», ի վերջո, պատկերացնելու համար ապաշնորհների անհանդուրժողականության չափը. «Հայաստանի պրոլետարական գրողների ասցիացիայի նախագահ Ազատ Վշտունուց տեղեկանալով, որ Կարմրաթշիկ Չուխաչին հոգեվարքի մեջ է, խմբագրությունս որոշեց. 1. Կոկորդիլոսական արցունքներ թափել...» և այլ՝ յուրյանց միանգամայն վայել անվայելչություններ:

Ուրեմն ամփոփելով ասենք. պարզապես արժե, որ ընթերցողը անդրադառնա բանաստեղծի այդ ծառացմանը և վայելի նրա բանավիճելու համն ու հոտը, ճանաչի նրա մտքի տրամաբանական ուժն ու ճկունությունը, համոզելու կարողու-

---

[17] Ըստ երևույթին կոնյակասիրություն-կոնյակախումը Արշարունուն հատուկ է եղել ամբողջ կյանքում. 50–70-ական թվականներին պրոֆեսորական կարգավիճակով նա դարձել էր ՎԱԿ-ի (Բարձրագույն ատեստացիոն հանձնաժողով) գրախոս: Ասել է թե՝ նրա գրախոսականներով էին հաստատվում մասնավորապես հայ բանասերների ու պատմաբանների թեկնածուական ու դոկտորական գիտական աստիճանները: Ուստի և ամեն աշուն կնոջ ու զավակի հետ ժամանում էր Երևան և ժողոված մեծաքանակ կոնյակներով վերադառնում Մոսկվա: Մոսկովյան հասակակիցներն էլ անվանում էին Խլեստակով:

Կուզենայինք ավելացնել հետևյալը. իր պատասխանում «Համարները չենք հիշում» նշումով Չարենցը հիշատակում է Արշարունու տպագրած գրությունները Դաշնակցության պարբերականներից «Շիրակի աշխատավորում»: Եվ համապատասխան ծանոթագրությամբ ասված է, թե «Շիրակի աշխատավորում» տպած նրա հոդվածը չհաջողվեց գտնել» (6, 604): Բայց գտնվեցին Չարենցի վկայածը հաստատող նույնատիպ այլևայլ նյութեր պարբերականի 1919-ի համարներում:

թյունը: Մեկընդմիշտ իմանալու համար, որ մեծատաղանդ գրողները, բանաստեղծները, արվեստավորները անպայման ունենում են բնածին հզոր միտք, որը, սովորաբար, **աստված խնայած է լինում անքանքարներին:** *Միաժամանակ ունենում են և գեղարվեստական արտակարգ տեսողություն ու լսողություն, սուր ու սրված այլևայլ զգայություններ՝ համապարփակ ամեն ինչի, այդ թվում գեղարվեստական մտայնությունների, գրական շարժումների ու հոսանքների:*

Սեփական աստվածատուր զգացողություններով էլ բանաստեղծը մերժում էր այն «պարտադիր որոշումը», որի կարգախոսով պահանջվում էր՝ **«... որ պետք է լինի պրոլետարական գրականություն»,** *պետք է ստեղծվի «պրոլետարական կուլտուրա»... «կոչեցյալ»՝ ինչպես գտնում ենք վերը քաղված հատվածում:*

Եվ այս ամենին էլ, ահա, ուղեկցում էր սույն դառնաշունչ իրողությունը...

ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ «ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ»...

Տ. ՕԼԳԵՆԻՆԻ «ՓՐԿԱՐԱՐ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՐՁ...

Չարենցի գրադարանում (այսուհետև՝ ՉԳ) պահպանվածների թվում, բնականաբար մեծ հետաքրքրություն է ներկայացնում, ահա՛, այսպիսի տեսքով մի գիրք.

Джемаль—паша
Записи
1913—1919
Издание Закрайком РКП (б)
Тифлис, 1923

ներսի էջի վրա արդեն՝ *Записи Джемаль—паши*
1913—1919 гг.

Перевод с английского Б. Т. Руденко с предисловием Сим. Такоева

վերևից նախ կապույտ մատիտով՝ Т. Гинсбургу, ապա կարմիր մատիտով մակագրված.

Г. Москва
Закпредставительство для передачи Гинсбургу

ապա կապույտ մատիտի վրայից թանաքով գրված է.

Направить г. Москва Закпредставителью т. Тер—Габриеляну для передачи Гинсбургу 4/11. տպագրությունը չհաջողվեց պարզել:

Էջի հետևում էլ տպավորիչ շրջանակի մեջ նշված է. Исполнено по заказу Закрайкома РКП (б) Книгоиздательство «Красная книга». **«Ռուսական հրատարակության առաջաբանը»** *կարճառոտ է. որով հավաստվում է, թե հակառակ «նախկին Ռուսաստանի» Խորհրդային Միության քաղաքականությունը բարեկամական է՝ ինչպես Մերձավոր Արևելքի, այնպես էլ Թուրքիայի հանդեպ: Թարգմանիչն էլ հայտնում է, թե անգլերեն լեզվով (թուրքերենից) թարգմանողի մեղքով բնագրում կան որոշ անհասկանալի տեղեր, ուստի և խնդրում է ներողամտություն: Ապա հաջորդում է սույն «Հեղինակի կողմից».*

«Իմ անձնական մասնակցությունը Օսմանյան կայսրության ընդհանուր քաղաքականությանը սկսում է 1913 թվի հունվարի 23-ի coup d' etat-ից (պետական հեղաշրջումից՝ Ալ. Զ.):

Այդ օրը երեկոյան ես դուրս եկա ճանապարհների հաղորդակցության վարչությունից և ուղևորվեցի դեպի Բարձր Դուռը: Դեպի որը այդ միջոցին վազում էր հսկայական ամբոխը:

Այդ րոպեին մի քանի ժամ առաջ մեծ վեզիր նշանակված Մահմուդ Շևքեթ–փաշան վերադառնում էր կայսերական պալատից և հանդիպեց ինձ հենց մեծ վեզիրի պալատի մուտքի մոտ:

Տեսնելուն պես էլ նա դիմավորեց ինձ հետևյալ բառերով.

— Ջեմալ–բեյ, ես ուզում եմ, որպեսզի դուք անհապաղ հանձն առնեք Կոնստանդնուպոլսի զինվորական նահանգապետությունը և առանց րոպե իսկ կորցնելու միջոցներ ձեռնարկեք մայրաքաղաքում պահպանելու կարգ ու հանգստություն:

Ինչպես ես արդեն ասացի, իմ նշանակումով Կոնստանդնուպոլսի զինվորական նահանգապետի այդ բարձր և չափազանց պատասխանատու պաշտոնում սկիզբը եղավ իմ անմիջական մասնակցությանը իմ հայրենիքի ընդհանուր քաղաքականությանը:

Այս պահից էլ ես սկսում եմ իմ մեմուարները»[1]:

---

[1] *Բայց երևի թե հարկ կա ծավալվելու նաև տողատակով. այդպես ստացվեց:*

Հայոց համազգային շարժման չեմին, բնականաբար, հետաքրքրեց **Ռուբէնի** *(Տեր–Մինասյան)* **«Հայ Յեղափոխականի մը յիշատակները»** *գիրքը, (Թեհրան, 1982): Միանգամայն լրջորեն, քանի որ կից կրում էր* **«Կարսի հնոցին մէջ»** *հանձնարարականը Զարենցի պոեմանման վեպի Մազութի Համոյի – Համո Նորհատյանի շրջագայությամբ և բազմալիսի «հիշատակությունների»: Ասենք այսպիսի. «Կարսը տեսած էր անցորդ և մնայուն շատ քարոզիչներ, զորս կը հիշեր: Ան տեսած էր կակազ, բայց խորիմաստ լեցուն Ռոստոմը, որուն համար կըսեին. «Ականջ կը գնես, բան կը հասկնաս և կը կշտանաս»: Տեսած էր Խաժակը, որ երբ կը խոսեր, կարծես Ալագյազի հովը կը բերեր: Տեսած էր Ն. Աղբալյանը, որը կարծես մարգարեի նման մարդու ատամները բերնի մէջ կը համրեր... Տեսած էր և՛ շատ ուրիշներ, որոնք ատոնց պես եկած ու անցած էին և բան մը թողած: Բայց բոլորի մէջ մեկը մնայուն էր մինչև իր կյանքի վերջին վայրկյանը: Այդ՝ Նորհատյանն էր, որ ընտանի էր դարձած...». ասել է թե և այլն...*

Վերաքաղել եմ և հուշարկումներ, անդրադարձել տարբեր ժամանակներում և առիթով: Նաև առանձնապես **Ռուբէն Դարբինյանի** *գրչին պատկանող Ռուբեն Տեր–Մինասյանի կյանքի ու բազմահատորյակի «Յառաջաբանի տեղ» բնութագրին: Ճիշտն ասած, առաջին տպավորությունը եղել է «Նայիր–մեխիր», և առ այսօր մնում է նույնը՝ հակասություններով բեռնավորված:* **«Յառաջաբանի տեղի»** *առաջին հատվածներից սկսած. այսպիսի. «... Ռուբէնը արհեստով գրականագետ չէր եղած, այլ եղած էր գերազանցապես զենքի մարդ, ապրած էր մեծ մասամբ առօրեկյա կյանք մը և իր հեղափոխական գործի բերումով խուսափած էր լայն հասարակության աչքեն»:*

Իսկ ընդամենը մի հատված հետո հետևյալը. «Կարելի է համարձակորեն ըսել, թե Արամեն հետո ոչ որ այնքան բախտորոշ դեր կատարեց Հայաստանի Հանրապետության կենդանի իրականության դառնալու մէջ, որքան Ռուբէնը: Եվ եթե այսօր Սովետական անվան տակ գեթ Հայաստան մը ունինք միապաղաղ հայ զանգվածով ատիկա մեծագույն չափով կը պարտինք Ռուբենի քաղաքական հեռատեսության...»: Հարց է ծագում, բայց ինչո՞ւ էր ընդամենը երեք տարի անց՝ **Դաշնակցության յուրյանց նույն թևը դեմ ներգաղթին...** *Դրա կողքին կասկած է հարուցում Դարբինյանի նշած մշտապես հապշտապ առանց արդյունքի–անօգուտ տեղից–տեղ փոխադրվելու Ռուբենի սովորությունը – դրա կողքին էլ Դարբինյանի հերթական վկայությունը, թե՝ «Ռուբենի խառնվածքին մէջ կար նաև* **զորավոր արկածախնդրական գիծ մը**, *առանց որուն ան դժվար թե ընդունակ ըլլար Ռուբեն Փաշա դառնալ Մշո մէջ: Այդ և շարք մը ուրիշ կողմերով ալ, կը թվի թե, նման էր նշանավոր անգլիացի Լորենսի, որ այնքա՛ն նպաստեց արաբներու ազատագրման թրքական լծեն»: Անխուսափ սպասվում է, թե ո՞ր արարքի կամ փաստակի համար է «Մշո մէջ» դարձել «Ռուբեն Փաշա... Զորավար Անդրանիկի օրինակո՞վ... թե՞ այլ:*

Մի այլ տեղում էլ նորին նալին–մեխին չափել–ձևելով,— գրում է. «1919–ի ձմռան, երբ ես հաջողեցա սովետական աշխարհեն ազատվիլ և երթալ Երևան, երկու ամիս ապրեցա Ռուբենի հետ ու այդ առեն երկա՛ր, շատ երկար պատմութիւններ ըրի անոր համայնավարներու հաստատած կարգերուն և բռնութեան մասին: Բայց ան, շաբաթներ շարունակ զիս լսելե հետո ալ, վերապահութիւն ցույց տվավ իր լսածին հանդեպ...»: Դե՛, սա էլ նշանակո՞ւմ է, թե մնում էր ռուսամետ–համայնավարամետ, և դարձյալ առկախված նալին–մեխինով:

Առավել կասկածելին մնում է Առաջին համաշխարհայինի օրերի Տարոն աշխարհի բախտին վերաբերող սույն հատվածը. «Բնական է, որ Ռուբեն չուզեց անցնիլ Կովկաս, առավել ևս միանալ հոն սկսվելիք կամավորական շարժման ի նպաստ Ռուսաստանի: Ան մնաց Տարոնի մեջ, և ժողովրդի զինված մասին հետ կռվեցավ թուրքերուն դեմ, որոնք ձեռնարկած էին բովանդակ հայ ժողովրդի բնաջնջման: Կասկած չկա, որ ան պիտի հաջողեր փրկել Տարոնի հայութիւնը, եթե ժամանակին իրեն օգնութեան հասնեին ռուս զորքերը ու հայ կամավորական խումբերը այնպես, ինչպես որ օգնութեան հասան Վանի մեջ:

Դժբախտաբար Տարոնի ժողովուրդը, թեև Վանի հայութենեն ավելի երկար դիմադրեց թուրքերուն,— բայց չկրցավ ազատվիլ բնաջնջումեն, որովհետև ռուս զորքերը և հայ կամավորական խմբերը չհաջողեցան ժամանակին օգնութեան հասնիլ անոր ալ: Այդ պատճառով էր, որ Ռուբեն խումբ մը կռվողներով միայն ի վիճակի եղավ կտրելու թշնամիին շղթան և ապաստան գտնելու Կովկասի մեջ»:

Ինչ–որ մտացածին–հակասական պատճառաբանութիւն է «ստորերկրյա կյանքի» սովորի և «զենքի մարդու» հասցեին: Եվ հետո. Տարոն աշխարհը գոնե մեկ «զենքի մարդ» չունե՞ր, որ գլխավորեր պաշտպանութիւնը... և հայտնվում է Մշո Փաշա Ռուբենը: *Մինչդեռ Երևանում գործելիս տասնյակ վկայութիւններով (նախապես լսած) համոզվել է թղանշի: Այնպես որ, ամեն դեպքում, վայել չէ այդպիսիններին դասել–*հիշատակել Լ. Շանթի, Ն. Աղբալյանի, Ռոստոմի շարքում: *Թեև այնուամենայնիվ Ռուբենի գրքից կարելի է քաղել բազմաթիվ ավյալներ փաստեր վերծանելու–լուսաբանելու համար ժամանակի պատմական որոշակի իրողութիւն-ներ–*երես–աստառով: *Ինչպես, ասենք, սա. հանգամանորեն անդրադառնալով Կարսի «ստորերկրյա» կոմիտեի բնույթին,— հեղինակը գրում է. «Ռուս իշխանութիւնը աչալուրջ կը հսկեր: Ան ամեն ինչեն տեղեկութիւն ուներ: Արդեն իրեն դեմ եղած գործողութիւնները այնպիսի բնույթ ունեին, որ չէր կրնար չնկատել: Ան հսկա ուժ ուներ այդ զինվորական շրջանի մեջ: Իր զորքերուն քանակը կրկնակի կամ հավասար կու գար քաղաքի բնակչութեան...*

Եվ, սակայն, իշխանութիւնը շվարած էր և չէր գիտեր իր ընելիքը: Նախ՝ որովհետև հայութիւնը միացած էր, մեկ մարմին էր կազմած Դաշնակցութեան շուրջը, որին մեկ անդամին դպչիլը կրնար կրկնել տալ այն փորձանքները, որոնք քանի մը ամիս առաջ եղած էին եկեղեցական ցույցերուն առեն: Եվ դեռ ավելին կը սպասեին՝ մինչև զինական ապստամբութիւն...»:

Սա 1903–1905–ի իրողութիւն է: Ինչ խոսք, մինչև 1917–1918–ի ընթացքներով «ռուս իշխանութիւնը» ավելի գիտեր «իր ընելիքը» և նա կրկնապատիկ զենք ու զինամթերք կուտակած ուներ Կարսում: Ուրեմն և ասել կուզի՝ քանի՛–քանի՛ առումներով է ողբերգորեն արդարացի Նայիրյան բանաստեղծի ողբաձայն–դատափետի ծառանալը, որ նույնպիսի իրական «անանուն հավաքականության» *կորովով, զենք–զինամթերքով «զինականներին» չկասեցին ազգային սրտի՝ Կարսի անկումը՝ որի համար էլ* հավասարապես *բաժանում–մեղադրում է թե՛ Դաշնակցութիւնը, թե՛ բոլշևիկներին, թե՛ առհասարակ ազգի բոլոր խավերին... Վերից վար...*

Ուրեմն և էլ ինչ «դյուցազներգութեան» մասին է խոսքը, եթե կորցրել ես Հայրենիքի ինը–տասներորդը: Եվ ծիծաղելի՞ չէ արդյոք սույն ամպագոռգոռ մեծարանութիւնը. թե՝ «Կարելի է ըսել նույնիսկ, որ Ռուբենի հուշերը կը ներկայացնեն անգնահատելի աղբյուր ազատատենչ հայութեան նորագույն ժամանակներու դյուցազներգութեան: Եվ իսկապես, որքա՜ն շատ նյութ կա հոն մեր նոր և ապագա բանաստեղծներու դյուցազնական ստեղծագործութեան համար: «Տատրագոմի հարսը», որին նյութը Կոստան Զարյան առած էր Ռուբենի հուշերեն, մեկ պզտիկ դրվագ մըն է միայն:

Հարյուրավոր նման նյութեր կան ցրված այդ էջերում մեջ, որոնք բոլորն ալ տաղանդավոր գեղարվեստագետի շունչին տակ կրնան «Տատրագոմի Հարսին» նման գրական գլուխգործոցներ դառնալ...». տե՛ս Ռուբեն, «Հայ հեղափոխականի մը հիշատակները» Թեհրան, 1982, էջ 87, 19, 19–20, 25, 23, 27, 89–90, 33:

Եթե ուղղումով ուղղված չլիներ սրբազան Տարոն աշխարհի և հայդուկային շարժման գեմ. և, բնականաբար՝ չգիտես ո՞ւմ գրչին պատկանող (և ո՞ւմ պատվերով...) պարզապես կարելի էր համարել անարվեստ գործ... Եվ զարմանալի չէ՞. միայն Ավ. Ահարոնյանը կարող էր «դնահատել»չեքսպիրյան չափումներով...(Խե՜ղճ Շեքսպիր...)

...Վերնագիրն էլ լիներ «**Տատրագոմ**»–հենց, և ոչ թե Տատրաբերդ, Տատրավանք, Տատրաձոր... Ի ծանակումն հայոց տոհմ–տարուի... Զարմանալի է. Եվ այդ հուշերը կրում են «Պոլթրն, մարտ 20, 1952» տարեթիվը...

Ուրեմն և էլ ինչ դյուցազներգության մասին է խոսքը...
Եթե Վ. Սարոյանի ասած՝ «Ի՞նչ էինք, ի՞նչ եղանք...»:

Ասել կուզի, այդ Ռուբենի՞ն էլ դասենք Ս. Վրացյանի, Կ. Զարյանի... և մյուսների շարքին... Թերևս, թե՞ ուղղակի լրացուցիչ ինչ–ինչ հանդերձներով հանդերձ՝ այլ:

Եվ այսպես. տակավին 1903–1905 թթ. աշխարհում թիվ առաջին պրոլետարական ճանաչված երկրում, ռեակցիայի տարիներին ուռճանալով,— արդեն իսկ Առաջին համաշխարհայինի շեմին, 1913–ին Պ. Միլյուկովի և իր «Ռեչի» տխրահռչակ «կուլտուրական» վերափոխումներով վերաճում է հրոսակային մակարդակի: Հայության պարագայում բարձրակարգ՝ մի կողմից Տ. Օլգինինի, մյուսից Կ. Զարյանի գործունեության միմյանց ձայնակցող ցուցանիշներով:

Ճիշտ և ճիշտ տեղին ու ժամանակին հավաքագրված ցարական բանակի գեներալի որդի «միթոմ» Վենետիկում կրթություն ստացած (հաղի՜վ թե) ... ահա՛ այցելել էր Վերհառնին հենց այն օրերին, երբ նա դառնալի «Աղաղակով» արձագանքել էր Սղերդի (Տարոնի) արյունալի եղեռնին: Այցելել էր Ա. Ջոպանյանի և Էդ. Շահինի փաղեմի մտերիմ բարեկամին, և նրա խորհրդով դարձել մայրենի հայերենով բանաստեղծ... ինչպես ինքն էր «արձանագրում» (երևի թե հետագայում): Ի հետևանս՝ 1916–ին իտալերեն լեզվով լույս է տեսնում նրա առաջին **«Երեք երգ» գիրքը...** և նույն թվականի նոյեմբերի 27–ին էլ վախճանվում է Վերհառնը... Թվերի լեզվով վերծանման կարոտ, քանի որ ինքնակենսագրության տվյալով էլ 1915–ին Կ. Պոլսից մեկնել է Բուլղարիա, այնտեղից էլ, թե՞ երբ – Ֆլորենցիա, ապա 1919–1922 Պոլիս. արդեն այս դեպքում միանգամայն հավաստի սպասում է նախ Բեմալին, ապա 1922–ի օրերին՝ սովորաբար Հովհ. Թումանյանի–իրականում Ա. Կարինյանի գլխավորած՝ Հովհ. Թումանյան՝ որդի Համլետի և Արմենուհի Տիգրանյանի հետ, որոնք շարունակում են ճանապարհը դեպի Փարիզ,— և Դանուշ Շահվերդյանի խմբով... Հետաքրքիր է. այդ և հետագա օրերին Կ. Զարյանը բարեհաճել է արդյո՞ք տեսնել (նախահանգստում կամ մի այլ վայրում) արդեն ծանր հիվանդ–սպրդնած

Թումանյանին... Է՜հ, տեսած էլ չլինի, թերևս օրերից մի օր նրա բազմահարուստ **Հավաքածույում գտնվի** (կարելի է թե փոքր–ինչ տաշված) «Հազարան բլբուլը»...

Անշուշտ, այդ օրերին Բեմալի հետ Կարինյանի համաձայնությունների կողքին՝ համաձայնեցվում է և Կ. Զարյանի փոխադրվելը Երևան. Ղարաբաղյան հարցի քննությանը նախորդած ամիսներին՝ գենդիական ապրելակերպով արտասահման անցնելու ցանկությամբ վարակելու հատկապես Սարյանին ու Չարենցին. հաջողվել–չհաջողվելու պարագայում էլ սադրիչ մեքենայություններով զբաղեցնելու համար հանրությանը: **Որը մի ու մի հաջողվում է Տ. Հախումյանի հետ գործակցությամբ...**

* * *

Իսկ այսպես էլ ժամանակի հետ հաղթանակում է ահեղ ճշմարտությունը — կամ ըստ ժողովրդական տրամաբանական իմաստության՝

Մախաթը պարկում թաքցնել չի լինում...

Գրքում ընդգծումներ չկան. 17-րդ էջում պահպանվում է «ՀԽՍՀ պետական գրադարան» կնիքի խունացած հետքը: «Կոնստանդնուպոլսի զինվորական նահանգապետ 1913» վերնագրով առաջին գլուխը (թղթահատված 7-ից 25 էջը) պետական հեղաշրջման օրերի կայսերապետության վատթարագույն վիճակի և պետական գործիչների բնութագրեր են: Եվ քանի որ նշումներ չկան, հարկ ենք համարում քաղել ընտրովի որոշ հատվածներ, ինչպես սա. «Նազիմ փաշայի թաղումը» ենթավերնագիրը կրող էջերից. «... երբ մենք անցնում էինք ս. Սոֆիայի հրապարակով, ես ասես ակամա դարձա Մոկորպին և ասացի.

— Գիտեք ինչ, բարեկամս, եվրոպացիները ամբողջովին պատասխանատու են այս զոհի համար, որովհետև դուք՝ մշտական անարդարությունների ճանապարհով, թուրք ժողովրդին ներքաշեցիք քաղաքական պայքարի մեջ և հարկադրեցիք նրան կռվել հանուն ազատության, խուսափելու համար ստրկությունից ու աղքատությունից: Ով գիտե, դեռ քանի՞ թաղումների դուք պետք է մասնակցեք: Ոչինչ զարմանալի չի լինի, եթե վաղը դուք քայլեք իմ դագաղի հետևից:

Նա ձևացրեց, թե չի հասկանում ինձ և խնդրեց ինձնից հստակ արտահայտել իմ միտքը: Դառնալով նախ Ֆրանսիայի ոտնձգություններին, ես առանց փափկանկատության սկսեցի խոսել անգլիացիների, իտալացիների և հատկապես ռուսների քաղաքական մեքենայությունների մասին, ցույց տալով, որ հենց

Հենց վերջերս **«Չորրորդ իշխանություն»** *լրագրի 2002 թ. սեպտեմբերի 20-ի թվում* **«Ո՞վ կարող էր շահագրգռված լինել Մարիուս Յուզբաշյանի սպանության մեջ,** *կամ ինչո՞ւ է հաջորդը Սերժ Սարգսյանը» վերնագրով կարդում ենք. «Մենք որոշ հաջողություն ձեռք բերեցինք բալթյան էմիգրանտների կազմակերպության մեջ ներթափանցելու գործում, մասնավորապես Շվեդիայում: Լավ ցանց ունեինք ուկրաինական էմիգրանտների շրջանում, հատկապես Կանադայում, ուր ապաստանել էր մի քանի միլիոն ուկրաինացի: Բայց էմիգրանտների այն կազմակերպությունը, ուր մենք ամենից ավելի լիակատար էինք թափանցել, հայ տարագիրների խմբավորումն էր՝ Դաշնակցությունը: Ժամանակին Դաշնակցությունը եղել էր ընդգծված ազգայնական խմբավորում, որը պայքարում էր հայկական անկախ պետականության համար: Ժամանակի ընթացքում մենք այնտեղ այնքան գործակալ տեղավորեցինք, որ նրանք հասան ղեկավար դիրքերի: Մեզ հաջողվեց 1980-ականներին արդյունավետ կերպով չեզոքացնել խմբավորումը և Դաշնակցությունը դադարել էր պայքարել Հայաստանի խորհրդային իշխանության դեմ: Կազմակերպությունը և նրա անդամներից շատերը հավաքագրվել էին ՊԱԿ-ի կողմից: Տարիներ անց 1992 թ.-ին երբ Դաշնակցության ղեկավարները և այլ ազգայնականներ գրոհում էին Տեր-Պետրոսյանի դեմ բավարար չափով ազգայնական չլինելու համար, նախագահը (որի հետ ես մի քանի ընկերական խոսակցություն էի ունեցել) զանգահարեց մոսկովյան իմ բնակարանը: Նա ինձ խնդրեց օգնել կասեցնելու Դաշնակցության գրոհները, և ես նրան ու հայկական մամուլին տրամադրեցի 1970-ականներին էմիգրանտների այդ խմբավորման մեջ ՊԱԿ-ի խոր ներթափանցման մասին ինֆորմացիա»:*

Թարգմանաբար վերցված է ԽՍՀՄ ՊԱԿ-ի հակահետախուզության նախկին պետ **Օլեգ Կալուգինի «Առաջին վարչություն»** *գրքից. էջ 193:*

Դե՛, բոլոր հատվածները վերաբերում են 60-80-ականի գործակալներին. ասել է հաջորդելով Ա. Կարինյան, Ս. Վրացյան, Կ. Զարյան, Տ. Հախումյան... **և մյուս դասականներին...**

Ուրեմն և. «Պիտ պարտվի, պիտ մեռնի կեղծիքը մեր կյանքում, որ ապրի մեր ժողովուրդը» (Գ. Նժդեհ):

նրանք են երկրում պատճառ ապստամբության: ...Ես ավելացրի նաև, որ այժմ էլ, երբ բավական էր ամենաչնչին աջակցությունը Անգլիայի ու Ֆրանսիայի, որպեսզի փրկեն մեզ,— այդ տերությունները ոչ միայն մերժեցին որևէ աջակցություն, այլև մինչև վերջին ժամանակները չեն դադարում չարությամբ բանսարկություններ անել, այնպես որ դժբախտ թուրքերը, այդքան թշվառություններ վերապրելուց հետո, վերջացրեցին նրանով, որ սկսեցին կոտոր—կոտոր պատառոտել միմյանց:

Անգլիական զինվորական կցորդ Տիրելը, հետաքրքրությամբ լսում էր մեր խոսակցությունը, բայց չմասնակցեց:

Մոկորպը պատասխանեց. «Դուք ճիշտ եք» (էջ 8–9):

Այնուհետև չհատված էջերը շարունակվում են մինչև 193–ը, որ վերջավորվում է հետևյալ երկու հատվածով. «Իսկ եթե հիմա, ալլահը չփրկի, Կոնստանդնուպոլիսը՝ մուսուլմանական Խալիֆաթի բնական հայրենիքը պետք է կառավարի Ազգային լիգան (ինչ ցանկանում են եվրոպացիները),— շարիֆ Հյուսեյնի դավաճանությունը կարող է հասցնել փայլուն ավարտի: Նրանով, ինչպես ասում են. «Եթե դուք չմասնակցեիք Համաշխարհային պատերազմին, կկատարվեր դարձյալ նույնը. որքանով Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի նվաճողական ձգտումները՝ երեկվա գործ չեն. դա նրանց գոյության նպատակն է: Եթե պատերազմից այդ փոքր ժողովուրդները դուրս գային հաղթանակով, ապա անխուսափելիորեն կճնշեին մեզ. թույլի և անպաշտպանի ունեցվածքը միմյանց միջև բաժանում են ուժեղները: Ամոթ ու խայտառակություն, եթե մենք տայինք այն, ինչ ալլահ ինքը վստահել էր մեր հոգացողությանը:

Եթե ալլահին հաճելի լիներ, ապա այժմ Մուստաֆա Քեմալ—փաշայի սկսած ազգային շարժման շնորհիվ թուրքերը կարող են հույս ունենալ՝ հպարտ Ստամբուլը և գեղեցիկ Զմյուռնիան պահելու իրենց. և եթե ընտրեն ճիշտ ուղի. ապա կապահովեն իրենց ժողովրդի բարեկեցությունը՝ իրենց բնական սահմաններում» (էջ 196):

Այնուհետև մինչև վերջին 239–ը հատված էջը՝ գլուխ 9, և «**Հայկական հարցը պատմական ակնարկը**» խորագրով վերաբերում է նույն հարցին, և սկսում է այսպիսի տողերով. «Մենք, երիտթուրքերս անպայման հայերին, ի մասնավորի հայ հեղափոխականներին գերադասում ենք հույներից ու բուլղարներից: Հայերը՝ առավել լավ և քաջ են այդ երկու ազգերից. նրանք բաց և ազնիվ ժողովուրդ են, հաստատուն իրենց և՛ բարեկամության, և՛ ատելության մեջ»: Ապա հաջորդում են այսպիսի տողեր. «Վաթսուն տարի սրանից առաջ, ավելի ճիշտ... 1877–78 թթ–ից առաջ, խոսք իսկ չէր կարող լինել որևէ ընդհարման մասին կրոնական հողի վրա՝ այդ երկու ժողովրդի միջև... մեր ներքին կյանքում թուրքահայ բարեկամությունը անսահման էր: Երբ փոքրասիական թուրքերը մի քանի օրով իրենց գործերով թողնում էին իրենց գյուղերը, նրանք վստահում էին իրենց հարևան հայերին իրենց ընտանեկան հոգսը, իրենց ունեցվածքը և իրավունքը. նույնպես վստահությամբ էին վերաբերվում հայերը իրենց հարևան թուրքերին» (էջ 197):

Ապա դառնալով հետ՝ սուլթան Ֆաթիհին, նրան, ում վերաբերում են Չարենցի այս տողերը.

... Դու մեռել ես, սուլթան Ֆաթիհ:
Բայց դարեր շարունակ,
Մինչև օրս
Կենդանի է, սերած քո կաթից–
Քո դաժան,
Ժանտ թուրան թուրը... (2, 215),–

հաստատվում է թե՝ «Սուլթանը հայերին շնորհել է նույնպիսի իրավունքներ և արտոնություններ, որպիսիք շնորհել է հույներին»: Ըստ այդմ հեղինակը՝ անդրադառնալով պ. Մանդելշտամին, ավելացնում է. «Այդուամենայնիվ, մանդելշտամային տիպի անամոթ մարդիկ՝ անպատկառորեն այդ ազնվությունը փոխարինում են ողջ քրիստոնեության հանդեպ ատելության զգացմունքի: Որպիսի՜ անարդարություն»,— բացականչում է Ջեմալ–փաշան... Նշվում է նաև, թե «Հայերը լավ գիտեն, որ միայն այդ արտոնությունների շնորհիվ են հնարավորություն ունեցել պահպանելու իրենց կրոնն ու իրենց ազգությունը» (էջ 199):

Այնուհետև 19–րդ դարի կեսերից եվրոպական «սպեցիֆիկ մտայնություններից» սկսած բացատրելով «երիտասարդ հայերի» ձգտումները, շարունակում է. «Հայերը երազում էին հայոց անկախ պետականություն, որում իրենք կկարողանային իրենց ձևով տնօրինել քրդերին ու թուրքերին, որոնք մեծամասնություն էին իրենց թվաքանակով: Թուրքերն ու քրդերը, միանգամայն բնականորեն, դիմադրում էին նման պլանի իրագործմանը: Պարզ ասած, քրդերն ու թուրքերը լավագույնս գիտակցում էին, որ այդ ամբողջ պլանը ոչ այլ ինչ էր, քան առիթ, որով ռուսները կարող էին գրավել Անատոլիայի մեծ մասը՝ բնակեցված բացառապես թուրքերով ու քրդերով: Այդ պատճառով նրանք Հայաստանին նայում էին որպես շան... որին իրենց դեմ թունավորում էր Ռուսաստանը» (էջ 201–202):

Եվ ապա. «Հայոց հարցը հատկապես սրվեց 1894–1896 թթ., երբ համարյա հայկական բոլոր մարզերում ծայր առան ապստամբություններ: Հայկական խառնակությունները այն աստիճանի թեժացրին թշնամությունը քրիստոնյաների ու մահմեդականների միջև... որ նրանք պատրաստ էին արդեն հարձակվել մեկը մյուսի վրա և իրենց արյունով ծածկել Անատոլիայի խաղաղ հովիտներն ու նույնիսկ Կոստանդնուպոլսի փողոցները:

Եվ պ. Մանդելշտամը, որ անկեղծորեն ատում էր թուրքերին, չի կարող ժխտել, որ այդ տարիների արյունալի դեպքերի ժամանակ հայերի հանդեպ թուրքերը անբարյացակամ վերաբերմունք չեն տածել» (էջ 202): Ըստ այդմ, հեղինակի համոզմունքով՝ «Վերջապես, հայ հեղափոխականներից առավել նշանավորները սկսեցին հասկանալ իրերի իսկական դրությունը: Նրանք տեսնում էին, թե ինչպես՝ մինչդեռ Ռուսաստանը կանգ չառնելով ոչ մի բանի առաջ ուզում է հասնել

Թուրքահայաստանի անկախությանը,— կովկասահայերը կնդեքվում են ռուսական բռնակալական տիրապետության տակ: **Ստանալով Աբդուլ–Համիդի համաձայնությունը Արևելյան Անատոլիայում երկաթուղի չկառուցելու վերաբերյալ, Նիկոլայ Երկրորդը իր կողմից սուլթանին խոստացավ արգելել Թուրքիա վերադառնալ այն թուրքահայերին, որոնք 1896–ի ապստամբությունից հետո Թուրքիայից փախել են Կովկաս»** (ընդգծ.՝ Ալ. Զ.):

(Տեղահանությա՞ն որպիսի հետևողակա՞ն ստրատեգիա...՝ Ալ. Զ.)

«Այդ համաձայնությունը ամենից հստակ ցուցանիշն է հայերի հանդեպ ցարական Ռուսաստանի վերաբերմունքի: ... հայերով բնակեցված վիլայեթների համար պահանջելով ռեֆորմներ, լեբր հող տանելով թուրքահայության համար, միաժամանակ պնդում էր, որ այդ մարզերում չպետք է անց կացվի երկաթուղի. ինչպե՞ս է բացատրում պ. Մանդելշտամը»: (էջ 203): Շարունակելով բանավեճը, արդեն «Միություն և առաջադիմություն» դիրքերից Ջեմալ փաշան կտրականապես հայտարարում է, որ՝ «նրանց, որոնք մեղադրում են մեզ, «նեղ թուրքական քաղաքականության» նպատակներ հետապնդելու մեջ, ես հպարտորեն պատասխանում եմ, որ մենք վարում ենք ոչ թե «թուրքական» քաղաքականություն, այլ՝ «... օսմանյան միասնության» քաղաքականություն» (էջ 205–206): Եվ ապա. «... Մի խոսքով, բոլոր թուրքերը – որտեղ էլ բնակվելու լինեն – փորձում են ներկայացնել իրենց իրավունքները՝ հուսալով փառապանծ օսմանյան կայսրության աջակցությունը» (էջ 207):

Առավել ուշագրավը **«Ադանայի դեպքերը և հետագա ժամանակամիջոցը»** ենթագլուխն է, որ սկսում է այսպես. «Մարտի 31–ին, երբ մայրաքաղաքում բացված էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության առաջնորդների և կողմնակիցների դեմ դավադրությունը,— Ադանայում ծայր են առնում թուրք–հայկական կոտորածները:

Այնքանով, որքանով օգոստոսի կեսերին, ասել է՝ այդ արյունոտ իրադարձություններից չորս ամիս հետո, նշանակվել եմ Ադանայի նահանգապետ, ես քաջություն ունեմ հայտարարելու, որ ոչ ոք ինձնից լավ չէր կարող ծանոթ լինել հոգեբանական այն նախադրյալներին, որոնցից ծագեց այդ կոտորածը՝ ամենատխուր պատահմունքը մեր Սահմանադրության պատմության մեջ»:

Ուրեմն և սկսում է պատմությունից, նշելով թե՝ «... Խաչակրաց արշավանքների ժամանակ այդ մարզում գոյություն է ունեցել հայկական պետություն՝ Հայոց Կիլիկիա անունով, որին տեղի թուրք բեգ–ֆեոդալները վերաբերվել են թշնամանքով» (էջ 211):

Բայց չէ որ սկզբից հաստատվել էր, որ որևէ թշնամություն հնօրյա ժամանակներում երբևէ չի եղել: Ապա դառնում է կրկին սահմանադրությանը, անշուշտ, չքմեղանալու հավակնությամբ. «Սահմանադրության հռչակումից հետո հայերը Ադանայի վիլայեթում ստեղծեցին... Դաշնակցության մի քանի կոմիտեներ, հնչակյանները նորոգ հնչակյանների՝ ընդդիմադիր տեղի թուրք քաղաքական կազմակերպությունների, որոնք այդ շրջաններում հնուց գործում էին ընդ-

հատակյա, այժմ էլ լեգալացվել էին կառավարության կողմից»: Եվ այսպես գործը հասցվում է Ադանայի այդ օրերի եպիսկոպոս Մուշեղ Էֆենդուն, որի մասին իբր ինքը՝ «... հայերից նույնպես լսել է, որ այդ խառնակ օրերին հայ երիտասարդությունը՝ մոնսինյոր Մուշեղի հոգևոր զավակները, հասել էին այնտեղ, որ հրապարակայնորեն հայտարարում էին, թե՝ «Դեռ երկա՞ր պիտի հայերը հանդուրժեն թուրքաց լուծը»: Իսկ Մուշեղ Էֆենդին էլ հայտարարում էր, թե առաջին իսկ կոտորածի փորձի դեպքում՝ «ամեն հայի դիմաց կկոտորվի տասը»: Ուրեմն և՝ «Մոնսինյոր Մուշեղի այդպիսի հրավարտակը Ադանայի թուրքերին հարկադրում է ձեռնարկել համապատասխան միջոցներ»: Իսկ այս տողերին էլ անմիջապես հաջորդում են այսպիսիք. «Հետագա դեպքերի ամբողջ պատասխանատվությունը ինչ խոսք ընկնում է Ադանայի իշխանության վրա, որքանով թուլությունը չի կարող հարգելի պատճառ լինել իշխանությունների գործողության» (էջ 212):

Եվ այսպես իշխանություններին մեղադրելով Ջեմալ–փաշան հասնում է ժամանակին համապատասխան պատժի չարժանացած հայերին, գրելով. «1909 թվի ապրիլի սկզբին հայերի ու մահմեդականների միջև... այնքան սրված էին հարաբերությունները, որ ամեն բոպե կարելի էր երկու կողմից էլ սպասել որևէ էքսցեսի»: Ուստի՝ «Վերջապես, ապրիլի 14–ին մոնսինյոր Մուշեղի հրամանով հայերը առաջինը սկսում են նշանավոր «Ադանայի գործը» (էջ 213): Եվ այսպես հետևում են «մոնսինյորի» հասցեին մեղադրանքները . «Ես անձամբ համոզված եմ, որ այդ արյունալի դեպքերի գլխավոր մեղադրյալը եղել է մոնսինյոր Մուշեղը» (էջ 214) տարբերակներով:

Ապա հետևում են իր՝ Ջեմալի ձեռնարկած միջոցառումները, որոնց արդյունքում չորս ամսվա ընթացքում նորոգվում են հայերի տները, միաժամանակ զինվորական դատարանով մահապատժվում՝ մահմեդականներ. նախ 13–ը, երկու օրից՝ 17–ը, այդ թվում հնօրյա նշանավոր գերդաստանների պատկանողներից:

Ինչ վերաբերում է «մոնսինյոր Մուշեղին», ապա նրան «... հաջողվել էր օտարերկրյա նավով փախչել ... Ադանայի կործանումից երկու օր հետո, և շատ ափսոսում եմ, որ նա չընկավ իմ ձեռքը»,— ափսոսալի սրտանալիքով գրում է նա, ենթագլուխը վերջավորելով **հայերի «երախտագիտությամբ». «Իրենք հայերը շատ երախտապարտ էին ինձ իրենց քանդված տնտեսությունը վերականգնելու իմ կատարած աշխատանքից:** Ոչ քիչ թվով օտարերկրացիներ՝ ֆրանսիացի, անգլիացի, ամերիկացի և ռուս, որոնք հետևում էին իմ աշխատանքին Ադանայում, շնորհավորում էին ինձ իմ հաջողությունների, Ադանայի հայ որբերի Մանկական մեծ որբանոցի համար, որ կառուցել եմ ես, և մնում է մինչև այսօր» (էջ 215):

Հարց է ծագում. իսկ **ինչո՞ւ իրենց համար որբանոց չկառուցվեց, մանավանդ իր պնդումով նահանգում թուրքերը անհամեմատ քանակով շատ էին հայերից...**

Վերջին ենթագլուխը՝ վերնագրված **«Ռեֆորմներ»**, վերաբերում է արդեն

1912–1913-ին, և, բնականաբար, դարձյալ Թուրքիայի ճգնաժամային վիճակին:

«1. Մենք պատերազմի մեջ էինք Իտալիայի հետ.

2. Բուլղարիան, Սերբիան, Չեռնոգորիան ու Հունաստանը իրենց միջև ստեղծել էին միություն և առիթի էին սպասում՝ պատերազմ հայտարարելու մեզ.

3. Ապստամբեցին ալբանացիները.

4. Սիրիական ամբողջ մամուլը... պահանջում էր ռեֆորմներ արաբական գավառների համար.

5. Հայերի պատրիարքը մեկը մյուսի հետևից նոտաներ էր հղում ... պահանջելով Հայաստանի համար ռեֆորմներ:

6. Ամենավտանգավորը... մի ինչ որ «ազատագրական սպայական խումբ», որ քարոզում էր անարխիա բանակում...»:

Այդ վիճակում էլ սկսում է Բալկանյան պատերազմը. ուրեմն և Ֆրանսիան արաբներին գրգռում էր պահանջելու ռեֆորմներ Սիրիայի համար: Ռուսաստանն էլ Հայաստանի օկուպացումը համարելով անժամանակ, «հսկայական կարևորություն» էր տալիս «հայկական հարցին» և պահանջում էր Թուրքիայից լուծել այդ հարցը:

Մյուս կողմից՝ «Դեռևս 1912-թվի սկզբին էջմիածնի կաթողիկոսը (Ռուսաստանում) եվրոպա է ուղարկում Պողոս Նուբար-փաշային Թուրքահայաստանի համար հասնելու ինքնավարության: Այդ ուղևորությունը, իհարկե, ռուսների գործն էր» (էջ 217),-- գրում է Ջեմալ-փաշան՝ քաղելով 1913-ի փետրվարի 28 տարեթվով Փարիզի ռուսական դեսպանի նամակը արտաքին գործերի մինիստր Սազոնովին: Նամակում հայտնվում էր. Պողոս Նուբար-փաշան բազմիցս հայտնել է ինձ, որ հայերը ոչ մի դեպքում չեն պատրաստվում բարձրացնել Հայաստանի անկախության հարց կամ սահմանադրության փոփոխություն: Նրանք միայն ցանկանում են, որ Բեռլինի տրակտատով

նախատեսված ռեֆորմները, որ մշակել էին Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան,— ... վերջապես իրագործվեն կյանքում»:

Ուրեմն և նման փաստեր ու իրողություններ համադրելով՝ հանգում է այսպիսի եզրակացության. «Ինձ թվում է, որ արաբական ու հայկական ռեֆորմների տեսանկյունների այդ զարմանալի համընկնումը բավականաչափ ապացույց է Թուրքիան Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջև բաժանելու մտադրության»:

Ընթացքում հեղինակը մեջբերում է հայտնի մի այլ իրողություն ևս՝ անթաքույց սրտնեղությամբ ու քամահրանքով լի այսպիսի տողերով. «Այդ օրերին Կոնստանդնուպոլսում հայերի ազգայնական ցույցերը արդեն սկսում էին ընդունել միանգամայն անսովոր ձևեր: Հայերը կազմակերպեցին հանդիսավոր հոբելյան (ես չգիտեմ ով էր հոբելյարը), ի պատիվ հայկական տառերի հայտնագործման... Մենք տանում էինք այդ ամենը հանդուրժող համբերությամբ և միայն միջոցներ էինք ձեռնարկում անցանկալի էքսցեսների դեմ: Այդ ժամանակ լինելով Կոնստանդնուպոլսի զինվորական նահանգապետ՝ հայերից հրավեր ստացա մասնակցելու հանդեսներին... որտեղ և գովեստի խոսք ասացի հայ ժողովրդին», (էջ 218):

«Ռեֆորմներ» ենթավերնագրով այս էջերն արդեն ավելի քան բացահայտ վեճ են ռուսական դիվանագետ Անդրեյ Մանդելշտամի դեմ, որի առաջադրած ռեֆորմների «Ռուսական նախագիծը» կետ առ կետ քննարկումով ներկայացված են հաջորդ 216–226 էջերում. սույն վերջնամասով. «Չեմ կարծում, որ որևէ մեկը կասկած ունենա, որ այդ նախագիծը կենսագործելուց մեկ տարի հետո Էրզրումի, Սվազի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթները կլինեին Ռուսաստանի հովանու տակ, կամ ամենաքիչը՝ կօկուպացվեին ռուսական բանակների կողմից» (էջ 226):

Գրքի վերջին (228–239) էջերում արդեն զետեղված է **«Հայկական ռեֆորմների շուրջը ռուս–թուրքական համաձայնագրի բնագիրը»**. 1914–ի հունվարի 26–ից փետրվարի 8–ը տևած բանակցությունների արդյունքում՝ ստորագրված ռուսական կողմից Կոնստանդին Գուլկևիչի, թուրքականից՝ Սայիդ Խալիլ–փաշայի: Տեղը չէ և ավելորդ է քաղել հատվածներից մեկը կամ մյուսը, դառնանք, ուրեմն, Ջեմալի դիտարկումներին՝ փորձելով հետևել շղթայական ռեակցիային՝ առաջինից վերջինը. «Հայկական ռեֆորմների առաջադրվող պլանով ռուսական ներկայացուցիչը հաստատում է Հայաստանի օկուպացնելը ռուսների կողմից, որին ես միանգամայն համաձայն եմ: Ես չեմ կարող չհայտնել իմ զարմանքն այն բանի համար, որ Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի նպատակները այդպես պարզորոշ ներկայացնող տողերը տպագրվել են Նարնջագույն գրքում. այդ առթիվ ես միայն կարող եմ ասել. «Աստված ստեղծեց մեղավորին գիտակցել իր մեղքը»:

Վերջին տարիներին Ռուսաստանը նկատելիորեն փոխել է իր քաղաքականությունը կովկասյան հայերի հանդեպ: Տեսնելով, որ մեծապետական ռեժիմը ռուսահայաստանում բորբոքում է Ռուսաստանի բուռն մտադրությունների հանդեպ ուժեղ կասկած՝ հասարակական գործիչների շրջանում,– վերջին ժամանակներս ընտրեց այլ ձև և սկսեց նրանից, որ Էջմիածնի վանքին վերադարձրեց բռնագրաված ունեցվածքը, ներում հայտարարեց հայ քաղաքական բոլոր հանցագործներին, և, առհասարակ, որոշեց ներկայանալ հայ ժողովրդի բարեկամ: Այդ նոր քաղաքականությունը Ռուսաստանի հանդեպ՝ բերեց համակրանքը անգամ այն հայերի, որոնք մինչ այդ ատում էին նրան»:

Այնուհետև որոշ փաստարկներից հետո, Ջեմալը արձանագրում է, որ «Չնայած պայմանագրի ծանրությանը մեզ համար և օգտակարությանը Ռուսաստանի համար... Օսմանյան կառավարությունը անկեղծորեն ձգտում էր իրագործել իր վրա վերցրած պարտականությունները» (էջ 232):

Եվ սակայն, սկսում է Համաշխարհային պատերազմը, և «... մենք մտանք Մեծ պատերազմի մեջ՝ հուսով որ կստանանք իրեն հարգող ամեն ազգի պատշաճող իրավունք՝ անկախ, ազատ գոյության»:

Թերևս, մենք հայե՛րս ևս համարձակվեինք ունենալ այդքանը...

Այնուամենայնիվ, այդքանով չբավարարվելով, հարկ է համարում նախագծել նաև մի բուռ հողի վրա հայ ժողովրդի գոյության հեռապատկերը, գրելով. «Այդ

ամենի արդյունքում՝ Կովկասում նոր ձևավորված պետությունների մեջ մենք տեսնում ենք Հայկական Հանրապետությունը: Թուրքերը ոչ մի հիմք չունեն դեմ լինելու Հայկական Հանրապետության ձևավորմանը՝ Երևան և Էջմիածին քաղաքներով. բայց Թուրքիան շատ կուզենա, որպեսզի այդ Հանրապետությունը մշտապես լավագույն հարաբերություններ ունենա Ադրբեջանի և Վրաստանի Հանրապետությունների հետ... Հայկական Հանրապետությունը պետք է բարեկամ լինի և Փոքր Ասիայի անվիճելի սեփականատեր Օսմանյան կայսրությանը,— և նախանձոտ հայացք չնետի նրան, ինչի օրինական տերն ենք մենք» (էջ 238):

Ապա՝ այդքանով ևս չբավարարվելով, ամբողջ Կովկասի համար առաջադրում է առավել հեռահար ծրագրեր. «Եթե, ինչպես ես արդեն ասացի, մենք չորսով,— Օսմանյան կայսրությունը, Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի հանրապետությունները — չկնքենք Մերձավոր Արևելքի ժողովուրդների միություն մեր պաշտպանության համար՝ ընդդեմ Ռուսաստանի, եթե մենք համատեղ չգործենք և չօգնենք Հյուսիսային Կովկասի հանրապետության ձևավորմանը, ապա կասկած չի կարող լինել, որ մենք նորից կդառնանք Ռուսաստանի զոհը, որը մշտապես ձգտում է իր լուծը հագցնել մեզ»:

Որին և հետևում են լավատեսական վերջին ակորդները. «Դա, իմ կարծիքով, միակ միջոցն է մոռանալու արյունոտ անցյալը և ստեղծելու հող երջանիկ, լուսաշող ապագայի համար» (էջ 239)[2]:

* * *

Եվ սակայն ամեն դեպքում «երկու սրի արանքում» հայտնված Հայրենիքի ցավակներս պարտավոր ենք ձայն տալ մյուս կողմին ևս. այս անգամ արդեն մեր օրերում հրապարակված պատմական անհերքելի իրողությունների կարճառոտ փաստարկներով: Եվ այսպես Հովհ. Թումանյանի «Հայկական հարց և նրա լուծումը» (1913 հունվար) հոդվածից քաղելով սույն հատվածը՝ «... Դար-

---

[2] ԶԳ պահպանվում է նաև նույն մեծադիր գիրքը առանց նշումների.

Перепечатка воспрещается.
Министерство иностранных дел
Сборник
дипломатических документов.
Реформы в Армении
26 ноября 1912 года — 10 мая 1914 года
Петроград
Государственная типография, 1915

Բայց և նյարդային ինքնագրով՝ «Եղիշե Սողոմոնեա, Թիֆլիզ, 916 թ. մայիս» մակագրությամբ այս մեկը.

Լեո
Հայոց հարցի վավերագրեր
Թիֆլիս 1916

Երկուսն էլ բոլոր նշաններով թերթել է, երկրորդը՝ «Դանթեականի», առել է և Սուղուզի ճակատամարտի տառապալի հուշերով:

ձյալ Հայկական Հարցը Ռուսաստանի պաշտպանությանն ապավինած և Ռուսաստանի հետ:

Դարձյալ ռուսական մամուլն է արծարծում Հայկական Հարցը, և դարձյալ ռուսական զորքն է կանգնած էն դժոխքի երկրի սահմանի վրա, ուր դարձյալ կոտորածի սարսափի տակ ալեկոծվում է Հայ ժողովուրդը»[3], երիտասարդ հեղինակը շարունակում է. «Հայկական Հարցի շուրջը համընդհանուր այդ մթնոլորտում 1912–ի վերջին 1913 թ. սկզբին Թիֆլիս է գալիս պետերբուրգյան «Биржевые ведомости» լրագրի թղթակից, լրագրող **Անտուան Բերյոզովսկի–Օլգինսկին (Տ. Օլգենին)**: Մինչ այդ նա յոթ ամիս եղել էր Բալկանյան թերակղզում՝ Ալբանիայում, Սերբիայում, Բուլղարիայում, և վկան էր այդտեղ ծավալված ռազմական դեպքերի: Ինչպես հաղորդում էր Թիֆլիսի «Մշակ» լրագիրը «... Այժմ նա ... եկել է մեր երկիրը՝ ուսումնասիրելու համար Հայկական Հարցը: Նա ... Թիֆլիսից ճանապարհվելու է Էջմիածին... ապա գնալու է Վան և Արևմտյան Հայաստանի այլ վայրեր»:

Եվ իրոք. Բալկանյան հարցերի շուրջը դասախոսություններից հետո «Հունվարի 15–ին Օլգենինը Թիֆլիսից մեկնում է Երևանի նահանգ». հունվարի 23–ին Էջմիածնում կրկնում է դասախոսությունը, ապա «... ճանապարհվում է Արևմտյան Հայաստան–հայկական վեց վիլայեթներ (Էրզրում, Վան, Բիթլիս (Բաղեշ), Դիարբեքիր, Սեբաստիա և Խարբերդ), որոնք Բեռլինի դաշնագրի 61–րդ կետի համաձայն ենթակա էին եվրոպական հսկողության»[4]:

Ուրեմն և ծայր է առնում ռուսական ու կովկասյան հայերեն ու ռուսալեզու մամուլը ողողած հոդվածների, հարցազրույցների, արձագանքների տեղատարափը: Ըստ ամենայնի նախ Քրդստանից, ապա Բայազեդից, Ալաշկերտից «Առանց հույսի ու լույսի» «ցնցող տպավորություններով», «Եղբայրնե՛ր, եկեք աղոթենք, որ Ռուսաստանը մեզ չմոռանա», «Տեր Աստվա՛ծ, փրկչապես. Հասկացեք, որ այդ ժողովուրդը գտնվում է աղետալի վիճակում» կոչերով: Փետրվարի 16–ին էլ Վան հասնելով «Վան–Տոսպի» թղթակցին պատասխանում է. «Ինչպես միշտ, այնպես էլ այժմ ռուսական կառավարությանը լրջորեն հետաքրքրում է Հայաստանը, այն այստեղ ունի իր շահերը, այնպես որ հայերը կարող են վստահել նրա բարի կամեցողությանը: Իմ հետազոտությունները կոչված են ծառայելու հայերի հանդեպ Ռուսաստանում նախապատրաստել բարենպաստ հասարակական կարծիք» (էջ 14):

Նույն այս նպատակով էլ, ահա՛, 15 օր Վանում լինելուց հետո շարունակում

---

[3] Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ 7, 1995, էջ 21–22:

[4] Анушаван Закарян, Русские литераторы и армянская действительность (10–е гг. XX в.), 1994, стр. 8–9. այսուհետև էջերը՝ բնագրում:

է «ուսումնասիրությունն» ու «նախապատրաստումը» Բիթլիսում, Մուշում, Սղերթում, Տիգրանակերտում, Խարբերդում, հաճախ էլ իջևանելով ռուսական հյուպատոսությունների զինվորական կցորդություններում... **Ինչպես Վիլյամ Սարոյանի հայրենի Բիթլիսում...**

Այնքան որ՝ ի վերջո և ոչ ի վերջո, Էրզրումի թուրքաց «Ալ բայրաղ» լրագիրը տպագրում է հոդված, որում ասվում էր. «Օրերս մեզ մոտ ժամանեց ռուսական լրագրի թղթակից: Հետևում եմ նրա ուղևորությանը: Հավաստի աղբյուրից հաստատում եմ, որ թղթակցի տեսքով այդ վայրերն է գնացել ռուս սպա՝ մի շարք հանձնարարականներով: Իմ ենթադրության համաձայն, նրա նպատակը հայերի դիրքորոշման ճշտումն է և ապա քուրդ առաջնորդներին Ռուսաստանի կողմը դարձնելը... Մի շաբաթից ավելի արդեն այստեղ է: Վաղը պետք է մեկնի Սղերթ... Նրա հետ տեսակցած մի քանի շեյխեր անձնապես հավաստում էին ինձ, որ այդ թղթակիցը հասցրել է քուրդ շեյխերի ունեցած արտոնությունները փոխարինել ռուսական հպատակությամբ» (էջ 19–20):

Ապա հետևում են այսպիսի իրողություններ. ինչպես փաստացի վկայակոչում է գրքի հեղինակ Անուշավան Զաքարյանը. «Էրզրումի մի խումբ երիտասարդներ մայիսի 12–ին շնորհակալական նամակ են ուղղում «Մշակ»–ի խմբագրությանը ... գրելով. «Նրա (Օլգենինի՝ Ա. Զ.) ջանադիր աշխատանքը հսկայական ծառայություն է Թուրքահայոց և ամողջ հայ ժողովրդի դատին, այլև Թուրքահայոց դատով հետաքրքրվող արտասահմանյան մամուլին և քաղաքական շրջաններին... մեր սերն ու համակրանքն ենք մատուցում պ. Օլգենինին, որը ստանձնեց դառնալ և դարձավ հայության ազատագրական պայքարի վկա և կրել դարերով թուրքահայության կրած տառապանքները»: Այնուհետև նամակի հեղինակները ցանկություն են հայտնում, որ «Биржевые ведомости» լրագրի խմբագրությունը հնարավորություն տա Օլգենինին, որպեսզի Կովկասի և Ռուսաստանի կենտրոններում կարդա դասախոսություններ, ճանապարհորդության և ուսումնասիրության հրապարակման համար էլ հատկացվեն միջոցներ» (էջ 24):

Վերջապես մայիսի 13–ին հեռանալով Էրզրումից, 17–ին հասնում է Թիֆլիս. Օ՜, ինչպիսի ընդունելություն քանի՜–քանի՜ դահլիճներում ու սրահներում... Քաղաքապետ Ա. Խատիսյանի, հատկապես «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարյանի, մասնակցությամբ Շիրվանզադեի, Հ. Առաքելյանի... շա՜տ շատերի. դասախոսությունների հայտարարություններ՝ «Ե՛կ, հայ, և մինչև վերջ լսիր կենդանի պատմությունը կենդանի վկայի՝ քո եղբայրների մասին, որոնք կանգնած են խոր անդունդի առջև» (էջ 27): Իսկ դասախոսությունների բովանդակությունն էլ՝ խոստումնե՜ր, խոստումնե՜ր, խոստումնե՜ր... թե՛ այս կողմի հայությանը, թե՝ այն. պարտավորեցնող պատգամով. **«Եթե դա չարվի... մենք մեղավոր կլինենք զոհ դարձած քրիստոնյա ժողովրդի և ռուսական պետականության առջև...»** *(էջ 31):*

Այնուհետև Պ. Միլյուկովի այդ խաղաղութն գործակալը չկա՛ ու չկա՛... 1914-ին արդեն փոխարինելու են գալիս հաջորդները[5]...

* * *

Լինում էին և այսպիսի չմարդ փերեզակներ...

Որոնցից, թերևս, մեկի էլ ահա ներկայացնում է ուսուցիչ, հասարակական գործիչ Հովսեփ Գույումճյանը՝ «1916, 11. 24. Լոնդոն» տարեթվով Արշակ Չոպանյանին հղած ստորև վերբաղվող նամակում.

«Այսօր ինձի ցույց տվին «Արձագանք Բարիզի»-ին այն թիվը, որ կըսեն թե «Թուրք կառավարությունը վանեցիներուն զենք տված էր քաղաքը Ռուսիո դեմ պաշտպանելու համար, և հայերը այդ զենքերը դարձուցին զանոնք իրենց տվողներու դեմ»: Կարդացի նաև Ձեր պատասխանը: Կը զարմանամ թե ինչպե՞ս կը գտնվին հայեր, որ կը հավատան նպատակավոր կերպով մեր թշնամիներուն տարածած բացարձակապես սուտ լուրերուն: Գեթ այս կետին մեջ ես իբրև ականատես և գործուն վկա, կրնամ հաստատել, թե ոչ մեկ ատեն Թուրք կառավարությունը Վանի հայոց զենք չէ տված ոևէ նպատակով: Նույնիսկ ամեն տեղ որ կըցած են, նույնիսկ Վանա շրջանին մեջ հայոց ձեռքեն զենքերը խլած են, այն զենքերը, առանց որոնց հայը մեկ գյուղեն մյուսն իսկ չէր կրնար երթալ: Վանա հայոց ունեցած զենքերը սոսկ իրենց անձին պաշտպանության համար պատրաստված զենքեր էին. այդ զենքերուն քանակությունը և որակն ալ ցույց կուտան, թե հայերը երբեք ապստամբելու նպատակով զինված չէին: Այդպես Վանա կռիվը սկսավ այնքան քիչ զենքով և մեծ մասը հին տեսակի, որ հիմարություն պիտի ըլլար պնդել թե հայերը ապստամբության մը համար պատրաստված էին, Վանի հայությունը ինքնապաշտպանության մղվեցավ 1915 ապրիլ 7-ին, երբ արդեն ստույգ կերպով կոտորածները Վանա նահանգին ամեն կողմը տարածված էին: Եվ ի՞նչ էին մեր ունեցած զենքերը կռվի սկիզբը, հազիվ 300 են քիչ մը ավելի մաուզեր ատրճանակ և անկե քիչ մը պակաս ամեն տեսակի հրացաններ, մեջը ըլլալով հինն ու նորը, ծխավորը և անծուխը: Իրավ է, որ կամաց-կամաց զենքերու քանակը ավելցավ՝ արդեն փախչելով քաղաք ապաստանող գյուղացիներու բերածովը. այսպես ինքնապաշտպանության կռվին վերջերը զենքերուն թիվը

---

[5] *Ուրեմն և հիշենք նաև, որ նույն միջոցին Վ. Տերյանը գուշակելով կրկնելով-կրկնում էր («Մշակի» էջերում)*

«... չէ՞ որ մեր ամբողջ ժողովրդին անդառնալի, անսփոփելի աղետի վտանգ է սպառնում...

Պարզ պետք է լինի մեզ ամենքիս համար, որ այսօր մեր կյանքի և մահու խնդիրն է դրված հրապարակի վրա...

Անթիվ են հայ մտավորականության մեղքերը հայ ժողովրդի առջև, անհամար են նրա սխալները, սակայն չմոռանանք, որ այսօրվա սխալը անուղղելի կլինի, այսօրվա մեղքը մահացու:

Եվ այդ գիտակցելով, եկենք այս պատմական րոպեին կազմակերպված ուժերով կանգնենք որպես մի մարդ, մի կամք, մի հոգի:

Չմոռանանք, որ ճակատագրական է րոպեն, որ մեր գործը սուրբ է»:

Տե՛ս Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 4, 1925, էջ 195-201

Հազարին մոտ էր: Վերը նիշածներես դուրս կը մնա Վանի քաղաքամերձի զենքերու թիվը, այդ տեղը Այգեստանի մեջ եղածին քառորդը իսկ չկար: Ոչ մեկ Հայի Հայրենասիրությանը չեմ կասկածեր. բայց ինձի Համար Հետաքրքիր է գիտնալ, թե Ռ. Վասակունի Վանի վերաբերող այդ դավաճանական լուրը որտեղի՞ց առար է: Արդեն Վան մտնելուց առաջ (1914 նոյեմբերի 1), Մուշ, Բաղեշ և Խարբերդը տեսա զորակոչի արՀավիրքներուն մեջ և արդեն այդ ժամանակին կառավարությունը Պուլանըքի և Մանազկերտի կողմերը ձեռնարկած էր Հայ գյուղացիներուն զենքերը Հավաքելու՝ սարսափելի միջոցներով:

Վան քաղաքի ինքնապաշտպանության առաջ եղած բոլոր անցուդարձերուն մանրամասնորեն ծանոթ եմ. ոչ ոք ինձմե ավելին չգիտե այդ մասին. այժմ կենդանի մնացողներեն միայն 3–4 Հոգի ինձի չափ մոտեն ծանոթ են այդ խնդիրներուն, ինձի Հետ մաս կազմած ըլլալով այն Հանձնախումբին, որ Վանա մեջ կազմված էր «պատերազմի վտանգավոր ժամանակը կարելի եղածին չափ անվնաս կերպով անցնելու նպատակով», և այդ ժողովը իր նպատակին Հասնելու Համար առաջադրած էր «կառավարության Հետ բարվոք Հարաբերություններ մշակելու» իբրև միջոց:

Ինչ աղետալի սխալներ չենք գործած մեր Հայրենիքը մոտեն ճանչցած չըլլալնուս պատճառով, և դեռ մինչև այսօր որքան սխալներ չենք գործեր միևնույն պատճառով»[6]:

* * *

Եվ սա է պատասխանը Գ. ՄաՀարու Հարցման. «Ինչո՞ւ այդպես գրեց «Երկիր Նաիրի»–ն:

— Ինչո՞ւ այդպես գրեցիր «Երկիր Նաիրի»–ն:
— Այդպես գրվեց, ես մեղավոր չեմ» (Զն, 34):

Բայց գրելու նման Հայտ էր արդեն իսկ «Դանթեական առասպելը». ինչ խոսք՝ տեղյակ սույն և ոչ սույն Հազար ու մի իրողություններին... ականատեսը «Մեռած քաղաքի» և մասնակիցը Սուլուխի ճակատամարտի...

Ուրեմն և շնորՀակալություն գրքի Հեղինակ Անուշավան Զաքարյանին՝ իմ եղբորորդուն, այլապես Օլգենինի «փրկարար» գործունեությունը, թերևս, մնար «ստվերում»...

---

[6] ԳԱԹ ԱՁ, թիվ 1572

ՀԱՆՈՒՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Հովհաննես Թումանյանի մահը... Չարենցի արձագանքները

Ժամանակի մտավորականության համար, ինչ խոսք, միանգամայն պարզ էր Չարենցի շուրջը բորբոքված գրական պայքարի և՛ ոգին, և՛ տառը: Բնականաբար, վտանգն ավելի է զգացվում «Քուրայի» հարձակումներից հետո, և, բնորոշ է, հենց այդ օրերից էլ ավելի է ծավալվում բանաստեղծի պաշտպանությունը՝ ամենատարբեր մակարդակներով ու դրսևորումներով: Երբեմն լռելյայն ու հանդարտ, երբեմն էլ աղմկոտ վեճերով. ըստ ամենայնի հետևողական պաշտպանությունը սկզբնապես համընկնում Հովհաննես Թումանյանի մահվան ու թաղման օրերին: Ըստ այդմ Չարենցի կյանքի տարեգրությունը պետք է որ շարունակենք՝ այդ օրերի հետ զուգակցված:

1923–ի մարտի 25–ին Թումանյանի մահը բոթող հեռագրի կողքին ԽՀ–ն զետեղում է **«Հովհաննես Թումանյան»** *մահախոսականը, որով ասվում էր. «Ամսիս 23–ին, երեկոյան ժամը 9–ին, Մոսկվայում վախճանվել է մեր մեծագույն բանաստեղծը — Հովհաննես Թումանյանը:*

Չի կարող լինել և ո՛չ մի սիրտ, որ խորին դառնությամբ ու թախիծով չարձագանքե այս մահաբոթ գույժին, և ինչպե՞ս կարող է այդպես չարձագանքել, երբ չկա մեզանում և ո՛չ մի գրագետ, որ մայրենի լեզուն սովորած չլինի Հով. Թումանյանի բանաստեղծություններից:

Սերունդնե՛ր են կրթվել մեր պոետի գործերով, և այդ գործերից շատ–շատերը այսօր և վաղը կրթելու են նորանոր սերունդներ»,— գրում է Չարենցը: Այսպես ըստ կարգի բանաստեղծը բնութագրվում է որպես «Աշխատավորության դասի գոյության թարգմանի», «աշխատավորի վշտի երգչի և մայրենի լեզվի մեծագույն վարպետի», «որ հասցրել է մեր լեզուն անհասանելի ճկունության, հաղորդել է նրան առնություն և ուժ» (6, 73–74): Մոտավորապես այսպես. կարծում ենք, խմբագրական միջամտությամբ:

Եվ սակայն, ի՞նչ եք կարծում. 1919–ի Թումանյանի հոբելյանական ամիսների բանաստեղծի գնահատության համամարդկային–համազգային մոտեցումներն ու չափանիշները կլանած–յուրացրած երիտասարդ Չարենցը՝ ընդամենը երկու տարի անց մոռացե՞լ էր այդ ամենը. կամ մոռացե՞լ էր, որ ընդամենը երեք ամիս առաջ ինքը այլ չափանիշներով է դիմել բանաստեղծին. «... Ես Երևանում սրտատ-

րափ պիտի սպասեմ Ձեր վերադառնալուն և պիտի գամ Թիֆլիս՝ իմ անհուն ակնածանքը բերելու Ձեր վաստակած և իմաստուն կյանքին, որ նվիրել է հայրենի եզերքին այնքան «շռայլ» ձեռքով հոգեկան բարիքներ ու գանձեր» (6, 397):

Ուրեմն ի՞նչը կարող էր մղել թե՛ Չարենցին, թե՛ խմբագրությանը՝ այդչափ անիրավության. անշուշտ, միայն երկյուղը գաղափարական «խուլիգանական արշավանքների», միայն պաշտպանողական զգուշավորությունը, որ այնուհետև խորհրդային երկրի ժողովուրդների մտավորականության համար դարձավ տևական չարորակ հիվանդություն: Այդ հանգամանքներով էլ մահախոսականը մնաց անստորագիր: Ինչպե՞ս ստորագրեր Չարենցը այդչափ ժլատ ու աղքատիկ մի մահախոսական: Չի ստորագրել, բայց և ամենավերջին տողերով, այնուամենայնիվ չնչտել է իր «ապրած դժվար աշխարհից» հարազատ ժողովրդին ուղղած ամենավեհ ու իմաստուն պատգամ—մաղթանքը.

— «Ապրե՛ք, երևե՛ք,
Բայց մեզ պես չապրե՛ք...»:

Հենց սա էլ դարձավ Չարենցի կյանքի նշանաբանը. ապրել—ստեղծագործել—մաքառել հանուն տառապյալ հարազատ ժողովրդի նույն, մշտանույն նպատակի՝ լուսավոր գալիքի: Նշանաբան, որ կարմիր թելի պես անցնում է նույն օրերին թղթին հանձնած **«Երկու աշխարհի սահմանագծում» և «Եղբայրության չաղախը» հոդվածների միջով[1]:** *Ուրեմն և բնորոշ է, որ Թումանյանի նույն տողերով է ավարտվում «Երկու աշխարհի սահմանագծում» երդման խոսքը.*

«Բարի գալո՜ւստ պայծառ գալիքին և հավիտենական հանգի՜ստ ու հարգանք անցյալի վաստակյալ պոետներին: Եվ թող այսօր, Հով. Թումանյանի շիրիմի առաջ, մի լինի մեր ցանկությունը,—

Որ երկար չթպրտա մեր կյանքը, ապա ուրեմն և պոեզիան, «երկու աշխարհի սահմանագծում» – ուրիշ խոսքով ասած՝ շուտ իրականանա այն երազյալ կյանքը, որի ժամանակ, Հով. Թումանյանի, անցյալի մեր այդ վերջին ու ամենատավաղ պոետի ցանկությամբ պիտի ապրեն «երևանքը» բայց «մեզ պես» չապրեն...» (6, 92): Եվ երկար դեռ շարունակում է «թպրտալ»...

Նույն ոգով են շարադրված և բանաստեղծի թաղման օրը ԽՀ տպագրած «Եղբայրության չաղախի» օրինական հպարտությամբ հագեցված վեհաշունչ բնութագրերը. «... Հով. Թումանյանը մեկն էր այն եզակիներից, որոնց հոգեկան հմայքը, տաղանդի կարողությունը այնքան էր զորավոր, որ ճեղքում էր ամեն մի արգելք ու պատնեշ, հասնում էր ուրիշի սրտերի խորքը, դառնում էր հանուր ու մարդկային»: Եվ ապա. «Նրան չէր կարելի չճանաչել, այդ բարձրահասակ, ար-

---

[1] Ինչպես հայտնի է «Ց. Խանզադյանը Հովհ. Թումանյանի համակրանքը վայելող գրաքննադատներից էր. ըստ այդմ հիշարժան է, որ Չարենցի «Եղբայրության չաղախի» կողքին ԽՀ զետեղված է Խանզադյանի «Հովհաննես Թումանյանի հիշատակին» խոսքը ևս:

ծախթաղեմ լռեցուն, որ Դսեղից Թիֆլիս էր ընկել և այդ բազմացեղ քաղաքում. արևելքի և արևմուտքի այդ երփներանգ խառնարանում դարձել էր միջցեղային մերձեցման աշտարակ, այլազան մշակույթների սինթետիկ դեմք...» (6, 93–94):

Զարմանալիորեն բոլոր կետերով ու անցումներով մեր ժողովրդի այսօրվա ցավերին ու մղումներին, հույսերին ու երազանքներին արձագանքող–միահյուսվող բնութագրեր ու եզրահանգումներ, որոնք բոլորն էլ օրգանապես հետևում են Թումանյանական մեծ աշխարհի, մեծ անհատականության Չարենցի հավաքական–համալիր ընկալումներից: Միաժամանակ վկայում են և Չարենցի հայրենասիրական քաղաքացիական անխաթար ու ձույլ վարքն ու պահվածքը, որոնք էլ այդ օրերին, բնականաբար, դրսևորվել են նաև գրապատմական–տեսական մեկնակետերում և ըմբռնումներում: Դրսևորվել են հատկապես «Երկու աշխարհի սահմանագծում» հոդվածի մեկնություններում, որոնց որպես կանոն մշտապես ուղեկցում են սոցիալ–հասարակական ուրվագծեր: Այսպես. նախ գծագրվում են պատմականորեն միմյանց հաջորդած կեցությաձևեր, որոնց հենքի վրա էլ՝ ապա. կեցությաձևերին հյուսված ներկայանում են գրական ընթացքի դիմագծերը: Գյուղացիական նահապետական–կիսանահապետական–մանր արհեստավորական տնտեսական կենսաձև, ապա 1917 կոչվող «ահեղ թվականն», «Եվ ապա, հինգ փոթորկող ու տակնուվրա անող տարիներ...»– այս հաջորդական ընթացքների արդյունքում՝ «անանցանելի վիհ» կամ «երկու աշխարհները իրարից ... բաժանող վիհացած» սահմանագիծ (6, 80, 81)[2]: Եթե հանելու լինենք տեղ–տեղ շրջագայող հեղափոխական–սոցիոլոգիական ֆրազների ծածկույթը, տակը կմնա Հայաստան հայրենիքի ժամանակի իրավիճակը, ինչ Չարենցը գիտակցում – ներկայացնում է որպես վիհ՝ հնամյա հայրենիքի մեծագույն մասը կորցրած, աշխարհով մեկ տարագրված հայոց պատմական բախտում: Ըստ այդմ խորհրդանշական է, որ ինչպես խորագրով, ինչպես հոդվածին կցված Տերյանից քաղված՝ «Դեռ որքա՞ն պիտի տանջվես անփարատ Երկու աշխարհի սահմանագծում» բնաբանով,— այնպես էլ հետո ամենուրեք շեշտվում է «երկու աշխարհի սահմանագիծ» հասկացությունը՝ ներառյալ Տերյանին վերաբերող բազմիմաստ այն միտքը. ըստ որի՝ Տերյանը «... չանցավ՝ առկախ մնաց «սահմանագծային» վիհում, որպես «իր խաչին խաչված Հիսուս» (6, 81),— որ անկրկնելիորեն վերաբերում է հայոց խաչված հայրենիքի ու ժողովրդի ճակատագրին: Այս հենքի վրա էլ հյուսվում են բանաստեղծի «հուշերն ու խորհրդածությունները» արևելահայոց բանաստեղծության վերջին «եռօղակ շղթայի»՝ Թումանյանի, Իսահակյանի ու Տերյանի վաստակի շուրջը: Եվ «սիրով ու գուրգուրանքով ասված» քանի՜–քանի՜ խոսքերով, քա-

[2] Մ. Մազմանյանի մտաբերումով 1921–1922-ին Չարենցը նախաձեռնել է գրել «Դիմանկարներ» խորագրով գիրք՝ «Պետրոս Դուրյան, ապա գալիս էին Թումանյան, Իսահակյան, Մեծարենց, Սիամանթո, Տերյան և այլն: Մոտ տասներկու հոգու ստեղծագործության քննական մի փորձ էր դա: Չարենցն իր աշխատությունը գլուխ չբերեց, թողեց կիսատ և այլևս չանդրադարձավ» (ՀԵԶմ, 1, 63): Կարելի է ենթադրել, որ «Երկու աշխարհի սահմանագծում» էսսեաշարը «կիսատ թողած» գրքից է:

նի՛–քանի՛ մակդիրներով ու համեմատություններով՝ յուրաքանչյուրի հասցեին առանձին, բայց և միասին: Մի նպատակով. «... պարզ պատկերելու համար, թե ի՞նչ է հեռանում մեզանից Հով. Թումանյանի մահով, ո՞ր աշխարհի ձայնն է լռել Վահան Տերյանի քնարի հետ միկտեղ և ի՞նչ էր մրմնջում Ավետիք Իսահակյանը մինչև օրս»:

Քանի որ «... դա մի անգամ ևս ցույց կտար մեզ, թե ինչքա՜ն է փոխվել կյանքը այսօր, ինչքա՜ն ենք մենք հեռացել նրանցից և ինչքա՜ն դժվար է այսօր մեզ, նրանցից հետո եղածներիս, «շարունակել» նրանց գործը[3], ինչպես մեզ շատ–շատերը «խորհուրդ են տալիս» միամտաբար» (6, 82): Այո՛ միամտաբար ու տգիտաբար... այլև ստորաբար...

Այս եղանակով ընթերցողին փոխանցելով հայոց բանաստեղծության եռօղակ մեծությունների ստեղծագործության բազմաճյուղ–բազմիմաստ խորությունների ու խորհուրդները, կախարդանքն ու թովչանքը, ասես, մի անիմանալի հուզական–ոճական–երաժշտական զորությամբ նրան մոտեցնում է բանաստեղծական այն մեկնակետին, որ որոնում է ինքը ժողովրդի գոյության տվյալ իրավիճակում:

Կասկած չի կարող լինել, որ 1923–ին միասին Մոսկվայից Երևան ճանապարհված Չարենցն ու Մյասնիկյանը օրեր շարունակ զրուցել են հայրենիքի դոյատևման ու զարգացման հեռանկարներից, աշխարհով մեկ սփռված հայությանը համախմբելու և տասնյակ–տասնյակ այլևայլ, այդ թվում «կուլտուր–լուսավորական» հարցերի ու մտահոգությունների շուրջը: Ընթացքում ինչ–ինչ գաղտնիքների հետ միասին, իր ազդու խոսքով Մյասնիկյանը հորդորել է բանաստեղծին թողնել–մոռանալ «Երեքի» օրերի խարդավանքները, չկորցնել զգաստությունը և անցյալի մշակութային գործիչներին վերաբերվել նրանց ժառանգության ու բախտին արժանի երկյուղածությամբ ու ակնածանքով: Այն, ինչ տեսնում ենք Թումանյանին ուղղած Չարենցի նամակում և մյուս հոդվածներում:

Իր հերթին բանաստեղծն էլ հիմնավորել է սեփական գեղարվեստական–բանաստեղծական միտումների ու որոնումների անհրաժեշտությունը՝ մեկնակետային այն առումով, թե՝ «... ինչո՞ւ է այսօր մեր հայացքը, նորերիս հայացքը դեգերում ուրիշ գրականության հորիզոններում՝ որտեղ գերազանցորեն ռուս գրականության ափերում, փնտրելով մեր վաղվա պոեզիայի համար ուղիներ ու շավիղներ...» (6, 82):

Ըստ երևույթին նաև Մյասնիկյանի հավանությանն արժանացած այս ելակետով էլ պատճառաբանվում էր ֆուտուրիզմի անհրաժեշտությունը՝ իբրև մաքրման պոեզիայի ներկա, իբրև ուղի «վաղվա պոեզիայի համար»:

Հետադարձ հայացքով վերստին ստիպված ենք կրկնել, որ դա միանգամայն

---

[3] Սա էլ Ալ. Մյասնիկյանի անվանն առնչվող այն «սպեցիֆիկյան» տեսակետն է, որի «խաբանով» անգամ 60–ական թվականներին հակառակորդները մեղադրում–անվանարկում էին Չարենցին: Նույն այս և հաջորդ տողերի ոգով իր բանաստեղծական ուղուն անդրադարձել է «Նորք» պոեմում (1933):

ճշգրիտ իրական–իրատես մոտեցում էր. մի կողմից հեղափոխական ժամանակների հրամայականով հոծ զանգվածների հետ համապատասխան խոսակցական եղանակներով ու ռիթմերով հաղորդակցվելու, նրանց շահերը–մղումները արտահայտելու տեսանկյունից: Մյուս կողմից՝ արդյունաբերականացվող – էլեկտրականացվող երկրի սոցիալական պահանջով ու թելադրանքով: Երրորդից՝ ավելորդ է ասել, որ «**Նորերը**» պարզապես մարդկային իրավունք չունեին կոտրած, մահ, ավեր, հայրենացավ ճաշակած՝ – վերապրող ժողովրդին դիմել վշտի ու տխրության երգերով, որի առաջին մերժողը, ինչպես ասվել է,— ինքը Տերյանն էր:

Այսպես Թումանյանական օրերի ողջ ընթացքով՝ ընդհատակյա, թե բացահայտ բանավեճը շարունակվում էր. միանգամայն համոզիչ ու ճկուն բացատրություններով: Առավել ևս զարմանալիորեն զգաստ ու շրջահայաց եզրահանգումներով բանաստեղծը հետևողականորեն պաշտպանում էր նախընտրած մտայնությունների ուղղությունը՝ տնտեսական–հասարակական–գեղարվեստական, ահա՛, այսպիսի լայնահայաց կռվաններով. «... մեր կյանքը դուրս է եկել արդեն նեղ–նաիրյան շրջանակից, կապվել է չորրորդ դասակարգի համաշխարհային առաջխաղացումին, այնինչ մեր կենցաղը, մեր նաիրյան կենցաղը դեռ ևս մինչարդյունաբերական է՝ կցորդված պրոլետարիատի ճակատամարտին իր **աշխատավորական Թևով**: Իսկ սա նշանակում է, որ **դեպի վաղը** ձգտող, դեպի օրերի դինամիկական շաչյունը ձգվող մեր պոեզիան այսօր պիտի ձգտի ոգևորության հյութեր ծծել կենտրոնների կենցաղից, այլապես նա կմնա առկախ օդում, կմնա «երկու աշխարհի սահմանագծում», ինչպես մնաց Տերյանը: Գալիքը, նորը, կյանք մտնողը–արդյունաբերականն է, դինամիկականը, էլեկտրիֆիկացիան՝ այն, որ—

Պիտի գա՛, պիտի գա՛, պիտի գա՛
Երկաթի հզո՛ր զնգոցով–
Դեպի մեր խուղերը գորշաքար,
Դեպի մեր երկիրը քարոտ:

Ահա՛ գալիքը, ահա՛ այն, որ կյանք մտնել է սկսել, արդեն դրել է ոտքը Երևան ու Գյումրի: Եվ այս էլեկտրատեխնիկական նոր, իրենով մեր երկրի լինել, թե չլինելը որոշող ֆորմացիայի սոցիալական բովանդակությունը դրսևորելու համար **անգամ լեզվական ուրիշ** միջոցներ են հարկավոր, ստեղծագործական տարբեր մոտեցումներ: Ուրիշ պիտի լինի մեր օրերի երգը, և նա, ուղի էլ չի՛ կարող առնչվել հնին, անցյալին: Գուցե նա և՛ս, մեր այսօրվա պոեզիան, պիտի դեռ երկար ժամանակ թպրտա «երկու աշխարհի սահմանագծում»–բայց այդ լինելու է այլևս **«երկունք»** և ոչ թե **հոգեվարք**. երկրի շինարարության, արդյունաբերության հետ զուգընթաց, որպես վերնաշենք նրա հետևից հազիվհազ հասնելով՝ կծնվի նա, վաղվա մեր պոեզիան. զարգացման այլ ուղի, այլ ճանապարհ նրա համար չկա: Եվ ինչքան որ **հեռու** կլինի մեր վաղվա պոեզիայի սոցիալական բովանդակու-

թյունը. օրհներգած կենցաղը լոռեցի Հովհաննեսի, գյումրեցի Ավոյի և գանձացի Վահանի պատկերած կյանքից— այնքան էլ սիրելի ու ընդունելի կլինեն նրանք, հին աշխարհի քնարերգուները նոր աշխարհի պոետներին» (6, 91–92):

Ակնհայտորեն Մյասնիկյանի ծրագրերով, և հավասարապես հարազատ ժողովրդի կենսագործունեության իրական կեցվածքից–թափից թե առած բանաստեղծը այդպես էր պատկերացնում հայրենիքի ու պոեզիայի գալիքը, որը և՝ թախծոտ–վերապահ շեշտերով հանդերձ, ժողովրդին «ոգևորության հյութեր» ներարկող. գալիքի հույս ու հավատ ներշնչող «Պոեզոզուռնայի» էությունն է:

Եվ սակայն, ամենազարմանալին մնում է մարգարեական այն գուշակումը, ըստ որի՝ «... Գուցե նա և՛ս, մեր այսօրվա պոեզիան, պիտի դեռ երկար ժամանակ թպրտա «երկու աշխարհի սահմանագծում» – բայց այդ լինելու է այլևս **«երկունք»** և **ոչ թե հոգեվարք**:

Շուտով, շատ շուտով այդպես էլ եղավ. ավելի ճիշտ 1917-ի աշնանից հենց այդպես էլ էր. բանաստեղծի նախազգացողությունը չէր խաբում իրեն, ուստի և, առավել. սրբազան երդումով հենց սկզբից էլ զինվորագրվեց ծառայելու, ինչպես վերստին հարազատ ժողովրդի ծանր բախտին ուղեկցող **«երկունքի» գրականությանն ու մշակույթին**: Այդ ճանապարհի առաջին քայլերի համար ճշգրտորեն որդեգրելով ֆուտուրիզմը: Որի իտալական «տարատեսակին» տակավին ծանոթ էր 1913-ից... (Այդ իր տեղում):

Այս կողմնորոշումը Չարենցը նույն հետևողականությամբ պաշտպանում է և 1923-ի ապրիլի 15-ի երեկոյթում՝ Երևանի պետական թատրոնում Թումանյանի հիշատակին կազմակերպված քաղաքացիական հոգեհանգստին: Չարենցի կենսագրության համար հիշարժան օր, հիշարժան էջ, որի վերաբերյալ մամուլում գտնում ենք հակասական տվյալներ: Ըստ ԽՀ ապրիլի 14-ի հաղորդման՝ «Երևանում գտնված բոլոր գրողներն ու արվեստագետները որոշել են բանաստեղծի թաղմանը Թիֆլիս պատգամավորություն ուղարկել հետևյալ կազմով. ընկ. Մ. Սարյան, Ց. Խանզադյան, որ միաժամանակ նաև համալսարանի ներկայացուցիչն է, և Ե. Չարենց:

Պատգամավորությունը այսօր առավոտյան մեկնեց Թիֆլիս:

Ուղարկված է նաև բանաստեղծի մեծադիր նկարը, թարմ ծաղիկներից պսակ, որի ժապավենի վրա մակագրված է. «Հովհաննես Թումանյանին, Հայաստանի գրողներն ու արվեստագետները»[1]:

ԽՀ ապրիլի 17-ի հաղորդումից, սակայն, պարզվում է, որ պատվիրակությու-

[1] Եժ 6-րդ հատորի (էջ 613) ծանոթագրություններում եղած թյուրիմացությունը ծանոթագրողը կիսով չափ ուղղել է 1977-ին. տե՛ս Ալ. Զաքարյան, Ավանդների ուժը, 1981, էջ 106–107: Եվ սակայն մնում է առկախ: Հ. Թումանյանի տուն-թանգարանում պահպանվում է թաղումից օրեր անց Մարտիրոս և Լուսիկ Սարյանների ցավակցական նամակը՝ Թումանյաններին. հիշում են ինչ-ինչ անհաճ հանգամանքներ, հավանաբար կապված՝ դին Թիֆլիսո՞ւմ, թե՞ Երևանում հողին հանձնելու հարցով: Կարելի է ենթադրել ընտանիքի, որ, դժբախտաբար պնդել է Թիֆլիսում (վրացական կողմի հետ միասին),— և Մյասնիկյանի ու մտավորական մյուսների միջև. որոնք պնդել են Երևանում: Այո՛ Երևանում...

նը Թիֆլիս չի մեկնել: (Հավանաբար, ինչ-ինչ պատճառներով Մյասնիկյանի խորհրդով): Դրանով հաղորդվում էր, որ՝ «Կիրակի, ապրիլի 15-ի ցերեկվա ժամը 12-ին, Պետական թատրոնի դահլիճում տեղի ունեցավ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հիշատակին քաղաքացիական հոգեհանգիստ:

Մուտքը կատարվում էր հատուկ տոմսերով: Ամբողջ դահլիճը, բալկոնը և բեմը լիքն էին, ներկա էին Պարսկաստանի և Տաճկաստանի ներկայացուցիչները:

Հոգեհանգիստը բացեց լուսժողկոմ ընկ. Մռավյանը: Բացումից անմիջապես հետո՝ երաժշտական ստուդիայի երգեցիկ խումբը քառաձայն երգեց «Ո՛չ փող պարկինք»[5] տխուր երգը, ներկաները ոտնկայս հարգեցին Թումանյանի հիշատակը»:

Այնուհետև ընկ. Մռավյանը՝ մի քանի խոսքով բնորոշելով Հովհ. Թումանյանին իբրև քաղաքական-հասարակական դեմք, ասաց. «Հովհ. Թումանյանը պրոլետարիատի և նրա կուսակցության շարքերում չէր, բայց և մեր հակառակորդների բանակում չէր: Ընդհակառակը՝ վերջին տարիներում նա ընդունում էր, որ խորհրդային իշխանությունը միակ փրկիչն է հայ ժողովրդի գոյության: Այսօր մենք հողին ենք հանձնում Խորհրդային Հայաստանի **մեծ քաղաքացուն**»:

Հաղորդվում է, որ հոգեհանգիստը տևել է չորս ժամ, ելույթ են ունեցել նաև Ց. Խանզադյանը, Աղ. Վշտունին, Ն. Դարբինյանը:

Թեև տեղը-տեղին պահպանված էր հավասարակշռությունը. երկու ելույթ իշխանությունից, երկուսն էլ՝ «Հայաստանի գրողների և արվեստագետների կողմից»,— կարելի է պատկերացնել, թե շարքային այս եղելությունը որքան աղմուկ պետք է հարուցած լինի ասոցիացիականների շարքերում:

«Նույն իմաստով արտահայտվեցին նաև ընկ. Եղիշե Չարենցը (Հայաստանի գրողների և արվեստագետների կողմից) և ընկ. Դր. Տեր-Սիմոնյանը: Առաջին հռետորը ցանկություն հայտնեց, որ ներկայիս գրողները յուրացնեն Հ. Թումանյանի ավանդը՝ միշտ կապ պահել օտար և առաջին հերթին ռուս գրականության հետ»: Ուրեմն այդ օրերից էլ նախապատրաստվում էր ռուսական գրականության նյութով հանգամանալի դասախոսություն:

«Ռուսական գրականության երեկը, այսօրը և ապագան»...

Չարենցագիտությունը նման կողմնորոշումը սովորաբար առնչում է բանաստեղծի արտասահմանյան ուղևորությանը՝ փաստարկելով «Վիշկայի» խմբագրին ուղղած հայտնի նամակը: Իրապես 1913-ից ֆուտուրիզմին ծանոթ Չարենցը 1921-ի աշնանից արդեն որոշակիորեն ուներ մայակովսկիանական կողմնորոշում. ընդդիմախոսների հրահրումներով 1923-ին ուղղակի ստիպված էր պարզաբանելով հիմնավորել ստեղծագործական իրացված-իրացվող սկզբունքները: Ուստի և

[5] Մկ. Պիչիկթաշյանի «Թաղումն քաջորդվույն» բանաստեղծության առաջին տողը: Ասել է Թումանյանի թաղումը Երևանում եղել է Հայրենիքի զինվորի քաղաքացիական թաղում:

բանավեճային թեժ մթնոլորտում «Երևանի Համալսարանի մարքսիստական խմբակի նախաձեռնությամբ» (ասել է աջակցությամբ) ապրիլի սկզբներին Հանդես է գալիս «Ռուսական արդի բանաստեղծությունը» դասախոսությամբ:

Բնականաբար դասախոսության Համար Հարկավոր էր ամուր կռվան, և ընտրվում է Հայոց միջավայրում ճանաչված Վ. Բրյուսովի Հեղինակությունը: Ռուս բանաստեղծի «Ռուսական պոեզիայի երեկը, այսօրն ու վաղը» ակնարկաշարի այն թեզը, ըստ որի երեկը պատկանում էր սիմվոլիզմին, այսօրը՝ ֆուտուրիզմինն է, վաղը՝ պրոլետարական գրականությանը: Նախընտրում է որոշակի քննական մոտեցումով ու վերապաՀությամբ, որքանով արդեն իսկ «Քուրայի» դեմ գրած պատասխանում ակնՀայտ է Չարենցի արՀամարՀանքը «պրոլետարական գրականություն» Հասկացության Հանդեպ: Բրյուսովի ելակետով էլ Չարենցի դասախոսության առաջին մասը նվիրված էր ռուսական խորՀրդապաշտությանը[6]:

Ժամանակների ընդունված կարգով՝ ինչպես 1922–ի մյուս բանավեճերում, դասախոսության ֆոնը Հասարակական–քաղաքական էր, մեկնությունը՝ սոցիոլոգիական: Միլյուկով[7], Գուչկով, Ստեպանով, «Վեխի»՝ Գերշենզոն, նարոդնիկներ, էսէրներ… Արտաշես Ջիլինդերյան… Այս խարիսխներով էլ՝ ֆրանսիական ակունքի կարճառոտ ակնարկով դասախոսը դառնում է ռուսական խորՀրդապաշտությանը՝ Համարյա բոլոր նշանավոր դեմքերին, նաև երկրորդականներին: Եվ ինչպես 1922–ի բանավեճերում՝ սոցիոլոգիական չնչտադրումներով Հան-

---

[6] Ինչպես և արձանագրված է ԵԺ 6–րդ Հատորի ծանոթագրություններում՝ «Ռուսական պոեզիայի երեկը, այսօրը և վաղը (սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, պրոլետարական պոեզիա)» թեմայով Վ. Բրյուսովը դասախոսություն է կարդացել 1922 թ. նոյեմբերի 24–ին Մոսկվայի մամուլի տանը: Կասկած չի կարող լինել, որ Բրյուսովի Հենց այդ ելույթումն է ունկնդրել Չարենցը: Գ. Արամը վկայում է. «Այդ օրերին մենք… լսեցինք Բրյուսովի դասախոսությունը Մոսկվայի մամուլի տանը՝ նորագույն ռուսական պոեզիայի, այդ թվում Մայակովսկու, Ասեևի և ուրիշների մասին» (6, 594)

Ամբողջականը տե՛ս Պք, 1923, թիվ 5. նշված է նաև Վ. Բրյուսովի Հոդվածի տեղը. «Печать и революция:, 1922, С. 7 (6, 48): Հանգամանորեն տե՛ս ծանոթագրություններում 6, 592–602

Ջեկուցման մասին Տիմուս (ասել է՝ Տիգրան Հախումյան) ստորագրությամբ ԽՀ ապրիլի 12–ի Համարում զետեղված Հաղորդումը վերջավորվում էր. «Զեկուցողին Հակաճառում են ընկերներ Աշոտ ՀովՀաննիսյանը, Աղասի Վշտունին, Խորենին, Դարադյանը, որոնց՝ մի առ մի պատասխանելուց Հետո, զեկուցողը վերջացնում է իր խոսքը»:

Սակայն ապրիլի 13–ին Տիմուսը «ընկ. Եղիշե Չարենցի դասախոսության առթիվ» կրկին դառնում և նորից է առարկում Հակաճառողներին: Հասկանալի է, բորբոքել–թեժացնելով բանավեճը: Օ՜, որպիսի սաղրիչ կոփվածքով… Իսկապես «Սատանայի աքքանյակ» (Ղ. Փարպեցի):

[7] Չք «Չարենց» նշումով պաՀպանվում է ռուս պատմաբան, Հրապարակախոս, քաղաքական գործիչ, 1905–ի Հեղափոխության ժամանակից ՍաՀմանադրական–դեմոկրատական կուսակցության (կադետների) լիդեր, Առաջին ՀամաշխարՀային պատերազմի տարիների Հայ ժողովրդի ճակատագրի ռմարդի մասնակից Պավել Միլյուկովի «Очерки по истории русской культуры» т. 1 (1918, Մ.), որում առաջադրում էր ռուսական մշակույթի զարգացման այսպիսի Հայտ. «Հասկանալի բան է, որ մեր սեփական գիտակցական գործունեությունը պետք է ուղղված լինի ոչ թե անցյալի… Հնացիտական մնացուկին, այլ արդի Հասարակական իդեալներին Համապատասխան ռուսական կուլտուրական նոր ավանդների ստեղծմանը» (էջ 299):

դերձ, յուրաքանչյուրի վարպետության կամ յուրօրինակության դիպուկ գնահատականով. Ֆ. Սոլոգուբ՝ «Թերևս ռուս լավագույն սիմվոլիստներից մեկն է». Բալմոնտ՝ «... զարմանալի նվագուն տողերը», «ОСТЬ–ով վերջավորվող բառերի նախասիրությունը, և այլն:

Այսպես ազատ–անկաշկանդ, լայն շառավիղով ու իմացություններով ներկայացվում է խորհրդապաշտությունը, որպես անցած երևի: Շոշափվում են և ժամանակի հարակից այլ հոսանքներ ու խմբակցություններ՝ ակմեիստներ, իմաժինիստներ, նիչևականներ և այլք: Եվ հետաքրքիր է. ստեղծագործական ուղու այս խաչմերուկում Սոլոգուբի «Навьи чары»–ի հերոս Տրիրոդովի առիթով մտորելում է և իր բանաստեղծական շքամուտքում հանդիպած Պշիբիշևսկուն: Նրա հանդեպ ունեցած 1913–ի համակրանքով ու տպավորությամբ էլ գնահատում է ռուսական սիմվոլիզմը. «... այդ «դերմարդուկները» (ասել է՝ Սոլոգուբի հերոսն ու Բլոկի Գեղանի տիկնոջ երկրպագուն՝ Ալ. Ձ.) վաղուցհետե ունեին իրենց ավագ եղբայրները եվրոպական մոդեռնիստական գրականության մեջ, որ առաջ էր եկել տասնյակ տարիներից առաջ հասարակական համանման պայմաններում: Այդ օրինակները, հանձինս Հյուիսմանսի, Միրբոյի, Պշիբիշևսկու, դ՛Աննունցիոյի, Ուայլդի և այլոց հերոսների, **իհարկե շատ ավելի կուլտուրական տիպեր են՝ անհամեմատ ավելի զարգացած ճաշակով** (ընդգծ.՝ Ալ. Ձ.),— բայց սա արդեն դետալ է, էականը մնում է անփոփոխ: Նրանք, ըստ էության, մնում են արնակից եղբայրներ: Նույնը կարելի է ասել և ռուս մյուս սիմվոլիստների վեպերի ու բանաստեղծությունների մասին: Ռուսական բոլոր սիմվոլիստները, հանձինս Բրյուսովի, Բալմոնտի, Վյաչեսլավ Իվանովի, Կուզմինի, Սոլոգուբի, Բլոկի և այլո՛ց, զբաղվում էին այդ ժամանակ «անհատի ազատագրման», սեռի, գեղեցիկի, միստիցիզմի և նման «պրոբլեմներով» (6, 54–55)*:

Այս չափանիշներով էլ՝ մի կողմից եվրոպական մոդեռնիզմի, մյուսից՝ ֆուտուրիզմի դիրքերից բնութագրվում է ռուսական խորհրդապաշտությունը, և եզրակացությունն այն է, որ բանաստեղծական այդ ուղղությունը «... **հասարակական պայքարի առաջին իսկ նշաններից պիտի մեռներ ու թառամեր... ինչպես թառամում է ճահճային շուշանը արևի ճառագայթներից**» (ընդգծ.՝ Ալ. Ձ., 6, 57): Ցարական բռնատիրության ընդհանուր կացության և խորհրդապաշտական բանաստեղծության հարաբերակցության, իրոք, ճկուն փոխաբերական

---

* Էապես ինչպես այլ շատ, այս հարցում ևս Զարյանը համախոհն էր Ն. Աղբալյանի: Տվյալ դեպքում 1920–ի հունիսի 6–ի (Երևանում) «Հայ գրականության ապագան» զեկուցման թեզերի: Հայտնելով, որ նույն նյութով զեկուցել է 1913–ին, Աղբալյանը «համամարդկայնություն է տեսնում Թումանյանի, Շանթի և Սունդուկյանի ստեղծագործության մեջ», գտնում էր նաև, որ «Ռուսական կուլտուրայի 100–ամյա ազդեցությունը սակայն չարիք էր հանդիսում այդ ժամանակի հայ գրականության: Հազարավոր հայ երիտասարդներ և ուսանողներ այլասերվում էին ռուսական կուլտուրայի գրկում: Հայ ազգային կուլտուրան ոչ մի արժեք չէր ներկայացնում, նրանով զբաղվում էին միմիայն մի քանի խղճուկ ուսուցիչներ և գյուղացիներ». Ժող., 1920, Թ. 94:

Կյանքի վերջին տարիներին քննականորեն դառնալով նույն հարցերին՝ վերին գնահատությամբ Զարյանն առանձնացնում է Ալ. Պուշկինին, այլ առումով՝ Մ. Գորկուն:

խոսացում, որի էության չարենցյան մոտեցումները, անշուշտ, բազմիցս պարզաբանվել են և ճշտվելով պարզաբանվելու են այլևայլ առիթներով:

Հատկանշական է, ժամանակի որոշ «տուրքերով» հանդերձ, որոնցից մեկն էլ վերաբերում է Բլոկի «Տասներկուսը» և Բելու «Քրիստոս հարյավ» պոեմներին: Առանձնացնելով այդ պոեմները, Չարենցը գրում է. «... Այս ուղղությամբ (խոսքը «Հեղափոխական հանդի»՝ Ալ. Չ.) եղած փորձերից ամենանշանավորներն են Ալեքսանդր **Բլոկի «Տասներկուսը» և Անդրեյ Բելու «Քրիստոս հարյավ»-ը**,— *պոեմներ, որոնց կղերական վերնագրերն ինքնին բնորոշում են դրանց հեղինակներին: Այս չակերտավոր հեղափոխական պոեմների տխրահռչակ իդեոլոգ Իվանով-Ռազումնիկը դեռ մինչև օրս էլ Բեռլինում նստած իր էսէռական մռթմռթոցով զվարճացնում է[1] նույն քաղաքում հավաքված, նույն՝ և ավելի մութ գույնի էմիգրանտներին: Նրա կարծիքով, գիտե՛ք, սոցիալիզմը և քրիստոնեությունը համազոր խորությամբ իրար լրացնող կրոններ են — ապացույց՝ վերոհիշյալ երկու պոեմները: Բայց հարկավոր է ասել, որ այսպես, թե այնպես, սիմվոլիզմի վերջին ծաղիկներն են այդ երկու պոեմները և զուրկ չեն գրական արժեքից: Մանավանդ առաջինը՝ «Տասներկուսը» (6, 62–63):*

Եվ սակայն, ամեն ժողովրդի ճշմարիտ գրող և մտավորական հիմնավորապես գիտի, թե ինչ պետք է և ինչ պետք չէ կամ վաղաժամ է իր ժողովրդի համար: 1905 թ. հեղափոխությունից հետո մտավորական վերնախավը, համենայն դեպս մի գերակշիռ մասով, սոցիալիզմի գաղափարները, առավել ևս սոցիալիզմը Ռուսաստանի համար և Ռուսաստանի պայմաններում համարում էր անիրագործելի: Նույն տեսակետին էր, ինչպես ասվել է իր տեղում, Վ. Տերյանը, նույնին էր և Չարենցը (անպայման Տերյանի հետևությամբ)՝ անհերքելի վկայությամբ 1923-ի ստեղծված «Սնոտուդեն ամուսիններ կամ ինքնիրեն կոմունիզմ» երկով, որի մասին խոսք կլինի տեղում:

Ինչ վերաբերում է ռուսական գրականությանը, ապա 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների ընթացքներով գիտակցական-ենթագիտակցական բոլոր ազդակներով արծարծվում-ազդարարվում է այն ամենակարևորը, ինչ կենսական պահանջ էր ռուս ժողովրդի լայն խավերի համար՝ վերնախավերով հանդերձ: Ըստ այդմ պատահական չէ, որ քրիստոնեական մարդասիրության ու այլասիրության պահանջով ու երազանքով էլ հագեցած-գունավորված է Լև Տոլստոյից ու Դոստոևսկուց սկսած ռուսական գրականությունը. ինչպես և բնականոն հաջորդականությամբ Բլոկի և Բելու նշված պոեմները: Ասել է՝ իզուր չեն

[1] Իվանով-Ռազումնիկի «Կյանքի իմաստի» առիթով ինչ-որ չափի տեղեկություններ տե՛ս սույն աշխատության 1 գրքում: Այս դեպքում Չարենցը նկատի ունի հեղինակի «Владимир Маяковский («Мистерия или «буф» և «Книга о Белинском» (1923, Берлин, 1923) գրքերը, որոնց անդրադարձել էր նաև Ա. Լունաչարսկին իր «Мещанство и индивидуализм» գրքում: Անկասկած բանաստեղծը ծանոթ էր այդ ամենին:

հիշատակվում ո՛չ Իվանով–Ռազումնիկ, ոչ էլ «Վեխի» ու Գերշենզոն[10] նույն ելակետից կարող միմյանց առնչվող տարբերույթ այլևայլ բացատրությունների:

Անշուշտ, մեր օրերի դիտակետերից լուսաբանելու համար հենց այդ՝ շրջանցված հարցերը, քանի որ Զարենցը հիմնավորապես տեղյակ էր և՛ վեխական Ն. Բերդյաևի «Ռուսական իդեայի» հենակետերին, և՛ Մ.Գերշենզոնի ու մյուսների մտահայեցողության էությանը: Հաշվի առնելով նաև այն, որ բացորոշ ռուսական խորհրդապաշտներին Զարենցը քննադատում է ժողովրդի շահերի ու ձգտումների և նրանց տրամադրությունների միջև եղած հենց այն օտարության առումով, որ շեշտում էր, հենց ասենք, Գերշենզոնը, գտնելով, թե՝ Ռուսաստանում ժողովուրդը՝ «... տեսնում է մեր մարդկային և ուղղակի ռուսական կերպարանքը, բայց չի տեսնում մեր հոգին, այդ պատճառով էլ նա մեզ ատում է կրքոտ, թերևս միստիկական անգիտակից սարսափով, խորապես ատում է այն բանի համար, որ մենք իրենն ենք: **Այնպես, ինչպես մենք կանք,** ոչ միայն չենք կարող երազել ժողովրդի հետ ձուլվելու մասին, **այլև իշխանության բոլոր պատիժներից ավելի մենք պետք է վախենանք նրանից և օրհնենք այն իշխանությունը, որն իր սվիններով ու բանտերով դեռևս մեզ պաշտպանում է ժողովրդական ցասումից»**:

Սա ռուսական մտավորական հասարակայնության թուլություններից մեկն էր, որ հեղափոխության ողջ ընթացքով հմտորեն օգտագործեց և իշխանության հասավ Լենինը՝ զինակիցներով:

Ժամանակները քաղաքական էին, և քաղաքական իրադարձություններից գեբաղրական անասելի չափերով շարունակում էր կորուստներ կրել Զարենցի հարազատ ժողովուրդը: Ուրեմն և մինչև ուղն ու ծուծը ժողովրդին «ձուլված» բանաստեղծի մոտեցումների, մեկնությունների, գնահատականների թիկունքում, բնականաբար գործում են պատմաքաղաքական որոշակի պատճառակցություններ, որոնց հետ **հետադարձ հայացքով պարտավոր ենք հաշվի նստել գրականության պատմաբանները:** Բանն այն է, որ 20–30-ական թվականների գաղափարական–գրական կյանքի ու պայքարի խորքում մշտապես առկա են քաղաքական իրողություններ, քաղաքական երես–աստառավոր պատրաստի մեղադրանքներով: Տվյալ պարագայում իրողությունն այս է. ինչպես տեսանք, Կարինյան–Վշտունի–Հայկունի «Օղը» հետևողականորեն Զարենցի ստեղծագործությունը համարում էր «մանր բուրժուական–էսէռական–հակահեղափոխական» գաղափարախոսության հարազատ ու տիպիկ արտահայտություն: Իհարկե, ժամանակի մթնոլորտով այնքան էլ ոչ անհասկանալի տրամաբանությամբ:

Ինչպես հայտնի է, 1918-ի հուլիսի 6–7-ի արյան մեջ խեղդված ձախ էսէռների ելույթը կամ ընդդիմությունը, որ մինչև երեկ համարվում էր խռովություն, նպատակ ուներ նաև վիժեցնելու Բրեստի հաշտությունը: Ձախ էսէռների առաջ-

[10] «Вехи», 1-ին հրատ., էջ 88–89: Վերջին տողերը Վ. Ի. Լենինը քաղել է այդ ժողովածուի մասին գրած հոդվածում, որը նույնպես հայտնի էր Զարենցին:

նորդներից մեկն էլ Պ. Պռոշյանն էր, այլև այդ կուսակցության շարքերում կային հայ մտավորականներ,— ըստ այդմ դա այն ծանրագույն մեղադրանքներից մեկն էր, որով մեղադրվում էր հայ մտավորականությունը: Ուստի հմտորեն ընտրված միանգամից երկու զենքով «Օսը» ցանկանում էր ջախջախիչ հարվածներով մեջտեղից հանել իրենց բանաստեղծական «կարիերայի» և խորհրդային իշխանության ճանապարհին, իրենց կարծիքով, մի թեթև տաշեղի պես ընկած Չարենցին:

Տեսնում ենք, ուրեմն, ինչ էր կատարվում. ռուսական իրականության մեջ առանձին–առանձին Մայակովսկու և Եսենինի դեմ եղած մեղադրանքների գումարը՝ առանց խղճի խայթի ներկայացվում էր Չարենցին:

Ուրեմն և մեծ պատիվ հայ բանաստեղծին, որ նման պայմաններում ամենայն համարձակությամբ ազնվորեն մինչև վերջ պաշտպանում է թե՛ Մայակովսկուն ու նրա գրուպային, և թե՛ իմաժինիստներից զատելով գնահատում Եսենինին:

«Ռուսական արդի պոեզիան» նյութով երկրորդ դասախոսությունը տեղի է ունենում ապրիլի 10–ին Պետական թատրոնի դահլիճում:

«Պրոլետարական չլինելով հանդերձ,— հավաստում է բանաստեղծը,— ֆուտուրիզմը այսօր հարազատ մի հոսանք է պրոլետարական հեղափոխության, և նրա այնպիսի ներկայացուցիչները, ինչպես Մայակովսկին, Ասեևը և Տրետյակովը կարողացել են ավելի խորն զգալ և ապրել այն նոր օրերը և նրանց շունչը, որ ստեղծվել են մեծ հեղափոխության կամքով:

Ֆուտուրիզմը ռուսական պոեզիայի ներկան է, նրա այսօրն է: Նա գրավել է ռուսական պոեզիայի բոլոր հրամանատար դիրքերը և ուժեղ է ոչ միայն իր հեղափոխական թափով, այլև այն անվիճելի փաստով, որ տիրել է հին կուլտուրայի ամբողջ հարստությանը, հոգեբանորեն նվաճելով նրան:

Նախկին մեղկ և հասարակական կյանքի ամենամերժ տրամադրությունների դիմաց ֆուտուրիզմը հայտարարում է յուր նոր լեզուն, նոր ռիթմը, հանգերը և թափը»": Եվ որքան էլ զարմանալի թվա մինչև վերջ էլ հավատարիմ մնաց Մայակովսկուն ու Ասեևին...(տե՛ս հերթականորեն):

Իսկապես. եթե հեղափոխական–կառուցողական ժամանակները պահանջում էին հասարակայնորեն հնչեղ, նորը հաստատող–նորոգող, հինը խարազանող բանաստեղծություն, ապա հենց այդպիսի լայն զանգվածներին հասանելի, թափով ու ռիթմերով կենսասիրության–կենսագործունեության կոչող արվեստ էր հեղափոխության հետ ձևավորված ու հասակ առած ֆուտուրիզմը: Եվ սակայն, հետադարձ հայացքով հասկանալիից հասկանալի է, որ հաստատվող տոտալ նոր բանատիրության պահանջմունքներին ու ճաշակին կարող էր վայելել միայն պրոլետ գովերգությունը:

Միաժամանակ ձեռնտու չէր և մարդկայնորեն հնչեղ, մարդկային հոգու և խղճի հետ խոսող Եսենինի բանաստեղծությունը: Եվ ահա, Եսենինն էլ այդ օրե-

" Սովետահայ գրականության տարեգրություն, 1957, էջ 74

րին ընդունված կարգով համարվում է «... արտահայտիչ հասարակական որոշ խավի», ասել է՝ «գյուղացիության «հեղափոխական և հակահեղափոխական տրամադրությունների», որ նույնությամբ կրկնում է Զարենցը դատախոսության առաջին՝ խորհրդապաշտներին վերաբերող մասում (6, 50), միաժամանակ կտրուկ սահմանազատելով հատկապես իմաժինիստ Մարիենգոֆից ու Շերշենևիչից, որոնք խստորեն քննադատվում են Մայակովսկուն հալածելու համար և առհասարակ: Դատախոսության այս բաժնում արդեն Եսենինը գնահատվում է և բանաստեղծական «մեծ շնչով» և՛ «դատողությամբ». «... Գրական այս հոսանքը (ասել է՝ իմաժինիզմը– Ալ. Զ.) հանձինս գլխավորապես Սերգեյ Եսենինի՝ ստեղծել է մի շարք չափազանց արժեքավոր գրական գործեր, որոնց մեջ գեղարվեստական մեծ շնչով պատկերացված է այն տագնապը, որ ապրում է գյուղում՝ քաղաքի հաղթական արշավի շնորհիվ:

Գյուղն ու քաղաքը իմաժինիստների աչքում հակամարտ ու թշնամի ուժեր են և նրանց ընդհարումի տագնապով լեցուն «գյուղացիական վերջին պոետը»՝ Ս. Եսենինը ստեղծագործում է իր ամենախոշոր գործերը:

Իսկ իրականում Զարենցը էապես Եսենինի ստեղծագործությունը ընդունում ու գնահատում էր մարդկային տագնապների ու ցավի անհամեմատ լայն շրջագծով: Ապացույցը նույն օրերին վերաբերող «ըստ Սերգեյ Եսենինի» «Ընկերները» բանաստեղծությունն է՝ տպագրված «Պատկոմի» թիվ 1–ում, հիշարժան ծանոթությամբ. «Նյութը մոտավորապես վերցված է ռուս ժամանակակից պոետ Ս. Եսենինից»[12]:

Ինչ մնում է պրոլետգրականությանը, ապա «... պրոլետարական պոետները դեռ չեն ստեղծել իրենց նոր շունչը, չափը, թափը... Նրանք դեռ ահագին նվաճումներ ունեն կատարելու և սովորելու թեկուզ հենց նույն ֆուտուրիզմից, որի զորավոր ազդեցության տակ նրանք գտնվում են այժմ:

...Նոր պոեզիան, որը, անշուշտ, լինելու է պրոլետարական, կստեղծվի այն ժամանակ միայն, երբ հին կուլտուրան նվաճվի կուլտուրապես և ոչ թե հոնական արշավանքով, այն ժամանակ, երբ մենք կունենանք պրոլետարական անխառն կենցաղ և հոգեբանություն...»[13]:

Եվ այսպես առիթը կար, և շտապում է ուղղել Հայկունու դեմ գրած թղթում «պրոլետ գրականության» հասցեին ապրդած «կոչեցյալ» «վրիպումը». բայց և ուղղում է չեղակի հարցականի տակ դնելով **«պրոլետարական անխառն կենցաղ և հոգեբանություն...»** *ապսուրդով...*

---

[12] Հավանաբար, Զարենցը թերևս իմաժինիստներին հարող Գ. Յակուլովի միջոցով ինչ–որ չափով տեղյակ է եղել «Մայակովսկու դրուպպի» դեմ նրանց ծավալած «разгром»–ի խոհանոցին: Ստացվում է, որ թերևս «3–ի» դեկլարացիայի պես զավակիր հրահանգ–միջոցներով Եսենինին հավաքագրել են Մայակովսկու դեմ:

[13] Նույնը, էջ 74–75: Միաժամանակ հայտնվում է, թե եկույթ են ունեցել Աշոտ Հովհաննիսյանը, Ա. Վշտունին, Ն. Դարադյանը և ուրիշներ՝ «հակադրվելով դատախոսին»:

Գրականության և արվեստի դիսկուսիոն ակումբ

Այսպես է եղել և տասնամյակներ–հարյուրամյակներ շարունակ. անգամ չնչին հավասարակշռությունը, այնուամենայնիվ, ինչ–որ չափով չունեցող առնելու համար եղել է բարեբախտություն: Իսկ այդ միջոցին պարզապես անհրաժեշտը բարեբախտությունն էր. քանի որ պրոլետարականների, մանավանդ «Բուրյի» կառույցի հարձակումների միջոլորտում, երբ ամբողջ խորությամբ գիտակցվում է վտանգի չափը, օդի պես անհրաժեշտ է ճշմարիտ մտավորականության համախմբությունը: Եվ ահա, Վ. Թոթովենցի, Կ. Հալաբյանի, Կ. Զարյանի, Տ. Հախումյանի, Մ. Մազմանյանի, Ե. Չարենցի, Մ. Մանվելյանի, Մ. Սարյանի նախաձեռնությամբ մարտի 30–ին՝ ի հակակշիռ սոցիալիստական միաշնորհային նկրտումների, ստեղծվում է **«Գրականության և արվեստի դիսկուսիոն ակումբ»**: *Եվ հենց այդ օրերից էլ թեժանում է Չարենցի պաշտպանությունը ամենատարբեր մակարդակով ու դրսևորումներով:*

Փաստորեն ակումբի առաջին նախաձեռնությունն էլ լինում է Չարենցի «Արգի ռուսական պոեզիան» դասախոսության կազմակերպումը: Եվ, թեև մի քանի դասախոսությունից հետո ակումբի գործունեությունը դադարում է, այդուհանդերձ ապահովվում է ամենակարևորը. մշակույթի գործիչների (ծպտյալներով հանդերձ) համախմբումն ու միասնությունը՝ ստեղծագործական համագործակցության, միմյանց աջակցելու այլևայլ առումներով:

Ամուլի տեղեկատվությամբ որպես առաջին նախաձեռնող հիշատակվում էր Թոթովենցը": *Իհարկե, ենթաբնագրային որոշակի խորհրդով: 1923–ի այդ օրերին Չարենցը հանդիպում–ծանոթանում է զորավար Անդրանիկի հավատարիմ թիկնապահ–քարտուղար–զինվոր Թոթովենցի հետ: Դժվար է ներկայացնել այդ*

" Թոթովենցի դրական, մարդկային ու հայրենասիրական վարքի համար բնորոշ է այս իրողությունը – հակառակ ջլատիչ բանդագուշանքների՝ կոչված ծառայելու համազգային միասնության. որին և ձեռնամուխ էր տակավին Երևան չհասած: Ահա վկայությունը՝ **«Թեյասեղան ի պատիվ բանաստեղծ Ա. Իսահակյանի»** *վերնագրով. «Նոյեմբերի 2–ին (1920–ի՝ Ա. Զ.) երեքշաբթի իրիկուն մեր ընկերներեն պ.պ. Թոթովյանցի և Պողոսյանի նախաձեռնությամբ տրվեցավ թեյասեղան մը ի պատիվ բանաստեղծ պ. Ավետիք Իսահակյանի, որ Շվեյցարիաեն եկած էր հոս մեկ քանի շաբաթվան համար: Կնախագահեր պ. Պապազյանյան. ներկա էին պ.պ. Թեքեյան, Թերզիպաշյան, տոքթ. Գույումճյան (Ամերիկահայ ընկեր), տոքթ. Մ. Սալբի (Փարիզի վերածնունդին խմբագրապետ), տոքթ. Ղազարոսյան՝ իր տիկնոջ և աղջկան հետ, Արսեն Երկաթ, դերասաններ Զանոն. Շ. Սարյան, Բաղրատունի, նկարիչ Զ. Գալաֆյան և բազմաթիվ համակիր պարոններ և օրիորդներ:*

Ստեղծված մթնոլորտը չափազանց մտերմական էր և հուզիչ, այնպես որ երկու ընդդիմադիր կուսակցություններու պատկանողներ համակրելի բանաստեղծին շուրջը հավաքված էին միևնույն զգացումով և խանդավառությամբ:

Պ. Պապազյանյան Իսահակյանին ներկայացուց իբրև պարզ, ժողովրդին հոգիեն խոսող քնար մը. որուն թրթռացումը միշտ հուզումով պիտի լսվի:

Պ. Թերզիպաշյան իբրև Ամերիկայեն նոր վերադարձող մը, ուզեց նոր աշխարհի սրամտությունները զվարթացնել սեղանը:

հանդիպման դառնության ու ծանրության չափը. մտաբերվում են 1918-ի փետրվար-մարտյան օրերի Կարինից՝ Կարս և հետո ... նահանջի իրողությունները. Կովկասյան ճակատը լքած ռուսական զորքերի հետքերով՝ սառցապատ լեռներում ու կիրճերում թողած անզահան արևմտահայության «Դի՜ր, դի՜ր, դի՜ր...»:

Ե. Չարենց և Մ. Սարյան. մտերմության սկիզբը

Նույն առումով անգնահատելի է հատկապես Մարտիրոս Սարյանի դերը, որ ոսկե տառերով պետք է արձանագրվի հայոց մշակույթի պատմության էջերում: Նախ նշանավորված Սարյան–Չարենց ստեղծագործական–քաղաքացիական համախոհությամբ ու բարեկամությամբ, ուրեմն և անձնանվեր ծառայությամբ հարազատ ժողովրդին... Ինչպես և այդ օրերին բորբոքված Արցախյան պահանջատիրությանը... Մտաբերենք սկիզբը. բանաստեղծի Երևան հասնելուն պես, թերևս դրանից էլ առաջ հասնում են ԵԺ մոսկովյան հրատարակության հատորները[15]:

Ուշադիր հետևելու դեպքում, անվրեպ կարելի է նկատել **«Ես իմ անուշ Հայաստանի...»** և **Սարյանի նույն թվականին ստեղծած մասնավորապես «Հայաստան», «Երևանի պետական թատրոնի վարագույրը» պաննոների օրգանական հարազատությունը՝** ճիշտ և ճիշտ բանաստեղծության սարյանական մեկ-

---

Տոքտ. Գույումճյան Իսահակյանի մեջ շեշտեց կարոտի երգիչը և ըսավ, թե «կարոտ»-ը բացատրող բառեր չկան ուրիշ լեզուներուն մեջ:

Բաղրատունի արտասանեց Հարճը. Սարյան, Ջանան և Հրաչ Զարդարյան արտասանություններ ըրին Իսահակյանեն:

Թեյասեղանին անակնկալը կկազմեր օր. Արշալույս Թերլեմեզյան, որ Պոլսեն քանի մը օր առաջ հասած՝ տակավին ինքզինքը նոր կզգար այս միջավայրին մեջ, բայց առաջին երգեն ետք, զոր հուզումեն չկրցավ լրացնել, արդեն ինքզինք անմիջապես սիրեցուց ներկաներուն և Վանի երգեր երգեց իր գրավիչ ձայնով:

Հետո խոսք առավ պ. Իսահակյան, որ չափազանց հուզված էր իրեն եղած այս համակրանքի ցույցեն. ըսավ թե համեստ մեկ ընկերն է այն մեծ բանաստեղծներուն, որոնք հայության արտին մեջ վառեցին հայրենիքի գաղափարը և այսօրվան Հայաստանը կերտեցին, բայց բախտը այնպես բերավ, որ ինք միայն գրչով մարդ մը չեղավ, այլ եղավ զինվոր մըն ալ, այնպես որ մեկը մյուսին թույլ չտվավ որ նվիրվի ամբողջությամբ իր գործին: Ինք և իր եղբայրակիցները միշտ հեծծանք ունեցան իրենց քնարին վրա և մաղթեց, որ վաղվան բանաստեղծները այլևս երգեն զվարթությունը, գինին, Աստղիկին սերը և նավասարդյան խրախճանքները:

Վերջին խոսքը առնելը վիճակվեցավ պ. Թերլեմեզյանին, որ հիշեց թե այսօր մեռելոց տոնն է Ֆրանսայի մեջ և ոգեկոչեց մեր մեծ մեռելները, անոնք որ իրենց քնարը մեկտեղ կհնչեցնեին Իսահակյանին հետ և որոնք սակայն այսօր չկան: Պ. Թերլեմեզյան հուզված շեշտով կարդաց Իսահակյանի մեկ քերթվածը ձոնված իր եղբորորդիին, որ մեռած է Կովկասի կռիվներուն մեջ: Այս քերթվածը կկազմե լավագույն էջերեն մեկը Իսահակյանի վերջին գործին՝ «Հայրենի աղբյուրից»:

Թեյասեղանը սկսավ ժամը 9-և կեսին, վերջացավ կեսգիշերին, և ներկաները մեկնեցան կրկին այնպիսի մտերիմ հավաքույթներու շուրջ համախմբվելու առաջադրությամբ». («Ժողովրդի ձայն»). Մշ. 1920, 16 դեկտեմբերի:

[15] Փետրվարի 20-ին ԽՀ տեղեկացնում էր. «Մոսկվայից ստացվել և վաճառվում են Ե. Չարենցի Երկերի Ա և Բ հատորները»:

նության՝ ահա՛ գեղարվեստական սույն չափանիշներով. ոգով ու պաթոսային շնչառությամբ. «... չեմ էլ հիշում, թե երբ եմ առաջին անգամ լսել կամ կարդացել «Ես իմ անուշ Հայաստանին»: Երբեք բերանացի չեմ սովորել՝ պարզապես գիտցել եմ: Ինձ թվում է, թե Սահակի ու Մեսրոպի աղոթքների հետ էլ բերել եմ:

Դա մեր այսօրվա աղոթքն է: Աղոթք, որը կարելի է թե՛ մտքում հյուսել, թե՛ մրմնջալ շշուկով, թե՛ արտասանել բարձրաձայն:

Իսկ ինչի՞ հետ համեմատես «Ես իմ անուշը»: Քիչ կլինի ասել, թե բանաստեղծություն է: Պոեմ էլ չէ, վեպ՝ նույնպես, որովհետև իրենց ծավալով, մոնումենտալությամբ հանդերձ, դրանք կյանքը ներկայացնում են այս կամ այն մասշտաբով:

«Ես իմ անուշ Հայաստանին», ավելի շուտ, բոլոր մասշտաբներից դուրս պանոն է: Պանո՝ հասցված ժողովրդական պոեմի աստիճանի: Դա անհիշելի ժամանակներից եկող Հայասա–Ուրարտու–Արմենիա երկրի համապարփակ պանո–դիմանկարն է: Դա մեր ազգի կենսագրության ու վարքի կենդանի արտացոլքն է, մեր կրած տառապանքների ու փայփայած իդեալների, մեր անկումների ու վերելքների, արհավիրքների նման թակա մեր ճակատագրի ու անմեռ մնալու մեր ձգտման գեղարվեստական սինթեզն ու բյուրեղացումն է:

Այդպիսի մի երկ աշխարհ բերելու համար պետք է ամենաքիչը կիսաստված լինել: Ավետիքն էլ նույն կարծիքին էր» (ՀԵԶմ, 2, 184–185):

Այս ամենը նույնությամբ վերաբերում է և այդ տարիների սարյանական պաննոներին, այլև բոլոր բնակտավներին, որոնք և՛ ծնկաչոք ջերմեռանդ աղոթք են հայրենիքի առջև, և՛ լի են վեհաշունչ էպոսային հանդարտ հպարտությամբ, և ամենակուլ զգածածին քնարականությամբ, և այդ ամենը՝ անհաշիվ երանգներով ու նրբերանգներով հանուն գետնահար հայրենիքի ու ժողովրդի կանգունության: Տրամադրությունների այս շաղախով էլ ստեղծվել է Չարենցի հանրահայտ «Դիմակով» դիմանկարը, որը սեփական մտաբերումով Սարյանը «... նկարել է, պաշտոնական» պայմաններում, իր տանը «(ասել է «Ֆրանսիա» հյուրանոցի բանաստեղծի սենյակում), «արագ, երկու սեանսով՝ մի–մի ժամ»:

Իր նույն «Չարենցի հետ» հուշերում Սարյանը կենդանի գույներով ներկայացնում է ստեղծման օրերի հանգամանքները[16]. առաջին օրվա անհաջողությունը. որ չափազանց հետաքրքիր է երկուսի էլ ստեղծագործական հոգեբանության

---

[16] Ի դեպ. ՀԵԶմ երկրորդ գրքի առաջաբանում՝ դառնալով Չարենցի սարյանական դիմանկարի մոտիվներով ԳԹ 1967–ի սեպտեմբերի 22–ի համարում Ռ. Արամյանի տպագրած ակնարկին, նվաստս նկատել է. «Ակնարկում ճիշտ է այն փաստը, որ Սարյանի արվեստանոցը քսանական թվականներին տեղադրված է եղել Սպանդարյան փողոցում, Արազյանների տան վերնահարկում: Նկարագրվող մյուս հանգամանքները թվում են անհավանական»: Ստույգ քաղվող տողերով «անհավանականությունը» հաստատել է Սարյանի մերձավորներից արվեստաբան Վ. Մաթևոսյանը. «Հաստատում եմ կասկածդ՝ Չարենցի սարյանական դիմանկարի ստեղծման մասին Ռաֆայել Արամյանի հաղորդած տվյալների վերաբերյալ («Հուշեր Եղիշե Չարենցի մասին, 1986, Առաջաբան): Հենց նշածդ ակնարկի առիթով խոսել եմ Վարպետի հետ: (Ռաֆիկը կէի ոչ հավաստի բաներ է գրել Սարյանի մասին): Վարպետը, գիտես, շատ էր սիրում Ռաֆիկին (ինչպես մենք բոլորս), Ռաֆիկն էլ, պարզ է, պաշտում էր Վարպետին:

տեսակետից՝ հիմնական նախադրյալով. այն է՝ **արհեստականության բացառումն թե՛ մեկ, թե՛ մյուս կողմից**: Ներկայացնում է բնօրինակի «տարածված հայկական տիպաժը»՝ յուրահատուկ գլխի շարժումով, դիմախաղով, «այրվող մարդու ազդեցիկ արտահայտությունը, և հատկապես, խոշոր աչքերի սուր, արծվային հայացքը ժայռեղեն հսկայի տպավորությամբ»: «Այդ դեմքն է,— ավելացնում է նա,— որ արտացոլում է նրա անհաշտ ու խիստ, ակտիվ ու բռնկող բնավորությունը, այդ դեմքն է, որ կրում է վեհ ու դրամատիկական հանճարի և մեծ հայի արտահայտությունը:

Չարենց անձնավորության հիմնական հատկանիշներն են դրանք, որ պետք է ընդգծել ու խտացված ներկայացնել կտավի վրա...» (ՀԵՉմ, 2, 179):

Բայց ամենաէականը, իհարկե, բանաստեղծի դիմանկարի և դիմակի հարաբերությունն է, որի վերհանման բանալին նույն տեղում ընձեռում է նկարիչը իր այս «կոնցեպցիայով». «... Դիմանկարի նկատմամբ իմ հետաքրքրությունը ծնվեց եգիպտական արվեստին ծանոթանալիս: Մի տեսակ խորհրդավոր զորություն ունի դիմակը: Ամենաանարտահայտելի բանը կարելի է նրա միջոցով արտահայտել: Տարբեր ազգեր, տարբեր ժողովուրդներ, տարբեր արվեստագետներ, տարբեր իմաստ են դնում դիմակի մեջ: Ես այն դիտում եմ, մոտավորապես, իբրև հմայիլ ճակատագրի, հավերժելու մարդկային ձգտման խորհրդանիշ: Կարծում եմ, այս կոպիտ ձևակերպումը ինչ-որ բան կարող է հուշել Չարենցի դիմանկարը «կարդալու» համար»,— գրում է Սարյանը, նախապես զգուշացնելով՝ իսկ թե դիմակի և դիմանկարի հարաբերակցությամբ ինչ «խորհրդավոր զորություն» է ցանկացել արտահայտել ինքը՝ «կռահումը թողնում է դիտողին» (ՀԵՉմ, 2, 178–180):

Հենց այդ օրերին էլ Սարյանը՝ «Եղիշե Չարենցին Մ. Սարյանից 1923, 25, 4, Երևան» տողով նվիրել է «Аполлон»-ի 1913-ի թիվ 9-ը[11]: Այն բացվում է նկարչի ստեղծագործությանը նվիրված Մաքսիմիլիան Վոլոշինի «М. С. Сарьян» մեծաշունչ հոդվածով: Անշուշտ, նույն օրն էլ բանաստեղծը բուռն հափշտակությամբ և հպարտությամբ կարդացել-վերակարդացել է՝ համեմատելով անցած տարվա դարնանը Լազարյան ճեմարանի ցուցադրումներից ստացած իր տպավորություններին: Անկասկած հավանման հետաքրքրությամբ անդրադարձել է և ամսագրի նույն համարում զետեղված «О скульптуре Коненкова» նկարչի մտերիմ բարեկամի ստեղծագործությանը նվիրված հոդվածին և այլ նյութերի:

Ուրեմն ամեն դիտողի պես փորձենք կռահել՝ եթե հաջողվի, ինչ-որ տեղ նաև

— Ո՛չինչ: Մեր Ռաֆիկն է, էլի՛,— ինքը երևակայության մեջ ավելի է ապրում, քան իրականում, և իր շրջապատի մարդկանց էլ է երևակայության մեջ տեսնում: Հեռո՛ւ գրող է:

Ասաց Վարպետն ու ձեռքը քեզ ծանոթ ժեստով թափ տվեց... Վ. Մաթևոսյան, 2 մարտի, 1987, Երևան»:

Գրել է «Մարտիրոս Սարյան, Արվեստի մասին (1986) գրքի նվաստիս նվիրած օրինակի առաջին էջի վրա, Սարյանի և մեր արդեն հանգուցյալ անման տարաբախտ Վիլենը:

[11] Պահպանվում է Չարենցի գրադարանում. այսուհետև՝ Չգ:

1923-ի այդ օրերի տեսանկյունից: Ակնհայտորեն խորաթափանց Սարյանը՝ գուշակելով խռովահույզ բնավորությամբ-խռովահույզ հայրենասիրությամբ օժտված Չարենցի բախտը, դիմակի համադրումով իմաստավորել է հարազատ ժողովրդի համար **Հավերժական ուղևոր ծնվածի ճակատագիր**: *Խորհրդանիշ հմայիլով, հմայիլի հայ ժողովրդի միջավայրում ավանդական ըմբռնումով, որի երկարյալ էությունը, թվում է, կարելի է թարգմանել նույնիսկ ընտրելով Տերյանի «Կյանքի չար նրագին» պարզված միանգամից երեք*

...Չար նետը թող չդիպչի քեզ...
...Չար հուրը չայրե թևերդ...
...Չար աչքը թող չտեսնի քեզ... *(1, 220)*-

տարբերակով հնչեցրած «երկյուղագորովախառն» մտահոգությունը, որի հակառակ նմարին ենթադրվում է հմայելու-գերելու արտասովոր, խանդոտ նախանձ ու վրիժառություն բորբոքող կախարդական զորություն ու հարստություն: Այս առումով չափազանց հետաքրքիր են 1911-ին Սարյանի վրձնած «Եգիպտական դիմակներից» իր իսկ օգտագործած երեք տարբերակները՝ խորհրդանշային խորհուրդների շեշտված տարբերությամբ, որոնց համեմատական մեկնությունը, անշուշտ, արվեստաբանների պարտքն է՝ անպայման նաև գրականության օգնությամբ: Կողք-կողքի դնելով այդ երեք դիմակը, դժվար չի լինի որոշել, որ Չարենցի դիմանկարինը հարազատ է «Եգիպտական դիմանկարներից» մեջտեղինին, Սարյանի ինքնանկարինը (1933) խոշոր արևագույն վերջինին, որի մայլ տարբերակը դրանից առաջ անկյուն էր գտել նկարչի «Իմ ընտանիքը» դիմապատկերում (1929)՝ ավագ որդու՝ Սարգիս-Սարիկի գլխավերևը:

Միաժամանակ ակներև է, որ Չարենցի դիմանկարի դիմակը ըստ ամենայնի խորհրդանշական ու խորիմաստ է և՛ դիմակի, և՛ Չարենցի դիմանկարի շուրջը հյուսված գունային մթնոլորտի հարաբերակցությամբ:

Սկսենք դիմանկարի դիմացի գունային մթնոլորտից, որով մարմին է առնում այն տրամադրությունը, որ ուղեկցել և ուղեկցում է բանաստեղծին իր ճանապարհի նախամուտքից. կանացիակերպ դիմակի խոցված սարսռազդու աչքեր՝ շրջանակված սևածիր կրկնակի աղեղներով. նույն թանձր սևով շեշտված խուփ-անմռունչ բերան (ասել է՝ զարհուրելի մթին տագնապներ). դիմակի դեմքի արնագույնը բոլորող դեղնորանդ սև, ասես, ինչպես հայոց «սև ու կապույտ լինես» անեծքում՝ կապույտով ու սևով զուգորդվող-միջնորդվող ֆոն. դիմակը շրջանակող փշեծաղիկներից հյուսված յուրօրինակ փշեպսակ: Այս դիմակի ամենավերևից դիմանկարի գլխավերև ձգվող մի երրորդ դեղնականչ ծիածանակերպ երկու աղեղ, որոնք և՛ հանդչում-արմատավորվում, և՛ ծայր են առնում արևագույնով ու շագանակագույնով շեշտավորված (ասել է՝ հարազատ ժողովրդի պատմական անցյալ նշանավորող) բանաստեղծի թիկունքից:

Եվ այս ամենով ու ամենքի հետ՝ գունագծային, գունահամադրվող նրբերանգային–նրբիմաստային ամենատարբեր զուգորդումներով խտահայաց բանաստեղծի աչքերի, լարված–սևեռված դիմագծերի մագնիսական–կամրկական միաշունչ հաղորդակցությամբ սև ու կարմիր տրտմությամբ, արևառող ճակատով ու դեմքով, գլխից վար գունավորված բարեբեր–ստեղծարար կանաչներով՝ ուսերով ու կրծքով, կանաչների միջից առանձնացող–ձգվող փերուզե ու սև երակներով, որպիսիք անմիջականորեն արձագանքում են տվյալ դիմակի՝ «Եգիպտական դիմանկարներից» մեջտեղինի կանաչ գլխավերևից տարբեր, գլխավերևի սևեզր փերուզին: Հայրենիքի և բանաստեղծի ճակատագրի հառնման ու կոչման ներթափանցված, ընդհանրացված իմաստալի համադրումներ ու զուգորդումներ, մանրամասներ, երանգներ, նրբագծեր քանի սանդղակով կամ չափումով, որոնցով շնչավորվում է հավասարապես և՛ հայրենիքին և՛ բանաստեղծին վերաբերող մեկից մյուսը փոխադարձվող միաշունչ, միաթալիսման–միահմայիլ՝ «Ես իմ անուշ Հայաստանիին» և յոթ բալլադներին համազոր, բառացիորեն անպարփակ մասշտաբի բովանդակություն: Մտաբերելով դիմանկարի ստեղծման օրերն ու ժամերը, Սարյանը արձանագրում է, թե իր «սովորության համաձայն», նկարելու ընթացքում անընդհատ խոսեցրել է բանաստեղծին «իրեն հուզող թեմաների շուրջը»[18]: Բայց, դժբախտաբար, հազար ու մեկից հիշատակում է Չարենցի այս մեկ արձագանքը «–Ինտուիցիան մեծ բան է: Բնազդն էլ, արյունն է՛լ: Առանց դրանց ի՞նչ արվեստ, ի՞նչ գիտություն, ի՞նչ մարդկություն: Եվ ինչքա՛ն էլ առեղծվածային են: Տեսնես՝ ե՞րբ պիտի կարողանանք մեր համալսարանում բազա ստեղծել ու խելոք ջահելներին մղել այդպիսի հարցերի ուսումնասիրության: Ա՛յ, գերմանացիները՝ էքսպերիմենտալ էսթետիկայի ու հոգեբանության մի քանի լավ օջախներ ունեն: Եվ բավականին լուրջ աշխատանք են տանում, շատ մեծ արդյունքների են հասել: Ոչի՛նչ, մենք էլ կանենք: Պիտի լավ մտածել ու ելքեր գտնել:

Ու երազում էր Չարենցը, մտահոգվում, ափսոսում, պայծառանում: Հույսը շողում էր դեմքին»,— գրում է Սարյանը (ՀԵԶժ, 2, 179): Եվ սրանք ինչպես Չարենցի, այնպես էլ Սարյանի համոզմունքներն ու երազանքներն են:

Ապա հաջորդում է դիմանկարի ավարտին վերաբերող մտաբերումը. «Դիմանկարը դուր եկավ թե՛ իրեն, թե՛ ինձ:

— Մեկ էլ մի քսան տարի հետո այսպես հիմնավոր կնկարես:— Հետաքրքիր է, ինչպիսի՞ն կլինեմ:— Եվ գերմաներեն մի բանաստեղծություն արտասանեց:—

---

[18] Իրոք, վրձնելիս Սարյանը բնորդի հետ «հարազատ թեմաների շուրջը» զրույցներ սովորություն ուներ. համոզված եմ, որ ինչպես այդ, այնպես էլ շատ ու շատ տարիների զրույցները մեծապես դարձել են հայրենիքի աղետների, իսկ 1923–ի այդ օրերին առանձնապես Կարս–Ղարաբաղ–Նախիջևան առանցքով:

Ծերության և իմաստության մասին[19]: Շնորհքով մարդիկ են գերմանացիները՝ Գյոթե ունեն, Դյուրեր: Որ մեկն ասես: Մեր մեծերն էլ շատ են ու շատ էլ մեծ են: Էլի ՛ կունենանք» (ՀԵԶմ, 2, 179):

Եվ սակայն 1943-ի մարտին նորից «հիմնավոր նկարվելու» բախտ չվիճակվեց բանաստեղծին: Կասկած չունեմ, որ այժմ էլ կրտսեր որդու՝ Ղազարոսի ռազմաճակատային բախտով տառապող Սարյանը, նույն մարտյան օրերին՝ սովորականի պես թերթելով այն մատյանները, որոնցում օր առ օր ամսաթվերով արձանագրում էր սեփական կտավները, անպայման դադար է առել, վերհիշելով կենտրոնացել դիմանկարի վրա և միայնության մեջ արցունքներ թափել բանաստեղծի հիշատակին... Եվ յուրատեսակ մխիթարության պես ականջում Չարենցի արտասանությամբ հնչել են Գյոթեի տողերի հեռավոր շշուկներ...

Հատկանշալի է՝ Սարյանի ու Չարենցի հանդիպումները այդ ամիսներին եղել են համարյա ամենօրյա, այդ թվում «Գրականության և արվեստի դիսկուսիոն ակումբի» շրջանակում: Ըստ այդմ մշտապես անդրադարձել են բանաստեղծի ստեղծագործության, հոդվածների ու դասախոսության շուրջը բորբոքվող հանուն և ընդդեմ բանավեճերին, և խաղաղասերի իր բնավորությամբ կարճառոտ-սրամիտ իմաստուն մի ակնարկով կամ դարձվածով Սարյանը, բնականաբար և մյուսները, հանդստացրել են տաքարյուն Չարենցին: Ինչ խոսք՝ ակումբի շրջանակում,— և դուրս,— բազմիցս հանդամանալի մտքեր են փոխանակվել և «Հայաստանի ժողկոմխորհի նիստերի դահլիճի համար» Սարյանի նկարած գիրքապատկերի առիթով[20]: Եվ միահամուռ հավանության ու հիացմունքի է արժանացել խորախորհուրդ հղացումը. հայոց բազմադարյան խաչքարերի մեծ արվեստի խորհրդանիշների ոգով ու էությամբ՝ Արարատի ծոցում գիրքապատկերի հիմնաթել են դարձել ցորյանի ու խաղողի ողթի խորհրդանիշները. մարմնականը իբրև «հացն կենաց» և հոգեկանը՝ խաղողի ողկույզը-գինին «կենաց հեղուկ»՝ ավետարանական իմաստաբանությամբ. ինչպես խաչքարերում, գիրքապատկերում ևս ճիշտ և ճիշտ՝ «... ավետարանական այն դրվագի պատկերացումով, ըստ որի Քրիստոսը վերջին ընթրիքում աշակերտներին մատուցելով խորհրդանշա-

---

[19] Արտասանածը պետք է լինի 1932–1933 թթ. Գյոթեից թարգմանած էջերից, հավանաբար, այս քառատողը.

Բարեկա՛մ, անխափան հասկացի՛ր դու սա.–
Դարում, ուր Ոգին ու Միտքն են հորդում–
Լոկ առաջնորդվել կարող է Մուսան,
Բայց ինքը արդեն չի՛ առաջնորդում (4, 442):

Այնուամենայնիվ պահպանվել են 1933-ին վերաբերող «Ե. Չարենցի դիմանկարը» (թղթ. մանր. սանգինա) և «Երկիր Նաիրի» վեպի նկարազարդերը:

[20] Այդ միջոցին էլ վերաբերում են Չարենցի նկարչին նվիրած առաջին գրքերը. «922.2.20.Երևան» տարեթվով և «Շատ սիրելի Սարյանին Ե. Չարենց» նվիրումով «Ռոմանս անսեր» (922-ը վրիպում է. պետք է լինի 923:

Ապա «923.27.4, Երևան» տարեթվով «Սիրելի Մարտիրոս Սարյանին, Չարենց» նվիրումով Հայորդը:

կան հացն ու գինին, մեկնաբանում է մահվան խորհուրդը հետևյալ պարզ ... խորիմաստ օրինակով. «— Եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնելով չմեռնի, միայն ինքը կմնա, իսկ եթե մեռնի՝ բազում արդյունք կտա» (Ավետարան ըստ Հովհաննու, գլ. ԺԲ 24):

«Որքան մեզ հայտնի է,— ավելացնում է խաչքարերի արվեստի հետազոտողը,— քրիստոնյա ժողովրդներից ոչ մեկը կյանքի ու մահվան խորհուրդը այդքան ըմբռնելի կերպով մեկնաբանող այդ գրվածքը որպես իր ազգային արվեստի հիմք չի ծառայեցրել, որքան հայ ժողովուրդը»[21]:

Պատկերացնել է պետք. բազմադարյան ավանդներով սերնդե—սերունդ քարերի վրա հարատևած գրվածքը այժմ էլ փոխանցվում է հայոց պետական (թող լինի կախյալ) գերբին... Այն էլ ավանդական «խաչբուռ» ցորենահյուսքի՝ խաղողորթի հյութեղությանը ձայնակցող—փոխադարձվող, լիությունից ճաքճքող՝ Արարատի ձյունակապույտի ստորոտում—շուրջը գունային—գծային արևադույնի—հասկադույնի, տերևա—ողկույզադույնի ճառագող միասնությամբ... Պատկերացնե՜լ պետք է. այն էլ անաստվածության—անմարդկայնության այդօրինակ ժամանակներում:

Ծավալվող—բորբոքվող հիացական մտքերի փոխանակում—փոխադարձումներով են ընթացել և «Հայաստան», «Հայաստանի առաջին պետական դրամատիկական թատրոնի վարագույրը», 1922—ի դեկտեմբերից հետո Սարյանի կտավներում հաճախ ամպերի մեջ պատկերվող թե՛ արևոտ, թե՛ տրամաշունչ—ամպամած՝ մշտապես խոհականորեն վեհանիստ—վեհաշուք սարյանական Արագածներն ու Արարատները. մեկը մյուսին հաջորդած այլ բնանկարներ, նկարազարդումներ: Եվ հայրենի **հավաքական բնաշխարհի** կողքին՝ ասես հավաքականության գիտակցական—ենթագիտակցական մղումով, միանգամից նոր թափ է առնում սարյանական դիմանկարային արվեստը՝ ծայր առնելով Եղիշե Չարենցի հենց այդ հանրահայտ դիմանկարից. ապա հաջորդաբար՝ Ս. Լուկաշին, Ռ. Մելիքյան, Հովհաննես Թումանյան, պատգամավորներ, պատգամավորուհի...[22]

Նույն հայրենանվեր—ժողովրդանվեր անձնուրաց եռանդով ու թափով՝ տարեցտարի հավելումներով շարակարգվելով շարակարգվեց սարյանական դիմապատկերների պատկերասրահը, որի բնորդների անվանումը, վարք ու ճակատագրի բնութագիրը՝ արժանավորներին գնահատում է արժանավորը տրամաբանությամբ, արժանացավ Հր. Մաթևոսյանի տողերին. «Սարյան մի գունդ՝ որ մարտի նետվեց մեզ համար ամենաողբերգական պահին, երբ կարող էինք կորցնել ազգ

---

[21] Առաքել Պատրիկ. Հայկական խաչքարային արվեստը. այդ հետաքրքիր աշխատության մեքենագիր օրինակը պահպանվում է հեղինակի դստեր Անի Պատրիկի մոտ: Խորին շնորհակալություն տրամադրելու համար:

[22] Հանուն նույն հավաքականության Սարյանի նախաձեռնությամբ նույն թվականին կազմակերպվում է Կերպարվեստի աշխատողների ընկերություն՝ ճանաչված նկարիչների, ճարտարապետների, քանդակագործների, կերպարվեստի պատմաբանների անձնակազմով: Տե՛ս Մարտիրոս Սարյան, Տարեգրություն, 1980, էջ 105:

և երկիր լինելու վերջին հնարավորությունները նույնպես: Տանջահար ժողովուրդն ըստ երևույթին ոգեկոչեց նաև իր ապագայի ուժերը՝ այլապես երկու տասնամյակը մեզ այդքան մեծեր չէր նվիրի: Դա առաջամարտիկների հերոսական սերունդն էր, և որպես իսկական առաջամարտիկներ նրանց խիտ շարքերը մեր օրերին հասան նոսրացած, բզկտված, հոշոտված, պատառոտված, ուխտադրժորեն թիկունքից զարկված և, զարմանալիորեն, դարձյալ խանդավառ...»[23]:

Սրբազան հայրենականչ–հայրենակոչ՝ հանուն հայոց պետականության ամրապնդման...

Թատերական կյանքը. մտերմության սկիզբը Ա. Ոսկանյանի և Վ. Փափազյանի հետ

1923–ի հունվարի կեսերից աննախադեպ եռանդուն ու եռուն էր մշակութային կյանքը Երևանում: Առաջին հերթին վերաբերում է թատրոնին. նկատելի հեռադծով Երևանից էլ առաջ ամենուրեք հայության միջավայրում՝ Թիֆլիսում, Ալեքպոլում, Դոնի Ռոստովում... իսկ Երևանի դեպքում, ասես, ինքնաբուխ պայմանավորվածությամբ խոսքը մեկ արած Չարենցի և ոչ միայն նրա հետ: Ըստ երևույթին, ինչպես լեհերը նաև 1830–ի պարտությունից հետո,

— Արցախյան հարցի քննության նախօրեին անհրաժեշտություն կար հրովարտակելու, որ **Հայաստանը դեռ կորած չէ**, կա՛ և՛ կմնա՛, և, հետաքրքիր է. առաջամարտիկների շարքում առանձնանում են թատերական գործիչները, մեկը մեկից երևելի դեմքեր՝ երևելի բեմադրություններով:

Հունվարի 16–ին Պետական թատրոնում ներկայացվում են **«Տասնչորսը հուլիսի»** և **«Միմոս»**. առաջինը՝ թարգմ. Հ. Հովհաննիսյան, ռեժ. Լ. Քալանթար, նկարիչ Գ. Երիցյան, դերակատարներ՝ Վ. Փափազյան, Ա. Ոսկանյան, Մ. Ջանան, Ս. Գարագաշ, Օ. Բունիաթյան: **«Միմոս»**՝ թարգմ. և ռեժ. Վ. Փափազյան, դերակատարներ՝ Փափազյան, Մ Ջանան, Ա. Ոսկանյան: Առավել հանդիսավորությամբ՝ հունվարի 24–ին նույն Պետական թատրոնում **«Օթելլո»**՝ ռեժ. Վ. Փափազյան, նկ. Գ. Երիցյան, երաժշտ. Ալ. Սպենդիարյանի: Եվ այսպիսի դերակատարներով. Օթելլո՝ Վ. Փափազյան, Դեզդեմոնա՝ Ա. Ոսկանյան, Յագո՝ Մ. Մանվելյան, Կասիո՝ Ա. Ավետիսյան, նաև Հր. Ներսիսյան, Մոնտանո՝ Մ. Ջանան, նաև Ա. Ավետիսյան, Վ. Վաղարշյան, Ռոդրիգո՝ Հ. Խաչանյան, Էմիլիա՝ Ն. Մանուչարյան. Բրաբանցիո՝ Հ. Ստեփանյան, նաև Ա. Ավետիսյան: Միայն պատկերացնել պետք է փայլատակող դեմքերի բազմության եռուզեռը. **սեփական մշակութային օրրան ու սեփական ազգային թատրոն. թեկուզ և անշուք շենքում, բայց, դե՛, որպիսի բարձր անձնակազմով...** Որպիսի՜ ազգային հպարտություն, որպիսի՜ երանելի օրեր, անապակա՜ն վայելում...

[23] «Հայաստանի Հանրապետություն», 1995, 16 հուլիսի. այսուհետև ՀՀ:

Փետրվարի 8-ին արդեն ներկայացվում է «Ավազակները». Կառլոսի դերում Վ. Փափազյան: 15-ին **«Երկու տիրոջ ծառան»**. ռեժ. Վ. Փափազյան, նկ. Գ. Երիցյան: 20-ին՝ **«Վենետիկի վաճառականը»**. բեմ. Ա. Բարջակյանի, ռեժ. Մ. Մանվելյան, նկ. Գ. Երիցյան. Շայլոկ՝ Մ. Մանվելյան, Բասանիո՝ Վ. Փափազյան, նաև Հր. Ներսիսյան, Անտոնիո՝ Հ. Ստեփանյան, Լորենցո՝ Մ. Ջանան, Պորցիա՝ Ա. Ոսկանյան, Սոլանիո՝ Ս. Մելիքսեթյան, Գրացիանո՝ Ա. Ավետիսյան, նաև Օ. Բունիաթյան, Գոբբո՝ Տ. Շամիրխանյան, Ծերունի Գոբբո՝ Հ. Խաչանյան, Տյուբալ՝ Մ. Ջանան, նաև Օ. Բունիաթյան, Ներիսա՝ Ա. Ազատյան:

Մարտի 7-ին արդեն նույն Պետական թատրոնում առաջին անգամ Արմեն Տիգրանյանի ղեկավարությամբ հնչում է **«Անուշը»** (օպերայի առանձնակին)[21]: Սարո՝ Շարա Տալյան, Անուշ՝ Մ. Սեդմար, Մոսի՝ Հ. Տալյան:

Մարտի 11-ին **«Մոննա Վաննա»**. թարգմ. Տ. Հովհաննիսյան, ռեժ. Վ. Փափազյան, նկ. Գ. Երիցյան. դերակատարներ՝ Պրինցիվալլե՝ Վ. Փափազյան, Ջիովաննա՝ Ա. Ոսկանյան և ուրիշներ: Մարտի 15-ին **«Գնչուհի Ջանդա»**. ռեժ. Լ Քալանթար, նկ. Գ. Երիցյան: Ջանդա՝ Համբիկ, Իոնել՝ Լ. Քալանթար, Օլեսկու՝ Մ. Մանվելյան, Վասիլի՝ Մ. Ջանան, Ալեքո՝ Օ. Բունիաթյան, Ծերուկ՝ Ս. Մելիքսեթյան: Մարտի 24-ին **«Քին»**. թարգմ. Մ. Ավալյան, ռեժ. Վ. Փափազյան, նկ. Գ. Երիցյան: Քին՝ Վ. Փափազյան, Ելենա՝ Ա. Ոսկանյան, Դերասան՝ Ա. Ավետիսյան, Սոլոմոն՝ Մ. Ջանան, Պետեր Պետ՝ Տ. Շամիրխանյան, Ուելսի իշխան՝ Լ. Քալանթար, Աննա Դամբի՝ Ս. Գարագաշ, Լորդ՝ Մ. Գարագաշ, Կեսևիլ՝ Լ. Ազաբաբյան, Հարբած դերասաններ՝ Ս. Մելիքսեթյան և Տ. Շամիրխանյան, Կոնստեբլ՝ Օ. Բունիաթյան:

Մարտի 25-ին արդեն **«Հին աստվածներ»**. ռեժ. Լ. Քալանթար, նկ. Գ. Երիցյան: Սեդա՝ Ա. Ոսկանյան, Աբեղա՝ Վ. Փափազյան, Իշխանուհի՝ Համբիկ, Վանահայր՝ Հ. Ստեփանյան, Իշխան՝ Լ. Ազաբաբյան, Քրմապետ՝ Ա. Ավետիսյան, Ճգնավոր՝ Տ. Շամիրխանյան, Կույր վանական՝ Մ. Մանվելյան, Անտոն վանական՝ Ս. Մելիքսեթյան, Ճերմակավոր՝ Ա. Ավետիսյան, Զաքար վանական՝ Ար. Շահինյան, Միդանույշներ՝ Ս. Գարագաշ, Ա. Վանեցյան, Ե. Ադամյան: Մարտի 27-ին **«Տրիլբի»**. թարգմ. Հ. Աբելյան, ռեժ. Ա. Ոսկանյան: Տրիլբի՝ Ա. Ոսկանյան, Սվենգալի՝ Մ. Մանվելյան: Մարտի 31-ին «Անհայտ կին». ռեժ. Համբիկ. Ժակլին՝ Համբիկ, Ռայմոնդ՝ Լ. Քալանթար, Ֆլերիո՝ Հ. Ստեփանյան, Շենել՝ Օ. Բունիաթյան, Էլեն՝ Ա. Ազատյան, Հյուրանոցի ծառա՝ Գ. Ղազարյան, դատախազ՝ Ա. Ավետիսյան:

---

[21] Այդ երեկոյին «Անուշի» վեհաշուք դրվագներով գյուղական-խաղական ողջ համայնքով՝ «հարսներով ու փեսերով», անշուշտ, Չարենցը եղել է Արմենուհու հետ... Ապրիլի 24-ին էլ Պետական թատրոնում ծանր հիվանդությունից հետո (կոկորդի) երգում է Տիգրան Նալբանդյանը. Չայկովսկի—«Գիշեր», «Ոչ մի խոսք, օ, իմ բարեկամ»: Ռիմսկի-Կորսակով «Արևելյան ռոմանս». «Սարասատեի բալեն»: Այս անգամ էլ, անշուշտ, եղել է երգչի «երկրպագու-անշուշտների» երեկոների ունկնդիրներից մեկը: ԽՀ ապրիլի 25:

Եվ ապրիլի 6-ին խաղաշրջանը փակելով նույն ներկայացումով, 4 օրից Պետական թատրոնի դերասանական խումբը մեկնում է Ալեքպոլ հյուրախաղերի[25]:

Այս բոլոր ներկայացումներին, այլև շատ դեպքում փորձերի, դահլիճում, կուլիսներում, սրահներում առանց վերապահության մշտապես եղել է թատերասեր Չարենցը, ուրեմն և նկատենք. այս ամենը պարտավոր էինք քաղել, որքա-

---

[25] Հիրթականորեն քաղված են՝ Բ. Հարությունյան, Սովետահայ թատրոնի տարեգրություն, հ. 1, 1961, էջ 64–89:

Բայց ոչ քայլ հետամուտ հայոց թատրոնի պատմության բոլոր էջերի, այդ թվում Մոսկվայի հայոց դրամատիկական թատրոնի վերաբերող իրողությունների բացահայտմանը, իր մի այլ աշխատասիրության առաջաբանում Բ. Հարությունյանը գրում է. «Ստուդիայի կյանքում նշանավոր իրադարձություն էին Կ. Ստանիսլավսկու և Ե. Վախթանգովի պարապմունքները:

Ե. Վախթանգովը հրավիրված էր ստուդիա վարելու պարապմունքներ Ստանիսլավսկու սիստեմի մասին և բեմական փորձություններ: Նվգենի Բագրատովիչին այդ պաշտոնում հաստատել էր Հայկական գործերի կոմիսարիատը 1920 թվականի հուլիսի 6-ին: Հիվանդության պատճառով Ե. Վախթանգովը ստուդիայում աշխատեց ընդամենը երկու ամիս, և սակայն այդ ժամանակամիջոցում կարդաց 120 ժամ դասախոսություն: Զրկված ստուդիականների հետ դասերը շարունակելու հնարավորությունից, չէր դադարում հետաքրքրվել ստուդիայի կյանքով և ներկա գտնվել փորձերին: Միաժամանակ ստուդիական դասերին կազմակերպվում էին ներկայացումներ Նվգենի Բագրատովիչի բեմադրություններից»: Հետաքրքիր է ի՞նչ հիվանդություն է ունեցել...

Այնուհետև դառնալով 1920–21 թ. ուսումնական տարվան, երբ արդեն պարապմունքները վարում էր Ստանիսլավսկին,– Հարությունյանը արձանագրում է, թե Ստանիսլավսկին մտադրություն է ունեցել Հայկական, Հրեական, Վախթանգովի և Չեխովյան ստուդիաների սաների համատեղ ուժերով բեմադրել **Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը»**: «... Այդ ներկայացման մեջ,— շարունակում է Հարությունյանը,— արևելյան իշխանների դերակատարները պետք է լինեին Հայկական ստուդիայի սաները, հրեաներինը – Հրեական ստուդիայի, իսկ մնացած դերակատարները լինելու էին Վախթանգովի և Չեխովի ստուդիայի սաները»:

Տե՛ս Сурен Хачатурян, Статьи, воспоминания, письма, документы, 1963, с. 13–14.

Հիշարժան է նաև, որ հետագայում, երբ Չարենցը գլխավորում էր Պետհրատի գեղարվեստական բաժինը, իր նախաձեռնությամբ ստեղծված **«Պետհրատի էժանագին գրադարան»** մատենաշարով հրատարակվել են Շեքսպիրի գործերից հերթականորեն. **«Վենետիկի վաճառականը»** (1938), **«Մակբեթ»** (1934), **«Օթելլո»** (1935): «Վենետիկի վաճառականին» կցված սույն «Պետհրատի կողմից» տողերով. «Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը» և մի քանի այլ երկերը լայն մասսաների համար հրատարակության հանձնելով, մենք հիմնականում արտատպում ենք Խան-Մասեհյանի թարգմանությունները, որոնք, սակայն, ենթարկված են լեզվական որոշ խմբագրության: Խան-Մասեհյանի թարգմանության լեզվական խմբագրումը կատարվել է հիմնականում նրա կողմից գործածված բազմաթիվ արխաիզմները վերացնելու և ընդհանուր առումով նրա լեզուն ավելի ժամանակակից և հասկանալի դարձնելու ուղղությամբ: «Վենետիկի վաճառականի» թարգմանության լեզվական խմբագրությունը կատարել է Վ. Նորենցը»:

Հավանորեն Չարենցի գրչով շարադրված, եթե ոչ՝ ապա անպայման վրայով անցած տողեր: Անշուշտ, (ինչպես ասում են) իր մատը հիմնավորապես խառն է և Սիմոն Հակոբյանին պատկանող «Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը» առաջաբանին՝ հիշարժան այսպիսի վերջնամասով. «Կասկած չկա, որ այս տողերի մեջ Շեքսպիրը ոչ միայն դրել է օբյեկտիվ իրականությունը, այլև վերաբերմունք է ցույց տվել դեպի այդ իրականությունը՝ կանգնելով անարգված և հալածված հրեայի կողքին և պերճախոս կերպով պաշտպանելով նրա մարդկային իրավունքները Անգլիայի հետադիմական ուժերի հանդեպ...

նով կարևոր են իր կյանքի ինչպես փաստացի, այնպես էլ **հոգևոր տարեգրության համար**: Հասկանալի է, թատերական միջավայրից ու մթնոլորտից հոգևոր կուտակումների առումով, որքանով անվարան կարելի է արձանագրել. ներկայացումները դիտելուց հետո ծավալվել են ամենօրյա անվերջանալի զրույցներ, վեճեր, կարծիքների փոխանակումներ՝ անխտիր բոլոր բեմադրությունների ու կատարումների շուրջը: Ասել է՝ քանիերորդ անգամ Շեքսպիրի և նրա խորաթափանց այնպիսի մեկնաբան–մարմնավորողների հետ կամ մասնակցությամբ, որպիսիք էին Վ. Փափազյանն ու Մ. Մանվելյանը: Կամ Շանթի շուրջը՝ «Հին աստվածներից» անցումով «Կայսրին»՝ ինչպես և մյուսներին՝ բեմադրողներով ու կատարումներով: Բեմական–ռեժիսորական–նկարչական նրբություններով հանդերձ. իսկ դերակատարների հասցեին, կարելի է կարծել, խոսք ու զրույցը մեծապես եղել է հիացական, բնականաբար, երբ խոսքը վերաբերել է դրավիչ տեսարանների, մենախաղ–զուգախաղերի: Ինչպես, ենթադրենք. լի ու լի հագեցած Օթելլո–Դեզդեմոնա զուգախաղերից, անկասկած առանձնակի հետաքրքրությամբ են դիտել ու վերաիմաստավորելով հիացել «Վենետիկի վաճառականի» շեքսպիրյան ամենակուլ համակող շնչով, դերակատարների՝ խոհական–զգածական վարակիչ կատարումով: Ինչպես Մ. Մանվելյան–Շայլոկ և Ա. Ոսկանյան–Պորցիա կիզակետային այս դրամատիկ զուգախաղում.

...Եվ ահա ինչպես է Շայլոկը պատասխանում ազնվականների այդ մեղադրանքին.

Դուք էլ շատերդ դրամով գնած գերիներ ունեք,
Որ ձեր էշերի, ձեր ջորիների և շների պես
Ծառայեցնում եք ստրուկի անարգ գործեր անելու,
Քանի որ նրանց գնել եք փողով:
...կարող եմ ասել, բաց թողեք դրանց...
...Բայց դուք ինձ կասեք՝ «Այս ստրուկները
մեզ են պատկանում»:
Ես էլ ձեզ նույնպես պատասխան կտամ.
Այս մի փունտ միսը ... ինձ է պատկանում...

Ինչ որ բխում է այդ տողերից, այն է, որ եթե Շայլոկը, իրոք որ, ծանր գործ է կատարում... ապա նրա հակառակորդներն ավելի ծանր և անմարդկային գործ են կատարում՝ մարդկանց բազմությունները ստրկի անարգ վիճակում պահելով...

Եվ այս է, որ այնքան արժեքավոր է դարձնում այդ ստեղծագործությունը նաև մեր օրերում»:

Ուրեմն և առաջին հերթին հենց դրանով էր Շեքսպիրի «կատակերգությունը» արդիական հասարակական պահանջ՝ ինչպես 1923–ին, այնպես էլ 1933–ին: Եվ այդպես էր գործում հայոց ընդդիմությունը ստրկության ճիրաններում...

Ըստ այդմ նույն հրատարակությունից էլ ընտրված են քաղված հատվածները . այն է. Շեքսպիր, Վենետիկի վաճառականը, 1933, էջ 11–12: Քաղվածքների էջերը նշված են բնագրում: Եվ ամեն դեպքում անխառն հիացմունք շեքսպիրյան հաստատման–հերքման հանճարեղ արվեստով, որ եղավ սեփական հոգու և ստեղծագործության անխառն բաղադրիչը ողջ կյանքում... (Այդ մասին եւս իր տեղում):

«**Պորցիա.** — *Ուրեմն հրեան պետք է գութ ցույց տա:*

Շայլոկ. — *Ինչի՞ցստիպված ես պետք է գթամ, այդ ինձ ասացեք»,— որին և հաջորդում է Շայլոկին համոզելու կոչված Պորցիա–Ոսկանյան ըստ ամենայնի ազդեցիկ խոսքը.*

Գութն իր բնույթով հարկադիր բան չէ.
Այլ նա երկնքից կաթում է ներքև
Քաղցր անձրևի պես. և կրկնապատիկ օրհնություն է նա.
Օրհնություն է նա թե՛ ստացողին և թե՛ տվողին.
Հզորագույնն է հզորների մեջ.
Գութը դահակալ արքայի համար
Թագից ավելի վայելուչ զարդ է:
Նրա գավազանն արտահայտիչն է երկրային ուժի,
Խորհրդանիշն է վեհափառության, ահավորության.
Նա մարմնացնում է թագավորական ահ ու սարսափը.
Բայց գութը բարձր է գավազանական իշխանությունից.
Թագավորների սրտերի մեջն է գթության գահը.
Գութը աստծու մեծ հատկանիշն է.
Եվ աշխարհային հզորությունը այն ժամանակ է
Ավելի նման Երկնային Ուժին,
Երբ գթությունը միշտ գործակցում է արդարության հետ:
Հրեա՛, թեպետ և դու պահանջում ես արդար դատաստան,
Բայց լավ իմացիր, որ եթե արդար դատաստանի լինի,
Չպիտի փրկվի մեզնից ոչ մեկը:
Մենք միշտ աստծուց գութ ենք աղերսում
Եվ մեր աղոթքը պետք է բոլորիս գութ սովորեցնի:
Իմ ասածները նրա՛ համար են,
Որ մեղմացնեմ քո այս խիստ պահանջի արդարությունը...(էջ 130–131):

Ահա և Շայլոկի այդ համառ– չհամոզվող դժկամության և Պորցիայի թավ-շյա–մեղմաբարո ելևէջներով ընթացող զուգախաղին հաջորդող կիզակետային մյուս զուգախաղը՝ այս անգամ արդեն Բասանիո–Փափազյանի համազոր խոսքով ու Պորցիա–Ոսկանյանի համառ դժկամության տարբերակով... արևմտահայերենի փափազյանական այրական ասերգայինի փոխանցումով Պորցիա–Ոսկանյանի հուզախռիվ ասերգին՝ գեղանի դիմախաղով ու կեսանազանքով, դժկամության կանացի տարբերակի զորացող այլացում–փոփոխականներով: Ահա այսպես.

Բասանիո — Անուշիկ Պորցիա,
Եթե գիտենայիր, թե ի՛նչ մարդու եմ տվել մատանին,
Եթե գիտենայիր, թե ո՛ւմ համար եմ տվել մատանին...

Եվ ինչ աստիճան դժկամությամբ եմ տվել մատանին,
Երբ չընդունեցին ուրիշ ոչ մի բան, բացի մատանին,—
Անպատճառ մի քիչ դժգոհությունդ կմեղմացնեիր:
Պորցիա — Եթե գիտենայիր, թե ինչ զորություն ուներ մատանին,—
Եթե՛ հարգեիր նրան, որ տվեց քեզ այդ մատանին,
Եթե պատիվդ հրամայում էր պահել մատանին,—
Չէիր ընծայի դու այն մատանին:
Եթե դու նրան մի քիչ եռանդով չուզենայիր տալ,
Կա արդյոք մի մարդ, այնքան կամապաշտ,
Այն աստիճան զուրկ համեստությունից, որ պահանջեր ա՛յն,
Ինչ որ ամեն մարդ սովոր է պահել իբրև սրբություն:
Թ՛ող Ներիսայից ես էլ սովորեմ, թե ի՛նչ եմ կարծում.
Թ՛ող մահս տեսնեմ, եթե մի կնոջ տված չլինես:
Բասանիո — Երդվում եմ պատվիս և հոգուս վրա,
Կնոջ չեմ տվել, այլ օրինագետ մի գիտնականի,
Որ երեք հազար դուկատ չընդունեց
Եվ այն մատանին խնդրեց ինձանից...
Պորցիա — Թ՛ող այն դոկտորը մոտ չգա տանս,
Քանի որ նա է ստացել սիրած իմ այն մատանին:
Որ երդվել էիր հավիտյան պահել,
Նրա նկատմամբ ուզում եմ լինել
Քո չափ, քեզ նման առատաձեռն,
Եվ նրան ոչինչ չպիտի մերժեմ,
Ոչ իմ մարմինը, ոչ էլ ամուսնուս անկողինն անգամ... *(161–163)*

և այլն: Ուրեմն և փորձենք մտովի տեսանել ու ձայնակցել շեքսպիրյան Հայտնի «Տուր ինձ այն մարդուն, որ իր կրքերին գերի չլինի...» Հայտնի տրամաբանությամբ բոլոր տողերով, տողից տող դրամատիկ այլանցումներով ընթացող տեսարաններին ուղեկցող բանաստեղծի նույնքան փոխակերպվող — վերակերպվող խոհահուզական հիացմունքին... բայց... եթե գեթ մեկ անգամ վայելել ենք Վահրամ Փափազյանի ու Արուս Ոսկանյանի, կամ Հրաչյա Ներսիսյանի ու Արուս Ոսկանյանի խաղը:

Ամեն պարագայում Զարենցը գործ ուներ հրաշագործ արդեն փորձառու և երիտասարդ տաղանդավոր թատերախմբի հետ, և ասելիք–խոսելիք ուներ անխտիր բոլորին ու բոլորի հետ՝ պարզապես արվեստների արարչատուր զգացողությամբ ու ճաշակով: Ասել կուզի, թե ո՞րը փորձեն գուշակել, ո՞րը թողնեն հետոին կամ ընթերցողին: Եվ սակայն թվում է, ոչ մի պայմանով անկարելի է ինչ–ինչ ասելիքներ թողնել հետոին, երբ խոսքը վերաբերվում է Փափազյանին ու Արուս Ոսկանյանին: Առաջինին, որի հետ 1923–ի այդ օրերից կապված էր հայրենասիրական անպարագիծ համախոհությամբ ու մտերմությամբ, որը և շու-

տով նշանավորվեց «Կապկազի» բարձրակարգ բեմադրությամբ ու Ղարայի դերակատարումով (այդ մասին՝ իր տեղում)[26]*:*

* * *

Ինչպես հայտնի է, նույնը Արուսին՝ մինչև կյանքի վերջը երկուստեք նվիրվածությամբ ու հավատարմությամբ: Բայց և փաստացի 1917–ի հանդիսատեսի հիացմունքին հաջորդած 1923–ի նման հանգամանքներում: Տեղյակ Կ. Ստանիսլավսկու «Վենետիկի վաճառականը» բեմադրելու մտադրության մանրամասներին, 1921–1922 մոսկովյան օրերին և հետո բնականաբար բանաստեղծը խորհելով–վիճելով իմաստասիրաբար վերից վար խուզարկել էր «կատակերգությունը»: Հասկանալի է Պորցիայի առանցքային ծանրակշիռ բեռով, ըստ այդմ Արուսի դերակատարմանը հետևել է փորձերի ընթացքում: Բնականաբար, ծանոթությունը խորացել է հիացմունքով, այնքան որ ինքը խնդրել, Արուսն էլ խոստացել է իր լուսանկարը, թերևս, հենց Պորցիայի դերում: Եվ ահա չարաբաստիկ մի օր հիացմունքին հաջորդել է մի այսպիսի տհաճ պատմություն, որ համընկնում է ճիշտ այն օրերին, երբ Երևանում խաղաշրջանը ավարտած՝ թատերախումբը հյուրախաղերի էր մեկնում Գյումրի: Ահա՛ և «նյութական» հաստատումը, որ կազմող–խմբագրողները (ավելի ճիշտ անհագուրդ այպանողները) առանց մոտավոր ծանոթագրության՝ չտապել են տեղադրել Անտիպ և ... հատորում՝ (էջ 454)

---

[26] Առաջին հերթին հարազատ ժողովրդի ճակատագրի ու գոյության լուծը կրելու պատրաստակամությամբ: Եվ հիշարժան է, իրոք, նվիրական պատրաստակամության դրոշմը՝ տարբերակային համապատասխան այլանդումներով, անրաժան է Մ. Սարյանի 1924–ին ստեղծած հերթականորեն՝ Ա. Ոսկանյան, Համիկ, Մ. Մանվելյան, Վ. Փափազյան, ռեժ. Լ. Քալանթար դիմանկարների շարքից:

Այն էլ ստեղծված այնպիսի սուղ պայմաններում, որպիսին շարադրված է **Ա. Թամանյանի (Հայերեն ինքնագրով), Մ. Սարյանի և Վ. Ախիկյանի ստորագրությամբ** *ԳԱԹ Արշակ Զոպանյանի ֆոնդում պահպանվող* **«Փարիզաբնակ հայ արվեստագետներին»** *հասցեագրած «Հայաստանի հայ–արվեստագետ նկարիչների «Ընկերական դիմումում». «Հավատացած ենք, որ մեր փարիզաբնակ ընկերներին շատ լավ հայտնի է մեզանում նկարչական նյութերի բացարձակ չգոյությունը: Ներկա գրությամբս Հայաստանում եղող արվեստագետներ, պարտավորեցնում ենք Ձեզ, հարգելի ընկերնե՛ր, որ միջոցներ ձեռք առնեք, արվեստների այդ հսկա քաղաքում, մի անհետաձգալի օգնություն կազմակերպել (յուղաներկերից, վրձիններից, ջրաներկ և տեմպերայից, թղթերից, մատիտներից և ճարտարապետական անհրաժեշտ գործիքներից): Եվ ուղարկել Հայաստանին օգնության կոմիտեի Փարիզի ներկայացուցչի միջոցով–Երևան:*

5 նոյեմբերի 1923 թ., Երևան»:

Վ. Ախիկյանի ինքնագրով շարադրված այդ «ընկերական դիմումի» կողքին 19 հուլ. 1924 թ., Երևան սարեթվով պահպանվում է Գարեգին Հովսեփյանի ինքնագրով «Փարիզի հայ արվեստագետների կոլեգիային» ուղղած շնորհակալական նամակը՝ խնդրանքով. «Ըստ հնարավորության շտապեցրեք առաքումը»:

Նախագահ ընկերության՝ Ա. Թամանյան
վարչության անդամներ՝ Մ. Սարյան, Վ. Ախիկյան, Գ. Գյուրջյան
Տե՛ս ԳԱԹ, ԱԶԾ, 1–ին բաժին, թիվ 2231–2232:

նույնպիսի մի այլ վավերաթղթի հետ կողք-կողքի. «Գնում ես, էլի, Արուս ջան. բարով գնաս: Չմոռանաս սկանդալիստ Չարենցին: Թող ինձ նկարդ. հիշում ես՝ դու ինձ խոսք էիր տվել:

Է՛, ես էլ էպես:
Սաղ օլ:
Պայծառ մնաս
Համբուրում եմ ձեռքերդ: *Ե. Չարենց 923, 10 ապրիլի. Երևան»:*

Բացենք փակագծերը՝ 1923-ի այդ ամիսներին բանաստեղծի բարոյահոգեկան վիճակին արդեն ծանոթ ընթերցողին, նախ հիշեցնելով, որ տաքարյուն, խմիչքից գերդգայուն Չարենցի կողքին չէր Արփենիկը (մնացել էր շարունակելու կրթությունը): Ըստ այդմ նրա ժամանակը, տրամադրությունը տնօրինում էր ստվերի պես իրեն հետապնդող «Սատանայի արբանյակ» Տ. Հախումյանը: Բավական չէր, որ զբաղեցրել էր իր «Բանաստեղծությունների «1-ին» գիրքը «եղբայրաբար» խմբագրելու գործով, այլև ամենուրեք իր հետ էր, այդ թվում թատրոնում, և դյուրահավատ-դյուրաբորբոք Չարենցին կարող էր թելադրել կամեցածը... Ինչու չէ, հեշտ ու հանգիստ կարող էր և մինչև Զանգվի ջրերի վարարելը բանաստեղծի շուրջը ապահովել հարբեցող-սկանդալիստի համարում. հիմնավոր նպաստ նախապատրաստվող դարանակալ հանցագործության: Այնպես որ, առանց այլևայլության «դույն սկանդալը» հրահրել է Տիմուս *ստորագրությամբ ոչ միայն չնչակտուր գրավոր թատերախոսություններ շարակարգող Հախումյանը[27]:*

Ուրեմն և ավելացնենք, որ՝ ըստ նույն հատորում տեղ գտած «Երևան, 1923, 30 ապրիլի» տարեթվով «մեղայականի», կիսահաշտությունը կայացել է շուտով՝ հյուրախաղերից վերադարձին. այն է. «Սիրելի Արուս, դառնացած սրտով խորին

---

[27] Դարձյալ «գինու ընկերակցությամբ» իրագործված տիմուսային հղացում...

Դառնալով Չարենցի ու Արուս Ոսկանյանի սրտառուչ բարեկամությանը, իր հուշերում Գուրգեն Ջանիբեկյանը գրում է. «... Թատրոնը Չարենցի համար հոգու պահանջք էր: Գալիս էր ու մտնում կուլիսներն ու այնտեղից դիտում ներկայացումը: Տիգրան Հախումյանի հետ էր լինում հաճախ: «Ջրասույզ զանգ» բեմադրությունը շատ էր սիրում:

Մի օր այդ ներկայացման վերջին գործողությանը, երբ Ռաուտենդելայն-Արուսը պատրաստվում էր ջրհոր մտնել Նիկելմանի մոտ, Չարենցը պոկվեց ու մտավ բեմ, որսաց Արուսի ձեռքը և համբուրեց: Ապա կրակոտ մի ճառով դիմեց հանդիսատեսին, փառաբանելով Արուս Ոսկանյանի բեմարվեստը: Հախումյանն էլ հետևեց նրա օրինակին: Դահլիճն ու բեմը միախառնվել էին». Տե՛ս Իմ աշխարհից, գ. 2, 1980, էջ 220:

Ըստ Ռ. Հարությունյանի կազմած «Սովետահայ թատրոնի տարեգրություն. գ. առաջին. 1917-1940 (1961, էջ 44), Գերհարդ Հաուպտմանի «Ջրասույզ զանգը». թարգմ. Պ. Մակինցյան, ռեժ. Լ. Քալանթար, նկ. Գ. Երիցյան, Ռաուտենդելայն՝ Ա. Ոսկանյան, Հայնրիխ՝ Ի. Ալիխանյան-Երևանի պետական թատրոնում բեմադրվել է 1922-ի դեկտեմբերին: Միանգամայն հավանական այդ միջոցին Չարենցը եղել է Մոսկվայում՝ Երևան է հասել 1923-հունվարի կեսերին, երբ այլևս «Հեքիաթ դրաման» չի բեմադրվել: Թերևս թատերագետներին հաջողվի ճշտել.

ներողությունս եմ խնդրում Ձեզանից այն խայտառակության համար, որ հանել եմ Ձեր գլխին՝ գինու ընկերակցությամբ: Կուզեի անձամբ ներողություն խնդրել, բայց… դժվարանում եմ նայել Ձեր աչքերին. կարծում եմ կհասկանաք: Ներողություն, ներող կլինեք–ներեցեք: Ձեզ հարգող Չարենց»:

Իսկ վերջնական հաշտությունը կայանում է ավելի ուշ, երբ հայտնի ննդփորձությունից մազապուրծ՝ հանձնված բժիշկ Իսախանյանի խնամքին, Չարենցը գտնվում էր Թիֆլիսում: Ամեն դեպքում Արուսի սրտառուչ այցելությամբ հիվանդանոց, երբ արդեն բանաստեղծը՝ հետին թվով մտաբերելով ոչ միայն «սկանդալի» խայտառակությունն» ու Հիդրոկայանի փորձությունը, այլև շատ ու շատ օրերի մեկը մեկից հրեշավոր դավեր ու ննդգություններ,— զայրույթից ու ցավից հևասպառ,— ջնում էր վրայից «քերել» այդ այսրակերպ Տիմոսի գոյությունը: Փաստացի հենց այդ օրերից մի օր էլ (անշուշտ, ապաքինվելուց հետո) պայմանավորվել և միասին այցելել են Աղավնի Մեսրոպյանին: Ըստ Մեսրոպյանի հուշերի «Կոմիտաս լսելու» բաղձանքով, որը և (խորապես շնորհակալ լինենք) հանգամանորեն շարադրել է ընդհատակյա հուշարարությամբ՝ հօգուտ բանաստեղծի ու Ոսկանյանի փոխհարաբերության[28], այլև առաջինի նույն ծանր օրերի հոգեվիճակի դարձդարձումներով: Ահա այսպիսիք. «1923–ի աշնան երիտասարդ բանաստեղծ Եղիշե Չարենց, առաջին անգամ ըլլալով, եկավ Թիֆլիս Կամոյովկի (ասել է՝ Կամոյի անվան. Ալ. Չ.) փողոցի թիվ 23 բնակարանըս, իմ մանկության ընկերուհի Արուս Ոսկանյանի հետ:

Ներողություն խնդրելէ վերջ իր անժամանակ այցելության համար, հուզումեն դողդողացող շրթունքներով, Չարենց նախ երանի տվավ ինծի, որ ես իմ սեփական աչքերով տեսած էի Կոմիտաս վարդապետը, և ապա հայտնեց, որ իր այդ օրվան այցելության դրդապատճառը եղել էր Կոմիտասի մասին թարմ տեղեկություններ առնել[29], Կոմիտասի, որու երգերով և բարձր արվեստով տարվել էր դեռ իր պատանեկան օրերին:

Այդ օր, Չարենցի խնդրանքով, երկար ժամանակ պատմեցի Կոմիտասի պոլսական կյանքեն դրվագներ: Չարենցի աչքերուն մեջ կտեսնեինք անոր հոգիին անցնող հուզումի ալիքները, երբ իրեն կպատմեի Կոմիտասի վերջին ողբերգական վիճակի մասին» (ՀԵՉմ, 1, 334):

Ապա հուշագիրն անցնում է «երկար ժամանակ» տևած այդ երեկոյի դրվագ-

---

[28] Անշուշտ. բարեբանության կողքին Երևանից Թիֆլիս էին փոխանցվում և չարախոսություններ. Չարենցի, բայց և դերասանուհու շուրջը: Չէ որ տաղանդավոր էր, ուրեմն և՝ «Беда с ней».— ինչպես կասեր բանաստեղծը…

[29] Այդ օրերին Երևանից Թիֆլիս էր հասել Մարսելից Սպիրիդոն Մելիքյանի ստացած տեղեկությունը. «Կոմիտաս վարդապետը այժմ կգտնվի բոլոր առաջնույն Ville juif–ի բուժարանին մեջ: Զինք կխնամեն գոհ. Վ.: Իր ֆիզիքականը լավ է, մտային վիճակն ալ կայուն. կհարցնե բուժարանի ներքին կանոնները, բայց չուզեր տեսնել իր նախկին ծանոթներին ոչ ոքի և չուզեր լսել անցյալի մասին: Մտադրություն կա փորձ մը ընելու, զինք դրկելով Երուսաղեմ, ուր վանական մթնոլորտը կը հուսացվի, որ ազդեցություն մը ընե իր վրա». Գք, 1923 սեպտ. 24, թ. 10–11, էջ 35:

ներին. Կոմիտասի նվիրած «Ծաղկազարդ Թաշկինակ», «Ո՞վ մեծաքանչ դու լեզու»՝ Արուսի «քաղցր ձայնին» միացած բանաստեղծի «կերկերուն» ձայնակցությամբ, կոմիտասյան յոթ տետրակներ, Զարենցի իրագործվելիք–իրագործված իղձերով»... Ոգևորությամբ ու ներքին հպարտությամբ Զարենց ավելացնում, որ այդ պակասն ալ ինքը կլրացներ մոտավոր ապագային մեր Հայրենիքին մեջ վերահրատարակելով Կոմիտաս վարդապետի ամբողջական երկերը:

Վերոհիշյալ տետրերեն մեկը նվիրված էր «Սիփանա քաջեր»–ուն: Երբ Զարենց, առաջին էջը բացած, ձեռքը ռիթմիկ շարժումներով «Լո–լո»–ն կերգեր, Արուս միջամտեց, դովաբանելով այդ տետրի կարմրորակ–նարնջագույն կողքի յուրահատուկ գեղեցկությունը...

Այդ օր Զարենց ինձմե հատկապես խնդրեց նվագել «Զինար ես կտանալ մի, մեր դռից հեռանալ մի»–ն» (ՀԵԶմ, 1, 335): Այս վերջին հուշարկումների առիթով հարկ է զգացվում լրացումների. անպայման չարենցապատման խորհուրդ է պարունակում իր մեջ այն իրողությունը, որ 1936–ի մայիսի 28–ին Կոմիտասի աճյունը հողին է հանձնվել[30] «Զինար ես»–ի Հայկանուշ Դանիելյանի հուզական մեղմից–մեղմ ելևէջներով՝ մեղմ անձրևի նվագակցությամբ: Ըստ ամենայնի սրբազան խորհուրդ են թաքցնում և «Լո, լո»–ին վերաբերող տողերը ևս: Տողեր, որոնց օգնությամբ ըստ հարկի պետք է որ վերծանվի սույն «Եղիշե Զարենց» մենագրության առաջին գրքում արդեն վերաքաղված Մոսկվայի հայոց եկեղեցու ավագ քահանա Արսեն Սիմոնյանցի «առեղծվածային» հուշարկումը: Բնականաբար, հարկ է վերաքերել այս դեպքում ևս: Մտաբերելով Մոսկվայի Կուլտուրայի տան կոմիտասյան ծրագրերով համերգները, Սիմոնյանցը գրում է. «Այսպիսի համերգներու մեջ հաճախ խումբը կ'երգեր Կոմիտաս վարդապետի «Լո, լո, լո, Սիփան սեգ սարին վրան»: Էջմիածնի ճեմարանի մեջ ես շատ անգամ լսած էի այս երգը, բայց երբեք ան չէր հնչած այնքան գեղեցիկ:

---

[30] Կոմիտասի աճյունը Երևան է հասել 1936–ի մայիսի 27–ին: Փաստացի այդ օրվան էլ վերաբերում է «Կոմիտասի հիշատակին» պոեմի «ամենանախնական տարբերակը», որից՝ ինչպես արձանագրված է Անտիպ և ...համապատասխան ծանոթագրության մեջ՝ «... մեզ հասել է երեք թերթ. վերնագրված՝ «Վերադարձ Կոմիտասի աճյունին՝ բազմամյա դեգերումներից հետո իր հայրենի երկիրը վերադարձած: Երևան, 1936, 27, 5. գարնան անձրև...»: Այն սկսվում է հետևյալ ութնյակով.

Հայրենի երգն ես դու մեր
Վերադարձած հայրենիք.
Դեմքիդ հանճարը մեր վեհ
Եվ տանջանքի հուր կնիք:
Ժողովրդի իմ անմահ
Երգն ես՝ դարե՛ր տարագիր
Եվ գտնում ես հիմա
Ե՛վ ժողովուրդ, և՛ երկիր...Անտիպ և... էջ 612

Ապա շարունակվող մեծածավալ (էջ 612–654) ծանոթություններ ու բնագրային տարբերություններ... Ըստ այդմ էլ հարկ է զգացվում որոշ գաղտնաբացությունների ներկայացված այս հատորի վերջին էջում:

Գիտեի, որ այդ երգը բարձր գեղարվեստական, կամ երաժշտական արժեք ուներ, կը հուզեր, կը բորբոքեր, կը ցնցեր ունկնդիրները: Սակայն այն, ինչ որ լսեցի Մոսկվայի մեջ, վեր էր ամեն ակնկալութենե: Կոմիտաս վրդ. իր կյանքի մեջ չէր մասնակցած որևէ պատերազմի, բայց իր անսահման տաղանդով, իր վառ երևակայությամբ ընդունակ էր երգի միջոցով այնպես նկարագրելու պատերազմի ահավոր ու կատաղի պատկերը, որ ունկնդիրները չէին կարող լսել՝ առանց փշաքաղման, առանց սաստիկ ցնցումի:

Երբ խումբը լռեց, և ունկնդիրները ոտքի ելած, որոտընդոստ կծափահարեին երգիչները, հանկարծ լսվեցավ բարձր աղաղակ մը...

— Ինչպես եք համարձակվում այս հակահեղափոխական, ընդվզեցուցիչ երգը երգել... (Անշուշտ հակադարձ ծառացում... Ալ. Ջ.):

Եղ. Չարենցի ձայնն էր, անսպասելի և միանգամայն անտեղի: Ան ձեռքերով, գլխի ու մարմնի բոլոր անդամներով իր բողոքը կը հայտներ: Ընկերներեն ոմանք շրջապատեցին զայն, հանդստացուցին և դահլիճեն դուրս տարին:

Մինչև այսօր ալ ինձ համար ավելի քան տարօրինակ անբացատրելի մնացած է Չարենցի այդ ելույթը: Արբա՞ծ էր, արդյոք: Չեմ կարծեր, որովհետև դյուրավ հանդստացավ: Ինձ կը թվի, թե երգի ցնցող, բորբոքող բնույթի շնորհիվ ան բորբոքվեցավ և կորսնցուց իր հավասարակշռությունը: Թերևս ուզեց նաև ցուցադրել իր «ուղղափառ» համայանավարությունը...»[31]:

Նախ ասենք, որ հազիվ թե «անբացատրելի» մնացած լինի. որքանով Սիմոնյանցը մերձավոր ազգականն էր Միք. Մազմանյանի, և խսկությունը անկարելի է թե իմացած չլինի նույն օրը: Պարզապես գործ ունենք իր ժամանակի համար բնորոշ նալլին–մեխին խփելով ճշմարտություն մատուցելու շարադրանքի հետ: Էապես համոզված կարելի է ասել, որ Արսեն քահանայի մտաբերած մոսկովյան համերգը հաջորդած պետք է լինի Մնսրոպյանի տան երեկոյին: Այն է թե՝ 1923–ի ուշ աշնանը. և որ Չարենցի «առեղծվածային» պոռթկման պատճառը՝ «Նոյա» դահլիճում լինելն էր, ասել է՝ «ձեռքով ռիթմիկ շարժումներով» «Լո, լո...» երգելու իրավունքից զրկված լինելը՝ ատելի կուսակցության շարքերը վերադառնալու սխալական դիմումով հանդերձ[32]:

Ամենամեծ խորհուրդը, սակայն, բաժին է հասնում Արուսի մասին հուշարկվող ընդհատված խոսքին հետևող Կոմիտասի հանճարի բանաստեղծի դնահատության. «Հայ ժողովրդական երգերը ավելորդ պաճուճանքի կարոտ չեն... նրանց մեղեդիական պարզ ու վճիտ, անկեղծ ու հանդուգն երանգները բխում են հայ գյուղացու հոգու խորքերից... Այդ երգերի միակ մեծ վարպետը եղել է և

[31] Հայրենիք, 1950, թիվ 1, էջ 108:

[32] Այս և նախորդ էջերում ներկայացված Արցախյան հարցին առնչվող խրողությունը առայժմ հիմնավորվում է՝ այսպես ասած, մերձակա մատույցներով: Բուն խրողությունը ճշգրիտ ավյալներով ու հիմնավորումով ժամանակային կարգով առ՝ս հունիսից–օգոստոս և հետագա ամիսներին վերաբերող էջերում. սկսած «Դավ Միջադեպքում»... և բուժում Թիֆլիսում» գլխից:

մնում է հանճարեղ Կոմիտասը: Այդ հանճարի հզոր ու սրտագին ձայնի մեջ հայ գեղջուկ երգը դրսևորեց հոգեկան այնքան նրբերանգներ, որ հայ երաժշտությու-նը հասավ մեր ճարտարապետության, մանրանկարչության, զարդաքանդակների ու էպոսի նախանձելի բարձրության...» (ՀԵՉմ, 1, 336),— հավաստում է տիկին Մեսրոպյանը[33]*:*

Վերապահելու, թե չվերապահելու լինենք չակերտների խնկությունը, ոչինչ չի փոխվի գնահատականից: Խնկությունն այն է, որ 1919-ի մայիսյան նշանավոր համերգներից սկսած՝ զգացական– խոհական իմացական նորանոր չերտավո-րումներով Փարիզի հոգեբուժարանում գտնվող **Կոմիտասը ճանաչվում էր որ-պես ազգային ցավի ու միասնության խորհրդանիշ: Այդ իսկ ժամանակից մինչև վերջին շունչը Չարենցը այդ համազգային մտայնության–գիտակ-ցության կրողն էր, որը և ժառանգաբար փոխանցվում է Պ. Սևակին:**

[33] Համոզված կարելի է ասել, որ ՀԵՉմ առաջին գրքի հրատարակության միջոցին (1960–1961 թթ.) հուշերի շուրջը Աղավնի Մեսրոպյանը հանգամանորեն զրուցել է հատորի խմբագիր Ս. Սողոմոնյանի հետ: Բնականաբար անդրադառնալով իր «մանկության ընկերու-հուց»՝ Արուս Ոսկանյանից մանրամասնորեն տեղյակ, բազմիցս շոշափված 1923-ի Չարենցի խեղդվելու փորձությանը (ինչպես և այլ այլ փորձությունների): Կարելի է կարծել, Բաքվում ու-սանելու օրերից ինչ-որ չափով տեղյակ է եղել և մչեցի–գեղաշենցի, մարքսիզմ–լենինիզմի ծնյալ–օծյալ ընդդիմական–ընդդիմախոս Սողոմոն Սողոմոնյանը, եվրոպական գրականության իմ անզուգական դասախոսը:

ԳՐԱՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

...Չիք խաղաղութիւն ամբարշտաց...
Մովսէս Խորենացի

Ուժերի նույն դասավորությամբ ու բևեռացումով գրապայքարը շարունակվում էր՝ հրապարակ հանելով նոր մասնակիցների:

Ապրիլի 13-ին ԽՀ-ն տեղեկացնում էր, որ Վ. Բրյուսովը թարգմանել է «Ամենապոեմը» և մոտ ապագայում «լույս կտեսնի «Կրասնայա նով»-ի համարներից մեկում»: Նախաձեռնողը Կ. Միքայելյանն էր, որին հասցեագրած նամակից (1923, մարտի 2) հետևում է, թե Չարենցը որքան էր շահագրգռված պոեմի թարգմանությամբ. «Ինձ շատ ուրախացրեց, որ դու թարգմանել ես տվել իմ «Ամենապոեմը». խորին շնորհակալություն»: Նույնը կրկնում է 1923, մարտի 10 տարեթվով նամակում. «Ինձ շատ ուրախացրեց Բրյուսովի թարգմանությունը: Սաղ օլ: Խնդրում եմ, եթե շուտով լույս չի տեսնելու՝ ձեռագիր կամ ռեմինգտոնով տպած, ուղարկես» (6, 399)[1]: Մեծապես գրական հարցեր շոշափող նույն նամակներում՝ դառնալով հակառակորդներին, գրում է «Հայկունին և K- ինձ շատ քիչ է հետաքրքրում. թքած վրաները, ինչ ուզում են անեն, ինչ ուզում են խոսեն»: Փոխարենը հետաքրքրվում է, թե՝ «... ինչ տպավորություն» է թողել Միքայելյանի վրա «Նորքում» տպագրված «Երկիր Նաիրին» (1-ին և 2-րդ մաս) և Գ. Աբովի «Դանակը բկին» գիրքը. խնդրում է գրել մոսկովյան գրական նորություններից. թե՝ «Ի՞նչ կա ռուս գրականության ասպարեզում». «խնդրում եմ անդյակ պահես ինձ... տեղիդ անցուդարձին» և այլն: Նամակում գտնում ենք և բանաստեղծի այդ օրերի հոգեվիճակի խոսուն տվյալ. «... Ինչ վերաբերվում է ինձ անձնապես՝ ես ոչինչ չեմ անում. տրամադրությունս վատ է. ուզում եմ գամ գնամ Պետրոգրադ, չգիտեմ ոնց կլինի...» — և սրանց դիմաց հպարտ ներշնչանքով արձանագրված այս տողերը՝ «... Երկիրը շինվում է, մարդիկ զբաղված են գերագանցորեն գործնական աշխատանքով» (6, 398):

Երկրորդ նամակից իմանում ենք, որ առաջինից հետո Չարենցը Միքայելյանին նամակ է ուղարկել Տիգրան Մուշեղյանի ձեռքով: Այսպիսիների դեպքում

[1] 1958-ին Մոսկվայում այցելել եմ Կ. Միքայելյանի գեղեցկադեմ կնոջը. ոչինչ չէր պահպանվել Միքայելյանից: Պահպանված են Երևանի չեկայական նկուղներում: Ինչպես մատրերում է Մ. Մազմանյանը՝ «Չարենցը կարդաց թարգմանությունն ու մնաց դժգոհ... «շունչը տկար է» (ՀԵՉժ, 1, 63):

անտարակույս խոսակցությունը եղել է զգալի չափով բաց, ինչ-որ չափով շոշափվել են քաղաքական մտահոգություններ:

Ապրիլին «գրապայքարը» նույն ուժով շարունակվում էր, և Բրյուսովի թարգմանությունը որոշակի աջակցություն էր: Էլ չենք խոսում նույն ամիսների Սուրխության աջակցությունից. նախ մեծապես Չարենցի հայրենասիրական և մաքառման կենսահաստատ ստեղծագործություններից «Գրական գոհարներում» զետեղված ընտիր էջերով լայնորեն մասսայականացնելով բանաստեղծին և ապա՝ բացահայտ մասնակցությամբ գրապայքարին: Գրախոսելով Պք թիվ 4–5-ը, գրականորեն է արտահայտվում նրանում տեղ գտած Չարենցի «Արդի ռուսական պոեզիան» ակնարկի հասցեին, գրախոսելով Վշտունու Մճ թիվ 4-ը, համեմատություններով փաստում էր, որ ամսագրի չափածո բոլոր նյութերը կրում են Չարենցի «կնիքը»[2]:

Իր հերթին Վշտունին էլ՝ առարկելով Սուրխությանին, տասնյակ տարբերակներով առանց փաստարկների նվաստացնում էր Չարենցին[3]: Ինչպես ժողովուրդը կասեր՝ ինչու չէ, մեջքն ամուր էր: Ապրիլի 17–25-ը Մոսկվայում կայացած ՌԿ(բ)Կ 12-րդ համագումարի որոշումներից մեկն էլ հրահանգում էր «նկատի ունենալով, որ վերջին երկու տարվա ընթացքում գեղարվեստական գրականությունը... աճել դարձել է հասարակական խոշոր ուժ, որն իր ազդեցությունը տարածում է ամենից առաջ բանվորա-գյուղացիական երիտասարդության վրա, անհրաժեշտ է, որ կուսակցությունը իր պրակտիկ աշխատանքում հասարակական ներգործության այդ ձևի ղեկավարման հարցը օրվա խնդիր դարձնի»: Այո՛:

Այս որոշումը տառ առ տառ ձայնակցում էր մասնավորապես «Ազգային հարցի մասին» բանաձևին, որի կետերից մեկով էլ հրահանգվում էր «... Հոկտեմբերյան հեղափոխությունը մեկ հարվածով կտրատեց ազգային ճնշման շղթաները, շուռ տվեց ժողովուրդների միջև գոյություն ունեցող հին հարաբերությունները, խարխլեց հին ազգային թշնամությունը, մաքրեց հողը ժողովուրդների համագործակցության համար և ռուսական պրոլետարիատի համար նվաճեց նրա օտարազգի եղբայրների վստահությունը ոչ միայն Ռուսաստանում, այլև Եվրոպայում ու Ասիայում»[4]:

Այդ ոգով էլ, ահա՛, նախապատրաստվում էր Արցախի հանձնումը Ադրբեջանին: Ընդամին, որպես կարևոր նախապայման, իրագործվում են միջոցառումներ նաև «Գրական ճակատում»: Դրանցից մեկն էլ լինում է արդեն հիշատակված Հայկունու հավատակից Իվան Ցիլիպչենկոյի այցը Թիֆլիս:

«Պրավդայի» գրական-գեղարվեստական բաժնի վարիչը, անշուշտ, առանձնակի հանձնարարությամբ, գալիս էր տեղում անմիջականորեն հոտոտելու գրական մթնոլորտը, այլև ըստ կարգի հրահանգավորելու հուլիսի 7 տանող մտայ-

---

[2] ԽՀ, 1923, 13 մայիսի:

[3] Նույնը, 18 մայիսի:

[4] «ՍՄԿԿ-ն բանաձևերում և որոշումներում» 1-ին մաս, 1954, էջ 909. նույնը, էջ 940–941:

նությունների ուղղությունը: Հասկանալի է, հիմնականում անդրկուլիսյան ասուլիսով, մինչդեռ աշկարա մայիսի 16-ին զեկուցում է «Գրական Մոսկվա» նյութով. պարզ է, հավաստելով պրոլետգրականության ընդլայնվող իրավունքները: Կարելի է ենթադրել, որ այդ օրերին Վշտունին ևս եղել է Թիֆլիսում: Միայն հայտնի է, որ մայիսի 14-ին Թիֆլիսի Հայարտանը Սուրխաթյանը կարդացել է դասախոսություն Հակոբ Հակոբյանի մասին: Երևի թե յուրօրինակ հակաքայլ, որով պետք էր որ հավաստվեր հայոց գրական հասարակայնության հավատարմությունը պրոլետգրականությանը:

Ամենից ուշագրավն այն է, որ Մոսկվա վերադարձին Հայկունու և Ֆիլիպչենկոյի հարաբերությունները սերտանում են՝ այնքան որ «Քուրայի» տեղեկատվությամբ Հայկունու «Գրական-գեղարվեստական խմբակի» նիստում Ֆիլիպչենկոն հանդես է գալիս Հայկունու «Վուլկանները ժայթքում են» պոեմին նվիրված դասախոսությամբ: Ինչպես կարելի է համոզվել, ի հեճուկս Չարենցի ու նրա պաշտպանների՝ **Հայկունուն դասելով Վերհարնի և Ուիտմենի շարքը**,— Ֆիլիպչենկոն բարձրագոչ հաստատում է, թե՝ «Գուրգենի շունչը «Վուլկանների» մեջ մարգարեական է, և այդ տեսակետից ակամա հիշեցնում է Յեսուին»[5]: Հիշեցնենք. ըստ «Յեսուի գրքի» Ա գլխի առաջին իսկ տողի «Աստված զորացնում է Յեսուին իր պաշտոնի համար: Ժողովուրդը խոսք է տալիս հնազանդվելու»:

Ուրեմն, տեսնենք, թե «մարգարեական» որպիսի՞ նշան է բռնել և ինչպիսի նշանառու էր կարծում իրեն Հայկունին...

Ինչ վերաբերում է Վշտունուն, ապա համագումարի որոշման համաձայն պրոլետգրականության «Հասարակական ներգործության այդ ձևի ղեկավարման (ասել է՝ կուսակցական. Ալ. Ձ.) հարցը»՝ կարելի է ասել, արդեն Պրոլետգրողնե-

---

[5] «Բուրան» անընդմեջ Մոսկվայի «Մուրճ ու մանգաղ» հրատարակչությամբ հրապարակում էր Հայկունու գրքերը. «Հինգ պոեմ», «Բանաստեղծություններ» հատ. 1, «Գողգոթա», «Արծվի խնջույքը», «Գիշերային թիթեռնիկը», «Туман». ինչպես և 1923-ին հրատարակված «Մի գրական գոհար» «քննական» ակնարկը՝ նվիրված Գ. Հայկունու «Գողգոթային»:

Այնպես որ՝ Հայկունին բոլոր հիմքերը ուներ «մարգարեաբար» մրցակցելու Չարենցի հետ. ինչպես Վշտունին և կարճ ժամանակից Ն. Զարյանը...

Սակայն շուտով «Վերելք» ամսագրի (խմբագիրն էր Ե. Չուբարը) 1924-ի թիվ 1-ում Հ. Նալյանց ստորագրությամբ «Վուլկանները ժայթքում են» (Գ. Հայկունի)» գրախոսականով խստորեն քննադատվում են և՛ պոեմը, և՛ փոքր-ինչ մեղմ՝ Ֆիլիպչենկոն: Ավելորդ չէր լինի քաղել որոշ հատվածներ՝ գաղափար տալու համար «Վուլկանների» գեղարվեստական «արժանիքներից»: «Տիեզերքի և վուլկանների թարգման հանդիսացող Հայկունին իր «խորաթափանց» մտքերը միայն ամենապրիմիտիվ ձևի կոնկրետացման է կարողանում ենթարկել: Իր այլաբանությունների և սիմվոլների համար նա գործ է ածում ընդհանուրի սեփականությունը դարձած սովորական, չարչրված «մրրիկն ու հուրը», «հնոցն ու բոցը», կամ գլխելու ընդունակությունից զուրկ, ինքն իր մեջ ամփոփված անհասալի «աչքն ու բիրը», «շրթունքներն ու ատամները, ականջն ու ոտքը, արյունն ու զարկերակը, կուրծքը, կողերը, մարմինը, սիրտը, ուղեղը, կրունկը, երակները, ճակատը և այլն: Քիչ բան է պակասում, որ անատոմիական քարտեզը լրիվ լիներ: «Ավելի պրոլետարական» դարձնելու համար իր արտադրությունը մերթ ընդ մերթ էլ հեղինակը դիմում է տեխնիկային — «պրոպելլեր», «պրոժեկտոր», «դինամո», «սավառնակն» էլ կա ու կա:

րի առոցիացիայի ձեռքին էր: Բայց այդուհանդերձ, ինչ-որ դժվարությամբ էր հաջողվում իրագործել ստանձնած լիազորությունները: Ասենք, թեկուզ, այս դեպքում. «Ի կատարումն» նշված համագումարի որոշումների, շուտով սկսում են լույս տեսնել **երիտասարդական «Ավանգարդ»** լրագիրն ու պատանեկան **«Պատկոմ» ամսագիրը:** Ամսագրում տեղ էր գտել «Ըստ Եսենինի» Չարենցի հյուսած «Ընկերները»: Որքան էլ սյուժեն քաղաքացիական կռիվներից, հնչեղությամբ այլ էր բանաստեղծությունն ըստ Չարենցի. կոչված էր հայոց հարկերի տակ բորբոքելու ապրիլյան եղեռնի հուշեր ու մորմոք...

30-ական թվականների Չարենցի կազմած դասագրքերից մեր սերնդի բոլոր դպրոցականներս անգիր գիտեինք «Ընկերները»: Ե՛վ մենք, և՛ մեր ծնողները, ասես, չհասկանալով, աներևակայելի հուզմունքով էինք ընդունում գերագրական կարեկցանք-գթասրտությամբ ներծծված չափածո էջը, և այն պետք է որ նորից տեղ գտնի դասագրքերում՝ մարդկայնորեն զարդարելու համար մանուկների հոգին, վարքն ու նկարագիրը.

Նրանք փոքրիկ էին՝ երեխան ու կատուն
Մեկտեղ խաղում էին տախտակների վրա,
Մինչև մութը իջներ, մինչև հայրը գար տուն,
Ու հողագույն հացով կերակրեր նրանց...

Իսկ վերջում՝

...Զարկեցին... Ճչաց բանվոր հայրը,
Հարվածը կրծքին էր, հաստ ու,
Բայց հառաչը խոր ու անձայն այն
Լսեցին երեխան ու կատուն...

Վազեց, վազեց փողոց փոքրիկ երեխան.
Կատուն վազեց հետևից իր ընկերոջ փոքրիկ.

Եվ անհաջող թեզիսներով ու դեկադենտական այսպիսի տվյալներով սարքած այս գրվածքը համարել է պրոլետարական պոեզիայի զարդ: Բաքենի ինտելիգենտական մտածումների ու փիլիսոփայությունների այս անվերջ շարանը անվանել Տիտանի պար: Չէ՛, հանաք է արել Ֆիլիպչենկոն» (էջ 71–72):

Կարելի է պատկերացնել, թե ինչպես է վայելել գրախոսականը Չարենցը, պա՜հ-պա՜հ ասելով, ձեռքով-ոտքով...

Նկատենք նաև, որ երևի թե, գրված պաշտոնի բերումով Ի. Ֆիլիպչենկոն խորհրդահայ քննադատների ուշադրությանն արժանացած առաջին պրոլետգրողներից է. «Իր պոետական ունակությունների թափով Ֆիլիպչենկոն մոնումենտալ և հոյակապ տպավորությունների պոետ է»... կարևորը պոետի երգածը չէ, կարևորը երգի շունչն է, հոգին է, նրա հոգեբանական առանցքն է»,— կարդում ենք Հ. Նար...ստորագրությամբ «Տիեզերական երգ առանց միստիցիզմի» վերնագրով ակնարկում: Գք, 1923, թիվ 2, էջ 19–20:

Նրանց գլխին-կարկուտ, կարմիր գնդակ տեղաց,
Եվ երկուսն էլ ընկան Հայր-բանվորի կողքին:

Ձխաղացին նրանք էլ Հատակի վրա,
Զսպասեցին էլ՝ զուր, որ Հայրիկը գա տուն.
Նրանք փոքրի՛կ-փոքրի՛կ նաՀատակներ եղան –
Երեխան ու կատուն... (3, 258, 259–260):

Այդ բիրտ ժամանակներում բանաստեղծությունը տպագրվել է «Պատկոմի» առաջին՝ **ապրիլ–մայիսյան Համարում**″. *կասկած չի կարող լինել, որ բանաստեղծը Հուշում էր չմոռանալ մեր «փոքրի՛կ–փոքրի՛կ» նաՀատակներին, միաժամանակ պատվաստում էր խիղճ, պատվիրում էր մարդկայնորեն կարեկցել, իր Հոգուն և ուսերին առնել ուրիշի, անգամ կենդանի ամեն արարածի ցավ...*

Իրենց Հերթին «Ընկերների» կողքին պրոլետասոցիացիականներն էլ, իՀարկե, կարող էին դնել էջեր Վշտունու «Հուզանք ու զանգ», «Neo orientalia» և Ալազանի «Հրաբխապոեզիա» գրքույկներից (1923, Ալեքպոլ, Թիֆլիս–Երևան), բայց մինչև երբ: Շա՛տ երկա՛ր...

Ծանրակշիռ հանուն... հանուն Չարենցի

Շա՛տ երկա՛ր. բայց այդուՀանդերձ, ճշմարիտ բանաստեղծության պաշտպանության դիրքերից Հետևողականորեն տեղացող Հարվածների տակ:

Իսկապես ասած, նման Հետևողականությամբ Հարաղատ ժողովրդի մշակույ-

---

″ *Ամսագրի ստեղծմանը նախորդել է «Մայրության և մանկության պաշտպանության» շաբաթի շրջանակում մարտի 21-ին Պետական թատրոնում կազմակերպված «Գրական երաժշտական ճոխ երեկույթը». մասնակիցներ՝ Արուս Ոսկանյան, Աստղիկ, Ազայան Մուշեղ, Բաքալյան Արամ, Գաբրիելյան Ավետիք, Զարյան Թագուհի, Մելիքյան Ռոմանոս, Մնացականյան Աննա, Մանվելյան Միքայել, Նալբանդյան Տիգրան, Չարենց Եղիշե, Սողոմոնյան Դավիթ և ուրիշներ: ԽՀ, 1923, 20-ը մարտի:*

Հավանաբար, այդ նպատակով էլ փոխադրությունը Հյուսել ու կարդացել է երեկույթին. նկատենք, որ այն բավականաչափ տարբեր է Եսենինի 1917-ին գրած բանաստեղծությունից:

Ըստ ամենայնի կարևոր է Հիշատակել և Հետևյալ եղելությունը. **«Մայրության և մանկության պաշտպանության»** *շաբաթի շրջանակում 1923-ի մարտի 21-ի կազմակերպված սույն երեկույթին մասնակցել է և* **տիկին Թագուհի Զարյանը**. *Հասկանալի է ամուսնու՝ Կոստան Զարյանի Հետ միասին: Ըստ այդմ. նվաստս խնդրելով պարտավորեցնում է լավ պատկերացնել այդ երեկույթի սրբությունը՝ անշուշտ, Հիշելու և պատկերացնելու միտումով նույն «եղելությամբ» ծայր առնող Կոստան Զարյանի ստորագրությունը կրող «Բանկօօպը և մամութի ոսկորները» գրպարտագրի դաՀճային պղծության անչափելի չափերը: Չմոռանալով, որ երեկույթից ընդամենը երկու օր Հետո էր վախճանվել է Հովհ. Թումանյանը, և Հեղինակային անձնակազմը Հարկ չի Համարել պաՀ իսկ սանձել դաՀճությունը...*

Այս ամենի մասին տե՛ս սույն գրքի Համապատասխան էջերում...

թին այդպես ծառայում են միայն գեղարվեստական հավակնություն գրացողությամբ օժտված նկիրյալներ: Այս տեսակետից 1923-ի գրական սրված պայքարի մթնոլորտում և առհասարակ, չարենցագիտության համար առանձնակի ծանրակշիռ արժեք ունեն **Ց. Խանզադյանի և Մ. Աբեղյանի գնահատությունն ու պաշտպանությունը**:

Ժամանակագրական կարգով առաջինը Պր թիվ 2-ում (փետրվարի 7) Գրասեր ստորագրությամբ տպագրված «Նորք» հանդեսի առաջին համարի գրական բաժինը» գրախոսականում «Քամին» բանաստեղծության և «Երկիր Նաիրի» վեպի առաջին մասի նյութով Չարենցի բանաստեղծական տարերքի բնույթի ու սեռակետի հիրավի խորաթափանց կռահումն է՝ գրաստացնող ու սրտացավ վերապահումներով հանդերձ. «Եղիշե Չարենցի «Քամին», գրում է Գրասերը, աչնան նկարագրություն է ազդու,— բանաստեղծի համար խիստ բնորոշ: Չարենցը ոճի, ոտանավորի այնպիսի դինամիկա ունի, որի նմանը չի տվել մեր ամբողջ պոեզիան՝ Գր. Նարեկացուց մինչև Վահան Տերյանը: Չարենցի հաջողված հատվածները կարդալիս զգում ես, որ մկաններդ լարվում են, զարկերակդ սկսում է արագացնել իր բաբախյունները: Ուիտմենի և Վերհարնի էջերն ես հիշում այսպիսի տողեր կարդալիս

Ու կարող է հիմա ամե՛ն արգելք քանդել
Քամին,
Աչնան քամին...
Հռնդում է,
Փնչում,
Ահեղացունց ցնցում ցուցանակները չոր.
Զրնգում են ահից պատուհանները հնչուն—
Ու թռչում է քամին,— երկաթաթև թռչուն,—
Զարհուրելի, գալիր փողոցների միջով...

Հեղափոխական շրջանի թափն է ապրում Չարենցի պոեզիայի մեջ: Դժբախտաբար, բանաստեղծը չունի իր կոչման նշանակության լուրջ գիտակցությունը՝ նա հաճախ թեթևամիտ խաղ է դարձնում պոեզիան, որ **խոհուն Բարատինսկու կարծիքով լուրջ գործ է:** Չարենցն անփույթ է իր բանաստեղծությունների ձևի նկատմամբ՝ քերականական օրենքներն ու ներդաշնակության բարձր պահանջը հաճախ ոտնահարվում են, և բանաստեղծի թեթևամիտ խաղը մարդարեին դարձնում է եղկելի ծաղրածու:

«Քամին» ոտանավորից հետաքրքրական է Չարենցի առաջին փորձը արձակի բնագավառում: «Երկիր Նաիրի» է վեպի վերնագիրը (կամ ինչպես հեղինակն է ճշտում՝ պոեմանման վեպը): Առայժմ առաջին մասն է տպագրված, և, դժվար է վերջնական գաղափար կազմել գրվածքի մասին. այնուամենայնիվ մի քանի նկատողություն անելու հնարավորություն ունենք (մանավանդ, որ

առաջին մասը բավականին՝ ընդարձակ ծավալ ունի – 49 երես): Նաիրյան երկրի գավառական քաղաքն է նկարագրում Չարենցը և ընտրել է նկարագրության մի ձև, որ **միանգամայն նոր խոսք է մեր վիպագրության մեջ**: Ռուսական որոշ դպրոցի հեղինակների ազդեցությունն ակներև է (օրինակ, Անդրեյ Բելու) և սակայն, հեղինակը ցուցահանում է հաճելի ինքնատիպ հումոր և այնպիսի հարազատություն հայ կյանքի ներկերին, որոնք կենդանի շունչ են տալիս այս ձգձգված վեպին և դարձնում այն գրական երևույթ: Բովանդակ վեպի լույս տեսնելուց հետո միայն կարելի է մանրամասն վերլուծություն տալ»:

Տողատակում էլ այս տողերն են. «Տեղը չէ խոսելու Չարենցի վերջին ապաշնորհ «պոեմների» մասին («Պոեզոզուռնա» և «Ռոմանս Անսեր»), որոնք անօրինակ գռեհկություններ են պարունակում իրենց մեջ և ցույց են տալիս, թե որքան կարող է ստորանալ մի տաղանդավոր բանաստեղծ, երբ **անղեկ է ու անառագաստ»**[7]:

Ուիտմենի ու Վերհարնի էջեր հիշեցնող աննախադեպ դինամիզմ, մարդարե վիպագրական միանգամայն նոր խոսք. սա Լազարյան ճեմարանի նստարանից բանաստեղծական արվեստի բարձր ըմբռնումներով սնված գրաքննադատի գնահատական էր՝ ֆուտուրիստական արտահայտչականության հանդեպ խորհրդապաշտների միջավայրում ընդունված վերապահությամբ:

Վերապահություն, որը շուտով առանց վեճի, առանց աղմուկի չեզոքացնում է **ոչ այլ ոք, քան Մանուկ Աբեղյանը**: Բնականաբար. որքանով ժողովրդական լայն զանգվածների համար կոչված ֆուտուրիստական պոեզիան արտահայտչական ձևերի, միջոցների համամասնություններով անբաժան է բուն ժողովրդական բանաստեղծական խոսքից ու ավանդներից: Չարենցի պարագայում խարսխված է հայրեններից, գուսանական երգերի, առած–ասացվածքների, հանելուկների, ժողովրդական հանդեսների ու թամաշաների պայմանական և ոչ պայմանական բոլոր միջոցների, բառուբանի, հարց ու պատասխանի, ասմունքի–երգի, պարի ու խաղի... ժողովրդական՝ մեծապես իր ժամանակի քաղաքային, բայց և գավառական ու գյուղական բանահյուսական հողին, ներառյալ հեղափոխության արդյունքում ալիք–ալիք եկող–տարածվող համերկրային լոզունգների, պլակատների, կոչերի բառ ու բանը, դարձվածաբանական համակարգը:

Էապես Աբեղյանի տաղաչափական հետազոտությամբ օրինականացվում էր Չարենցի բազմակողմանի տաղանդի սույն «ֆուտուրիստական» դրսևորումը ևս, որ զգաստ կողմնորոշումով պայմանավորված էր ժողովրդական խաղերի հաղորդակցության կենսական հրատապ պահանջարկով:

ԵԺ Երևան հասնելուց հետո չորս ամիս չանցած սեղանի վրա է դրվում Մ. Աբեղյանի «Տաղաչափության զարգացումը Չարենցի և ուրիշների բանաստեղծու-

[7] Գր., 1923, թիվ 2, էջ 23:

թյունների մեջ» հետազոտությունը, որ տպագրվում է Նորքի» 1923-ի երրորդ գրքում: Տպավորությունն այն է, որ Աբեղյանը պարզապես, ընդհատել է աշխատանքը «Հայոց լեզվի տաղաչափություն» (Մետրիկա) ստվար աշխատության վրա՝ հրատապ համարելով պատասխանը Սուրխաթյանի դեմ Ա. Վշտունու գրած «Մի դրախտականի առթիվ» վերը հիշատակված պատասխանին, ուստի և Վշտունուց քաղված տողերով էլ սկսում է հետազոտությունը. «Չարենցի տաղաչափական ձևը մասամբ Սայաթ-Նովայական է, իսկ ընդհանուր առմամբ տերյանական»,— գրում է Ազատ Վշտունին: Նույն կարծիքը լսել եմ և ուրիշներից: Ճի՞շտ է արդյոք այս բնորոշումը: Նախ ո՞րն է «Տերյանի չափը»:

Ուստի այս հարցերին Աբեղյանի պատասխանը նախ Տերյանի, ապա և Սայաթ-Նովայի դեպքում մեկ է. այն, որ՝ նախ «նրա (Տերյանի՝ Ալ. Ջ.) գործածած բոլոր չափերը» նրանից առաջ «գործածված գտնում ենք մեր բանաստեղծության մեջ» և որ առհասարակ՝ «... հեշտ չէ մի նոր տաղաչափական ձև մտցնել մի բանաստեղծության մեջ, որ երկար դարերի կյանք ունի և շատ ազգերի գրականության ազդեցությանը ենթակա է եղել»:

Ինչ վերաբերում է Չարենցին, ապա նա՝ «... լինելով Տերյանից կրտսեր՝ անշուշտ կարող է սրանից սովորած լինել անապեստյան չափի գործածությունը (այդ կարելի է ճշտությամբ իմանալ միայն բանաստեղծից իրենից), բայց այդ երկուսի անապեստյան ոտանավորները միմյանց բաղդատելով՝ գտնում ենք մեծ տարբերություններ»[5]: Ըստ այդմ մանրազնին քննությամբ ցուցադրվում են տարբերություններ ինչպես անապեստյան չափի, անապեստյան ոտանավորի մեջ յամբի խառնուրդի, քողաղոտի, յամբական ոտնավորի, Ալեքսանդրյան չափի, «Հայրենի կարգի», համաշեշտ ոտանավորի առումներով՝ համեմատության-բաղդատության համար նմուշներ քաղելով հայոց դարավոր բանաստեղծության էջերից. Նարեկացուց և Շնորհալուց մինչև Տերյան ու Չարենց:

Բնականաբար մեջընդմեջ անդրադառնում է Վշտունու քննադատական դիտողություններին, ինչպիսին է, օրինակ, ուշադրավ այս մեկը: 1923-ի բանավեճերում, ինչպես տեսանք, Վշտունու խմբակցության նշանակետերից մեկն էլ «Ամենապոեմն» էր, նույնը շարունակվում էր և նշված պատասխանում: Եվ ահա, հետազոտողը հերքում է Վշտունուն՝ սկզբունքային երկու հիմնավորումով: Դրանցից առաջինով ասվում էր. «Վշտունին սխալ է դնում նույնպես և Չարենցից բերած երկու տողերից առաջինի երկրորդ շեշտը, որ խոսքի նշանակության համեմատ պիտի լինի ես բառի վրա, այսպես՝

Բայց ինչո՞ւ (միայն ե՛ս) երգեմ,
Միայն ե՛ս (և ո՛չ) մի ուրիշ...»

[5] Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ե, 1971, էջ 412, 413:

Մշտամնա ելակետ, ըստ որի տաղաչափական ամեն հարց պարտադիր որոշվում է «խոսքի նշանակության համեմատ»[9]. ասել է թե՝ ելնելով բանաստեղծական խոսքի շարահյուսական–շարակարգային–առոգանական, տակտի ու կշռույթային տվյալների հանրագումարից: Համամասնություններ, որպիսիք հետազոտության մեջ քննվում–բացահայտվում–մատուցվում են խորքում ու թիկունքում ունենալով պատճառակցական–արնակցական տոհմիկ այն անքակտելի աղերսներն ու առնչակցությունները, որոնք՝ նորոգվելով ժամանակների շղթայով, գործում են աղեղելով բանաստեղծական խոսքը և բառը իմաստային ու հնչական արտաքին ու ներքին բոլոր ելևէջներով, առաջին և վերջին հաշվով՝ լեզուն և երգն ու երաժշտությունը: Խորքային խորհուրդներ, ազգային յուրօրինակություններ ու հատկանիշներ, որոնց՝ քիչ է ասել, **հասու էին Կոմիտասն ու Աբեղյանը՝ տարիների համատեղ աշխատանքով:**

Բազմիմաստ է և երկրորդ դիտողությունը. «Եվ վերջապես,— գրում է Աբեղյանը,— բոլորովին անհասկանալի է, թե ինչպե՞ս կարելի է «Ամենապոեմի» նման մի քերթվածի միջից այդպես պատահաբար հանել երկու տող և համեմատել մի ուրիշ բանաստեղծի մի ուրիշ գրվածքից պատահաբար հանված ուրիշ երկու տողի հետ, այն էլ երկուսի մեջ էլ շեշտերը սխալ դնելով: Ի՞նչ նմանություն կա, օրինակ, Տերյանի հիշված ոտանավորի և «Ամենապոեմի» թեկուզ սկզբի մասի հետ»:

Ապա քաղում է մի հատված պոեմից, ակնհայտորեն փորձելով հայրենասիրական ճանապարհի բերել մոլորվածին.

Ես – Հայաստանցի՛ պոետ –
(Երկի՛ր, ուր մշո՛ւշ է ու մա՛հ) –
Բոլորի՛, բոլորի՛ համա՛ր,
Երգո՛ւմ եմ նորի՛ց հիմա՛,
Բայց ինչո՞ւ միայն ե՛ս երգե՛մ,
Միայն ե՛ս – և ո՛չ մի ուրիշ
Կարապետ, Մարտիրոս, Մարկոս –
Նրա՛նք որ հիվա՛նդ, հուսահա՛տ՝
Թափառո՛ւմ են փողոցի՛ց փողո՛ց...
Ինչո՞ւ չպիտի՛ երգե՛ն
Էն բոլոր խմբե՛րը հոգնա՛ծ,
Որ ծըծո՛ւմ են քրտինքը խոնավ
Օրերի, մըշուշի՛, մուժի՛ –
Որ փախե՛լ են, եկե՛լ են մի օ՛ր –
Բիթլիսի՛ց, Բաղդադի՛ց, Մուշի՛ց...»[10]:

[9] Նույնը, էջ 438:
[10] Նույնը, էջ 438–439:

Դասական մտավորականի հասկանալի փորձ, քանի դեռ չէին էլ պատկերացնում, թե որքան կռապաշտորեն մոլեռանդ ու ոխակալ են նորաթուխ «ջերմեռանդները»:

Անհամեմատ կարճատև է «Սայաթ-Նովայական տաղաչափության» վերաբերող հատվածը, որ ամփոփվում է այս եզրակացությամբ. «... Չարենցի «Տաղարանը» հորինված է մեր սովորական տաղաչափական ձևերով և ոչ թե աշուղական «վանկական» կոչված տաղաչափությամբ, որին հետևում է սովորաբար Սայաթ-Նովան: Այլ խնդիր է, որ Չարենցն էլ, ինչպես մեր գրեթե բոլոր բանաստեղծները, մեկ-մեկ կանոնավոր չի պահում ռիթմական շեշտերի դրությունը: Պարզ է, ուրեմն, որ սխալ է ասել, թե Չարենցի տաղաչափական ձևը մասամբ Սայաթ-Նովայական է, ինչպես գրում է Վշտունին, ինչպես և լսել եմ ուրիշներից: Ոչինչ Սայաթ-Նովայական չունի Չարենցը, ինչ որ տաղաչափական ձևին, ռիթմին է վերաբերում: Գազելը մի կողմ թողած՝ մի քանի երգերի մեջ միայն հանգերի դասավորությունը աշուղական է, բայց դա էական չէ, **այլ էականը տակտն ու ռիթմն է»**[11] *(ընդգծ.՝ Ա. Զ.):*

Այսպես ձևի, իրապես նաև բովանդակության միասնական առումով՝ փաստորեն Չարենցի ողջ վաստակը՝ «Ռոմանսով» ու «Պոեզոզուռնայով» հանդերձ, բարձրացնելով դասական պատվանդանի, մեծ հայագետը երկու էջով առանձին դառնում է նաև Վշտունու չափածոյին. «Ճոխ հանգերի» նրա նախասիրությանը՝ դտնելով. «... Այսպիսի հանգերը թեպետև միշտ ուժեղ են և խիստ դաշնակավոր, բայց ետև-ետև կրկնվելով իբրև անդրադարձություն՝ վերջիվերջո միակերպ են հնչում և նույնիսկ ձանձրույթ պատճառում: Այս աղդեցությունն են թողնում ահա՛ Վշտունու կազմած հանգերը»[12]*:*

Ինչպես Չարենցի դեպքում, այստեղ ևս մեջ են բերվում եզրակացությունը փաստող հատվածներ. ինչպես այս.

Սարի ուսին՝
Ջինջ լուսին
Շողշողացող մեղմ, անուշակ.
Ու վար ծաթեց
Արծաթեց
Լիճը խաղաղ, մանուշակ:
Լիճը Վանա՝
Նիրվանա՝
Կորույս ձյուն կարապին.
Մակույկ մի չիք
Ու մըշիկ
Քուն է մըտեր քարափին...

[11] Նույնը, էջ 441–442:
[12] Նույնը, էջ 442, 443:

Եվ սրան ևս հաջորդում է Աբեղյանի բացատրություն-եզրակացությունը. «Այսպես և մյուս երեք տները: Արձագանքից չի ազատվում մարդ և նրանով, որ առաջ ուսին է դրած և հետո լուսին: Հանգերի դյուտի ամենահեշտ միջոցն է այս, որ ամեն մարդ էլ խսկույն կարող է անել՝ խաղալիք-աղալիք-ալիք-լիք, հարկավոր դեպքում նաև իք»: Համանման «դյուտեր» են արձանագրվում նաև Վշտունու հանգախաղաքանությունից, տողավերջում հանգի փոխարեն կազմված սոնանս կամ առձայնույթ կոչվածով»[13]: Նման ջախջախիչ քննադատությունից հետո, անշուշտ, հասկացողը պետք է որ ընդմիշտ մնաս բարով ասած լիներ «պոեզիային». բայց, դե՜ ինչպես զրկեր մեզ իր պրոլետպոեզիայից:

Եվ սակայն, ամենահիշարժանը, հայոց բազմադարյան բանաստեղծության տաղաչափական-կշռույթային-տակտային արվեստի բազմակողմանի գիտակ (ի դեպ՝ նաև ազգային պահպանողական) Մ. Աբեղյանի հետազոտության եզրափակիչ ակորդն է: Արձանագրելով, որ Նարեկացու «առձայնույթով հորինված մի տաղ»-ից հետո տաղաչափական այդ ձևը «զորեղացնելով» հենց «Պոեզոզուռնայում» կարճ տողերի մեջ գործածում է Չարենցը,— Աբեղյանը ավելացնում է. «Չարենցը իր առձայնույթներով տանում է մեզ դեպի միջնադարը: Բերեմ մի քանի տողեր.

Դեռ երգում է այստեղ զուռնան,
Դեռ դհոլը սիրտ է հուզում:
Թ՚ող հոգիդ դառնորեն ունա—
Միևնույն է՝ կմեռնի անլեզու:
O զուռնա՛, զուռնա՛, զուռնա...
Տխրություն, թախիծ դեղին:
Օրերը ցնորք կըդառնան,
Աշխարհը – անդուռ փակուղի: Եվ այլն:

Այս էլ, հարկավ, մի նորություն է – մե՛ր բանաստեղծության մեջ»[14]:

Բնագրագետի անվրեպ զգացողությամբ մեծ հայագետ – մեծ հայրենասերը գտնում-շեշտում-մատուցում է «էսէռական-դաշնակցական-մենշևիկյան» հորջորջվող «Պոեզոզուռնայի» էությունը. միջնադար հիշեցնող անդուռ փակուղու առջև կանգնած բանաստեղծի անհյանելի ողբերգությունը՝ բոլոր չափումներով ու ձևումներով համազոր հարազատ հայրենիքի ու ժողովրդի ճակատագրին, ակնկալվող սոցիալական-հասարակական առաջընթացով հանդերձ:

Ուրեմն և մեծ հայագետի հետևությամբ կարող ենք ասել. և այսպիսի՛ն է, հարկավ, բանաստեղծ Չարենցի ողջ ժառանգության մեկնության ու գնահատության բանալին:

---

[13] Նույնը, էջ 443:
[14] Նույնը, էջ 444–445:

«ԿՈՄԱԼՄԱՆԱԽԸ» ԸՍՏ ՀԱՐԿԻ
ՏՈՒՐՔ ԱՐՑԱԽԻՆ ՈՒ ՆԵՐԳԱՂԹԻՆ

... Բանալին է բանաստեղծի ողջ ժառանգության, ասել է թե՝ նաև «տուրքերի» կամ «սայթաքումների» բացատրության,— որպիսին է նաև «Կոմալմանախը»: Եվ քանի որ գիրքը հետաքրքիր է նաև ձևավորումով ու նկարազարդումներով, փորձենք ներկայացնել միասին:

Գրքի շապիկի վերին ճակատին՝ **Կոմալմանախ**, *տակը՝* **Չարենցի**: *Այնուհետև ժամանակի ճաշակով գծագրված՝ շփոթված յուրայիններով շրջապատված «Հաստափոր բուրժույ». դեմը ուժեղ բռունցք՝ մուրճ ու մանգաղով: Դրա տակ էլ խոշոր տառերով՝ «Նկարները ըստ Գրոսի՝ Կարո Հալաբյանի, Մոսկվա, 1924»: Ներսի շապիկը նույնն է. «բուրժույի» փոխարեն ուրվագծված է միմյանց հենված–սեղմված քաղաքային կիսաթեք շենքեր՝ «Պետական»—, «Պետական», գրությամբ, շենքերի վերից՝ ճառագող արեգակ: Ասենք, որ գրքի թե՛ բանաստեղծությունները (թվով 5), և թե՛ «Ես և Իլյիչը» ագիտ–պոեմն ու «Տիրապետողների դեմքը» սատիր–ագիտը ստեղծված են գրական պայքարի առավել բորբոքված օրերի՝ 1923–ի* **մայիս–հունիսին**[1]: *Ուրեմն և անխուսափելիորեն թաքցնում են փոխհատուցման–փոխվրեժի լիցքեր:*

Փոխհատուցում, որը մի որոշ չափով, ինչպես միանգամայն ճշգրիտ տարեթվով 1923–ի հունիսին Երևանում գրված «Ես և Իլյիչը» ագիտ–պոեմում դրսևոր-

---

[1] «Կապկազը» ու «Կոմալմանախը» քննել–մեկնաբանելիս գրականը պետք է որ զուգակցվի–լրացվի արվեստաբանական մոտեցումներով՝ նկարչական ու ճարտարապետական: Այնքան որ իմաստալի ու խոսուն են Կ. Հալաբյանի ձևավորումներն ու «Նկարները ըստ Գրոսի». ինչպես «Տիրապետողների դեմքից» միստր ու միսիս դոլլարները, Լենինը բռնած Սոցինտերի օձերից. ինչպես ժամանակի սոցիալ–դեմոկրատների գրոտեսկային դեմքերն ու դիմանկարները. գրքի ճակատին էլ «Մուրճ ու մանգաղի» դրոշմանիշով՝ «սովետի սուրը հղկացած բուրժույի կրծքին»...

(«Դեմքերի» թվաքանակը հանգամանորեն տե՛ս բանաստեղծի ԵԺ 3–րդ հատորի Ծանոթագրություններ բաժնում):

Մայակովսկու նման «պատկերապահների» հարազատ ավանգարդ–կուբիստական համատեղ որոնումներ ու արձագանքներ՝ պրոլետարականների դեմ ուղղված «ի հեճուկս» որոշակի դոզայով, որի դրսևորումներից մեկն էլ գրքի «բովանդակությանը» հաջորդող էջում զետեղված այս տողերն են՝ «Անոնս Սպասեցեք Չարենցի հետևյալ գրքերին 1. Անտիֆաուստ 2.Չարենցը պինկերտոն»,— կողքին էլ «Գլավլիտ–*20853»:*

Բայց ո՛չ մեկը իրագործեց, ո՛չ մյուսը... ավելացավ միայն «Գլավլիտի» թվաքանակը:

Ասել է՝ ԵԺ 3–րդ հատորի ծանոթագրություններում նշված Թիֆլիսը (էջ 354) վրիպում է:

վել է ուղղակի **ԽԼՅԻՉԵՐԴՈՒԹՅԱՄԲ**՝ այսպես ասած Հռոմի պապերից էլ (ասել է՝ պրոլետպոետներից էլ) ավելի կաթոլիկ երևալու երևակայական ֆանտաստիկ սյուժեով մատուցվող բանաստեղծի և Իլյիչի ու նրա դերի փոխհարաբերությամբ: Անպայման մի որոշ չափով, որքանով, իմ խորին համոզմունքով, հոգեբանական բոլոր ազդակների ու գործոնների շարքում վճռորոշը եղել է մոտակայում սպասվող Ղարաբաղյան հարցի քննությունը, որով և պայմանավորված է ինչպես առհասարակ «Կոմալմանախի» մտահղացումը, այնպես էլ խորհրդայնամիտ տրամադրվածությունը, որը ամեն հանդերձներով հանդերձ, բանաստեղծի ժառանգության մեջ մնում է «Ռոմանս անսերի» հայտով ու տրամաբանությամբ լույս աշխարհ եկած «անսեր» երգ: Պարզ է փոխհատուցումը ամենից ավելի գործել է և արտահայտչական առումով, որը՝ ի հեճուկս պրոլետասոցիականների, նկատելիորեն գերհռետորիկ–ֆուտուրիստական է: Սկսած գրքի առաջին «Բոլոր պոետներին» հրովարտակից՝ այսպիսի տողերով.

...Հոկտեմբերը եկավ –
Ուզեց մկան:
Կա՛մք ուզեց Հոկտեմբերը...
Մասսաների ճակատը հակադրեց հնին:
Հոկտեմբերը բռնեց մեր կոկորդից –
Հրամայեց՝
— Շինի՛:

Շի՛ն չինի՛ հիմա դու:
Ոնե՛լս չինի՛ մաշինի, թե կարաս...

Հոկտեմբերը բերին կրակով:
Հոկտեմբերը բերին սովորական մարդիկ:
Նրանք, որ – գիտեին՝
Առաջ գնա – հա՛ց սուր ուտենք,
Առաջ գնա – կերակուր...

Հասկանո՞ւմ եք՝
— Ո՛չ մի Պառնաս,
Թեկուզ պրոլետպառնաս:
Թեկուզ պրոլետ պոեզիա:
Էսպե՛ս է:
Է՛ս է...(3, 137, 138, 139):

Մյուս կողմից գրքի բոլոր գործերի միջով անցնում է ատելության հորդ մի ալիք՝ տեղ–տեղ եվրոպական բուրժուազիայի ու կապիտալի, բայց առավել անխ-

նա պետական գործիչների և աջ ու ձախ սոցիալիստների հանդեպ (ինչպես Իսահակյանի անողոք ծառացումները), որ ճիշտ չէր լինի առնչել խորհրդային քաղաքական դիրքորոշմանը: Դա հայ հասարակայնության 1918–1920 թթ. դիրքորոշման օրգանական շարունակությունն ու արտահայտությունն էր և կոչված էր նշավակելու — դատապարտելու հայոց դատի հանդեպ եվրոպական տերությունների, այլև ԱՄՆ-ի անտարբերությունը: Այս առումով բավական է ուշադրություն առնել գրքի էջերից մեջ ընդ մեջ ցցվող Վերսալ անունը և այն շրջապատող մթնոլորտը՝ պատկերացնելու համար Չարենցի ծառացման չափն ու բնույթը: Զավեշտ է կարծել, թե ինչ մոռացել ենք մենք, մոռացված էր 20–30-ական թվականներին: Հիշողությունն այրող էր, և դրա արտահայտություններից մեկն էլ գրքում տեղ գտած «Տիրապետողների դեմքը» սատիր-ալբոմն է՝ միաժամանակ վարպետորեն վերաիմաստավորված Հալաբյանի նկարչական բարձրարվեստ հղացումներով ու մարմնավորումներով:

Տիրապետողները սրանք են՝ «C.C.C.P.», «U.S.A.», «R. F.», «D. R.»:

Առաջինը՝ «C.C.C.P.»-ը, հեղինակի նշումով նաև «սատիրի» «պրոլոգն» է. նկարազարդումն էլ գրքի ներքին շապիկի բարձրահարկ շենքերն են, արևգակով ու «Պետական» – «Պետական» գրությամբ՝ ցուցանակ չարենցյան այս տողերի.

...Մտնում եք գործարան:
Կամ հանք մի, ձեր տեղում թե կա:
Հարցնում եք՝
— Ո՞ւմն է.
Այսինչ-այնինչի՞նը:
— Չէ՛.
Խորհրդայի՛ն է:
Պարզ՝ պետական:
Դուք նորից զարմանում եք:
Զարմանքից դուք ընկնում եք հալից:
Ոնց որ ուտո՛պիա է,
Ոնց որ երազ,
Որ չի երազել դեռ ո՛չ մի դեմոկրատ-սոցիալիստ:
Էսպե՛ս է:
Է՛ս է:
Լավ է, թե վատ –
Հենց էս է, որ կա... (3, 170–171):

Ուստի և նույն այս հիմնաթելային դիմապատկերային սկզբունքով էլ պետականին հակառակ՝ սեփականատիրական-կապիտալիստական դեմքով էլ ներկայանում են մյուս տիրապետողները: Այնպես ինչպես Հալաբյանի հղացումով գծագրվում է ԱՄՆ-ի ուռած-փքված, ինքնագոհ «Միստր դոլլարը»՝ ձեռքե-

րից–փեշերից կախված–թափվող դոլլարատոպրակներով ու դոլլարներով, և հենց երկրի այն «Պրեզիդենտն» է, որը՝

…Ո՛չ միայն զուրկ է փառքից,
Այլ – արխիդեմոկրատ է…,–

տողեր, որոնց փակագծերի մեջ հաջորդում են այսպիսիք.

(Ձե՞ք հավանում:
Ինչի՞:
Էս բոլորը չկա՞ հո մեզ մոտ:
Մեզ մոտ,
Որ հյուր էլ գնայինք Իլյիչին –
Շատ–շատ հյուրասիրեիր… դեռ չեկած կոմունիզմով…) (3, 174):

Այսպես արտաքնապես առկախ տիրապետողները իրենց դեմքերով ճայնակցում կամ արձագանքում են միմյանց՝ հակադարձ կամ պատճառահետևանքային հարաբերությամբ անդրադարձնում մեկին կամ մյուսին բնորոշ վարք ու էություն: A.S. A. հատվածում՝ շրջագայող նույն այդ «Պրեզիդենտ դոլլարը» օրինակ, վերջին տողերով ձեռք է բերում նաև համաշխարհային հարաբերություններ թելադրող–կարգավորողի դեր ու առաքելություն: Եվ հենց այդտեղ էլ գծագրվում է հաջորդ «R. F. (Ֆրանսիա)» հատվածում գործող–ձևավորվող մի այլ տիրապետողի դեմք: Հարցումնապատասխանային ճկուն այսպիսի դարձդարձումներով.

…Հիշում եք.
Հենց
Էս
Պրեզիդե՛նտն էր,
Որ – 14 պունկտ ներկայացրեց Վերսալում…
Ձե՞ք – հավանում – ի՞նչ է:
Դժգո՞հ եք էս երկրի պրեզիդենտից.
— Աբա՛ ամբողջ էս–էս–էս–է՛ռևրոպում
Գտեք էդպիսի մի դենդի… (3, 175),— *որոնց շարունակական ընթացքով դժվար չէ զգալ կամ գուշակել, թե կծու, դիպուկ, որպիսի երգիծանքով է մերկացվում խորհրդային պետական ներքին ու արտաքին խղճուկ իրավիճակը: Խաղացկուն նման արվեստով Չարենցը հիմնավորապես լայնացնում–խորացնում էր քաղաքական դիմապատկերի պարոդիանական հունը, հարցում–պատասխանի օղակաձև տեղաշարժերով մատուցելով ծածկագիր քաղաքական մեծ բովանդակություն:*

Պատմական դաժան իրողությամբ հայ մտավորականությունը զրկված էր հայոց ոտնահարված իրավունքների մասին խոսելու հնարավորությունից, և, ահա՛, բանաստեղծը դիմում է զարտուղի խոսքի: Ամերիկյան պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի այդ 14 կետանոց դեկլարացիայից «R. F.» հատվածում անցնելով 1919-ի հունիսի 28-ին նույն ոգով կնքված «Վերսալի դաշնագրին», ապա և դաշնագրով Ֆրանսիային տրված իրավունքների մերկացմանը,— Չարենցը հարվածները կենտրոնացնում է Ֆրանսիայի ժամանակի վարչապետ, ապա պրեզիդենտ-մինիստր Ռ. Պուանկարեի վրա: Նշանակետը «իրավունքն» է: Մի հասկացություն, որի հերքող-հաստատող այլացումներով բնութագրվում է այդ «լե գրան աֆերիստը»[2] դիվանագիտական լարախաղացության հմուտ ձեռագրով.

— Պ. Պուանկարեն սիրում է իրավունքը:
Սոցիալիստ չէ թեպետ,
Բայց
Առանց իրավունքի
Չի հանի ոչ ձեր աչքը, ոչ ունքը...
Օ, ո՛չ,
Ո՛չ մի դեպքում:
Ամենից առաջ – իրավունք
Ամե՛ն ինչ – իրավունքով:
Իրավունքով – թեկուզ
Էդ
Պաշտելի
Իրավունքը –
Մարմնացնի հենց ինքը, կամ ժեներալ Դեգուտ... (3, 177):

Թեպետ «կատարյալ ջենտլմեն» Պուանկարեի «իրավական» բծախնդրությունը դիմանկարում առերևույթ վերաբերում է Ռուրին, բայց ներքուստ, երգիծական սպանիչ բոլոր լիցքերի խորքում գործում է ծառացած բողոքը այն անիրավ մեքենայությունների դեմ, որպիսիք «Վերսալի դաշնագրի» ոգով հայոց դատի դեմ այնուհետև շարունակվում է Սեն – Ժերմենի, Նյոյի (1919), Սևրի 1920-ի հաշտության պայմանագրերում, 1921–1922-ի Վաշինգտոնյան կոնֆերանսներում ստորագրված համաձայնագրերում, ներառյալ Լոզանի կոնֆերանսը:

Հայտնի է, որ հայոց հարցը «Վերսալի դաշնագրից» սկսած քննության առարկա էր թվարկված մակարդակներում, ուստի և բանաստեղծի ծածկագիր եզրակացությամբ՝ Պուանկարեից որդեգրած գործելակերպով «ճշմարտությունը

[2] Չարենց, 924. 1, Մոսկվա նշումով Չգ պահպանվում է «Маяковская галерея: (1923. М.), Պուանկարե, Մուսոլինի, Քերզոն, Պիլսուդսկի, Ստիննես, Գոմպերս, Վանդերվելդ չափածո դիմանկարներով, Պուանկարեի և Ստիննեսի դիմաց վերից վար ընդգծված:

գունա» դարձրած, այդպես հաջորդականորեն հանել են հայ ժողովրդի թե՛ աչքը, թե՛ ունքը: Չափածո շարադրանքի միասնական այս ընդհատակյա գաղափարին համարժեք չեզոքվածություն ունի և դիմանկարին կցված Հալաբյանի գծանկարը. մի մեծ չափով Լենին հիշեցնող «Լե գրան աֆերիստ» Պուանկարե՛ կողքին մարմնից փիֆի: Արտաքին բնագրին համապատասխան մի այլ տարբերակով էլ Պուանկարեն՛ ամուր կառչած է ժամանակի գերմանական խոշոր դրամատեր Հուգո Ստիննեսի օձիքից:

Նույն Ստիննեսին առնչվող մոտիվով էլ զարգանում է «D. R.» հատվածով մատուցվող Գերմանիայի դեմքը: Առաջին իսկ էջից դրամատիրական մոլուցքով, որի համարժեքն արդեն Հալաբյանի հիրավի չափազանց խոսուն գծանկարներից այս մեկն է. գլուխներից վեր, ասես սկուտեղի մեջ, առաջ չարժվող «Մարկ Ֆրեյլին», այլ տեղերում «Լիրը Ֆրեյլին», հետևից իրար քաշքշող խուռներամ մարդիկ՛ ճիշտ և ճիշտ Չարենցի այս տողերի հանգով.

...Ասում են –
Էդ
Բեռլինյան Ֆրեյլինը –
Սիրում է ...հասարակ չիբերի:
Մեկ էլ
(Ասում են)
Օվկիանոսի վրայով
Հյուր է գալիս նրան –
Իր
Պապավ
Ամերիկյան քեռին...
... ... (3, 185):

Կախման կետերով կիսատ մնացած ասելիքը փոխանցվում է դիմապատկերի հաջորդ մասին, որն արդեն նույն «Մարկ Ֆրեյլինի» պաշտամունքի ոգով՛

...Ֆրեյլինի հմայքին ենթակա
Բարձրանում են պատով,
Ուզում են նվաճեն երկինքը... (3, 184),–

ասել է գաղութատիրական անհագ մոլուցքով,— այս անգամ էլ ծառայում են Դոյչլանդի «սոցիալ–դեմոկրատական» պետական–պաշտոնական ցուցանակի ներկայացմանը: Բանադրվող սոցիալ–դեմոկրատական–ինտերնացիոնալիստ պարագլուխներից առավել հաջողվածը այստեղ, անշուշտ, Գուստավ Նոսկեն է, այս բնութագրով.

...Թեկուզ գլուխ չունի –
Բայց ունի ... նստուկ:
Զարմանալի մարդ է էդ Նոսկեն:
Խոսելիս նա լիզում է իր թուքը:
Խոսելիս
Մարդ դե՛մքն է խոսակցին դարձնում,
Նոսկեն – նստուկը (3, 183)[1].

Հենց այդպես էլ խոսուն է Հալաբյանի գծիկաչափ գծանկարով ստեղծված նստուկ–դիմապատկերը: Էապես Նոսկեի սույն «դեմքով» էլ բանաստեղծը՝ բանադրելով փոխհատուցում է եվրոպական բոլոր տեսակի ինտերնացիոնալիստ–սոցիալիստ–դեմոկրատներին՝ առաջին համաշխարհային պատերազմի եղեռնագործ արդյունքում հայոց դատի, հայոց եղեռնի հանդեպ ցուցաբերած հակամարդկային, հակադեմոկրատական դիրքորոշման համար:

Իր հերթին «Կապկապ» թամաշայի հետ համարյա միաժամանակ ստեղծված «Տիրապետողների դեմքը» «սատիր ագիտն էլ» վերջավորում է մի այսպիսի «Եզրակացություն».

...Տեսա՞ք –
Ներեցեք արտահայտությանս –
Նրանց դեմքը.
Եվ էն էլ –
Լրիվ չէ՛ էս սերիա՛ն դեռ:
Դե ասեք.– ո՞նց է մեր տանը.
Օ, երկի՛ր իմ.
Էս – էս – էս – էռիա.
C.C.C.P. (3, 189):

Սա հարկադիր այն շղարշն է, որ ամեն անգամ հարկ է քերել–հանել Չարենցի՝ այսպես ասած «սայթաքումների» վրայից, ամեն անգամ շրջանառության կոչելով տվյալ պահի պատմական եղելություններ և հանգամանքներ: Ըստ այդմ

[1] Գ. Նոսկեի դիմանկարը ակամա հիշեցնում է Չարենցի «Հ. Գ. – Բ.–ին» խորագրով էպիգրամը: Հասցեատերը՝ Հայկ Գյուլիքեխյանը, Գերմանիայում կրթություն ստացած և սոցիալիստներին հարած (Ֆ. Մերինգ, Կ. Լիբկնեխտ, Ռ. Լյուքսեմբուրգ) անձնավորություն էր: 1921–ից Հայաստանում զբաղեցնում էր գաղափարաքաղաքական պաշտոններ. 1923–ին համագործակցել է Գ. Հայկունու, և ապա «Գրական դիրքերում» շուրջը համախմբված պրոլետգրողների հետ. ասել է՝ ընդդեմ Չարենցի, Ա. Բակունցի, Վ. Թոթովենցի, որ Հայաստանի գրողների առաջին համագումարում (1934 հուլիս) հատած համբերությամբ բողոքում էր, թե վերջապես ի՞նչ է ուզում իրենից Հ. Գյուլիքեխյանը:

Ի դեպ. Չդ «922 11, Մոսկվա Ե. Չարենց. նվիրում եմ սիրելի Գյուլիքեխյանին» գրությամբ պահպանվում է «Вопросы теории и психологии творчества», т. 5 1914, Харьков» գիրքը:

դժվար չէ գուշակել, թե քաղված «Եզրակացության» մեջ որն է առանձին տողով հիշատակված «Օ, երկի՛ր իմ» ասածիդ հասցեատերը, և ո՞րն է «էս–էս–էս–էռիա. С.С.С.Р.:–ի հասցեատերը, մանավանդ երբ բացահայտ երգիծական մթնոլորտով շրջավորված երկու անգամ գտնում ենք արդեն հոլովված սատիր ադիտի նախորդ էջերում:

Եվ այսպես մինչև վերջին շունչը «Օ, երկի՛ր իմ». իսկ «Օ՜, հայրենիքը» մնացել է առանձին ... ու առանձնակի...

Նկատենք նաև, որ «լրիվ», թե՝ կիսատ, չարենցյան այդ «սերիան» որոշակի ընդհանրություններ ունի Վ. Մայակովսկու նույն կարգի բանաստեղծական «սերիայի» հետ:

Վերհարնի և Ուիտմենի հետ

Մ. Սարյանի դիմանկարին հաջորդած Մ. Աբեղյանի «Տաղաչափության զարգացումը Չարենցի և ուրիշների բանաստեղծության մեջ» ուսումնասիրությունը, տաղանդավոր գրականագետ–քննադատ Ց. Խանզադյանի գնահատականը մեծ պատիվ ու երջանկություն էին Չարենցի համար: Փաստորեն 1919–ի աշնանը Աղբալյանի հռչակած «Նորամուտ բանաստեղծը»,— 1921–ի սկզբներից ճանաչվում էր որպես **կենդանի դասական**: Եվ սա միաժամանակ բարձրակարգ վկայագիր էր ինչպես անձամբ ճանաչողների, այնպես էլ ժամանակի ճշմարիտ մտավորականության օգտին, որ հավասարապես վերաբերում է հայրենասեր պետական գործիչներին. և ամենից առաջ ծանրագույն պայմաններում գործող Ալեքսանդր Մյասնիկյանին:

Տառացիորեն ոտքն ու ձեռքը կապված, կալանավորի իրավիճակում իր հենարանը մտավորականությունն էր, որի համախմբման առաքելությամբ էլ ծանրածանր խոհերով ու սպասումներով 1923–ի հունվարի 1–ին Մոսկվայից վերադառնալիս՝ հետը Չարենցն էր:

Անշուշտ, թե՛ Մոսկվայում, և թե՛ Թիֆլիսում և՛ Երևանում Մյասնիկյանն ուներ համակիրների ու աջակիցների լայն շրջանակ՝ մեծապես Լազարյան ճեմարանի դասընկերներից ու շրջանավարտներից, ինչպես և Նոր Նախիջևանի միջավայրից: Բայց կասկած չի կարող լինել, որ Անդրկովկաս՝ Թիֆլիս ու Երևան հասնելու առաջին օրից առաջին հենարանը Թումանյանն էր՝ խոհեմ ու հանդարտաբարո շրջահայացությամբ, այլև մեծ հեղինակությամբ ու բարեկամական կապերով, այդ թվում նաև վրաց մտավորականության շրջաններում: Թումանյանի հիվանդությամբ ու կորստով հենարանը զգալիորեն թուլացել էր (արդեն բավականաչափ խարխլված Տերյանի կորստով),— և, ահա, հարազատ ժողովրդի կյանքում գրականության և գրողի դերի զգաստ գիտակցությամբ, թերևս, մահամերձ Թումանյանին հրաժեշտ տալու պահին կամ դրանից առաջ, փոխարինող է ընտրվում Չարենցը:

Աներկբայորեն Մյասնիկյանի վերաբերմունքը ևս զգալիորեն նպաստում է Չարենցի ճանաչմանը, ինչպես և մտավորականության համախմբմանը իր շուրջը: Սա էլ իր հերթին բերում է հակակշռի զորացում՝ պետական մեքենայությունների ամենատարբեր գործընթացներով՝ նպատակաուղղված թե՛ Մյասնիկյանի, թե՛ Չարենցի, թե՛ Սարյանի — բոլոր հաշվեկշիռներով հայ ժողովրդի և նրա ղարաբաղյան պահանջատիրության դեմ: Ըստ երևույթին Մյասնիկյանին, այլև ուրիշներին, հայտնի էր, կամ ընթացքում հայտնի էր դառնում, կամ էլ գուշակվում էր, որ Ղարաբաղի հարցը՝ Լոզանի կոնֆերանսի հետ սերտ առնչությամբ, «լուծվելու» է ամռանը, և մոտեցող ամռան հետ ավելանում էր մտավորականության նյարդային լարվածությունն ու անհանգստությունը. ինչպես Երևանում, այնպես էլ Թիֆլիսում ու Մոսկվայում և աշխարհի հայաշատ վայրերում:

Նշաններից մեկն էլ Մ. Շահինյանի ուղեկցությամբ՝ Աննա Ախմատովայի, Վիկտոր Շկլովսկու, Յու. Տընյանովի, Նիկոլայ Տիխոնովի, Օլգա Փորշի այցելությունն էր Երևան՝ 1923-ի մայիսին, համարյա Ի. Ձիլլաչենկոյի Թիֆլիս այցելության օրերին: Այդ առթիվ մամուլից մեզ հասած տվյալները չափազանց ժլատ են: Բայց համոզված ենք ժամանակի ընթացքում, գուցե և շուտով կհայտնաբերվեն՝ առանձին բեկորներ կամ ամբողջական տվյալներ՝ պահպանված այցելուների, կամ չեկայական պահարաններում: Տարբեր-տարբեր գրառումների թվում, առանձին տպավորություններ մասնավորապես Չարենցի ու Սարյանի հետ հանդիպումներից ու զրույցներից, եթե ոչ հայ ժողովրդի հանդեպ շարունակվող սխակալած անարդարությունների ոգով, քանի որ մեծ էր սարսափը,— ապա գրականությունից ու արվեստներից, Հայաստանի հիշարժան վայրերից ու հուշարձաններից: Անկարելի է թե պահպանված չլինեն անմիջական կամ հետագա մտաբերումներ հենց Շահինյանի ու Հակոբ Խաչատրյանի մեծահարուստ գրքերն-

---

¹ 1923-ի այդ օրերին Մ. Շահինյանը հետը բերել էր Հայաստանին նվիրված իր առաջին «Советская Армения»(1923, М.Пет.) «Армения сельскохозяйственная» գիրքը: Գրքում ամփոփված էին 1922-ի նոյեմբերի 16-ից 22 տևած Հայկական Գյուղատնտեսական առաջին համագումարի արձանագրությունները, որոնց հասցեին առաջաբանի առաջին իսկ հատվածներում գրում էր. «Ես այդ արձանագրություններից ավելի՝ ռոմանտիկական ոչինչ չգիտեմ»: Եվ այնուհետև. «Փոքրիկ մի երկիր դարերի ընթացքում առաջին անգամ ունի ոչ թե ձևական, այլ իսկական պետություն՝ վերածնության համար պահանջվող դժվարին խնդիրներով: Տարածքով այն սեղմված է այնպես, ասես մի ափաչափ, համարյա թե Երևանի գավառի սահմաններում...»:

Իսկ վերջում. «Եթե ինձ հաջողվի երկրորդ անգամ տեսնել օրհնված Արարատի հովիտը, հույս ունեմ հաջորդ երկու գրքերը նվիրել՝ առաջինը Լենինյան Հայաստանին՝ իր հանքային հարստություններով և «Совнархоз»-ի գործունեությամբ, մյուսը՝ Հայաստանի պատմա-մշակութային և հնագիտական հուշարձաններին:

Պետերբուրգ
Հունվար, 1923 թ. Մարիետա Շահինյան»:

Արձանագրություններին նախորդող «Արևին հասնելու մրցումով» «В догонку солнцу» առաջին գլուխը ակնարկ է նվիրված Հայաստանին, ասենք նաև, որ 1922-ի նոյեմբերին Երևան էր հասել սայլանքատար գնացքով: Տե՛ս նաև Վ. Շկլովսկու «Сентиментальное путешествие» տպավորությունները:

րում, որոնց համադրումով կարելի կլինի վերականգնել այցելության օրերի շփումների, մտահոգությունների ու տագնապների շրջանակն ու մթնոլորտը: Իրողությունն, անշուշտ, ինքնին խոսուն է, և թաքցնում է նախ Մ. Շահինյանի մտահոգությունը հայրենիքի կացությամբ ու Ղարաբաղի բախտով՝ գումարած այցելուների համերաշխություն–աջակցությունը հայ ժողովրդին ու մտավորականությանը, որպիսիք ամեն դեպքում շրջվելու էին ինչպես Զարենցի ու ղարաբաղյան հարցի, այնպես էլ հենց իրենց դեմ:

Իսկ մինչ այդ՝ քաջալերված ինչպես իր անձի ու ստեղծագործության պաշտպանությամբ, այնպես էլ ռուս գրողների հանդիպումներից, Զարենցը զբաղված էր բանաստեղծական արվեստի բարձր ու նրբին ոլորտի հարցերով:

Ընտրել էր Ուիտմեն ու Վերհարն՝ դարասկզբի քաղաքական, սոցիալ–տնտեսական հարաբերությունների պայմաններում սաս–քսանական թվականներին Ռուսաստանում ամենահարգի բանաստեղծների: Առաջինից թարգմանեց երկու նմուշ՝ «Եվրոպա», կարճ ժամանակից էլ՝ «Մեր օրերը»: «Եվրոպան» Վերհարնի «Բանկիրի» հետ բարձրարժեք թարգմանությամբ տպագրվեց Նք երրորդ գրքում՝ ընդարձակ բացատրությամբ, որից երևում էր, թե «ակադեմիական» բնույթի որքան մանրակրկիտ աշխատանք է կատարել թարգմանելիս. «Սույն թարգմանությունների արված են բնագրից կատարված **բառացի թարգմանություններից**, *աչքի առաջ ունենալով ոչ միայն բնագրի տաղաչափությունը, պատկերները, նախադասության ստուգաբանական կազմությունը – այլև ռիթմը, հանգերի հաջորդականությունը և այլն: Այնուամենայնիվ չեմ կարծում, որ նմանությունը բնագրերին սառացի լինի, մանավանդ իսկականի հետ համեմատելուց հետո Վալերի Բրյուսովի և Շենգելիի ռուսերեն թարգմանությունները, որոնց մեջ անգամ կան շատ և շատ շեղումներ: Գեղարվեստական երկի նույնարժեք թարգմանությունը, մեր կարծիքով, հավասար է ինքնուրույն ստեղծագործության, իսկ եթե թարգմանությունն արվում է մի ավելի զարգացած լեզվից – ավելի քան դժվար է, եթե ոչ անհնարին: Ուստի և թող հասկանալի լինեն վերը բերված թարգմանության աննշան շեղումները բնագրից, եթե այդպիսիները կան: Ե. Չ.» (3, 368):*

Այս բացատրությունից հետևում են հարցերի թնջուկներ, որոնց ներկայացնելը պահանջում է էջեր:

Նախ ասենք, որ Բրյուսով ու Շենգելի հիշատակումից իսկ երևում է, որ Զարենցի ուշադրությունը վաղուց է սևեռված եղել Վերհարնի վրա: Բայց, իրոք, թարգմանական «նույնարժեք», այլև սրբազան էջեր են Ուիտմենից թարգմանած «Եվրոպան», կարճ ժամանակից էլ «Մեր օրերը». որքանով երկուսի տողացին էլ ու նախնականը, և առհասարակ խորքային ծանոթությունը Ուիտմենի հետ անբաժան է Վ. Թոթովենցից. որի անգլիական ուսումնառությունը Հարվրդում և անգլերենի իմացությունը պարզապես «տաբու» էր մինչև վերջերս: Անգամ տպավորությունն այն է, թե ազատական ըմբոստությամբ տոգորված բանաստեղծությունները թարգմանության համար ընտրել է հենց Թոթովենցը: Ուրեմն և ճաշակենք «Եվրոպան» հատվածական վերաքաղումներով.

Ծորտի խեղդող որջից
Շանթի պես նա թռավ՝ ինքն իրմով հիացած,
Ոտքերով նա կոխոտում էր մոխիրն ու ցնցոտիները,
Իսկ ձեռքերով սեղմում է կոկորդն արքաների:
Օ՛, հույս և սպասում:
Օ՛, տանջանքը քշված ազատասերների, որ մաքրում են իրենց
Ըմբոստ հոգին օտար հեռուներում,–
Օ՛, որքա՛ն սրտեր կան հիմա տխրություններով հիվանդ...

Իսկ վերջում.

Օ, ամեն մի հոգի, որ թողել է մարմինը՝ բըռ–
նակալ դահիճներից զարկված –
Անտեսանելի ճախրում է աշխարհի վրայով,
շշնջում է, կանչում, հսկում:
Ազատությո՛ւն. թող հուսալքվեն ուրիշները.
Ես չեմ հուսալքվի երբեք...
Պատրաստվեցե՛ք դիմավորելու նրան. – արդեն
գալիս են նրա համբավաբերները (3, 325, 327):

Եվ սակայն սկզբնական ծանոթությունը, թվում է, ավելի նոր էր՝ Մայակովսկու առնչությամբ և Կ. Չուկովսկու թարգմանություններով[5]:

Թերևս մի խոշոր չափով էլ՝ ի հեճուկս չպարզվող հոգեբանական դրսևորում:

Մինչդեռ Վերհարնի ստեղծագործությանը, անկարելի էր թե, ծանոթ չլիներ ամենաուշը 1917-ից. նաև սույն հանգամանքների բերումով: 1917-ի հունվարի 26-ին, 29–30-ին Իգոր Սևերյանինի հետ Գ. Շենգելին Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի դահլիճում հանդես են գալիս այդ ժամանակներում ընդունված «Պոեզոերեկո» համերգներով, որին մասնակցում էր «պոեզոսլիստուհի» Բալկիս–Սավսկայան: Երիտասարդության բուռն հառաքրքրությանն արժանացած այդ երեկոները բնականաբար, արձագանք են գտնում KC էջերում: Սկզբում ինչ-որ տեղ չափավոր, 29-ի համերգի մասին խիստ քննադատական, որ մեծա-

[5] Ռ. Ուիտմենից Կ. Չուկովսկու առաջին թարգմանությունները հրատարակվել են 1907-ին. վերահրատարակությունը՝ «Գալիք դեմոկրատիայի պոեզիան» խորագրով՝ 1914-ին արդեն լույս հետո,— իրագործվել է 1918-ին:

Այս դեպքում ևս ի հեճուկս առարկան դարձյալ Գ. Հայկունին էր: 1923-ի թիվ 5-ում Ս. Ս. ստորագրությամբ Պք հայտնում էր. «Գ. Հայկունին Մոսկվայում հրատարակել է ամերիկացի պոետ Ուիտմենի մի քանի երգերի թարգմանությունները: Ուիտմենից այդ թարգմանությունները Գ. Հայկունին կատարել է Կ. Չուկովսկու և Բալմոնտի ռուսերեն թարգմանություններից: Ես չգիտեմ դրանք որքան աջող և որքան հարազատ են Ուիտմենի բնագրի հետ՝ բայց Գ. Հայկունու հայերենները տարբեր են բնագրից, միայն ընդհանուր իմաստը պահպանված է, և, որ գլխավորն է, Ուիտմենի հալած երկաթը այստեղ գաղջ ջրի տպավորություն է թողնում:

Այնուհետև բերվում են քաղվածքներ, սումբուրակերպ այնպիսիք, որոնց արտադրելն իսկ ամոթալի է» (էջ 106):

պես վերաբերում էր Սևերյանինին նվիրված Շենգելիի զեկուցմանը: «Ոգով սամուրայներ» նշանաբանով հյուսված այդ զեկուցման մեջ՝ այդպիսիք համարելով Հայնեին, ապա Պուշկինին՝ «որն իր մեջ խտացնում էր և՛ Շեքսպիր, և՛ Բայրոն», «կանխագուշակում Վերհարնին և Վեռլենին»,— Շենգելին թիվ երրորդ սամուրայ է համարում «նոր պուշկինականությունը» մարմնավորող Սևերյանինին:

Հունվարի 30-ին Շենգելիի զեկուցումն արդեն նվիրված էր Վերհարնին, որին նույնպես արձագանքում է «Кавказское слово»-ն՝ Շոպենհաուերից առած «Ոչ ոք չի կարող իրենից վեր թռչել» բնաբանի ոգով՝ հերքելով Շենգելիի կարծիքը, ըստ որի Սևերյանին հուշակվում էր «տխեղերքի բանաստեղծ»: Իսկ դրախոսը գտնում էր, ահա՛, որ Սևերյանինի ճշգրիտ գնահատականը տվել է Բրյուսովը, նրան համարելով «ուղղելի» թերություններով բանաստեղծ, և որ այդ ևս անցած էտապ է. Սևերյանինը արդեն ճաշակել է ամբոխ գրավելու «չար թույնը», իրեն զրկելով կատարելագործվելու ներքին մղումից. «... Զէ որ նա «արբած է հաղթանակով» ... «հնազանդեցրել է գրականությանը... բոլորը նրան «Մարսելիոզ» են երգում»:

Բննադատության ընթացքից երևում էր նաև, որ իր բանախոսություններում Շենգելին՝ նվաստացնելով Բրյուսովին, ամեն կերպ աշխատում էր ապացուցել Սևերյանինի գերազանցությունը: Հայտնի է, որ այդ տարիներին Բրյուսովը տարված էր Վերհարնով,— այդու՝ Շենգելին Բրյուսովին նվաստացնում էր նաև այդ առումով[6]:

Միամտություն կլիներ կարծել, թե Բրյուսովի դեմ ոտնձգությունները չեն թաքցնում նաև խանդոտ չարություն «Поэзия Армении»-ի առիթով, որով և պայմանավորված էր Բրյուսովին պաշտպանելու Кс հետևողականությունը, որին գումարվում էր նաև Ս. Գորոդեցկու նախասիրությունը:

Վերհարնին թարգմանելու գործին, ինչ խոսք, Զարենցը ձեռնարկում է 1917–1918-ի այս իրողությունների, ինչպես և Աբովի հետ մտերմության տարիներին կուտակած այլ և այլ կարգի ընդհանուր և մասնակի իմացություններով. բայց և 1923-ին Վերհարնի հենդեպ հայոց գրական շրջաններում բորբոքված հետաքրքրասիրության պայմաններում մեծ չափով և ի հեճուկս ընդդեմ Կ. Զարյանի:

Պարզ է, խմբագիր Կարինյանի նախաձեռնությամբ Պբ հավելվածի մարտի 5-ի թիվ 4-ը բացվում է նույնի «Էմիլ Վերհարն» ծավալուն հոդվածով, որին հաջորդում են Կ. Զարյանի «Էմիլ Վերհարն (Հիշողություններ և տպավորություններ)»

---

[6] Հանգամանորեն տե՛ս Անուշավան Զաքարյան, Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914–1920), 1984, էջ 16–20:

Кс — «Кавказское слово», լրագիր:

Մայակովսկին Իգոր Սևերյանինի հասցեին գրել է. «Իգոր Սևերյանինի մասին առհասարակ խոսել է շատ: Նա շատ երկրպագուներ ունի, նա հոյակապ է նրանց համար, ում ցանկությունների շրջանակը դուրս չի գալիս սույն սահմանագծից.

Շրջել չպանակահերների հետ Շոկոլինյայով...». В. Маяковский, Полн. соб. соч., т. 1, М., 1955, стр. 338.

Երևի թե սա ինչ-որ նկատելի չափով վայելում է և Գ. Աբովին:

Այնպես որ 1917-ի ապրիլին Մոսկվայից վերադառնալով Թիֆլիս անկարելի է թե տեղեկություն չունենար այդ ամենից, և դա նույնությամբ վերաբերում է և Թիֆլիսում գտնվող Վահան Տերյանին:

ծավալուն էջերը: Վերջինը նշանակալի է հատկապես Վերհարնի հետ իր հանդիպման հուշարկումով, որի բովանդակությունը սա է. Փարիզում իրենց հանդիպման ժամանակ հանկարծ դառնալով Զարյանին բելգիացի բանաստեղծը հարցնում է. «— Եթե դուք հավատացյալ լինեիք և աղոթեիք, ի՞նչ լեզվով պիտի աղոթեիք:

— Հայերեն,— պատասխանեցի ես:

— Ահա՛: Արդ, ի՞նչ է բանաստեղծությունը. եթե ոչ մշտնջենական աղոթք երևույթներին կամ գաղափարներին: Պատճառ կա, անշուշտ, որ երաժիշտը իր հոգին արտահայտելու համար ընտրում է ջութակը, դաշնամուրը, և ոչ որ քնարը կամ հակառակը: Երաժշտությունը՝ երաժշտություն, սակայն, **ինչ մե՜ծ տարբերություն միջոցների մեջ**: Չեմ կարծում, որ դաշնամուրի համար ծնված մատները, նույն ներդաշնակությամբ կարողանան խոսել տալ ջութակը: Այդպես է և լեզուն: Մենք փլամանդացիքս պարում ենք կապարյա ոտքերի վրա, մենք զուրկ ենք այն doie,tée–ից (հեշտամտախաղ), որը հատուկ է ֆրանսիացիներին: Դարերի ընթացքին նրանք ստեղծել են իրենց խառնվածքին, իրենց ոգուն համար մի գործիք, որը կատարյալ է: Իսկ մենք գնում, մտնում ենք ուրիշի տունը, մեր անզուսպ բնավորությունով, մեր վայրենի, գերման խառնվածքով և աղավաղում ենք նրանց քնարի լարերի տեղը, որպեսզի կարողանանք արտահայտվել:

Այդ խմաստով երկար խոսելուց հետո, նա խոստովանեց, որ երբեք ֆրանսերենը նրան չի բավարարեցրել և եթե նոր սկսելու լիներ գրական ասպարեզ, նա անպայման պիտի գրեր փլամանդերեն:

Այդ գիշերը ծագեց իմ մեջ բուռն ցանկությունը սովորելու իմ մայրենի լեզուն»:

Ապա ներկայացվում են հայերեն թարգմանություններ Վերհարնից, «Գյուղը» (Թարգմ. Վ. Տերյան), «Սեղանավորը», «Տրիբունը» (Կ. Զարյան)[7]», «Սերը» (Արշ. Ջոպանյանի), և «Ապստամբություն» վերնագրով վերջինը Լևոն Աթաբեկյանի թարգմանությամբ, թվագրված՝ «Ռոստովի բանտ, 1911–ի աշուն», «Արտասպված «Գործից»: Առանձին ծանոթությամբ էլ ասվում էր, թե ամենահաջող թարգմանությունը վերջինն է[8]:

Այս մթնոլորտի ծնունդ են և Չարենցի թարգմանությունները Վերհարնից: Դրանք մի որոշ չափով թաքցնում են բանավեճ **Կ. Զարյանի նկատելիորեն տողացի**, անշունչ, ճապաղ թարգմանության դեմ, ինչպիսին, «Տրիբունը» բերթվածից քաղվող այս հատվածներն են.

---

[7] Դր, 1923, 15 մարտի, էջ 65, 68:

[8] Ճանաչված բժիշկ, հասարակական գործիչ (գլխավորել է հայ սոցիալիստ–հեղափոխականների – էսէռների կազմակերպությունը), այլև բանաստեղծ–թարգմանիչ: Լևոն Աթաբեկյանի հանդեպ մի առանձնակի վերաբերմունք ուներ Ակ. Խաչատրյանը: Այնքան որ «կոզմոպոլտհայթյունը» տարածվում էր ոչ միայն նրա միակ դստեր՝ գրականագետ Մարգարիտ Աթաբեկյանի, այլև փեսայի՝ բանաստեղծ Աշոտ Գրաշու վրա:

Պոեզիայի ժողովածուներ խմբագրելիս հանձնախմբի անդամները ժպտալով գիտեին, որ Գրաշուց ընտրված նմուշները նույնությամբ պետք է մնան. հանել կամ կրճատել չի կարելի:

Բայց չէ որ Աթաբեկյանը ևս 1918–ի Բաքվի հայոց ջարդերի զոհ էր...

... Նա մեծացել է մայթերի վրա քաղաքների,
բորոտ, կապտած, դնդերահոտ արվարձանում,
ուր կատղած էին մարդերը ընդդեմ ստրկության իրենց
մշտնջենական և գերության փտած անցյալներին...

Օ՛, նրա ոստումը հանկարծ ժխորներում կռվի,
երբ ժողովուրդը նետվում էր ոսկեզարդ ճակատների դեմ շենքերի,,
բռունցքները կարկառած, վերջապես, բախտի դեմ,
հարվածների տեղատարափի տակ և քարերի՝
ցասումներին խառնված,
որ փշրելով բարձր ապակիները լուսաթաթախ
կարծես ուզում էին ճզմել ու սփռել փողոցում
ոսկի՛...

Եվ սակայն, ինչպես այդ, այնպես էլ Վերհարնի հանդեպ գաղափարական մոտեցման առումով Կարինյանի դիրքորոշումը միանգամայն տարբեր էր մտավորականության առաջավոր մասի, ամենից առաջ Չարենցի հետապնդած ու հետապնդելի նպատակներից: Պրոպագանդելով Վերհարնին՝ Կարինյանը հետամուտ էր գաղափարական մի նպատակակետի, ինչը արդեն իսկ շարադրել էր Էպտոն Սինկլերի հասցեին. «Սինկլերը,— գրում էր նա,— ցրում է չափազանց ընդհանրացրած կարծիքներ և «փաստեր», ցրում է Ամերիկայի հետ կապված քաղքենիական այն ցնորքները, որոնք հաճախ դեղին սոցիալիստների կողմից առաջադրվում են որպես միակ ռեցեպտներ մեծամասնական հիվանդության դեմ»[7]:

Նույն դիրքերից, այս անգամ էլ եվրոպական «քաղքենիական ցնորքներ» ցրելու, «մեծամասնական» գործնականին ու գաղափարաբանությանը ծառայելու, իրոք, ոսկերչական հմտությամբ, **Կարինյանը Զորյանի հետ մասսայականացնում էին Վերհարնին:** *Զուգահեռաբար օգտագործելով ֆուտուրիզմի դեմ, որի ջախջախումը հանուն պրոլետարական զտարյուն հեգեմոնիայի, մեծամասնական դրական քաղաքականության անհետաձգելի խնդիրներից մեկն էր: Կարինյանի համար ևս, որի վերաբերյալ խոսք կլինի հաջորդ էջերում նույնպես. հասկանալի է, ինչպես Վերհարնի ստեղծագործության, այնպես էլ ֆուտուրիզմի հանդեպ Չարենցի մոտեցումների շրջանակում:*

Այս ամենի հետ միասին Ուիտմենին ու Վերհարնին դիմելու Չարենցի կողմնորոշումը էականորեն սնում էր Երևանում բնակություն հաստատած ժամանակի գրականության, արվեստի մշակույթի գործիչների լայնահուն–լայնահայաց հետաքրքրությունների մթնոլորտը: Բազմապիսի ազդակներով. ինչպես շփումները Մ. Սարյանի, Ա. Առաքելյանի, մյուս նկարիչների հետ, հաղորդակցվելը Մ. Աբեղյանի գեղագիտական, պոետիկական–տաղաչափական ըմբռնումներին, հայոց բազմադարյան գրականությանն ու բանարվեստին, հոգևոր և ժողովրդական երգ–երաժշտության հետ բանաստեղծական խոսքի հարաբերության մոտեցում-

---

[7] *Գր, 1923, 7 փետր:*

ներին: Նույնը և ավելին կարող ենք ասել հասակակիցների հետ ամենօրյա շփումների մասին: Հեռավոր ամերիկյան և եվրոպական աշխարհին, Ռուսիային ու Թուրքիային վերաբերող տարբեր–տարբեր զրույցներ, սոցիալ–տնտեսական հարցերից մինչև կենցաղ ու սովորություններ, գիտություն, քաղաքական իրադարձություններ, և գրքե՜ր, գրքե՜ր... Թոթովենցի ու Ջանանի, Հալաջյանի ու Մազմանյանի, Ց. Խանզադյանի ու Մ. Գևորգյանի, նույն Հախումյանի ու Զարյանի, և շա՜տ ու շա՜տ ուրիշների հետ. հաճախ ամեն օր կրկնվող–շարունակվող հենց «Ֆրանսիա» հյուրանոցից շատերի հետ հարևանությամբ, որտեղ բնակություն էին հաստատել տարբեր սերնդի և զբաղմունքի մտավորականներ:

* * *

Այդ շարքից այս անգամ և առհասարակ անհրաժեշտ է առանձնացնել Մամիկոն Գևորգյանին, որը **1923-ի դավերի ու խարդավանքների բովում եղել է Չարենցի կողքին, մահից փրկել նրան,** *անդավաճան բարեկամի սրտակցությամբ բաժանել է այդ և հաջորդ տարիների անվերջանալի դառնությունները, բարեկիրթ–բարեհոգի մարդկայնությամբ թեթևացրել է բանաստեղծի գործած–չգործած, կամա–ակամա մեղքերը: Այդ օրերին Երևանի պետական թատրոնի տնօրեն Գևորգյանը՝ հայ ժողովրդի մերձակա ծանր տարիներին լինելով Кс հեղինակավոր օրաթերթի խմբագիր, հիմնավորապես տեղյակ էր կովկասյան ազգերի ներքին խմորումներին, ազգային և ոչ ազգային կուսակցությունների դեմքերին ու դիրքորոշմանը. արմատներով ու ակունքներով՝ միմյանց հանդեպ հարևան ազգերի կուսակցությունների հետ հարաբերություններով, նրանց հետապնդած շահերին ու նպատակներին՝ հատվող ու բաժանվող շոշափումներով. գիտեր նրանց բացահայտ ու ծածուկ խաղերի ու դավերի բներն ու օջախները, ծանոթ էր ամեն մեկի գործելակերպ–գործելաձևերին և ամենօրյա խոսակցություններով ըստ հարկի յուրատեսակ փորձագետ–մեկնաբան էր Չարենցի համար: Բնականաբար, 1923-ի ձմեռանից ամառ սևեռյալ կենտրոնը ղարաբաղյան պահանջատիրությունն էր, որի սկզբնավորման պահից 1917-ից սկսած Գևորգյանը եղել էր բոլոր հակամարտությունների, բողոքումների ու անդառնալիությունների, դաժան վերակերպությունների ընդհատակով հանդերձ,— խառնարանում. որպես հայ հասարակայնության շրջաններում 1914–1919 թթ. ամենահեղինակավոր «Кавказское слово» լրագրի խմբագիր, մերձավոր բարեկամը Հովհ. Թումանյանի, Ս. Գորոդեցկու, Գ. Ռոբաքիձեի, հետագայում Չարենցի, Սարյանի և շատ ուրիշների նույնպես:*

Պարզ է, նման զրույցները, վեճերը առավելապես բորբոքվում էին վստահելիների շրջանակով. հետադարձ հայացքով մտավորապես Չարենց, Սարյան, Թոթովենց, Գևորգյան կազմով: Հաճախ աչքից հեռու երկուսով կամ երեքով. վերջինիս հետ զրույցների վայրը դարնան ու մերձեցող ամռան օրերին սովորաբար Հրազդանի ձորն էր՝ 1922-ից ընտրված «Միջագետքով» և շրջակայքով:

Եվ ահա, այդ վայրին և 1923-ի ամառնամուտին է վերաբերում Չարենցի կյանքի հերթական փորձություններից մեկը՝ որ առ այսօր ծածկված է թանձր, բայց և թափանցելի վարագույրով:

ԴԱՎ «ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ»... ՏԵՎԱԿԱՆ ԲՈՒԺՈՒՄ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ուրեմն և «մատույցներից» անցնենք բուն եղելությանը. համոզված, որ այդ կնճռոտ եղելության կծիկը պետք է որ բացվեր մեր օրերում՝ որպես ոգեղեն պարգև Հերոսական Չարենցից՝ Հերոսական Արցախին: Սկսենք՝ բացելով կծիկը տեղեկացնելով, որ Մամիկոն Գևորգյանի նամակները (որոնք ժամանակին տրամադրել է ինձ իր դուստր Կատարինե Գևորգյանը)՝ ծանոթագրություններով սկզբնապես տպագրվել են ԳԱ Պատմաբանասիրական հանդեսում իր իսկ հասցեատիրոջ սահմանած հաջորդականությամբ: Տվյալ դեպքում <1923>–ին գրված առաջինը եղել է **«Սիրելի Մամգուն իշխան»** դիմումով անամսաթիվ այս մեկը, որ քաղվում է ամբողջովին. «Խնդրում եմ եթե կարելի է այսօր, կամ ծայրահեղ դեպքում վաղը մաքրես մնացած հաշիվը. կոպեկ չունեմ և մեկ էլ **ոտքիս պատճառով 3 օր է տանը պառկած եմ և չգիտեմ, թե երբ վեր կկենամ:** Արդյո՞ք տվել ես Աշոտին էն դրությունս. եթե չես տվել, էսօր մի կերպ տուր, որ վաղը գոնե կարողանամ փող ստանալ: Չարենց» (ընդգծ.՝ Ալ. Զ.: 6, 401)[1]:

Նյարդային ինքնագրով երկտող, և դրանից հետո տևական բուժում Թիֆլիսում, նույն ընթացքով լռության հիմնավոր խախտում՝ այն էլ **Մտկէ** էջերում: Իր իսկ Չարենցի մասնակցությամբ, որպիսիք որոշակիորեն հետևում են նախ երկուսուկես ամիս անց **1923.7.09.** Թիֆլիս ամսաթվով բանաստեղծի Մ. Գևորգյանին գրած նամակից. «... Դու չկարողացար մոտս գալ, երևի ժամանակ չունեիր, իսկ ես էլ հիվանդանոցից (ասել է Երևանում, Հունիսի վերջերին՝ Ալ. Զ.) ուղիղ կառք նստեցի և կայարան գնացի: Այստեղ ես հասնելուս պես տեղավորվեցի Զակկրայկոմի կուսակցական տնում և սկսեցի բուժվել բժիշկ Իսախանյանի մոտ[2], որ Զակկրայկոմի բժիշկն է: Հիմա համարյա ամբողջովին բժշկված եմ, բայց Մոսկվա գնալս ուշացավ, մի շաբաթ ևս մնալու եմ այստեղ, մի խոսքով մինչև ամսիս 15–ը ճանապարհ կընկնեմ...(6, 401–402):

---

[1] Աշոտը՝ նաև Նք խմբագիր Աշոտ Հովհաննիսյանն է. Մ. Գևորգյանը՝ քարտուղարը, որին 1926–ին փոխարինեց Չարենցը՝ հրապարակելով Նք մեկ գիրք:

[2] Ցավոք չհաջողվեց գտնել տվյալներ այս երևելի ու վստահելի բժշկի մասին, որը ազդու և ազնիվ ելույթներով մասնակցել է նաև Դաշնակցության 1917–ի աշնան հայտնի համագումարին: Թվում է տեղեկություններ կգտնվեն թիֆլիսաբնակ մտավորականների թղթերում:

Ուստի վերստին նախ, թե ո՞րը և ի՞նչ էր պատահել Չարենցին Երևանում, որ «մնացած հաշիվը» չտալ Նք–ի հետ մաքրելուն պես հիվանդանոցից մեկնում է Թիֆլիս:

Պատասխանը գտնում ենք Լազարյան ճեմարանի երևելիներից նույն Մ. Գևորգյանի հուշերում. «Այդ ամառ,— գրում է նա,— ժամը 3–4–ին մենք՝ Չարենցը, ես և՝ երբեմն Տիգրան Հախումյանը, գնում էինք միասին լողանալու. Հրազդան գետում: Լողանում էինք սովորաբար «Ամպեր» հիդրոկայանից վերև, այնտեղ, որտեղ Հիդրոկայանի և առվի միջև գոյացել էր մի փոքրիկ կղզի, որը մենք «Միջագետք» էինք անվանել: Լողանում էինք գետում. սակայն մի օր Չարենցն առաջարկեց լողանալ առվում: Այդ օրը առվի ջուրը շատ վարար էր, և հոսանքը շատ սրընթաց: Հախումյանը վտանգավոր էր համարում այդտեղ լողանալը, որովհետև հազիվ մի հիսուն մետր հեռավորության վրա գտնվում էր հիդրոկայանի նավը, և եթե ջուրը լողացողին քշեր տաներ մինչև այնտեղ՝ նրա համար այլևս փրկություն չկար: Նա չորսից չհանեց: Չարենցն ու ես հանվեցինք:

Չարենցը համարձակ ցատկեց ջրի մեջ: Հոսանքն անմիջապես կլանեց նրան և նրա վտիտ մարմինը քշեց տարավ ինչ որ մի տաշեղ: Նա թավալվում էր ջրի մեջ. թափահարում էր ձեռքերը, չէր կարողանում հանել գլուխը, չէր կարողանում դիմադրել հոսանքին: Ես սարսափեցի, արագ վազեցի առաջ առվի ափով, թռա առվի մեջ և, երբ նա մոտեցավ ինձ, խառեցի նրան ու դուրս բերի ափ: Չարենցի բերանից ջուր էր հոսում, նա թափահարում էր գլուխը, փռշտում էր, ամբողջ մարմնով դողում էր: Մի քիչ ուշքի գալով՝ նա բացեց աչքերը, նայեց երեսիս, ժպտաց ու ասաց.

— Կեցցե՛ս, Մամիկոն, փրկեցիր հայ պոետին... Դու չլինեիր, ես կորած էի:

Այդ դեպքը Չարենցը երկար ժամանակ չէր մոռանում...» (ՀԵՉժ, 1, 260):

Այս ամբողջ դրվագը հուշագիրը ներկայացնում է իբրև թե 1922–ի ամռանը պատահած դեպք, և, իհարկե, մտածված, ձանր ու թեթև արված զգուշավորությամբ:

Բանն այն է, որ 1922–ի ամռանը բանաստեղծը Հախումյանից բաժանվել ու Մոսկվա է մեկնել միանգամայն բարեկամական հարաբերություններով: Վկայությունն են իր իսկ նվաստիս տրամադրած ԵԺ 6–րդ հատորում տեղ գտած «Մոսկվա, 1× <1>922» և «Մոսկովիա, <1>922, 28 ×) տարեթվով նամակները, այլ նյութեր: Իսկ ահա՛, Մինչ 1923–ի հունիսի 27–ին տպագրված խմբագրությանն ուղղած բաց նամակը Չարենցն ավարտում է սույն տողերով. «Թող չկարծվի սակայն, որ ես այստեղ ուզում եմ իմ վրայից քերել Տիգրան Հախումյանի հետ «զինակից» լինելու անպատվությունը (ընդգծ.՝ Ալ. Չ.). բնավ երբեք: Ես փաստն եմ միայն արձանագրում, ուրիշ ոչինչ: Տիգրան Հախումյանը հեռու է իմ պաշտպանած գրական տեսակետներից (6, 97):

«... իմ վրայից քերել Տիգրան Հախումյանի հետ «զինակից» լինելու անպատվությունը».— 1923–ի հունիսի 27–ին այսպիսի ահեղ, բազմի-

մասս տողերով է արձանագրել Չարենցը իր հարաբերությունների խզումը Հախումյանից. և խզել է վերջնականապես[1]:

Ուստի տեղն է հակառակ կողմին անդրադառնալուց առաջ՝ որոշ փակագծեր բացելով, ի մի բերել եղելության կարևոր հանգույցները: Ուրեմն այսպես. երբ Ղարաբաղյան հարցի 1923-ի հուլիսի 7-ի քննությանն ու վճռին մնացել էր շատ կարճ միջոց,– հունիսի 20-ին կամ 21-ին Չարենցը մազապուրծ փրկվում է Հրադդանի հիդրոկայանի մոտերքը վարարած «սրընթաց» առվում խեղդվելուց: Եվ ահա, դրանից 3-4 օր հետո՝ շտապ փոխադրվելով Թիֆլիս (անշուշտ, Ալ. Մյասնիկյանի միջնորդությամբ), հունիսի 27-ին հարկ է համարում հանդես գալ Հախումյանին վերաբերող աննախադեպ անողոք հայտարարությամբ և դա, այն դեպքում, երբ 1923-ի փետրվար–ապրիլ և հետո ձգված դրական պայքարում Հախումյանը եղել է իր փութեռանդ «զինակիցը»:

Իսկ ինչ վերաբերում է Մ. Գևորգյանին, ապա տեսնում ենք միանգամայն հակառակը. «Օ՛, սիրելի Մամդոն, հայտնում եմ քեզ հենց էս գլխից, որ ես Հայաստանից դուրս գալուս օրից (ասել է 1923-ի հունիսի 23-24-ից՝ Ալ. Չ.) և ոչ մի նամակ չեմ ստացել որևէ մեկից, և ոչ ոքի չեմ գրել (ի բաց առյալ քեզ գրած նամակս). հասկանալի թող լինի ուրեմն քեզ. ինչխանի՛դ, թե որքան ուրախություն կարող է պատճառել ինձ, պոետիս, քո գրությունը, որը… այնքան հետաքրքիր բան պիտի որ պարունակի իր մեջ: Օ, սիրելի Մամդոն, լսիր թախանձանքներս ու գրիր… վկա է էս գրիչս, որ քո էդ ըղձալի նամակի ամեն բառի համար հազարապատիկը կվարձատրի քեզ ալլահը, կամ, կուզե՞ս, նույնիսկ ես – նամակներով, գրքերով, ինչով կուզես»,– գրում է բանաստեղծը Գևորգյանին հասցեագրած «Մոսկվա, 1924, 8 II» տարեթվով չորս թերթյա ծավալուն նամակում: (Մյուս հատվածները քաղվելու են քիչ հետո): Եվ այդ վերաբերմունքը նույնությամբ շարունակվում է մինչև կյանքի վերջը:

Թերևս, կարելի էր արդեն եզրակացությունը թողնել ընթերցողին, բայց արդարությունը պահանջում է «ձայն տալ» և մյուս կողմին: Անշուշտ, իր իսկ սեփական հուշագրական արծարծումների ընձեռած փաստարկներով, որպիսիք, խիստ ասած, նույնպես հատկանշական են: **Բնորոշ է, որ Հախումյանն իր հուշերը վերջավորում է 1923-ի փետրվար–ապրիլյան դասախոսություն-բանավեճի շրջանակով,** *թեթևասահ-անհոգ քնարաշունչ մի այնպիսի հումորով, որ կարծես թե անհամար այդպիսիք ոչ մի ցավ չեն պատճառել բա-*

---

[1] Առավել փաստական ապացույցները բանաստեղծի գրադարանում պահպանված Հախումյանի «I» (1923. Երևան) գրքույկն է՝ «Եղիշե Չարենցին՝ իմ միակ եղբորն ու ընկերոջը – ջերմ սիրով և բարի հիշողություններով. Տ. Հախումյան 2. VI. 1923 թ., Երևան» ինքնագիր մակագրությունն է:

Եվ 6-րդ համարի համար Չարենցի իրեն հասցեագրած նամակը (Մոսկվա, 1. 10. <1>922 և Մոսկվա <1>922. 28. 10 տարեթվերով) ստանալիս Տ. Հախումյանը հենց այնպես՝ ի միջի այլոց ասաց, թե 3 նամակ էլ մնացել է Ե. Հովհաննիսյանի մոտ: Վերջինս կտրականապես ժխտում էր. այդտ ուշադրավ է, որ Հախումյանի գրքույկը չի անհետացել Չ-ից:

նաստեղծին: Հաջորդ էջերն էլ յուրօրինակ դիֆերամբ են, և չկա ոչ մի խոսք հարաբերությունների խզման կամ հետագա ինչ-ինչ առնչության վերաբերյալ: Մշուշապատ վերամբարձ գունավորումով պարզապես մատուցվում են «տերյանորեն» թախծոտ սեփական և Չարենցի տաքարյուն խառնվածքի տարբերության «ընկալումները»:

Ակնհայտ տարակուսանք է հարուցում նաև սույն իրողությունը. ասենք հենց միանգամայն բնական այն հարցը, թե իսկապես ի՞նչ է խանգարել Հախումյանին, որ իր հուշերը չի ներկայացրել 1961-ին լույս տեսած «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին» պատկառելի ժողովածուին և հրապարակել է Մ. Գևորգյանի մահից հետո (1962), 1965-ին: Իսկ ինչ էլ որ լիներ պատճառաբանությունը, երբեք էլ համոզիչ չէր լինի:

Եվ հետո. օղակ առ օղակ հետևելով իրողությունների շղթային, ակամա այն տպավորությունն ես ունենում, որ Հախումյանը, ինչպես ասում են «ձեռքերը քշտած», 1923-ի հունվարին սպասում էր Չարենցի Մոսկվայից Երևան հասնելուն: Տեղ հասնելուն պես մի կողմից ամեն կերպ աշխատում է շահել բանաստեղծի վստահությունը, մյուսից՝ տարբեր միջոցներով գրապայքար էր հրահրում՝ սուր հարձակումներով Չարենցի հակառակորդների դեմ: Ասենք այնպիսին, ինչպիսին **«Տափակության կարապի երգը»** *գրախոսականն է՝ գրված* **Արշարունու «Հրուտ Արփի», «Sophie» և «Ծերմակ վալս»** *(Մոսկվա, 1923) գրքերի մասին, որին դառնալիս անմիջապես աչք է ծակում արտաքնապես սովորական հակադրության տակ թաքնված կոպիտ բորբոքելու մտադրությունը. «Սրանք այնքան սնամեջ ու անբովանդակ գործեր են,— գրում է գրախոսը,— և այնքան են թափազուրկ և անզգացմունք, որ կարելի չէ նույնիսկ պատմել, թե ի՞նչ է ուզում ասել հեղինակը: Ո՛չ մի աչքի ընկնող հատված, տող, բառ, ածական և բազմաթիվ քերականական և ոճային սխալներ... Թվում է, թե մի գաղտնի նպատակ ունի՝ եղած արևների վրա շաղել իր պոեզիայի պղտոր ջուրը: Արևն, իհարկե, դրանից չի մարի, բայց խորապես համոզված ենք, որ մեր գրական դժբախտ միջավայրը այդ էքսպերիմենտից միայն կշահի, որովհետև հենց որ այդ ջուրը թափվեց արևի վրա՝ իսկույն կգոլորշիանա»[4]:*

Եվ միանգամից էլ հմտորեն մատնացույց է արվում, թե ո՞վ է Արշարունուն հակադրվող Արև համարվողը. ասել է Չարենցը: Այդ էլ այն դեպքում, երբ Գր հունվարի 15-ի թիվ առաջինում նույն ինքը գրախոս Հ. Նար...ը «Եղիշե Չարենցը — պոռնաչի Ալեքսին»[5] գրախոսականով նալին ու մեխին խփելով կրքեր բորբոքելու շահախնդրությամբ գրել էր. «... Տերյանի ազդեցությունից միանգամայն

---

[4] *Գր, 1923, 23 փետր., էջ 52:*

[5] *Նույնը, 15 հունվ., էջ 13–14: Սադրիչ համանման նպատակ էր հետապնդում Պ. Մակինցյանի խմբագրությամբ 1923-ին Կ. Պոլսում լույս տեսած Եղիշե Չարենց. Պոեմներ հատորի առիթով Հախումյանի (Տ. Հ. ստորագրությամբ) տպագրած կարճառոտ գրախոսականը՝ միակ վերապահությամբ. այն է թե՝ գրքում այդ ինչու զետեղված չէ «Ասպետականը». Նք, 1924, գ. 4, էջ 325:*

ազատագրված Չարենցը, այսօր իր այս փոքրիկ գրքույկում խարխափում է մայակովշչինայի մշուշներում և սակայն, չի կարելի ասել, թե նա ստրկաբար է հետևում նրա ուղիներին: ...«Աղջիկը», «Քեզ», «ՀՍԽՀ», «Տեսել եք դուք» և «Երևան» հատվածներում Չարենցը միանգամայն ինքնուրույն է, եթե մի կողմ թողնենք այդ բանաստեղծություններում աչքի ընկնող մի քանի պոետիկական պատկերներ ու համեմատություններ, որ մենք պատահել ենք արդեն նույն Մայակովսկու գործերում: Օրինակ «կույր աղիքը», «Արևը որպես գնդասեղ» և այլն:

Թռիչքներից հետո, մեծ գործերից հետո «Պոեզոզուռնայի» երևան գալը նշան է այն միջնաշրջանի, որը միանգամայն բնական է անցյալ ու ապագա պոետական սահմանագծում: «Պոեզոզուռնան» Չարենցի նոր որոնումների փաստաթուղթն է, նորանոր նվաճումների գրավականը: Տերյանական հովերից ազատագրվելու փաստը պսակվեց երկու խոշոր և իրար բնավ չնմանվող գործերով, ինչպես «Ամենապոեմն» ու «Ասպետականը»:

Կամա ակամա մտածում ես, թե էլ ինչպիսի սադրիչ մարտահրավեր կամ «գաղտնի նպատակ» էր պետք «Քուրային», որպեսզի Մոսկվայից սանձազերծի վերը արծարծված խուլիգանների «Գրական արշավը»:

Բայց սա Ղ. Փարպեցու վկայած «Սատանայի արբանյակի» տարբերակ է. դրա կողքին գործի էին դրվում նաև դահճության այլ... հազկերտային տարբերակներ:

* * *

Տակավին 1985-ին լույս տեսած նվաստիս «Գրական արձագանքներ և հուշեր» գրքում տեղ գտած **«Սարյան և Սարյաններ»** հուշերից վերին պարտավորվածությամբ պետք է որ քաղենք Մ. Սարյանի տիկնոջը (Ղ. Աղայանի դուստրը) վերաբերող այս հատվածը. «... Եվ սակայն վիշտը նրան չէր լքում և ոչ մի պահ. ավելին. թվում էր ամբողջ կյանքում նրա միտքը զբաղված էր դրանով, իսկ մնացածը անում էր մեխանիկորեն: Վիշտը Սարիկի (որդու՝ Սարգսի) դժբախտությունն էր, որն ապրում-վերապրում էր հայ մոր դառնաղի տևական կսկիծով:

Մեղքը իրենն էր: Բայց ինչպես: 1923 թ. որդին հիվանդանում է (քոսով՝ Ալ. Զ.): Երկյուղած, թե հիվանդությունը կարող է խորանալ, մայրը որդուն տանում է Թիֆլիս: Հետևանքը լինում է այն, որ արդեն ոչ միայն չի բուժվում, այլև ավելի է վատանում: Չշտապեր, չտաներ բուժվելու՝ այդ ծանր դժբախտությունը չէր պատահի որդուն, ինչպես չպատահեց նույն հիվանդությամբ վարակված (Թիֆլիսում բուժված՝ Ալ. Զ.) հասակակիցներից ոչ մեկին... Մայրական խոցված սրտով սա պատմել է ինձ մեր ծանոթության առաջին օրերին՝ այնպիսի ցավով, այնպիսի տառապանքով, որ այնուհետև չեմ կարողացել մոռանալ նրան հանդիպելիս. փոքր-ինչ հանգստությամբ նայել Սարիկի դիմանկարներին, իրենց ընտանեկան լուսանկարներին»:

Բայց պետք է որ ընթերցողը տեսնի այն լուսանկարը, որի տակ կարդում ենք. «Նկարչի կինը՝ Լուսիկ Սարյանը, որդիները՝ ձախից աջ՝ Ջարիկ (Ղազարոս) Սարյան, Սարիկ (Սարգիս) Սարյան, 1923»: Հրեշավոր արարք...

«Հետո արդեն, երբ միասին էինք մնում, հանգիստը կորցրած մայրը հարց ու փորձ էր անում, թե արդյո՞ք որդին միտք չունի ամուսնանալու, դառնորեն մրմնջում էր, որ որդին անձնական կյանք չունի, վրդովված բողոքում էր Սարիկի ընկերուհիներից Ա. Մ.-ից[6], որ՝ զբաղեցնելով որդուն, խանգարում էր նրա ամուսնությանը: Իսկ ես գիտեի, որ ընկերուհին մեղք չունի, պարզապես Սարիկին հաճելի էր նրա հետ լինել համերգներում, ներկայացումներում. գիտեի, որ Սարգիս Սարյանը իսկական տղամարդ էր, արժանապատվությամբ տանում էր սեփական դժբախտությունը և չէր ցանկանա երբևէ չարաշահել–շահագործել ուրիշ մեկի խիղճը, վերաբերմունքը:

Սարիկի քիչ է ասել՝ սերը, պաշտամունքը ծնողների էին, եղբայրը, հորաքույրը...»

Հարկ է զգացվում վերծանելու–բացելու փակագծերը և ավելացնելու, որ Ա. Մ.-ն Անահիտ Մալխասյանն էր՝ Պողոս Մալխասյանի դուստրը, և Սարիկի հետ մտերմությունը բնույթով ու էությամբ բախտակիցների համախոհություն էր. վերին կարգի:

Մեր հանդիպումների միջոցին զրույցները Սարյանի ու Մալխասյանի շուրջը համահավասար–դունավորված էին Վ. Տերյանով: «Զարենց–Նամեում» Մահարու մատնված «անկարելիի խորհրդավորության» քողով Սարիկն ու Անահիտը հաճախ ակնարկում էին Տերյանի թղթերին վերաբերող գաղտնիքներ, երբեմն լինում էր և սեանել–շոշափելու խոսառում...[7] և սակայն այդպես էլ չստացվեց: Ուրեմն և իմ խորին համոզմունքով այդ թղթերում պահված–պարփակված են Բրեստի և Բրեստին հաջորդած ժամանակների՝ հայ ժողովրդի դեմ գործված դավաճանությունների մերկացումներ: Դրանք անկասկած ծայրից–ծայր բողոքի ու ծառացման վավերագրեր են՝ տող առ տող հայտնի Մալխասյանին ու Մյասնիկյանին, նաև՝ Մյասնիկյանի հավատարիմ աջակից Մ. Սարյանին, բայց և Սարիկին... Դե՛, դրա համար էլ պետք էր այնպես պատժել, որ այլևս չհամարձակվեին... Սարյանն ու պաշտելի որդին... ամեն ժամ իր աչքի առջև... վերջում էլ եղեռական վախճանով... Ականջը կանչի Հազկերտի...

Իսկ բնությամբ վերին քրիստոնյա Սարյանին մնում էր կրկնել, որ ինքը լուսանկարներից չի նկարում. մինչդեռ նույն 1923-ին լուսանկարներից նկարել էր Վ. Տերյան ու Հովհ. Թումանյան... երկու տարի հետո էլ դահճության հերթական

---

[6] Ա. Մ.-ն՝ Անահիտ Մալխասյանն է Պողոս Մալխասյանի դուստրը. ականավոր գրականագետ, պետական գործիչ, մտերիմ ընկերն ու բարեկամը Ալ. Մյասնիկյանի, Վ. Տերյանի. բանաստեղծի Երկերի ժողովածուի առաջին նախաձեռնող հրատարակիչ. այն մտերիմ բարեկամը Աղ. Խանջյանի և այլոց. և ինչպես, 1937-ի զոհ:

Սիրելի՛ Անահիտ, չէ որ Մալխասյանի արխիվի նյութերի հրապարակման ժամանակն է, չէ որ ինչ-ինչ «մաքրագործողներ» մինչև այսօր էլ շարունակում են սպանել թե՛ Մալխասյանին ու Տերյանին, թե՛ Սարյանին ու Չարենցին... թե՛ ուրիշ շատերի... Հրեշայինը շարունակվում է...

[7] Արմեն Զաքարյան, Գրական արձագանքներ և հուշեր, 1985, էջ 292–293. նաև՝ Գրականության և պատմության ընթացքները, 1989, էջ 411–412: «Սարյան և Սարյաններ» հուշերը: Աստված տա հնարավոր լինի լրացնել շատ կարևոր օղակներով ու հանգույցներով... Աստվա՛ծ տա՛...

տարբերակով զոհ... Արփենիկ Չարենց... Դե՛, դահիճներին նկարելն էլ՝ «բոյեքոյ», թե նկարաշարերով, հայ ժողովուրդը «վստահել» էր կոչումա–մրցանակա–շքանշանակիր տեր ու տիրականներին...

Բայց դառնանք Թիֆլիս փոխադրված Չարենցին...

Թիֆլիսում–հիվանդանոցում

Անցնենք, ուրեմն փաստարկների հաջորդ օղակին, որպիսիք, բնականաբար, վերաբերում են Թիֆլիսին. որտեղ և բուժվում էր Չարենցը «բժիշկ Իսախանյանի մոտ»:

1923–ի հունիսի 24–ին, ասել է Հիդրոկայանի դեպքից անմիջապես հետո, Հ. Լ. ստորագրությամբ Մոկչ տպում է «Ռեակցիայի գաղափարախոս երգիչը» վերնագրով մի հոդված, որով խստորեն քննադատվում էր Հախումյանի «Լ» ոտանավորների գիրքը (Երևան, 1923): Հոդվածն ավարտվում էր այսօրինակ սպանիչ տողերով. «Ա՛հ, ողորմելի հոգի:

Ապա ի՞նչ հասկացողություն է՝

— Տիգրա՛ն Հախումյան[*].

` Ուշագրավ է, որ երևանյան գրական թոհուբոհի չարագուշակ պտուղները Մոկչ կանխագուշակում էր տակավին 1923–ի մարտին: Հայտնապես Տ. Հախումյանի վարք ու նկարագրի հայելին է **«Արդարություն»** *վերնագրով հիշարժան «Ֆելիետոնը», որից փաստորեն հետևում էր նրա եռանդուն մասնակցությունը հենց «Երեքի դեկլարացիայի» իրադարձություններին: Ուստի քաղենք որոշ հատվածներ. «... Ես կառաջարկեմ նույնիսկ պրոլետարական պոեզիայի եռամսյակ մը հայտարարել լայն զանգվածներուն մեջ պայքար մղելու համար,— գրում է «Ընկերական» ստորագրությունը կրող ֆելիետոնի հեղինակը,— շարունակելով. «— Ինչ կարծեցիք հապա. չէ՞ որ առանց պոեզիայի խնդիրը վճռելու չպիտի կարենանք շինարարական, հառաջադիմական քայլ մը անգամ ընել:*

«Արվեստը, պոեզիայի կյանքի ու պատմության միակ հզոր շարժիչ ուժն ու աղդակն է. նա այն հսկա փակտորն է, որ առաջ է բերում տարերային շարժումներ ու հեղափոխություններ և տակն ու վրա է անում հասարակական կյանքի բոլոր հիմքերը – մի հասարակարգ փոխում է մյուսով»: Այսպես է ձևակերպած իր ժամանակին պոեզիայի դերը **արվեստաց հանճարեղ տեսաբան Տիգրան Հախումյանը**: *Իր վերոհիշյալ խոսքերը արդարացնելու համար էր, որ Հախումյան վերջերս Երևանին մեջ ճակատ մը բացավ ու գործը հասցուց դիվանըաշուն:*

Հախումյանը ասկե վախնալու բնավ հիմք չունի, վասնզի ինքը փաստաբան ալ է. իսկ նեղ տեղն ընկած առեն կարծիքափոխ պիտի ըլլա: Այս բանը անոր համար նորություն չէ:

Շատ ուշագրավ պիտի ըլլա երբեմնի երկու ընկերներուն դատը: Չարենցին ու Ազատ Վշտունուն:

Մարդու հավատալը չի գար, որ ասոնք հերու սուրբ երրորդություն մը կազմած հայոց աղգին մատենագրությունը կխստահանեին, իսկ այսօր... Այս բոլորը ժողդատարանի գործ է...

Այս գործին **չնչավոր նախապատճառը Տիգրան Հախումյանը եղավ**:

Այս մարդը, որ տարի մը առաջ իր իսկ հիմնած և ապա դիակնացած հայ գրողներուն միության մեջեն հացիվ իր գիակը պրծուց, բավական առեն է, ինչ Երևանի պրոլետարական պոեզիայի մենոլորտին մեջ կնեխի իր սնամեջ տեսություններով:

Երկու բառ, եթե ոչ հետամղիչ և այն էլ որպիսի հետամղիչ, որի աչքերը, թեև տեսնում են նորը և ականջները լսում կանչերն ու աղմուկները նորօր երգերի, բայց գիտակցաբար ու չարամիտ երգում են միայն հուշերն անցյալի նույնիսկ այս ահավոր ու աշխարհահացունց ժամանակներում»:

Հունիսի 26-ին արդեն, երբ Չարենցը հասել էր Թիֆլիս, դարձյալ նույն ստորագրությամբ տպագրվում է «Ֆուտուրիզմը՝ որպես գրական ռեակցիա» մի այլը:

Այս քաջ փաստաբանը Թիֆլիսին ու Երևանին մեջ «խեղճ» *Չարենցը նախատված տեսնելով, մարդասիրաբար անոր անձին ու ստեղծագործություններուն պաշտպանության դատախազը վեհանձնորեն ու ձրի իր վանդի դհոլին մեջեն: Նպատակին հասնելու համար «թրաշ» պատասխանատվություն մը կարդաց և «պրչին» տեղ լեզուն չարժելով ժամ ու կես... Ասոնցմե առաջ ճակատամարտ մը առաջացավ, որ երկու օր ու գիշեր տևեց Երևանին մեջ և այդ պայքարին մասնակցողները քանի ավելի հիմնարկներու մեջ կռիվ մղելով՝ բաժնվեցան... վերջիվերջո համոզվեցին, որ ժողովատարան դիմելու է. ու դիմեցին.*

— Ովքե՞ր են մեղադրյալները.
— Եղիշե Չարենց և Ազատ Վշտունի:

Դրոգրամ իր նախագահին բերանով Եղիշե Չարենց կմեղադրի հետևյալ ծանրակշիռ ոճիրներուն մեջ...

1. Եղիշե Չարենց ֆուտուրիստ է... 5. չունի դասակարգային մի և կուռ ու հաստատ տեսակետ. 6. երբեմն կարծես Հախումյանի *և արձանագործ Հայարյանի հետ փորձել է կազմել ընդդեմ Հայաստանի պրոլետարական գրողների և իմաժինիզմի ու ֆուտուրիզմի անարխո-ինդիվիդուալիստական զրահները հագած արշավում է պրոլետ.պոեզիայի դասակարգային իդեոլոգիայի դիրքերի վրա, 7. Անիկա իր «Ամենապոեմը» կառուցեր է Մայակովսկու «150.000 000» ու դրամաղլխավը ընչազուրկ եղած ատենը, իսկ որ ամենաքստմնելի ոճիրն է՝ Չարենցը իր «Ռոմանս անսերը» գողցեր է Մայակովսկու «Ամպի փոխանի մեջեն»»...*

Չարենցը այս բոլորը ցած տեսակի ամբաստանություն համարելով ժողովատարան կչտապի և Դրոգրամն ու Վշտունին զրպարտության մեջ կմեղադրի...

Այս գործին դատական կազմը արդեն պատրաստ է:

Չարենցի պաշտպանն է տիեզերահռչակ փաստաբան Տիգրան Հախումյան, *օգն. Հայարյան:*

Դրոգրամին ու իր սեփական անձին պաշտպանությունը իր վրա վերցուցած է Ազատ Վշտունին, փաստելով, որ իրմե ավելի տաղանդավոր փաստաբան մը պաշտպանելու տեղ մեղադրել սկսե գինքը՝ հանուն ճշմարտության: Այս գործին վճիռներու թիվը հավասար է հայոց ազգին բոլոր բանաստեղծների, գրողներու և գրականագետներու ուղիղ թվին»:

«Ընկերական» սույն ֆիլիպիկը ավարտվում է այս տողերով. «Վերջապե՛ս, վերջապե՛ս, վերջապե՛ս...

Վերջ պրոլետարական պոետներու տառապանքներուն:

Պրոլետարական պոեզիայի առեղծվածը ալ չպիտի տանջե անոնց:

Հայկական հարցեն ալ ավելի բարդ ու հանելուկային այս խնդիրը լուծեցին...» *(ընդգծ.՝ Ալ. Զ.). տե՛ս Մուրճ, 1923, 11 մարտի:*

*Ահա է՝ բառ առ բառ ծանակվում-խարանվում է պրոլետ պոեզիա կոչվածի և առհասարակ թոհուբոհային այդ ամենի սառնակային-սարսռեցնող արտաբերը՝ որոշակիորեն Չարենցին հաս*ցեագրված հուշարարության չաղախով, որից նա, դժբախտաբար, միամտորեն չօգտվեց մինչև 1923-ի հունիսյան փորձությունը...

«Ընկերական» ստորագրությամբ, ամենայն հավանականությամբ, հանդես է եկել Սուրեն Երզնկյանը, որից և ծայր է առել Չարենցի հետ բարեկամությունը:

Չի պահպանվում է Նր հանդեսի 1926-ի գիրք 1-ից մեկ օրինակ՝ «Տ. Հախումյան. 1926» ինքնագիր ստորագրությամբ: 1923-ից հետո Հախումյանից Չարենցի մոտ եղած միակ «մասունքը»:

Սրա սլաքներն էլ ուղղված էին Կարա–Դարվիշի, Աբովի, Վշտունու և Չարենցի դեմ. «Պետք է ասել ուղղակի նաև a'la Մայակովսկի պոետներին... որ նրանք պրոլետարիատի գաղափարախոս երգիչները չեն, որ ֆուտուրիզմը գրական ռեակցիոն շարժում է, որ նրանց կատարած գործը – վերջին հաշվով հակապրոլետարական գործ է:

Զուր թող չփորձեն – և չենք կարծում, թե այսուհետև այլևս փորձեն – մեր տնաբույս ֆուտուրիստները, որոնք ուզում են և պրոլետարական երգչի դափնիները քաղել, և որոնց մի քանի խմբավորումներ ճաշակեցինք մեր այս մի տարվա ընթացքում (Չարենց–Վշտունի, հետո՝ Չարենց–Հախումյան–Հալաբյան) – թե այլ է եվրոպական ֆուտուրիզմը,, որի վերածնությունը ռեակցիոն երևույթ է, և որի հետ ռուսական ֆուտուրիզմը ոչ մի կապ չունի»:

Միաժամանակ շեշտվում էր, թե «Հայկական ֆուտուրիզմը» գալիս է Երևանից, առանց հիմք գտնելու Թիֆլիսում: Ավելին. ֆուտուրիզմը Խորհրդային

Վրաստանում, պարզապես, նացիոնալ–ռեակցիոն բանակի ուղղություն է, և ոչ մի նահանջ այդ ֆրոնտում»:

Իսկ տողատակին էլ ասվում էր, թե՝ «Շատ ավելի շահավետ կլիներ Երևանի երիտասարդության համար, եթե ... տվեր ուղղակի Բրյուսովի հոդվածը սիմվոլիզմի, ֆուտուրիզմի և պրոլետարական պոեզիայի մասին, քան Ե. Չարենցի այդ հոդվածի պոլեմիկական շաղախով ծաղկաքաղը»:

Դժվար չէ նկատել, որ Չարենցի կողքին հիշատակելով այսքան անուններ՝ այդ թվում Վշտունի և Հախումյան,— հոդվածագիրն էապես չեզոքացնում էր **Չարենցի ֆուտուրիստական մեղքերը**, այլև միաժամանակ հեռացնում էր Թիֆլիսի հայոց մտավորական շրջաններից. առավել ևս Մյասնիկյանից: Ամենակարևորը. հմտորեն մեջտեղ էր բերվում և մատնանշվում ֆուտուրիզմի հարցը «Խորհրդային Վրաստանում», որը՝ երևանյան ֆուտուրիզմի հետ կողք–կողքի նույնպես որակվում էր որպես «նացիոնալ–ռեակցիոն» ուղղություն:

Արտաքնապես, կարծես, պաշտպանվում էր «երևանյան ֆուտուրիզմի» հանդեպ Ա. Կարինյանի դիրքորոշումը, որը գնահատության բոլոր եզրերով ու ե-

---

Այնպես որ, իզուր չէր Հայաստանի Խորհրդային գրողների առաջին համագումարի (1934 թ. հուլիս) ելույթում Ակսել Բակունցը հոչակում «... Ես, դժբախտաբար, մեր գրողների մեջ չեմ գտնում այնպիսին, որը լեզվի տեսակետից օրինակելի լինի, բացի ընկ. Չարենցի լեզվից. և այդ պատիվը պատկանում է մեր մեծ գրող Չարենցին»,— այնուհետև չսքողված վրիժառությամբ շեշտելով ավելացնում է. «... լեզվի ասպարեզում կատարված սխալները հետևանք են **մեծապետական շովինիզմի**. քանի որ նրանք կարծում են, թե հայերենով ամեն ինչ կարելի է արտահայտել, ուստի և հարկ չկա այդ հայերենի վրա աշխատանք թափել. այդ տեսակետից ես կարող եմ ասել, որ Տիգրան Հախումյանը «Ցասումի» թարգմանությամբ մեծապես վնասել է լեզվին. ես գտնում եմ, որ հայոց լեզվի այն պրովինցյալ տեսակը անհետացել է, և մենք ունենք այժմ մի լեզու, հարուստ լեզու, որը հնարավորություն ունի ոտքի կանգնելու և շատ շուտով ոտքի կկանգնի»:

«Ակսել Բակունց Գրականության մասին» (1959) ժողովածուում ելույթը աղավաղված օրինակից ներկայացվել է կրճատումներով: Կրճատված է և Տ. Հախումյանին վերաբերող հատվածը: Ամբողջական սղագրությունը, որից լեզվական չնչին ուղղումներով ժողովածուի համար պատրաստել է անձս,— պահպանվում է ԳԱԹ ԳՄՖ:

րանդներով համապատասխանում էր պաշտոնական դրական–գաղափարական քաղաքականությանը: Կետ առ կետ ֆուտուրիզմ այպանող այսպիսի ելակետերով. «Ռուսական ֆուտուրիզմը քաղքենիական էսթետիկական իդեոլոգիա է... Ռուսական բոլոր ֆուտուրիստների, իմաժինիստների, դադաիստների և այլոց ստեղծագործության մեջ չափազանց ուժեղ տեղ է հատկացված գյուղական պեյզաժին, գյուղական մոտիվներին, հին գյուղական Ռուսիայի նարոդնիկական–էսթետիկական վերարտադրությանը: Իզուր չեն Պուգաչովը և Ստենկա Ռազինը, գյուղական բունտարարության այդ երկու հերոսները այնքան մեծ տեղ բռնում Կամենսկու, Եսենինի և մյուսների մոտ...»:

Ահա նման կողմնորոշման համար հարվածի տակ է առնվում Վլ. Մայակովսկին, նորից Մայակովսկին, այն էլ այսպիսի տողերով. «Մայակովսկին 150 միլիոնի և Չորրորդ ինտերնացիոնալ պոեմի հառաջաբանում հանդես է գալիս որպես Նեկրասովի ամենաջերմ երկրպագու և հետնորդ...»: Իսկ այնուհետև. «Ուժեղ է ռուսական ֆուտուրիզմի մեջ նաև սլավոնաֆիլներին հատուկ նացիոնալիզմը: Հոկտեմբերյան հեղափոխությունը հենց գնահատվում է այդպիսին, որպես սլավոն ցեղի ստեղծագործություն: Ահա ինչու Ռուսական այդ ֆուտուրիզմը սերտ կապով կապված է սմենավեխական ինտելիգենտական հոսանքի հետ»[*]:

Իզուր չէր հավելվածի համար ընտրել Գք անվանումը և խմբագիր Կարինյանը: Մեծամասնական գաղափարական դիրքերից այդքան հմտորեն կարող էր կրակակետեր ընտրել միայն ինքը՝ Բաքվի 26 կոմունարների, 1923–1927, և 1937 թվականների մաուզերականության հոծ խմբերի ճակատագիրը անհոգի–անխռով շրջանցող «Պրավդիստ» Կարինյանը:

Էպտոն Սինկլերի մասին վերը քաղված տողերի մթնոլորտում Գք նույն թվում (2) XX ստորագրությամբ «երիտասարդ մարքսիստ» Լերսի «Общественный смысл русского футуризма» գրքին նվիրված այդ փոքրածավալ ակնարկով տեսեք թե քանի կրակակետերից է հարվածի տակ առնվում Չարենցը. բանաստեղծական արվեստային–գաղափարական դավանանքը, այնպես էլ ստեղծագործությունը:

Արտաքնապես գրում էր **Մայակովսկու, Եսենինի ու Կամենսկու դեմ**, բայց հարվածները՝ քաղաքական ահավոր շաղախներով, հասցեագրված էին Չարենցին: Շարունակվող աննահանջ հետևողականությամբ, որի արտահայտություններից մեկն էլ Ա. Կարինյանի ստորագրությամբ 1923-ի ապրիլի 15-ի թիվ 5-ի «Պրոլետարական գրականության մասին» առաջնորդողում Մայակովսկու դեմ հարձակումներին հաջորդած սույն եզրակացությունն էր. «Ռուսական պրոլետարական հայտնի քննադատ–գրողներից մեկը, ընկ. Կալինինը իր ժամանակ շատ ճիշտ կերպով նկատել է, որ ֆուտուրիզմը և մանավանդ իտալական ֆուտուրիզմը ժամանակակից իմպերիալիստական բուրժուազիայի մտայնության արտացոլումն է»:

Ուրեմն տեսեք, թե ընդդեմ ֆուտուրիզմի գրական «ճակատի» ընդհանուր հարձակման ներսում՝ աջից–ահյակից, թիկունքից, շեշտակի–շեղակի–խոտորնա-

[*] Գք, 1923, 7 փետրվարի, էջ 30–31:

կի որքան հարձակումներ էին տեղում ոչ միայն «Ռոմանսի» ու «Պոեզոզուռնայի». «Ամենապոեմի» այլև «Ամբոխների», «Երգ ժողովրդի մասին» պոեմի վրա՝ բունտարարության և բունտար Պուգաչովի ու Ստենկա Ռազինի արծարծումներով. ներառյալ գյուղացիական մանր–բուրժուական էսէրականություն՝ դրան «ազգակից» այն ժամանակներում նույնպես մանր–բուրժուական համարվող դաշնակցական–ազգայնականություն, այդտեղից էլ դեպի «սլավոնաֆիլների հատուկ նացիոնալիզմ» և «ամենավնասական ինտելիգենտական հոսանք», ապա՝ ... «իմպերիալիստական բուրժուազիա» նետվող աղեղներով:

Որքան հմտորեն, այնքան էլ արտառոց, թեկուզ միայն այնքանով, որքանով «գյուղական պեյզաժ», «գյուղական մոտիվներ», «չափազանց ուժեղ» արծարծելը համարվում էր «հին գյուղական Ռուսիայի նարոդնիկական–էսթետիկական վերարտադրություն»:

Ո՛չ արտառոց, ո՛չ էլ անտեղի կրակոց, քանի որ այս եզրով էլ հարվածի տակ էր առնվում մտավորականության և հասարակայնության լայն խավերի բուռն–անօրինակ սիրուն արժանացած «Ես իմ անուշ Հայաստանին»:

Ուրեմն տեսնք, թե իբրև մեծամասնական ամենագետ օրենսդիր ու տեսաբան մուրճականների գլուխն անցած՝ հանուն «պրոլետգրականության հեգեմոնիայի» ինչպիսի սադրիչ եռանդով էր մարտնչում Կարինյանը: Ըստ այդմ Չարենցի Երևան հասնելու օրերից՝ թե՛ Չարենցի, և թե՛ ֆուտուրիզմի դեմ նրա ծավալած հարձակումների խորքում, թիկունքում անտեղի չէր և ոչ մի կիսաքայլ: Հաստատվող «պրոլետարական դիկտատուրան» ամբողջ ճակատով մղում էր դասակարգային համառ պայքար. մեծապես գյուղացիական երկիր «էս–էս–էս–էռիայի» գյուղացիության, թվաքանակով երկրորդ տեղը գրավող քաղաքաբնակ քաղքենիության, ապա բոլոր ժողովուրդների մտավորականության դեմ, էլ չենք խոսում՝ «բուրժուազիայի» ...Ամենօրյա արյունահեղ բռնատիրական անօրինակ պայքար, ստալինյան առանձնակի ատելության համեմունքներով՝ դաժանագույնը հայ ժողովրդի և մտավորականության դեմ: Մանավանդ, որ հենց սկզբից հայտնի էր թե՛ Պբ, թե՛ յուր սույն պրոլետթուրքամետությունը. «Պոլսի և Անատոլիայի ամբողջ թուրք մամուլը,— տեղեկացնում էր Պբ,— երկու մասի կարելի է բաժանել՝ իրենց ընտրած ուղղության համաձայն: Առաջինը տիրող դասակարգերի, բուրժուազիայի, կղերապահպանողական տարրերի, հողատերերի, բյուրոկրատիայի և մանր բուրժուական մամուլի, իսկ երկրորդը՝ բանվորական ու աշխատավորական մամուլ:

Բանվորական մամուլը առայժմ թեև թույլ, բայց պրոլետարական դասակարգի զարգացման և կազմավորման հետ միասին ուժեղացնում է իր դիրքերը և հակադրում է իր պայքարի դասակարգային ուժը՝ ողջ բուրժուական մամուլին»[10]:

Այնքան էլ միամիտ չէր Չարենցը, ինչպես և մտավորականներից շատերը, որպեսզի Հիդրոկայանի դեպքից հետո չհասկանային կատարվածի էությունը, չճա-

[10] Պբ. 1923, 23 փետր., էջ 55:

նաչևին մասնակիցներին: Ներքին անկասելի մղումով անհրաժեշտ էր ինչ-ինչ եղանակներով, թերևս բեկորներով տեղ հասցնել ճշմարտությունը: Եվ ահա, հունիսի 28-ին Մոկչ նորից է անդրադառնում ֆուտուրիզմի հարցերին: Անկասկած բանաստեղծի պահանջով, քանի որ այդ տրամաբանությամբ էլ ֆուտուրիզմի շուրջը նշանաբանով նախ ներկայացված են իր բացատրությունները՝ երեք կետով, որոնցով արտաքնապես իբր պարզաբանվում են օրաթերթի հունիսի 26-ի «Ֆուտուրիզմը՝ որպես գրական ռեակցիա» հոդվածում «սպրդած... մի քանի փաստացի անճշտություններ»:

Եվ սակայն առերևույթ իրականում դրանք հիմնավոր՝ a'la մարքսիստական-սոցիոլոգիական պատասխան են իր երևանյան հակառակորդներին: Առաջին կետով հերքվում է «ծաղկաքաղի» մեղադրանքը. «... Հիշյալ հոդվածիս առաջին մասում... — գրում է Չարենցը,— ես խոսում եմ սիմվոլիզմի մասին և փորձում եմ վեր հանել գրական այդ ուղղության **հասարակական իմաստը**, այնինչ Բրյուսովի վերոհիշյալ հոդվածում սոցիոլոգիական անալիզը իսպառ բացակայում է, ինչպես և տված է իմ հոդվածում»:

Երկրորդ կետով փաստացի հերքվում են ոչ թե Հ. Լ.-ի, այլ ֆուտուրիզմին վերաբերող Կարինյանի տեսական կառույցները, այն էլ հենց նույն Լերսի գրքի Ա. Լունաչարսկու առաջաբանից քաղված վկայակոչումներով. «Հոդվածագիրը պնդում է, որ իբր թե Բրյուսովն է արել այն հայտարարությունը, թե ռուսական ֆուտուրիզմը ոչ մի առնչություն չունի իտալականին:

Այդ պնդումը առաջին անգամ արել է ոչ այլ ոք, քան ինքը՝ Ա. Վ. Լունաչարսկին: Լերսի... գրքույկի առաջաբանում Լունաչարսկին ասում է՝ «Մինչև վերջին ժամանակներս մարքսիստ քննադատների աչքին ռուսական ֆուտուրիզմը մի հատված էր իտալականի, այնինչ հարկավոր է ասել, որ նման տեսակետը սխալ է...».— կարճ ասած իր այդ առաջաբանում Լունաչարսկին միանում է Լերսի այն կարծիքին, որ ռուսական ֆուտուրիզմը իտալականից միանգամայն տարբեր հասարակական բովանդակություն ունեցող գրական հոսանք է, վերջին հաշվով մի տեսակ նեոնարոդնիկություն, որ բացատրվում է ռուսական տնտեսա-հասարակական ուրույն միջավայրով:

Մենք գիտենք, որ նախքան իր այդ առաջաբանը Լունաչարսկին միանգամայն հակառակ կարծիքներ է հայտնել նույն ռուսական ֆուտուրիզմի մասին, բայց դրա համար էլ պատասխանատու ենք, ոչ թե մենք, այլ ինքը՝ Ա. Վ. Լունաչարսկին»:

Երրորդ կտրուկ առարկությունն էլ սա է. «**Հարկադրված եմ ասել, որ ես ո՛չ մի անգամ գրական խմբակ չեմ ունեցել Հախումյանի հետ:** (ընդգծ.՝ Ալ. Զ.): Հալաբյանի — ճիշտ է՝ մենք միասին մտադիր էինք հրատարակել ֆուտուրո-կոնստրուկտիվիստական ժուռնալ «Ավանգարդ» անունով... Իսկ ինչ վերաբերում է նրան, որ Տիգրան Հախումյանը դասախոսություն է կարդացել իմ մասին և գրել է «Խ. Հ.»-ում ու «Պայքարում» — դրա համար պատասխանատու է ինքը Հախումյանը և վերոհիշյալ թերթերի խմբագրությունը»:

Իսկ վերջում այս բազմանշանակ ակորդն է, որ Չարենցի բացատրության կող-

քին նույնությամբ քաղել է Հ. Լ.–ն **«Թող չկարծվի սակայն,**— *գրում է բանաստեղծը,*— **որ ես այստեղ ուզում եմ իմ վրայից քերել Տիգրան Հախումյանի հետ «զինակից» լինելու անպատվությունը.** *(ընդգծ.՝ Ալ. Զ.)* **բնավ երբեք: Ես փաստն եմ միայն արձանագրում, ուրիշ ոչինչ: Տիգրան Հախումյանը հեռու է իմ պաշտպանած գրական տեսակետներից»** *(6, 95–97):*

Ուրեմն և տարակուսանքներից զտելով և շարունակելով հաստատելը՝ դառնանք Հ. Լ.–ի «Մեր պատասխանին», չերկարացնելու համար քաղելով այս շատ ուշագրավ վերջնամասը. «Կասկածից դուրս է ուրեմն,— գրում է Հ. Լ.–ն,— որ անցած ձմեռ Երևանում գոյություն են ունեցել ֆրոնտներ և **չատագիր կադետո–ֆուտուրո–«պրոլետարական» տեսաբան Շահիր Տիգրանը** *(ընդգծ.՝ Ալ. Զ.) ...որքան կարելի է դատել «Խորհրդային Հայաստանում» բարձրացած աղմուկից բավական ակտիվ մասնակցություն է ունեցել այդ գրական տուրնիրների մեջ»:*

Այնուհետև վերաքաղելով վերը արդեն քաղված ընդգծված տողերը,— բանաստեղծի պարզաբանումներին պատասխանողը եզրակացնում է. «Այս ասպետական հայտարարությունը (Չարենցի՝ Ալ. Զ.) գալիս է հաստատելու, որ մենք այնքան էլ հեռու չենք ճշմարտությունից:

Ուրեմն «խմբակ»՝ ոչ, զինակցությունը,— անպատվություն չէ: Նյուանսների խնդիր է»[11]:

Եթե համադրենք հունիսի 24–ից սկսած մեկը մյուսի հետևից Մոկչ տպագրված հոդվածներում Հախումյանին վերաբերող բնութագծերը, կստացվի մի **վարքագիր կամ վարքապատկեր,** *որի անվանումը... լավ է թողնենք սերունդներին: Ինչ վերաբերում է Հ. Լ.–ի ինքնությանը, ապա լրագրի էջերին երկար հետևելուց հետո, համոզված կարելի է ասել, որ նա այդ օրերի Թիֆլիսի Հայարտան խորհրդի եռանդուն գործիչներից, լրագրի խմբագրական կոլեգիայի անդամ* **Սուրեն Երզնկյանն է**[12]*:*

Արդեն 1918–1919–ից ծանոթ գրական գործիչ, որը տեղեկանալով Հիդրոկյանի դեպքին, անմիջապես ձեռնամուխ է լինում բանաստեղծի պաշտպանությանը: Քանի–քանի շապիկ փոխելով, առերևույթ նալին ու մեխին խփելով, քանի անգամ խաղաթղթեր խառնել–զատելով, ըստ հարկի մատնացույց անելով և տեղը դնելով մեղսագործին, փրկարարի ջանքերով համայնավար յուրյանց հավաքագրածների կողքին գրական միևնույն հարթակի վրա դնելով Չարենցին:

Սա, իհարկե, հարցի մի կողմն է:

Մյուս ամենակարևոր կողմն էլ Հիդրոկյանի դեպքին հաջորդած այդ հոդվածների հուշած, դրանց բովանդակությունից ու բնութագրերից բխող հետևությունն է. այն, որ 1923–ի հունվարից–հունիս բորբոքված գրական արշավանքը

---

[11] Հանգամանորեն տե՛ս նաև «Ֆուտուրիզմի շուրջը» պարզաբանումում և ծանոթագրություններում. Եժ 6, էջ 615–618:

[12] Խոստովանել է ինքը՝ Ս. Երզնկյանը, 1925–ին գրած մի հոդվածում. խոսք կլինի համապատասխան տեղում:

էապես քաղաքական ծրագրված դավ ու աՀաբեկչական սադրանք էր, նպատակն էր Ղարաբաղյան Հարցի քննության նախաշեմին կազմալուծել Հայ մտավորականությանը՝ նշանակետում Հանելով Չարենցին ու Սարյանին շարքից Հանելու։ Ըստ այդմ կարող ենք ասել, որ շարքից Հանելը նախապես ծրագրված է եղել Հենց «խեղդվելով» և Հենց Հունիսյան այդ օրերի գետի վարարելու «պատրվակով» և որ, երևի թե, ծրագրողները չեն էլ կասկածել, թե բանաստեղծը կարող է փրկվել։

Գրական մթնոլորտը՝ ինչպես միշտ քաղաքականության հայելի

Մեր օրերում արդեն անՀամար փաստերի ու վկայությունների թելադրանքով Հստակորեն գիտակցվում է, որ խորՀրդային պետական մեքենայության առանցքը, խարիսխը, Հիմքը եղել է **չեկայական ծառայությունը**։ *Մի դիվային Համալիր ցանցով, որով ներքին ամեն շարժում զուգակցվում էր արտաքինի Հետ՝ և Հակառակը։ 20-ական թվականներին առնչակցությունը անՀամեմատ թափանցիկ էր, և, 1923-ին ներսի Հայությունն ավելի էր տեղյակ դրսի Հայության անցուդարձին, քան Հետագայում։ Հետևաբար դրսի իրողությունները ևս անխուսափելիորեն խաչավորվել են ներսի իրողություններին, տվյալ դեպքում ինչպես Ղարաբաղյան Հարցի, այնպես էլ Չարենցի կյանքի օրերին։*

Բնական է, Լոզանի կոնֆերանսի ավարտին մոտ՝ Դաշնակցությունը պետք է որ Հավաքվեր ի մի բերելու և ծրագրելու անելիքները և, Հետաքրքիր է, Չարենցի Հետ պատաՀած դեպքը զուգադիպում է Վիեննայում Հրավիրված Դաշնակցության Համագումարին։ Այնքան որ Երևանից Թիֆլիս, Հիվանդանոց Հասնելու երկրորդ թե երրորդ օրը Հունիսի 26-ին Մակչ պետք է տեղեկացներ, որ Համագումարում Դաշնակցությունը բաժանվել է երկու «Հավասարազոր թևերի» և **թե Քաջազնունու և Զիլինգերյանի** *(ասել է՝ Ռուբեն Դարբինյանի)* **թևը գտնում է,** *որ «... ժամանակն է մի կողմ շպրտել սոցիալիստական փրազաբանությունը և մշակել նոր, զուտ ազգային ծրագիր... Պարզվում է, որ նրանք միշտ էլ սոցիալիզմը Համարել են վնասակար և անիրագործելի գաղափար»։ Մյուս թևը՝ Հակառակը. «... Նավասարդյանի գլխավորությամբ՝ պաշտպանում էր իր դիրքը, որ ընդունել է Վիեննայում 1907 թվին»։*

Կասկած չի կարող լինել, որ Չարենցը ուշի ուշով կարդացել է Հաղորդումը, և ցասումնախառն Համակրանքը եղել է առաջինների կողմը։ Դրա անՀերքելի ապացույցն է նույն 1923-ի ամռանը ստեղծված «Սնոուբն ամուսիններ կամ ինքնիրեն կոմունիզմ» կինոպոեմը՝ մտաՀղացման ու բովանդակության միասնությամբ, որի մասին խոսք կլինի առանձին։ Բայց Հունիսի վերջերին և Հուլիսի սկզբներին շատերի Հետ միասին Չարենցը նույնպես Հույսեր էր փայփայում, թե գոնե Ղարաբաղյան Հարցը կլուծվի Հօգուտ Հայության։ Հույսեր էր փայփայում և Ղարաբաղի Հայությունը, որպիսիք «օրորելու» մտադրությամբ Հունիսի 10-ին Թուլ-

լատրվում է հրատարակել «Ղարաբաղի գեղջուկ» օրաթերթը: Երևի թե Մտկչ էլ արտոնվում է արտատպել նյութեր այդ թերթից, և օրաթերթի հունիսի 29–ի թվում «Ղարաբաղ» խոշորատառ խորագրի տակ նույն օրը (ինչպես մենք այսօր), սրտի տրոփյունով Զարենցը կարդում է «Հարկավոր է ուշադրության առնել» վերնագրով և Շահեն ստորագրությամբ այս նյութը. «Դաշնակ–Մուսաֆաթ ավանտյուրան վերածեց ավերածության Շուշվա Վարանդայի գավառից 32 գյուղ: Նույնիսկ կարմիր զորքի մտնելուց հետո էլ, մի կողմից իներցիայով դեռ շարունակվող նացիոնալիզմը հայ և թուրք մասսաների միջև, մյուս կողմից պարբերաբար կրկնվող ավազակությունները դարձյալ հանգիստ չտվին գյուղացիությանը վերականգնելու իր քայքայված տնտեսությունը. տեղին է հիշատակել, որ 1920 թվականի երկրորդ կեսը ավազակները հափշտակել են մոտ 400 գլուխ անասուն, դա մի մեծ հարված էր առանց այն էլ թալանի ու ավերածության ենթարկված գյուղացիների համար, իսկ 1921–1922 թվականի սովն էլ վերոհիշյալ դեպքերից հետո հյուծման ենթարկեց գյուղացիությանը, նա ստիպված եղավ վաճառքի դուրս բերել իր վերջին ունեցածը ամենաչնչին գնով. բավական է ասել, որ ամենականոնավոր խալիչան ծախվում էր 10–20 փ. գարիով, ձին 1–1 և կես փ. գարիով և այլն: Այժմ էլ դրա հետևանքները դեռ պարզ երևում են. բավական է աչքի առաջ ունենալ հենց Նախիջևանիկ գյուղը, ուր մոտավորապես 200 տուն կա, այդտեղ դուք 10–15 տան մեջ կարող եք գտնել անկողին, իսկ մյուս տներում չկան. դեռ ուրիշ բաների մասին չեմ խոսում: 1921–1922 թվի սովի պատճառով սովամահության դեպքերը հասնում են ամբողջ ազգաբնակչության մոտ 5 տոկոսը, իսկ ուրիշ գյուղերում 10 տոկոս: Շատ հասկանալի է, որ նման պայմաններում անհնար պիտի լինի վերականգնել տնտեսությունը, վերաշինել ավերակ գյուղերը, եթե կառավարության կողմից շոշափելի աջակցություն չլինի: Հարկավոր է որոշ ժամանակ ազատել գյուղացիությանը հարկերից, բաց թողնել փոխադարձաբար որոշ վարկ և հնարավորություն տալ անտառից ձրիաբար փայտեղեն բերել գյուղերը վերաշինելու, հակառակ պարագայում նա անկարող պիտի լինի տնտեսությունը վերականգնել և ավերակ գյուղերը վերաշինել:

Աջակցությունը անհրաժեշտ է»[13]:

Հիդրոկայանում կատարված դեպքից հետո, իրավիճակն այնպիսին էր, որ «հավատարմության», ինչպես և Ղարաբաղյան հարցին օգնող ինչ–որ քայլեր պետք է աներ և ինքը, իհարկե, մտերիմների հորդորներով նույնպես: Եվ ֆուտուրիզմի շուրջը պարզաբանումից մի քանի օր անց Մտկչ վերջին էջում տպվում է «Անտանտին – Մենք» ագիտ չափածոն.

[13] Մտկչ, 1923–ի հունիսի 28–ի համարում հայտնվում էր, որ Շուշիում սկսել է լույս տեսնել «Ղարաբաղի գեղջուկ» թերթը՝ օրգան Ղարաբաղի կոմիտեի Շուշիի գավկոմի և գործկոմիտեների:

Անտա՛նտա,
Տե՛ս...
Ես կրկին երգում եմ քեզ–մահ:
Ոնց որ ոխ ցնդած բանվորի–
Զգո՞ւմ ես կամքը ճզմած
Ուրի... (3, 145) և այլն:

(Իսկապես ասած, իսկ ինչո՞ւ հայ բանաստեղծը Անտանտին չերգեր մահ...):

Տպվում է, երբ ընդամենը երկու օր էր մնացել հուլիսի 7–ի Կավբյուրոյին:

Այս հիմքով կարող ենք ասել, որ «Կոմպլմանախում» տեղ գտած այդ և մյուս մայիս–հունիսին գրված «Բոլոր պոետներին», «III Ինտերնացիոնալ – Р.К.П.», «Մարշ աշխարհա» ագիտկաները, ինչպես և «Ես և Իլյիչը» ագիտ–պոեմը թղթին է հանձնել ոչ միայն դրական հակառակորդներին լռեցնելու, այլ առաջին հերթին Ղարաբաղյան հարցի դրական լուծման հույսով ու սպասումով: Ասել է՝ այս պարագայում հարկ էր «տուրքը տալ», ըստ հարկի գովերգել համաշխարհային կոմունիզմ և III Ինտերնացիոնալ, և դա արվում էր իր անձն ապահովագրելուց առաջ՝ հանուն հարազատ ժողովրդի շահերի ու ապահովագրման: (Իսկ միամիտներս տասնամյակներ շարունակ պետք է հավատայինք, հավատալով նաև, թե հավատացել է Չարենցը): Այս առումով ուշագրավ փաստարկ է և այն, որ «Անտանտին–Մենքից» հետո Մակչ երկար ժամանակ ոչինչ չի տպվել Չարենցից: Եվ հակառակը դռները լայնորեն բացվում են Հ. Հակոբյանի, Ալազանի, Գ. Գրիգի, Ց. Դաստակյանի և այլ «գրաչար» բանաստեղծների առջև: Սա էլ իր հերթին թե՛ բնորոշ էր, թե՛ ըստ հարկի ճկուն քաղաքականության. Մակչ ցուցադրում էր, թե հայերը, ահա՛, ունեն նաև այդպիսի «պրոլետարական պոեզիա»: Հուլիսի 14–ին Հակոբյանին նվիրվում է թերթի առաջին էջը՝ մեծադիր նկարով և «Ո՞վ է և ո՞ւմն է ընկ. Հակոբյանը» հոդվածով: Միաժամանակ անընդմեջ տպվում են չափածո նմուշներ Ալազանից, որոնց օրինակով իսկ կարելի է տեսնել, թե որքան տիրական էր Չարենցի ազդեցությունը հենց մուրճականների անճարակ շրջանում, թե անընդմեջ վարկաբեկելով, ինչպես էին «պրոլետ բանաստեղծները» ընդօրինակում. բայց և որպիսի «որակով», ասենք, «Ամենապոեմ», ու «Պոեզոզուռնա» համեմատությամբ.

Աշխարհը անծիր՝ դարձել է մի հսկա ճախարակ,
ու չոքել բազկակուռ Մարյայի ծնկների մոտին,
Նստել էր Մարյան անվարան ու մանում բամբակ;
աչքերի բիբերում իր՝ փռած – Այրեցյալ գոտին:
Մանում է աշխույժ, բռնած ճախարակի կոթիցը– Մոսկով,
մանում է ու հետն էլ երգում է մարտակոչ ու կարմիր երգ...

Իսկ վերջում՝

Ջավակը սրանց՝ Վանյան – ժրաջան, ուշիմ կոմսոմոլ –
քանդել է, հարթել խարխուլ ժամերը, վանքը բոլոր,
ու շինել մի հսկա մայդան: Վար բերել Աստվածը,
դարձրել է գնդակ, պցել մայդանում ու խաղում... Ֆուդ... բոլ:

Հիշեցնենք, որ ոտանավորը տպվել է Մտկչ հուլիսի 11-ի այն համարում, որի առաջին էջում խոշորատառ **«Ինքնավար Ղարաբաղ»** *խորագրի ներքո զետեղված էր «Ադրբեջանի Կենտ. գործ. Կոմիտեի* **1923 թ. հուլիսի 7-ի դեկրետը Լեռնային Ղարաբաղը ինքնավար շրջան կազմելու մասին»**: *Ասել է թե... պետք էր որ դրան կից տպվեր և ռուս «ընտանիք» գովերգող վերը քաղված ոտանավորը. որն իր հերթին պետք է ունենար հենց այդ մակարդակը՝ նոր-նոր հաստատված անդրագիտության վերացում թեակոխած «հասարակական գիտակցության իրավիճակում»:*

Նույնը վերաբերում է և հուլիսի 25-ին օրաթերթում տպված «Պոեզոլուռնայից» օրինակված «Թիֆլիս! Թիֆլիս!» երկարավուն էջին.

Փուել ես թևերդ – մխոր
արևի գրկում, արև,
ու կանգնած ճամփեքի միջում,
կանչում ես ամենքին – «բարև!»...
Ա՛ռ, սիրտս էլ մի նոր տրամվայ –
երկաթե ռելսերից գցի՛ր
ու շունչը բարախուռն Նրա –
էլեքտրո – թոքերից կցիր...
Ու բացված, հզոր դարձած –
նորից դառնա Երևան,
կռնակին – մխոր դարձած
թոքերն էլ – աղմուկ հևուն:
Թող գնա՛, շնչի այնտեղ
թոքերով տրամվայ, գնաց.
ու հնչի ականջին ահեղ –
«Վե՛ր ելիր, Երևան քնած»:

Հնօրյա ժամանակներից «օրացուցային չափածոն» ուղեկցել է ինչպես հունաստառ, այնպես էլ լատինատառ... այնպես էլ հայատառ բանաստեղծության զարավոր ընթացքներին. հիշենք թեկուզ «Ա.ռ»-ով վերնագրվածները. և սակայն, այդպիսիք որպես կանոն հեղինակել են բանաստեղծներ. ինչպես, ասենք, Պետրոս Դուրյանը: Այժմ արդեն գրում էին բանվոր հարվածայիններ ու շարքային գրա-

մոլներ. այն էլ ասես, իրար մեջ բաժանած տիրապետության գոտիներով. Վըշտունին՝ արտաքին Արևելք, Ալազանը՝ ներքին – ժողովուրդների բարեկամություն և այլն:

Ուրեմն և հետաքրքիր է ու բնութագրական. եթե մտաբերենք, որ փաստացի թե՛ Վշտունին, թե՛ Արոլը ֆուտուրիզմը որդեգրել են ավելի վաղ, քան Չարենցը, ապա պետք է արձանագրենք, 1922–1923–1924 թթ. ֆուտուրիզմի դեմ հայտարարված պաշտոնական և ոչ պաշտոնական պատերազմը իրականում ու էապես պայքար էր նույն ֆուտուրիստական պոետիկայի ավանգարդական–ոճային պայմաններում՝ ապաշնորհ, պարզունակ չքանաստեղծների և պատմական պայմանների թելադրանքով ֆուտուրիզմին հարած ճշմարիտ բանաստեղծների՝ **Մայակովսկու և Չարենցի դեմ ու միջև...**

Այսպիսով այդ պայքարի էությունը ամեն ինչից առաջ հանգում է բովանդակության, «ինչ»-ին: Չէր հանդուրժվում **Մայակովսկու ու Չարենցի հզորաշունչ քննադատական «ի՛նչը»:** Այս ոգով էլ **բունապետական կոչով ու հովանավորությամբ խրախուսվում–հովանավորվում է Գ. Հայկունու հիմնադրած «գրական պայքարը» հայ իրականության մեջ՝ Վ. Տերյանին հաջորդած զոհերով: Կասկած չունենք, որ Չարենցը ճշգրիտ գիտեր այդ ամենը, որի ապացույցները դժվար չէր որսալ համեմատելով հուլիսի 7-ից առաջ և Ղարաբաղյան հարցի տապալվելուց հետո գրած նմանատիպ ագիտ գործերը. որոշակի սահմանագծով՝ պարզորոշ գծագրված «Կոմալմանախում»:**

1923-ի օգոստոսի 28-ին Պք՝ «Եղիշե Չարենցի նոր ժողովածուն» խորագրի տակ տեղեկացնում էր. «Մինչև ամսիս 30-ը Երևանում լույս կտեսնի **Եղիշե Չարենցի վերջին** ամիսների ընթացքում Թիֆլիսում գրած **«Կոմալմանախ»** ժողովածուն, որի մեջ մտնում են հետևյալ պոեմներն ու բանաստեղծությունները. 1) Բոլոր պոետներին, 2) III Ինտերնացիոնալ – Р.К.П., 3) Անտառային–Մենք, 4) Սոռուզեն ամուսինները, կամ ինքնիրեն կոմունիզմ (կինոլենտ), 6) Ես և Իլյիչը (Մի կոլեկտիվ իմ ճանապարհորդությունից՝ կատարված Ուելսի ժամանակի մեքենայով դեպի 2500 թվականը), 7) Մարշ աշխարհա. **«Պայքարի»** սույն համարում տպված «III Ինտերնացիոնալ – Р.К.П.» բանաստեղծությունը վերցված է այդ ժողովածուից»[14]:

Հակված եմ կարծելու, որ տեղեկությունը տրվել է ուրիշի հաղորդածով, առանց բանաստեղծի գիտության՝ Հիդրոկայանի դեպքից հետո, թեև ուշացումով, հասարակայնությանը հանգստացնելու, տարածված վարկածները մեղմացնելու կամ ցրելու միտումով: Իրականում «Կոմալմանախը» Երևանում լույս չտեսավ, հրատարակվեց ամիսներ անց, 1924-ի փետրվարին Մոսկվայում՝ հենց վերը տրված սահմանագծային փոփոխությամբ. «Սոռուզեն ամուսիններ, կամ ինքնիրեն

[14] Պք, 28 օգոստոսի, էջ 20: Ծանուցման մեջ, ինչպես տեսնում ենք, 5-րդ կետ չկա:

կոմունիզմը» փոխարինվեց Լոզանի կոնֆերանսին վերաբերող լրագրական–օրացուցային տեղեկատվության մոտիվներով հյուսված **«Տիրապետողների դեմքը» «սատիր ագիտով»:** *«Կապկազ» թամաշային հաջորդած, հանուն ստնահարվող հայրենիքի փոխհատուցման–փոխվրեժխնդրության կրքոտ բանադրանքով հագեցած մի գործ ուղղված ոչ միայն էս–էս–էս–էռիայի, այլև աշխարհի մյուս հզորների դեմ. տեղադրված դրանից առաջ գրքում տեղ գտած Լենինի մահվան առթիվ գրված հանրահայտ «Լենին» «հավատարմագրական», բայց և սահմանագծային բանաստեղծությունից հետո:*

Ուրեմն և հերթականորեն դառնանք նախ «Կապկազին», ապա պատմական և ոչ պատմական հաջորդական այլ իրողությունների հետ ընթացող բանաստեղծի կյանքի դրվագներին ու ստեղծագործությանը «Սնոուդեն ամուսիններ, կամ ինքնիրեն կոմունիզմից» հետո էլ այդ «սատիր ագիտին»:

«ԿԱՊԿԱԶ»... ԹԱՄԱՇԱ՞... ԹԵ՞ ԲԱՆԱԴՐԱՆՔ

Եվ այսպես. ինչպես 1921-ի, այնպես էլ 1923-ի հուլիսյան տագնապալի օրերին Չարենցը կրկին գտնվում էր Թիֆլիսում՝ ղարաբաղյան հարցի էպիկենտրոնում:

1921-ին այրվում-դալարվում էր Լեյլիի հարկի տակ, այդ հայրենասեր հայուհու ալբոմում արձանագրելով մկրատվող հայրենիքին ձոնած յոթը բալլադը, ի հավելումն լրացնելով մոլեգնորեն գրված ու ջնջված «Մեռյալին (Հրաժեշտի բալլադը)»: 1923-ի օրերին արդեն Արփենիկի և բժիշկ Խախանյանի հոգացությամբ, մտերիմ-բարեկամների շուրջօրյա ուշադրությամբ,— պառկած էր «Զակկրայկոմի կուսակցական տանը»՝ բազմապատիկ տառապանքով ու գալարումներով, որքանով անչափ քստմնելի ու հուդայական էր դավը. և հոգեկանին գումարվել էին ջարդված մարմնի ու ոտքի ցավերը: Այնքան որ, նախնական բուժման համար պահանջվեց երեք ամիս, բայց և մնաց թեթևակի կաղությունը, որը՝ **ի հիշատակ «Ղարաբաղյան մաքառման», իր հետ անմռունչ տարավ չունեցած գերեզման...**

Բայց այդուհանդերձ՝ թե՛ իր, թե՛ հարազատ ժողովրդի բախտն այդպես բերել էր. հրաշքով փրկվել էր Հիդրոկայանում խեղդվելուց,— և կոտրտված-ջարդված բողոքի ու ցասման ողանջներով կարողացավ ստեղծագործորեն ծառանալ և հենց հուլիսյան օրերին հոգեկան-մարմնական-նյարդային ուժերի պրկումով թղթին հանձնեց «Կապկազ» թամաշան[1]: Հուլիսի 7-ից հետո՝ տառացիորեն կայծակնային արագությամբ, քանի որ հուլիսի 19-ին ավելացվում էր, թե «Կապկազը» շուտով լույս կտեսնի. իսկ հուլիսի 29-ին արդեն լույս էր տեսել Կ. Հալաբյանի կատարյալ ձևավորումով: Կատարյալ, այլև խոսուն ու մեկնության կարոտ՝ տառացիորեն թե՛ շեշտադրումներով, թե՛ մանրամասներով: Այսպես. շապիկի վերևից «Չարենց» անվան կիսասև-կիսասպիտակ գլխատառերը կիսապառկած են. կիսված-մկրատված է թանձր սևատառ «Կապ-կազ» խորագիրը, և թերևս, առաջին անգամ հայոց գրքի տպագրության մեջ 19-23 ձևով ու չեշտվածությամբ հրատարակության տարեթիվը բարձրացել ու տեղ է գրավել գրքի խորագրի կիսված կազի-ի կողքին[2]: Իսկ ներսում, հենց մուտքի ամբողջովին ճերմակ մեծադիր մի էջի վրա խորագրի **նույն թանձր սևով՝ ողջ հասակով**

---

[1] Եժ 3-րդ հատորի ծանոթագրություններում նշված թամաշայի գրության տեղն ու ամիսները՝ «հավանաբար գարնան ամիսներին», կոպիտ սխալ է. ճիշտը հուլիսին նշված օրերն են, վայրը՝ Թիֆլիս:

Շապիկի վերջին էջի վրա խոշոր տառերով դրոշմված է՝ «Շապիկը Կարո Հալաբյանի. հրատարակությունը՝ «Թիֆլիս, տպարան՝ Պուշկինյան 3, գինը՝ 75 կոպեկ չերվոնեցով»:

[2] Սա նշանակում է, թե Ա. Խանջյանի սպանության եղելություն մարմնավորող «9. VII. 1936» խորագրով հյուսված բանաստեղծությունը Չարենցի ստեղծագործական կյանքում ուներ նախադեպ, և դա 19-23 տարեթիվն է «անբառ» հուշած բովանդակությամբ «Կապ-կազ» խորագրի կողքին: Ահա՛, այդ բանաստեղծությունը.

ոտքից գլուխ սևացյալ վտիտ, նետանման պրկված Չարենցի ստվերապատկերն է՝ Հարազատ ժողովրդի ճակատագրի ու գոյավիճակի խորհրդանիշը:

Քաղաքացիական–գնդարվեստական բացարձակ համախոհությամբ իրացված ստեղծագործական սխրանք, որ հավասարապես պատիվ է բերում թե՛ Չարենցին, թե՛ Հալաբյանին:

Չարենցագիտությունը Թամաշայում նկատել է ինչ–որ չափի «ուրույն պրիմիտիվություն»[1]: Իզո՞ւր: Հաշվի չի առնվել Թամաշայի իր ժամանակի հասարակական հասցեն, այն բուն ժողովրդի լայն խավերն են՝ ժամանակի դրադիտա–կրթական մակարդակով: Բանաստեղծը խնդիր ուներ ասել ժողովրդին ճշմարտությունը, տեղ հասցնել նրա հետ կատարված–կատարվելիք անարդարությունները, որին և Թամաշան լիովին համապատասխանում է՝ հղացումով, ժանրային–համակարգային, լեզվաոճական բոլոր համամասնություններով: Գրել է մոլեգին ծառացումով Կավբյուրոյի հուլիսի 7–ի և Ադրբեջանի կառավարական շրջանակով վերը քաղված հայաշատ թխված դեկրետի դեմ «Ինքնավար Ղարաբաղ» վերտառությամբ և Ադրբեջանի կենտ. գործ. կոմիտեի 1923 թ. հուլիսի 7–ի դեկրետը Լեռնային Ղարաբաղի ինքնավար շրջան կազմելու մասին» ծանուցումով:

Ուրեմն ներկայացնենք դեկրետը. ըստ կարգի այն բաղկացած է նախ 1905–1906 թթ. ցարիզմի հայերի ու թուրքերի միջև սերմանած թշնամությունից, նույն ոգով շարունակվող հաշտարար քարոզչական հատվածով, ըստ որի թշնամությունը՝ «... ավելի աչքի ընկավ, երբ Անդրկովկասը բաժանվեց երեք ինքնուրույն պետությունների, որոնց ղեկավարությունն անցավ արևմտյան կապիտալի մի խումբ լաքեյների–ազգայնական–շովինիստ–մուսաֆաթիստների, դաշնակների և մենշևիկների ձեռքը, որոնք առաջին հերթին նպատակ դրեցին տիրող լինել ազգային փոքրամասնությունների վրա:

Այդ պետությունների գոյության կարճ ժամանակամիջոցում աշխատավոր գյուղացիության ահագին չափով արյուն թափվեց Ղարաբաղի լեռներում և Անդրկովկասի մյուս մասերում: Միայն բանվորա–գյուղացիական հեղափոխությունն ու խորհրդային իշխանությունն իրենց ամենահիմնական խնդիրներից

---

9. VII. 1936
...Կարծես թե միայն իննից հուլիսի,
Այդ քստմնելի օրվանից է, որ
Իմ գրած ամեն մի տառատող
Իր նյութի, իր ողջ իմաստի մասին,
Իբրև դրվագող կամ նշավակող,
Կարդալուց առաջ անբառ ավետող
Մի չոր թվական սկսեց կրել...
Եվ վերնագրերն այդ անբառ, անանուն
Դարձան մահվան պես ահեղ ու անհուն (Անտիպ և ..., էջ 131):

Բայց մի՞թե 1915–ից սկսած բոլոր թվերը չեն «մահվան պես ահեղ ու անհուն» Չարենցի ստեղծագործության մեջ:

[1] Ս. Աղաբաբյան, Եղիշե Չարենց, հ. 1, 1973, էջ 342:

մեկը համարեցին վերացնել ազգային ճնշումն ու անհավասարությունը ինչ ձևով էլ երևան գար նա, և ազգային թշնամության ու ատելության փոխարեն հաստատել աշխատավոր ժողովուրդների միջազգային համերաշխություն, եղբայրական համագործակցություն միասնական պետական միության գրկում:

Այդ խնդիրն իրագործելու համար խորհուրդների Ադրբեջանյան կենտրոնական կոմիտեն որոշեց.

1. Լեռնային Ղարաբաղի հայկական մասից կազմել մի ինքնավար շրջան, Խանքենդի կենտրոնով, որպես Խորհրդային Ադրբեջանի բաղկացուցիչ մաս:

2. Ինքնավար շրջանի կառավարող մարմիններն են — շրջանային գործադիր կոմիտեն և տեղական խորհուրդները:

3. Մինչև շրջանային գործադիր կոմիտեի կազմելը ստեղծել ժամանակավոր հեղափոխական կոմիտե, որին պարտադրել ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գումարել խորհուրդների համագումար՝ մշտական գործադիր մարմին ընտրելու համար:

Ծանոթ. — Բոլոր արոտատեղերը, անտառները, այգիները և հողի ու ջրի փաստական տիրապետությունը մնում են ներկա տերերի ձեռքին:

4. Շրջանային կոմիտեն բոլոր անհրաժեշտ ֆինանսական և տեխնիկական միջոցներն ստանում է Խորհրդային Ադրբեջանի ընդհանուր միջոցներից՝ Ադրբեջանի կենտրոնական գործադիր կոմիտեի անմիջական կարգադրությամբ:

5. Շրջանի կանոնադրությունը մշակելու, վարչական միությունները Ղարաբաղի ինքնավար շրջանին հանձնելու, այլև ինքնավար շրջանի սահմանները որոշելու համար ստեղծել խառը հանձնաժողով, որի մեջ կմտնեն Լեռնային Ղարաբաղի, Քյուրդիստանի և Խորհրդային Ադրբեջանի իշխանության ներկայացուցիչները: Հանձնաժողովի վրա պարտք է դրվում վերջացնել իր աշխատանքները մինչև սույն թվի օգոստոսի 15-ը»:

Դրա տակ էլ Ս. Խ. (Սարգիս Խանոյան) ստորագրությամբ զետեղված էր «Ա.Հա՛ և գործը» ծանծաղ-երերուն կարճառոտ մի խոսք, որով նաև ասվում էր. «Մեզ մոտ հարցերը լուծվում են ոչ թե արյունով, զենք ու զրահով, այլ ընկերների փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով նպատակահարմարության տեսակետից:

Ու Ղարաբաղը այսօր ստանում է իր ավտոնոմիան, ոչ թե գյուղեր լքելով, կամ Շուշին քանդելով,— այլ ընդհակառակը այդ ավերված երկիրը վերաշինելու պայմանով»[1]:

Եվ ահա, ըստ այդ որոշումների ոգու ու տառի ստալինյան «Նպատակահարմարության տեսակետից» դեկրետավորված ինքնավարությունը՝ Անդրֆեդերացիայի, ինչպես և ադրբեջանական ու վրաց մամուլը տարբեր-տարբեր գործիչների խոսք ու նյութով թմբկահարվում էր որպես «արդար բարեգործություն», որպես պարգև Ղարաբաղի հայությանը: Եվ մեծամասնական «ինտերնացիոնա-

[1] Մոկչ, 1923, 11 հուլիսի:

լիստական» հերթական այս անհեթեթությունները պարտադրվում էր կրկնել հայ ժողովրդին ու մտավորականությանը: Բանաստեղծի գերխնդիրն էր ինչ էլ լինի, ինչ միջոցներով էլ լինի ժողովրդին հասցնել ճշմարտությունը, այլև բողոքի ու ծառացման հուշագիր թողնել սերունդներին: Թե չէ ի՞նչ կմտածեն...

Ստացվում է արտաքնապես թամաշայորեն թեթև–անբռնազբոս «Կապկազը»: Իրոք. ստեղծագործական սխրանք. ո՛չ միայն համարձակությամբ[5]:

Մեր օրերում նյարդերի ինչ–որ չափի լարումով ստեղծված երկերի (այլև արվեստի գործերի) որակավորման համար առանձնացվում է նյարդացավային–նյարդագարային կոչվող ուրույն տարատեսակ: Բայց, եկե՛ք տեսնենք, թե ինչ տարատեսակ պետք է սահմանենք 1920–1923–ի սարսափային–տագնապալի դաժան ժամանակներում ստեղծված **Դեմիրճյանի «Քաջ Նազարի» և Չարենցի «Կապկազի» համար.** եթե հատկապես գիտենք, թե որքան նյարդային անձնավորություն էին թե՛ մեկը, թե՛ մյուսը: Տվյալ դեպքում 15–16 տարեկանից տևականորեն պատերազմական հարանուչն վիճակ ապրող–վերապրող, այժմ էլ ֆիզիկապես ջարդված–խոշտանգված Չարենցը: Պարզապես կարելի է պայթել, թե հանուն տանջահար, ցավերի մեջ տապակվող հարազատ ժողովրդի այդ ինչ ուժով են կարողացել սանձել քրքրված նյարդերը: Անթեղել ամեն անձնական–նե-

---

[5] Հայտնապես Չարենցը՝ Դեմիրճյանի հետ միասին հիմնավորապես գիտեին–տիրապետում էին ժողովրդական թատրոնի տարատեսակներից հնօրյա «Ղարագյոզի»՝ ասել է ստվերների թատրոնի օրենքները: Ըստ այդմ տեղն է վերաքաղել «Կապկազի» ժանրային էության ու բնույթին մերձեցող որոշ յուրօրինակություններ: Ինչպես ստվերային թատրոնի՝ «... մտածելակերպի համաձայն տիկնիկներն ու նրանց ստվերները նման են մարդկանց ու կենդանիներին ոչ միայն արտաքինով, այլև բնավորությամբ, շարժ ու ձևով, մտածողությամբ, ձայնով ու գործերով: Հետևաբար, մեռածները կարող էին իրենց հոգիների միջոցով երևալ մարդկանց, պատմել իրենց գործերից ու ցանկություններից»:

Եվ ապա. «... եթե որևէ ժողովուրդ փոխ է առել հարևանից, ապա սոսկ այն պատճառով, որ ինքը ևս օրգանապես ընդունել է այդ թատրոնի հետ կապված մտածողությունը»:

Այնուհետև. «... ներկայացման գլխավոր հերոսը՝ «Ղարագյոզը», մեռնող ու հարություն առնող ալամարդկային աստվածության մնացորդ է, որը՝ հեռանալով ծիսական նշանակությունից, գռեհկացվել է և ենթարկվել արտաքին փոփոխությունների: Ուսումնասիրությունները, սակայն, բացահայտում և հաստատում են ներկայացման պաշտամունքային ակունքները:

«Ղարագյոզ» ստվերների թատրոնը հայ իրականության մեջ մեծ տեղ գտած և կարևոր նշանակություն ստացած ժողովրդական–պրոֆեսիոնալ թատրոն է, որում արտահայտվում են ժողովրդական մտածողության ու թատերական ավանդները». տե՛ս Ժ. Խաչատրյան, Ղարագյոզ (Ստվերային թատրոն), Հայ ազգագրություն և բանահյուսություն, գ. 7, 1975, էջ 107, 110:

Նշվում է, որ «Ղարագյոզը» տարածված է եղել Ջավախքում ու Գյումրիում (ասել է հարևանությամբ Արդվինին ու Կարսին), ժանրի սահմաններում առանձնակի ուշադրության է արժանանում հնդիկ Բաժլիլի տոնը՝ հանդիսավոր օրերին ու հարսանիքներում:

Եվ սակայն «Կապկազի» դեպքում հետաքրքիր է ծիսականին փոխարինելու եկած ծանակային–թամաշայական փոխակերպությունը, որ նույնությամբ վերարերում է գործող «ստվերային» անձանց շարժ ու ձևին, մտածողությանն ու գործելակերպին, ցանկություններին, այլև՝ «իրենց հոգիների միջոցով» «մարդկանց երևալու» հասարակական բովանդակությանը:

Արդ. ոչ միգ, այլ իրեն հայտնի նման նորարարությունների առումով էլ բանաստեղծը արժևորել–գնահատել է «Կապկազը»:

ռանձնականը և ստեղծել մի «սովորական» հրապարակային թամաշայի տեսք առած, քաղաքական փարս կամ պամֆլետ, որը նշանակում էր բզկտված–բզկտվող ժողովրդի հետ խոսել ոչ թե ողբ ու կականով, այլև գործող անձանց արարքներին արձագանքող՝ բեմից հանդիսատես փոխադարձվող ծաղր ու ծանակով, ծիծաղ–քրքիջով, և հենց դրանով էլ նշավակել ու խոցել **Հայոց պարտությունը վայելող մոտիկ ու հեռու թշնամիներին:**

Ըստ այդմ, ուզենք–չուզենք, երկլի իր ժամանակի հնչեղության դիտակետից «ուրույն պրիմիտիվության» կողքին պետք է որ հաշվի առնենք **«Կապկազի» առաջին բեմադրող և Ղարայի դերակատար Վահրամ Փափազյանի գնահատականը.** *«Եղիշեն գրել էր մի փոքրիկ թատերգություն, ավելի շուտ մի քաղաքական պամֆլետ, որի կարճ տողերում ու փոքրաթիվ էջերում կարողացել էր ամփոփել իր ժամանակի շունչը, երբեմն հասնելով նույնիսկ Արիստոֆանի ամե՛ն ինչ ձաղկող հումորին, ամե՛ն ինչ բուժող Ռաբլեի ծիծաղին, ամե՛ն դիմակ պատռող Դանթեի ակնարկին...»*[6]:

Միանգամից եռաստիճան–եռասայրի երգիծանք՝ ձաղկող հեգնանք, բանադրող ծաղր, դիմակներ պատռող մերկացում,– որին բանաստեղծը հասնում է ամեն կողմից, **ամեն կարգի սպառնալիքներով վարկաբեկվող–արգելվող ֆուտուրիստական արտահայտչական օրենքներով:** *Փափազյանի նշած կարճ ու հատած տողերով ու տողադարձումներով, ռիթմական տեղաշարժերով. հասարակ–առօրեական բառ ու բանով, կետադրական համապատասխան նշադրում–նշանակետերով մատուցել այսպիսի ճշմարտություններ.*

...Ջխենկելին Պոլիս գնաց
Ծախեց Բա՛– թումը:
Է՛լի՝ Կա՛ր – ճիկյա՛ն,
Էդ ուր գը–նում ես
Կարսը տվիր, ձեռքիդ մնաց
Լխկած դը–դումը... (կրկնվում է):

Գեդեչկորին սոցիալի՛ստ է,
Ջխենկելին – բո՛զ,
Ժողովրդին էս երկուսը
Ծախեցին անփող... (3, 80):

Կամ՝

Ռուսեթում հեղափոխությունը քնեց
Լեռ էր. մուկ ծնեց,

[6] Վ. Փափազյան, Հետադարձ հայացք, գ. 2, 1957, էջ 57:

Մեռավ...
Էս խոսքերի վրա
Քիչ էր մնում գոռամ՝
Յաշասըն, Գեգեչկորի, ուռռա՛ա՛... (3, 91):

Կամ էլ այն տեսարանը, որով ներկայացվում է ռուսական զորքերի հեռանալը կովկասյան ճակատից. նախ այս՝

«Էստեղ դաշնակը.
Հայրենակիցնե՛ր:
Սո՛ւտ է:
Առաջ դեռ հալա Թուրքին քշենք Իզմիր –
Հետո,
Կամաց-կամաց,
Թե կուզեք-կհասնենք սոցիալիզմի:

Ապա հաջորդ նշագրումը. «Էստեղ դրսից աղմուկ: Գալիս է զինվորի ձենը՝ գիլ, ոնց որ ձին քամու. (ընդգծ.՝ Ալ. Ջ.)

Տավարիչչի՛:
Էլ չե՛մ ուզում կռվեմ:
Դալո՛յ-դալո՛յ-դալո՛յ:
                Ձայներ
Ո՞նց թե;
                Ձայներ:
Ընչի՞...
                Ձայներ:
Լա-իլ-լահ-ուլ-Ալլահ:
Արձագանք:
Հայ-հո՛ւ-ո՛ւ-ո՛ւ...
                Զինվոր:
Ամեն ազգ ինքն է տեր
Հիմա իր բախտի... (3, 72, 73):

Դժվար չէ որսալ ու տեսնել, թե որպիսի հմտությամբ է մատուցվում հեղափոխության վերասերվելը. («... Լեռ էր. մուկ ծնեց, Մեռավ...»)[1], Գեգեչկորի + Թոփչիբաշև միակամ շահախնդրությունը ի վնաս հայ ժողովրդի, երկարաձգվող որպի-

---

[1] Ընդհատակյա ձայնակցությամբ 1921-ին հյուսված «Քամին» բանաստեղծության բովանդակությանը:

սի «Լա–իլ–լահ–ուլ–Ալլահ» գոհունակությամբ, ինչպես են ծաղկվում Դաշնակցության սոցիալիստական հովերը, որոնցից հենց նույն «Կապկապը» ստեղծելու օրերին Դաշնակցության Վիեննայի համագումարում պետք է որ վճռականորեն հրաժարվեր ոչ այլ ոք, քան ինքը Հ. Քաջազնունին – Ռ. Դարբինյանի հետ միասին:

Ի վերջո, տեսեք, թե որպիսի տարողություն ունեն բառերը, բառակապակցությունները, որքան մտածված–իմաստավորված է դրանց հաջորդականությունը, տեղաշարժը, շաղկապվածությունն ու զուգորդականությունը: Նույնը և ավելին վերաբերում է Թամաշայի նյութի ընտրությանը. դրվագային յուրատեսակ մոնտաժ 1918–ի Անդրկովկասյան սեյմի գործընթացներից, որպիսիք բեմական պայմանականություններով, խորհրդանշային երկդիմի–երկիմաստ–բազմիմաստ վերափոխություններով միաժամանակ վերակերպվում են ընթացիկ իրողության՝ անմիջականորեն արձագանքելով 1920–1923–ի Հայոց պահանջատիրության ազօրինի–ապօրեն ժխտմանը: Ակնհայտորեն 1921–ի հուլիսի 5–ի Կավբյուրոյի նիստին վերաբերող **Մյասնիկյանի հայտնի** հայտարարության առաղձով ու երես–առատության միտվածությամբ. այն է՝ **«Եթե բնութագրելու լինենք Կավբյուրոյի վերջին խորհրդակցությունը, ապա կարծես թե, այնտեղ նստած էին Ահարոնյանը, Թոփչիբաշևը և Չխենկելին: Այսպես, Ադրբեջանն ասում էր, որ՝ եթե Հայաստանը Ղարաբաղը պահանջի, ապա նավթ չենք տա»**[8]:

Հիշարժան է, որ Թամաշայում ազգայնական համերաշխ նկրտումներով գործում են թե՛ Չխենկելին ու Գեգեչկորին միասին և թե՛ Թոփչիբաշևը: Բացակայում է Ահարոնյանը, որի փոխարեն հայոց ազգայնականությունը ներկայացնում են մեկ սեյմի իրական ֆինանսների մինիստր Խ. Կարճիկյանը, մերթ էլ պարզապես Դաշնակ. ամեն գեպքում մոտիկ ու հեռու իրադարձությունների, դավ ու խարդավանքների հորձանուտ ընկածի վիճակով: Բնութագրելով իրական–պատմական այդ գործող անձանց, Ս. Աղաբաբյանը նկատում է. «Արտահայտչական այլևայլ միջոցներից «Կապկապում» գերակշռում է Թամաշայի «հերոսների» ինքնամերկացման–ինքնաձաղկման եղանակը: Թե՛ Գեգեչկորին, որ սիրում է ներկայանալ իբրև սոցիալիստական լիդեր, թե՛ սրանց հետևից ստվերի պես քարշ եկող Կարճիկյանը, թե՛ Թամաշայի մյուս պերսոնաժները...»[9]: Դիպուկ բնութագրություն՝ Կարճիկյանին ու Դաշնակին վերաբերող նրանցային կարևոր վերապահումով: Բանն այն է, որ համառոտ հարցումներով կամ համակերպվող արձագանքներով Զարյանը գրոտեսկորեն կերպարանավորել է տնտհարված–ձախողված ժողովրդի նրանց ձաղկվածությունն ու չվարածությունը, և սա Թամաշայի կարևոր նրբություններից մեկն է: Անդրկովկասյան ազգայնամոլները իրենց հայադավ նպատակներին հասնելու համար Դաշնակցության շուրջը ստեղծել էին **աշխարհատիրական ինչ–ինչ լեգենդներ**, և Զարյանը դիպուկ կրակում էր նաև այդ ուղղությամբ: Եվ դրանով ևս բացահայտորեն արձագանքում էր

---

[8] Нагорный Карабах (Историческая справка), 1988, с. 33

[9] Ս. Աղաբաբյան, նշվ. աշխ., էջ 341–342:

1923–ի իրողությունների, այդ թվում Թամաշայի սկզբում և վերջում հնչող «Ինտերնացիոնալի» երգեցողությանը[10], որով և ի մի է բերվում «Կապկազի» միասնական գաղափարը, իմաստների իմաստը. ըստ որի ոչինչ չի փոխվել 1918–ի սեյմի հայադավ քաղաքականությունից, ինտերնացիոնալիզմի քողով Անդրֆեդերացիա կոչվածում շարունակվում է նույնը, թերևս, ավելին:

Նույնքան խորիմաստ են և Թամաշայի մյուս խորհրդանիշ–պայմանականությունները: Նախ դատարկ, առանց որևէ դեկորի բեմ և «Մենակ մի զանգ վերից քաշ է տված թոկով» (3, 65), որը ինչ–որ տեղ զուգորդվում էր Թամաշան վարող Ղարայի նախերգային խոսքում մտաբերվող «Ջրասույզ զանգին», ամեն պարագայում խորհրդանշելով ահազանգ՝ չհնչող–հրատապ ահազանգ: Եվ ապա նույն բեմում իբրև ժամանակի պայմանաձև՝

> ...Դեմը մեկ էլ – մի չարխ,
> Որ դառնում է հաճախ.
> Փոխում է գույնը՝
> Սև է... (3, 65):

Ապա սևին հաջորդում են ալաճա, կապույտ, դեղին՝

> ...Դեպի աջ շուռ գա՝ կդառնա ճերմակ,
> Դեպի ձախ – կարմիր.
> Մե խոսքով՝ շուռ գալն է չարխի –
> Մեկ է թե շուռ գալն աշխարքի...
> Աշխարքում – երկու ռանգ կա միշտ.
> Մեկը –
> Նրանցը –
> Բոզ, կապույտ, դեղին, ալաճա, գիննեռանգ կամ սև.
> Մե՛կ է:–
> Մերը – կարմիր.
> Հասարա՞կ է:
> Ըլի՛ հասարակ:
> Աշխարքն էլ էսպես է միշտ էղե:
> Ի՞նչ.
> Ուրի՞շ մասալա եք ձեզ արած.

[10] *Նկատենք. «Ինտերնացիոնալի» իր վեհաշուք թարգմանությամբ Չարենցը նաև ձեռնոց է նետում Պր ապրիլի 15–ի թիվ 5–ում զետեղված օրհներգի, մեղմ ասած, ոչ այնքան հաջողված թարգմանությանը, որի վերաբերյալ տեղեկացվում էր. «Խմբագրությունը տպագրում է «Ինտերնացիոնալի» նոր թարգմանության (ֆրանսերենից) փորձ և առաջարկում ընկերներին և թարգմանիչներին արտահայտել իրենց կարծիքը գոյություն ունեցող թարգմանությունների մասին» (էջ 104): Այդ ձախողված թարգմանիչը, ամենայն հավանականությամբ Կ. Զարյանն էր:*

Սո՛ւտ է:
Ձեր դլուխն են եղե:
Մենք հիմա չանց կտանք խալխին
Էդ բոլոր խաղերը լկտի… (3, 65-66):

Թամաշան և չարխը վարող Ղարայի բերանով հրովարտակվում է հարաղատ ժողովրդի արնակարմիր բախտը («Մերը – կարմիր»). ըստ այդմ՝ «… Թադավոր Կոլին» Թախտից Թռցնելու օրից ցուցադրվում են սեյմի և ոչ սեյմի «… բոլոր խաղերը լկտի»՝ ի հերքումն «սուտ … ուրիշ մասալայի», որով «յուղել են խալխի»՝ հանդիսատես ժողովրդի դլուխը: Եվ հերքման ցուցադրող–վարողն է Ղարա–ն, Թամաշայի «Կապ–կազ» խորագրի հանդով կիսված–վանկավորված Ղարա–ն, որը այդ պահանջատիրության ցավով տառապող, ծառացողի հոգում լրացվում էր – բաղ–ով, վանկարկվում… Ղարա–բաղ…

Իսկապես ասած, դունային եմական պայմանաձևերը Թաքցնում են նրբիմաստային հենք, ծավալելու հետաքրքիր կարելիություններ. ներն մոխրադույնի ժողովրդական տարբերակ «բողը» հավելյալ հիշեցում է «Զինենկելին–բող» ներլեկի, ապա քաղված հատվածներում կապույտի կողքին շրջադայող Ալաճան հուշարար է պատմական մեծածավալ իրողությունների. Թուրքական Մուխտար փաշայի դեմ 1877–ի հունիսի 28–ին Լորիս–Մելիքովի, դեներալ Հ. Լազարևի և Տեր–Ղուկասովի հրամանատարությամբ շահած ճակատամարտը՝ **Ալաճայի լեռներում, նույնանուն դետի եզերքին,** որին հաջորդած օգոստոսի 6–ի և 13–ի, ապա սեպտեմբերի 20, 21, 22–ի համառ մարտերից հետո, ի վերջո նոյեմբերի 6–ին դրոհով դրավվում է Կարսը: Անել է «Կապկազում» հոլովվող ալաճան և «Երկիր Նաիրի» տոնմանման վեպում հոլովվելով–հոլովվող «Լորիս–Մելիքյանը»՝ խոսակցությունները են նույն պատմական առանցքի հունով: Ճիշտ և ճիշտ այն իմաստով, ինչ դտնում ենք արձանագրված ռուսական հնօրյա հանրագիտարաններում, նույնն է Թե՛ Ռուսաստանի զորական պատմության էջերում. այն է Թե՛ Ալաջայի «հերոսական» ճակատամարտից, Կարսի դրավումից հետո Ռուսաստանի համար ապահովվում է մուտքը Մերձավոր Ասիական երկրներ»[11]: Օտարների արձադանքներով ու դնահատությամբ էլ ռազմական այդ հաջողությունը դդալիորեն չեզոքացնում է Ալեքսանդր 2–րդի անհաջողությունները Եվրոպայում՝ Սան–Ստեֆանոյի, Բեռլինի վեհաժողովի ժամանակներում: Հատկանշալի է, այդ պատմական ծառայությունների համար էլ Լորիս–Մելիքյանին շնորհվում է կոմսի տիտղոս: Մյուս վարձատրությունն էլ լինում է այն, որ, համենայն դեպս, **Կարսը՝ մարզով հանդերձ չի արժանանում վերադիր «վլադեի».** փոխարե-

[11] Ինչ մնում է Ալաճա–Ալաջային, ապա պատմական Հայաստանի տարբեր վայրերում դտնվող Ալաջաներից այս մեկը նշանավոր է նաև նրանով, որ այդտեղից էր «… սկսվում Անիի խմելու ջրի գլխավոր ջրատարը». տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, 1986, էջ 65:

նը շրջակա սահմանամերձ գոտում հիմնվում է **Վլադիկարս** անվանումով բնակավայր, որտեղ շուտով բնակեցվում են զանգվածաբար հարավ արտաքսվող ռուս աղանդավորներ...

Եթե փոքր-ինչ հետևողական լինենք, ապա կարող ենք որսալ Թամաշայի ասել-խոսելու ճշգրիտ վիճաբանական բնույթը: Արդար լինելու պարագայում էլ պարտավոր ենք արձանագրել «Պանզոզուռնայում» հստակորեն գծագրվող վիճաբանական երկակի-եռակի շերտեր. ոչ միայն նախորդ առաջին հատորի համապատասխան էջերում վերլուծված **«Երևանում», այլև «Սրինգը», «Հ.Ս.Խ.Հ.», «Տոգեգալուստ»** ծավալուն էջերով խոսք ու զրույցով վեճ-վիճաբանություն՝ «Աչնուտի» հեղինակ Արտաշես Տեր-Մարտիրոսյանի հասցեով, և, որ հիշարժան է, **Ն. Աղբալյանի քննադատական ելակետից**, բայց և քնարական-հուզական շնչով վերանայված-վերաիմաստավորված:

Էապես առաջինից վերջին էջը ասել-խոսելով վեճ-վիճաբանական երկ է և «Կապկապը». բազմաշերտ-բազմալիք գաղափարական վեճ, որի շարունակական կամ ինքնակա առումների-ծալքերի թվարկումը կտաներ շատ հեռու... երախտիք-երախտամոռության մի առումով էլ Լորիս-Մելիքյանից, Հ. Լազարյանից, Տեր-Ղուկասովից... նրանց ծառայություններից հասնելով մինչև մեր օրերը, որ կարելի է կռահել՝ պարզապես ունենալով պատմական հիշողություն և իմացություններ:

Առավել արդար լինելու պարտադրանքով էլ հարկ է լրջորեն հետախուզել դարամուտի, ապա և տաս-քսանական թվականների հայոց թատերական կյանքում անառարկելի ընդունելության արժանացած երևույթներ. Իբսեն, Մետերլինդ, Հաուպտման... միմյանցից տարբեր, բայց և դրամայի ու թատրոնի հունավորվող նոր առանձնահատկություններով, ժանրատեսակներով ու համազոր տեսական չափանիշներով: Գեղարվեստական լիարժեք ընթացքներ, որոնց արդյունքում-տվյալ դեպքում գործ կունենանք նորվեգացի Իբսենի ավանդների համոզված հետևորդ իռլանդացի Բեռնարդ Շոուի թատերգությամբ խորացող միտումներով՝ տեսականորեն և գործնականորեն հաստատված նոր ժանրատեսակի հետ:

Եվ քանի որ Թամաշան պատկանում է կատակերգության ճյուղին, տեղն է սկսել **«Իբսենի հաղթարշավը»** խորագրով Իբսենի «Любимый конек» պիեսի Շոուի վերլուծական-գնահատականից, ըստ որի այդ երկը հետադարձ հայացքով՝ «... թվում է իրեն, ոչ թե կատակերգություն, այլ գավառական փարս՝ երիք գործողությամբ, լի բեմական պայմանականություններով, փարսով, որ կարող է թարմ թվալ միայն նրանով, ով, ինձ նման հիշողության ուժով կարող է վերադառնալ այն օրերը...», ասել է 1886-թվականը, երբ բեմադրվել է պիեսը: Իսկ այդ տեղից էլ հեռահար աղեղով դառնալ 1950-ին վերաբերող «Գաղափարների դրամա» – վիճաբանական պիես (пьесы дискусии) հոդվածի հարցադրում-պատասխաններին: Հայտնապես տեսական հիմնավորում-ընդհանրացումներ, որպիսիք, որքան էլ մեր **հետամնացության բերումով զարմանալի**, վերը քաղված տողերի ձայնակցությամբ նույնությամբ վերաբերում են «Կապկապ» Թամաշային:

Եվ այսպես վերաքաղում ենք Շոուի «Գաղափարների դրամա» քննականից. «Իմ ստեղծագործությունները»,— գրում է նա... խնամքով մտածված սիլլոգիզմներով[12] զվարճացնում են ընթերցողին գլխավորապես նրանով, որ առաջին հայացքից թվում են տափակություն, այնպիսին, որ կարող է մտածել ամեն հիմար. — այլև այն պատճառով, որ այն ընդունում են որպես կատակ՝ կանխամտածված հրահրելու արագ ու այլազան առարկություններ ու հակազդումներ. և ամենևին էլ չունենալով միտք լիցքավորելու միտում կամ ինչ–որ մեկին համոզելու ինչ–որ բան»: Ապա վիճարկելով հակադիր այն կարծիքը, որով իր պիեսները համարվում են «... միտինգային ճառեր..., պամֆլետներ, կամ առաջնորդողներ... Հին պատմությո՞ւն...» հեգնանքով ավելացնում է. «մի ժամանակ էլ ինձ հանդիմանում էին այն բանի համար, որ իմ պիեսները ամբողջովին բաղկացած են խոսք ու զրույցներից: Այո՛, միանգամայն իրավացի. դրանք իսկապես խոսք ու զրույց են, ճիշտ այնպես, ինչպես Ռաֆայելի նկարները—գույներ են, Միքելանջելոյինը՝ մարմար, իսկ Բեթհովենի սիմֆոնիաները՝ հնչյուն»: Այնուհետև «ըստ հոգևոր ընդունակությունների» «ոստիկանական ու ամուսնալուծության» մտացածին սյուժեներով («սպանություններով ու անհավատարմությամբ» լի) թխվածները սահմանազատելով վերասլաց հավիտենականից՝ «Էսքիլես, Սոֆոկլես, Եվրիպիդես և Արիստոֆան. մինչև «Համլետ», «Ֆաուստ», «Պեր Գյունտ»— և կարևոր չէ, էլ ով»,— Շոուն եզրակացնում է. «Այսպիսի թատերգերն արդեն գրվում են ոչ թե զվարճալի լինելու, այլ բավականաչափ ուսանելի (հենց այդպիսիք էլ Թերենս Ռետինգենը կոչում է «Գաղափարների պիես»),— և այդ պիեսներն ապրում են այնքան երկար, որ մենք իրավամբ դրանց շնորհում ենք «անմահ» հիպերբոլիկ մակդիր: Այդ երկու ծայրահեղության միջև գոյություն ունեն բազմաթիվ աստիճաններ. ողբերգություն և մելոդրամ, բարձր և ցածր կատակերգություն, ֆարս և անպարկեշտություն:

Ինչպես է այդպես լինում՝ չգիտեմ...»[13]:

---

[12] *Ըստ Ռուս–հայերեն չորսհատորյա բառարանի. «Սիլլոգիզմ. Համաբանություն. Հետևաբանություն (ֆորմալ տրամաբանության մեջ— բանավարություն, որի մեջ երկու նախորոք հաստատված դատողություններից, որոնք նախադրյալներ են կոչվում, ստացվում է երրորդ դատողությունը, որ կոչվում է եզրակացություն, հետևություն)». Հ. 4, 1958, էջ 100:*

[13] *Бернард Шоу, О драме и театре, т. 1963, М., с. 388, 595—596, 597.*

Ձգ պահպանվում է Բ. Շոուի «Цезарь и Клеопатра: «Ученик дьявола» մեկտրամայով հանդերձ, և «Чернокожая девушка в поисках бога» (1933) գրքերը: Վերջինիս առաջաբանում վաղեմի «աստված որոնող» Ա. Լունաչարսկին՝ հանդիմանելով Շոուին, գրում էր. «Իր վերջին կոմեդիայում ինքը չէ Շոուն փորձում ծաղրել աթեիզմը՝ որպես «նեղմտության» ձև:

Օ, հասկանալի է. Շոուն ունի յուր նրբակերտ աստծուն: Դա–կյանքի պոռթկումն է, դա է – élan Vital–ը: Բայց դա այնուամենայնիվ աստված է»:

Նույն երկխոսից Լունաչարսկին անդրադառնում է և Ռ. Ռոլանի «Ժան Քրիստոֆին». տե՛ս էջ 10–11:

Շուրջ 35 տարի առաջ Չարենցի ողջ գրադարանը թերթելու–ցուցակագրելու ժամանակ պահպանվում էր նաև գրողի «Социалист—любитель» (1910) երկը: Վերջինս անդրադառնալի՞ս չկար. երևի կան նշումներ, ըստ այդմ յուրացրել է մեկն ու մեկը: Ինչու և ինչո՞ւ... Քանի որ մոտավորապես գիտեմ...

Հատկանշական է, որ դրամա և թատրոն հասկացությունները նորվեգացի գրողի հոդվածներում ու տեսական սահմանումներում անբաժան–անտրոհելի են միմյանցից՝ ի մասնավորի դերասանի շեշտված կարևորումով ու գնահատությամբ:

Առանց չափազանցության օրինական հպարտությամբ կարող ենք ասել, որ արդեն իսկ տասական թվականների շեմից հայոց թատերգությունը եվրոպական այդ ավանդների ու միտումների հետ էր: Ուրեմն և տեսական այդ չափանիշներով էլ պետք է առաջնորդվել մեկնաբանելու համար ինչպես Շանթի ու Դեմիրճյանի գործերը, այնպես էլ Չարենցի «Կապկազ» թամաշան. ասել է թե «գաղափարների դրամայի» այս դեպքում կոմեդիական երևացող և ընդհատակյա դիսկուսիոն խորշերով ու չափանիշներով: Հայտնապես Չարենցը **«գաղափարների դրամայի» օրենքներով** էլ գնահատում էր «Կապկազը», ըստ այդմ հետագայում. որոշակի՝ 1934–ի փետրվարի 4–ին, անդրադառնալով «Կապկազին», սեփական օրինակներից մեկի վրա Չարենցը թողել է ֆուտուրիզմին ու թամաշային վերաբերող ուշագրավ գրառումներ. «Մեր գրականության հիմը–նահապետական–գյուղական հոգեբանությունն է: Դրա համար էլ մեզ մոտ պատվաստվեց ֆուտուրիզմը (իր լավագույն կողմերով, իբրև քաղաքի կուլտուրա)...»:

Ապա մյուս հատվածը. «Այս գործը ես համարում եմ իմ լավագույն գործերից մեկը–մի գործ, որ թե՛ իր դիալոգով, թե՛ իր զուտ գրական–տեխնիկական նորություններով մի ամբողջ նոր էտապ է բացում մեր գրականության մեջ: Բայց ո՞վ հասկացավ: Համարյա ոչ ոք: Բայց ես համոզված եմ, որ ապագայում կհասկանան և կգնահատեն»[11]:

Ելակետային նշված մոտեցումով էլ հարկ է մեկնաբանել և գնահատել բանաստեղծի ֆուտուրիստական հակումների ու համոզմունքների ընթացքը՝ գեղարվեստական–գաղափարական լայն առումներով, 1918–ից հունավորվող – «լավագույն կողմերի» աստիճանական իրացման համալիրով: Եվ որ նույնքան կարևոր է. Չարենցի արտակարգ տաղանդով պայմանավորված երևույթապես անհամատեղելի–անհարիր խորհրդապաշտական ու ֆուտուրիստական գեղարվեստական հատկանիշներ ու յուրօրինակություններ համատեղելու վարպետությամբ:

Եվ սակայն՝ «... Ապագայում կհասկանան և կգնահատեն» համոզմունքը առայժմ մնում է անկատար. որքանով կարելի է կարծել, որ հայ ժողովրդի ճակատագրի բերումով արմատավորված–բնավորված վիճաբանական բնույթի «գաղափարական դրաման»՝ ներառյալ կատակերգությունը,— ունեն շատ ու շատ անելիքներ նաև թատերականացման առումով: Մինչդեռ Լ. Շանթի դրամաներով, Դ. Դեմիրճյանի դրամաներով և հատկապես «Քաջ Նազարով», ապա «Կապկազով» արմատավորված արդասավոր մեծ սկիզբը, հետագայում նույն ժանրին պատկանող Հր. Մաթևոսյանի «Ջեզոք գոտիով» և Ա. Այվազյանի պիեսներով հանդերձ շարունակում են սպասել արժանավայել բեմականացման: Այլև «գաղափարական դրամայի» օրենքներով մեկնության ու գնահատության:

---

[11] Պահպանվում է Չգ:

Այս տեսակետից անպայման ուշադրության արժանի են Հր. Մաթևոսյանի «Չեզոք գոտին» վերաբերող գրականագետ Վարվառա Գրիգորյանի դիտարկումները՝ անմիջականորեն արձագանքող Բ. Շոուի տեսական սկզբունքներին, այնպես էլ չարենցյան գաղափարական ու գեղարվեստական նկատառումներին: Ինչպես. «... **Մաթևոսյանը հրապարակախոսական «միջամտություններով»** *ներկայացնում է հայոց պատմության թույլ օղակները, որոնցից ամենաշեշտվածը նա ևս Չարենցի նման, համարում է մաքառման ոգու նվազ կշիռը»: Կամ. «Ուշագրավ է մանավորապես «Հայոց ծանրաշունչ պատմության» մեկնաբանության մաթևոսյանական կերպը»: Այնուհետև Շոուի սկզբունքներին որոշակիորեն ձայնակցող այս երկուսը. «Ծայրահեղականի և վանահոր* **վիճաբանական երկխոսության մեջ,** *թեև երկու կողմն էլ դավանում են ազգային արժանապատվության՝ ազգային գոյության բարձրագույն սկզբունքը, սակայն նրանց միջև կան և տարբերություններ»:* **«Ասուլիսի» ընթացքում** *վանահայրը նորից ու նորից անդրադառնում է «ուժեղ դահի» մոտիվին»[15] և այլն (ընդգծ.՝ Ալ. Զ.):*

Թեր ու դեմ արձագանքներ Թամաշային

Համարձակություն էր և առաջին արձագանքը. Ուզ. Լար. ստորագրությամբ Մոկչ տպագրված «Եղիշե Չարենց — Թամաշա, շապիկը Կ. Հալաբյանի, Թիֆլիս, 1923 թ.,» թատերախոսականը[16], որով գնահատվում, այլև տեսական բացատրություններով Թամաշան հանձնարարվում էր բեմադրության:

Ահա թատերախոսության կարևոր հատվածներից մեկ—երկուսը. «Կոնստրուկտիվիզմը իր բեմական աշխատանքին որպես հիմք ընդունում է շարժումը և այդ շարժման մեջ ներկայացվող գործողությունը: Նա չի ձգտում իդեալականացնել կենցաղը: Բեմը հանդիսանում է նոր կյանքի ազատատար, դալար, առեղծագործող ձևերի ամբիոն: Նա ձգտում է անցնել դուրսը եղող արվեստից, էվոլուցիոն—դինամիկական, այսինքն՝ մասսայական արվեստին...

Եղիշե Չարենցի **Կապկազը** *հիմք է դնում մեր նոր թատրոնի, նոր ռեպերտուարի: Նա պիես չէ այդ բառի հին հասկացողությամբ, որովհետև այնտեղ չկա կենցաղ, չեն տրված տիպեր: «Կապկազը» ինչպես շատ ճիշտ նկատել է հենց ինքը հեղինակը — միայն Թամաշա է. բուֆոնադ, որի ամբողջ իմաստը բեմի վրա աճող գործողությունների, մասսայական շարժման էվոլուցիայի մեջ պետք է փնտրել: Կանգ չենք առնում պիեսի սյուժեի, բովանդակության վրա, որովհետև կոնստրուկտիվիստական թատրոնի համար այն էական նշանակություն չունի (նրա մեջ նկատելի է նույնիսկ տենդենց անբովանդակ—անսյուժետ թատերական արվեստի), ինչ ունենք հին թատրոնի ու պիեսների համար: Բայց նկատենք, որ «Կապկազը» հյուսված է մինչ խորհրդայնացման իրականությունից վերցրած տեսարաններից»:*

---

[15] *Վ. Ա. Գրիգորյան, Հրանտ Մաթևոսյան, 1989, էջ 132, 134–135:*

[16] *Մոկչ, 1923, 3 օգոստ.:*

Այս հանձնարարականներն ու բացատրությունները այնքան համահունչ են Զարենցի նույն ժամանակի թատերական ըմբռնումներին, որ առաջին իսկ տպավորությունն այն էր, թե շարադրածը պետք է լինի մոտիկից դրանց հաղորդակից մեկը։ Ավելին. համանման սկզբունքներ դավանող թատերգակ կամ բեմադրող։ Ըստ այդմ սկզբնապես ենթադրվել է կամ Արշակ Բուրջալյանը, որ ճանաչված բեմադրողներից միակն էր Թիֆլիսում (բայց գրախոսականում չկա ռուսախոսության չնչմած հետք), կամ էլ Դեմիրճյանը։ Ուրեմն և կարճ ասած, նախ կասկած չունեմ, որ «Կավկազի» ստեղծմանն ու բեմադրության նախապատրաստմանը, թեև զգալի բաժին ունի Դեմիրճյանը,— այնուամենայնիվ Ուզ. Լար–ը,— ինչպես և պարզվեց հետագա պրպտումներով,— ստուգապես Սուրեն Երզնկյանն է, և նա էլ է՛ Թամաշայի առաջին գրախոսը։

Բնականից բնական նախադրյալներով և փաստարկներով. նախ դառնանք Դեմիրճյանին։ Կասկած չի կարող լինել, որ Թիֆլիս հասած Զարենցի առա՛ջին այցելուներից մեկը, եթե ոչ առաջինը, եղել է Դեմիրճյանը, որը այնուհետև այցելել է՝ եթե ոչ ամեն օր, ապա անպայման հաճախ։

Ըստ այդմ տատանվեր չլինենք, և՝ պատկերացնելով գրողի վարքը, պատկերացնենք, թե ինչպիսի եռանդով ու հնարամտությամբ է խաղաղեցրել գրգռված–տաքարյուն Զարենցին, ամոքել մարմնական ցավերը. ինչպես է սրամտորեն ջանացել հաշտեցնել խորհրդային իրողությունների հետ... Թե՝ եթե ինչ–որ չափի պետություն ենք, այն էլ մեծ պետության կազմում, և ունենք ոստիկանություն, դատարան–դատավորներ, ապա ինչու չպետք է ունենանք լրտես–մատնիչ–ահաբեկչական ծառայություններ... այդպիսի եթե–ների չարան[17], իրեն հատուկ ռեբուսային մտածողական խաղերով... Ներսայալ հիշարժան այն մեկը, թե՝ ինչ արած, վերջապես, եթե կարգ է ու պահանջվում է՝ ինչու չգոռանք «Կեցցե՛ն թերությունները»... Սա էլ այսպիսի՛ պետություն է...»

---

[17] Ի դեպ. դեմիրճյանական **եթե–ների** *առնչությամբ տեղն է քաղել Հովնանյան դպրոցի նրա սանու հիշերից Էլեն Բյուզանդի մտարերումը՝* **«Դերենիկ Դեմիրճյան»** *վերնագրով հուշերից. «— Վերցրեք կավիճը և գրեցե՛ք մի նախադասություն, ուր դեր ունենա եթե պայմանական մակդիրը... — Այս ինչ փորձանք, մտածեցի մի պահ։ Դասարանը տեղաշարժ ունեցավ, երևի կարծելով, թե չփոթված՝ չպիտի կարողանամ կազմել մի այդքան հասարակ նախադասություն։*

Առիթ չտվի ուսուցչին բերանը բանալու։ Վերցրի կավիճը և գրեցի իմ խոշոր, ուղեղ ձեռագրով. «Եթե այսօր դպրոցական տարվա առաջին օրը եղած չլիներ, պիտի ուզեի դպրոց եկած չլինել»։

Եվ կավիճը չըխկացնելով՝ դրի վերջակետ ու դարձա ուսուցչին։

— Սխալ կա՞ այս նախադասության մեջ,— հարցրեց ուսուցիչը՝ իր հարցը ուղղելով դասարանին։

Լռություն։ Երևի, ոչ ոք սխալ չէր գտնում։

— Հը՛, այդպես էլ գիտեի, ձեր գավառական «ըուգըլնիթայ»–ը հայերեն չգիտե։ Ու սկսեց.

— Եթե մակդիրը (անշուշտ՝ շաղկապը՝ Ալ. Զ.) ավելի բայի է լծակից, քան գոյականի։ Ու հետո՝ նոր սկսվող մեր գրության մեջ մուտք գործել՝ եթե–ով, ինչ բարբարոսություն հայ լեզվի հանդեպ։

Խրախուսված աշակերտուհիների լռությունն, որ սխալ չէին գտնում նախադասության մեջ, միջամտեցի ուղղել։ Ինքը վերցրեց կավիճը և նախադասության տակ գրեց.

Այնպես որ համոզված կարող ենք ասել, որ «Կապկազը» ստեղծելիս և առհասարակ Զարինը Թիֆլիսում կողքին մշտապես ունեցել է Դեմիրճյանին, լսել է նրա հանդստացնող-մխիթարական, քաջալերող խոսք ու զրույցը. այդ ամենին բազմապատկած «Քաջ Նազարի» լիցքաթափող հզոր ներկայությունը: Սա էլ արդեն համաձայն բանաստեղծի Դեմիրճյանին հասցեագրած «7. V, 1925, Փարիզ» տարեթվով նամակում վկայածի». Վեննետիկում հանդիպեցի Իսահակյանին: Մի ամիս միասին էինք: Ամեն օր հիշում էինք քեզ: ...Ես նրան մեծ ոգևորությամբ պատմում էի քո «Դատաստանի», «Քաջ Նազարի» և այլ գրությունների մասին: ...«Քաջ Նազարի» միայն վերջին գործողությունն էր կարդացել դասագրքում — շատ էր հավանել, ուղղակի հիացած էր: Դե՛, ես էլ իմ կողմից յուղ լցրի նրա հիացմունքի վրա: **Արդեն քո «Քաջ Նազարի» առաջին ընթերցողը և հիացողը — եթե հիշում ես — ես եմ եղել** (ընդգծ.՝ Ալ. Զ.):

Է, սիրելի Դերենիկ, ո՞նց ես, ի՞նչ ես անում, ի՞նչ նոր բաներ ես գրել...» (6, 419):

«Է, սիրելի Դերենիկ» դիմումը ինքնին հուշում է, որ հեռավոր Վենետիկում ամեն անգամ Դեմիրճյանին, «Քաջ Նազարին» դառնալիս Զարինը վերապրել է «Քաջ Նազարի» առաջին ընթերցանության օրերի հոգեվիճակը, խնդդվելը՝ հումորային բորբոքված մթնոլորտով, և որ այդ ամենը նրա հետ վերապրել է Իսահակյանը՝ Զարինի պատմածներով արդեն տեղյակ ղարաբաղյան հարցի մեծ ու փոքր հանգամանքներին ու մանրամասներին...

Բայց դառնանք դեմիրճյանին ու «Քաջ Նազարին»: Ինչպես հայտնի է, Ա. Բուրջալյանի և Բ. Մուրադյանի բեմադրությամբ կատակերգությունը առաջին անգամ ներկայացվել է 1924-ի ապրիլի 16-ին Թիֆլիսի Հայդրամայում: Հայտնի է նաև, որ նախապատրաստական աշխատանքները Բուրջալյանը սկսել է 1923-ի վերջերին:

Համոզված կարող ենք ասել, որ այդ աշխատանքները սկսել են միաժամանակ և՛ «Քաջ Նազարի», և՛ «Կապկազի» թատերականացման համար Դեմիրճյանի ու Զարինցի համատեղ մշակած սկզբունքների արդյունքում: Բացառված չէ և Կ. Հալաբյանի ու Ա. Բուրջալյանի մասնակցությունը:

Այդ սկզբունքների յուրօրինակ հայտ էր և «Կապկազին» վերաբերող Ուզ. Լար. ստորագրությամբ թատերախոսականը՝ քաղված և չքաղված հատվածներով, որոնք մեծ մասամբ համընկնում են նույն 1923-ի դեկտեմբերին ժամանակի Երևանի պե-

---

«Այսօր, դպրոցական տարվա առաջին օրը, եթե եղած չլինեի՝ ես պիտի նախընտրեի դպրոց եկած չլինել»:

Ուրեմն, իմ ուղիղ կարծած նախադասության մեջ մեկի փոխարեն երեք սխալ. եթե-ի տեղափոխություն բայի մոտ, բութ ստորակետի տեղ և իմաստի տեսակետով ուզեի փոխարեն՝ նախընտրեի:

Այսպես, մեր առաջին դասը Դեմիրճյանի հետ եղավ՝ եթե...». Հայրենիք, 1965, թ. 1, էջ 11:

Եվ այսպես. ըստ Դեմիրճյանի հայերեն ուսուցանել նշանակում էր՝ ուսուցանել մտածել-մտածողություն. տրամաբանական օրենքներով, այլև կիրթ:

տական դրամատիկական թատրոնի տնօրեն Մամիկոն Գևորգյանին հղած ծավալուն նամակում շարադրված սկզբունքներին, ինչպես և «Կապկազի» դրամատուրգիական համակարգին: «Քաջ Նազարը»,— գրում է Դեմիրճյանը,— արևելյան ժողովրդական բուֆոնադ է ... պետք է մի առանձնա տոն–եղանակ մտցնել խաղի մեջ, ինչ–որ մի թեթևություն, երազում տեսած իրականություն, որոշ չափով էլ հեքիաթի միամտություն... պիեսը թամաշա է որոշ չափով, պետք է ժողովրդական տեսարանները առանձին խնամքով դրվեն... պետք է զուռնան, երգը, երթերը և ցեբեմոնիաները մեծադմուկ լինեն: ...Չպետք է քաշվել, իհարկե, որոշ ճարտարապետություն գործ դնելով՝ բեմադրության վրա նայել իբրև երեխաների խաղ, մի տեսակ պայմանական իրողություն»[18] և այլն:

Ուրեմն և. ինչպես դրախոսականում, այնպես էլ այս նամակում շարադրված սկզբունքները լիովին համընկնում են «Կապկազի» գրական–թատերական դրամատուրգիական միասնական համակարգին:

* * *

Արձագանքները «Կապկազին», իհարկե, միանշանակ կամ միայն դրական չէին: Հաջորդ դրախոսականը՝ տպագրված հիմնականում հակաչարենցյան ուղղվածություն ունեցող Պք №12–13–ում պատկանում է Գ. Աբովի գրչին. հիշարժան նախ նրանով, որ յուրատեսակ վավերագիր է վաղեմի մտերմական հարաբերությունների վերջնական խզման, որի ընձեռած տվյալներով միաժամանակ մի նկատելի չափով կարելի է գծագրել ու պատկերացնել ժամանակի համար բնորոշ՝ սահմանազատվող մյուս կողմի գաղափարական նկրտումները:

«Չարենցի «Պոեզոզուռնան» և «Ռոմանս անսերը»,— գրում է Աբովը,— գաղագած տրամադրությունների արտահայտիչ էին(՞): Այդ գաղազումը հետևանք է անհաստատ աշխարհայացքի ու հոգեկան երկվության, որ հեղափոխական տակնուվրայումների ժամանակ կարող էր առաջանալ նախրյան ինտելիգենտի մեջ:

Մի կողմից զգում է... թե գալիս է «հզոր ընգոցով», և ապա՝ թե «անողոք է երթը գալիքի»:

Այս երկվության շնորհիվ է, որ Չարենցը թռիչքներ է գործում հին կենցաղագրական տրամադրություններով մոլի խմաժինիստներից մինչև կոմֆուտը: (Անունը կանչի Պք խմբագիր Կարինյանի՝ Ա.. Զ.):

Նման անկայուն դոյությունը նրան հնարավորություն չի տալիս երևույթների ու դեպքերի վերլուծման նկատմամբ մեկ ու որոշ մոտեցում ունենալու: Նրա վրա հաճախ ազդեցություն են գործում արտաքին ու կողմնակի դրդումները:

Իբր այսպիսի դրդումների հետևանք պիտի համարել նաև նրա «Կապկազ» թամաշան»:

[18] Գ.ԱԹ, Մ. Գևորգյանի ֆոնդ, թիվ 25:

Այնուհետև գրախոսն ավելացնում է, թե Թամաշայի «... Նյութը նույնն է, ինչ որ Մայակովսկու «Միստերիա բուֆի» երկրորդ գործողության մի մասինը»,— գտնելով նաև, որ մինչդեռ Մայակովսկին անցքերը հիմնավորում է, «... Զարենցի մոտ այդ դեպքերը ցուցադրվում են առանց հիմնավորումի»: Ապա թվարկում է «Միստերիայի» հետ նմանությունները, որին հաջորդում է եզրակացությունը. «բայց ցավալին այն է, որ՝ արտաքին գործելակերպը փոխ առնելով, Զարենցը չի կարողանում դեպքերի պարզաբանության սխալական մոտեցումը տալ – կամ ավելի ճիշտ՝ ոչ մի մոտեցում չի տալիս:

Իսկ այս բնական է նրա համար, որովհետև նա դեռևս չի ազատվել «Ռոմանս անսերյան» իր տրամադրություններից և չունի կայուն աշխարհայացք:

Այս ամենով հանդերձ՝ պետք խոստովանել, որ «Կապկապ Թամաշան» կարող է մեր եղած ինսցենիրովկաների մեջ հաջողը համարվել:

Բայց ավաղ միայն այդքանը»[19]:

«Գազազած տրամադրություններ», «անհաստատ աշխարհայացքի ... հոգեկան երկվություն», «անկայուն դրություն»,— այսպես ծլարձակելով շրջանառության մեջ էին մտնում 20–30-ական թվականների գրականագիտական-քննադատական հանրածանոթ տափակ-միօրինակ դարձվածային հոլովումներ՝ իրենց ժամանակի բանաստեղծի (և ոչ միայն նրա) վաստակը բացառող-վարկաբեկող դրվագներով ու միտումներով. այնպիսիք, որպիսիք մեր օրերում արդեն գործում են հակառակ տրամաբանությամբ. թե՛ թեր, թե՛ դեմ...

Մեր երիտասարդության օրերին Աբովը համարվում էր այդօրինակ «գազազածություն», «երկվություն» ու «անհաստատություն» որսացող որսկաններից մեկը: Եվ իրոք. քաղված բնորոշումներով նա մատնանշում էր Թամաշայի ներքին լիցքը, ըստ այդմ պահանջելով նաև «դեպքերի հիմնավորում»: Դժվար է ասել՝ հենց այնպես, միամտորեն, թե՝ միտումնավոր: **Բայց ինչպե՞ս. «դեպքերի պարզաբանման» էլ ինչպիսի՞ մոտեցումով բանաստեղծը հիմնավորեր Հայոց Հայրենիքի անվերջանալի մկրատվել-հոշոտվելը...**

---

[19] Քննադատելով Աբովի այդ գրախոսականը, Սուրխաթյանը եզրակացնում էր. «... Ինչ վերաբերում է Զարենցին վերագրված մահացու մեղքերին, մենք կարծում ենք, որ դրանք ավելի շատ արձագանքն են Աբովի սխալական ապրումների և ավելի շատ աննկատելի դրսևորումն են այդ ապրումների, քան սառն ու առարկայական բնորոշումը «Կապկապ Թամաշայի»:

Զարենցը ոչ անսխալական է, ոչ էլ բացարձակորեն ազատ երերումներից, որով հարուստ են մեր օրերի բոլոր բանաստեղծները՝ մեր շրջանին հատուկ շատ հասկանալի պատճառներով: Սակայն անհերքելի է, որ նրա երբեմն երևացող «պակասությունները» ծածկվում են նրա տաղանդով, նսեմանում նրա ստեղծագործական կրակով: «Կապկապ Թամաշան» այնպիսի արժանիքներ ունի, որոնք, բացի մեր մոտիկ անցյալի կենդանի, բուռն պատկերը գծելուց,— բնական մի շարք նոր խնդիրներ են հարուցում, և հեղինակի տաղանդը, ստեղծագործական թափը հայտնաբերում:

Այս և նման շատ բան չի նկատել Գ. Աբովը». Մտկչ, 1924, 3 հունվ.:

«Կապկազին» առնչակից ևս երեք դրվագ...

Թամաշան ունի դրվագներով լի հետաքրքիր պատմություն:

Դրվագներից դրամատիկ մեկը՝ Մյասնիկյան–Չարենց–Սարյան... և ուրիշներ առնչակցությամբ վերաբերում է Ռոմանոս Մելիքյանին: Նախ. ըստ ժամանակին Թիֆլիսում. Վրաստանի պետական արխիվում «Парт архив, 2916—Мясников, Личный архив,—422» ցուցակով «1923, 12 սեպտեմբերի» ամսաթվով պահպանվող հետևյալ երկտողի. **«Սիրելի Ալեքսան, Մարտիրոսը հայտնեց,** որ դու ցանկություն ես հայտնել Չարենցի «Կապկազը» երաժշտականացած տեսնել և որ ուզում ես գործը հանձն առնեմ ես:

Կարդացի գիրքը. կարելի է երաժշտական օրիգինալ հյուսվածք պատրաստել: Միայն կուզենայի իմանալ արդյոք ամբողջակա՞ն երաժշտություն, թե էպիզոդիկ մոմենտներ և մեկ էլ ամենաուշը երբ պետք է ներկայացվի: Եթե ազատ լինես, բարի եղիր մի երկտողով հայտնել ինձ» (Папка 7, стр. 118/5)

Ռոմանոս Մելիքյան, Հոդվածներ, Հուշեր գրքում (1977), «Հավելվածի» տակ էլ (էջ 221) գտնում ենք Մյասնիկյանի պատասխանը. **«Սիրելի Ռոմանոս,** «Քապկազը» երաժշտականացնելու մասին ես միայն կարծիքս էի հայտնել: Եթե ունես տրամադրություն ու հնարավորություն այդ անելու, **ապա երախտապարտ սերունդը քեզ միշտ կհիշի:** Սա է, որ հայտնել էի Մ. Սարյանին:

Լսել եմ, որ Կոնսերվատորիայի գործերը լավ են:
Հաջողություն: Եվ ողջույն: Ալեքսանդր
Թիֆլիս, 1923, 20.10»:

Ըստ գրքի կազմող և ծանոթագրող երաժշտագետ Քնարիկ Գրիգորյանի ծանոթագրության. «Ինչ-ինչ պատճառներով Ե. Չարենցի «Կապկազ–Թամաշա»-ի համար Ռ. Մելիքյանը երաժշտություն չի գրել: Ի դեպ, սա միակ հիշատակությունն է այդ մասին» (էջ 51):

Այդուհանդերձ կարելի է կողք-կողքի բերել որոշ փաստեր, որպիսիք հուշում են ինչ-ինչ կռահումներ. սկսած Մյասնիկյանի ընդգծած՝ **«... ապա երախտապարտ սերունդը քեզ միշտ կհիշի»** տողից, որ անառարկելի վկայություն է հիմնավոր շահախնդրության՝ ինչպես Ղարաբաղյան հարցով, այնպես էլ այդ հարցին անմիջականորեն աղերսվող «Կապկազի» (Մյասնիկյանի գրությամբ՝ **«Քապկազի»**) բեմադրությամբ: Նույն առանցքի վրա առաջին փաստարկն այն է. 1925-ին (անշուշտ, Մյասնիկյանի «այրվելուց» հետո՝ ամռանն ու աշնանը) Ռ. Մելիքյանը մեկնել է «Լեռնային Ղարաբաղ՝ Ստեփանակերտում երաժշտական տեխնիկում կազմակերպելու համար». դիմումների հեղեղով «Վեց ժամվա ցուցակագրությունը տվել է 300-ից ավելի ցանկացողներ. ինչքան մեծ պահանջ ունի այսօրվա մարդը գեղեցիկով դաստիարակվելու»,— գրում է նա Ա. Մայիլյանին: «(Ստեփանակերտ), 1925, 6, 11» տարեթվով մի այլ նամակում էլ նույն հասցեով գրում է. «Ես ուզում եմ ուրախացած լինել Ձեզ-ինձ հաջողվեց Լեռնային Ղարաբաղում կանգնեցնել հայ երաժշտության պաշտպան երկրորդ հիմնարկը՝ երաժշտական տեխնիկումը: Ինչպես հայ-

տարարությունից կտեսնենք՝ սա փաստ է: Այս տարի՝ իբրև նախապատրաստական տարի, կլինենք անչափ համեստ, սակայն եկող տարուց, կարծում եմ, կընդլայնենք գործունեությունը՝ շնորհիվ նյութական ընդլայնման»:

Օրեր անց Փ. Թերլեմեզյանին ուղղած <Ստեփանակերտ> 1925, 16, 11 նամակում էլ ոգևորությամբ շեշտում է. «... **Երևան և Ստեփանակերտ՝ երկու կենտրոնական երաժշտական հիմնարկներ:**

Ահա իմ խնդիրս: Եթե հաջողվի կատարել, կլինեմ անչափ շնորհակալ և գոհացած բարոյապես» (էջ 56):

Այդ «**բարոյապեսը**» ամեն դեպքում թաքցնում է պարտավորվածության երանգ, թելադրելով կռահել Մյասնիկյանի մահից հետո՝ նրա պատգամը անպայման կատարելու հոգու պարտք: Եթե ոչ «Կապկազը» երաժշտականացնելով, ապա՝ Ստեփանակերտում երաժշտական հաստատություն հիմնելով: Կարծես ծառայությունները բավակա՞ն չէին. հայրենասիրական նվիրումով արևմտահայությանը օգնություն ցույց տալու առաքելությամբ Վասպուրականի աշխարհի սարսափների ականատես՝ **1916-ի կեսերին (Եղիշե Սողոմոնյանի հետքերով).** «Աշնան տողեր», «Զմրուխտ» և «Զառ-վառ» երգերի կողքին՝ 1922-ից Երևանում գործող երաժշտական ստուդիայի հիմքի վրա նույնպիսի ջանք ու եռանդով 1923-ին ստեղծված ազգային Կոնսերվատորիա. այնուհետև Ալ. Սպենդիարյանի հետ համերաշխ գործունեությամբ ազգային օպերա ունենալու ջանքեր...

Մի խոսքով՝ «... երաժշտական ազգային կուլտուրայի փայլուն և տաղանդավոր երախտավոր» (Ավ. Իսահակյան)՝ պատմական անուրանալի ծառայությամբ, ապրած ու ստեղծագործած այսօրինակ պայմաններում. «Մենք ապրում էինք շատ համերաշխ,— գրում է նա Ալ. Սպենդիարյանին նվիրված հուշերում:— Ալեքսանդր Աֆանասևիչը վաղ էր արթնանում և ինքն էր թեյ պատրաստում: **Այդ թեյով էլ փաստորեն սահմանափակվում էր մեր տնային տնտեսությունը** (ընդգծ.՝ Ալ. Զ.): Թեյից հետո նստում էինք գործիքների մոտ: Սպենդիարյանն ուշի-ուշով ուսումնասիրում էր Կոմիտասին, ծանոթանում շարականներին: Ես ձայնակցում էի նրան՝ նույնը նվագելով դաշնամուրի վրա: Նա հետաքրքրվում էր իմ անձնական ձայնագրություններով և մշակումներով:

Այսպես համերաշխ մենք դիմավորեցինք 1928 թ. ... Այդ ժամանակ... նա ստացավ կարմիր-բանակային երգեր ու քայլերգեր գրելու պատվեր: Սակայն նրա խառնվածքը, ամենից ավելի քիչ էր՝ ռազմատենչ: Այդ պատվերը տանջում էր նրան. չգիտեր նույնիսկ, ինչպես սկսել: ...Տեսնելով, թե ինչպես է նյարդայնանում, ես փորձեցի օգնել նրան:

— Ահա և հիանալի է: Ձեզ եմ վերահանձնարարում իմ ստացած պատվերը:

Ես Թիֆլիս մեկնեցի: Այնտեղ գրեցի կարմիր-բանակային երգերի ու քայլերգերի մի ժողովածու: Ուզում էի ուրախացնել Ալեքսանդր Աֆանասևիչին... Ավա՜ղ, նրա հետ այլևս ինձ վիճակված չէր տեսնվել»:

Նույն «... ամենից ավելի քիչ՝ ռազմատենչ» արտահայտության ընդհատակում էլ, թվում է, թաքնված է «Կապկազը» չերաժշտականացնելու սեփական «խառն-

վածքի» մեղմացուցիչ խոստովանությունը... Անշուշտ, **«Հարևաններին» չգրգռելու առումով**: Կարելի է ենթադրել, որ Հարակից մեղմացուցիչ էր և «Քաջ Նազար» հեքիաթի սյուժեով օպերա գրելու (լիբրետո Ա. Բաբալյան) Սպենդիարյանի և իր համատեղ մտադրություն–հղացումը, որը նույնպես մնաց անիրագործելի[30]:

«Ռոմանոս Մելիքյան» ժողովածուի Չարենցի և Ռ. Մելիքյանի փոխհարաբերություններին վերաբերող մյուս վավերագիրը՝ «Մի փոքրիկ հուշ անմոռաց Ռոմանոսի մասին» հուշարկումը պատկանում է բանաստեղծի ռեալական դպրոցի դասընկերներից Ա. Փալանջյանի գրչին: Նրա մտաբերումով Ռ. Մելիքյանի հետ ծանոթացել է 1930–ին Պետհրատում, որտեղ և «շատ օրեր ու ամիսներ աշխատել ենք... երեքով՝ Չարենցը, Ռոմանոսը և ես» (էջ 196). ինքը որպես կոնսուլտանտ: Եվ սակայն հուշը ամբողջությամբ Ռոմանոս Մելիքյանի կատարումով իր սեփական «Աշնան տողեր» շարքի ռոմանսներից մեկի պատմությունն է, որն ունկնդրելուց հետո Չարենցն ասել է. «— Կեցցե՛ս, Ռոմանոս ջան: Տերյանի պոեզիան քո երգերով ավելի անմահացավ: Իջնենք ներքև, կոնյակ խմենք» (էջ 197): Հարկ էր գոնե իմանայինք Տերյանի ո՞ր բանաստեղծության մասին է խոսքը... Ասել է՝ «Սև կաքավիկից» բացի, էլ ո՞ր ռոմանսով է Չարենցը հիացել–զմայլվել: –Թերևս ասերգային «Ցրտահար, հողմավարը...». որի վերաբերյալ Գ. Լևոնյանը գրել է. «... Այդ տրամադրությունը որոշ չափով հիշեցնում է Հայնե–Շումանյան ազդեցությունը, այսպես ասած, լիրիկ–ռոմանտիկ խառնվածքի ոգին և միացումը: Եվ պետք է ասել պ. Ռ. Մելիքյանը լիովին հասկացել է բանաստեղծին, ներկայացնելով նրա անուրջների տողերը ոչ ընդունված՝ canto, այլ որպես հրամշտական declamation, երկմասանի երգի ձևով...» (էջ 140):

Մի փաստագիծ էլ չբացված է թողել Մ. Մազմանյանը գրելով. «... Հետագայում, Պետհրատի գեղարվեստական բաժնի գլուխ անցնելով՝ նեղացրել էր վարպետին. երկար ժամանակ չէին խոսում իրար հետ: Երբ Ռոմանոսը անսպասելի մահացավ, Չարենցը եկավ նրա թաղմանը, թեև ինքը հիվանդ էր: Մտավ Կուլտուրայի տան դահլիճը, արագ մոտեցավ ծաղկազարդ դագաղին նայե՛ց, նայե՛ց անշնչացած վարպետին, ապա կռացավ և համբուրեց մեծ երաժշտագետի ճակատը և շտապ հեռացավ: Սրտաշարժ էր Չարենցի վարմունքը ընդմիշտ հեռացող ընկերոջ նկատմամբ: Հետևյալ օրն ասաց.

— Հաշտվեցինք Ռոմանոսի հետ» (ՀԵՉժ, 1, 66): Ասել է թաղման օրը 1935–ի ապրիլի 3–ին կամ 4–ին:

* * *

Հաջորդ հիշարժանը անբաժան է Վահրամ Փափազյանի արտիստական սխրանքից. այն էլ կրկնակի բեմադրող ու դերակատար:

«3 մայիսի, 1924, Թիֆլիս» տարեթվով Վ. Թոթովենցին հասցեագրած Դեմիրճյանի նամակից հայտնի է դառնում, որ Ալ. Մյասնիկյանը՝ Պ. Մակինցյանի

[30] Գ. Գյոդակյան. Ռոմանոս Մելիքյան. 1960, էջ 197:

հետ ներկա է գտնվել «Քաջ Նազարի» վերը հիշատակված առաջին ներկայացմանը՝ և երկուսի վերաբերմունքն էլ եղել է դրական[21]: Առանց վերապահելու կարելի է ասել, որ Մյասնիկյանը շահախնդիր էր նաև «Կապկազի» բեմադրությամբ և այդ նպատակով էլ Ռոմանոս Մելիքյանին խնդրել է գրել երաժշտություն: Հավանաբար բեմադրությունն էլ հանձնարարված է եղել Ա. Բուրջալյանին, նկարչա–ճարտարապետական ձևավորումը՝ Կ. Հալաբյանին: Եվ սակայն, ըստ երևույթին, ինչպես ժողովուրդն է ասում նման դեպքերում՝ հանգամանքները չեն ներել:

Թերևս, սերունդներիս համար, լավն էլ դա էր. քանի որ «Կապկազի» ժամանակային և ոչ ժամանակային հաջողությունը բեմադրությամբ ու խաղով հաստատեց Վահրամ Փափազյանը՝ «Հետադարձ հայացքում» արձանագրելով անզուգական տողեր. «... 1926 թատերաշրջանում, Թիֆլիսի Հայկական Դրամատիկ բեմի վրա ինձ վիճակվեց բեմադրել այդ գործը և ինքս անձնավորել այդ գործի գլխավոր կերպար՝ Ղարայի դերը: Ահա այդ կարճատև փորձերի ընթացքում ճանաչեցի ու հասկացա Զարեհցին: Մեր ազգի մեծագույն ու արժեքավոր մի հատվածի կործանումին ականատես այդ մարդը՝ աշխարհատեսան մի ցասումի (Արալի ասած՝ «պաղպաղածության»՝ Ալ. Զ.) համառ կուտակումն էր, ինչպես և չտեսնված մի վրեժի ամենակործան պոռթկումը:

Քիչ է պատահել ինձ որևէ գործի վրա աշխատել հեղինակի ներկայությամբ, ինչպես և նրա մասնակցությամբ: Եվ ահա այդտեղ, խաղարկելիս գործը կամ այն վերլուծելիս, ակամայից խուզարկեցի ու վերլուծեցի բանաստեղծ բարեկամիս սիրտը, մի ավելորդ անգամ ևս զարմանալով կենսունակության վրա բազմաչարչար ժողովրդիս, որ իր բազմադարյան գոյության ընթացքում կարողացել է միշտ ծնունդ տալ իր **հավաքական պոռթկումը**՝ աշխարհին չորս ծագերին խոսող բանաստեղծների (ընդգծ.՝ Ալ. Զ):

Զարեհցի նման մարդիկ, եթե գնում են էլ՝ մնում են մի՛շտ... մի՛շտ ներկա, մի՛շտ մեզ հետ, թեկուզ միջոցի անսահմանության մեջ կորած. մի՛շտ կենդանի, թեև մեռած, և այսպես հավիտյան քանի ժամանակը կա»:

Հիշարժան է նաև, որ «Կապկազի» հետ միաժամանակ դարձյալ առանց Զարեհցի մասնակցության (գտնվում էր ուղղիչ տանը) Ս. Քափանակյանի թարգմանությամբ բեմադրել է նաև **Է. Վոյնիչի «Բոռը»**: Եվ այդ նույնպես Արթուրի փափազյանական վերապրաց կատարումով արժանացել է Հավլաբարի հանդիսատեսի բուռն ընդունելությանը: «Բոռի» դեպքում ողբերգական բուռն, «Կապկազի» դեպքում երգիծական բանադրանքի Փափազյանի արձանագրած սույն արձագանքով. «... Դահլիճի ոգևորությունն ու ծիծաղը հասավ ծայր աստիճանի մանավանդ... պամֆլետի վերջին տեսարանում, երբ ես, ըստ իմ մտահղացման, աղբահավաքի մի մեծ ավել ձեռքիս, հեղինակի պատկերած բոլոր հե-

[21] ԳԱԹ, Վ. Թոթովենցի ֆոնդ, թիվ 130:

տադիմական զազրելի կերպարները ավլում էի բեմի տախտակամածից, լցնում մի մեծ պարկի մեջ և դուրս քաշում կուլիսներից՝ Քուռը գցելու համար...»[22]:

Սա նշանակում է, որ 1923–ի ղարաբաղյան մաքառումների զողանջները շարունակվել–հասել են 1926... և հետո:

Նույն ուժով, նույն հնչեղությամբ հզորանալով հասնում են մեր օրերը, երբ մեր աչքի առջև «հետադիմական զազրելի կերպարների» շարանը ցախավելվում և դուրս է շպրտվում պատմության հետնամուտքեր, երբ Ղարաբաղ–Արցախ անունը վանկարկվում է լրիվ ու բարձրագոչ արտասանությամբ՝ արձագանք գտնելով աշխարհի չորս ծագերում:

Ծիշտ և ճիշտ հայոց սրբազան դասական մտավորականության մղած–հրաղած մաքառումների ու սպասումների ոգով ու հանգով:

Առհավատչյան, որ ըստ Հայկազյան բառարանի է՝ «նշանակ հաւատարմութեան»,— Շուշիի պատմական հաղթանակը...

Բայց այդ մասին հերթականորեն:

Հավելված
Լենինը և Բրեստի խաղաղությունը (համառոտ տեղեկություններ)

Ամենայն հավանականությամբ 1923–ի հենց «Կապկազը» թղթին հանձնելու այդ օրերին էլ գնել է ճակատին նյարդային տառերով «Զարենց» կրող՝ Զդ պահպանվող «Ленин и Брестский Мир, Статьи и речи В. Ленина в 1918 году о брестском мире:, 1923, М—П» գիրքը[23]:

Ժամանակի քաղաքագետներից Ն. Օվսյաննիկովի «Ц. К. Р. К. П. и Брест» առաջաբանով, որում ներկայացված են դաշնագրի նախ՝ 4 խմբերից 1–ին և 2–րդի քվեարկության ցուցանիշները + – ով. ընդ որում առաջին խմբում. Լենին, Ստալին, Մուրանով, Արտեմ, Սոկոլնիկով (աղյուսակում + շատ են և առանձին նշված է, որ Զինովևը հեռացել է քվեարկությունից առաջ): Երրորդ + –ով գերակշիռ քվեարկության մասնակիցներն արդեն սրանք են. Բուխարին, Լոմով, Տրոցկի, Իոֆե, Կրեստինսկի, Լենին, Ստալին, Սվերդլով, Սոկոլնիկով, Սմիլգա:

Հոդվածների հերթականությունն արդեն սկսում է 1918 հունվարի 7 տարեթիվը կրող Լենինի «Խաղաղության թեզիսներից», ապա փետրվարի 24, այնուհետև մարտի 5, 7, 8, 14–16 ամսաթվերով հաջորդում են զեկույցներն ու եզրափակիչ խոսքերը: Մարտի 15–ի նիստում էլ ընդունվում է «Խաղաղությունը»:

Վերջում տրված են ընդհանուր տեղեկություններ. ըստ որոնց՝ գերմանական կոալիցիոն պատգամավորների հետ ռուսական պատգամավորության առաջին

---

[22] Վ. Փափազյան, Հետադարձ հայացք, դ. 2, 1957, էջ 57–59: Հիշենք, որ բեմադրվել են՝ թե՛ «Բոռը», թե՛ «Կապկազը» հենց ուղղիչ տան դատավարության միջոցին:

[23] Ժամանակի անորակ կազմով ու թղթով Զդ պահպանվող այդ գրքի բոլոր էջերը կտրված են, նշումներ չկան, բայց և թերթված–վերաթերթված են հիմնավորապես:

Հանդիպումը վերաբերում է 1917–ի նոյեմբերի 20–22–ին: Ըստ այդմ այդ օրերին նախորդած միջոցից ծայր են առնում Հայոց ազգային հարցերի խորհրդական Վ. Տերյանի տագնապալի մտահոգությունները, վեճ–վիճաբանություն ու բացատրությունները Ստալինից՝ Լենին և Լենինից՝ Ստալին անցումներով:

Տեղեկություններից վերջինների համաձայն էլ 1918–ի նոյեմբերի 9–ին՝ Հեղափոխությունը Գերմանիայում (Վիլհելմի անկումով) և նոյեմբերի 13–ին արդեն. «В. Ц. И. К. аннулировал Брестский договор»: Բայց ո՞ւր մնաց Կարսի ու Արդահանի հարցը, եթե լուծվեց Բաթումինը...

Դե՛, ինչ. «պողպատե» սուրը կտրում էր, և ամենուրեք և ամեն տեսակետից լուծում էր սեփական հարցերը, ոչ միայն այդ, այլև գալիք հաշվեհարդարների առումով և հիմնական զենքն ու զինանոցը Լենինն էր՝ յուր «դրույթներով». ինչպես այն դեպքում, երբ Բրեստի դաշնագրի հարցում խոսքը դառնում և մեղադրվում էր Բուխարինը. «... Փաստերը համառ բաներ են: Իսկ փաստերն ասում են, որ Բուխարինը ժխտում է գերմանական հարձակման հնարավորությունը, պատրանքներ է սերմանում, որով, հակառակ իր կամքի, **գործնականում օգնում էր** գերմանական իմպերիալիստներին, **խանգարում էր** գերմանական հեղափոխության աճմանը: Հենց այդ է հեղափոխական ֆրազի էությունը: Գնում էր մի սենյակ, ընկավ մյուսը:

Ն. Բուխարինն ինձ կշտամբում էր, թե ես կոնկրետ չեմ վերլուծում ներկա հաշտության պայմանները: Սակայն դժվար չէ հասկանալ, որ իմ փաստարկման համար ըստ գործի էության ոչ մի կարիք չկար և չկա անելու: Բավական էր ապացուցել, որ մեզ համար իրական, ֆանտազիայով չստեղծված դիլեմա է մի բան, կամ այնպիսի պայմաններ, որոնք թեկուզ մի քանի օրվա դադար են տալիս, կամ Բելգիայի ու Սերբիայի դրությունը: Եվ Բուխարինն այդ չհերքեց, թեկուզ Պիտերի դեպքում: Նրա կոլեգան Մ. Ն. Պոկրովսկին խոստովանեց այդ...»:

Մի այլ տեղում էլ՝ «... Բուխարինը ջախջախում է մեզ այն բանի համար, որ մենք բարոյալքեցինք մասսաներին, նա բացարձակապես իրավացի է, միայն թե նա իրեն է ջախջախում և ոչ թե մեզ: Ո՞վ անցկացրեց այս շիլափլավը Կենտկոմում: Դուք, ընկ. Բուխարին (Ծիծաղ): Ինչքան էլ գոռաք՝ «ո՛չ–» սակայն ճշմարտությունը չեք թաքցնի. մենք մեր ընկերական ընտանիքում ենք, մենք մեր սեփական համագումարում ենք, թաքցնելու հարկ չկա, և պետք է ճշմարտությունն ասել: Իսկ ճշմարտությունն այն է, որ Կենտկոմում երեք հոսանք կար: Փետրվարի 17–ին Լոմովը և Բուխարինը չքվեարկեցին»[21]:

Գուցե թե, կարելի է չթաքցնել... որքան էլ զարմանալի, Ա. Կարինյանի խոսելաոճը, ասես, ուղղակի թունոտ–արհամարհողի, ավելի ճիշտ ձևը առնելու՝ լենինյան–ստալինյան այդ ոճի նմանակն էր: Թվում է նաև, որ՝ եթե նկատած չլիներ Չարենցը, դա պետք է որ նկատած լիներ Դավիթ Անանունը... Բայց իսկականը կարող էր և կեղծված լինել...

[21] Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 35, էջ 496–497, հ. 36, էջ 34:

ԼՈԶԱՆ ... ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ «ԿԻՆ ՃԱՄՓԱՄԻՋԻ»

«Կապկազին», «Մնոուղմն ամուսիննորին» ու «Տիրապետողներին» անդրադառնալիս պարտադիր կարգով անհրաժեշտ է վկայակոչել 1922-ի նոյեմբերից՝ 1923-ի հուլիսի 24 ձգված Լոզանի կոնֆերանսը՝ տարաբնույթ կարևոր կետերով. նախ նրանով, որ այդ շրջանակի դաշնագրային նկրտումներով 1923-ի հունիսի 30-ին աշխարհով մեկ լայնորեն նշվում էր Վերսալի պայմանագրի տարեդարձը: Ապա մատնանշել Լոզանի կոնֆերանսի մասնակիցներին – Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Հունաստան, Ռումինիա, Հարավսլավիա, Ճապոնիա, ԱՄՆ (դիտորդ) և Թուրքիա: Խորհուրդների կողմից մասնակցել է ռուս-ուկրաինական-վրացական պատվիրակությունը՝ Չիչերինի գլխավորությամբ: Իսկ սա նշանակում էր, թե Հայաստանն արդեն վերջնականապես դուրս էր մղված միջազգային ասպարեզից:

Պարտադիր կարգով հարկ է հիշել նաև, որ՝ թևավորված խորհրդային աջակցությամբ, Թուրքիան այնքան էր ամրապնդել դիրքերը, որ կոնֆերանսի 1923-ի փետրվարի 4-ի նիստում հրաժարվել էր ստորագրել Անգլիայի առաջարկած հաշտության պայմանագիրը: Ամիսներ անց, ստորագրում է միայն Քեմալի հնազանդ հետո՝ հուլիսի 10-ին. ասել է նրբ Կավբյուրոյի հուլիսի 7-ի որոշումով վերջնականապես լուծված էին Նախիջևանի և Ղարաբաղի հարցերը: Հիշել, որ Մուկչ հուլիսի 13-ի թիվ 116-ում շեղատառերով զետեղված Մուստաֆա Քեմալի այդ հաղորդագրության կողքին տպագրված «Ղարաբաղի ավտոնոմիա» հոդվածի հեղինակն արձանագրում էր, թե՝ Ադրբեջանի կենտրոնական գործադիր կոմիտեի որոշումը Լեռնային Ղարաբաղի հայկական շրջանից կազմակերպել նոր ավտոնոմիա,— դա հսկայական նշանակություն ունի»:

Ինչպես ասում են կծո՛ւ-կծո՛ւ, փառք աստծու...

Իսկ դրանից առաջ հուլիսի 3-ին էլ հաղորդվում էր, թե Անդրկովկասի կ.գ.կ. երկրորդ նստաշրջանում՝ «... լսելով ընկ. Հյուսեյնովի զեկուցումն այն մասին, թե հարկավոր է լրացուցիչ կերպով ճշտել Կարսում 1921 թ. հոկտ. 13-ին Անդրկ. խորհրդային հանրապետությունների և Ռուսաստանի Ս.Խ.Հ.Ֆ և Թուրքիայի միջև կապված պայմանագիրը,— որոշում է. Կարսի պայմանագիրը, որ ձևակերպվում է Անդրկ. ժողովուրդների և Թուրք ժողովրդի միջև գոյություն ունեցող բնական բարեկամությունը, Անդրկ. Ս.Խ.Հ. կազմելու րոպեից, ստանում է ավելի կայունություն և ուժ, և կծառայի նախկին՝ Անդրկ. կառավարության համար Թուրքիայի հետ հարաբերվելու մեջ:

Անդրկ. կ.գ.կ. հայտնում է, թե մեր բարեկամությունը Թուրքիայի հետ ավելի ամրապնդելու նպատակով և ի լրումն ու ընդլայնումն Կարսի պայմանագրի՝ անհրաժեշտ է կնքել մեր փոխհարաբերությունների առանձին կողմերին վերաբերող պայմանագրեր:

Անդրկ. կ.գ.կ. հանձնարարում է Անդրկ. արտ. գործերի ժողկոմատին տեղեկացնել այս որոշման մասին մեզ բարեկամ Թուրքիայի կառավարության, նաև ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ի կատարումն ներկա որոշման[1]»:

Հիշել, որ Լոզանի կոնֆերանսի վերջին օրերին քննության էր առնվում պատերազմական «տուգանքների հարցը», և երբ միմյանցից մեծ–մեծ պատառներ էին խլում հզորները, խոսք իսկ չեղավ հայ ժողովրդին վճարվելիք տուգանքների մասին, բայց և վճռականորեն չեշտվեց, որ վեց շաբաթից դաշնակիցների զորքը պետք է հանվի Թուրքիայից: Հիշել նաև, որ Լոզանի կոնֆերանսի ամբողջ ընթացքում հայկական հարցը շոշափվել է միայն «հայ գաղթականության» առումով՝ փոխանցվելով Ազգերի լիգային:

Հիշե՛լ–հիշե՛լ... բայց վերջապես ո՞րը հիշես, ո՞րը թողնես: Երբ պարզապես թվում է, թե մարդկային երևակայությունն անկարող է պատկերացնել 1915–1918–1922–1923–ի ընթացքով հայ մտավորականության, առավել ևս դյուրաբորբոք Չարենցի ապրած–վերապրած ամենօրյա–ամենժամյա մղձավանջը: Պատկերացնել, թե հոգեկան նման կացության մեջ, այն էլ մարմնական ծանր ցավերով, ինչպես է կարողացել ստեղծել «Կապկապ» թամաշան, կատարել ընտիր թարգմանություններ՝ աշխարհի հզորների ամարդի դաժանության փոխհատուցման որպես մոլեգին կրքով ու արիությամբ: Փոխհատուցում, որի արտահայտություններից մեկն էլ այս հիշարժան իրողությունն է: Ամեն պարագայում նախաձեռնությունը Ալ. Մյասնիկյանի, Պ. Մակինցյանի, Ե. Չարենցի:

Ի վերջո, պրկված ցավի և դառնության պոռթկումով հուլիսի 29–ին Մոկչ, հասկանալի է, երկար ծանր ու թեթև անելուց հետո,— պատասխանում է Լոզանի կոնֆերանս կոչված աշխարհածավալ անմարդկայնության ու անարդարության արշավանքին՝ առաջին էջի այսպիսի ձևավորումով ու բովանդակությամբ. **«Լոզանը վերջացավ, բայց վերջացա՞վ»** կարճառոտ մի առաջնորդող, որ սկսում և ավարտվում է հետևյալ հատվածներով. «Լոզանի կոնֆերանսը վերջացավ: «Հաշտության» պայմանագիրը ստորագրված են. Անտանտի խնդրանոք ստորագրել է և Խորհրդային ֆեդերացիան: Որպիսի՜ նոր հրճվանքների առիթ մեր՝ արտասահմանի «բարեկամների» համար և ինչ առատ նյութ նրանց «Խեղագարի հիշատակարան» հիշեցնող մամուլին արոճալու... և ախտալու...»:

Իսկ վերջում. «Իսկ մեր խաղաղասիրական ու արժանավոր վերաբերմունքը դեպի այդ պայմանագիրը կապացուցանեն աշխարհին, **թե որ աստիճանի համ-**

---

[1] Մոկչ, 1923, 11 հուլ.

բերատար ենք մենք ու աչալուրջ դեպի մեր դիրքը՝ ցասման ժամին...[2]»:

Այս տողերի տակ գլխագիր խոշոր տառերով «Գաղափարի մարդիկ» *վերտառությունն է. սրան կից ավելի փոքր գլխագրերով* «Վարդան Մամիկոնյան» *վերնագրով ծավալուն ակնարկ նվիրված... Լոռու նույնանուն գործկոմի նախագահին: Առանձին խորամանկություն պետք չէր գլխի ընկնելու համար, թե ո՞ւմ և ի՞նչ էր հուշում «Վարդան Մամիկոնյան» վերնագիրը... Հասցեատերերին՝ «Գաղափարի մարդկանց»:*

Նույն էջի վրա առաջնորդողի դիմաց երկու սյունակաչափ լայնքով վերից վար ծավալով տպագրված է «Կինը ճամփամիջին (Էմիլ Վերհարնից)» *դառնաշունչ բանաստեղծությունը՝* «Փոխադրություն Եղիշե Չարենցի»[3]:

---

[2] Հատկանշական է. խոսքը հավաստապես վերաբերում էր և «սահմանամիջի» մոտիկ ու հեռու «բարեկամներին»:

Նույն այդ համարի վերջին էջում ընդգծված տողերով թերթը տեղեկացնում էր. «Լույս տեսավ Կապկապ թամաշա Չարենցի: Վաճառվում է: Դիմել՝ «Գուտտենբերգ»-ին:

Բնական է. դառնացած հոգով-սրտով Երևան վերադառնալու մտադրություն չկար: Բայց և պետք էր փրկել հագուստ, իրեր, գրքեր՝ նախապատրաստվելու և Թիֆլիսից միանգամից Մոսկվա մեկնելու համար: Ուրեմն և օգոստոսի առաջին տասնօրյակի վերջերին՝ ամուսիններով կարճ միջոցով, լինում են Երևանում: Առայժմ միակ վկայությունը «Սիրելի Մամիկոնին 923, 8, 10, Երևան Ե. Չարենց» մակագրված ԳԱԹ Չարենցի գրքերի ֆոնդում պահպանվող «Կապկապի» օրինակն է:

[3] «Եղիշե Չարենց Կյանքը, գործը, ժամանակը» գ. 1-ի (1997. Երևան)՝ գրքի «Կարևոր այլ վկայություններ և բնութագծեր» ենթավերնագրի տակ (էջ 168–171) նվաստս՝ մեծապես Արշակ Չոպանյանից հուշարկում-վկայություններով,— անդրադարձել է Էմիլ Վերհարնին՝ Դ. Վարուժանի և Սիամանթոյի հետ աղերսներով. ի մասնավորի հեթանոսականություն առումով: Բայց և սույն տողերով. «Այլև բախտակցի կրքոտ ցավով արձագանքից (Էմ. Վերհարնը՝ Ալ. Զ.) հայ ժողովրդի ահեղ ճակատագրին. մարդկության խղճին հասցեագրած «Աղաղակ» քերթվածի՝ «... Եվ դանդաղորեն իջնում է այդ աղաղակը կարմրաներկ աշխարհն Հայաստան, ծվատում է այնտեղ Էրզրում ու Մուշ, Սղերդ ու Բաղեշ և Վան...,— և այլ ղողանջներով» (տե՛ս Գործ, 1917, թ. 3 = և էջ 169):

Եվ ահայն, զարմանալի է, ըստ ամենայնի հարց է ծագում... Սեփական խոստովանությամբ՝ Էմ. Վերհարնի հետ առնչություններ է ունեցել նաև Կոստան Զարյանը: Կ. Պոլսում 1914-ին «Մեհյան» հրատարակելուց հետո՝ Փարիզ=Իտալական քաղաքներ անընդմեջ շրջագայության ընթացքներում= Չոպանյանին՝ տասնյակ հեռագրերով հեղեղած Կ. Զարյանը, այդ ինչպես է, որ գոնե մեկ անգամ չի հիշատակում Չոպանյանին: Եվ հակառակը. «Էմիլ Վերհարն» ծավալուն դիմապատկերում իր և Էդգար Շահենի՝ կողքին Վերհարնի հետ տևական մերձավոր-մտերիմ մտայերումներում Չոպանյանն էլ չի հիշում-հուշարկում Կ. Զարյանին: Այլ առիթներով անուն-ազգանունով անդրադառնում է, բայց այդ նկարական դիմապատկերում երբեք: Առեղծվածը բացառված է...

Ուրեմն քաղաքրենք Չոպանյանի դիմապատկերից որոշ հատվածներ. «Անգլիա ու Ֆրանսիա, քանի քանի քաղաքներու մեջ (Վերհարնը՝ Ալ. Զ.) բանախոսություններով, հոդվածներով իր երկրին փառքը կպանծացներ ու դատը կպաշտպաներ, հոյակապ քերթվածներու շարքով մը, (Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ Ալ. Զ.) որ այլևայլ լրագրաց մեջ երևցան, կերգեր սերը իր դյուցազնական ու մարտիրոս հայրենիքին ու արշավող բարբարոսին դեմ իր մոլեգին ատելությունը կաղաղակեր, վրիժապահանջ նզովք կարձակեր: Մահվընեն երկու շաբաթ առաջ այդ քերթվածները հատորի մը մեջ ամփոփելով ի լույս ընծայեց «Պատերազմին կարմիր թևերը» վերնագրով: Այս գիրքը, ներկա սոսկալիթխար պայքարին գերագույն երգը, անոր նշանակությունը բացատրող, անոր գրեթե բոլոր երեսները մեկնող քերթողական ամենեն խորունկ, հարազատ, անկեղծ ու սրտառուչ արտահայտությունը պիտի մնա, ինչպես Հյուգոյի «Ահավոր տարին» 1870-ի պատերազմին քնարական բարձրագույն արտահայտությունն էր եղած...»:

Նորից–նոր «կին = հայրենիք» հավասարազոր–համարժեք տարողությամբ խորհրդանիշ, այլաբանորեն մարմին առած՝ այս անգամ էլ վերհարնյան հոշոտվող–ըլկվող «Ճամփամիջի կնոջ» գերհզոր թափին համազոր դրամատիկ առինքնող շիկացումով, պատկերավոր նման փայլով ու փայլատակումներով.

Ապա. դառնում է Վերհարնի հետ իրենց հարաբերություններին. «... Այստեղ ես կուրվագծեմ միայն մի քանի մը պատմություններ, կհրավիրեմ մեր ժողովրդին ուշադրությունը այդ սքանչելի հատորին վրա, որուն ընթերցումը ամէն զարգացածն հայու համար չինիչ ու սրտառողիչ է, և այս քանի մի տողով վերլուծման կմիացնեմ ֆրանսերեն չգիտցող հայերուն համար թարգմանությունը հատորին գեղեցկագույն էջերեն ոմանց, որ այս հոդվածես հետո պիտի հրատարակվին «Կոչնակ»–ի մեջ: Ասով զարմանած ալ կըլլամ հանցանք մը. մեր լեզվով ոչինչ թարգմանված է ցարդ Վերհարնեն, բացի իր մեկ քերթվածին, որուն հայերենը հրատարակված է Անահիտի մեջ: Վերհարն այս քերթողներեն է, որմե բազմաթիվ էջեր պետք էր թարգմանված ըլլային հայերեն, քանի որ ազնիվ ուժի, առողջ ու հավատավոր ներշնչման, բարձրացնող մտածման ու սիրտը կազդուրող ու լուսավորող երևակայության քերթող մըն է ան: Ու թերևս՝ իր գերեզմանին վրա՝ հարգանքի լավագույն արտահայտությունը, սուգի ու կորուստի հարազատագույն ընծան՝ իմ կողմէ՝ այս դժգույն ու կցկտուր տողերեն ավելի՝ իր հզոր ու վեհ քերթության մեկ քանի ընտիրը հայեցի բարբառով հայ ժողովրդին լսելի ընելով հայության հոգիին մեջ հանգուցյալին մեծությունեն շող մը արձակելն է»:

Եվ կրկին ապա. հանուն Բելգիայի՝ Ռուան բանախոսության մեկնելիս բանաստեղծի կինը նրա հետ մեկնող բելգիացի բարեկամ Վիկտոր Ժիլսուլի անունով մեկին հանձնարարում է. «... Վիկտոր Ժիլսուլ՝ հոգ տանիլ անոր, հսկել վրան, չթողուլ զայն մինակ, թույլ չտալ որ շատ նեղվի և ավելի հոգնի: Բանախոսութենեն հետո, Վերհարն կփութա կայարան իր բարեկամին հետ, բոլորովին ուժաբեկ. շոգեկառքը կհասներ այդ պահուն, ահագին բազմություն կսպասեր Փարիզ երթալու համար. վախնալով որ շոգեկառքին մեջ նստելու տեղ չի գտներ և կստիպվի քանի մը ժամ ոտքի վրա մնալ, Վերհարն կվազե դեպի շոգեկառքը, կցատկե վագոններեն մեկուն վրա, մինչ շոգեկառքը դեռ կանգ չէր առած, կսահի կիյնա վագոնի մեջտեղը. և, և անիվը կանցնի երկու ոտքերուն վրայեն, արյունը հեղեղորեն կհոսի, կվերցնեն զինքը՝ մահամերձ. վերջին խոսքերը կըլլան «կի՜նս... հայրենի՜քս... մնա՜ս»:

Այնուհետև. «... Այսօրվան պես կհիշեմ իմ առաջին տեսակցությունս իրեն հետ. 8–9 տարի առաջ էր, Սեն–Քլու, Կաբրիել Մուրե բարեկամիս տունը գացեր էի այցելության. Էսկար Շահնին հետ, Վերհարն հոն էր՝ իր կնոջ հետ, Հայոց մասին գիտեր ինչ որ կարդացեր էր իմ գրքերուս մեջ, զոր միշտ ղրկած էի իրեն... հատորներս հաջողեր էին իրեն սիրելի դարձնել մեր ազգը: Հիվանդութենեն նոր ելած էր, և դեռ տկար կթվեր... երկու ժամու չափ խոսակցեցանք իրեն հետ, այլևայլ հարցերու վրա, մանավանդ Արևելքի վրա, հայ բանաստեղծության, հայ ժողովրդական երգերու վրա և ընդհանրապես ժողովրդական բանաստեղծության վրա, զոր պաշտեր և մարդկային ճշմարիտ բանաստեղծության հիմք նկատելիս իրեն կհայտնեի և զոր ինքն ալ նույնպես կսիրեր: Տարիներ հետո, երբ իրեն դիմեցի խնդրելով, որ հաճի քանի մը տող գրել իմ La vie le Rêve հատորին իբր առաջաբան, ամենեն սիրուն փութկոտությամբ կատարեց խնդիրս, և նամակը, զոր ինծի կղրկեր իբր առաջաբան, մեծարանք մըն էր, զոր այնքան սրտաբուխ կերպով կմատուցաներ մեր ցեղին:

Երբ Պելճիա՝ այս պատերազմին սկիզբը՝ իր հերոսական վարմունքով ինքզինքը գերագույն փառքով պսակեց ու նույն ատեն բռնավորին ոտնակոխ ըլլալով... ու երբ Վերհարն իր հարյուր հազարավոր ցեղակիցներուն հետ աքսորի ճամփան բռնեց և գնաց Անգլիա, գրեցի իրեն ինչ որ մեր ազգը կզգար Արևմուտքի Հայաստանին համար, և ստացա իրեն մեծ եղբոր մը ազնիվ ու սրտապնդիչ պատասխանը՝ ... «Հայաստան ու Պելճիքա, եղերաբախտ ու անմահ...»:

Գալարքում այս ոսկե,
Երեննոյա,
Կի՛ն սևազգեստ, ճամփամիջին կեցած,
Օրը օրին,
Նորից ու նորից,
Ի՞նչ ես ուզում դու – ասա՛:

— Ահա հույսերը սև՝ սև չների նման՝
Կաղկանձեցին նորից, հուսահատ ու մռայլ,
Իմ բիբերի նման լուսինների վրա,
Որ երբեմն լուսե՛ խավարել են հիմա:
Այնպես երկա՛ր-երկա՛ր կաղկանձեցին նրանք
Իմ բիբերի նման լուսինների վրա...
Ինչպես ոսկի ու սուգ – իմ մազերի հյուսքեն
Խենթանում է, հուզում ոհմակներին այդ սև,
Ու մեղավոր, մաքուր իմ մարմնի ոսկին
Երազներ է ցրում խելագար ու լուսե...

Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյի» ստեղծման ժամանակից հայոց միջավայրում ընտանի կին=հայրենիք խորհրդանիշ դիմառնություն–այլաբանությունը դարերով ավանդված տոհմիկ հունով՝ Չարենցի այս փոխադրություն–թարգմանությամբ փոխակերպվում, նվաճում է նոր մակարդակ.

Կի՛ն սևազգեստ, ճամփամիջին կեցած,
Օրը օրին,
Նորից ու նորից,
Ի՞նչ ես ուզում դու – ասա՛...

Եվ վերջին հատվածը շուրջ 10 էջանոց դիմապատկերից. «Մեծ բարեկամ մը կորսուցինք մեր ազգը: Վերհարն ավելի քան երբեք ջերմ ու սիրալիր համակրող էր դարձած մեր ցեղին ու մեր դատին, «Արևելքի Պելճիքային» դատին: Տիեզերահռչակ անձնավորություն մըն էր ան. իր հիացողները բազմաթիվ էին... գերման բանակը, երբ հասած էր Պելճիքայի այն գյուղը, ուր կապրեր իր տունը, հրաման ունեին չդպչելու այդ տանը... Պելճիքայի թագավորին, հերոս–թագավորին, Ալպեր Ա–ի մտերիմ բարեկամն էր. իր քերթվածներեն մեկուն մեջ («Աղաղակը») ի՛նչքան դողդոջ կերպով հիշատակած էր Հայաստանը. ես հույս ունեի, որ ան քիչ հետո պիտի մղվեր գրել ամբողջ քերթված մը մեր հինավուրց հայրենիքին: Պատերազմին ավարտելուն՝ հաշտհարդարության ժամուն, այդ մեծանուն ու մեծասիրտ մարդը կրնար, ու սիրով պիտի ուզեր, օգտակար ըլլալ մեր դատին:

Ողբա՛նք այս մահը. և մեր նահատակված արյունակից մտավորականներուն հիշատակին հետ՝ պատնեշուտ հարգանքով պաշտենք այս մեծ քերթողին, մեծ հայրենասերին ու մեծ բարի մարդուն հիշատակը». տե՛ս Ա. Չոպանյան, Երկեր, 1988, էջ 824–837:

Մնում է պատկերացնել՝ թե թեկուզում = ընդհուպ պատճառա–հետևանքային որքան հարազատություն ու տարողություն է պարունակում այս «Կինը ճամփամիջին» քերթվածի չարենցյան մեծափառ՝ «մեծությանն չող մը արձակած».. փոխադրություն–թարգմանությունը...

Դիմում—հարցում—պատասխանի եղանակով տող առ տող լիցքավորվում է ցասման—մարտահրավերի գերհզոր մի թափ, որի իմաստների իմաստը՝ տասնյակ—տասնյակ տարբերակներ, երանգներ ու նրբերանգներ առած, վերստին հանգում է բանաստեղծին տանջող—խոշտանգող միևնույն գաղափարին. այն է, թե, ի վերջո, այդ ոհմակները ի՞նչ են ուզում իր ոսկի ու սուգ... Հյուսիսին բիբերի երբեմնի լուսինները խավարած կին=հայրենիքից... Բայց վերհարնյան—չարենցյան հայրենացավ բնութագրելու համար այս կարճառոտ գնահատականը չափազանց աղքատիկ է թվում, մանավանդ որ բանաստեղծության փոխաբերական հոսքը ընթանում է կիզակետային պատկերավոր առավել դրամատիկ շիկացումներով.

... Կի՛նը. — կեցել է նա մայրամուտին մռայլ,
Որպես հսկա արձան, հորիզոնի վրա:
Ոհմակը շների,
Անհուսության, մահու ոհմակները այդ սև,
Կաղկանձեցին լուսիններին նսեմ...

Եվ՝ կիզակետային նույնօրինակ այլայլումներով շարունակվում է մինչև ամենավերջին ակորդը.

— Կի՛ն սևազգեստ, ճամփամիջին կեցած,
Ո՞ւմ ես ուզում դու — անհայտ:
— Ով սա ինձ արնո՛տ մի դանակ (3, 313–317):

* * *

Դահիճների դեմ ծառացման գերհզոր մի ղողանջ, որքան էլ զարմանալի, ասես, տոհմիկ հավատարմությամբ արյունակից Խաչակրաց երկրորդ արշավանքին նախորդած «Ողբ Եդեսիոյի»:

Ըստ այդմ. «Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ»—ն և իր ժամանակի պատմական գրականությունը» հետազոտությամբ՝ քննության առնելով Եդեսիո աղետին հաջորդած 12—րդ դ. 40—ական թթ. ծագած եկեղեցական բանավեճերը,— հայագետ—աստվածագետ Լևոն Տեր—Պետրոսյանը ի մասնավորի դառնում է այն հարցին՝ «Թե արդյոք Աստծու կամքո՞վ են գալիս փորձությունները, պատուհասներն ու չարիքները, թե՞ ոչ»: Անշուշտ, ըստ Աստվածաշնչի՝ «Տիրոջից չէ, որ հրաման է եղել, որ թուրքերն իշխեն Եդեսիայում...», կամ էլ թե՝ «Աստծու կամքով չէ, որ մեռնում են ամբարիշտները» կտրվածքով: Սույն ելակետերից էլ՝ «Միայն զարմանք կպատճառեր, եթե նշված խնդրին անտեղյակ լիներ հայ եկեղեցին» հարցադրումով՝ մեկնաբանվում է տակավին թուրքերի կողմից քաղաքի գրավմանը

նախորդած Շնորհալու ողբը՝ հատվածական համապատասխան վկայակոչումներով «Եդեսիայի գրավման ժամանակ թուրքերի գործած վայրագությունները մանրամասն նկարագրելուց հետ – քաղելով այս տողերը.

Այլ զի ոմանք ընդդեմ բերին,
 և ստամոք հակառակին,
Ասեն՝ զիա՞րդ իրաւացի,
 այս է վճիռ դատաստանին.
Միթե՞ միայն մեղան նոքին,
 քան զազգս ամեն քրիստոնէին,
Զի յայսքաննաց բիւր քաղաքաց,
 պատիժ նոքա միայն կրեցին,
Կամ թե արդա՞ր արդեօք էին,
 յորոց ի ձեռսն մատնէին,
Զանգլի և ւիւրքն առ հասարակ,
 որք զսոսին չարչարեցին...

Տողատակին էլ հետևում է Տեր–Պետրոսյանի ծանոթությունը. «Այս հատվածի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Մ. Աբեղյանը. «Դրան աւիթ տվողն եղել է մի շատ հետաքրքիր նոր մտածմունք, այն, որ երկրայության ոգին արդեն դալիս է եղել. խոհուն մարդիկ սկսած են եղել կասկածել մեկնաբանների այդպիսի հին բացատրության ճշմարիտ լինելուն և աստծու դատաստանի իրավացի լինելու մասին», տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Դ, Երևան, 1970, էջ 140:

Ապա անդրադառնալով «Աստվածաշնչի հեղինակության» Շնորհալու արծարծումներին, քննության օրինական արդյունքում հետազոտող Տեր–Պետրոսյանը եզրակացնում է. «Միայն մի կետում Շնորհալին կտրականապես տարբերվում է սարի հեղինակներից: Կարծեք թե ի պատասխան Հովհաննես Մրդրինցու այն հարցադրման, թե արդյոք աստված կամենո՞ւմ է ամբարիշտի մահը, նա առաջ է քաշում մի դրույթ, ըստ որի չարն անպայման պետք է պատժվի:

Ընդ որում, **արդարների վրեժը պետք է լուծվի ոչ թե երկնքում, այլ այստեղ՝ երկրի վրա** *(ընդգծ.՝ Ալ. Զ.): Շնորհալին Եդեսիայի առման վրեժը լուծելու խնդրում մեծ հույսեր է կապում խաչակիրների հետ, որոնք նորից պիտի գան և.*

Հնչեն զերդ հողմ հիւսիսակ,
 զամպն վարեն պհակառակ:
Մաքրեն զաշխարհս բովանդակ,
 յանհաւատից առնեն դատարկ,
Զմահմեդական ազգ հասարակ
 առնուն յաւար և յասպատակ...»[1]:

---

[1] *Տե՛ս Ներսես Շնորհալի (Հոդվածների ժողովածու), 1977, էջ 201–211:*

Հեռավոր հնադարից նորդարյա թե՛ Վերհարնին, թե՛ Չարենցին արձագանքող տողեր ու մտահղացումներ, որպիսիք՝ նորից նոր վկայելով, հավաստում են հայոց միջնադարյան բանաստեղծության, այլև երաժշտության ու մանրանկարչության համամարդկային հնչեղությունն ու հավիտենական արժեքը:

Հարց է ծագում. ծանո՞թ էր արդյոք Չարենցը Շնորհալուն, մասնավորապես ողբին: Անկասկածորեն այո՛: Նարեկացու հետ միասին: Գիտեր ռեալականի կրոնի դասերից, 1919-ի Թիֆլիսյան և 1920-ի Երևանյան «ուսումնառություններից», առավել ևս Լազարյան ճեմարանի հարուստ գրադարանի ընձեռած հնարավորություններով:

* * *

Իրոք, որքան էլ տարբեր, ստնահարված-ստնահարվող ժողովուրդների հայրենասիրություն-հայրենացավերը օրդանապես հարազատ են ու արձագանքում են միմյանց: Ըստ այդմ՝ փոքր-ինչ ուշադրությամբ հետևելով, հեշտությամբ կարելի է որսալ փոխաբերական-մակդիրային չրջադայող-միջանցիկ բնութագծերի հարազատություն Տերյանի նախրյան և Չարենցի ու Վերհարնի հայրենասիրական բանաստեղծությունների միջև:

«Թող դուժկան դիչերն ահասաստ դալե», «Մեր հին հոգին համր ու մոլոր, Ա՛խ, և անզո՛ր, և անարգված», «Որտե՞ղ է խոցում այնպես չար ու խոր Սիրտը մարդկային դաչույնը քինոտ». և ի վերջո՝

... Որքան որ եկան արյունոտ ագահ
Դու կամավոր զոհ – բոլորը տվիր.
Դու հավետ եղար անարատ վըկա –
Չարերի կոխան, խաչված իմ երկիր:

Հրկեզ քո հոգին, որպես սուրբ խունկ,
Աշխարհի համար պարզեցիր անպարտ,
Հեզ ընդունեցիր երգում ու երկունք,
Դու արքայաբար վեհ ու անհպարտ...[5]

Տերյանյան այս տողերի ու հատվածների հետ համեմատելով էլ կարելի է դծադրել միաժամանակ և՛ տարբերությունը, և՛ հարազատությունը: Հարազատությունը՝ «... Որքան որ եկան արյունոտ ագահ», «Դաչույն քինոտ» համանման փարուլային ծանրության կենտրոնով. իսկ միանգամայն բացորոշ տարբերությունն էլ այն է, որ «չարերի կոխան», «կամավոր զոհ» մոտիվներով այս հայրենացավը՝ անհաշտ ցասման ու բողոքի մարտահրավեր է. ամեն կարգի «սև ոհմակներին» նետվող անեծք, ապտակ ու բանադրանք: Հենց այս ոգով էլ «Ծամփամփ-

[5] Վ. Տերյան, ԵԺ հ. 1, 1972, էջ 251:

չի կլինը» թե՛ Վերհարնի և թե՛ Չարենցի համար անարգված հայրենիքի փոխհատուցման–փոխվրիժառության հպարտ խորհրդանիշ է:

Դիմելով Վերհարնին, կարելի է ասել, որ բանաստեղծը գտել էր Լոզանի կոնֆերանսին ուղեկցող ու հաջորդած հայոց հասարակական միջավայրում տիրող ընդհանուր ընկճվածության ու անհանգստության մթնոլորտում գաղափարական մարդկանց ապրումներին ու մտածումներին ձայնակցելու, լայն խավերին սփոփելու–սրտապնդելու միակ ելքը: Փարթամորեն ծլարձակող մատնիչություն–ահաբեկչության պայմաններում՝ մեկը մյուսի հետևից, երբեմն խմբերով մարդիկ հեռանում էին Դաշնակցությունից. միևնույն է ամբողջ կյանքում, ողջ գերդաստաններով ճաշակելու այդ անվան համար նախասահմանված պատիժներ: Ծզմվում–հոշոտվում էր ազգային ոգին, հոգեբանությունը, գաղափարական բոլոր հոգիներում տնքում, ճչում էր հափշտակված–գետնահարված հայրենիքի ցավը:

Առավելագույնը բանաստեղծի հոգում, և ալեկոծվող տաքարյուն խառնվածքը թելադրում է իրենը՝ սեփական անձը սփոփելու, մխիթարելու ելքը. և գլխակորույս մոլեգնության մի պահի պատառոտում, դեն է շպրտում 1921–ին ստացած կուսակցական տոմսը:

Կարծում եմ պատառոտել է Արփենիկի ու Դեմիրճյանի ներկայությամբ, հուսախաբ, գերբորբոքված մի պահի, և պատառոտված կուստոմսի հետքերը կորցնողները ևս եղել են նույն երկուսը[6]:

* * *

Ուրեմն և տեղն է քաղել այդ ժամանակից մեր ձեռքի տակ եղած **«Մոսկվա, 1923, 17.X»** տարեթվով Չարենցի ինքնագրով ռուսերեն շարադրված փաստաթուղթը.

„В бюро ячейки Р. К. П. — при Наркомпросе.

Члена партии Егише Абгаровича Чаренца

ЗАЯВЛЕНИЕ

Ввиду утери партбилета за №342089 прошу ходатайства перед райкомом о выдаче мне нового партбилета.

Прилагаю при сем: 1) Квитанцию об объявлении „Изв. О.У.М.С.Р.К. и К.Д." за №652289 и 2) Протокол отд. милиции об утере партбилета. Е. Чаренц"[7].

Այս փաստաթղթի հուշած բնագրային–ենթաբնագրային փաստարկներով էլ շարունակենք՝ դիմումի մեր կարծիքով ամենահավանական, հաջորդական վերծա-

---

[6] Իր այս բնատուր խառնվածքի վերաբերյալ, ինչպես հայտնի է, բանաստեղծը թողել է «խոստովանություններ», ինչպես այս մեկը.

Արտին ու քոսոտ Քոպեն
Ուզում են Չարենցին գողեն... (ԳԱԹ, ՉՓ):

[7] Դիմումի էջի վրա քառանկյունի շրջանակում նշված է «Эриванский партархив», ասել է թե այն շուտով ուղարկվել է Երևան և պահանջվել են համապատասխան տվյալներ:

նումը: Եվ այսպես. Դեմիրճյանից հետո, ամենայն հավանականությամբ խորհրդավոր գաղտնիքը հայտնած–խորհրդակցած Մակինցյանի ու Մյասնիկյանի հետ, սեպտեմբերի 10–15–ի միջև Զարենցն ու Արփանիկը Թիֆլիսից մեկնում են Մոսկվա: Վերակրկնված հորդորների արդյունքում՝ անպայման դիմումում շարադրված որոշումով:

Մոսկվայում նույնպես որոշումն արժանանում է նեղ շրջանակի հավանությանը, և կորցնելու մասին հայտնվում է միլիցիայի բաժին:

Միաժամանակ, հավանաբար Կարեն Միքայելյանի խնդրանքով, լուսժողկոմատի կուսակցական «բջջի բյուրոյի» առջև միջնորդում է Վալերի Բրյուսովը, և բյուրոյի համապատասխան միջնորդագրով էլ Զարենցը ստանում է կուսակցական նոր տոմս, որն արդեն վերջնականապես մեծամասնական յուրյանց հանձնեց 1926–ի սեպտեմբերի 5–ին՝ կրակելով օրիորդ Այվազյանի վրա և ընկնելով ուղղիչ տուն:

Այնպես որ խորհրդային նկուղա–ներքնահարկային դարակներում գալիք չարենցագետներին սպասում են պեղել–վերծանելու հսկայական ծավալի նյութեր, ինչպես և բացահայտելու հերթագրված սադրիչ–մատնիչ–լրտես–գործակալների նույնչափ քանակ...

«Սնոուդեն ամուսիններ, կամ ինքնիրեն կոմունիզմ»...

Եվ սակայն, «Կապկազ» թամաշայի և Վերհարնի բանաստեղծության փոխադրության կողքին՝ որպես երրորդություն, առանձնակի ուշադրության է արժանի դարձյալ այդ միջոցին հղացած մի գործ ես. «Սնոուդեն ամուսիններ կամ ինքնիրեն կոմունիզմ» կինո–ֆելիետոն–կինոպոեմը: Էապես քաղաքական փարս՝ ստեղծված խորհրդային լրատվության մի հաղորդման հենքով, ըստ որի 1923–ի հուլիսի 16–ին Լոնդոնում, համայնքների պալատում քվեարկության է դրվել ու մերժվել կապիտալիստական իրավակարգի և մասնավոր սեփականության վերացման մասին լեյբորիստ Սնոուդենի առաջարկը:

Իրականում խորագրի և սույն նշագրման ներքո հանձնարարվող «Կինոպոեմ երեք մասից՝ պրոլոգով և էպիլոգով» հյուսվածքը՝ «Կուժ քեզ եմ ասում, կուլա դու լսիր» ասացվածքի հանգով վերաբերում է ոչ այնքան Անգլիային, որքան **էս–էս–էս–էռխային:**

Ճիշտ և ճիշտ «ինքնիրեն կոմունիզմ» հասկացողության ոգով, որ ցուցադրվում է նմանօրինակ այլաբանությամբ. Р.С.Ф.С.Р.*–ում շրջագայող միսիս Սնոուդենը որպես կոմունիզմի ուրվական իր հետ տանում է Լոնդոն «չարաբաստիկ մի ոջիլ»:*

Միսիս Սնոուդենի վրայով ոջիլի սողալով–սողալը, պատվելը «պրոլետկուլտում» ... ներկայացնելն այստեղ կստացվեր երկար. բավարարվենք թվարկելով «Ոջիլը» ներթամասի ամենավերջին կադրերը. «Կրեմլ: Իլյիչի կաբինետը: Միսիս

Սնոուդենը—ներս: Ոջիլը հետևից: Միսիս Սնոուդենը սարսափահար է: Իլյիչը հանդիսատ է: Նստում է: Ցույց է տալիս Ոջիլը: Իլյիչը ծիծաղում է: Իլյիչը—մատը հեռուն: Մշուշ: Զէ՛: Ոնց որ ուրվական է:— Ուրվական է թափառում—Եվրոպայում»:

Ուրեմն այս հանգույցով էլ ամփոփենք. այլաբանական—այլախոսական կինոժապավենը կցուցանե. իր գոյության 6—րդ տարում Խորհրդային երկիրը կարող է աշխարհ արտածել—արտահանել միայն սարսափելի «Ոջիլ». կոմունիզմի կամ դրա ուրվականի փոխարեն երկրի ներսում սոսնտաձայն ասերդվող =երդվող «դիկտատուրա»՝ բռնապետություն. ինչպես և «ինքնիրեն կոմունիզմ» «զառանցանքը»՝ և՝ ներսում, և՝ համաշխարհային չափումներով: Հետին անհեթեթ զառանցանք, թե իբր այդ «բոլշևիկյան ոջիլի» սպառնալիքով, ասենք Անգլիայում, պառլամենտական կամ այլ եղանակով կարող է որոշում ընդունվել, թե՝ «... Քանի ուշ չէ, քանի դեռ չի եկել Մեծ Ոջիլը (Համաշխարհային կոմունիզմը՝ Ալ. Զ.), թող Անգլիայում կոմունիզմ մտցվի...» (3, 130):

Ավելացնենք, ուրեմն. այդ «Ոջիլի» սարսափ փոխանցող՝ միսիս Էցել Սնոուդենը 1920—ին այցելել էր Ռուսաստան և հրապարակել գիրք բոլշևիկյան երկրի դեմ: Ըստ այդմ նրան առնչվող երգիծական երկսայրի հակադարձ սլաքներով էլ վերջավորվում է ըստ Ջարլի Ջապլինի հյուսված «կինոպոեմը».

... Միսիսը հիվանդ է:
Պոկում է մազերը,
Կապվել է լեզուն:
Ծեծում է բարձը:
Կոմունիզմ է ուզում:
Էպիլոգ
Միստր Մակդոնալդի նամակը
Հոգյակս,
Մի՛ք հուսահատվի:
Ես նոր ելք եմ գտել:
Մեր
Տեր
Թագավորը գիտե՞ք—
Գնում եմ մոտը...
Ոտը կհամբուրեմ:
Մեր Գեորգը բարի՛ է,
Նա կհասկանա՛ մեզ:
Նա կգթա:
Կոմունի՞զմ եք ուզում.
Պառլամենտը չավեց—
Թագավո՛րը կտա (3, 133):

Իսկ ամենավերջում ռեկաչետով վկայակոչվում է մեծամասնական քարոզչության հանրահայտ «Ցուցամատ–Պլակատը».

— Տեսա՞ք Անոուդենների պատմությունը...

Մորալ

Կեցցե՛ Հոկտեմբերյան հեղափոխությունը... (3, 134):

Եվ երգիծական այս կծու–թունոտ բանադրանքը նույնպես փոխհատուցում–փոխվրիժառություն էր հանուն մայր հայրենիքից մերժված Արցախի...

Եվ այս է ինքը, մինչև վերջին շունչը «հայրենիքի զինվորի հոգեբանությամբ» ապրած Չարենցը, որի անունը՝ Մարտիրոս Սարյանի բնութագրությամբ «... դարձել է մեր խղճի ու արժանապատվության խորհրդանիշը: Ու քանի դեռ շարունակվում է Նաիրյան պատմությունը, այդ անունը ժողովուրդը միշտ էլ կպարզի իբրև դրո՛շ...» (ՀԵՉմ, 2, 185):

Մեծ նկարչի ձեռքով թղթին հանձնված մարգարեական տողեր, որը 1923–ի դաժան օրերին Չարենցի հետ կողք–կողքի տառապել–մաքառել–այրվել է արցախյան մտահոգություններով: Ուստի և պատահական չէ, որ հետագայում եւ՛ բանաստեղծի անունը սրտում, սեփական դրոշը ձեռքին մշտապես եղել է արցախյան պահանջատիրության առաջամարտիկը...

Ուրեմն. պատահական չէ նաև, որ հակառակորդներն էլ ներկայացրել են «պրավդիստ Արտաշես Կարինյանը» և իր նմանները...

ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՕՋԱԽՆԵՐՈՒՄ

Համարյա նույն հետևողականությամբ Չարենցի վաստակը՝ մեծապես հանուն, ինչպես և ընդեմ, նպակետերից ընդունվում կամ մերժվում էր արտերկրի հայոց մշակութային օջախներում:

Բնականաբար, Չարենցի անձին ու ստեղծագործությանը առավել համակրանքով է վերաբերվում Մյասնիկյանի նախաձեռնությամբ Անդրֆեդերացիայի միջոցներով **Սիմոն Հակոբյանի խմբագրությամբ** *սկզբում Բեռլինում, ապա Վիեննայում լույս տեսնող* **«Արեգը»**: *Համակրանքի խորքում հարգանքի է արժանի Հակոբյանի գգաստ շրջահայացությունը բոլոր, ինչպես և տվյալ հարցում: Համաձայն սեփական առաքելության, որքանով հանձնառություն ուներ ծառայելու հայության համախմբմանը հայրենիքի շուրջը:*

Այս գրքերից էլ թիվ առաջինից սկսած «Արեգի» էջերում տեղ է հատկացվում Չարենցին: «Նորքի» երկրորդ գրքին նվիրված խմբագրի գրախոսականում ընդհանուր գծերով շոշափվում են «Երկիր Նաիրիի» առաջին մասն ու «Բամին» բանաստեղծությունը: Դրա կողքին զետեղված «Եղիշե Չարենցը և իր բանաստեղծությունը» ծավալուն հոդվածում Արամ Երեմյանը՝ բանաստեղծի ուժը տեսնելով պոեմներում, հանդգամանորեն վերլուծում է պոեմներից «ամենաուժեղը»՝ «Ամենապոեմը», անշուշտ, «Ամբոխները...» հեղափոխական մթնոլորտով: Շուտով հետևում են չարենցյան էջերի տպագրություններ՝ մեծ մասամբ պոեմներից. ամսագրի թիվ 3-ում ռադիոպոեմներից «Դեպի ապագան», 10-ում՝ Հ. Սուրխաթյանի «Գրական գոհարներից» քաղված հատվածներ «Ամբոխները խելագարված» պոեմից, 11-ում՝ դարձյալ երկրորդ հատորից մի հատված «Նաիրի երկրից» ռադիոպոեմի՛ց:

Զուգահեռաբար թիվ 9-ից բանաստեղծի ստեղծագործությանը վերաբերվող համառոտ ակնարկներով հանդես է գալիս խմբագիրը: «Եղիշե Չարենց (Երկու խոսք)» ակնարկում՝ Չարենցին համարելով Տերյանից հետո «ուժով և կրքով» նոր եկող,— ապա՝ ընդհանուր գծերով անդրադառնալով բանաստեղծի առաջին շրջանի ստեղծագործությանը,— Ս. Հ.-ն գրում էր. «Վ. Տերյանի ազդեցությունը այդ բանաստեղծությունների վրա անկասկածելի է: Նրանից է գալիս մանավանդ Նաիրին, որը սիրում է Չարենցը և որը գեղարվեստական զգացում է էապես, խորունկ, նուրբ, բայց ո՛չ ամենևին քաղաքական մտածում:

Իր պոեմների մեջ Չարենցն ավելի ինքնուրույն է: Այս տեսակետից նա կարող է հետաքրքրություն գրավել եվրոպական գրականության մեջ... Ռու-

սատանի մեծ հեղափոխության դյուցազներգությունը խոշոր թռիչք է հաղորդել Եղիշե Չարենցի բանաստեղծական տաղանդին և դրել է նրա հոգում մարդկային բարձր զգացումներ... Անկարելի է, անշուշտ, ամեն օր թավալվող իրականությունը կատարելապես բանաստեղծականացնել, և Չարենցը տակավին չէ գտել այն վերջնական ձևը, որի մեջ պետք է դրվի նոր իրականությունը»:

Սկզբունքային բոլոր հանգույցներով քաղված հատվածները, իրավամբ, կարող ենք համարել Չարենցի ստեղծագործական ուղու ճշգրիտ բնութագրերից: Ամենից առաջ ճական այն շեշտադրումով, ըստ որի բանաստեղծը Տերյանից ժառանգել է՝ **«Նաիրին, որը սիրում է Չարենցը և որը գեղարվեստական զգացում է էապես, խորունկ, նուրբ, բայց ոչ ամենևին քաղաքական մտածում»** (ընդգծ.՝ Ալ. Զ.):

Որոշակիորեն ընդդիմության դեմ հավատավում է Չարենցի խորունկ հայրենասիրությունը, և սակայն, ամսագրի հենց հաջորդ՝ թիվ 10–ում գործում է «քաղաքական մտածումը», և՝ մեղանչելով իր իսկ համոզմունքի դեմ Հակոբյանը աղճատում է կոթողային «Բամին»: Ասել է այս դեպքում արդեն պարզ է մի այլ բան: Պարզ է, որ ամեն չափաողի, ամեն շեշտ ու կախման կետի հետ հայրենիքի ողբերգությունը վերապրելով՝ նրբազգաց գրականագետը «քաղաքական մտածումի» թելադրանքով պետք է որ թաքցներ ճշմարտությունը և փոխարենը մեջտեղ բերեր սիմվոլիզմ ու ռոմանտիզմ: Չէ որ տվյալ պահին առավել կարևորը Հակոբյանի և ամբողջ ճշմարիտ մտավորականության համար՝ աշխարհով մեկ ցրված հայության համախմբումն էր թիզաչափ Հայրենիքի շուրջը:

Ամեն պարագայում թե՛ նախորդ «Երկու խոսքում», թե՛ այս ակնարկով՝ առանց ֆուտուրիզմ ցուցանակի, այդ հոսանքին առնչվող Չարենցի ստեղծագործությունը գրաքննադատը համարում է «թավալվող իրականությանը» արձագանքող օրինաչափ երևույթ: Նույնը կրկնում է «Արևելք» թիվ 12–ում զետեղված «Ամենապոեմի» (5–րդ գլուխ) կից ծանոթությամբ. «Եղիշե Չարենցի բանաստեղծությունների մեջ այս պոեմը բացառիկ տեղ է գրավում, որտեղ ինքնուրույն և համարձակ թռիչքով երգվում է պատերազմը և նրան հաջորդող հեղափոխությունը»:

Դժվար չէ նկատել, որ միմյանց հաջորդած բնութագրերով Հակոբյանը Չարենցի ստեղծագործության ֆուտուրիստական մտայնություններին առնչվող շրջանը համարում է անցողիկ, միջանկյալ օղակ՝ «հարատև աշխատանքով» դեպի գեղարվեստական կատարելություն: Դժվար չէ եզրակացնել նաև, որ «վերջնական», թե՛ ոչ վերջնական ձևեր և «նոր իրականության» հարաբերության խորքում հաստատապես ենթադրվում են «մարդկային բարձր զգացմունքները»՝ մարմին առած Տերյանից տարբեր չարենցյան խառնվածքին համազոր ուժով ու թռիչքներով: Նույնն է թե՛ հզոր թափի մաքառման կենսահաստատ բանաստեղծական արվեստով:

Ակնհայտաբար, այս և նման բնութագծերով գրականագետը առաջադրում–մշակում էր մեկնակետեր, որոնց հետևությամբ ու ոգով շարադրված է 1924–ին լույս տեսած նրա «Եղիշե Չարենց» գիրքը[1]:

Սույն արձագանքները թղթին հանձնելիս ծանո՞թ էր արդյոք Ս. Հակոբյանը Չարենցի ստեղծագործության Դ.Դեմիրճյանի գնահատությանը, կամ նույն «Նորք» հանդեսի երկրորդ գրքի առիթով Արշակ Չոպանյանի արձագանքին,— չգուշակենք: Կարևորն այն է, որ ինչպես Ն. Աղբալյանը, Լ. Շանթը, Ալ. Մյասնիկյանը, Մ. Աբեղյանը, Յ. Խանզադյանը... Հ. Սուրխաթյանը, Պ Մակինցյանը, այնպես էլ արտերկրում Ա. Չոպանյանը, Ս.Հակոբյանը, Հակոբ Սիրունին, Վազգեն Շուշանյանը՝ 1923–ի առաջին իսկ ծանոթությունից գեղարվեստական անմիջա-

[1] Վերջերս մեզ հասած՝ «Ավետիք Իսահակեան Նամակներ ՀՀ Բ. Պիլէզիկճեանին, Ն. Ակինեանին, Սիմոն Յակոբեանին, Հրատ.՝ Մարտիրոս Մինասեան,Երկրորդ սրբագրուած հրատարակութիւն, Ժնեւ, 1996, պրակի տվյալներով 1919–1922 թթ. Իսահակյանը Ժընևից, ապա Վենետիկից մշտական նամակագրություն է ունեցել Սիմոն Հակոբյանի հետ: Վերին հարազատությամբ փոխադարձել են«Գերված հայրենիքի» տագնապներն ու մտատանջությունները, միմյանց խոստովանել անգամ իսկ նյութական մեծ ու փոքր դժվարություններ: Եվ այդպես 38 նամակ, Իսահակյանի մտածումներով ու տագնապներով. վերքաղենք մի քանիսը. «ուղղակի հալեց մեր խեղճ ժողովուրդը». «Ե՞րբ են վերջապես լուծելու մեր հարցը, մեռանք», «Իսկ Ագուլիսի ջարդե՞րը. չէ՞ որ այնտեղ ամերիկյան նահանգապետ կար... գնացողը անցնում է մեր թշնամու կողմը. անհասկանալի ճակատագիր». «Վ. Տերյանի մահը սարսափելի ազդեց վրաս. թե իբրև ինձի համար լավ ընկեր, և թե անմահ բանաստեղծ՝ անփոխարինելի է». «... Հայաստանը ներկայումս այն վտանգի մեջն է, ինչ որ էր 1918. այն ժամանակ ռուսները հեռանում էին մեզնից իբրև բարեկամ, հիմա գալիս են իբրև թշնամի». «Իթթիհատ–բոլշևիզմ, հին խաղով Ռուս և թուրք, նորից ոտքի վրա են, ձեռք–ձեռքի տված Հայությունը ջնջելու». «... Բեռլինում Թալեաթ փաշան գործում է սպարտակիստ բանվորների մեջ. սրան չես հավատում, սակայն նույնքան իրական է, որ Բեմալը.... իր մասսաները ոգևորում է բոլշևիզմով...». ապա և այս. «Ժամանակը վատ է, մարդիկ դարձել են անգութ, կեղծավոր,եսամոլ. ա՛խ մի գլուխս ձգեի Շիրակ, փռվեի հայրենի հողի վրա և լայի. և լայի. և լայի. այնպես ջղայնացած եմ, և արդար զայրույթով լեցուն:

Գլուխս կտրի՛ր, թե անարդարություն եմ գործում, կամ ասում. եթե մի սրբություն կա, որի համար ապրում եմ – դա հայ որբն է, հայ չարքաշ ժողովուրդը, հայ ինքնազոհ բանակը. թքել եմ բոլոր մյուսների վրա.– լինի ընկեր, գործիչ, դիպլոմատ. ձախ ձեռքիս այլասերված ճկույթը իր գիտակցությամբ դրանցից բարձր է. քեզ հաճելի չեն այս հայհոյանքները, ներիր, խնդրեմ, բայց ընդունիր, որ ճիշտ են» և այլն:

Նամակների մի զգալի մասն էլ վերաբերում է «Արեգ» լրագրում տպագրվող «Սասմա Մհեր» վիպերգին». (բնագրային փոփոխություններով հանդերձ), որ սկզբնապես կրել է «Սիրելի Սիմոն Յակոբյանին, սրտագին նվեր հեղինակից» նվիրումը:

Շրջագայում է և «Ուստա Կարոն»՝ արդեն իսկ առաջին տարբերակով, այլևայլ հետաքրքիր եղելություններով, խոհերով ու մտածումներով:

Եվ սակայն նամակագրությունն ընդհատվում է «21 յունիս (1923), Վենետիկ» տարեթվով և տողատակի համապատասխան ծանոթագրումով. «Անթվակիր այս նամակը հավանաբար 1923– ից է, քանի որ ակնարկում է Յով. Թումանյանի մահվանը, որ պատահել է 1923– ի մարտի 26–ին»: Ակնարկն էլ նամակում այս է. «Վերջերս ամբողջապես կլանված եմ նյութերս (կիսատ) ավարտելու. դժբախտ Հովհաննեսի մահը առջևս է. պիտի շտապել...»:

Ավելացնենք. բարեկամական հարաբերությունները հաղիվ թե ընդհատված լինեն: Հարկ է գտնել նամակագրական հետագա հետքեր. բնականաբար՝ «Արեգի» չարենցյան արձագանք – անդրադարձներով նաև:

կան զգացողությամբ Չարենցի բանաստեղծությունը դնահատում են ամենալիրին չափանիշներով, կենսասիրական–կենսահաստատ ոգով ու միտվածությամբ:

«Ապագա» շաբաթաթերթի 1923–ի ապրիլի 21–ի թիվ 21–ում տեղ գտած «Հուսադրիչ երևույթներ» ակնարկում՝ հայացք նետելով «Նորքի» երկրորդ գրքին, Ա. Չոպանյանը գրում է. «Նորքի» այդ թիվին մեջ կը գտնենք մանավանդ հայտնությունը հայ նոր ու ինքնատիպ բանաստեղծի մը՝ Եղիշե Չարենցի... **«Նորք»–ի մեջ կը** գտնենք նաև Չարենցի մեկ ուժեղ բանաստեղծությունը՝ Վերհարնյան շունչով (Աշնան քամին), **ինչպես և նույն հեղինակեն արտասովոր կենդանությամբ, քմայքով ու զորությամբ լեցուն վեպ մը («Երկիր Նաիրի») Ա մասը՝ գրված Հայնեի արժանի քնարական սրամտությամբ** (ընդգծ.՝ Ալ. Զ):

Չարենցի երևումը, իբրև նոր աստղ հայոց գրական երկնքին մեջ, զուգադիպելով Եգիպտոսի «Արև» ին մեջ վերջերս հրատարակված «Այրունիչ ճակատագրականությունը» հոյակապ վեպին դեսատի հեղինակուհիին օր. Տոփանի բարձր ու մաքուր տաղանդին հանկարծաշող ծագման հետ, հաւաջ եկած՝ մեր ազգին վրա խուժող, խեղդիչ, սպառիչ, քանդիչ արհավիրքներին հետո, ամենեն մխիթարական դեպքերն են ներկա րոպեիս՝ մեր ցեղին անկորուստ կենսունակության և քաղաքակրթական բարձր արժեքին վրա մեր հավատքը խորապես զորացնող»[2]:

Հակոբյանը խորհրդանշային իմաստը եթե աքողում էր, ապա Չոպանյանը վերադիր «աշնան» մակդիրով հուշում, սրում է բանաստեղծության գաղափարական տարողությունը: Հմուտ գրչատերերը ոչինչ անտեղի չեն անում, և «Աշնան քամու» դեմ «Վերհարնյան շնչի» ծառայման հետ էլ առնչվում է բանաստեղծի

---

[2] Արշակ Չոպանյանի մեծահարուստ թղթերում «Ապագա» քաղաքական շաբաթաթերթ» էջի վրա գտնում ենք հղվածին ու Նք հանդեսին վերաբերող «Բարիզ» 11, 13, 14, 16 մայիս, 1923» տարեթվով մեկը մյուսին հաջորդող այսպիսի տեղեկություններ. «Ստացա Ձեր հեռագիրը, որով ինձ կը հայտնեք Ձեր հասցեն: Երեկ նամակ գրեցի պ. Միհրդատյանին և բացատրեցի, թե իր վրդովմունքը «Նորքի» քննադատության առթիվ արդարացի չէր»: Եվ ապա. «Ձեր հոդվածին վարձը կը հուսամ ղրկել Ձեզ երեքշաբթի կեսօրին, եթե հասնի Չարենցի կտորին հետ մեկտեղ, որ ուրիշ գիրով... պիտի շարվի...»: Մայիսի 14–ին էլ գրում է. «Առանց սպասելու, որ Չարենցի հատվածին մեր արտատպումն ալ հասնի, այս իրիկուն (երեքշաբթի) լոկ կը հասցնեմ Ձեզ Ձեր վարձը»: Մայիսի 16–ին արդեն հայտնում է, թե. «... արդեն ստացած եք «Նորք»–ի վարձը.... որմե մեկ օրինակ ղրկած եմ Պրյուսել...». որտեղ և այդ միջոցին գտնվում էր Չոպանյանը. ԳԱԹ, Չոպանյանի ф., թիվ 6276–6279:

Նամակագիրը Չոպանյանի մերձավորներից ռամկավար ճանաչված հրապարակախոս Հովհաննես Պողոսյանն էր, որի հետ սերտ գործակցությամբ Չարենցը մասնակցում է ՀՕԿ–ի շրջանակում 1926–ի ներգաղթի իրագործմանը: Ուրեմն և այդ մասին համապատասխան տեղում:

Հայտնապես, Չոպանյանը Չարենցին դնահատելու համար նաև քարկոծվում էր, ինչպիսին ասենք, Ենովք Արմենի «1924, IV, 16, Պարի» տարեթվով գրած թղթասս տողերն են. «... Ձեր բավանդակ գրական գործունեության մեջ միակ չներած նիշ մը ունեմ, եթե թույլ կուտաք որ այսքան անկեղծ խոսեմ.— Չարենց կոչված ոչնչությանը գովելնիդ... այդ տղան... պատերազմի արհավիրքներին միտքը խանգարված բանդագուշող մըն է»:

Ուրեմն և տողատակին նաև «... մահացնելով ամբողջ սերունդ մը»: Նույնը, թ. 804:

«ամենեն մխիթարական» պատմական առաքելությունը. «... մեր ազգին վրա խուժող. խեղդիչ, սպանիչ, քանդիչ արհավիրքներեն հետո» որպես «կենսունակության և քաղաքակրթական բարձր արժեքի» հավատք ու ցուցանիշ:

Արտաշխարհի ճանաչված գրագետների հիացական ծավալումները պարզապես ապշեցուցիչ են. մանավանդ երբ դժվարանում ես պոկվել հայրենյաց մոլեռանդ ագետների նախանձոտ բարբաջանքներից:

Իսկապես. ապշեցուցիչ է նույն 1923–ին վերաբերող **Հ. Սիրունու** ալեքավորվող հիացմունքը «Նավասարդի» Ա. գրքի Դ պրակում «Զարենց–նամե», «Նաիրի երկրից», «Դեպի ապագան» պոեմներից քաղած հատվածների, «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության հետ **«Ծաղիկներ որ կը ծլին»** խորագրի տակ ապագրած անստորագիր էտյուդում: Գեղարվեստական, ասես, մագնիսական համալիր զգացողությամբ նորամուտ Զարենցի բազմեզր տաղանդը, արտահայտչական լայն շնչառությունը տարակարդում, հավաքականորեն մեկնաբանում է այնպիսի խորաթափանց, դիպուկ ու հեռահար բնութագծերով, որ տառացիորեն շվարում ես, չիմանալով ո՞րը քաղես, որը թողնես, «... շատերը կարծեցին, թե դասախոսին (ասել է՝ Ն. Աղբալյանի՝ Ալ. Զ.) երևակայության խաղն է, գրական մեկ քմահաճույքը՝ դրվատիքը չգիտցված սկսնակի մը: Բայց այդ սկսնակը Եղիշե Զարենցն էր: Ու չորս տարվա մեջ ան մեր գրականության առաջին շարքը կանցնի»... Դժվար է դիմագիծը տալ նոր ծաղկող տաղանդի մը: Երբ մանավանդ դեռ որոնումները կընեն ան, գտնելու համար հունը, ուրկե պիտի բարձրանա կաղնին: Դժվար է գծել ճամփան ուրկե պիտի անցնի ան... ու դեռ կը շարչարվի իր հոգին իր մեջ փոթորկող կրակը մարդոց պատմելու համար:

Ահա թե ինչու դեռ կանուխ է անոր համար մեր գրականության մեջ տեղ մը ցույց տալու աճապարանքը. տաղանդ մը իր մոթիվներուն նյութովը չէ իր դեմքը կը գծի, ոչ ալ երգածին բառերն են, որ կը թարգմանեն իր ներսի բոցը. Նյութերն ու բառերը կրնան փոխվիլ. բայց կրակը կը մնա... Թողունք որ փոթորիկը մռնչե իր հոգիին մեջ, ու ահավոր երկունք մը իր արևգակը ծնի...

Բայց ի՞նչ կը բերե ան մեզի:

Նախ հավատք ու լավատեսություն կը բերե մեզի: Մեր մեծագույն բանաստեղծները արցունքով ու հառաչանքով լարած են իրենց քնարը... Զարենց կը թոթվե դարերուն բերած կսկիծը, և հույսով կը զինե իր երգերը: Գալոց օրերը կը խլրտին իր սրտին խորը, ու անոնց տեսիլքով արբշիռ՝ ան մեզ հավատքի կը կանչե: Լավատեսությունն է տիրական գիծը իր որոնումներուն:

Բայց մանավանդ տիեզերքի՛ն կը բանա Զարենց իր սիրտը... Զարենց կը քանդե սահմանները: Տիեզերական հուզումներն ու սարսուռները կ՚երգե ու կը կանչե արշալույսը, որ երանություն պիտի բերե մարդոց բոլորին, բոլորին: Համամարդկային խռովքն է որ ակունք մը կը կազմե Զարենցի խարխափումներուն:

Բայց հակառակ իր բոլոր ճիգերուն՝ ան իր հոգին չի կրնար զատել հողեն ուրկե ծլած է: Աշխարհը հուզող փոթորիկները, համամարդկային եղբայրության տեսիլքները չեն կրնար մոռցնել սարսուռը, որ իր պապերեն կուգա իրեն, ու հայ-

րենի հողին ընդերքեն: Ան չի կրնար լքել իր առաջին երազը, իր առաջին սերը… Զայն կուեն կը քաշե կարոտը հայրենի հողին,— Երկիր Նաիրիին, որուն վերքերը, խռովքներն ու դալարումները… ինքը կ'երգե անպատմելի հավատքով: Իր բոլոր քերթվածներուն մեջ, և' հոն ուր աշխարհի հուզումներուն մեջ իր թափառումները կ'երգե. և' հոն ուր իր ողջույնները կը ղրկե մարդոց, բոլո՛ր տառապողներուն, բոլորի՛ն, կը զգաս անձանոթ լույսը, որ զինքը իր ցեղին կը կապե ու անոր խռովքներուն: Երկիր Նաիրին՝ արցունքով ու արյունով թրծված Հայաստանն է, որուն ճիգերը կ'երգենք ու խլրտումները»:

Մինչդեռ ամեն չափ ու սահման անցած վիրավորանքներով, բամբասանք—ամբաստանություններով ու սադրանքներով անաբույս վարձկաններն ու նախանձորդները վատաբանում—վարկաբեկում էին Չարենցին, այսպիսին էր, ուրեմն, նրա վաստակի սփյուռքի լավագույն ներկայացուցիչների գնահատականը:

Բնորոշ, այլև սրտառուչ է, որ ի լրումն այս ամենի, նշանավոր հայագետ—արևելագետ, գրող—գրականագետ Սիրունին հարկ է համարում նաև բա**նավեճի մեջ մտնել հանուն Չարենցի:** Իհարկե, առանց հասցեների, որքանով անասելիորեն թունոտ ու արտառոց էին հակառակորդների մեղադրանքները: Նրբին այրումով պարզապես անդրադառնում է նույն ու շրջահայաց հիմնավորումով՝ սակս, բառ առ բառ թաթախված անիրավություն—անխղճությունից խուսափելու հորդորով. **«Ահա թե ինչո՛ւ և մեղք է իր վերջնական լույսը չգտած այս տղուն բառերը ծաղրել, ու հեգնել ձևերը՝ զորս կը ստեղծե ան…** Քերականության և տաղաչափության կանոնները չեն որ կրնան հոգիին ուժը բանալ: Ի զո՛ւր է անոր երգած գաղափարներուն դեմ զայրույթը՝ պոռթկալ անոր գտած ձևերուն վրա: Ի՛նչ փույթ որ անոր տողերը ծանոթ օրենքներուն լուծը թոթված՝ խելահեղ վազքեր կ'ընեն… Բավական է, որ ճառագայթը որ անոր հոգիին խորը կա՝ չբանտարկվի. բա՛վ է, որ պոռթկա իր ուժը: Է՛հ ժամանակը կրնա հո՛ւնը գտնել, ու ձև ստեղծել այս լիաշունչ բոցին համար՝ որ Եղիշե Չարենց կը կոչվի»[3]:

Երևանյան—մոսկովյան ընդդիմախոսների հետ միասին սա պատասխան էր նաև Պողոս Մակինցյանի խմբագրությամբ 1923-ին Կ. Պոլսում հրատարակված Չարենցի «Պոեմների» առիթով Հ. ստորագրությամբ եղած մի տխրահռչակ արձագանքի, որը, ցավոք, տեղ էր գտել մեծապես զգաստ «Բազմավեպի» թիվ 12-ում: Ասես, անսպառ մաղձով շաղախված մի արձագանք, Եղիշե Չարենցի փոխարեն «Մոսկվայի նախկին «գրաշար» հոլովումներով ու նմանօրինակ սնամեջ, ցածրորակ «դիտարկումներով». «Երգին զառանցանքը, ուսկից բռնված է պոետը», «… բարձր ոգին և զորեղ թափը» Մոսկվայի գրաշարին հանճարույն»: Կամ՝ «այլ. Գրաշարը տեսեր և նաև տողերու քերթողական կտրտումները, որոնք կը ամբողջացնեն չափյալ տողերը, և իր արձակ գրության մեջ ուզեր է գործածել

[3] Նավասարդ, 1923, Հ.Ա, պր. Դ:

պանոնք ալ: Ջենք զարմանար. «արևի գինին» կը թույլատրե այսպիսի շեղումներ «արվեստին սպասավորութեան մեջ»[1]:

Տեսնե՞ս արդեն ծանոթ «Դանթեականին»՝ ի՞նչ խոսքերով է ընդունել «Բազմավեպի» նման արձագանքը Հայր Արսեն Ղազիկյանը...

Է՛հ, մեղքս ինչ թաքցնեմ. այսչափ մաղձը ակամայից տրամադրում է մտածել, որ Հ. ստորագրությամբ հանդես եկող այս անձը, թերևս, նույն այն անձնավորությունն է, որ մասնակից է Չարենցի արտասահմանյան ուղևորության օրերի՝ Վենետիկից–Աթենք ու Հռոմ ձգվող սադրանքներին: Կրկնվող հենց նույն ուղղագրության մոտիվով, որը, ինչքան հաջողվել է հետևել, մեկն էր խորհրդային հետախուզության գործընթացներից, որոնց նպատակն էր սեպ խրել արևմտահայ և արևելահայ մտավորականության, սփյուռքի ու հայրենիքի միջև: Եվ ուշագրավ է. սփյուռքի մտավորականներից նշանավորները առանձին կրքոտ հակառակությամբ չեն վերաբերվել այդ հարցին: Ինչպես և Սիրունին, որը տվյալ առիթով, պարզապես շրջանցում է, ուշադրություն հրավիրելով «քերականության և տաղաչափության» «ծանոթ օրենքներուն լուծը թոթված» բանաստեղծի «խելահեղ վազքերի», «գտած ձևերուն վրա»: Հրավիրում է, ամենայն հավանականությամբ, հեռավոր Բուխարեստում դեռևս անտեղյակ ընդդեմ Վշտունու համառ ոտնձգությունների Մ. Աբեղյանի շարադրած «Տաղաչափության զարգացումը Չարենցի և ուրիշների բանաստեղծությունների մեջ» հետազոտությանը:

Ջոպանյանի և Սիրունու կողքին նույնքան ուշագրավ է քսանամյա **Վազգեն Շուշանյանի արձագանքը:** Նախ անվերապահ այս կողմնորոշումով. «Գաղութները այն չափով կը պահեն իրենց ազգային ուրույն դիմագիծը, որչափով որ սերունդ և ուժ կը ստանան մայր արմատեն՝ Հայրենիքեն:

Գաղութները և մայր երկրի ժողովուրդը իրար միացնող ամենազորավոր կապը՝ անտարակույս որ գրականությունն է»:

Հաստատուն այս դիրքերից էլ երիտասարդ Շուշանյանը գնահատում է «... Հայաստանի նոր գրողներեն ամենեն տաղանդավոր և աչքառուն՝ Եղիշե Չարենցը», ապա, ի հեճուկս բանաստեղծի հակառակորդների՝ քննության նյութ դարձնելով հենց «Պոեզոզուռնան»:

«Չարենցի գրականությունը ձգտումնավոր է, և մանավա՛նդ ձգտումնավոր», երկերի ներքին «ազդակը՝ այլասիրությունն ու մարդասիրությունը» մեկնակետով՝ Շուշանյանը հատկապես ծանրանում է նաիրյան երգերի վրա, ապա՝ «Առանց հուզումի չէ կարելի կարդալ հետևյալ տողերը, որոնք լեցուն են ուժով և անօրինակ, զարմանալի սիրով»,—եզրակացությամբ ու հանձնարարականով, քաղում՝

[1] Բազմավեպ, 1923, թիվ 12, էջ 377–378:

Երգերս,
Իմ երկի՛ր,
Քո չաֆրանով ներկած,
Քո արևով,
Տոթով,
Փողոցների ցեխով—
Փռե՛լ եմ դաշտերիդ
Հեռուներին չարքաշ,
Սիրտս—զուռնա՛ չինել,
Գալիքների դհոլ...

. . . .

Երկի՛ր իմ արևի և փոշու,
Էսօր
Ես,
Զուլված ամեն ինչից՝
Ուզես—ե՛րգ եմ լուսե,
Ուզես—կապված մի շուն,
Ուզես—մժեղ չնչին...[5]

Սա է փարիզյան մոդեռնի ու ավանդարդի համը նոր—նոր ճաշակող բանաստեղծական Շուշանյանի վերաբերմունքն ու գնահատականը, որ հետևողականորեն պետք է պաշտպաներ հետագայում: Մասնավորապես Չարենցի արտասահմանյան ուղևորությունից հետո գրած **«Խորհրդածություններ մեր նորագույն գրականության մասին» հոդվածում**, *որով՝ հակադրվելով «Հայրենիքին» ողը (երիտասարդների մեջ չէր տեսնում գրական ոչ մի շնորհք),— հիշատակում է չորս անուն, որոնք* **իր կարծիքով անպայման պետք է բերեն «մեծ գրականություն».** *Համաստեղ, Շավարշ Նար—Դունի (արձակ) ու երկու բանաստեղծ: Մեկը Եղիշե Չարենցը՝ «... որուն գրականությունը, թեև քիչ մը խորթ է մեր լեռներուն վրա՝ ինչպես հասարակածային բույս մը հյուսիսի քաղաքի մը հանրային պարտեզին մեջ, բայց առավելությունը ունի ապագային բանաստեղծը ըլլալու: Անոր ներշնչումին ուժգնությունը ու հստակ տեսողությունը զինքը կը զատորոշեն քնարերգակներու շարքին»[6],— գրում է երիտասարդ Շուշանյանը. մյուսն էլ համարում է Զավեն Սուրմելյանին՝ երկու գիրքում էլ իրավացիորեն՝ յուր մաքրմաքուր մեծ սրտով...*

[5] *Նոր շարժում, 1923, 15 սեպտ.:*
[6] *Յառաջ, 1925, 6 դեկտ.:*

ԲՈԼՈՐԻ՛Ն, ԲՈԼՈՐԻ՛Ն, ԲՈԼՈՐԻ՛Ն...
ԱՊՐՈՒՄ Է ԳՈՐԾԸ

Պարզ է. 1924 թվականը սկսում է Լենինի ծանր հիվանդության տագնապներով:

Բրեստի հաշտության պայմանագրի, ռուսական զորամասերի 1918-ի կովկասյան ռազմաճակատը թողնելու և հետագա փորձությունների ծանր նստվածքներով հանդերձ, Հայոց մտավորականությունը, մասնավորապես հեղափոխությամբ հուսավառված երիտասարդությունը՝ երևի թե մեծամասնությամբ,— հասկանալի է, Հայոց բախտում և առհասարակ,— մեծ հույսեր էր փայփայում՝ կապված Լենինի հետ: Ինչ խոսք մտավորական ավելի հասուն շրջաններում էլ առավելապես այն պատճառով, որ, տեղյակ էին Ստալինի հայատյացությանն ու իշխանության հասնելու բռնապետական ագահ նկրտումներին՝ որոշակիորեն Տերյան – Մակինցյան – Կարախան – Լուկաշին – Մյասնիկյան – Ավանեսով – Կ. Միքայելյան... և ուրիշներ մերձավոր կամ միջնորդված շփումներով. այլև 1920-ի Ճանթի պատվիրակության նենգամիտ քաշքշուկով, Քեմալի հետ ընդհատակյա գործակցությամբ, որից, անկարելի է թե հայության շրջաններում տեղեկություններ չլինեին:

Ինչևէ. իրողությունն այս է. 1923-ի ամռանը «Կապկազ» և «Սնոուդեն ամուսիններ» ստեղծած, կուսակցության շարքերից դուրս մնացած Չարենցը՝ Միքայել Մազմանյանի մտաբերումով Լենինի հիվանդությունն ու վախճանը ընդունում է այսպես. «Չարենցը չէր հեռանում բյուլետենների մոտից: Տագնապալից ապրումներ ուներ, ինչպես և բոլորը... Հունվարի 21-ին հավիտյան փակվեցին սիրելի առաջնորդի աչքերը: Այդ լուրը Չարենցն իմանում է անմիջապես բյուլետենից և վազում տուն՝ հաղորդելու ինձ: Տանը գտնում է մորս, որ այդ օրերին եկել էր Թիֆլիսից:

— Մայրիկ, Լենինը մահացավ:

— Վա՜յ,— կարեկցաբար բացականչում է մայրս,— կին, երեխաներ թողե՞լ է անտեր:

— Չարենցին զարմացնում է միամիտ կնոջ հոգսը անտեր մնացած կնոջ ու երեխաների մասին, ու, չնայած վշտին, ակամայից ժպտում է.

— Մենք, բոլորս նրա երեխաներն ենք, մայրիկ:

Այս խոսակցությունն այնքան էր տպավորվել,— ավելացնում է հուշագիրը,— որ հետագայում նա հաճախ էր հիշում ու պատմում» (ՀԵՉմ, 1, 67):

Ներսիսյան գրքում հիմնավոր հայերեն սովորած (ասել է՝ «լուրը» «բոթից»

տարբերով), տաժանակիր աքսոր ճաշակած Չարենցի մտերիմ բարեկամ Մազմանյանը կալամբուրատիպ բառախաղով փաստորեն հուշում է այլ բան. նաև «կին, երեխաների» փոխարեն՝ «օղուլ, օղլուշաղ»... հոլովումով Չարենցի «Հեռադայում հաճախ» ծիծաղելով հիշած-պատմածը...

Մազմանյանն այնուհետև գրում է, թե՝ «Չարենցը մեծ դժվարությամբ թույլտվություն ստացավ ներկա գտնվելու Արհմիությունների տան սյունազարդ դահլիճում, Լենինի դագաղին մոտիկ» — և սա ևս բանաստեղծի հետաքրքրասեր բնավորության բնորոշ արտահայտություն է, որ վերաբերում է հաջորդ հուշարկմանը ևս. «Պետրովկայի վրա մի լուսանկարչատուն կար, որտեղ պահվում էին Լենինից հանած լուսապատկերները: Չարենցի հետ գնացինք ու պատվիրեցինք օրիգինալներից արտատպումներ՝ Լենինը Կարմիր հրապարակում կանգնած ողջ հասակով և մի քանի ուրիշներ: Չարենցը ուր էլ որ գնար, այդ լուսանկարներն իր հետ տանում էր ու փակցնում իր գրասեղանի ճակատին» (ՀԵՉմ, 1, 68):

Տարօրինակ է. Չարենցի պաշտոնական ու ոչ պաշտոնական լուսանկարներից և ոչ մեկի վրա այդպիսի հետք չկա: Եվ հետո. Չարենցի գրադարանում պահպանվող գրքերի շարքում Լենինի երկերը՝ անհամեմատ սակավ են Պլեխանովի, Կաուցկու և այլ սոցիալիստների ու մարքսիստների շարքում: Եվ ուշագրավ է. «Չարենց» ինքնագիր նշումով սակավաթիվներից է նախորդ էջերում ներկայացված «Ленин и Брестский мир» (М., 1923) հրատարակությունը. քննարկությունների արդյունքով...

Այդուհանդերձ, 1924-ի հունվարի 23-ին թղթին հանձնված «Լենին» քերթվածը ժամանակի համաժողովրդական պահվածքին ու հավատքին հավասարազոր արձագանք է՝ թե՛ չանդալի թափով, թե՛ բովանդակությամբ.

... Թե՛լ-թել,
Նյարդ-նյարդի հետևից,
Նյարդից թե քո, թե իմ-
Առել է դասակարգը-
Տվել է Լենինին:
Թել-թել,
Նյարդ-նյարդի հետևից
Հյուսել է - բարդ
Կանվա:
Եվ հիմա
Ինչը-
Վախճանվա՞ծ...
Մեռա՞ծ կամ.
Կամ չկա՞... (3, 150):

Իրոք, հեղափոխության տրիբուն բանաստեղծի կրքոտ շնչառությամբ տրոփող հիմներգությունը՝ ճիշտ այն տրամաբանությամբ, որով Պ. Սևակը գտնում է,

թե՝ «... ամեն մի ճշմարիտ ու մեծ արվեստագետի մեջ ննջում է հեղափոխականը: Այդպես դատելով՝ հեղափոխության թեման ոչ միայն բանաստեղծական է, այլև ինքնին բանաստեղծություն է...»[1]:

Երևում է, Չարենցի դեպքում «ննջելը» բացառված էր. և 1924-ի այդ օրերին նրապում էր հեղափոխության նոր ալիք՝ 1923-ի ամռանը «Կապկազում» դրոշմված անկոտրում-համառ սպասումներով.

... Ռուսիթում հեղափոխությունը քնեց,
Լեռ էր. մուկ ծնեց,
Մնա՛վ... (3, 91),–

Ուռռա՛, ուռռա՛, ուռռա՛ա՛ա՛», «Դալո՛յ-դալո՛յ-դալո՛յ», նորեն «Բոլորը միաբերան՝ «Կորչի՛ն-կորչի՛ն-կորչի՛ն»–

... Մենք հիմի շանց կտանք խալխին
էդ բոլոր խալխը լկտի... (3, 66):

Դե՛, երանի չէր. որ հենց այդ ժամանակ ինչ-որ ալիք բարձրանար, չշարունակվեր միձավանջային արյունոտ բռնատիրությունը... այն էլ 70 տարի: Ո՞վ կարող էր մտածել թե «քնելու է» այդքան երկար. մարդկության դարավոր ընթացքներով այդ ո՞ր երկրում է պարտությունից հետո հեղափոխությունն այդպես մահու չափ երկար «քնել»... Իրոք, բացառիկ դեպք ռուսական բռնատիրության հերթագայող անօրինակ դրոշմանիշով, որը դաղութատիրական մոլուցքով այդպես էլ երկար ժամանակ չդարձավ և հիմա էլ դժվարանում է դառնալ յուր ներքին կյանքին... Եվ սակայն, ինչ էլ լինելու լիներ, հարկավոր էր ապրել ու գործել, ապրեցնելու համար հարազատ ժողովրդին: Ըստ այդմ ուժի մեջ էր «Պուրզոռունայով» հուշակած ամենաէականը. համառ պայքար հետամնացության դեմ՝ հանուն սոցիալ-տնտեսական առաջադիմության:

Սա Ալ. Մյասնիկյանի գլխավորած նոր-նոր ոտքի կանգնող հայոց կիսապետականության ու մտավորականության կառուցողական ծրագրի առանցքն էր՝ մնացած հարցերի՝ անդրադիտության... մալարիայի դեմ պայքարի, ներդաղթի ու գաղթականության, անապաստան – որբահավաքի[2]... այլևայլ նախաձեռնությունների ներթակայությամբ: Համաժողովրդական անասելի եռանդով, ուժերի հերոսական լարումով հայրենիքում թափ առած կյանք, որին, ահա՛, չէր կարող

---

[1] Պ. Սևակ, Եժ., հ. 5, 1974, էջ 320:

[2] Այս գործի հանրաճանաչ նվիրյալներն են եղել Միքայել Մանվելյանը և իր տիկինը. ականատեսները հիշում էին նրանց՝ Մանվելյանների հայանի ձեռնափայտով, ձմեռային-ամառային շապոներով.— Ղանթարից, Անգլիական այգուց մինչև համալսարանի շենք անապաստաններ հավաքելիս. ոտաբոբիկ-մերկոտ մանկիկների թաթիկներ բռնած... Մոռացված խրողություններ... մինչդեռ մտավորականներին համար թաքցնում են խորախորհուրդ դասեր... անել կուզի ամոթալի...

մասնակցել բանաստեղծը՝ իր անձի դեմ 1923–ին հրահրված գաղջ մթնոլորտի, Սարիկի դժբախտությունից ապա և «խեղդվելու» եղկելի պատմություններից հետո: Հետևողականորեն բորբոքվող գրական պայքարով իր դեմ:

Չարենցի, Մայակովսկու և ֆուտուրիզմի ջախջախումը...

> Չկա աշխարհի երեսին մի այնպիսի բան, որ ահարկու լինի խավարից...
>
> Մ. Նալբանդյան

Պերմանենտ հեղափոխության փոխարեն՝ պերմանենտ ջարդարարություն. ամեն տարվա հետ վերաբորբոքվող՝ աննահանջ, հետևողականությամբ գրականության «ճակատում»: Այսպես. Իլյիչի մահվան տագնապները մի կողմ թողած՝ 1924–ի հունվարի 1–ին «Заря Востока»–ն տեղեկացնում էր, թե՝ «... հունվարի 2–ին Հայարտան թատրոնում նշանակված է Կարա–Դարվիշի դասախոսությունը՝ «Մայակովսկին, «Լեֆ»–ը և արվեստի մի քանի պրոբլեմները» թեմայով: Մշակ նույն օրվա հայտարարությունը գրավում էր քսան անգամ ավելի տեղ. հավելված էր, թե սկզբից նշանակված է «Հայ ֆուտուրիզմի առաջիկա 10–ամյակի (1914) առթիվ, վերջից էլ թե «Մոսկովյան «Леф»–ը և նրա առաջ դրված գեղարվեստական մի քանի պրոբլեմները (ֆուտուրիզմի շուրջը). սրանից հետո էլ՝ «Զեկուցումից հետո գրական մեծ դիսպուտ, որին մասնակցելու են հրավիրված Արշ. Մելիքյան, Արտ. Կարինյան, Ա. Վշտունի, Արազի, Ամեռ, Ա. Մկրտչյան, Ա. Բուրջալյան, Գ. Ղարաջյան, Գ. Հայկունի, Գ. Լևոնյան, Գ. Մելոյան, Գրիգ, Խ. Ալիխանյան, Հ. Սաղաթելյան, Գ. Խալաթյան, Մ. Դարբինյան, Մելիք. Նորայր, Պողոսյան, Ս. Խանոյան, Սուրխաթյան, Ս. Երզնկյան, Վարդապետյան, Բախանակյան և հասարակության միջից ցանկացողներ:

Դիսպուտին մասնակցելու հրավիրված են վրաց ֆուտուրիստները:

Վերջում Կարա–Դարվիշը կը ոգեշնչե իր թովչանքը:

Արաս Աբադյան հրապարակ. սկիզբը երեկոյան ժ. 8–ին»:

Եվ այսպիսի բազմամարդ հրավիրյալներով ու հանդիսավորությամբ «ֆուտուրիզմի տասնամյակ» նշելը փոխակերպվում է **ֆուտուրիզմի ջախջախման**: Համենայն դեպս, որքան էլ գույները մեղմացված, այդ է հետևությունը «Կարա–Դարվիշի զեկուցումը» վերտառությամբ և Ունկնդիր ստորագրությամբ հունվարի 6–ին Մշակ տեղ գտած հաղորդումից, որը ծայր էր առնում Կարա–Դարվիշի զեկուցմանը վերաբերող այս տողով. «... միանգամայն ձանձրալի էր այն և անհաջող ընթերցումով, և **եթե չլիներ ընկ. Կարինյանի հմտալից, եթե կարելի է ասել՝ հակազեկուցումը**, շատերն, անշուշտ, կհիասթափվեին և գուցե թե կդադարեին հաճախել հետագա դասախոսություններին գրական հարցերի շուրջը» (ընդգծ.՝ Ալ. Զ.):

Ինչ վերաբերում է զեկուցման և դիսպուտի արդյունքին, ապա Ունկնդրի եզրակացությամբ սա էր. «... Եվ եթե ֆուտուրիզմի մասին կարևոր լինի խոսել, ապա այդ դրական հոսանքը նոր պետք է համարել մեր կյանքում և կապել Ե. Չարենցի անվան հետ: Թեև վերջինիս գեղարվեստական շնորհքը կազատի նրան ֆուտուրիզմից և կուղղի դեպի պրոլետարական պոեզիան:

Պետք է մի անգամ ընդմիշտ համոզվել, որ հայ միջավայրը ֆուտուրիզմի հող չունի, և ֆուտուրիզմը հայ միջավայրում գոյության իրավունք չունի (ընդգծ.՝ Ալ. Զ.):

Ուրեմն և հիշենք՝ շեշտադրումով, այլևս իրավունք չունենալով, Մայակովսկու և Չարենցի բոլոր տեսակի առնչություններն ու հարաբերությունները այդուհետ ընդհատակյա են: Ըստ այդմ պետք է որ վերծանվեն որպես այդպիսին... Բնականաբար, հավաքական առանձին լուսաբանությամբ: Չէ որ Մայակովսկու նշանաբանը՝ **«Արդի պոեզիան՝ պայքարի պոեզիա է» հանգանակն էր:**

Բացահայտորեն Մայակովսկուն ու Չարենցին հասցեագրված այս տողերը, անկասկած, բառացի քաղված են «ընկ. Կարինյանի» եզրակացություններից, և, ինչպես կարելի է նկատել, քաղաքակիրթ քողով արձագանքում են արևելքի հնօրյա տիրակալների արձակած հրամանով հրապարակորեն լեզու կտրելու սովորույթին: Մոտիկից ծանոթ Կարինյանի խոսակցական–արտահայտչական զինանոցին (երկար տարիներ աշխատակիցն էր Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի) պատկերացնում եմ, թե քամահրանք–արհամարհանքի, հեգնանքի, ծաղրի, ծանակի, խայթելու... քանի՜–քանի՜ տարբերակներով է հնչեցրել ասելիքները ընդդեմ Մայակովսկու ու Չարենցի:

Բայց չէ որ Դեկլարացիան կրում էր նաև Գ. Աբովի ու Ա. Վշտունու ստորագրությունը... Ո՞ւր են նրանք...

Դժբախտաբար, հաղորդման մեջ բառ իսկ չկա դիսպուտի բնույթի կամ մասնակիցների մասին, բայց ինքնին խոսուն է ֆուտուրիզմի հակառակորդների, թեկուզ և միայն առաջնորդների՝ Կարինյան, Հայկունի, Վշտունի... անձնակազմը: Ըստ այդմ անհայտ են հակառակ կողմի մասնակիցները. թե ովքեր են եղել դահլիճում, որոնց ներկայությունը պետք է որ կրկնապատկեր հաղթանակ տանողների ցնծությունը. ելույթնե՞ր եղել են արդյոք, թե գաղափարական նման հաղթարշավից ընկճված–սրտնեղած հեռացել են՝ իրար մեջ դժգոհություն ու երկյուղ փոխանակելով... Այնուամենայնիվ՝ ի դեմս Սուրխաթյանի ընդդիմությունն իր խոսքը հասցրել է ասել դիսպուտի հաջորդ օրը Մակչ զետեղված Պք թիվ 12–13–ին (1923) նվիրված գրախոսականով. այն է թե՝ «... Չարենցի մեջ Աբովը գտնում է «երկվություն»... ինչ վերաբերում է Չարենցին վերագրված «մահացու մեղքերին», մենք կարծում ենք, որ դրանք ավելի շուտ արձագանքն են Աբովի սեփական ապրումների...»: Անպակաս էին հարձակումները նաև Սարյանի ու Կոջոյանի դեմ, ուստի առանձին հատվածով գրախոսը անդրադառնում է և նկարչությանը, արդարամտորեն հավաստելով, թե՝ «Երկու խոշոր նկարիչ ունենք Հայաստանում՝ Սարյան

և Կոչոյան: Երկուսի գործերն էլ միաժամանակ և նման ձևով պետք է հրապարակ հանել առանձին-առանձին պլենումով»:

Այդուհանդերձ, ըստ ամենայնի նենգաբար կազմակերպված դիսպուտը Չարենցի ու Մայյանի հակառակորդների (և ոչ միայն...) քիչ է ասել տակտիկական խարդախ քայլերից էր: Փաստորեն՝ Երևանում վերջացած համարելով ֆուտուրիզմի, ավելի ճիշտ՝ **Մայակովսկու և Չարենցի ջախջախումը**,— այժմ էլ հակառակորդները՝ հակադարձությամբ «ճակատամարտը» ի տես ավելի լայն հասարակայնության,— **փոխադրել էին Թիֆլիս ու հաղթանակել**: Ընդսմին տպավորությունն այդ քայլերից այն է, որ Չարենցի դեմ ծավալված այս պայքարը բոլոր նշաններով ուղղված էր հավասարապես նաև Մայակովսկու դեմ:

Բնորոշ է նաև, որ այս «ճակատամարտից» հետո Կարինյանը, ասես, որոշ ժամանակով հայտարարում է «զինադադար». շուտով դադարում է և նրա խմբագրությամբ լույս տեսնող «Պայքարը»: (Չէ՞ որ արդեն լուծված էր Ղարաբաղի հարցը, Կ. Զարյանն էլ արդեն մեկնելու էր արտասահման): Ուժերի նոր դասավորությամբ էլ ավելի ու ավելի հաճախակի է դառնում Վշտունու եկումուտը Թիֆլիս...

Ուրեմն և կամա թե ակամա ստիպված ես հետևել ջախջախող անձնակազմի չհախնդրության բուն ակունքներին, հեռահար նպատակներին ու արյունալի հետևանքներին՝ փաստացի պատկերացնելով հայ ժողովրդի դեմ «հայր» Ստալինի անհագուրդ ոխակալության չափերը...

Պարզվում է, որ «զինադադարն» առերևույթ էր. Ղարաբաղի հանձնմանը հաջորդելու էր այս անգամ էլ Մյասնիկյանի սպանությունը. իսկ մինչ այդ նախատեսվում էր Չարենցի ուղևորությունը արտասահման. մինչև մեկնելն էլ Մայակովսկու և Եսենինի այցը՝ Թիֆլիս ու Անդրկովկաս...հենց նրանց այցելության օրերին էլ բորբոքված՝ վրացական հարավի գյուղացիության ապստամբություն... և պատահական չէ, որ այս ամենին ուղեկցում է հայոց մշակույթի և գործիչների եռանդուն-անդուլ նվաստացում... ընդհատակյա և առանց ընդհատակի... Հերթի դրված հարցեր, որպիսիք հուշելով պարտադրում են դիմել վրաց գրողների օգնությանը. նրանց միջոցով Եսենինին ու Մայակովսկուն առնչվող իրողություններ պարզելու առումով...[3]

* * *

Ուրեմն և նշավակելով խորհրդային ահաբեկչա-լրտեսական ծառայությունն ու գործակալներին վերից վար,— եթե չհաջողվի կրճատել, ամբողջությամբ մեջ բերենք «Մոսկվա, 924, 8 II» տարեթվով Չարենցի ծավալուն նամակը ուղղված իրեն դավադիր խեղդվելուց փրկած Մամիկոն Գևորգյանին: Նախապես ներողություն խնդրելով ընթերցողից, որ, պարզապես հնարավոր չեղավ կրճատել. այնքան որ ենթաբնագրային իմաստներով բեռնավորված են բառերը, բառակապակցություննե-

[3] Հասկանալի է. համապատասխանաբար «Չարենց և Եսենին» և «Չարենց ու Մայակովսկի» ենթագլուխներով:

րը, տողերը, որոնցից առավել կարևորները հարկ կլինի ընդգծել, որքանով այն ժամանակներում խստորեն ստուգում էին հատկապես կասկածելիների նամակները, ասել է՝ բացառված էր անգամ ընդգծելու հնարավորությունը, զգուշություն էր պահանջվում անգամ փառահելի ձեռքով ուղարկելիս: Եվ այսպես.

Սիրելի Մամիկոն,

Թուղթ առաջին

Մի՞թե վիճակված է վերուստ ինձ, **Թափառականիս**, *այնպես էլ «անլուր» մնալ, այդտեղի կյանքին անհաղորդ, և ո՞վ է, ո՞վ է, ո՞վ է, այդ բանում մեղավոր. քան ինքը Մամգուն իշխանը, որից ես մի «записка» եմ ստացել միայն 9 պունկտից, որոնցից ամեն մեկը մի մեծ նամակի նյութ է, իսկ ամենավերջինը («Մի երկար նամակ գրելու»)—հույս ու ավետում!*

Օ, սիրելի Մամգուն, հայտնում եմ քեզ հենց էս գլխից, որ ես, **Հայաստանից դուրս գալուս օրից**, *և ոչ մի նամակ չեմ ստացել որևէ մեկից, և ոչ ոքի չեմ գրել (ի բացառյալ քեզ գրած նամակս).[1] հասկանալի թող լինի ուրեմն քեզ, իշխանիդ, թե որքան ուրախություն կարող է պատճառել ինձ, պոետիս, քո գրությունը, որը (a priori կարելի է ասել) այնքան հետաքրքիր բաներ պիտի որ պարունակեր իր մեջ: Օ, սիրելի Մամգուն, լսի՛ր թախանձանքներիս և գրիր. գրիր քո մասին, Պետթատրոնի մասին, «Նորքի» մասին, գրական անցուդարձի մասին,— մի խոսքով—ինչի մասին որ կուզես,— և, վկա է էս գրիչս, որ քո էդ ըղձալի նամակի ամեն մի բառի համար հազարապատիկը կվարձատրի քեզ այլահը, կամ, կուզե՞ս, նույնիսկ ես—նամակներով, գրքերով, ինչով կուզես!!*

Թուղթ երկրորդ

Ամենից առաջ «Նորքը»: Ի՞նչ է անում: Լույս կտեսնի՞, թե ոչ: Շատ հետաքրքիր կլիներ իմանալ բովանդակությունը: Հետո—Պետթատրոնը: Ի՞նչ ծրագրեր ունի: **Գրել էիր, որ դեկտեմբեր ամսին կխաղացվի իմ «Կապկազը». Հո՞դս ցնդեց** *արդյոք, թե դեռ լույս աշխարհ չի տեսել: Ի՞նչ են անում այդտեղ Նաիրյան գրականները. հետաքրքիր է քո կարծիքը մեր արդի գրական իրականու-*

---

[1] *Բանից պարզվում է գրել է. այն էլ երկուսը. հետևում է «13. 1, 1924 թ., Երևան» տարեթիվով Ա. Մռավյանի՝ Ալ. Մյասնիկյանին ուղղած նամակից. «Սիրելի Ալյոշա, Չարենցից երկու նամակ եմ ստացել. խնդրում է Պոլսում հրատարակված իր Երկերի համար հոնորար: Դա մեր Պետհրատին դնում է դժվար դրության մեջ. նախ՝ որ պահանջում է 500 ռ. (տողահաշվով՝ 10 կոպեկով, հենց այդքան էլ գալիս է դեռ քիչ էլ ավելի). մի գումար, որը Պետհրատի համար զգալի. շատ զգալի գումար է. երկրորդ, որ Չարենցի առաջին հրատարակությունից դեռ ունենք բավականաչափ, և շատ դանդաղ է ծախվում: Պետհրատի խմբագրական կոլեգիան (Աչ. Հովհաննիսյանի և Գյուլի—Քեվխյանի մասնակցությամբ) ստիպված էր որոշում հանել չվճարել Պետհրատի միջոցներից և խնդրել, որ Դուք այդ հրատարակության ֆոնդի մնացորդներից մի կերպ լրացնեք: Կխնդրեի երկտողով գրեք ինձ Ձեր որոշման մասին: Ենթադրում եմ, որ կարելի է Չարենցին քիչ պակաս վճարել, քանի որ Պոլսի հատորում զետեղված նյութերը արտատպություններ են: Ասքանազ». Վրաստանի Парт — архив... папка 7, стр. 244. Այժմ պետք է որ գտնվի Ազգային Պետական արխիվում:*

թյան մասին: **Այստեղ է ընկ. Կարինյանը. նրա ասելով — ամայություն է, մեռյալ կետ, սպիտակ նիրվանա:**

Եթե քեզ հետաքրքրում է իմ, նվաստիս, կյանքը, ապա պիտի ասեմ, որ ես երբեք **այնքան ամուլ չեմ եղել, որքան հիմա: Չգիտեմ—կրիզի՞ս է, թե վերջ: Ոչ մի հատիկ թեմա, կամ թեմայական մի բան չի պղտորում երևակայությանս ջինջ մաքրությունը, ներողություն—դատարկությունը! Անամպ երկինք է հիմա երևակայությունս, անարեգակ խավար: Պատճառը ես գիտեմ: Կուզե՞ս—քեզ էլ կասեմ, բայց ոչ ոքի չասես:** *Անցյալ ձմեռվա ընթացքում Երևանը մի հսկայական գործ կատարեց իմ հոգեկան զարգացման զլեգվադանման ուղղում. այն է՝ արմատախիլ արեց իմ մեջ այն ամենը, որ նաիրյան էր, ռոմանտիկ, տեղական: Ոնց որ կավիճով գրված էր էդ բոլորը իմ հոգու տախտակի վրա—*

Թուղթ երրորդ

Եվ ահա ճակատագրական մի ձեռք օրերի սպունգով սրբեց այդ ամենը մի ձմեռ—ու տեղը թողեց—բաց տարածություն: Շատ ուրախ եմ: Ինձ ավելի քան երեխայացնում էր այդ ռոմանտիզմը: Շնորհակալ եմ 1923 թվի Երևանից: Բայց բանը նրանումն է, որ վերոհիշյալ «բաց տարածությունը» դեռ չի բեղմնավորվել: Եվ կբեղմնավորվի՞ արդյոք, և ինչո՞վ, և ե՞րբ—անհայտ է ինձ, ցավոք,—բայց մի բան ես զգում եմ, պարզ է ինձ համար. ինչով էլ որ բեղմնավորվի սրանից հետո իմ **նաիրյան ռոմանտիզմից ազատագրված հոգին—բերքը ավելի բարձր, ավելի—ավելի լիքը ու հասուն կլինի, քան առաջվանը.** *(ընդգծ. Ալ. Զ.) ռոմանտիզմը, ինչ գույնի էլ նա լինի, մանկական է, երեխայական հասակը բնորոշող, ինչպես կրոնը մարդկային հասարակությունների զարգացման մեջ,—կամ ընդհակառակը ծերության, մայրամուտային գոյավիճակի արդասիք է (որ վերջին հաշվով միևնույն է. երեխան և ծերունին քչով են տարբերվում իրենց հոգեկանում)—ուրեմն, սիրելի Մամդուն, կեցցե կոնկրետ, պոզիտիվ վերաբերմունքը դեպի կյանքը,— մի վերաբերմունք, որ լուրջ է, ինչպես հարկ է լինել ամեն մի հասակն առած մարդու—եթե միայն այդ մարդը առողջ է ու կենսունակ և իրեն կապված է զգում վերելքի ճանապարհին գտնվող, հաղթող դասակարգին»:*

Եվ վերջապես

Թուղթ չորրորդ և վերջին

Ասածներիցս պարզ պիտի լինի, թե ինչու ես չեմ կարող շարունակել «Երկիր Նաիրին», նրա ժամանակն անցավ: **Ես օրգանապես** *(Չարենցի ընդգծումն է Ալ. Զ.) արդեն հեռու եմ այդ ամենից և իմ առաջ հիմա, դեռևս մշուշանման, ուրվագծվում է մեր, մարդկային, համամարդկային այսօրվա կոնկրետ կերպարանքը և ապագա կենցաղը (սովետական կարգեր + ամերիկանիզմ)—այդտեղ է ահա, որ նոր հյութեր պիտի գտնի (եթե միայն նրան վիճակված է գտնել)—իմ ստեղծագործական կարողությունը: ....*

..........Էսպես: Սրանով վերջացնենք: Մոսկվայում ձանձրացել եմ, բայց Հայաստան չեմ ուզում գալ. կուզեի գնալ Եվրոպա, գնալ Ամերիկա. **գոնե աչքերով** Հաղորդակից լինել այն կուլտուրային, որի անունն է մաշինիզմ և տեխնիցիզմ—որի մասին այնքան անճարակ երևակայություններ է գրում «Леф»—ը,— և այնքան Հանճարեղ Ուեյլսը:

Բայց Թուղթս վերջացավ: Օ, սիրելի Մամգուն—գյի՛ր: **Եթե այս նամակն էլ անպատասխան մնաց—կմնա այս մի Հատիկ տրադիցիան էլ կտրել Երկիր Նաիրիի Հետ. չգրել անգամ մի Նաիրցու— և պատասխան չսպասել:**

Հասցես, որ չասես թե չգիտեի. Москва, Армянск. пер., д. №2, Д.К.С.А. Егише Чаренцу.

Բարևներ Ինձանից ու Արփիկից:

Քո՛ Չարենց»[5] (6, 403–406):

Վերաքաղված սույն Հատվածները, կարծում եմ, տեղին են գաղափար կազմելու բանաստեղծի մտքի ու վերաբերմունքի երկայրի զիգզագներին, որպիսիք սովորաբար Համարում ենք Հակասություն: Ընդունված կարգով չպատկերացնելով թե ինչ է նշանակում գրել այնպես կամ այն, որպեսզի կարողանաս ապաՀովագրել կամ վնասազերծել թե՛ քեզ, թե՛ ժողովրդիդ. միաժամանակ ասես այն, ինչ ուզում ես տեղ Հասցնել: Սա յուրատեսակ ծածկագիր է ձևավորված—վերակոչված միջնադարյան ինկվիզիցիայի չափ աՀավոր խորՀրդային «իրավակարգում»:

Ուրեմն և Հիշենք. «Չկա աշխարՀի երեսին մի այնպիսի բան, որ աՀարկու լինեի խավարից»...

Իսկ մի այլ տեղում. «... Այն եվրոպական լուսավորությունը, որին ձրիաբար կարող է այժմ մասնակից լինել մարդկության ամեն մի անդամը, արյունի գին արժե Եվրոպային: Սա ամբողջ կես դար մանուկ զորությամբ սուրը ձեռքին պատերազմից մի իրավունքից զրկված Հզոր պառավի Հետ, որի դիշերասեկ զինվորքը շատ էին, քան թե լուսավորության որդիքը: Արյունով լվացվեցավ Եվրոպան այս ընդՀանուր գործողության ժամանակ, զարմանալի բան. ճշմարտությունը և լույսը ասես միշտ պիտո է պատերազմելով Հաղթեն խավարին և ստության և Հափշտակեն Հաղթության ձիթենին: Այսպես է աշխարՀի կարգը, այո՛, և նախախնամության կամքը, որպեսզի ընտրյալքը երևին...»[6]:

Ուրեմն և նույն ոգով. «... **ես երբեք այնքան ամուլ չեմ եղել, որքան Հիմա... անամպ երկինք է Հիմա երևակայությունս, անարեգակ խավար»:** Այնպես որ. «անցած ձմեռվա» (ասել է՝ 1923—ի) «Նաիրյան ռոմանտիզմից ազատագր-

---

[5] Սույն նամակը՝ 1923—ի էջերում քաղված—վկայված նյութերի Հետ միկանղ, փաստացի ապարկայական Հիմք են տալիս Հայոց մշակույթի պատմության էջերում՝ որպես բանաստեղծի և իր վաստակի փրկարարների, խորին Հարգանքով ու երախտագիտությամբ կողք—կողքի արձանագրել **Մամիկոն Գևորգյանի և Ռեգինա Ղազարյանի անունները:**

[6] Մ. Նալբանդյան, ԵԼԺ, Հ. 2, 1980, էջ 266:

վելու» վերաբերյալ կարող է խոսք լինել միայն այդ «անարեգակ խավարի» տեսանկյունով...: Իհարկե, Տիգրան Հախումյանին առնչվող տեսանկյունից...

Եվ այս է ղարաբաղյան ահեղ պարունակներին հաջորդած կացության սթափ գիտակցությունը, որը շուտով Ալ. Մյասնիկյանի առավել սթափ հանձնարարականով պետք է հանգեր արտասահմանյան ուղևորությանը... հանուն ՀՕԿ-ի ու ներգաղթի...

Հուսախաբ օրեր ու ամիսներ

Հոգեմաշ, հուսախաբ, անելանելի օրեր, ամիսներ. քաղված նամակում էլ ընկճվածությունը ամենապահ ջանքերով քողարկելու, չմտածելու ճիգեր, ի վերջո կյանքի հանդեպ «պողպատե վերաբերմունք» մշակած «լուրջ... հասակն առած մարդու» չինծու կեցվածք, որը նույն օրերին կամ գուցե կարճ ժամանակից հանգեցնում է այրելու համար լույս աշխարհ եկած, թե՛ չեկած «Standard»-ը: Այդ մեկ համարով լույս տեսած ամսագրի բնագրերը լայնորեն ծանոթագրված են Չարենցի ԵԺ 6-րդ հատորում (618–629): Իր հուշերում այդ հարցերին էականորեն անդրադարձել է Չարենցի ու Հալաբյանի հետ միասին ամսագրի նախաձեռնողներից Մ. Մազմանյանը: Նրա վկայությամբ «Ստանդարտի» ծրագրի գրականության մասը շարադրել է Չարենցը, նկարչությանն ու ճարտարապետությանը՝ Հալաբյանն ու ինքը: Ներկայացնելով ամսագրի շապիկը՝ Լենինը «ողջ հասակով մեկ՝ կանգնած դինամո մեքենայի վրա»,— Մազմանյանը նշում է, թե «այդ կոմպոզիցիան պետք է արտահայտեր «Սոցիալիզմը՝ դա էլեկտրիֆիկացիան է պլյուս սովետական իշխանություն» գաղափարը» (ՀԵԶմ, 1, 68): Դժվար չէ նկատել, որ Չարենցի վերը քաղված նամակից սկսած ներառյալ 50-ականի վերջերին թղթին հանձնած Մազմանյանի հուշերը միտումնավոր աղավաղված է Լենինի հայտնի ձևակերպումը՝ Սոցիալիզմը՝ դա երկրի էլեկտրիֆիկացիան է պլյուս ամերիկյան գործիմացություն: Մոտավորապես այսպես: Եվ հենց այդ աղավաղման մեջ էլ թաքնված է «Ստանդարտի» նախաձեռնության՝ ինչպես ծրագրի, այնպես էլ գործնականի ռացիոնալ հատիկը:

«Ստանդարտի» բացահայտ ուղենշը գրականության և արվեստի ժամանակի ամեն կարգի դրսևորումների դեմ՝ հոգեբանական վեպ, կենցաղագրություն, անարխոֆուտուրիզմ, պրոլետկուլտիզմ...—խորքային բոլոր պլաններով ուղղված է հետամնացության դեմ. ոչ ավել, ոչ պակաս՝ գիտա-տեխնիկական նորանոր առաջադիմության հետամուտ 20-րդ դարի սկզբների համաշխարհային բարձունքների ու միտումների դիտակետից: Ամսագիրը՝ կարճատև կամ երկար ու բարակ՝ մեծապես Պլեխանովի տեսակետներով հիմնավորվող և Չարենցի ու ընկերների դատողություններով՝ բացահայտորեն որդեգրել է արվեստի ու գրականության օգտապաշտական ըմբռնումներ: Ճիշտ և ճիշտ բանաստեղծի «Ստանդարտի» գրական ծրագրի մասին հոդվածից քաղվող տողերի շաղկապվածությամբ. «... արվեստը պետք է ոչ թե արտացոլի, այլ ամենաակտիվ, ամենագործնական ու ամենաանմիջական ձևով պայքարի: Այդ հիմնական տեսակետից ելնելով է ահա, որ մենք ար-

վեստին ու դրականության... առաջադրում ենք... արվեստների բացառապես ակտիվ, անմիջական տեսակը–ագիտկան... ագիտ բանաստեղծությունից մինչև արկածային ագիտ վեպը, սատիրագիտը ու հերոսական ագիտ–դրաման» (6, 98):

Հաջորդ դատողություններով էլ հավաստում է, թե որքան էլ «ագիտկա» ասածդ «խրատնեցնող», այն թաքցնում է «կիրառական» որոշակի նպատակ, և գործարկվել ու գործարկվում է «զարգացման տվյալ շրջանի» համար: «Տվյալ շրջանի» կողքին, ինչ խոսք, հոլովվում են «դասակարգի», արվեստը «սոցիալական շահերի ծառայեցնելու» դարձվածներ, բայց չէ որ գիտենք՝ ընդհատակում գործ ունենք **«Պոեզոզունայով» հնչեցված հայրենիք և հարազատ ժողովուրդ գաղափարական աննահանջ տարողության հետ:**

Ուրեմն և օգտվելով ծրագրում տեղ գտած չարենցյան բառախաղից՝ «... ագիտկա է ամեն ինչ ու ոչինչ չկա բացի ագիտկայից. հարցի ամբողջ փոկուսը նրանումն է կայանում, որ կան տարբեր տեսակի ագիտկաներ, ինչպես կան ապնկուլյացիայի տարբեր–պարզ ու բարդ, անմիջական ու քողարկված–ձևեր» (6, 99),— ավել–պակաս, ինչ էլ համարելու լինենք «Ստանդարտը» ընդհատակում, խորքում թաքցնում է հետամնացությունը հաղթահարած, առաջադիմած–զարգացած հայրենիք ունենալու գերադրական բաղձանքներ:

Ճանապարհորդություն Ուելսի ժամանակի մեքենայով դեպի 2500–ի... Երևան...

Այդ բաղձանքները վերին՝ կարելի է ասել դարի 50–70–ական թվականներին բնորոշ իրողությունների չափանիշներով,— Չարենցը որդեգրել էր արդեն իսկ 1923–ի մայիս–հունիսին ստեղծված **«Ես և Իլյիչը»** *այսպես ասած արկածային ագիտ–քերթվածով: Մի գործ, որը ոչ այնքան իր և Իլյիչի մասին է, որքան առավելապես ֆանտաստիկ վեպերի հեղինակ Հերբերթ Ուելսի «Ժամանակի մեքենան» վեպի ոգով յուրօրինակ տիեզերադնացության ելած իր եսի և մարդկության մեքենայացված հեռապատկերի: Առանցքը սա է, որը և բնաբանատիպ տողերով ավում է խորագրին կից.* **«Մի էպիզոդ իմ ճանապարհորդությունից կատարված Ուելսի ժամանակի մեքենայով դեպի 2500 թ.»:**

Հիշենք որոշ տողեր.

...Սղոցում են օդը
Տարիները,
Կամքս – մեքենա,
Միտքս – Ուելս:

Թռչում եմ:
Թռչում է միտքս...

Այնուհետև.

...Իհարկե՛, նա ինձ հասկանում է:
Մեքենան միտք ունի երևի:
Էն, որ կարդացել եմ...

Եվ ապա՝

Թռավ,
Թռավ,
Թռավ,
Մնացին ներքևը–արևը,
Լուսինը,
Մարսը,
Սատուրնը –
Մոլորակներ...

Եվ այդ «ահագին գունդը»

...Խրել է միտքը մեջս.
Երևի քննում է.
Կարդում է միտքս.
Հետևում է...
...Վերջապես...
— Ռակետ էր ակնթարթը...

Եվ ինքը նրանով հասնում է **նպատակակետին՝ 2500 թ. Երևանին. ժամանակի մեքենայի հետ բացելով այսպիսի սրտառուչ զրույց.**

...Միթե սա – Երևա՞նն է.
Սո՛ւտ է:
Լսո՞ւմ ես. Երևան չե՛ս բերել դու ինձ.
Երևանն – ալան էր.
Երևանը – Վանի պես քոսոտ էր.
Ճչում եմ:
Փնչում եմ:
Կանչում եմ ծերուկին:
Ուղեղս սղոցում է դողը:
Է՜յ
Ծերո՛ւկ,–

Երևա՞նն է ասում ես.
— Դե ցո՛ւյց տուր Մասիսը, թե կարող ես.
Մասի՞սը.
Նա՞.
Արա ձյո՞ւնը...
Լսո՞ւմ ես,
Է՛յ,
— Ձյունն եմ ուզում – սպիտա՛կը...
Ի՞նչ շենքեր են էնտեղ,
Էն ի՞նչ բուրգեր են ապակի...
Էն ի՞նչ է բարձրանում... (3, 154, 160, 163–164)

Այսպես «տիեզերագնացության» դուրս եկած Զարենը շրջում է երկրագնդով մեկ, կտրում Խաղաղականը, հասնում Ամերիկա, «կոշիկանման» Իտալիա... և այնուամենայնիվ «ուրագանի» պես թռչող մեքենան ինչ-որ ամենից ավելի շատ պտտվում է այդ Երևան անունը կրող կետի վրա.

— Երևանն է...
Ծերո՛ւկ, խաբեցի՛ր ինձ:
Ինչ որ Նյու-Յորք լինի,
Ինչ որ Սան-Ֆրանցի՛սկո–
(Մի բան որ չեմ տեսել երկուսն էլ)–
Նայես՝ ի՞նչ կա հիմի մեր թաղումը... (3, 162–163):

Մտքի, երևակայության, զգացմունքի, զգայությունների, կամքի գերադրական վայրիվերումների մի շրջագայություն, որը թափի, կշռույթային այլևայլ տարբերություններով հանդերձ, խորքային տրոփյունով հարազատ է «Թողած Երևանըդ սիրուն» դիմումնային տողով **«Պաոլոյին» նվիրած Վ. Տերյանի հայտնի դարձդարձիկ բաբախումներին.**

...Հիմա սոսիները ծաղկում,
Ինչ քա՛ղցր են կանչում քեզ Նորք,
Իսկ դու՝ երազում ես անքուն,
Անքուն տենդով - «Նեվ-Յորք»:

Գնա՛, ես օրհնում եմ ազատ
Կարոտն ու հրահրումը այդ խոր,
Բայց կըգա, օ, գիտեմ ես, կըգա,
Կըգա տրտում մի օր. –

Ու մեկն մեր – նվագն իր մորմոք
Սրտում քո անհանգրվան
Կերգէ, և հոգիդ անամոք
Կասե՝ «Օ, Երևա՛ն»...[7]

Երկալիք բաբախումներից մեկով Տերյանին պատկանող քաղցր, անամոք կանչերը, Երևանի նաիրյան տրտմաշունչ նազող կարոտը. մյուսից՝ Պոլոյին – (ասել է՝ Պ. Մակինցյանին) պատկանող անքուն, ագահ, անհանգրվան «Նյու-Յորք» երազող տենդը՝ Չարենցի պարագայում վերաբերում են միայն ու միայն քաղաքամայր Երևանին, Երևանը Նյու-Յորքակերպ, Սան-Ֆրանցիսկոյակերպ շուք ու շնորհքով տեսնելու ամենակուլ, մոլի-մոլեռանդ տենդին:

Ինչ իմանաս, գուցե բանաստեղծը ինչ-որ տեղ մտածում էր, թե այդպիսով, թերևս, աստիճանաբար նահանջելով, 2500 թվականին կարելի է թե մարի հեռուների յասոնյան անհանգրվան մղումը հայոց մեջ, որ հերթագայելով՝ այս անգամ էլ սկսում էր գամվել Ռուսիո հետ նաև ամերիկյան ափերին... Ինչ էլ որ լինի, այն օրերին բանաստեղծը մեր այս օրերի հետ էր, մեր հոգսերի ու սպասելիքների հետ. տեխնիցիզմի ու մաշինիզմի... անգամ տիեզերքով մեկ շրջագայող յուրատեսակ թռչող գնդացրով... դարի գիտատեխնիկական հետագա ոլացքների հետ էր, միաժամանակ հարազատ ժողովրդի այս օրերի հոգսերի ու սպասելիքների հետ: Սպասելիքներ, որպիսիք առնչվում էին նաև Լենինի վերը նշված պլակատային ձևակերպմանը, որը համապատասխանաբար դրվագված է քերթվածի վերջնամասում.

...Նա ի՞նչն է,
Ծանոթը,
Հարազատը –
Մոտենում եմ. –
— Բյուստն է Լենինի... (3, 167):

Հետաքրքիր է, սակայն, որ Լենինը ևս իր հերթին առնչվում է Ուելսին: Հայտնի է, որ իր երկրորդ այցելության միջոցին՝ 1920-ի հոկտեմբերի 6-ին, Ուելսը զրուցել է Լենինի հետ, որ այնուհետև անգլիացի գրողի «Ռուսաստանը մշուշի մեջ» գրքի շնորհիվ լայն արձագանք է գտել Եվրոպայում: Իր գրքում՝ հավատ ընծայելով խորհրդային Ռուսաստանի սոցիալ-տնտեսական ու հասարակական առաջադիմությանը,— Ուելսը գտնում էր, թե, այնուամենայնիվ, դա երբեք չի հաջողվի առանց Արևմուտքի օգնության: Ասել է՝ գիտես 70 տարի առաջ գուշակել է այն, ինչ տնտեսագետ – քաղաքագետները հավաստում են այսօր:

Ընդհանրապես զարմանալի են գրողի կանխատեսումները. այդ թվում ատոմային էներգիայի օգտագործումը՝ խաղաղ ու ռազմական նպատակներով, տար-

[7] Վ. Տերյան, ԵԺ, հ. 2, 1973, էջ 38:

ըևր երկրների համագործակցության անհրաժեշտությունը՝ ընդդեմ բարբարոս նկրտումների ապահովագրելու նպատակով մարդկության քաղաքակիրթ առաջադիմությունը և այլն: Զարմանալիորեն նույնպիսի միջոցներով ու հունով, ինչպիսիք առաջավոր մարդկությունը ջանում է իրագործել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, այսօր և հեռանկարում...

Ուելսի հետ «Ճանապարհորդություն»... քաղաքակրթության քառուղիներով

Այնպես որ Զարենցի հետաքրքրությունը Ուելսով միանգամայն տեղին էր, ըստ այդմ՝ այլև հետևողական: Ապացույցը հավաք, գեղեցիկ տառերով «Զարենց 924, 3. 8» նշումով գնած այս գիրքն է՝ Герберт Уэллс «Краткая история человечества (От возникновения жизни на земле до Октябрьской революции и начало возрождения России)». (1924, М.—Л.)[8]:

Որքան էլ հետագայում ճշտված կամ շտկված լինեն պատմական որոշ՝ այդ շարքում Ռուսաստանի վերածնությանը վերաբերող իրողություններ ու հանգամանքներ,— կրոք, քաղաքակրթության հեռահար հեռանկարների մասին կարելի էր գիտողություններ անել միայն մարդկության պատմության այդօրինակ համահավաք իմացությամբ: Ավելի որոշակի՝ մարդկության դարավոր պատմությունը կկարողանար հմտորեն ենթարկել առանցքային մի դիտակետի. քաղաքակրթության զարգացման բարդ ընթացողությանը՝ զիգզագներով—ճոճք—թափահարումներով, տեղատվություններով ու մակընթացություններով: Անխտիր գրքի բոլոր 67 գլուխներում՝ կենտրոնացված պատմական խոշոր իրողությունների շուրջը՝ սկսած Քրիստոսի ծննդից առաջ մ.թ. 1000 թվականից մինչև 1922—ը: Մոտավոր գաղափար կազմելու համար ընտրությամբ թվարկենք մի քանիսը. Կարթագեն, Եգիպտոս, Հռոմ, առաջին Օլիմպիադա, Բաբելոն, Ասորիք, Հրեաների աշխարհ գալը, Ալեքսանդր Մակեդոնացի, Դարեհ... Բուդդա... Կոնֆուցիուս—Կուն Ցզի... Քրիստոսի ծնունդ... Սպարտակի ապստամբություն, Արշակունիներ, Սասանյաններ... Մուհամմեդի ծնունդ... Բուլղարների առաջին քրիստոնյա կայսրը... Ռյուրիկը Նովգորոդի և Կիևի տիրակալ... Ջինգիզ—խանի արշավանքը... Թուրքերի վերջին արշավանքը Վիեննայի մոտ. Յան Սոբեսս-

[8] Այսպես XXXIII «Рост Римской империи» գլխում կարդում ենք. «... Красс стал известен тем, что победил Спартака. Лукулл завоевал Малую Азию и дошел до Армении и, страшно разбогатев, удалился от дел. Красс, пройдя дальше, напал на Персию, потерпел поражение и был убит парфянами» (с. 115):

Գրքում ընդգծումներ չկան: Մի երկու տեղ եղած մանր հետքերից հետևում է, որ էջ առ էջ կարդացել է. և, ինչ խոսք, չէր կարող անտարբեր անցնել Լուկուլլոս և Հայաստան հիշատակության կողքից. չէ որ հռոմեացի զորավարը այդպես հարստացել և «Լուկուլլոսի խնջույք» ասույթով հայտնի՝ ցոփ կյանք էր վարել նաև Հայաստանից տարած պատերազմական ավարով:

կի... Պետրոս Մեծ... ԱՄՆ–ի անկախության հռչակագիրը... Ֆրանսիական մեծ հեղափոխություն... Հունաստանի անկախությունը... **...1835–ին նոր բառ «Սոցիալիզմ»...** Բեռլինի վեհաժողով...» 1914–ի մեծ պատերազմը Եվրոպայում և՛ ապա՝ «1917–ի երկու հեղափոխություն Ռուսիայում», 1920 Ազգերի լիգայի առաջին համաժողովը, որին արգելված էր մասնակցել Գերմանիային, Ավստրիային, Ռուսաստանին ու Թուրքիային. գլխավոր էր ԱՄՆ–ը: Եվ վերջապես. 1921–ի Հունաստանի հարձակումը Թուրքիայի վրա և 1922 հույների մեծ պարտությունը Փոքր Ասիայում...

Բանաստեղծությունից հետո (բայց ինչու ոչ կողքին),— Զարենցի մյուս կիրքը պատմությունն է. և թվարկված շարքի ու չթվարկված բոլոր պարունակներին անկասկած հետևել է լարված ուշադրությամբ: Ըստ այդմ գաղափար կազմելու համար թե՛ Ուլիսի մենախոսից և թե՛ ինչ–որ տեղ Զարենցի հետաքրքրությունների չափից, ավելորդ չէր լինի քաղել որոշ հատվածներ, որոնց անկասկած վերաբերվել է առավել սրված շահախնդրությամբ: Ինչպես այս մեկը **«Հոները և Արևմտյան կայսրության վերջը» գլխից**, որի կենտրոնական դեմքը նույն ինքը Զարենցի «Աթիլլա» պոեմի հերոսն է. «Հինգերորդ դարի երկրորդ քառորդին հոների միջավայրում տիրապետ բարձրացավ ռազմական մեծ առաջնորդ Աթիլլան: Մեզ նրա հզորության մասին հասել են լոկ կարճառոտ, բայց հետաքրքրաշարժ ակնարկներ: Նա իշխել է ոչ միայն հոների, այլև մի ամբողջ շարք գերմանական ցեղերի, որոնք հարկատու էին իրեն: Նրա կայսրապետությունը ձգվում էր Հռենոսից մինչև Միջին Ասիայի հարթավայրեր: Նա դեսպաններ էր փոխանակում Չինաստանի հետ: Նրա գլխավոր ճամբարը տեղադրված էր Դնեպրից Արևելք ընկած Հունգարիայի դաշտավայրերում: Այստեղ է նրան այցելել Կոստանդնուպոլսի դեսպանը...Կենսաձևը շատ նման էր նախնադարյան արիացիների կենսաձևին, որոնց փոխարինել էին իրենք: Հասարակ ժողովուրդը ապրում էր հյուղակներում ու վրաններում, իսկ զորապետերը բնակվում էին փայտե ընդարձակ...կացարաններում: Հոմերոսի հերոսները և անգամ մակեդոնացիները, Ալեքսանդրի ընկերները Աթիլլայի մայրաքաղաք–ճամբարում ավելի կզգային իրենց տանը, քան այն ժամանակվա Կոստանդնուպոլսի տիրակալ Թեոդոս II–ի անկում ապրող քաղաքակիրթ պալատում:

Երբեմն կարող է թվալ, թե հոների ու Աթիլլայի առաջնորդած վաչկատուները Միջերկրական ծովի երկրների հունա–հռոմեական քաղաքակրթության վերաբերմամբ կկատարեին նույնպիսի դեր, ինչպիսին դրանից շատ առաջ խաղացել էին բարբարոս – հույները եգեյան կուլտուրայի վերաբերյալ: Կարող էր թվալ, թե կրկնվում է նույն պատմությունը, բայց միայն ավելի լայն մասշտաբով: Սակայն հոները ավելի էին կապված քոչվորական կյանքին, քան վաղեմի հույները, որոնք ավելի շատ տեղից–տեղ փոխադրվող անասնապահներ էին, քան իսկական քոչվորներ: Հոները արշավում էին ու թալանում, առանց նստակյաց բնակություն հաստատելու:

453 թ. Աթիլլան հանկարծակի վախճանվեց մի գեղատի կնոջ հետ ամուսնանալու առթիվ կազմակերպված խնջույքի ժամանակ և մահից հետո էլ նրա թալանչիական համադաշնակցությունը մասնատվեց»[9]:

Քաղված հատվածներում կարելի է որոշակի գտնել Ուելսի մատուցած քաղաքակրթության զիգզագը՝ Թեոդոս II — Աթիլլա զուգորդությամբ, և միաժամանակ քոչվոր կողոպտիչների ու տեղից-տեղ փոխադրվող անասնապահ ցեղերի հարաբերում-հակադրությունը: Քաղաքակրթության զարգացման միևնույն մեկնակետի ներսում խաչավորվող այդ երկու առումն էլ անտարակույս գրավել են Չարենցին: Ամեն դեպքում նախ սեփական «Աթիլլայի» դիտակետից «Топчи их рай, Атилла» բնաբանի ոգով անիծյալ Հռոմեական կայսրապետության մայրամուտի առումով, որին վերաբերող հատվածը այստեղ քաղված չէ: Բնականաբար երկար մտածելու-խորհելու առիթ է տալիս քոչվոր և ոչ քոչվոր ցեղերի հարաբերակցությունը՝ անշուշտ, հարազատ ժողովրդի պատմական ճակատագրի տեսանկյունից:

Եվ սակայն դրանից զատ գործել է նաև մի երրորդ մակարդակի շահադրդություն:

Ակներևաբար Աթիլլային վերաբերող գլուխը Ուելսի գրքում կատարում է յուրօրինակ գաղափարական միության կենտրոնի դեր՝ Հռոմեական կայսրության մայրամուտի և 1917-ին երկու հեղափոխություն կատարած, և ապա քաղաքացիական կռիվներով բռնկված Ռուսաստանի կացության հետ որոշակի ձայնակցությամբ՝ ճիշտ և ճիշտ ցարական արքունիք և բոլշևիզմ հարաբերակցությամբ:

Կարող ենք հաստատապես ասել, որ Չարենցի համար արդիական նույնպիսի հետաքրքրություն է ներկայացրել և Ուելսի գրքի «Магамет и ислам» գլուխը, որից վերստին պետք է քաղենք մի հատված. «... Մեքքան այն ժամանակ հեթանոսական քաղաք էր, որտեղ պաշտամունքի գլխավոր առարկա էր ծառայում սև քարը՝ կաաբը: Որպես ուխտագնացության կենտրոն այն մեծ համբավ ուներ ողջ Արաբիայում, բայց երկրում մեծ թվով հրեաներ կային. Ինչպես Արաբիայի ամբողջ հարավային մասը դավանում էր հրեական հավատք,— Սիրիայում էլ կային քրիստոնեական եկեղեցիներ: Քառասունին մոտ Մուհամմեդը սկսել է ցուցաբերել մարգարեական շնորհ, այն, որին դրանից տասներկու հարյուրամյակ առաջ տիրապետում էին հրեական մարգարեները: Նա խոսում էր միակ ճշմարիտ աստծուց. պարգևների ու պատիժների, առաքինությունների ու արատների մասին սկզբում իր կնոջ հետ...»[10]:

Հենց այստեղ էլ առիթ ունենք շարունակելու «Չարենց-Նամեին» կցված Ա. Կուսիկովից քաղված «Москва, Москва!!!» և այլն,— բնաբանի շուրջը

---

[9] Герберт Уэллс, Краткая история..., с. 142—143.

[10] Նույնը, էջ 151:

բացված խոսակցությունը՝ հավելելով նոր լրացումներ: Հանրահայտ կեռմաններով հանդերձ, 19-րդ դարը մարդկությանը միաժամանակ սնում-զինում էր առաջավոր գաղափարներով ու առաքինություններով: Դրանցից մեկն էլ միջազգայնականության գաղափարախոսությունն էր՝ կոչված քաղաքակրթությունն ապահովագրելու մոտակա ու հեռավոր այլևայլ արհավիրքներից: Առաջացող ժամանակների հետ միջազգայնականության նվիրյալները շատանում էին՝ Վ. Հյուգո, Էմ. Զոլա, Ժ. Ժորես, Ան. Ֆրանս, Ֆ. Նանսեն, Ռ. Ռոլան, Ֆ. Վերֆել... Մ. Գորկի... նաև հայությանը սատարած ուրիշ-ուրիշ անունների պատվարժան փաղանգով: Այդ ընթացքով, բնականաբար, առաջին գիծ է մղվում կրոնական տարբերությունների չեզոքացման հիմնահարցը՝ տարբեր ցեղի ու դավանանքի մարդկանց մերձեցման, այդ ամենից վեր՝ մարդ անհատի ճանաչման հավատամքը: «Զարենց-նամեի» առիթով Զարենց-Կուսիկով-Եսենին անդրադարձով շոշափված-շոշափվելի հարցեր, որոնք Զարենց-Ուելս առնչակցությամբ նկատելիորեն լայնանում ու խորանում են հումանիտար մոտեցումների նոր հունով ու տարբերակով. հասարակական-քաղաքական-գիտական միասնական առումով:

Գիտական անհամեմատ լայն առումով աստվածաբանության կողքին կենսաբանություն, մանկավարժություն՝ այլևայլ համամասնություններով: Նաև այս հանգույցներում էլ պետք է դառնել ժամանակի ռուսական «աստվածաշինարարների» ու «աստվածորոնողների» շուրջը, որոնցից ոչ հեռու անցյալում կուսակցության էջերում բացասաբար հոլովվում էր հատկապես Ա. Լունաչարսկու անունը: Իսկ չգիտես ինչու մոռացվում էր, որ իր ժողովրդի համար սոցիալիզմից առաջ աստված ու աստվածապաշտություն էր երազում-որոնում-քարոզում Լև Տոլստոյը: Ամեն պարագայում հակառակ բոլշևիզմի, որը միջազգայնությունը նենգափոխեց նաև անաստվածության քարոզչությամբ՝ ի հետևանս՝ աստվածապաշտ չդարձած մի ամբողջ երկրի ժողովուրդների դատապարտելով խղճի ու խղճմտանքի անօրինակ սովի:

Տարբերակն այլ է հասարակական-տնտեսական առավել զարգացած, քաղաքակիրթ պայմաններում ծնված ու հասակ առած Ուելսի պարագայում: Սոցիալական նվաստ խավից բարձրանալով, նա կարողացել էր ստանալ մանկավարժական կրթություն, ապա ավարտել համալսարան՝ միանգամից ստանալով գիտական երկու աստիճան՝ միևնույն կենսաբանությունից: Ասել կուզի, Ուելսի մոտեցումը կրոնների մերձեցմանն ու տարբերությունների չեզոքացմանը՝ առաջին և վերջին հաշվով, միջազգայնականության հարցերին անդրադառնում է մանկավարժական-հոգեբանական և մարդաբանական-կենսաբանական ընդհանրական դրվածքով ու մեկնակետով, որը կարմիր թելի պես անցնում է գիտաֆանտաստիկ երկերից մինչև քննարկվող սույն «Մարդկության համառոտ պատմությունը», մինչև 1930-ին վերաբերող «Կյանքի գիտություն» եռահատոր գիրքը և հետո: Ուրեմն այս առիթով ևս կարիք կա հիշեցնելու, թե Զարենցի կյանքում որպիսի դեր է կատարել **«Գրքերի աշխարհը»**:

Ակներևաբար Ուելսի և արևմուտքի բազմաթիվ մտածողների, գիտության գործիչների ծառայությամբ էլ նախապատրաստվել–հունավորվել է մարդկության հուզող կենսական բարդ հարցեր լուծելու քաղաքակիրթ աշխարհի ներկայիս որդեգրած մակարդակը: Այս տեսակետից արժեքավոր են և Ուելսի գրքում տեղ գտած համանման հեռահար զգաստ դատողությունները.

«1918 թվականից աշխարհը թևակոխել է կոնֆերենցիաների ժամանակաշրջան: Դրանցից առավել հաջողվածն ու բովանդակալիցը եղավ 1921 թվին պրեզիդենտ Հարդինգի հրավիրած Վաշինգտոնյանը: Նշանակալից էր և Ջենովայի կոնֆերենցիան (1922) նրանով, որ մասնակցում էին Գերմանիայի ու Ռուսաստանի ներկայացուցիչներ: Մենք այստեղ հանգամանորեն չենք անդրադառնա կոնֆերենցիաների և այլ փորձերի այդ երկար շարքին: Այսօր արդեն ավելի ու ավելի է ակներև դառնում, որ՝ եթե մարդկությունը ցանկություն ունի խուսափելու մեծ պատերազմի նման մեծ չափերի հասնող փլուզումների ու զանգվածային սպանությունների կրկնությունից,— հարկավոր է վիթխարի աշխատանք կատարել ամբողջ կյանքը վերակառուցելու ուղղությամբ: Ո՛չ Ազգերի լիգայի նման շուտափույթ էքսպերիմենտները, ո՛չ պետությունների առանձին խմբավորումներով խորհրդակցություններ հրավիրելու անճկուն սիստեմը,— միջոցառումներ, որպիսիք կարծես թե ամեն ինչ դնում են իրենց տեղը, և սակայն ըստ էության ոչ մի չափով չեն փոխում իրավիճակը,— չեն կարող բավարարել նոր ժամանակաշրջանի քաղաքական կյանքի բարդագույն պահանջները, այն ժամանակաշրջանի, որին մենք մուտք ենք գործում: Այստեղ պահանջվում է տևական զարգացում և մարդկային փոխհարաբերությունների, անհատական ու խմբային հոգեբանությանը վերաբերող գիտությունների, ֆինանսական ու տնտեսական գիտությունների և մանկավարժության – դեռևս մանկական հասակում գտնվող գիտությունների շարունակական կիրառումն: Նեղ ու հնացած, մեռած ու մեռնող քաղաքական գաղափարները պետք է փոխարինվեն մարդկային ցեղի ընդհանուր ծագումնաբանությանն ու ընդհանուր ճակատագրին վերաբերող ավելի պարզ ու հասարակ պատկերացումներով»[11],— եզրակացնում է Ուելսը:

Ինչպես տեսնում եք անգլիացի գրող–մտածողի եզրակացությունները տող առ տող համընկնում են մեր ժամանակների մարդկությանը պեկլող մտահոգություններին և իրագործվող լուծումներին: Ուրեմն և անտեղի չէր Չարենցը տարված–ոգևորված Ուելսով: Մանավանդ, երբ հիմնական երկու հարցադրումն էլ ծանոթ, այլև ընտանի մտայնություն էին հայոց միջավայրում: Վերջինը մարդկային ցեղի ընդհանուր ծագումնաբանությանն ու ճակատագրին վերաբերող տողերով, ասել է՝ կենսաբանական–մանկավարժական–հոգեբանական դրվածքով,— հարազատ էր Շանթի ստեղծագործությամբ. հիշենք, որ Շանթը նույն-

[11] Նույնը, էջ 270:

պես գերմանական համալսարաններում ուսանել էր մանկավարժություն ու հոգեբանություն,— և նրա աշխարհայացքի ձևավորմանը,— ինչպես խոստովանել է ինքը,— վճռական մասնակցություն են ունեցել «կենդանաբանությունը, բնագիտությունն ու տարրագիտությունը». և որ նույնպես ուշադրավ է, ինչպես Ունեսի դեպքում, դարձյալ՝ Դարվինի ուսմունքի հիմունքների ու էության հետևությամբ: Ավելին. կարելի է ասել, որ Զարենցի հետաքրքրությունը բնական գիտություններով,— ապացույցները ունեցած գրքերն են՝ Նյուտոն... Ֆրեյդ... Պավլով... Էյնշտեյն... և ուրիշներ,— ենթագիտակցաբար, թե գիտակցաբար վաղ երիտասարդական տարիներից զգալիորեն սնունդ է առել Շանթի ստեղծագործությունից, հենց «Հին աստվածներից» ու պոեզիայից:

Զարմանանք, թե չզարմանանք, պետք է ընդունենք նաև, որ հայոց հասարակական գիտակցությանը օտար չէր նաև ընդդեմ «մեծ պատերազմների» «տևական զարգացում» պահանջող մարդկության, «կյանքը վերակառուցելու» Ունեսի հարցադրումը: Նորից հայ ժողովրդի բախտի թելադրանքով, իհարկե. որ այսօրինակ ծանր դատողություններով շարադրել է Գր. Արծրունին 1878-ի ռուս-թուրքական պատերազմին ու Բեռլինի վեհաժողովին հաջորդած օրերին. «Գուցե և հայերին վիճակված է, թեև ոչ այնքան բարձր, բայց նույնպես մի նոր, քաղաքական սկզբունք հաղորդել մարդկությանը. այն է, որ կարելի է հասնել ազատությանը քաղաքակրթական խաղաղ պատերազմով, առանց ապստամբվելու, առանց զենք բարձրացնելու: Դարևոր տանջանքներով, ամենօրյա աշխատանքով, կուլտուրական խաղաղ կռվով, տոկուն կերպով մարանչում են հայերը բարբարոսության և կամայականության, տգիտության և ֆանատիկոսության, մի խոսքով բռնավորության դեմ: Գուցե հայերին վիճակված է իրենց բռնած ընթացքով ոչնչացնել այն ժամանակակից բարոյական սկզբունքը, որ մեր լուսավորված տասնևիններորդ դարում դեռևս տիրապետում է Եվրոպայում, որ լուսավորված աշխարհի սկզբունքն ու դևիզն է. «Je m'insurge, donc je suis» («Ես ապստամբվում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ»): Իսկ հայերը կարծես ասում էին. «Ես աշխատում եմ, ես տանջվում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ»: Ահա, կարծես, հայերի նշանաբանը: Եվ ճշմարիտ, ո՞րն է ավելի դժվար՝ ապստամբվել և մի քանի ամիս, գուցե մեկ երկու տարի իր թշնամու արյունը թափել, թե հազար տարի շարունակ ամենօրյա կուլտուրական պատերազմ վարել ճնշող ուժի դեմ: Գուցե հայերին, արևմտյան լուսավորված Եվրոպայի ժամանակակից անմարդասեր գաղափարի դեմ այդ կենդանի բողոք ներկայացնող ազգությանը,— վիճակված է վերացնել այն անբարոյական սկզբունքը, որ պահանջում է ճնշված ազգից իր գոյությունը ապացուցանելու համար զենք վերցնել, ապստամբել, արյուն թափել, ուրեմն գործ դնել ճնշող ուժից, բարբարոսներից ազատվելու համար նույն զենքերը, որ նույնիսկ ճնշող ուժը, բարբարոսությունն է գործածում...

Եթե Թուրքիայի հայերը չկարողացան հաղթող հանդիսանալ, կոչնչանան, կամ կգաղթեն իրանց հայրենիքից, եթե նրանց հայրենիքը կդատարկվի իր բնիկ

ազգից,— այն ժամանակ ամոթ այն Եվրոպային, որ չօգնեց նրանց իրագործել մարդկության ապագա քաղաքակրթության սկզբունքը»[12]:

Այս անգամ՝ 45 տարի անց Հայոց պարտությունը բազմապատիկ էր, և Հայրենիքի փրկության համար տառապանքով ելք որոնող Զարենցը կառչել է Ռուսլսին: Գրողի արկածային վեպերի մեքենայական–տեխնիկական հրաշքներին և մարդկության հեռանկարային հասարակական–քաղաքական կեցության կանխատեսումներին: Արծրունու կանխագուշակումների ոգով 1918–ից ծայր առած «կոնֆերենցիաներին» որոնցով՝ մարդկության առաջադիմությանը հակընդդեմ՝ Լենինա–Ստալինա–քեմալական չարաղետ գործարքով հայ ժողովրդին վիճակված էր զրկվել անգամ «թղթե չեբեկից»․ այլև՝ ոչ ավել ոչ պակաս, ճանաչվել՝ «ագրեսոր»... Թուրքիայի հանդեպ...

«Եվրոպայի մայրամո՞ւտի»՝ թե՞ մշակութային հարստության հետ...

Սխալ կլիներ, իհարկե, եթե ստացվեր այն տպավորությունը, թե դրքապաշտությունը ինքնահատուկ էր միայն Զարենցին: Այդպիսին էր հայոց մտավորական ողջ մթնոլորտը, ուստի պատահական չէ, որ Ազգային գրադարանը 20–ական թվականներին ձևավորվեց տասնյակ մտավորականների նվիրատվությամբ: Ընդ որում համընդհանուր էր և հետաքրքրությունների լայն շրջանակը՝ ներառյալ գիտության վերջին հայտնագործությունների ոլորտներ. մինչև ժամանակի մոդայիկ մտածող Օսվալդ Շպենգլեր, մինչև իսկ Էյնշտեյն[13]: Վկայությունը նամակագիրներին հասցեագրված պատասխանները. սույն դեպքում ես Մ. Գևորգյա-

---

[12] Տե՛ս Ազատամիտական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820–1920 թթ.), 1982, էջ 189: Նույն մտահոգություններով 20–ական թթ. Ֆ. Նանսենը գրում էր. «... Անհնար է հասնել ճշմարիտ քաղաքակրթության, քանի դեռ ժողովուրդները չեն հասկանում, թե որքան արժանավայել է իրենց ենթարկել բնությունը, քան մեկը մյուսին»: Ապա դառնալով հայ ժողովրդին. տագնապով արձանագրում է. «Հայ ժողովրդի համար դժբախտություն եղավ, երբ ներքաշվեց եվրոպական քաղաքականության ոլորտը: Նրա համար լավ կլիներ, եթե իր անունը ոչ մի անգամ չհիշեր և ոչ մեկ եվրոպական դիվանագետ: Բայց հայ ժողովուրդը չէր կարող հրաժարվել հույսից: Համառորեն աշխատելով, նա երկա՛ր ու երկա՛ր սպասեց: Եվ դեռ սպասում է»: Այնուհետև. «Մենք գնում ենք մի ճանապարհով, որը վերադարձնում է բարբարոսության... Եթե դուք գնաք Թրակիա, ապա կտեսնեք, թե ինչպես է ճանապարհներում թափառում մի ամբողջ ժողովուրդ... Մենք արդեն հասել ենք այնտեղ, որ բացարձակ հանդարտությամբ ենք խոսում մի ամբողջ ժողովրդի բնաջնջման մասին»: Քաղված են Лив Нансен–Хейер, Книга об отце, 1972, Л., с. 328, 412, 389.

[13] Էյնշտեյնի կապակցությամբ Մ. Մազմանյանը մտաբերում է. «1922–1923 թթ. նա ծանոթացավ Էյնշտեյնի հարաբերական տեսությանը: Խոսում էր Էվկլիդեսի, Նյուտոնի մեխանիկայի մասին ու նրանց հակադրում Էյնշտեյնի տեսությունը» (ՀԵԶմ, 1, 65):

«Անավարտ հուշեր Եղիշե Զարենցի մասին» վերնագրով բանաստեղծ Գևորգ Էմինն էլ գրում է. «... Իմանալով, որ ես ինստիտուտում սովորում եմ բարձրագույն մաթեմատիկա, Էյնշտեյնի հարաբերականության թեորիան և ատոմային ֆիզիկայի վերջին նորությունները,— սովորում էր ժամերով պատմել իրեն սովորածս և նույնիսկ իր մոտ կանչել այդ առարկաների դասախոսներին, այս կամ այն հարցի մասին ավելի մանրամասն խոսելու համար:

նին. «... Էյնշտեյնի մասին լույս են տեսել մի քանի գրքեր, բայց թանկ են հնարավորություն չունեմ գնելու: Ինչքան նայեցի՝ Շպենգլերի մասին նոր բան չկա: Ապագայում եթե եղավ՝ կուղարկեմ» (6, 390): Եվ ապա մի այլ նամակում. «... Մի խոսքով բավականին հետաքրքիր է այստեղ, բավականին նորություններ կան գրական ասպարեզում: Շպենգլերի մասին ևս բավականին գրականություն կա: Այնպես որ խոսքս հետ չեմ վերցնում. եթե ուզում եք՝ ցուցակ ուղարկեք, կամ գրեք. ինչպիսի գրքեր, որ ուզում եք ուղարկեմ» (6, 396): Սա էլ 1922-ի դեկտեմբերի վերջերին գրած նամակում, երբ արդեն «դրամատեր» էր, հոնորար էր ստացել: Ուստի, եթե պահպանված լինեին «ցուցակ–դրամներ»՝ ոչ միայն Գևորգյանի, այլև Մ. Սարյանի, Լ. Քալանթարի, Մ. Մանվելյանի,— վկայությունը կլինեին առավել լայն հետաքրքրությունների: Իսկ որ խոսք հետ վերցնող չէր ու խոսքի տերն էր՝ այդ նույնպես միանգամայն հավաստի, քանի որ ԶԳ պահպանվում է Освальд Шпенглер, Закат Европы, т. 1. Образ и действительность (М.—Птг., 1923) ճակատին «М. Геворгян, 1924» գիրքը, (Պահպանվում էր նաև Э. Кассирер, Теория относительности Эйнштейна (1922): Առաջինը առավար գիրք է: Բավականաչափ մաշված–քրքրված վիճակով, որ նշանակում է թե՝ մեր կիրթ–լուսավոր ոչ մեկ, (այլ ամենաքիչը տասը) մտավորականի ձեռքով անցած, վերջում Չարենցի գրադարանում հանգրվանած, իր մատնահետքերն ու հեքը բոլոր էջերում թաքցնող մասունք: Տառացիորեն հեքը. որքանով գրքի բնութագրին համազոր գնահատականը անպարփակ «իմացությունների չքերթն է» (Հրանտ Մաթևոսյանի ասած)՝ մեկ առ մեկ բոլոր էջերով, այն էլ շարադրված վերլուծական–տրամաբանական միասնական, զարմանալիորեն ինքնօրինակ քննական մեկնաբանությամբ և ընդհանրացումներով:

Եվ ոչ մի կասկած այդ գրքին բազմիցս անդրադարձել է ինքը (և ոչ միայն ինքը) համակ հափշտակվածությամբ, ուրեմն և պարտք ենք համարում ներկայացնել գոնե գլուխների վերնագրերով և մի քանի տեղ մատիտով նշված հատվածներով:

Եվ սակայն որքան էլ գրքի վրա ներկայացված բովանդակությունը ինքնին լիակշիռ, այնուամենայնիվ կարևոր չի լինում համաշխարհային գրականության ու արվեստների իմացական–փիլիսոփայական այս, իրո՛ք, անպարփակ գանձա-

---

— Ա՛յ, էս չկաֆը տեսնո՞ւմ ես, նրա վրա դարսված գրքերի չափ գրքեր եմ կարդացել այդ հարցերի մասին, բայց էլի լրիվ չեմ հասկանում: Այ, օրինակ, Կարլեն ջան, հենց Էյնշտեյնի քո ասած միտքը այն մասին, որ «տիեզերքն անսահման է, բայց անվերջ չէ». կամ այն, որ մասսան մատերիայի հատկությունն է և կարող է նույնիսկ կորչել մատերիայի որոշ արագությամբ շարժվելու դեպքում:

Ամենից շատ հետաքրքրվում էր ատոմային ֆիզիկայի հարցերով, ատոմային էներգիայով և խնդրեց, որ ես իրեն տամ կարդալու «Новые идеи в физике атомного ядра» գիրքը:

— Ա՛յ տղա, հրաշք է, էդ ինչքան էներգիա կա մի ատոմի մեջ, և մարդ դեռ ինչքա՛ն քիչ է օգտվում դրանից ու էլի տաժանակիր աշխատանք կատարում հանքերում մի բուռ քարածխի համար...» (ՀԵՉժ, 1, էջ 388–389):

րանից: Այնքան գրավիչ ու համակող, որ ակամայից ափսոսում ես, թե ինչու չպետք է դառնար սեղանի գիրք: Ըստ այդմ անհրաժեշտություն է զգացվում, թեև թռուցիկ, այսօրինակ, որոշ ուրվագծերի: Առաջին իսկ գլխից, որ ծայր է առնում Գյոթեով ու հոգու հասկացությամբ՝ կանտյան ապրիորիով բեկվելով նաև այսպիսի ըմբռնումով. «Իսկապես, հոգու ոճը դրսևորվում է թվերի աշխարհում, և սակայն ոչ միայն վերջինիս գիտական մշակմամբ»[11]:

Հոգու ոճ, հոգու ճաշակ, թվերի աշխարհ, թվերի լեզու–հասկացություններ, որոնց հետ յուր ամբողջ կյանքում քնել–արթնացել է Չարենցը:

Իմանալով բանաստեղծի առանձնակի հետաքրքրությունը դիմանկարով և իմպրեսիոնիզմով «Музыка и пластика» գլխի «Изображение нового тела и портрет» ենթագլխից քաղում ենք մատիտով կողքից ընդգծված այս հատվածը, համոզված, որ ընդգծել է ինքը.

«... Այսպես, ինչպես Ռեմբրանդի ինքնադիմանկարը ճանաչում է գլուխը որպես ո՛չ անատոմիական իրողություն, այլ նրանում վերին տեսողությամբ վրձնախաղերով որսում է ո՛չ թե աչք, այլ՝ հայացք, ո՛չ թե ճակատ, այլ՝ ապրում, ոչ թե շրթունքներ, այլ՝ զգայություն,— այնպես էլ իմպրեսիոնիստական նկարը ցուցադրում է ոչ թե ընդհանրապես բնություն՝ առաջին պլանով, այլև միաժամանակ բնանկարի երկրորդ լեզու, հոգին: Լորենի կոտլինյան–հերոսական բնանկարի հետ գործ ունենք, թե Կորոյի «Pagsage intime»–ի, կամ Կյուփնի և Վան–Գոյենի ծովի, գետեզրերի ու ծառերի հետ,— ամենուրեք ստացվում են բնախոսական իմաստի դիմապատկերներ, ինչպես–որ եղակի, չտեսնված և առաջին ու վերջին անգամ կյանքի կոչված: Ինքնին բուռն հակումը դեպի բնախոսական բնապատկերը... մի խոսքով այդ մոտիվի հենց հակումը՝ միանգամայն անհարիր որմնանկարի ոճին և բոլորովին անհասանելի անտիկայնությանը,— ընդլայնում է դիմանկարի արվեստը՝ անմիջական մարդկայինից վերափոխելով անանմիջականի կերպավորմանը աշխարհի՝ որպես «եսի» մասի, աշխարհի, որով նկարիչը ինքնադրսևորում է իրեն, դիտողն էլ գտնում է իրենը, քանի որ բնության հեռունները ձգվող տարածքներով արտացոլվում են հոգի ու ճակատագիր» (էջ 296):

Այնուհետև գրքում գտնում ենք համարյա աննկատելի V նշումներ, դրանցից և չնշված այլերից քաղում ենք, կարծում ենք Չարենցին առավել հարազատ այսպիսիք. «Անտիկ հոգին իր ճակատագիրը ընդունում է որպես Մոյրա, որպես կույր, ակնթարթային, կապերից զուրկ պատահականություն» (էջ 358): **«Կարեկցանքը՝ վտանգավոր բառ է: Տակավին ուսումնասիրություններ չկան այն մասին, թե տարբեր ժամանակներում այդ բառի տակ ինչ էին հասկանում և ինչպես էին իրագործում այն»** *(էջ 363):*

Էջ 365–ում ներքևից թափված չիթ կա իր անդույն թանաքներից...

[11] *Освальд Шпенглер, Закат Европы, т. 1, М.—Птг., 1923, с. 67, այսուհետև էջերը նշված են բնագրում:*

էջ 368–ում նշված է. «Այստեղից մենք կարող ենք հասկանալ էթիկայի և լոգիկայի հարաբերակցությունը: Էթիկական ձևը կյանքի ու լինելության և կյանքի ձև է, տրամաբանականը՝ ձևն է կատարվածի ու ճանաչվածի» (էջ 368): «... Կուլտուրայի բարոյականը այդ այն բարոյականն է, որին տիրապետում են, քաղաքականության մորալը–այն է, ինչ որոնում են» (էջ 374):

«Բուդդայականությունը ժխտում է Աստծուն և տիեզերական պրոբլեմներին վերաբերող ամեն խորհրդածություն» (էջ 379):

«Եվ այսպես ես հավաստում եմ, որ բնությանը վերաբերող թեկուզև ամենաճշգրիտ ամեն «գիտելիքի» հիմքում ընկած է կրոնական հավատք» (էջ 404):

Այնուհետև.

«... Ինչպես հայտնի է, Շոպենհաուերը իր մետաֆիզիկայից չգնաց դեպի հոռետեսություն. այլ հակառակը, հոռետեսությունից, որ համակել էր իրեն 17–ամյա հասակում... Շատն, շատ կարևոր վկա, «Իբսենի մտածումներում» ուշադրության է առնում այն հանգամանքը, որ, ինչպես ինքն է արտահայտվում,—միանգամայն հնարավոր է Շոպենհաուերից փոխ առնել նրա փիլիսոփայությունը, միաժամանակ մերժելով մետաֆիզիկան» (էջ 392):

«Այդպես վաղնջական գիտակցված կեցության զգացողությունից ծագում է աստվածային սկզբունքի առավել որոշակի պատկերացում: Իմացությունը՝ կայունացածն է: Իսկ ինքն իմացողը կենդանի գործողությունների անընդմիջելի հերթագայությունից ստանում է շարժման տպավորություն...

Եվ այդպես շարժումից ծագում են կրոնը և ֆիզիկան: Դրանք պարունակում են մեկնություն հոգով ու բանականությամբ՝ կենդանի ու մեռյալ բնության կամ շրջապատող աշխարհի պատկերների» (էջ 423–424):

Եվ վերջապես. «Ոգու հոգնությանը այժմ ոչ ոք չի հավատում, թեև մենք զգում ենք այն մեր բոլոր անդամներով: Քաղաքակրթության և գիտականության 200–ամյա օրգիա– և մենք արդեն պետք է գերհագեցանք դրանցով: Եվ ոչ միայն առանձին մարդիկ, այլ կուլտուրայի հոգին կգերհագենա» (էջ 463):

Եվ սակայն, համոզված կարելի է ասել, որ ինչպես Զարենցը, այնպես էլ հայոց ժամանակի դասական մտավորականությունը՝ մեծագույն մասով, հավատ չի ընծայել «Եվրոպայի մայրամուտին» և առաջին ու վերջին հաշվով քրիստոնեական Եվրոպայի հետ կապել է հարազատ ժողովրդի ճակատագիրն ու ապագան:

Եվ այսպես. գրքի սկզբից ներկայացված բովանդակությունը ընդհանուր գլուխներով՝ առանց հանգամանալի ենթագլուխների.

От издательства

Гибель Европы, или торжество империализма /статья проф. А.Деборина /.

Предисловие

Введение

Тема — определение будущей истории...

Форма мировой истории...

Римская история как ключ к уразумению будущности Запада...

Необходимость основной мысли

Возникновение книги: Повод.—Содержание.— Порядок.

Таблицы к сравнительной морфологии мировой истории...

I глава. О смысле чисел.........

Основные понятия....

Античное число как величина /мера/...

Боязнь мира и взыскание мира...

Геометрия и арифметика...

II глава. Проблема мировой истории...

I. Физиогномика и систематика...

Необходимость нового исторического метода...

Что такое культура?...

II. Идея судьбы и принцип причинности...

Две формы космической необходимости...

Проблема времени...

Время, судьба и трагедия...

Судьба и случай...

Есть ли подлинная историческая наука?...

Ш глава. Макрокосм...

I. Символика картины мира и проблема пространства...

Что такое символ?...

II. Аполлоновская, фаустовская и магическая душа...

Олимп и Валгалла...

Двоякий смысл искусства...

IV глава. Музыка и пластика...

I. Изобразительные искусства...

Невозможность разделения искусства по стационарным техническим принципам...

Характер Ренессанса как антиготического /антимузыкального/ движения...

Символика красок...

II. Изображение нагого тела и портрет...

Античный и западный идеал человека...

В каждой культуре существует группа больших искусств..

Конец фаустовской музыки. Тристан и Парсифаль, Бейрейт и Пергам...

V глава. Картина души и чувство жизни...

I. Форма души...

Невозможность науки о душе...

Популярность и эзотеричность: Подчинение и преодоление

II Буддизм, стоицизм, социализм...

"Ты должен" — специфическая фаустовская форма морали...

Буддизм, стоицизм, социализм...

Два правильных воззрения на социализм как на форму будущего и форму упадка...

История философии — морфологическая проблема: Культурная философия и цивилизованная философия...

VI глава. Фаустовское и аполлоновское познании природы...

Цель естествознания сделаться чистой механикой — иллюзия...

Проблема движения — центр всякой физики...

Чувство бога о познание природы...

Атеизм как отрицание определенной формы религиозности...

Фаустовская физика как догмат силы...

Современная физика на границе ее формальных возможностей...

Конец западной науки: самоуничтожение через интеллектуальное утончение...

«ՄՏԱՆԴԱՐՏԸ» աջով ու ահյակով

Որքան էլ Շպենգլերը հրապուրող—հետաքրքիր, «Պոեզոզուռնայից» չարունակվող սևեռուն հետևողականությամբ ուշքն ու **միտքը Հայրենիքի գործնակնն էր:** *Անփոփոխ գործարարականը, որ «հասարակական օգուտի» տեսանկյունով հիմնավորում է Գ. Պլեխանովի* «Об искусстве» *գրքից «անգնահատելի տողերի» ծաղկաքաղով և համապատասխան մեկնություններով: Ինչպես. «...էսթետիկական հաճույքի հիմքում միշտ էլ գտնվում է օգուտը... եթե այն չլիներ—առարկան չէր թվա գեղեցիկ»: Բայց և այնպես «... ոչ թե մարդն է գեղեցի-*

կի համար, այլ գեղեցիկը—մարդու: Սա արդեն ուտիլիտարիզմ է, հասկացված բառիս խնկական, ամենալայն իմաստով...»,— և նման այլ հարցադրումներ ու պարզաբանումներ, որոնցից հետևում է, որ չկա «էսթետիկական անշահ հաճույք», «ինքնանպատակ ու ինքնարժեք», որ արվեստը պետք է ծառայի (ինչպես և ծառայել է) «սոցիալական շահերի»:

Ահա այդ ելակետից էլ «Ստանդարտի» գրական ծրագրի մասին ծավալուն հոդվածում գրականությունից անցնում է թատրոնին, ապա նկարչությանն ու ճարտարապետությանը՝ ամենուրեք կարևորելով սոցիալական «անմիջական պատվերի» նրանց դերը: Սկզբունքային պարզաբանումներով և «մասնավոր բացատրություններով» կրակի տակ առնելով **«Մուրճի» և «Դարբնոցի» պրոլետնեյնիզմը**, ընդունում է «ադիտկան» առանց խնդիրների «խորացման», մերժում է կենցաղագրությունն ու պսիխոլոգիզմը. ինչ վերաբերում է **«ֆորմայի խնդրին»**՝ ապա. «Մեր հիմնական պահանջներից մեկն էլ գրական կատարելագործված ֆորման է, ձևը, տեխնիկան: Մենք կողմնակից ենք գրական կատարելագործված տեխնիկայի... Պրոլետգրողների հետ ունեցած մեր հիմնական տարաձայնություններից մեկն էլ այս հարցն է... մենք կարծում ենք, որ այդ թշնամու վրա պետք է կրակ բանալ առնվազն Կոլտի գնդացիրից, իսկ նրանց կարծիքով, փաստորեն այնպես է դուրս գալիս, թե բավական է և նահապետական թափանչան!» (6, 100–109):

Այն է թե՝ չնչտվում էր տաղանդի և ապաշնորհության անհերքելի տարբերությունը:

Բանաստեղծի ԵԺ 6–րդ հատորում նկատելի տեղ զբաղեցրած «Ստանդարտի» նյութերով (էջ 97–115), ինչպես և ծանոթագրություններով (էջ 618–629), թվում է, կարելի է բավականաչափ գաղափար կազմել ընդամենը մեկ համարով լույս տեսած պարբերականից: Հետևյալ լրացումով, սակայն, կարելի է թե՝ այն լինի ավելի ամբողջական: Այդ առումով, «Լեֆի» Տրետյակովի կողքին... հարկ է ըդուցվում անդրադառնալու սկզբնապես Պրոլետկուլտի, կարճ ժամանակից «Լեֆի» տեսաբան Բ. Արվատովի ըմբռնումներին: Ծագումով լեհ և Լեհաստանում ձևավորված նրա ըմբռնումները՝ շարադրված «Искусство и классы» (1923, Պետ.), այնուհետև «Натан Альтман» (1924), «Искусство и производство» (1926, Մ.) ձեռնարկներում «ուտիլիտար», «արտադրական արվեստ» բանաձևերով ու մեկնակետերով համարյա թե նույնն են, ինչ գտնում ենք «Ստանդարտի» էջերում: Այնպես որ՝ դատելով ժամանակի արձագանքներից, կարելի է ասել, Արվատովը մոդայիկ տեսաբան էր՝ ոգևորված հանդգնակներով, ակունքային նախադրյալներով ու բնույթով նկատելիորեն ազդակից մեր օրերի դիզայների կուլտուրային կամ արվեստին: Փոքր–ինչ դուեհկացվող երանգով հանդերձ, որ տեղ է գտել նաև «Ստանդարտում». ահա այսպիսի դարձդարձումով. «... Հարցը նրանում չէ, որ Տերյանի բանաստեղծությունը, կամ Սարյանի նկարը, «վերջին հաշվով» գիտական երկար բարակ հետազոտություններից հետո, այս կամ այն կերպ դուրս գան «պրոլետարիատին օգտակար»—այդպես «վերջին հաշվով» ա-

ման ինչ էլ ամեն մեկին մի կերպ կարող է «օգտակար» երևալ,— Հարցի ծանրության կենտրոնը մեզ համար կայանում է նրանում, որ մեր ըմբռնումով արվեստի օգտակարությունն այսօր պետք է ոչ թե «ակադեմիկ» լինի, այլ ավելի քան կոնկրետ ու շոշափելի, այնպես որ, ուզած վայրկյանին կարողանաս բռնել այդ օգուտը, ինչպես նյութական իրը: Այսպես է եղել մարտնչող դասակարգերի արվեստը միշտ...» (6, 105) և այլն:

Կրկին հիշեցնենք, որ «վերջին հաշվով» այդ «ծրագիրը» ձևակերպել են երեքով. Մազմանյանի վկայումով՝ «Գրականությանը վերաբերող մասը գրել էր Չարենցը, իսկ նկարչության ու ճարտարապետության մասը՝ Հալաբյանն ու ես» (ՀԵԶմ, 1, 68): Ուրեմն և ասենք. վերջինները մի քիչ ավելի ձախ էին, և ինչ-որ չափով էլ երկարատև (հատկապես Հալաբյանը): Ավելացնելով, որ այն դրսևորվել է «Ստանդարտի» էջերում ևս: Մասնավորապես Հ. Թումանյանի «Գիքորի» Հ. Կոջոյանի ձևավորմանը վերաբերող հանիրավի անպարկեշտ տողերով, որի ամոթալի սարսուռը, անշուշտ, բանաստեղծը, պետք է որ վերապրած-վերազգացած լինի «Գիրք ճանապարհի» ձևավորման ստեղծագործական վեհասլաց-երանելի օրերին... Բայց և ճիշտ հակառակը. իր ապրած կյանքում հպարտությամբ պետք է մտաբերած լինի, որ հայերեն լեզվով, թերևս, միակ անգամ, «Ստանդարտում» է տպագրվել **Ռուբեն Սիմոնովի ըստ ամենայնի նորարարական մնայուն թատերախոսականը**, որի սկզբունքներով անկասկած իր ընտրությամբ ու հանձնարարականով բեմադրվեց Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները», ապա և բազմաթիվների շարքում «Կապկազ» թամաշան:

Բայց հետաքրքիր է և «Ստանդարտի» հետագա ճակատագիրը՝ պատճառակցական հիմնավոր պատճառ-հետևանքներով...

Արտասահմանյան ուղևորության նախաշեմին

Մ. Գևորգյանի գրած նամակի, թերևս, ստացած աջակցական պատասխանի, միաժամանակ «Ստանդարտի» գործերով զբաղվածության շնորհիվ, ասես, փոքր-ինչ բեռնաթափված 1923-ի մղձավանջային տրամադրություններից,— ի վերջո կարծես թե, բանաստեղծը գտնում է իրեն: Այնքան որ մի ամիս անց «Մոսկվա, 924. 8. III» տարեթվով կարողանում է գրել այն «զվարթ» նամակը, որով Ալ. Մյասնիկյանին խնդրում է «Զակկրայկոմի» առջև, կամ Թիֆլիսում մի այլ տեղ դնելու համար պատվիրել Կ. Հալաբյանի քանդակած Լենինի բյուստը (6, 406): Միամի՛տ խնդրանք...

Կարճ ժամանակից, ըստ երևույթին, իրեն վերաբերող հարցով, մի նամակ էլ հղում է Հ. Սուրխաթյանին: Այդ նամակը այլևայլ շատ ու շատ վավերաթղթերի հետ համատեղ, գուցե թե, մի օր գտնվեն չեկայական դարաններում: Իսկ հիշատակությունն, ահա՛, հասել է մեզ «14. V. 24» տարեթվով և «քո Սուրխաթ» ստորագրությամբ Մյասնիկյանին հասցեագրած նամակում. Լեն-

յին վերաբերող տողերից հետո կարդում ենք. «Ղրկում եմ Չարենցի նամակը. կարդա հետո կվերցնեմ:

Դա մեր բարձր տաղանդն է, պետք է նրան ուղարկել Եվրոպա շրջագայության, աշխարհ տեսնելու:

Էլ մարդ չի մնացել ռուս նոր բանաստեղծներից, որ արտասահման եկած չլինի–արժանի չէ՞ միթե Չարենցը: Շատ բան կտեսնի, շատ բան էլ կգրի:

Մոսկվայում դուցե մի բան անես այդ ուղղությամբ: Թող գնա մինչ աշուն պտտի: Հազիվ թե մեր ապագայում նման տաղանդ երևան գա: Չարենցը համաշխարհային մասշտաբով պոետ է:

Նրա գրքի մասին գրելու եմ»[15]:

Երևի թե «Կոմալմանախի», բայց չգրեց:

Անկասկած «զվարթության կայունացմանը» մեծապես նպաստել է և ամենակուլ աշխատանքը վերստին կյանքի կոչված «Մոսկվայի դրամատիկական ստուդիայում». բայց այդ մասին հաջորդական համապատասխան տեղում:

Իսկ այստեղ տեղը դեռևս պատկանում է Մ. Մազմանյանի հուշերին. «Սակայն պատահեց անսպասելին» տողով սկսվող ու շարունակվող իրողությանը: Միանգամայն հավաստի պարզվում է. «Չարենցը «Ստանդարտի» մի օրինակը տվել էր Մյասնիկյանին, որ այդ օրերին գտնվում էր Մոսկվայում: Մյասնիկյանը կարդացել էր ու մի լավ քննադատել մեր ամսագիրը իր անընդունելի գաղափարների համար և խորհուրդ էր տվել ոչնչացնել բոլոր օրինակները:

Չարենցը տխուր վերադարձավ ու հայտնեց մեր անելիքների մասին: Հենց նույն երեկոյան, հուլիսի 1–ին, (1924–ի՝ Ալ. Զ.) վառեցինք մեր հանրակացարանի խոհանոցի մեծ պլիտան ու կրակին տվինք այնքան սիրով գլուխ բերած մեր «Ստանդարտը»: Մեկական օրինակ պահեցինք մեզ մոտ հիշատակի համար...» (ՀԵԶմ, 1, 69):

Ա՜խ, այդ ի՞նչ «անընդունելի գաղափարների համար». երբ՝ ընդունելի–չընդունելի բոլոր գաղափարները մի կողմ թողած,— հարկավոր էր վայրկյան իսկ չմոռանալ Հայրենիքի ու ժողովրդի իրական կացությունը, որին և լծված էր հայրենասիրական–քաղաքական վերին իմաստությամբ գտնված–հիմնված ՀՕԿ–ը: Կասկածի նշույլ իսկ չունեմ, որ 1924–ի հուլիսի 1–ի այդ օրը բանաստեղծը ամբողջ կյանքում մտաբերել–վերհիշել է խորունկ զղջացվածությանը համազոր ամոթով: Այն բանի համար, որ ինքը կարող էր թեկուզ և ամարդի արարքների պատճառով խռովել ու լքել հարազատ ժողովրդին ու Հայրենիքը... Հանձնվել ձախ–լեֆական–ստանդարտային ինչ–ինչ հովերի, մինչդեռ իր խռոված միջո-

[15] Ալ. Մյասնիկյանին հղած Չարենցի նամակների հետ (6. 406–407, 412) այս հատվածը քաղված է իր ժամանակի ՄԼԻ–ի հայկական ֆիլիալի արխիվից. Ֆ.1ց 2, գ. 104: Սկզբնապես դրանք արտագրվել են Թիֆլիսի «պարտարխիվում» «2916 Мясников личный архив» եղած գործից: Այժմ պահպանվում են Հայաստանի ազգային պետական արխիվում. պարզապես վերստին ճշտելու ժամանակ ու հնարավորություն չի եղել:

ցին՝ Հենց 1923-ի նոյեմբերի 29-ին ինքը՝ Ալեքսանդր Ֆեոդորովիչը Հռչակել էր, թե «... մաՀվան կոխվ պետք է Հայտարարել այդ գետնափորությանը»,— խավար, գետնափոր տներով Հայ գյուղին[16]*...*

Որպիսի ամոթալի անՀոգություն իրենց՝ երեքի Համար էլ, և այդ աներևակայելի Համոզմունքով էլ կրակին է տրվում «Ստանդարտը»...

Իսկ մինչ այդ պաՀը Մյասնիկյանի Հետ որոշված-վճռված էին անելիքները. ամեն ինչ մի կողմ թողած՝ պետք էր անՀապաղ պատրաստվել արտասաՀմանյան ուղևորության. ոչ թե գալիք արտոնյալ-անՀոգների վերագրած «շրջագայության», այլ Հիմնավորապես սատար կանգնելու ՀՕԿ-ին՝ գործունեության ամենատարբեր ոլորտներով, *խնդիրներով ու լուծումներով, որպիսիք այդ օրերից սկսած Համատեղ կամ առանձին-առանձին ծրագրվում-մշակվում էին:*

---

[16] *Մտկչ. 1923, 29 նոյեմբերի:*

Անշուշտ, ո՛չ զարմանալի իրողություն. *Հենց նույն միջոցին «Թիֆլիս, Հուլիսի 3, 1924» տարեթիվով Արշակ Չոպանյանին ուղղած ծավալուն նամակով՝ Լեոն Հայտնելով, որ Չոպանյանի իրեն Հասցեագրած նամակը* «Նորքի» քարտուղարը (ասել է Մ. Գևորգյանը՝ *Ալ. Չ) առիթ է ունեցել Թիֆլիս գալու և բերել ու ինձ Հասցնելու»,— միաժամանակ ավելացնում է, թե ինքն էլ իր Հերթին Չոպանյանին է ուղարկում Չոպանյանի մասին «Заря Востока»-յի 1924-ի Հուլիսի 1-2-ում տպագրված Հոդվածը, ապա և ջերմորեն շնորՀավորելով գրական գործունեության 35-ամյակը,—* Լեոն շարունակում է.

«... Դուք գրում եք, թե ջանքեր եք գործ դնում, որ օգնեք ԽորՀրդային Հայաստանին: Ես ծափաՀարում եմ այդ միտքը: Այո՛, պետք է օգնել, առատ ու լայն օգնել, Հարատև օգնել: Ամեն ինչ կորցրել ենք, մնացել է մի փոքրիկ Հայաստան, որ այսօր գերագույն ճիգեր է թափում ազատագրվելու քաղցի, մերկության... կոտորածների մի շարք տարիների զարՀուրելի Հետևանքներից:

Դուք, օտարության մեջ ապրողներդ, ծանոթ չեք կարող լինել այն զգացմունքին, որ տիրանում է մարդու ամբողջ գոյության, երբ երկաթուղու գնացքը մտնում է ՍանաՀինի Հսկայական և աննման գեղեցիկ ձորը և սլանում է Հայ աշխատավոր աշխարՀը: Պետք է տեսնել, տեղում լինել Հասկանալու Համար, թե դարավոր մեծ մշակը ինչեր է ընդունակ կատարելու իր Հողի բարեկեցության Համար... Համառ աշխատանքով վերանորոգել իր ավերակները...

Ա՜Հ, այդ ավերակները... դուք դրանց չեք տեսել: Ես ականատես էի, թե ինչպես էր մեռնում Հայ ժողովուրդը: Մենք դարձել էինք մարդկության ամենաղաղրելի մի տականքը: Մեզ նույնիսկ վտարել էին մարդկության շարքերից, և մեր դժոխային կացությունը, մեր աննկարագրելի տանջանքները ոչ ոքին ոչ մի անՀանգստություն չէր պատճառում: Մեր երեխաները Թիֆլիսի առաջնակարգ փողոցներում ընկնում էին ու մեռնում սովից, և անցորդները միայն ծիծաղում էին նրանց վրա...

Երկար է, ո՞ր մեկը նկարագրեմ:

...Մենք պետք է մեր փոքրիկ երկրի յուրաքանչյուր քայլը մշակման դարձնենք, որպեսզի այդ գաղթական Հայության Համար էլ ապաստանի տեղ պատրաստենք:

Ով որ տեսնում է Հայաստանը, ով ազատ է կուսակցական նեղ Հաշիվներից, ում Համար ամենից առաջ Հայ ժողովուրդն է, նա չի կարող ուրիշ կերպ մտածել: Մենք փոքր և կիսով չափ մորթված ժողովուրդ ենք, մեր երկիրը տնտեսապես խոպան է եղել ու աղքատ: Բայց ունենք Հարուստ գաղութներ և նրանց պարտքն է օգնել մայր երկրին». ԳԱԹ ԱՉՖ, թիվ 2843.

Եվ սա նշանակում է, թե ՀՕԿ-ը՝ Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ, գործում էր ամբողջ անձնակազմով՝ գործի դնելով բոլոր Հնարավորությունները: Եվ ծայր էին առել Չոպանյանի Հետ բանակցությունները... Տե՛ս տեղո՛ւմ...

Նկատենք նաև, որ ինչպես այս, այնպես էլ այլ դեպքերում, խուսափելով փոստով առաքելուց, Հաճախ նամակներն ուղարկում են վստաՀելի մարդկանց միջոցով:

Փոքր–ինչ ուշադիր հետևելով Մյասնիկյանի 1922–1924–ի պահվածքին, միաժամանակ դժվար չի լինի նկատել շեշտված հանդարտաբարո ողջախոհությունը՝ հակամետ ուժերի հանդեպ: Ինչպես Հ. Հակոբյանին գրողի գրական գործունեության 30–ամյակի առիթով ուղղած խոսքով.ըստ որի «... Հակոբյանը... իր հեղափոխական երկերով դաստիարակել է հեղափոխական բանվորություն և նրանց մեջ վառել է հեղափոխության ոգի... Հակոբյանը ոչ միայն հայ պրոլետարիատի, այլ ընդհանրապես պրոլետարիատի երգիչ է»: Նույնը և պրոլետ–մուրճականների հանդեպ. դա էլ ըստ 1921–ի հայտնի տողերին հաջորդած 1924–ի այս վերաբերմունքի. «... Գալիս է նորը, նորը ընթացք է առնում: Դա երիտասարդ «Մուրճն» է և հեղափոխական Չարենցը»[17]: Այդպիսին էր և Սուրխաթյանի վերաբերմունքը՝ դարձյալ ըստ Հակոբյանի գրական–գործունեության 30–ամյակին նվիրված հանդիսավոր երեկոյի զեկուցման տվյալների (Թիֆլիսում, 1923–ի դեկտեմբերի 2–ին):

Եթե մյուս կողմից էլ հետամուտ լինելու լինենք ռամկավարների հետ Մյասնիկյանի փոխհարաբերություններին, ինչպես և ՀՕԿ–ի ներկայացուցիչների գործունեությանը արտասահմանում, ապա և 1924–ի վենետիկյան ցուցահանդեսի օրերի Մ. Սարյանի մտահոգություններին,— հազիվ թե կարելի լինի կասկածել, որ դա քաղաքական հետևողական շրջահայացություն էր՝ նպատակաուղղված ՀՕԿ–ի բախտորոշ խնդիրների իրագործմանը: Այն է՝ **հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի հետ սերտ համագործակցությամբ ապահովել աշխարհասփյուռ հայության զանգվածային ներգաղթը Հայաստան,** հօկականների հետ ձեռք–ձեռքի կազմակերպել դրամական օգնություն հանուն ավերված հայրենիքի վերաշինության՝ հարակից անհամար խնդիրների ամբողջությամբ:

Առաջին իսկ նախադասություններից Մյասնիկյանի հետ համերաշխություն–համաձայնությունն ապահովված էր: Մնում էր ամենակարևորը. շարունակել և ավարտել պոեմանման վեպի վերջին՝ երրորդ մասը. ամեն կարգի ու տեսակի տեղեկություններով պատրաստվել դասախոսությունների, զեկույցների, հարցազրույցների, անգամ սովորական առ տնին մարդկային զրույցների. մնում էր քաղաքական հարցերում վարժվել չափավորության, և ամենակարևորը՝ չմոռնել ուղևորության բուն նպատակը՝ ինչպես մեկնելուց առաջ, այնպես էլ ընթացքում:

Ըստ այդմ, չէ որ Պոլսից Մյասնիկյանին հասցեագրած Չարենցի նամակները ցավով ու դառնությամբ ողողված **սրտառուչ հաշվետվություններ են...** Ո՞վ գիտի. դուցե այդպիսի նամակներ է գրել նաև Աթենքից ու Վենետիկից. և, թերևս, գտնվեն հետքեր Ա. Պատմագրյանի թղթերում: Չէ որ Պատմագրյանի հետ բանաստեղծի հանդիպումը Բեռլինում ամենևին էլ «անակնկալ» չէր...

Բայց, ահա՛, այս դեպքում տեղն է որոշակի տարբերանշաններով սահմանազատել Մյասնիկյանին, Չարենցին ու Պատմագրյանին՝ «Ստանդարտի» օրինակ-

---

[17] Ալ. Մարտունի, Խորհրդային Հայաստանի ուղին, 1924, Թիֆլիս, էջ 45:

ներից նույնպես մի օրինակ մակագրությամբ ստացած այս **անդարդ–մոլեռանդ չարագար Կարինյանից**, և որոշել՝ թե այդ ո՞վ էր «ձախ» շաղակրատը. մանավանդ, երբ փաստացի տվյալներով ստուգապես գիտենք «Հին արվեստի», այդ թվում Պուշկինի ժառանգության հանդեպ Չարենցի հաստատուն վերաբերմունքը՝ հենց 3–ի դեկլարացիայի օրերից սկսած…

Եվ այսպես Արտաշես Կարինյանը մտաբերում է,

«… Այդ ժամանակ ես մի քանի անգամ տեսել եմ Չարենցին Լազարյան ճեմարանում: Նորից մենք զրուցում ենք օրվա հրատապ գրական–գեղարվեստական պրոբլեմների մասին: Ահա հենց այդ օրերին էլ Չարենցը հանձնում է ինձ հիշված «Ստանդարտ» ամսագրի առաջին և միակ համարը, ուր զետեղված էին հոդվածներ և ակնարկներ նոր «կոնստրուկտիվ արվեստի» տարբեր ճյուղերի մասին: Իր հիմնական ուղղությամբ դա և լեֆիստական մի ուրույն «մանիֆեստ» էր. և միաժամանակ կոնստրուկտիվիզմի հիմնավորման քվազի–մարքսիստական մի նոր փորձ: Մի երկու օր շարունակվում էին բավական սուր վեճերը: Եվ ահա շատ անակնկալ կերպով Չարենցը որոշում է խիզախորեն հենց այդ ժամանակ կտրել իր կապերը «ձախ» շաղակրատների հետ և բռնել **միանգամայն նոր ուղեգիծ–նոր դիրքորոշում «Հին արվեստի» նկատմամբ:** Ես այժմ կնկարագրեմ իմ մի հանդիպումը և զրույցը Չարենցի հետ: Երբ Չարենցը հանգում է այն եզրակացությանը, որ «Ստանդարտի» հրատարակությունը եղել է **սխալ մի ձեռնարկ:** Նա ըմբռնում է իսկույն, որ հակառակորդների քննադատությունը կարող է նպաստել նորից կրքերի բորբոքմանը և ստեղծել նորանոր բախումներ: Նա առաջարկում է ընկերներին վերադարձնել իրենց «Ստանդարտի» համարները: Դիմում է նաև ինձ: Բռնկվում է, իհարկե, սուր վեճ: Ես հրաժարվում եմ վերադարձնել ամսագիրը: Չարենցը և՛ բողոքում էր, և՛ խնդրում: Նա չնչտեց նաև, որ իր նպատակն է միմիայն մի աննշան «ուղղում» մտցնել, շտկել մի «սխալ»:

Միայն երկու խոսք կգրեմ և իսկույն կվերադարձնեմ ժուռնալի միայն այդ համարը…»:

Ի վերջո ես ստիպված եղա վերադարձնել ինձ նվիրած այդ համարը: Չարենցը նստած էր Լազարյան ճեմարանի սենյակներից մեկում և ինչ–որ գիրք էր թերթում: Նա շատ ուրախացավ, գրեթե խլեց ամսագիրը և ինքն էլ իսկույն մակագրեց տիտղոսային էջի վրա, վերնագրի կողքին «Ձեռագրի իրավունքով»: Այդ օրինակը մի քանի տարի առաջ ես հանձնել եմ սովետահայ բանաստեղծներից մեկին: Այս ամենից հետո Չարենցը հանդիսավոր դիմեց ինձ ու հայտարարեց.

— Այժմ ես կարող եմ վերադարձնել Ձեզ այդ համարը…

Այդպես էլ ավարտվեց մեր այդ հանդիպումը: Չարենցը ճշմարտախոս և շատ անկեղծ պոետ էր»[18]: Իսկ պրավդիստ Կարինյա՞նը…

[18] Ա. Կարինյան, Եղիշե Չարենց (Հոդվածներ և հուշեր), 1972, էջ 89–90: «Ստանդարտի» այդ համարը հանձնել է բանաստեղծ Ասատուր Ասատրյանին, որը իր հերթին հանձնել է ԳԱԹ:

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՕՐԵՐ...
«ՄԻԹԵ ՍԱ՞ Է ԵՐԿԻՐԸ ՆԱԻՐԻ...»

Ուրեմն և առանց հապաղելու, Մյասնիկյանի հետ պայմանավորվածության համաձայն, կուտակված – դիզված կարոտով և գործելու ծարավով՝ 1924–ի հուլիսի սկզբներին ճանապարհվում է Երևան: Ճանապարհվում է հետը ունենալով **«Կոմալմանախը»**՝ ներսում աշխարհ սասանող – պայթուցիկ այնպիսի հրադեն, ինչպիսին էր **«Լենինը»**՝

...Դեռ կգա Իլյիչը,
Որ մանի համաշխարհային Սովնարկոմ (3, 151),-

հնչեղությամբ, հավանաբար, Մյասնիկյանի հավանությանն արժանացած, արդեն իսկ «Վերելքի» 1924–ի ապրիլի 2–3–րդ թվում տպագրված նյութողյան, որ Ստալինի հայտնի երդման տպավորությամբ տակավին չէր հասցրել կորցնել հետադա հակադարձության ընդհատակյա ուժը...

Պետք է ենթադրել, որ գրական թեժ պայքարում կապես տեղային– հայրենակցական սկզբունքով ձևավորված Վշտունու խմբակցության օրինակին հետևելով, Գուրգեն Վանանդեցին էլ իբր «բռնել էր» Չարենցի կողմը: Եվ ահա բանաստեղծի Երևան հասնելուն պես, հուլիսի 15–ին Վաղարշապատում զեկուցում է «Իդեալիզմից դեպի մատերիալիզմ (Ե. Չարենց)» թեմայով: Ըստ խմ. հաղորդման՝ զեկուցման մեջ «Դասախոսն ընդգծեց, թե ինչ ճանապարհով է մեր հասարակական մտայնությունը իդեալիզմից գնացել դեպի մատերիալիզմ՝ հանձին շնորհալի բանաստեղծ Եղ. Չարենցի»:

Այսպիսի գնահատականից, անշուշտ, Չարենցը պետք է որ «գոհ» լիներ, որքանով ՌԿ(բ)Կ 13–րդ համագումարի (մայիսի 23–31) ընդունած համապատասխան բանաձևով «Գեղարվեստական գրականության բնագավառում կուսակցության հիմնական աշխատանքը պետք է կողմնորոշվի դեպի այն բանվորների ու գյուղացիների ստեղծագործությունը, որոնք Խորհրդային Միության ժողովրդական լայն մասսաների կուլտուրական վերելքի պրոցեսում դառնում են բանվորական ու գյուղացիական գրողներ: Բանթղթակիցներն ու գյուղթղթակիցները պետք է դիտվեն որպես այնպիսի ռեզերվ, որտեղից առաջ կգան նոր բանվորական ու գյուղացիական գրողներ:

Պետք է ամեն կերպ ուժեղացվեն պրոլետարական և գյուղացիական այն գրողների առաջքաշումը և նրանց ցույց տրվող նյութական օգնությունը...[1]»– *և այլ անհեթեթություններ:*

Իսկ անհեթեթությունների տակ հմտորեն–աննդաբար անցկացվող բանվորա-գյուղացիական «գրողների առաջքաշում և նրանց ցույց տրվող նյութական օգնություն», որով տարեցտարի կրկնապատկվելով ժողովուրդների ուսերի վրա ծանրանալու էր խորհրդային տաղտկալի գաղափարաբանությանն ու արյունալի գործնականին սպասարկելու կոչված **անքանքար ճրիակերների բանակներ ապրեցնելու բեռներ:** *Այդ տրամաբանությամբ էլ բանաստեղծ Չարենցը պետք է «հավասարություն վերցներ» Վշտունուն ու նրա աշխարհին* **առանց իրավունք ունենալու տարրական մի հարցման, թե ի վերջո այդ Վշտունին ո՞ր օրվա բանվորն է կամ գյուղացին...**

«Պրիգունների գյուղում»...

ԽՀ նույն հուլիսի 15–ի համարում տպագրված էր և Չարենցի «Պրիգուննե-րի գյուղում (Տպավորություններ)» ակնարկը (6, 116–135): Ինչպես հետևում է խորագրից, ըստ ամենայնի հետաքրքիր սույն տպավորությունները վերաբերում են Հայաստանի Սուխոյ–ֆոնտան անունը կրող մալականական գյուղին: Դրա բնակիչների «դավանած» ավանդի նկարագրությունն են: Չակերտների մեջ առած «դավանածը», անշուշտ, ամենևին էլ այն բառը չէ, որով կարելի լիներ որակել, իրոք, մարմնական–արարողական այդ սանձարձակ խրախճանքը[2]*:*

Ըստ այդմ ակնարկից քաղում ենք որոշ հատվածներ, արտահայտություններ, դարձվածներ, որպեսզի մի կողմից կարելի է թե պատկերացում տան այլանդա-

---

[1] *Սովետահայ գրականության տարեգրություն, 1957, էջ 86:*

[2] *1924 թ. օգոստոսի 7–ից Հայաստան է այցելում Խորհրդային Միության ժամանակի Լուսավորության ժողկոմ Ան. Լունաչարսկին: Նրա «Երեք օր Խորհրդային Հայաստանում» ծավալուն ակնարկից պարզվում է, որ* **Չարենցն ու Շահգյալդյանը Պրիգուններին այցելել են «հողային հարցով»,** *որը Լունաչարսկին մատուցում է իրեն ուղեկցող Հայաստանի* **ժամանակի ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինի և պրիգունների միջև եղած նման խոսակցությամբ. «... Լուկաշինը հանգստությամբ բացատրեց.**

«Երբ ձեզ բերեցին այստեղ, ձեզ շատ հող տվեցին, բայց այդ բանի համար այդ հողը խլեցին հայ գյուղացուց և նրանց մուրացկաններ դարձրին: Մենք մի քիչ ձեզ հավասարեցրինք նրանց հետ

Մոլականները մռայլ կերպով լսեցին:

— Դուք ուզում եք ապրել ըստ արդարության:

— Իսկ ինչպե՞ս պետք է ապրել ըստ արդարության:

— Եկեք ձեզ հավասարեցնենք հայերի հետ: Բոլորին էլ հավասար չափով տանք:

«— Այդ մեկն արդեն չէ՛, խորին շնորհակալություն, թող մնա այնպես, ինչպես այժմ է»,— պատասխանում են մոլականները: Մակչ, 1924, սեպտ. 23, թիվ 218:

Պատահական չէ գրական վավերագիրը Պ. Պռոշյանի «Հացի խնդիրը»...

կության չափից, հակադարձ մյուսից՝ տեսանող–զգացող–գնահատող բանաստեղծի մարդկային–բարոյական չափանիշներից:

Ահա առաջին տպավորությունը պրիգունների ժողովարանից. «Առաջին տպավորությունս 12–13 տարեկան մի երեխայի գլուխ էր, որ ցնցվում էր և միևնույն ժամանակ վեր–վեր թռչում մի ռիթմիկ հաջորդականությամբ: Այդպես ցնցվում են էպիլեպտիկները, ընկնավորները: Հետո սահեցի աչքերով–մեկ–երկու–երեք–նույնպիսի երեխայական գլուխներ, որ ոլորվում ու ցնցվում են, ինչպես հողմահար հասկեր...»: Սրան հաջորդում են ընթերցվող ավետարանային տողեր. «–Երանի հոգով աղքատներին»–կարդում էր սևահեր պատանին, «— որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»,— և իսկապես հետագա սանձարձակ, տափոտ–վավաշոտ, «бесшабашный», «ухарский» երգերի հարայ–հրոցով, ցատկոտել–թռչկոտել, համբուրել–համբուրվել «խելագար հրճվանքով» ու «անասնական տանջանքով» պարուրված դրվագներ,— իրոք, «հոգով աղքատների» «երկնային արքայության» ցնցող անասնական պատկերներ...

Ինչ խոսք, համեմված ականատես ակնարկագրի նման գնահատականներով. «... Նորից երգիչներն սկսում են, ներեցեք արտահայտությանս՝ «հոգևոր» մի երգ, որ իր եղանակով անչափ նման է ռուս նորմահավաքների երգերին, որին ձայնակցողը միշտ գարմոշկան է՝ ռուս ժողովրդի այդ ոչ այնքան էլ «հոգևոր» երաժշտության գործիքը: Եվ սկսում է նույնը, նո՛ւյն ցատկոտելն ու թափահարվելը, նույն անսանձ մոլեգնությունը, որին իրենց անժամանակ տուրքն են տալիս իդիոտացած երեխաները»:

Եվ ապա «Ելնում ենք դուրս: Ես ինձ զգում եմ հոգնած ու ճնշված: Գիշեր է, մութ, գյուղի փողոցները – ամայի: Հիշում եմ Պշիբիշևսկու «Սատանի սինագոգը»[3],— ահա թե ինչով է վերջանում սրանց «կրոնական էքստազը» – անցնում է իմ մտքով: Թվում է թե նման հոգևոր էքստազը չի կարող չվերջանալ «մարմնականով»: Հայտնում եմ միտքս ընկ. Շահգյալդյանին: Նա էլ «կասկածում է»: Մոտենում է գյուղխորհրդի նախագահը:

— Ասացեք, խնդրեմ,— հարցնում է Շահգյալդյանը...,— սրանց այս հավաքույթներն ինչո՞վ են վերջանում:

— Ցրվում են իրենց տները ու քնում,— պատասխանում է նախագահը... Ես «կոնկրետացնում եմ» հարցը: Գիտե՞ք,— ասում եմ, միջնադարում կրոնական նման հավաքույթները սովորաբար վերջանում էին, ասում եմ, նո՛ւ, ընդհանուր «մեղքով» – մարում են կրակները և այլն:

Նախագահը, իհարկե, հասկանում է միտքս:

— Չէ՛է՛,— ասում է նա, երևի ժպիտը դեմքին (մութ է – ենթադրում եմ, որ նա ժպտում է),— այստեղ այդպիսի բաներ չեն պատահում» (6, 121, 128, 129):

Բայց, դե՛, իրողությունը հակառակն է՝ նախնադարյան բարբարոս խմբական անառակություն:

---

[3] Պարզվում է, որ «Homo sapiens»–ից և այլ գործերից բացի՝ 1912–1913 թթ. կարդացել է նաև Ստ. Պշիբիշևսկու «Սատանայի սինագոգը»:

Իսկ այդ ամենի հակադարձությամբ տողերի «թիկունքից» ճառագում է քրիստոնեական չափ ու կշռույթով դարերով բյուրեղացած բանաստեղծի դավանած Հայոց Հոգեպարար Հավատքը՝ երկնասլաց շարականներով, սաղմոսներով ու պատարագներով, ծիսական–արարողական հանդիսավոր զուսպ ճոխությամբ ու շուքով: Հակադարձ նույնպիսի բեռ ու դեր ունեն և վերջնամասի թռուցիկ դրվագները: Մասնավորապես Թիֆլիսից էքսկուրսիայով գյուղ հասած հայ աշակերտներին առնչվողը՝ հեղինակային կարճառոտ ու կտրուկ արձանագրումով. «... Երիտասարդների ընդհանուր կարծիքն այն էր, որ չարժման գնկավարներին (ասել է՝ աղանդի տեղական պարագլուխներին՝ Ալ. Զ.), «առնվազն» հարկավոր է գնդակահարել (կարծես թե դրանից այն կողմն էլ բան մնում է անելու): Մենք (Չարենցն ու ժամանակի Երևանի գավառական կոմիտեի քարտուղար Արամ Շահգյալդյանը՝ Ալ. Զ.) բացատրեցինք այդ եռանդուն միջոցի անընդունելի լինելը: Ապա մենք անցանք իրենց էքսկուրսիային» (6, 131):

Դժվար չէ գուշակել, որ արձանագրվածը աշակերտական նստարանից մարդկանց անմարդկային վայրենի բնազդներ ներարկելու ժամանակի ճարակը, միաժամանակ՝ ի դեմս Չարենցի և Շահգյալդյանի, մտավորականության առաջավոր մասի դատապարտող վերաբերմունքը: Եվ սակայն բանաստեղծը հարկ է համարել տեղն ու տեղը արձանագրել և նույն երիտասարդության ինքնաբուխ նվիրվածությունը հայրենիքի վերաշինությանը. «Երիտասարդները մեծ ոգևորությամբ պատմում էին իրենց տպավորությունները Շիրակի ջրանցքից, բամբակի պլանտացիաներից, Զանգվի կառուցվող հիդրոկայանից – երևում էր, որ նրանք մեծ հետաքրքրությամբ են վերաբերվել դեպի Հայաստանի շինարարությանը» (6, 132):

Հատկանշական է, իհարկե, որ այս տողերի տակ էլ թաքնված են ազգահավաք մտահոգություններ:

Ընդհանրապես փոքր–ինչ խորամուխ լինելով դժվար չէ նկատել, որ «Պրիդունները...» կառուցված և շարադրված է «երես–աստառային» հակադարձության սկզբունքով, որը և հենց նախաբանում շեշտում է բանաստեղծը՝ պարզապես պահանջելու պես թելադրելով տրամաբանական–քննական մոտեցում նկարագրվող (ինչպես և շուրջը կատարվող) երևույթներին. «... Այնպես որ իմ նկարագրած երևույթների առաջին հայացքից արտառոց, ֆանտաստիկ թվացող «երեսի» սոցիալ–տնտեսական «աստառն» հասկանալ ցանկացողները կարող են դիմել ընկ. Արամ Շահգյալդյանի հոդվածներին[1], ուր նրանք կտեսնեն «ս. հոգու» պատեհ նկարագրված «երկնային» արարքների ավելի քան «երկրային» պատճառները» (6, 116–117):

---

[1] ԽՀ. 1924, թիվ 162, 165, 166: Մ. Արեղյանի հայրենակիցը (1897–1948) ասել է՝ Նախիջևանի գավառի Աստապատ (որ այժմ չկա) գյուղացի, 1915–1916-ից հեղափոխական շարժումների մասնակից. 1923–1927 թթ. Երևանի գավկոմի քարտուղար (կենսագրական հանգամանքները՝ տե՛ս. Հայկ. սովետ.հանրագիտարան, հ. 8, 1982, էջ 420:

Բնորոշ է, որ Շահգյալդյանի հոդվածների կողքին այս տողերից անմիջապես հետո «երես–աստառային» խոսակցություն է բացում հենց ինքը. «... իր տեսած բոլոր մալականական գյուղերի» «չոսնի կողմը կանոնավոր դասավորությամբ շինված սպիտակապատ ու կարմրակտուր տների» և հայկական գյուղերի՝ «գորշ, հողե պատերով, տափակ կտուրներով, առանց որևէ պլանի դասավորված, ծուռ ու կոչկոճ խուղերի...» հակադրությամբ:

Խոսք էր բացում որոշակիորեն թելադրելու համար ընթերցողին՝ պարզել ու հասկանալ այդ տարբերության «սոցիալ–տնտեսական» «երկրային» «պատճառները»: Այնպիսիք, որպիսիք ինքը մանկուց զանազանում էր Կարսի մարզի մալականական և հայկական գյուղերի միջև, և հասկացել է 1917–ի փետրվարյան հեղափոխությունից հետո կարդալով Ստ. Ղորղանյանի Մշ համարներում տպագրված հոդվածաշարը, որոնցում փաստացի տվյալներով ցուցադրվում և քննականորեն մեկնաբանվում էին հայ գյուղացիության սահմանափակ իրավունքները և դրա դիմաց կայսերական գաղութատիրական հողային քաղաքականությամբ մալականների վայելած արտոնությունները:

Ակներևաբար, լիցքավորված նաև Մյասնիկյանի հետ զրույցներից, որի աչքի առջև գործում–մտածում էին վրաց շրջանակները,— գալով Երևան, Չարենցը վճռել էր հնարավոր բոլոր միջոցներով՝ հարմարվելով, թե բացահայտ, «երեսով» լինի, թե «աստառով», հուշելով լինի, ակնարկով, թե թելադրել–հորդորելով զգաստացնել և զգաստ պահել ժողովրդին՝ սոցիալ–տնտեսական, գաղափարական–քաղաքական ամեն առումով: Եվ ամենից առաջ մարդկային հոգևոր–բարոյական դիմանկարի պահպանման, որին և ձեռնամուխ է լինում «Պրիգուններով...». Նկարագրած հակադարձ տրամաբանությամբ ներարկելով ազգային արժանապատվություն, մաքառման եռանդ՝ հանուն սեփական ինքնուրույն կյանքի ու վարքի, ի վերջո՝ հանուն պատմական անխաթար հիշողության...

Այս տեսակետից ակնարկի ամենաթեժ օջախներից մեկը «II» նշումից ծայր առնող ծավալուն հատվածն է, բազմապիսի, այդ թվում բանաստեղծի կենսագրության ամենահիշարժան էջերին վերաբերող հիշատակում–արծարծումներով:

Ուրեմն և, պարզ է, պարտավոր ենք մեջ բերել ամբողջությամբ. «Արդեն մութն էր, երբ մենք դուրս եկանք փողոց: Դեռ հեռվից, ժողովարանին չհասած, մենք լսեցինք նրանց երգը, որ ավելի շուտ հուսահատ բացականչություններից կազմված, մոնոտոն վայնասուն էր, փոխվող աղմուկի էր նման, քան երգի: **Այդ երգը հիշեցրեց ինձ մի այլ ադերդ, որ ես դժվար թե երբևիցե մոռանամ: 18 թվականի սկզբին ես Էրզրումում էի: Ռուս զորքը հեռացել էր, քաղաքը մնացել էր վեց վիլայեթիստներին: Այդտեղ էր և Անդրանիկը[5], որ... հայդուկի տա-**

[5] Առիթը ներկայացել էր, և թղթին է հանձնում «Լենինի» հակակշիռը. Հայ ժողովրդի 1918–ի եղեռնը (նաև ըստ «Ազգային երգի»). զորավար Անդրանիկի զորախմբում Սողոմոն եղբոր հետ մասնակցությունը Էրզրումից Կարս մարտերին ու նահանջին, «փայլուն չբաղդ եսաով» մատուցված գավը՝ զորավարին... Հանգամանորեն տե՛ս. Ալմաստ Զաքարյան, Եղիշե Չարենց, գ. 1, 1997, էջ 316–385:

բաղն արդեն փոխել էր զորավարի փայլուն շքազգեստի: *Թիկունքն ապահովելու նկատառումով նա ձերբակալել էր բոլոր Թուրք տղամարդկանց, որոնցից մոտ 300 հոգու լցրալ էին իմ բնակարանին կից գտնվող մի կիսավեր շինության 5–6 ընդարձակ սենյակները և դրել պահակներ: Եվ ահա մի անգամ կես գիշերին ինձ հանկարծ արթնացրին, դուրս Թռչելուս պես ինձ հասավ զարհուրելի, սրտակտոր մի վայնասուն, որ գալիս էր կողքի բնակարանից: Մոնոտոն, դառը, ողբաղորմ մի նվվոց էր դա, հուսահատության անլուր մի ոռնոց, որի միջից մերթ–մերթ լսվում էին «Ալլահ–յա–ալլահ» – միակ հասկանալի բառերը: Չգիտեմ – ե՞րդ էր դա, Թե հուսահատ վայնասուն, բայց նա իմ վրա Թողեց խորը, անջնջելի տպավորություն,— և այդ կեանն էր ահա, որ 7 տարի հետո ես նորից հիշեցի Սուխոյ–ֆանտան գյուղում՝ ալիդունների ժողովարանից հասնող կրոնական «երգը» լսելիս» (6, 120):*

Այսպես շարունակվում է արարողության հանգամանալի նկարագրությունը, մինչև գծ՛րանմարդկային սույն տեսարանը, որտեղ նորից է մտաբերվում 18 Թվականը: Եվ սա ես առանց կրճատումների, դարձյալ պետք է որ քաղվի, որպեսզի ամբողջանա պատկերը և հավասարվեն նժարները. «... ես ճանապարհ բացող երեխաների ոտքերի արանքից տեսնում եմ հատակին մեկնված մանկական մի մարմին, որ անշարժ ձգվել է, ինչպես մեռել: Բարձրահասակ երիտասարդը ցուցամատը Թափահարում է նրա վրա և անվերջ բացականչում — вот — вот —вот —вот – տը–տը–տը–տը–տը–տը...

Թո՛ւյլ էիր, Թո՛ւյլ էիր, ընկեր, Թույլ էիր, Թույլ էիր,— արտասանում է կինը, պարելով, ցատկոտելով ու դոփելով ընկած երեխայի շուրջը– և հենց այդ վայրկյանին ընկնող երեխայի կողքին նույնպես «ընկնում» է, ուշաԹափ փռվում մի այլ երեխա: Եվ ապա երրորդը–նրանց վրա, չորրորդը –ոնց որ պատերազմի դաշտում լինի ու չորս իրար վրա ընկած մանկական դիակներ (ընդգծ.՝ Ալ. Զ.): Ոչ ոք չի փորձում նրանց բարձրացնել, օգնել, հանգստացնել,— ընդհակառակը, նրանց շուրջը հավաքվածների պարը դառնում է է՛լ ավելի մոլեգին, «կրոնական էքստազը» հասնում է իր կուլմինացիոն կետին: Չմոռանանք, որ այս ամենի ընԹացքում հնչում է երգիչների бесшабашный, կամ ոնց որ ռուսներն են ասում ухарский երգը, որ քիչ է նման կրոնականի: Ես հեռացնում եմ հայացքս ընկածներից, նայում եմ ծերունուն, երգիչներին, երեք գլխավոր պարուհիներին և երիտասարդ ալիդունին, որոնք անշուշտ այս կրոնական խեղկատակության գլխավոր ինիցիատորներն են և սրտի անհուն դառնությամբ, ձեռնԹափ ցավում եմ, որ 18 Թվականը չէ...» (6, 125–126):

Խոստովանում եմ. այս երկու հատվածը արտագրելիս բառ առ բառ վերապրել եմ երիտասարդ Զարյանցի ապրածը՝ Էրզրումից սկսած 1918–ի փետրվար–ապրիլի նահանջի ճանապարհին՝ լեռնային անցանելի–անանցանելի կիրճերում ու ձորերում ձյան ու սառույցների վրա հոգնաբեկ ընկած, քնա՛ծ–մնացա՛ծ մեր մանուկների, ծերերի, կանանց... «դիե՛ր, դիերի՛»... **«Ազգային երազի» մտապատկերների զուգորդությամբ, որ Թելադրում է ինքը բանաստեղծը «ոնց որ պատերազմի դաշտում լինի...» հիշեցումով:**

«Ազգային երազ»... Թերևս, այդ օրերից մեզ հասած ամենացնցող վավերագիրը, որով հայ ժողովուրդը գուցե թե, օրերից մի օր՝ պատմական հիշողության ուժ ունենալով կարողանա դատել և 1918-ի եղեռնի մասին... անշուշտ, 1913–1914-ի ակունքից պ. Միլյուկովի յոթ վիլայեթների խոստումից սկսած՝ 1915–1916 և հաջորդ ու հետագա թվականների հայ ժողովրդի դեմ հետևողականորեն իրագործված դահճային չարագործություններով հանդերձ ... Այդ դեպքում, գուցե թե, նժարները այդքան չտատանվեն...

Եվ սակայն սպասվում է 1918-ի ևս դահճային մեկ այլը...

Հակապատերազմական շաբաթ Երևանում

Այս ամենով՝ ասել կուզի, որ հուլիսի սկզբներին Երևան հասած բանաստեղծը՝ չանթեղվող մշտարթուն հիշողությամբ, վերապրում էր աղետաբեր առաջին համաշխարհային պատերազմը, և «Պրիդունների» «ընձեռած» հնարավորությամբ նախ առաջին հերթին կարողանում է հարազատ ժողովրդին հասցնել նրան վերաբերող պատմական բուն ճշմարտությունը. «երես–առտային» տրամաբանությամբ՝ երկրորդ հերթին՝ հուլիսից–օգոստոս ձգվող տևական միջոցով, պահանջում է եռանդուն աշխատանք, քանի որ, ինչպես մտաբերում է Մազմանյանը,— «Զարենցին էր հանձնարարված գլխավորելու այդ օրվա արարողության գեղարվեստական ձևավորումը: Նախատեսված էր հրատարակել պլակատներ, բրոշյուրներ, ժուռնալ, ինչպես և ձևավորել փողոցներն ու կենտրոնական հրապարակը համապատասխան բովանդակությամբ...

... Նա ղեկավարում էր գրողներին և նկարիչներին, քննում ու հաստատում էր էսքիզները, վազում էր տպարան, լիտոգրաֆիա, առանձին արվեստագետների մոտ: Համակ շարժում ու եռանդ էր նա» (ՀԵԶմ, 1, 70):

Պլակատների հեղինակները մտերիմ ընկերներն էին՝ Հալաբյանն ու Մազմանյանը, խրտվիլակները իրենց բնական մեծությամբ պատրաստել էր նկարիչ Սաքո Հովհաննիսյանը, չափածոն էլ Զարենցի գրածն էր: Եվ օգոստոսի 1-ի օրն արդեն՝ Աբովյան փողոցի երկայնքով ճոճվել են Պուանկարե–պատերազմի, կու–կլուքս–կլանի, մենշևիկի, մաուզերիստի և այլ խրտվիլակներ:

Ինչպես վերհիշում է Մազմանյանը՝ «Մենշևիկի խրտվիլակի ձևերն առնված էին Դավիթ Անանունից. կապույտ բլուզով, շիկակարմիր մազերով, ցանցառ մորուքով, ծղոտե շլյապայով, ձեռնափայտով և թևին դցած պլաշչով» (ՀԵԶմ, 1, 72): Ըստ երևույթին այս խրտվիլակը Զարենցի մտահղացումով մարմնավորում էր Գեգեչկորիի կամ Ջխենկելիի («Կապկազից» հայտնի տրամադրվածությամբ), որոնց տեսել էր կյանքում, միաժամանակ վրեժխնդիր էր և Անանունին, որը 1920-ին կասկածի տակ էր առել իր հայրենասիրությունը: Նման երկակի–երկսայրի բովանդակություն է հուշում և

Մազմանյանը. գրելով, թե՝ Անանունը խրտվիլակին մոտենալով «զայրացած գոռում էր.

«— Սրանով ինձ չեք ոչնչացնի:

Զարենցը չարաճճի հանդստացնում ու մխիթարում էր նրան.

— Դավի՛թ, դու պետք է ուրախ լինես, որ քեզ ենք առել իբրև մենշևիզմի սիմվոլ»:

Բանաստեղծի հակապատերազմական տրամադրությունների էությունը ճանաչելու առումով բնորոշ են և «Մաճկալ Սաքոյի պատմությունը» ագիտ-պաստառին վերաբերող մտաբերումները. «... Զարենցը հուզված էր, որ չի հասցրել... և, որ գլխավորն է, **դեռ չգիտե ինչի մասին պետք է գրի** *(ընդգծ.՝ Ալ. Զ.): Հանեց տետրն ու ասաց.*

— Ասե՛ք, ի՞նչ կանվա կարելի է վերցնել՝ պատկերելու համար պատերազմը. ինձ միայն ասեք, մնացածը ես կսարքեմ: Գլուխս ոչինչ չի գալիս, հոգնել եմ» (ՀԵԶմ, 1, 71),— և «կոլեկտիվ ջանքերով» գծագրվում է «կանվան»:

Դե՛, էլ ինչպես ասվեր, թե գրել-սարքել է դժկամությամբ...

Ամփոփելով հուշերի այդ օրերին նվիրված բաժինը, Մազմանյանը գրում է, թե ինչպես պիոներները հանդիսավորությամբ խարույկի վրա այրել են պատերազմի հրձիգների խրտվիլակները և որ դա՝ «... առանձին խոշոր դիտողական ագիտացիոն ձեռնարկումն էր մեզանում, որ դժբախտաբար իր հետագա զարգացումը չունեցավ: Եվ սրա ոգեշնչողը Զարենցն էր» (ՀԵԶմ, 1, 72): Մամուլի հաղորդումով հակապատերազմական շաբաթը տևել է հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը:

Կարելի է, ուրեմն, պատկերացնել չարաճճիությունները՝ խրտվիլակներն ու պլակատները տեսնելիս, օգոստոսի 3-ի երեկոյան այրելիս... բայց և հուլիսից օգոստոս շարունակվող պրկված տառապանքը, որ, այնուամենայնիվ, անկարող է ասել այն ամենը, ինչ պետք է ասեր պատերազմին՝ իր ժողովուրդը...

Ինչևէ. ի վերջո օգոստոսի 15-ին ԽՀ-ն ՀԿԿԿ Ագիտբաժնի սերիա № 17 խորագրի տակ տեղեկացնում էր, թե՝ «Լույս տեսավ «Կորչի պատերազմը» գրական-հասարակական և երգիծական ժողովածուն Ե. Զարենցի խմբագրությամբ»: «Մաճկալ Սաքոյի պատմությունը» համարյա միաժամանակ տպագրվում է «Նոր ակոսում», ապա առանձին՝ Կ. Հալաբյանի նկարազարդումով:

Ինչպես և ընդունված էր, ժողովածուն բացվում էր Լենինի լուսանկարով, տակը՝ «Խաղաղություն խրճիթներին, պատերազմ պալատներին» ասույթը. հաջորդում էր Կենտկոմի և երկոմի կոչը, այնուհետև՝ Ա. Շահգյալդի «Հայ հեղափոխական դաշնակցությունը և համաշխարհային պատերազմը», Մ. Ջանանի «Տաճկական բանակում» հուշերը, արձակ ու չափածո էջեր Ստ. Զորյանից, Ալազանից, Ն. Զարյանից, Է. Դանչոյից, իր ժամանակի պատերազմական գրվածքներով հայտնի գերմանական էքսպրեսիոնիստ գրող-լրագրող Լեոնարդ Ֆրանկի «Հայրը»: Բովանդակությամբ ու հնչեղությամբ ա-

ռավել խոսունն ու վարակիչը Գ. Քոչարի, Կ. Հալաբյանի և Մ. Մաշմանյանի իլյուստրացիաներն ու ծաղրանկարներն էին, որոնցից վերջինի՝ «Ոգի դաշնակցության» ծաղրանկարին կցված էր Չարենցի քառյակը.

Ահարոնյան նստեր կուլա,
չկա ասող մի՛ լա, մի՛ լա,
բոլշևիկը միայն վերից
ծիծաղում է նրա վրա...

Ահարոնյանի հանդեպ «Ազգային երազից» շարունակվող վերաբերմունք, որի պտուղները, շուտով վայելելու էր Փարիզում...[6]

[6] *Ուրեմն և ընթերցողին չզրկենք արդեն նախորդ էջերում քաղված՝ Թիֆլիս, հուլիսի 3, 1924 տարեթվով* **Լևոյի Չոպանյանին հղած** *նամակից Ահարոնյանին և իր որդուն վերաբերող այս «հաճելի» դրվագները ճաշակելուց. «... (մի թերթից, որի անունը, կարծեմ, «Հայաստանի ձայն» էր),— գրում է Լևոն,— որ ուղարկել էր ինձ իմ մի բարեկամը և որի մեջ տեսա Ահարոնյանի որդու մի ափեղ ցփեղ հոդվածն իմ մի շատ գիտական ուսումնասիրության դեմ:* **Ի՞նչ զարմանամ: Նրա հայրն էր չէ՞, որ իբրև Հայաստանի ներկայացուցիչ գրել է Հայաստանի դաշնակցական կառավարությանը, թե Արշակ Չոպանյանին չէ կարելի ներս թողնել օրինավոր հասարակության մեջ,** *և այդ նամակը, նրա ուրիշ նամակների հետ, Երևանում առանձին տետրակով հրատարակել է այժմյան կառավարությունը...» ԳԱԹ ԱՉՖ, թիվ 2843: Ո՜ւմ օգտին...*

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԴԻԱՆ ԵՎ ՉԱՐԵՆՑԸ

Նախապատմությունը՝ Առաջին ստուդիայի 1919–1922 թթ. գործունեության

Որոշակիորեն Չարենցին պատկանող ստորև ներկայացվող ընկուզագրով էլ հարկ է սկսել Վ. Տերյանի նախաձեռնությամբ հիմնադրված–հիմնավորված հերթականորեն միմյանց հաջորդած ստուդիաների պատմությունը: Ուրեմն և սկսենք հենց այդ «Председателю Совнаркома ССР Армении тов. Лукашину. Докладная записка» փաստաթղթերից, որից որոշ կրճատումներով թարգմանաբար քաղվում է ստորև. «Մոսկվայի Հայկական պետական դրամատիկական ստուդիան գոյություն ունի 1919 թվականից: Հիմնադրել է Ս. Ե. Խաչատուրյանը Վահան Տերյանի հանձնարարությամբ (Հայաստանի գործերի կոմիսար)...

Արդեն իրագործված է Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» պիեսի բեմադրությունը, ավարտվում է Սունդուկյանի «Պեպոյի» վրա կատարվող աշխատանքը... իսկ հունիսի վերջին էլ պատրաստ կլինի Եղիշե Չարենցի «Կապկազը»...

Ս.թ. մարտ ամսին՝ Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» հրավիրված անձանց ներկայացնելուց հետո,— ձևավորվել է Մոսկ. հայկ.պետ.դրամ. ստուդիայի կազմակերպական բյուրո, որը ձեռնամուխ է եղել գտնելու նյութական միջոցներ պիեսի բեմադրության համար:

Կազմակերպական բյուրոյի կազմում են Դրաստ. Տեր–Սիմոնյան, Ե. Չարենց, Կ.Ս. Միքայելյան, Ռ. Ն. Սիմոնով և մեկ ներկայացուցիչ Ստուդիայից...»:

Փաստաթուղթը առանց ամսաթվի կրում է «1924, ք. Մոսկվա» նշումը: Բնագիրը տե՛ս իր ժամանակի ՀՀՍՇՊԿԱ Ֆ. 122, ց.1, գործ 774, թ. 13–14:

Կից թ. 16–ի տակ էլ նախահաշիվն է՝ «Смета на постановку Капказа Е. Чаренца».

Անկասկած Չարենցի ձեռքով շարադրված ընկուզագիրը պետք է որ գրված լինի մայիսի 10–ից առաջ: «Կապկազի» նախահաշվի ու բեմականացման մասին խոսք կլինի հաջորդ էջերում և էջերի տողատակին՝ շարունակաբար:

Իսկ այստեղ տեղն է քաղել, սովորաբար շրջանցվող, որոշ փաստացի տեղեկություններ՝ սկսած Տերյանի հենց այդ«հանձնարարականից»՝ վկայությամբ ճաշակով ձևավորված սույն հայտարարության.

Комиссариат по делам армян
открывает в Москве

Армянскую драматическую студию.
Желающие могут записываться в пом. Комиссариата
Лубянская площадь, дом №2, кв. 31.
От 12—4 часов

Տակը՝ «Объявление об открытии в Москве Армянской студии. 1918»[1]
Նույն հանձնարարականով էլ Ստուդիայի ղեկավար և տնօրեն է կարգվել **Սուրեն Խաչատրյանը՝ Արամ Խաչատրյանի ավագ եղբայրը:**

Այդ հայտարարության հետ միասին նախորդ էջերում վկայակոչված Ս. Խաչատուրյանի գրքում գտնում ենք 1919–1922 թթ. միջոցի Ստուդիայի դասատուների պատկառելի անձնակազմի ցուցակը՝ թվով 35 հոգի, ռուսերեն այբուբենական կարգով՝ այդ թվում՝ Վ. Բրյուսով (Գրականության պատմություն), Ե. Վախթանգով (Կ. Ստանիսլավսկու սիստեմը և բեմական վարժություններ), Վյաչ. Իվանով (ռուսական թատրոնի պատմություն), Ստ. Քափանակյան (սառ-

---

[1] *Сурен Хачатурян, Статьи, воспоминания, письма, документы, 1969, с. 77.*

Գրքի առաջին իսկ էջում կարդում ենք. «Սուրեն Խաչատուրյանի ծնողները Եղիա Ոսկանի և Ղումաշ Սարգսի Տեր-Խաչատուրյանները Թիֆլիս էին փոխադրվել Երևանի նահանգի Նախիջևանի գավառի Ազա գյուղից... Թիֆլիսում ծնվել էին Տեր-Խաչատուրյանների Սուրենը, Վաղինակ, Լևոն և Արամ որդիները, որոնցից երեքը հետագայում իրենց նվիրել էին արվեստին» (էջ 5):

Կասկածելի «փոխադրվել» կասկածելի ծննդավայր, որ 30-ական թթ. խորհրդային անձնագրման միջոցին վերադրվել է Վրաստանում և այլուր հաստատված հայ ժողովրդի զավակներին: Խաչատուրյանների դեպքում կարելի է կարծել, որ Եղիա քահանան Թիֆլիս է հասել ցարական կառավարության ձեռնարկած Նախիջևանի գավառից **1903–1907 թթ. հայության տեղահանության իրողությամբ: Ասել է թե որդիների ծննդավայրը պետք է որ ճշտվի եկեղեցական մատյաններով:**

Իսկ Ազան 30-ական թթ. կեսերին մի չեն-չող գյուղ էր՝ Դեր ափանով (և Արաքսին միրձակա ադրբեջանական Ներքին Ազայով): Այն՝ ասել է Վերին Ազան, գտնվում էր միջնադարից հայտնի Գիլան քաղաքի մոտերքում, Գիլան գետի եզերքին: Գետն էլ՝ սկիզբ առնելով Կապուտջիղից, մաքրափրփուր ջրերով հոսում էր իմ հայրենի Փառակայի միջով, ապա միախառնվելով Լեռնային Գողթնի մի այլ Բիստից հոսող մաքրափրփուր գետի՝ արդեն փոխված գույնով դառնալով Գիլան գետ (այժմ արդեն՝ Գիլան չայ), Ներքին Ազայի մոտ թափվում էր Մայր Արաքս... Է՜, ինչ արած կարոտախտը խեղդում է, մինչդեռ պարզապես ուզում եմ ասել, որ հռչակավոր Գողթն աշխարհը հնօրյա Գողթան երգիչներից հետո էլ պարապ չի մնացել հայ ժողովրդին, և ընդամենը միմյանցից 8–10 կմ հեռավորության վրա գտնվող Ցղնա-Ազա գյուղերով՝ շատերի թվում պարգևել է քյոթայեցի Կոմիտաս և թիֆլիսեցի Արամ Խաչատրյան՝ ամեն դեպքում հիվանդ կարոտախտի չարենցյան այս տեսակով.

Այն ափերում, ուր դու,– օ՜, տարիներ առաջ,–
Թափառելով՝ սիրտ երգեր էիր գրում
Եվ գուրգուրում, իբրև սիրունդների երազ
Ա՛յն, որ թաղված մնաց քո գրքերում,–
Այն ափերում հիմա մի բարբարոս հովիվ,
Երազելով քեզ պես կնոջ գգվանք ու սեր–
Ունկնդրում է միայն շշուկներին հովի,
Եվ, երգերի տեղ քո, երգում սրտառուչ մի
չեր... (4, 401):

գանություն. արտահայտիչ ընթերցանություն), Հ. Կուսիկյան (հայոց գրականություն), Էնյլի (հայոց բանաստեղծական ռիթմիկա), Մարտին Մազմանյան (խմբերգ), Միք. Մազմանյան (նկարչություն), Ա. Սամիկոնյան (սոլֆեջո և ռիթմիկա), Տ. Մարգարյան (գեղագիտություն), Հ. Միհանաջյան (նկարչություն), Կ. Միքայելյան (հայոց լեզու), Ա. Մուրադյան (հայոց լեզու), Աշ. Հովհաննիսյան (հայոց մշակույթի պատմություն), Կ. Ստանիսլավսկի (դասախոսություններ իր սիստեմի մասին), Գ. Տեր–Գաբրիելյան (սոլֆեջո, երգեցողություն), Գ. Տեր–Սիմոնյան (հոգեբանություն), Վ. Տերյան (հայոց բանաստեղծության պատմություն), Ս. Խաչատուրյան (բեմական էտյուդներ, իմպրովիզացիա), Գ. Յակուլով (դեկորատիվ արվեստ)... բայց և տարբեր սիստեմի պլաստիկա, սոլֆեջո, ռիթմիկա, ռիթմիկա և սոլֆեջո, ռիթմիկ մարմնամարզություն, ձայնի ու շնչառության դրվածք, ոճ–հաղուստ–մաներա և այլն՝ մեծապես հրեա և ռուսազգի բարձրակարգ մասնագետներ: Եվ ավանդողների այդպիսի շքեղ կազմով 40 սան, որոնցից Թիֆլիսում 1921–ի օգոստոսի 20–ին համալրվածները քննություն էին հանձնել. հայոց լեզու և գրականություն՝ Հովհ. Թումանյան, դիկցիա՝ Դ. Դեմիրճյան, էտյուդներ և բեմական իմպրովիզացիա՝ Օ. Մայսուրյան, Ս. Խաչատուրյան, Ա. Ոսկանյան:

Ահա և նրանք 1921–ի հոկտեմբերի 1–ից նոր ուս. տարվա ավյալներով, որոնցից շատերի հետ Զարենցը հանդիպել, ճանաչել, գործակցել, գնահատել կամ չի գնահատել՝ ինչպես 20–ական թվականներին, այնպես էլ հետագայում.

Աբովյան Սարգիս, Աղաբաբյան Լևոն, Աղանբեկյան Արտավազդ, Աղանբեկյան Սամիկոն, Հակոբյան Հակոբ, Ամիրբեկյան Արամ, Բաբաջանյան Սիրանուշ, Բարսեղյան Արշալույս, Բարսեղյան (Սեբար) Եվգենիա, Գևորգյան Մինաս, Գուլակյան Արմեն, Գրիգորյան Գևորգ, Բալանթար Եկատերինա, Կոստանյան Մուրադ, Քոչարյան Սուրեն, Կորկոտյան Արշավիր, Մասչյան Անահիտ, Մալխասյան Ներսիկին, Մելքումյան Վարդուհի, Մելոյան Արփինե, Միսկարյան Մարգարիտ, Մկրտումյան Վերգինե, Մուրադյան Արաքս, Նոհրատյան Նադեժդա, Պոտոզյան (Գարագաշ) Հայկուհի, Ռոտինյան Եվգենիա, Սարգարյան Սամսոն, Ստեփանյան Վարդուշ, Տեր–Անդրեասյան Զարիկ, Տեր–Գաբրիելյան Գաբրիկ, Տեր–Զաքարյան Աստղիկ, Տեր–Մկրտչյան Հռիփսիմե, Տեր–Խաչատուրյան Արամ, Տեր–Խաչատուրյան Լևոն, Տեր–Հարությունյան Սրբուհի, Թոփչյան Թադուհի, Զոլախյան Անահիտ, Շամիրխանյան Տիգրան[2]:

---

[1] Նույնը, էջ 73–74:

Տակավին Մոսկվա, 922, 20.12 տարեթվով Մ. Գևորգյանին գրած նամակում Զարենցը հայտնում էր. «... Այստեղ հետաքրքիր է կյանքը, մասնավորապես–թատերական կյանքը: Հետաքրքիր են Վախթանգովի և Մեյերխոլդի պատանովկաները՝ «Принцесса Турандот» և «Смерть Тарелкина» (6, 396):

Որքան հայտնի է, Զարենցը հետագայում նույնպես հիշատակել–անդրադարձել է Վախթանգովին, Մեյերխոլդին՝ ոչ: Անկասկած է, սակայն, որ թատերարվեստի շուրջը բազմապիսի խոսք զրույցներում արծարծվել է Մեյերխոլդը ևս և որ անպայման ծանոթ է եղել նաև Տերյանի «Պայմանական թատրոն» (1907) վերնագրով հոդվածին՝ նույն վերնագրով Մեյերխոլդի կարդացած մի ռեֆերատի մասին:

Ստուդիան ուներ իր հիմնադիր տնօրենի ձեռքով գրված կանոնադրություն, պարապմունքների մշակված ծրագիր, անգամ սովորողների կազմակերպության իրավունքների ու պարտականությունների նախագիծ և, սակայն, **1922-ի հոկտեմբերին Ս. Խաչատուրյանը ստիպված էր սեփական դիմումով հեռանալ Ստուդիայից**[3]**:**

Իր անձնվեր գործունեության վերաբերյալ վերը հիշատակված գրքում զետեղված են հիշարժան հուշեր (Մ. Սարյանի, Ա. Խաչատուրյանի, Վ. Ֆավորսկու, Վ. Աճեմյանի, Ա. Սարգսյանի, Ս. Գիացինտովայի, Ա. Գուլակյանի, Ս. Բիրմանի, Վ. Գրոտովցևի և ուրիշների), որոնցից, կարծում ենք, տեղին է քաղել նախ որոշ հատվածներ **Արմեն Գուլակյանի հուշերից:** *Դառնալով Ս. Խաչատուրյանի, իրոք, անձնազոհ գործունեությանը,— ճանաչված տաղանդավոր բեմադրողը գրում է. «... Հարկ էր մանկավարժներ ընդգրկել ոչ թե նրանց աշխատանքը վարձատրելով (վարձատրությունը չնչին էր), այլ՝ հայոց նոր թատրոն ստեղծելու գաղափարով: Մենք ունեինք լավագույն դասատուներ: Սուրեն Ինչին հարգելով մեզ մոտ էին գալիս ռեժիսորներ ու դերասաններ ՄԽ-ից ու Երկրորդ Ստուդիայից: Պարապմունքները լինում էին և՛ ցերեկը, և՛ երեկոյան. երբեմն շարունակվելով մինչև առավոտ: Սուրեն Ինչի նվիրվածությունը իր սիրելի զավակին, նրա այրվելը մեր աշխատանքը դարձնում էր նպատակասլաց ու բովանդակալի:*

Բայց մենք՝ մեր ղեկավարի նրբանկատությանն ու հոգատարությանը միշտ չէ որ պատասխանում էինք նույն ձևով. դժբախտաբար, մենք նրան քիչ ցավ չենք պատճառել, հաճախ չհասկանալով իրեն: Մեղքը՝ մեր ջահելությունն էր և թե այդ տարիների դժվարությունը: Բարդ խնդիրներից մեկն էլ... մոսկովյան խմբին և եկվոր նորերին օրգանապես մերձեցնելն էր... Սկզբում այդ երկու խմբի միջև զգացվում էր որոշ հակասություն: Ինչպես ցույց տվեց կյանքը՝ թե՛ նրանց, թե՛ մեր մեջ կային պատահական մարդիկ...

Տերյանը գրում էր, *թե Մեյերխոլդը գտնում էր, որ Գեղարվեստական թատրոնը* **«բեմական սիմվոլիզմը զոհաբերեց նատուրալիզմին»,** *և որ Մեյերխոլդի նշանաբանը Չեխովի «տրամադրություն» թատերայնությունն էր՝ տեսությամբ ու մեկնակետով: Հաղորդումից երևում է, թե գեթ 1907-ին բանաստեղծը որպիսի հետաքրքրությամբ է զգացել վեճի էությունը, այլև անմիջական ու ակտիվ մասնակիցներին՝ Մետերլինկից՝ Համսուն, Չեխով, Բրյուսով, Բլոկ, Գեղարվեստական թատրոն, Մեյերխոլդ և շատ ուրիշներ»: (այս հատվածը սեղմագիր է 1964-ին տպագրված «Տերյանի ժառանգությունը» գրախոսականից. տե՛ս* **Ալ. Զաքարյան, Ավանդների ուժը,** *1981, էջ 204–211):*

Հետաքրքիր մոտավոր համեմատությամբ դժվար չէ նկատել Զարենցի գավառական թատերարվեստի տեսության և ըմբռնումների «ժառանգական արնակցությունը» Տերյանին: Ավելին. փաստացի 1923–1924-ի իր գործունեությամբ՝ Տերյանի սկսած գործի շարունակողն էր Մոսկվայի Հայկական դրամատիկական ստուդիայում: Թվարկված անուններից, երևի թե, առաջինն է «Կարոտշկա, սրբուհի...» չափածո ողբերգում հիշատակված Անտիպյան: Բարսեղյան (Սերոբ) Եվգենիան՝ հետագայում Գ. Մակինցյանի կինը:

[3] *Նույնը, էջ 77–80, 81–82:*

...Քանի հուզումնալի նամակ, դիմումներ է հասցեագրել նա մեզ, կոչ անելով արժանավայել վերաբերվել արվեստին: Մինչև այժմ էլ մենք հիշում ենք սիրած դարձվածը. **«Արվեստը պետք է սիրել հոգու բոլոր թելերով»...**

Մենք, առաջին ստուդիականներս, շատ բանով ենք պարտական մեր անմոռանալի Սուրեն Իլիչին, որը արթնացնում էր մեր մեջ մաքուր, ես կասեի սուրբ վերաբերմունք արվեստի հանդեպ: Նա մեզ համար մշտապես մնում է նվիրվածության օրինակ՝ սիրած գործին»[4]:

Թռուցիկ հայացքով իսկ վերը քաղված ստուդիականների ցուցակին՝ անմիջապես կարելի է զատել պատահականներին ճշմարիտ կոչվածներից, որոնցից մեկն էլ Գուլակյանն էր: Բավական է թերթել այն մատյանները, որոնցում արձանագրված են իր բեմադրությունները՝ փորձ առ փորձ, շտկումներով, լրացումներով: Ասել է՝ «սիրած գործին» նվիրվածության օրինակ է մնում նաև ինքը:

Այս և այլ առումներով՝ ըստ ամենայնի ուշագրավ են և իր ավագ եղբոր մասին Արամ Խաչատուրյանի, ինչպես և Մ. Սարյանի հուշերը. հատկապես այս վերջնամասով. «Գիտակցելով, որ իսկական արվեստագետը կարող է հրաշք գործել միայն հարազատ հողի վրա, նա (Ս. Խաչատուրյանը՝ Ալ. Զ.) մշտապես երազում էր թեկուզ մեկ բեմադրություն ունենալ Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում: Բայց, ինչպես լինում է հաճախ, մարդը և իր ամենաթանկ երազանքը սլանում են չխաչվող ճանապարհներով: Այդպես ապրեց և Սուրեն Իլիչը, իր ժամանակակիցներին թողնելով չափազանց շատ բան և ամենակարևորը՝ մեծ մարդու անմարելի հուշ: Բայց ավելի մեծը նա տարավ իր հետ, այդ թվում ամենաթանկը՝ հայրենի հողի վրա ստեղծագործելու երազանքը»[5]:

Առեղծվածային բաղադրություն ունեցող տողեր՝ իր ժամանակին անպայման հայտնի Սարյանին, Արամ Խաչատուրյանին, նաև Չարենցին, գուցե և Կարեն Խաչատրյանին էս: Ասել է թե՝ թերևս, պահպանված լինեն հետքեր... և ինչու չէ նաև Տերյանին վերաբերող դարաններում... Եվ սակայն, լինեն, թե չլինեն այդպիսիք, անժխտելի ապացույցը մնում են ստրկության դեմ ազատատենչ հզոր ղողանջներով և պարային մոլեգին թափով տրոփող «Սպարտակը», ինչպես և «Սուսերով պարը»... առհասարակ իր ողջ ստեղծագործությունը[6]: Այլև այն, որ՝ ի կատար ածելով **Տեր–Խաչատուրյանների ողջ գերդաստանի բաղձանք–երազանքը՝ Արամ Խաչատրյանը թաղվեց հայոց պանթեոնում...**

---

[4] Նույնը, էջ 44–45:

[5] Նույնը, էջ 27–28:

[6] Հիշարժան է, որ երկուսի էլ տաղանդավոր կատարողները եղան Տեր–Խաչատուրյանների պապենական հայրենակիցները . «Սպարտակը»՝ Գողթան աշխարհի պապենական Փառակա գյուղից Վիլեն Գալստյանը, «Սուսերով պարը»՝ Աիդա Հարությունյանը՝ Արևիք–Մեղրիից:

Դրամատիկական երկրորդ ստուդիա Ռուբեն Սիմոնով և Չարենց

Ինչպես հետևում է Բաբկեն Հարությունյանի նախորդ էջերում քաղված հանգամանալի «տեղեկատվությունից», 1919-ի վերը քաղված հայտագրին հաջորդած դժվարին նախապատրաստության արդյունքում Ստուդիան սկսում է կանոնավոր գործել՝ «1921 թվականի հոկտեմբերի 1-ի նոր ուսումնական տարում: Ստուդիական աշխատանքներում նախատեսվում են Դեմիրճյանի «Դատաստանը» (բեմադրող Ս. Խաչատուրյան, նկարիչ Մ. Մազմանյան), Դիքենսի «Խլահեղները» (բեմադրող Բիրման), Է. Լաբիշի «Երկու վախկոտը», (բեմադրող Ա. Գեյրոտ, նկարիչ Ա. Միհանաջյան): Շարունակվում էր աշխատանքը «Դեպի արևը» և «Հեքիաթ» պիեսների վրա:

Ստուդիականները կանոնավոր կերպով անց էին կացնում հայոց դասական բանաստեղծության երեկոներ, որոնցում կատարվում են Նահապետ Քուչակի, Սայաթ-Նովայի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի, երգահաններ Կոմիտասի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Ռոմանոս Մելիքյանի, Սպիրիդոն Մելիքյանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի, Դանիել Ղազարյանի ստեղծագործությունները:

Ստուդիայի առաջին ավարտական ներկայացումները՝ 1922-ի մայիսի 30-31-ին («Դեպի արևը» և «Հեքիաթ») ունենում են մեծ հաջողություն: Նույն տարվա աշնանը Ստուդիան ներկայացնում է իր նոր աշխատանքը՝ «Երկու վախկոտը»:

1922 թվականի ամռանը ստուդիան պարապում էր Թատերական արվեստի ինստիտուտին կից... Այդտեղ ստուդիականները ունկնդրում էին **Վ. Է. Մեյերխոլդի դերասանական դասախոսությունները:** *Խաչատուրյանը հոգ էր տանում, որպեսզի սաները լավագույնս ծանոթ լինեն Մոսկվայի թատերական կյանքին, կանոնավոր կերպով հետևեին լավագույն թատրոնների աշխատանքներին: Ստանիսլավսկու միջոցով նա աշակերտների համար ստացել էր թույլտվություն հաճախելու* **Մոսկվայի Գեղարվեստական թատրոն, մասնակցելու Վախթանգովի նշանավոր «Արքայադուստր Տուրանդոտի» դիտումներին և այլն»,—** *հավաստում է թատրոնի երախտավոր պատմաբան Հարությունյանը:*

Չարենցի դեպքում թռուցիկը բացառված է. ուրեմն և համոզված կարելի է ասել, որ եղել է այս ամենի մեծագույն մասի մասնակիցը, սղունդի պես կլանել է դիտելիքներ ստուդիական բոլոր տեսակի միջոցառումներից, ավանդվող առարկաներից, լինի դերասանական խաղ, պլաստիկա, ռիթմ, ձայնի դրվածք, բեմադրական ոճեր ու ճաշակ, նկարչական ձևավորում, դեկորներ, հագուստ...

Համակողմանի նման իմացություններով և «Կապկապը» բեմադրելու ամենակուլ ցանկությամբ էլ 1924-ի տարեմուտից ձեռնամուխ է լինում դրամատիկական երկրորդ ստուդիայի աշխատանքներին: Հավանալի է. նախ ապահովելով համաձայնություն-գործակցությունը Ռուբեն Սիմոնովի և ապա «նախաձեռնող խմբի» մյուս անդամների հետ: Այդ ընդհանուր պայմանավորվածությամբ էլ վե-

րը հիշատակված Լուկաշինին ներկայացված «զեկուցագրի» համաձայն՝ 1924-ի մայիսի 15-ին ԽՀ-ն տեղեկացնում էր, թե՝ «Մոսկվայի պետական հայկական դրամատիկական ստուդիայի ղեկավարն է Մոսկ. ակադեմիկ գեղարվեստական թատրոնի 3-րդ ստուդիայի դերասան Ռ. Սիմոնյանը:

Դասատուներն են՝ Յուր. Զավադսկի, Ռ. Սիմոնյան, Ի. Կուդրյավցև, Հ. Ռապոպորտ և Բ. Շչուկին:

Մայիսի սկզբին կբեմադրվի Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» Ռ. Սիմոնովի և Ի. Կուդրյավցևի բեմադրությամբ: Նկարիչներն են Գ. Յակուլյան և Վ. Կոմարդյունկով, երաժշտագետը՝ Ն. Սիզով: Մայիսի վերջին կցուցադրվի Գ. Սունդուկյանի «Պեպո» Ռ. Սիմոնովի և Հ. Ռապոպորտի բեմադրությամբ. նկարիչներն են՝ Գ. Յակուլյան և Պ. Գալաջյան: Բեմադրվելու է նաև Ե. Չարենցի «Կապկազը»: Ամառը Ստուդիան մեկնելու է Հայաստան իր բեմադրությունները ցուցադրելու համար: **Ստուդիայի նյութական և իրավական վիճակը կարգավորելու համար ստեղծված է մի նախաձեռնող խմբակ, որի մեջ մտնում են Դրաստամատ Սիմոնյան, Եղիշե Չարենց, Կարեն Միքայելյան, Ռուբեն Սիմոնյան և մի հոգի Ստուդիայի կոլեկտիվից»:**

Եթե առաջինը նախաձեռնող էր ի պաշտոնե, քանի որ որոշ, այդ թվում գաղափարական առումով,— փոխարինում էր Սահակ Տեր-Գաբրիելյանին,— ապա Չարենցն ու Միքայելյանը կոչված էին Սիմոնովի կողքին իրագործելու ստեղծագործական կարևոր խնդիրներ:

Ստուդիան պարապմունքներն սկսել էր ամիսներ առաջ և մայիսի 18-ին Լազարյան ճեմարանի դահլիճում ներկայացվում է Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները». բեմականացումը Ա. Կորկոտյանի, բեմադրիչներ Ռ. Ն. Սիմոնով և Ի. Մ. Կուդրյավցև. նկարիչ Վ. Պ. Կոմարդյունկով, էսքիզներ՝ Գ. Բ. Յակուլով: Դերակատարներ՝ Աբիսողոմ աղա՝ Կորկոտյան, Մանուկ աղա՝ Մ. Կոստանյան, Շողակաթ՝ Ա. Մաուչյան, Շուշան՝ Վ. Ստեփանյան, բժիշկ և մետր դ'օթել՝ Ս. Քոչարյան. բանաստեղծ՝ Գ. Տեր-Գաբրիելյան, Քահանա՝ Կ. Ալվարյան, նաև՝ Վ. Աճեմյան և ուրիշներ: Եվ որ նույնպես կարևոր է մասնակցում էին I, II, III խմբով դերասանուհիներ, նույնքան ծառաներ[1]:

---

[1] Առաջին գնահատողն էլ լինում է բեմադրողը՝ Рубен ստորագրությամբ *«Известия» լրագրի մայիսի 22-ի համարում տպագրած այս կարճառոտ հաղորդումով. «Մեծապատիվ մուրացկաններ» - մայիսի 18-ին այս կատակերգությունը ներկայացրեց Մոսկ. պետ. հայկական դրամատիկ ստուդիան: «Մեծապատիվ մուրացկանների» հեղինակ Հ. Պարոնյանը ժողովրդական երգիծաբան է, հայ Գոգոլ: Այդ կատակերգության մեջ նա ստեղծել է բուրժուական ձրիակերների մի ամբողջ շարան, որոնց ձեռքն է ընկնում մի վաճառական:*

Կենտրոնական դեմք՝ Աբիսողոմ աղային նրբորեն ու սրամիտ ներկայացրեց Արշավիր Կորկոտյանը, որը՝ համեմատաբար թույլ խաղընկերներով, տաղանդավոր կերպով առաջ տարավ ամբողջ կատակերգությունը:

Պիեսի բեմադրությունը առանձնանում է պարզությամբ ու թեթևությամբ: Վերջին մեկ տարում Ստուդիան հասել է նկատելի արդյունքների»:

Ներկայացմանը արձագանքում են նաև «Պրավդա» և այլ կենտրոնական պարբերականներ:

Մտաբերելով այդ օրերը, Մ. Մաղմանյանը գրում է, թե «Զարենցը բոլոր ներկայացումներին հաճախում էր ու նստում առաջին կարգում, ուղիղ մեջտեղում:

Զարենցը կենդանի մասնակցություն էր ունենում իր վերաբերմունքով դեպի ներկայացումը, իբրև դիտող: Անտարբեր չէր կարողանում նայել բեմին, այնքան բնական էր դերասանների խաղը:

— Վա՜յ, վա՜յ, մի՛ տես, մի՛ տե՛ս,— ցույց էր տալիս Աբեսողոմի վրա՝ երկու ոտքը բարձրացնում ու խփում էր հատակին ու բարձրաձայն ծիծաղում՝ արցունքներն աչքերին:

Զարենցի վրա ազդում էր կոմիկականը և, լինելով անմիջական մարդ՝ նա չէր կարողանում պահել իր հուզմունքը:

Զարենցի բացականչություններն ու ծիծաղը այդ ներկայացման անհրաժեշտ մասերն էին դարձել:

Ներկայացումից հետո Զարենցը խաղացողներին էր կրկնում, մեջ էր բերում Պարոնյանի դարձվածները, դիպուկ արտահայտությունները և երկար ժամանակ ինձ հետ խոսում էր և նույնիսկ նամակներ էր գրում արևմտահայ լեզվով» (ՀԵԶմ, 1, 70):

Դժբախտաբար, նամակները մեզ չեն հասել, բայց ինչ իմանաս, գուցե թե, որևէ էջ, որևէ պատառիկ փրկված լինի: Համոզված եմ, պարոնյանակերպ նմանակված արտահայտությունների շաղախում կգտնեինք գրողի երգիծական արվեստի և քաղաքացիական նկարագրի դիպուկ գնահատականներ[5]: Հայտնի է, չէ՞, որ Ակսելի հետ Զարենցը եղել է՝ որպես ազգային արատների կանգուն հիշեցում—ծաղր՝ Երևանում Պարոնյանի արձան ունենալու նախաձեռնողը (6, 558, 795):

Հասկանալի է, որ բանաստեղծը խաղացողներին կրկնել, խոսել, պարոնյանանման դարձվածներ է փոխանակել և իրենց՝ դերասանների հետ, նաև Կ. Միքայելյանի, որին «924, 6, IX, ի. ք. Տփլիս, Վրաստան» տարեթվով հասցեագրած նամակում ևս գտնում ենք մի այդպիսի հատված. «Հիմի գանք քեզի: Դո՞ւն ինչ կենես, ով մեծդ Կարինոյ, լուր չունիմ քեզմե, լսած եմ միայն, որ ամառանոց գացեր ես: Կարծում եմ, որ հիմ<ա> արդեն Մոսկով չահարում կլինես և անձնվիրաբար անցած քո պաշտոնի դվորնիկի ազգաշեն պաշտոնից...» (6, 409–410):

[5] Անհրաժեշտությունն առաջինը արձանագրել է Պողոս Մակինցյանը Կ. Պոլսից վերադառնալուց հետո՝ Մսկվ 1924-ի ապրիլի 18–19-ին տպագրած «Մի տարի Պոլսում» նոթերի աստղանշանով առանձնացված վերջնամասով. «Սրանով էլ մենք կփակենք մեր թռուցիկ նոթերը: Սակայն մի ամբողջ տարի պոլսահայ գաղութը դիտելուց հետո, մեր մեջ հասունացավ մի միտք, մի գործնական առաջարկ, որ ուզում ենք դրած լինել մեր ընթերցողների և Հայաստանի լուսժողկոմի առջև:

Պոլսի գետնահարկ նկուղներից մեկում, անողոք չքավորության, թոքախտի ճիրաններում մահացավ մի երևելի մարդ, որ այնպես է մարմնացրել Պոլսի հայ մեշչանականությունը, մանրբուրժուական այդ ճահիճը, որ այսօր էլ մտնում ես այդ քաղաքը թե չէ — կարծես թե հին ծանոթների ես հանդիպում, կարծես թե նրա անզուգական էջերից են պոկվել—փախել այդ քաղքենիները:

Ես առաջարկում եմ

— Հայաստանում արձան կանգնեցնել Հակոբ Պարոնյանին»:

Ամենօրյա կենդանի շփումներով մտքեր, կարծիքներ է փոխանակել Յակուլովի ու Սիմոնովի հետ, անշուշտ, ամենևին էլ ոչ զուտ «դիտողի», այլ հիմնավոր մասնակցությամբ առաջին փորձերից՝ ներառյալ նկարչական ձևավորումներն ու էսքիզները:

Լազարյան ճեմարանում միայն նախնական կրթություն ստացած Սիմոնովը, բնականաբար, լավ չէր տիրապետում հայերենին, առավել ևս արևմտահայերենին: Կասկած չի կարող լինել, որ բանաստեղծը արևմտահայերենի խառնուրդ կարսյան բարբառով մեծապես օգնել է բեմադրողին՝ պարոնյանական ուղղակի, ոլորանման, շրջուն բառախաղերը, իմաստավորումները, հակադրություն–համադրությունները բացատրելու, թարգմանաբար ու թատերայնորեն տեղ հասցնելու առումով՝ նկատելիորեն դյուրացնելով բեմադրությունը: Մեծապես օգնել է և Յակուլովին՝ խորհուրդներով, ինչու չէ անգամ նկարելով, թերևս և չափել–ձևելով (չէ որ կոշկակար էր, տիրապետում էր թե ձևելու, թե կարելու արվեստին), նկարագրելով՝ դարձյալ Կարսից մոտիկից ծանոթ արևմտահայերի տանելի «աքսեսուարներին», հագուստին, փեսերին, գոտիներին... գույներով... ձևերով, դծերով, նստվածքով...

Ստեղծագործական սերտ համագործակցությամբ՝ երկուստեք գնահատելով, բնականաբար, շատով մտերմություն է հաստատվել Սիմոնովի ու Չարենցի միջև: Այնպես որ կարող ենք ասել, Արփենիկի, գուցե և ուրիշների հետ Չարենցը՝ 1922–ից հետո, 1924–ին Վախթանգովի թատրոնում նորից է դիտել Կարլո Գոցցիի «Արքայադուստր Տուրանդոտը»: Վախթանգովի բեմադրած այդ պիեսում 1922–ին Սիմոնովը Տրուֆալդինոյի դերակատարն էր, հետո խաղում էր Պանտալոնե. ասել է թե՝ Սիմոնովի կատարողական բարձր արվեստից իր պատկերացումները կարող էր լրացնել–հարստացնել նման համադրումով: Ավելին. դիտել է և 1924–ին բեմադրված Պ. Մերիմեի «Սուրբ նշխարքների կուժը» և Դ. Լենսկու «Լև Գուրիչ Սինիչկին» պիեսները՝ վայելելով փոխարքայի և Սինիչկինի Սիմոնովի թատերայնորեն հյութեղ–հնչեղ կատարումները:

Հիրավի, 1922–ի «Արքայադուստր Տուրանդոտը» դիտելու ժամանակից ժողովրդական թատրոնի, բեմարվեստի ու խաղի Չարենցի ըմբռնումները հունավորվել–ձևավորվել–խորացել կուռ–ամբողջական հայացքների են վերաճելՎախթանգովի Նոր թատրոնի, Սիմոնովի կատարումների տպավորության և ապա Ստուդիայում ստեղծագործական համագործակցության ընթացքով:

Կարճ ժամանակամիջոցից, հոգեկան ծայրաստիճան լարված վիճակ, ստեղծագործական գերագրական ծանրաբեռնվածություն – նման պայմաններով ամբողջական համալիրով յուրացնել թատերական անսովոր մի նոր ուղղություն, իրոք, նշանակում է ունենալ գեղարվեստական անպարփակ արտակարգ ըմբռնողություն ու մտածողություն: Մանավանդ նկատի ունենալով և սույն իրողությունը. մշտական շփումներն ու համագործակցությունը Սիմոնովի հետ վերաբերում են 1923–ի աշնանից 1924–ի մայիս ամիսներին: Բայց, ահա՛, 1923–ի ամռանը լույս տեսած «Կապկազ» թամաշան թատերական–բեմական բոլոր հատկանիշներով

անհերքելիորեն համապատասխանում է **Ռ. Սիմոնովի՝ «Standard»-ում տպագրած «Նոր թատրոնի և Մոսկվայի հայ. դրամ. ստուդիայի մասին» հոդվածի սկզբունքներին:**

Դժվար է գերագնահատել Ստուդիայում Սիմոնովի գործունեության, ինչպես և այս հոդվածի կարևորությունը. անկեղծ ասած «Կապկապի» վերլուծությունները՝ Վախթանգովի սկզբունքներից կցկտուր վկայակոչվող դատողություններով հաճախ թողնում են վերացական, օդից կախված տպավորություն: Եվ ահա, շնորհիվ Սիմոնովի այդ հստակ շարադրանքի, ի վերջո, ներկայանում են նորարարական էությամբ ու հնչեղությամբ: Այդ առումով էլ հոդվածը կենսականորեն արդիական է ներկայիս թատերական լճացումը հաղթահարելու, թատերական երիտասարդ սերնդին՝ այլևայլ միտումների կողքին, նաև՝ իմ խորին համոզմունքով հայոց ազգային թատրոնի ակունքներին խորապես հարազատ վախթանգովյան թատերարվեստի ավանդներով սնելու ու զինելու, իր ժամանակի Ստուդիայի օրինակով ստեղծագործական համարձակ քայլերի մղելու առումով:

Սույն մտահոգություններով էլ, կարծում ենք, տեղին է քաղել, շրջանառության մեջ դնել հոդվածն ամբողջությամբ.

«Ներկայումս Մոսկվան կենտրոնն է ոչ միայն ռուսական արվեստի, այլև ամբողջ Եվրոպայի արվեստի օրենսատան է (Ալ. Զ.):

1923 թվի ամռանը ինձ վիճակվեց խմբի հետ միասին Շվեյցարիայում և Գերմանիայում լինել, և այն հաջողությունը, որ ունեցան Եվգենի Վախթանգովի բեմադրությունները (Ս. Անտոնիոսի հրաշքը և Տուրանդոտը) պարզ ցույց է տալիս, թե արևմուտքում որպիսի հետաքրքրությամբ և ուշադրությամբ են վերաբերում դեպի ռուսաստանյան ներկա արվեստը:

Շվեյցարիայում, որ ազատ էր մնացել Եվրոպայում կատարված համաշխարհային ցնցումներից և որտեղ տիրում է կույտ գոհունակությունը — արվեստը գտնվում է խիստ անկար վիճակում:

Գոթեբերգում կայացած համաշխարհային արդյունաբերական ցուցահանդեսին նկարչական և քանդակագործական թանգարանի հատկապես կառուցած շենքը ոչնչի պետք չէր: Նկարչական մասը ևս արժանի չէր ոչ մի ուշադրության: Տկլոր կանանց մարմիններ ու բյուստեր, նատյուրմորտիկներ և պեյզաժիկներ:

Եղած թատրոններից ամենամեծ հաջողությունը վայելում է այսպես կոչված «Ռեվյուն», ուր թեթև կերպով ծաղրվում է «բարի» թագավորը, քննվում են քաղաքի փոքրիկ բամբասանքները և ռեկլամ են անում շվեդական առևտրական խոշոր ֆիրմաները:

Գերմանիայում քաղաքական և տնտեսական քաոսը անմիջապես անդրադառնում է և արվեստի վրա: Բեռլինի հարուստ թաղամասերում կան համարյա 20 օպերետային թատրոններ, որոնցում թեթև հաճույք են ստանում հղփացած չիբերները: Իսկ Բեռլինի հյուսիսային մասում, Շպիտելմարկի այն կողմը, բանվորական թաղերում քաղցած բանվորները լսում են կինոների բաց լուսամուտներից հասնող երաժշտությունը:

Մոսկվայում արվեստը երիտասարդ է ու բաբախուն: Այստեղ տենդորեն որոնում են արվեստի ձևեր, որ համապատասխան լինեն հեղափոխության հերոսական թափին: Այստեղ աշխատել է Վախթանգովը, աշխատում են Մեյերխոլդը, Էյզենշտեյնը և ուրիշներ: Այստեղ տեղի են ունենում մասսայական մանիֆեստացիաներ, հսկայական ցույցեր, որոնցից շատ բան ունի սովորելու ժամանակակից թատրոնը: Ինձ թվում է, որ արդի թատրոնի ձևը մի քանի ժամանակից հետո պիտի արմատապես փոխվի: Ժամանակակից թատրոնը ձգտում է ազատագրվել պայմանական վարագույրից, դեկորից, քանդել բեմը, լայնացնել այն մինչև հրապարակային սահմանները: Եվ գալիք թատրոնի տեղը հրապարակն է, ուր տեղի կունենան հսկայական օրկեստրներ, երգեցող խմբեր, մարմնամարզական տոներ, ցուցահանդեսներ և այլն:

Այստեղ Մոսկվայում ինձ վիճակված է հայկական թատրոնի համար մի փոքրիկ գործ կատարել: Ինձ համար պարզ է, որ թատրոնի զարգացումը նույն ուղին է ունենալու ինչպես այստեղ, այնպես էլ Հ. Ս. Խ. Հ.–ում:

Մեր թատրոնի պակասությունն այն է, որ բացակայում է ներկայացման ներքին կյանքի կոնստրուկցիայի ժամանակակից ֆորման: Այն ամենը, ինչ որ հետաքրքիր է կովկասյան թատրոնում հիմնված է լոկ դերասանական ու ռեժիսորական անհատների վրա: Այնինչ ներկայումս թատրոնական կոնստրուկցիայի միակ ձևն է կոլեկտիվիզմը: Կոլեկտիվիզմի ֆորման թատրոնում ամենից առաջ հեշտ երևան է գալիս Ստուդիայի միջոցով: Ստուդիան իրենից ներկայացնում է նույնարժեք աշխատակիցների հավաքածու, ուր թե՛ առաջինը, և թե՛ վերջինը հավասար գնահատելի են գործի համար: Վերցրեք մեքենան, դուրս հանեք նրանից ամենաչնչին մասը ու մեքենան կփչանա, կդադարի աշխատել: Կոլեկտիվ միության ահա այդ սկզբունքի հիման վրա է, որ ես տանում եմ Մոսկվայի Հ. Դ. ստուդիայի աշխատանքները: Առաջինը պատրաստական աշխատանքում (Սերվանտեսի ինտերմեդիաների երեկո. «Սալամանկայի քարանձավը» և «Երկու շատախոսներ») արդեն նշմարվում էր այդ ուղին, բայց ավելի որոշակի նա երևան եկավ այս տարվա ներկայացման («Մեծապատիվ մուրացկաններ» ըստ Հ. Պարոնյանի) ընթացքում: Այստեղ մենք աշխատում էինք հասնել անսամբլային ամբողջության, մեր ձգտումն այն էր, որ ներկայացման ամեն մի շարժման մեջ զգացվեր արտիստների համերաշխ աշխատանքը ու այդ աշխատանքի կոլեկտիվիստական կազմակերպությունը:

Երկու խոսք ես ներկայացման մասին ըստ էության: Պարոնյանի պատմվածքում և պիեսում, որ կազմված է նույն այդ պատմվածքից, բացակայում է ներկայիս թատրոն–թամաշի ամենաէական տարրը — գործողությունը: Պիեսն ամբողջովին խոսակցական է — հարկավոր էր այն գործողական դարձնել: Այդ նպատակով երրորդ արարը տեղափոխված է ճաշարան: Եվ դա հնարավորություն տվեց արտիստներին շարժվել երաժշտության ռիթմով: Մասսայական տեսարաններ, որտեղ մասնակցողների շարժումները պիտի համակերպ լինեն, որի համար հարկավոր է վարժեցնել նրանց տիրել գործողության ռիթմին և իրենց մարմին-

ներին: Գործողության սկզբում հանդիսականների աչքի առջև դերակատարներն իրենք երաժշտության տեմպով դասավորում են ճաշարանի կոնստրուկտիվ կահկարասին. դա դերակատարին դարձնում է բեմական բանվոր ու սովորեցնում է նրան տիրապետել թատերական ակսեսուարին:

Ներկայացման արտաքին ձևակերպումը (դեկորներ, կահկարասի, ակսեսուար) պետք է լինի հասարակ և հարմար շարժական թատրոնի համար, որպիսին է Մ. Հ. Դ. Ստուդիան: Պիեսի ամեն մի իրը, լինի դա գորգ, սեղան, աթոռ, թե դուռ, քանդվում ու ծալվում է, այսինքն՝ միանգամայն հարմարեցվում է տեղափոխության համար: Եվ ժամանակակից թատրոնի այն հիմնական սխալը, որ առաջին հերթին պետք է աշխատել վերացնել — բեմի ծանրաբեռնելն է ավելորդ իրերով, որոնք, բացի տեղափոխության համար անհարմար լինելը, խանգարում են տեսնել բեմի վրա ամենակարևորը ու գնահատելին — դերասանին: Պատճառը սա էր, որ ներկայացումը կառուցելիս մենք բավականանում էինք ամենակարևոր իրերով:

«Մեծապատիվ մուրացկաններում» ի՞նչն էր, որ իդեոլոգիապես հետաքրքրում էր մեզ՝ ժամանակակից կյանքին համապատասխանելու իմաստով: Իհարկե ոչ թե այդ պիեսի էպոխայինը ու կենցաղայինը. մենք գիտավորյալ կերպով աչքաթող արինք սրանք. մեզ համար պիեսի գործողությունը կատարվում է ներկայումս: Այսօրվա «Մեծապատիվ մուրացկանությունը» դա ամեն ազգության էմիգրանտներն են, ամեն տեսակի բախտախնդիրներն ու չինարար աշխատանքի անընդունակներ, որ հիմա էլ ժամերով նստում են Կ. Պոլսի, Փարիզի, Բեռլինի կաֆեներում՝ «թեթև աշխատանք» որսալու, կամ անվերադարձ փոխառումներ անելու հույսով: Մեռնող բուրժուազիայի ինտելիգենցիայի վերջին թափթփուկներն են դրանք, հեղափոխությունից փախած այդ ոչ այնքան էլ մեծապատիվ մուրացկանները, որ շատ բան կտային, եթե Պոլսի կաֆեներից մեկում հանդիպեին մի օր Աբիսողոմ աղայի նման հարուստ իդեոտների: Ահա այս է եղել մեր իդեոլոգիական հիմնական մոտեցումը՝ «Մեծապատիվ մուրացկանների» մեր նոր ներկայացումը կառուցելիս: Այսօր թատրոնը ամենասերտ, ամենաուտիլիտար կերպով պետք է կապվի կյանքին, լսի նրա ռիթմը, որ հեղափոխության ռիթմն է: Դրա համար, սակայն, հարկավոր է ոչ միայն ակեց—դերասան, այլև դերասան—քաղաքացի, դերասան—ագիտատոր: Եվ եթե մեզ հաջողվի գոնե մի փոքր հասնել այդ նպատակին — մեզ համար դա կլինի մեր ձգտումների ամենամեծ բավարարումը»[9]:

Կարելի է նկատել, որ թարգմանողը անփորձ է, երևի թե Ստուդիայի սաներից: Անտարակույս, վրայից անցել է Չարենցը. հակված եմ հավատալու, որ բանաստեղծի հավելածն է և հոդվածը եզրափակող մասը, որով և վերջավորվում է

---

[9] «Standard», 1924, թիվ 1, էջ 15–16. ԳԱԹ ՉՖ պահպանվում է նաև մի այլ օրինակ. «Սիրելի Միշա Մաղմանյանին, Մոսկվա 1924, 1.14. Չարենց — Կ. Հալաբյան»՝ վերջինիս ինքնագիր մակագրությամբ:

ամսագիրը: Հավաստելու նաև, որ «Ստանդարտում» տեղ գտած նյութերից,— անշուշտ, մնայուն արժեքի խոր գիտակցությամբ,— Չարենցը ամենից ավելի շահագրգռված է եղել Սիմոնովի հոդվածի տպագրությամբ: Այնքան որ Վախթանգովի թատրոնում և Ստուդիայի աշխատանքներով ծանրաբեռնված Սիմոնովը ներկայացրել է ուշացումով, այդ պատճառով էլ ձգձգվել է St լույս տեսնելը:

Ըստ ամենայնի հիմնավոր շահախնդրություն. եթե հիշենք Դեմիրճյանի ու Չարենցի 1923–ի ամռանը օրեր շարունակ Թիֆլիսում փոխանակած–փոխադարձած մտահոգությունները, խոհերն ու խորհրդածությունները «Քաջ Նազարի» ու «Կապկազի», այնպես էլ Լեոն Շանթի թատերգության նյութով թատերարվեստի նորոգ խնդիրների ու հոգսերի շուրջը: Չէ որ աննախանձ մոտեցումներով, գրապատմական–տեսական խորքային թափանցումներով ու կռահումներով հայոց թատրոնի զարգացման հեռանկարը Դեմիրճյանը առավելապես կապում էր Շանթի թատերգության հետ:

Նկատենք նաև վերը հիշատակված զեկուցագրում և ԽՀ 1924–ի մայիսի 15–ի հաղորդման մեջ ասվում էր, Ստուդիան բեմադրելու է «Կապկազը»: Չիրագործվեց: Բեմադրվեց առավել հետագիմության պայմաններում, 1926–ին Թիֆլիսում, (ապա Բաքվում) բեմադրող Վ. Փափազյանի վկայությամբ փորձերին բանաստեղծի ամենօրյա մասնակցությամբ: Ավելացնենք. Ստուդիայի հաշված բեմարվեստի սկզբունքներով:

Ստուդիան Երևանում

Իրապես հուլիսի սկզբներին Երևան հասած Չարենցի գործոն նախապատրաստությամբ էլ 1924–ի օգոստոսին տեղի են ունենում Ստուդիայի ելույթները Երևանում: Թատերական կարևոր իրադարձություն, որը զուգադիպելով Առաջին համաշխարհային պատերազմի տասնամյակի արարողություններին ունենում է լայն հնչեղություն: Ռ. Սիմոնովի և Գ. Յակուլովի գլխավորությամբ դերասանական անձնակազմը Երևան է հասնում օգոստոսի 7–ին. ուրեմն և կարելի է պատկերացնել Չարենց–Մազմանյան–Հալաբյան ընկերակցության նախապես բորբոքած եռուզեռը: Հայաստանից օգնության կամ աջակցության ակնկալիքով նախ օգոստոսի 8–ին ներկայացվում է «Մուրացկանների» երկրորդ գործողությունը Բանվորական ակումբում ժամանակի Խորհրդային Միության լուսավորության կոմիսար Ա. Լունաչարսկու զեկուցումից հետո: Ապա հաջորդում են բուն ներկայացումները Պետական թատրոնում օգոստոսի 9–10–ին:Օգոստոսի 12–ին արդեն ներկայացման շուրջը հրավիրվում է դիսպուտ հեղինակավոր այսպիսի անձնակազմով. զեկուցող Ռ. Սիմոնով, մասնակիցներ պետական գործիչներից Աս. Մռավյան և Աշ. Հովհաննիսյան, ապա Ե. Չարենց, Լ. Քալանթար, Դ. Դզնունի, Կ. Հալաբյան, Մ. Մազմանյան, Ա. Բուրջալյան, Գ. Աբով, Մ. Ջանան:

Օգոստոսի 13–ին կրկին Բանվորական ակումբում (նախկին Ջանփոլադյան թատրոն) տեղի է ունենում Ստուդիայի ստեղծագործական երեկոն. ներկայաց-

վում են «Սալամանսկայի քարանձավը» և «Երկու վախկոտ» պիեսները: Օգոստոսի 14-ին նույն տեղում՝ կրկին «Մուրացկանները»: Ներկայացումներին լայնորեն արձագանքում է մամուլը, որոնցից ուշագրավը մնում է Մ. (Միքայել Մազմանյան՝ Ալ. Չ.) ստորագրությամբ «Նոր ակոսի» թիվ 7-ում զետեղված «Մեծապատիվ մուրացկաններ» հանձնարարական-բացատրականը, որը լավ կլիներ վկայակոչել «Կապկազի» 1926-ի բեմադրության հերթին:

Այնուհետև առանձին հանձնախմբով՝ անկասկած նաև Չարենցի մասնակցությամբ, կազմակերպվում է ուսանողների ընդունելություն. արդյունքում քննությամբ 24 հոգուց ընդունվում են 8-ը[10]:

Ի վերջո այս համակողմանի «հաշվետվության» պայմանով՝ **Ստուդիան պաշտոնապես անվանվում է պետական և, թեկուզ ձևականորեն, արձանագրվում է Հայաստանի «Լուսժողկոմատի բյուջեի մեջ»:**

* * *

Ստուդիականները մեկնում են, Արփենիկն էլ նրանց հետ, իսկ ինքը մնում է ավարտին հասցնելու «Երկիր Նաիրին»՝ ամենավերջին տարեգրական-խորհրդանշական ահեղից-ահեղ խորհուրդներով...

Օ՛, ստեղծագործական երկունքի որպիսի տաժանակիր օրեր...

«Երկիր Նաիրի» – «Մասն երրորդ և վերջին»...

Որքանով էլ հաջողությամբ անցկացված,— հակապատերազմական եռուզեռով-թոհուբոհով՝ այդ «կամպանիան»՝ «երեսն» էր: Այն գլխավորելուց զատ, Հայրենի հողի ներարկած ավյունով, հայտնապես, ինչպես խոստացել էր Մյասնիկյանին,— շարունակում է ընդհատված պոեմանման վեպը, շարադրելով «Երկիր Նաիրի» «Մասն երրորդ և վերջին» բաժինը՝ «Պոեզոզուռնայի» «Շոգեզալուստ»-ից վերաքաղած **«Միթե սա՞ է Երկիրը Նաիրի...»** *բնաբանով:*

Ավարտում և Նք հանդեսին է հանձնում օգոստոսի 28-ին, հաջորդ օրերին արդեն ճանապարհվում է Թիֆլիս, որի մասին և հայտնում է «924, 6, IX, Ի. ք. Տփլիսի, Վրաստան» տարեթվով Կ. Միքայելյանին հասցեագրած նամակում. «Երևանում ես այս ամառ բավականին աշխատեցի. վերջացրի իմ «Երկիր Նաիրին», որ քեզ հույժ ուրախացրեց: Տպվելու է «Նորքի» 5-րդ գրքում» (6, 409):

Ինչպես՝ հայտագրի նման առաջին իսկ տողից հայտնում է բանաստեղծը, սա վեպի ամենակարևոր մասն է՝ առաջադրված-լուծված-չլուծված հարցերի առկախված-չառկախվող պատասխաններով. «Մենք արդեն անցնում ենք մեր սույն այս վեպի կարևորագույն մասին – և այստեղ է ահա, սիրելի ընթերցո՛ղ,

[10] *ԽՀ, 1924, օգոստոսի 7, 9, 13, 15 և այլն:*

որ, ինչպես ասում են՝ իր ամբողջ հասակով կանգնում է մեր առաջ մեր առաջադրած հիմնական խնդիրը, թե ո՞րն է, վերջապես, Երկիրը Նաիրի: Սույն այս վեպիս առաջաբանում, հիշո՞ւմ ես, ես հարցրել էի սրտմտությամբ, կասկածով հարցրել էր սիրտս, թե գուցե, մշուշ է նա, Նաիրին, **ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն...** Եվ ճիշտ որ,— **ո՞րն է այդ Նաիրին:** Ինչո՞ւ համար եմ սույն այս վեպիս ամեն մի էջում իմ նկարագրած քաղաքը անվանում «Նաիրյան» քաղաք, և մարդկանց, որ ապրում են այդ քաղաքում – **«նաիրցիներ»...** (5, 177),— գրում է նա...

Եվ ծայր է առնում, «Սիրելի ընթերցո՛ղ» դիմումներով՝ հատվածվելով—տարբերակվելով, կիզակետային հրաբխաշունչ բռնկումներով ալիքավորվող բանաստեղծի մենախոսություն—երկխոսությունը. իսկ և իսկ «Ես ոտքից—գլո՛ւխ քո պարտքն եմ, որ կամ»՝ Պ. Սևակի ձևակերպած տրամաբանությամբ «Շրջագծի պես» հայրենիքից «սկսելով ու հանգելով» հայրենիքին»[11]:

«Սիրելի ընթերցո՛ղ», առանց ազգային սնապարծության, առանց չափազանցության հյուլեի՝ հայրենապաշտության—հայրենակարոտի—հայրենացավի—հայրենանվիրվածության գեղարվեստական այսպիսի ուժի ու թափի էջեր, կարելի է թե, հազվադեպ գտնվեն համաշխարհային գրականության պատմության մեջ՝ զգացմունքային—զգածական—խոհական նմանօրինակ խաչավորվող խառնածին խառնուրդով. ասես, անսկիզբ—անվերջանալի բաբախումով, անհատնում հուզով...

Պատահականորեն չքաղվեցին Սևակի տողերը **«Երգ եռաձայնից»**: Չարենցյան եռաձայնությունը, որ պոեմանման վեպի երկրորդ, և առավել ցցուն այս մասի գեղարվեստական էությունն է,— խորությամբ զգացել—կիրարկել է հենց ինքը՝ Սևակը:

Պատմական դեպքերի տարեգրային հոսք համարենք, ուրեմն, պատմական անցքերի ձայն, գործող անձանց արարքների, վարքի ու հոգեբանության ձայն՝ բազմաձայն տեսակ—տեսակներով և հեղինակային ձայն՝ քանի՛—քանի՛ չափ ու կշռույթով, բացասացությամբ ու գաղտնասացությամբ, քանի՛ հանգի ու ռիթմի վերաբերմունքով՝ քնարական կաթոգին խանդաղատանքից, աղոթքից... մինչև երգիծական ահեղաշունչ ծաղր ու արհամարհանք, նզովք ու անեծք... «Մաքերի պայքարով» ու հուզով...

Չարենցյան հրաշքն էլ հենց սա է. այսօրինակ գեղարվեստական միաձուլ, միաշաղախ մտածողությունը: Հիշենք վեպում մշտապես շրջագայող հայրենիքի ոգեղեն խորհրդանիշները. Վարդանի կամուրջ, Բերդ, Առաքելոց եկեղեցի և մտաբերենք, թե վեհաշունչ պատկերացումների, սիրո, ափսոսանքի, կորստյան ցավի ու դառնության, ներմից—խստաշունչ հանդիմանանքի քանի տարատեսակ երանգներով են շրջավորված, ասենք, թեկուզ այս մի քա-

[11] Պ. Սևակ, Եժ, հ. 1, 1972, էջ 504, 506:

նի տողում. «... Նայի՛ր շուրջդ ապա. ո՞ւր է մեր նկարագրած քաղաքը, ո՞ւր են նրա բնակիչները: Ո՞ւր են **Մեռելի Ենոքը և Տելեֆոն Սեթոն**... Ո՞ւր են, ո՞ւր են վերջապես, **Վարդանի կամուրջը և Առաքելոց եկեղեցին**... Չկան, ծուխ են դարձել, ցնդել են մշուշում, դարձել են մուժ ու հիշատակ...» (5, 184):

Դե, ե՛կ ու զատիր, վերծանիր այս զուգաշավիղ–բազմաշավիղ շաղախը:Այստեղ, բայց և, ասենք, պատմա–տարեգրային անցքերի ուղեկցող–ալիքավորվող այս մյուսը. «... Իրականացան այդ տարիները, դաժան ու անկարելի, այնտեղ–**Վանում, Բիթլիսում, Մուշում, Դիարբեքիրում**,— այնտեղ– **Էրզրումում, Սվազում, Երզնկայում**,— այնտեղ–**Գարահիսարում**...[12] Անապատում ելած միրաժի նման՝ եկավ–դետնահարվեց, վերջին պատրանքով շնչավորված հնամյա երազը, դետնահարվեց–**արդյո՞ք ընդմիշտ**... Ու մնացին – դիե՛ր, դիե՛ր, դիե՛ր,— աստիճան զառանցանք: Ու մնացին – ավերակներ: Ու մնաց... **Մազութի Համոն՝** նախրյան այդ քաղաքում կանգնած **կենդանի նախրի**...» (5, 195) և այլն և այլն:

Եռաձայնության նույն սկզբունքով էլ, ասես, մաթեմատիկորեն հաշվարկված է կառուցվածքային համակարգը. որքան էլ արտաքնապես հախուռն, անսանձ՝ առաջացող հատվածական–շարավոր հյուսվածքում նույն եռաձայն համամասնությամբ հատվածները տեղադրված են մեկընդմեջ, մե՛կ այս, մե՛կ մյուս, մե՛կ երրորդ ձայնի գերակայությամբ, ըստ այդմ էլ տարբերակներով ալիքավորվող ձայներից ամեն մեկը ենթադրում է կիզակետային հատկանշային զողանջների գերակայություն:

Ակներևաբար, երկար ժամանակ այս երրորդ մասը շարադրել չկարողանալով հանդերձ, վաղ պատանեկությունից Դանթե Ալիգիերիից առած դասերով ու սեփական փորձառությամբ մտովի դարձել–անդրադարձել է հարյուրավոր անգամ՝ մինչև որ թղթին հանձնելիս հասել է այդքան բազմաշերտ բարդ շաղախների բյուրեղացման ու հյուսվածքային կուռ կառուցվածքի: Այնպես որ հանճարեղ «Երկիր Նաիրին» առանձին հիմնավոր քննության է սպասում նաև համակարգային–արտահայտչական–ոճական առումներով, հանճարեղ «Վերքի» հետ համադրությամբ...

Եվ սակայն, այնուամենայնիվ, դժվար ու անկարելի է շրջանցել կիզակետային այդ երեքից, Վարդանի կամուրջի հիմնաթելերով հյուսված սույն տողերով ծայր առնող և նույն տեսլապատկերներով շարունակվող հայոց պարտության այս ողբերգորեն խորախորհուրդ տեսիլը. «... Հիշում եմ՝ մի անգամ, երբ դեռ ես երեխա էի, հորդել էր մեր այդ նկարագրած քաղաքի գետը. գիշեր էր, երբ ես ու եղբայրս, տնից փախչելով, գնացինք հորդած գետին նայելու... արահետն ուղիղ գետափնյա փողոցն էր իջնում, երբ մեր աչքերի առաջ փռված խավարի մազութը բաժան-

[12] Այս էլ առանձնացված է ի պատիվ զորավար Անդրանիկի... յուրատեսակ դաղտնապատացություն:

վից երկու մասի. վերը մուգ, իսկ ներքևը բաց գույնի **մագութ** *էր, որ հազիվ էր տարբերվում վերի* **մագութից**[13]*... Մի ծանր, ճնշող, դեպի իր գիրկը քաշող խոնավություն էր շնչում հորդած գետը... Դեմը, բաց գույնի մագութի խոնավ գրկից ելնելով իր համեմատական մուգությամբ հետզհետե լուծվելով վերին մութ մագութին տեսիլանման երևում էր ահռելի մի սևություն, հսկա մի քարակույտ.* **Վարդանի կամուրջն էր այդ,** *որ սևին էր տալիս մագութանման մշուշում: Մեզ մոտ կանգնած մարդիկ վիճում էին, թե կդիմանա՞ արդյոք* **Վարդանի կամուրջը հեղեղած ջրի** *ահռելի հոսանքին, թե ոչ. կային, որ կարծում էին կդիմանա, ու կային, որ կարծում էին թե ո՛չ: Այդ միջոցին էր, ահա, որ գետի վերի կողմից, ծանր ողողած հեղեղատի միջից, լսվեց զարհուրելի, սիրտ կեղեքող անպատմելի մի ճիչ, ու ճիշտ նույն վայրկյանին սրընթաց հեղեղատի վրա երևաց փոքրի՛կ—փոքրի՛կ, վախկոտի պուչ աչքի նման ահաբեկված թարթող, սրընթաց մի կրակ: Ես ավելի պինդ սեղմվեցի եղբորս, գրկեցի նրա ոտքը. շուրջս հավաքված մարդիկ բարձրացրին մի ահախառն աղմուկ, շարժվեցին տեղերում ու, չգիտեմ ինչու, հայհոյեցին իրար. այդ ժամանակ մի վերջին անգամ ևս խոնավ հեղեղատի ծանրախիտ մագութի միջից լսվեց մի սրտակեղեք ճիչ. վախկոտի աչքի պես ահաբեկված թարթող պուչ կրակը սրընթաց սուրաց դեպի* **Վարդանի կամուրջի սևասև** *ուրվականը — և ամեն ինչ կորավ, լռեց, սուզվեց մագութանման հեղեղատում: Պարզվեց, որ քաղաքի գետափնյա փողոցներից պոկված մի նավակ էր դա, որ հոսանքի մեջ ընկնելով քշվել էր դեպի Վարդանի կամուրջը: ... Առավոտյան արթնանալիս իմ առաջին գործն այն եղավ, որ ես շնչակտուր վազեցի դեպի գետը և — օ՜, զարմանք և ուրախություն, տեսա, որ գետափնյա փողոցից արդեն քաշվել էր առասպելական վիշապը. գետն իր ափերն էր մտել և հոսում էր հանդարտ, իսկ Վարդանի կամուրջը գետի մեջտեղն արքայաբար նստած չորացնում էր իր թաց կողերը եկող արևի պայծառ ճառագայթների ներքո...Մանկական միամտությամբ նայեցի* **Վարդանի կամուրջի կողերին** *դիպչող մշտափրփուր ջրին, կարծելով, որ այնտեղ կգտնեմ թեկուզ հետք գիշերվա սրընթաց սահող նավակից*[14] *և անգամ,— օ՜, մանկական անմեղություն,— վախկոտի պուչ աչքի նման ահաբեկված թարթող*

---

[13] *Նույն «պերպետում մոբիլեի» և «գաղափարների ասոցիացիայի» օրենքներով սույն «Մագութը» հոլովելով, ասես, յուրատեսակ վերակերպությամբ վերաճում է խորհրդանիշի խորհրդանիշով նաև մինչև օրս օդում ճոճվող աղերսական սև ոսկու սպառնալիքը... Մանավանդ Ադրբեջանի հպատակության տակ ապրած նվաստներիս զգացողությամբ, երբ երրորդ դասարանից պարտադիր իրենց լեզվով ուսուցանվում էր.*

Եթե նավթ չլինի
Պահեստները չլցվեն,
Չեն աշխատի երկաթուղի,
Ավտոմոբիլ, տրակտոր...

Անշուշտ, չուտասելուկի պես. օլման–դոլման առաջին և երկրորդ տողի և դամիր յոլ–տրակտոր երրորդ ու չորրորդ տողերի հանգավորումով...

[14] *Կամա, թե՞ ակամա հոլովվող «Նավակը» զուգորդվում–հակազուգորդվում է Կոստան Զարյանի «Նավը լեռան վրային»... Իհարկե «Մասիս սարով» հանդերձ... ծանակվող...*

այն կրակից... Բայց ո՛չ մի հետք. իհարկե, չկար, և չէր էլ կարող լինել այդ բոլորից: **Վարդանի կամուրջն էր միայն**, *որ արքայաբար կուրծքը դեմ էր տվել մթափրփուր ջրերին... Մանկությանս օրերին կատարված այս խնջույքն աննշան դեպքից անցել են համարյա քառասունից ավելի երկար ու ձիգ տարիներ, բայց ես հիշեցի աննշան այդ դեպքը՝ նախքան մեր նկարագրած քաղաքի վերոհիշյալ պատմությունները մտաբերելիս: Իսկ պատահական բա՞ն է արդյոք, երբ մարդ այս կամ այն դեպքի կամ պատմության առիթով հիշում է մի ուրիշ, այլ դեպք կամ պատմություն:— Իհարկե, պատահական բան չէ, ընթերցո՛ղ — և խոր խորագույն իմաստ կա նման, գիտական տերմինով ասած՝* **գաղափարների ասոցիացիայում...»** *(5, 226–229):*

* * *

Մե՛կ չէ, երկո՛ւս չէ... Վարդանի՛ կամուրջ, Վարդանի՛ կամուրջ... և բանաստեղծի թևավոր բանքով **«գաղափարների ասոցիացիան»** *տանո՜ւմ հասցնում է «Սուրբ Վարդանի» ավանդություն... Տղմուտ—Մակու... «Ավանդապատում» խորագրով հայոց լեգենդների գանձարան, որոնցից մեկն էլ ավանդում է. «Մակվի հայերը մի ժամանակ ապրելիս են լինում քաղաքի թուրքական թաղամասում, այստեղ էր նաև նրանց Սուրբ Վարդան անունով եկեղեցին: Երբ մակվեցիք հաստատվում են «մահլում», այստեղ իրենց համար նոր եկեղեցի են կառուցում նույն անունով: Վարդան զորավարը մեկին երազում ասում է. «Դուք ինձ թողիք անօրի (անօրեն) ձեռք. ես էլ պտի չուլթը գնեմ վարեմ ձեր տուն ու տեղը»: Ասում են թե այդ անեծքն է եղել պատճառը, որ կոտորածների ժամանակ Մակուի հայկական թաղամասը ամբողջապես ոչնչացվել է[15]»:*

Հայրենիք կոչվածի զգացողությունից միանգամայն զուրկը միայն, կարելի է թե չկարողանա որսալ հուշարարական այն նշանները, որոնցից անվերապահորեն հետևում է, որ հնօրյա այդ «լեգենդը» «միս ու արյուն» է եղել ապուպապով մակուեցի Արգար Սողոմոնյանի, ինչպես և Թեկղե—Թելլի մոր: Սերնդե—սերունդ հուզական—խռհական—ժառանգական փոխադարձումով փոխանցված նաև հայ-

---

[15] Արամ Ղանալանյան, Ավանդապատում, 1969, էջ 243:

Նույն գրքում ցետեղված՝ «Հին Նախիջևանի **Աստապատ գյուղի մոտ**, *Արաքսի ափին» գտնվող «Սուրբ Վարդան» — «Կարմիր վանքին» վերաբերող ավանդության համաձայն էլ՝ «Վարդանանց պատերազմում նահատակված զինվորներին թաղել են այստեղ: Դրա համար էլ վանքը կոչվել է* **«Սուրբ Վարդանի վանք»**: *Եվ այնուհետև. «Թշնամու հարձակումից վանքն ազատ պահելու համար տեղացիք նրա չորս կողմը մեծ փոս են փորել, լցրել Արաքսից բերված առլի ջրով, ջրի երեսին դարման ածել, որ չերևա: Երբ Լենկ Թեմուրի զորքերը հանկարծակի հարձակվել են վանքի վրա, բոլորը ջուրն են լցվել ու խեղդվել, և վանքը մնացել է անվնաս». նույնը, էջ 229:*

Բանից պարզվում է **աղբրինները տեղյակ են եղել մեր այդ ավանդությանը ևս**. *Հայոց համազգային շարժմանը նախորդած մոտակա տարիներին Երևանի տրամադրած* **«մեքենա—մեխանիզատորների»** *օգնությամբ Արաքսի շուրջը լցրեցին նույն այդ առուները, այս անգամ արդեն մեկընդմիշտ հատակելով թե՛ Աստապատ, թե՛ «Սուրբ Վարդանի վանք»... Դե՛, լավ գեկավարություն ենք ունեցել... Լավ խորհրդականներով...*

րենի Մակուից տարագիր, ասել է անիծված, օտար ափերում «պարսիկ» հորջորջվող իրենց և իրենց զավակներին: Ճիշտ և ճիշտ **անեծք** *կոչվածի այն տեսակով ու որակով, որի համարժեք–համակշիռը* **«Նաիրյան մորմոքն»** *է՝ անկապտելի–անվերջանալի ողողանջներով ալիքավորվող պոեմանման վեպում և «Զարենց–Նամեում». ինչպես.*

... Ես անգույն Կարսում մնացա՝
Հայրենիքս հեռուն թողած:

Աչքերս թևերի նման
Դեռ նիրհել էին չվարած–
Երբ գրկեց ինձ Թախիծն հնամյա,
Որպես տան մշտական ծառա:–

(Նա մեր տանն էր վաղուց մնացել,
Դեռ եղել էր պապիս ժամանակ:
Մնացել էր՝ հոգնած ու ծեր...) –

Եվ հենց նա՛ էր, Թախիծն հնամյա,
Որ ծածկած արև ու Իրան–
Մի ծերուկ ուսուցչի նման
Ինձ մի օր վարժարան տարավ:

Ու, ծածկած արև ու Իրան,
Նա, շնչով կարծես մի հրե–
Ուղեղիս կասավի վրա
Փորփրեց հնամյա գրեր... (2, 154–155):

Ինչպես պոեմի քաղված հատվածների և հաջորդական շարունակական ընթացքով, այնպես էլ «Երկիր Նաիրի» վեպում և հատկապես հրաշքակերպ **«Հառաչաբանում»** *աներկբայորեն գործում է* **անեծքի հմայական** *–ժանրային այն տրամաբանությունը, ինչ հանգամանորեն բնութագրված ենք գտնում Մ. Աբեղյանի, ցավոք, սակավաթիվ ժառանգորդներից արժանավոր Սարգիս Հարությունյանի* **«Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ»** *աշխատության էջերում: Բաղենք, պատկերացնելու համար ժանրի թեկուզ միայն հմայական տարրությունը՝ այլացումներով. «Անեծքների մասին ժողովրդի մեջ առկա մեկ այլ պատկերացման համաձայն,— գրում է հետազոտողը,— անեծքի հմայական զորությունը ժամանակի ու տարածության նկատմամբ անտարբեր է: Ըստ այդ ըմբռնման՝ անեծքը կարող է մեկի գլխին կախված մնալ մինչև իր կյանքի վերջը, ինչպես Մհերի գլխին հոր անեծքը. կարող է մի դերդաստանի տրված անեծքը հարատևել ու սպառ-*

նալ հաջորդ սերունդներին ևս, որից էլ ծագում է «էս մարդն անիծված է» կամ «էս տան վրեն անեծք կա» դարձվածները: Եվ, վերջապես, անեծքի հմայական զորության սնահավատքով՝ անեծքը կարող է դարեր շարունակ կախված լինել մի ամբողջ ժողովրդի գլխին, ինչպես, դիցուք, հայկական միջնադարում Ներսես Մեծի հավատալիքը: Ուշագրավ է բուլղարական մի հավատալիք, ըստ որի՝ անեծքը յոթ տարի մնում է օդի մեջ կախված և ամեն ակնթարթ կարող է ընկնել անիծվածի վրա»[16]:

Այնպես որ հայկականի կողքին բուլղարական և այլ տարբերակներով կարելի է հաստատապես ասել, որ այդօրինակ անեծքները ինքնահատուկ են անկախության ու ազատության կարոտ, պայքարող բոլոր ժողովուրդներին:

Ինչևէ. գիտական հմտությամբ ու մոտեցումներով դառնալով անեծքների տարատեսակներին, հեղինակը առանձնացնում–չեշտարում է հայրական ու մայրական անեծքները՝ տարբերությամբ հանդերձ: Սկսած հնագարյան զրույցներից ու առասպելներից, որոնցում ակնհայտ է **«հայրական անեծքի ազդեցության զորությունը»**՝ *արտահայտված նաև՝* **«Մոր անեծքը օրհնանք է, հոր անեծքը անեծք է»** *ժողովրդական առօրեական ասացվածքում: Տրամաբանական կուռ ընթացքով ու շեշտադրումներով «հայրական անեծքին» են սեպվում ինչպես վերը քաղված Մակուի հայերի «Վարդան զորավարի անեծքի» հավատքը... այնպես էլ, «հասարակական» նույնատիպ պատուհասի առնչվող Վաղարշապատի շրջակա գյուղերի այն հավատքը, ըստ որի «1904 թվականի ռուս–ճապոնական պատերազմի (ինչպես և 1905–1907 թթ. վայրիվերումների՝ Ալ. Ղ.) պատճառը եղել է ցարական կառավարության կողմից 1903 թվականին հայ եկեղեցական գույքի և կալվածքների բռնագրավման առթիվ կաթողիկոսի ու ժողովրդի տված անեծքը»[17]:*

Այս անեծքների կողքին կամ առանձին բացառությամբ, թերևս անվերապահորեն կարելի է կարծել, որ Մակուի հայերի հավատամքի կողքին Զարենցը ծանոթ էր և Անիի կործանման ավանդական զրույցին, ըստ որի՝ «... անեցիներն այնքան էին հղփացել ու լկտիացել, որ ոչ աստված էին ճանաչում, ոչ եկեղեցի, իրենց ամբողջությամբ հանձնել էին ցոփ ու զեխ կյանքի: Սուրբ Հոգու զորությամբ Հովհաննես վարդապետը գալիս է Անի, բազմաթիվ փորձությունների գնով համոզում անեցիներին հետ կանգնել իրենց արարքներից. նրանք խոստանում են, բայց ի վերջո ծաղր ու ծանակի են ենթարկում վարդապետին ու իր պատգամները: «Եւ տեսեալ զայս ամենայն վարդապետն Յօհաննէս, ել ի վերայ բարձր բլր միոյ, և անէծ զքաղաքն... Եւ յանկարծակի էլ սաստիկ բարկութիւնն Աստուծոյ, և սկսաւ քաղաքն շարժիլ՝ և տապալիլ պարիսպքն»[18]: Կործանվում է Անին, իսկ բնակիչներն էլ տարագրված ցրվում են աշխարհով մեկ:

---

[16] Սարգիս Հարությունյան, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, 1975, էջ 24:

[17] Նույնը, էջ 15, 17:

[18] Եթե ծանոթ եք ու հիշում եք՝ «... սկսաւ քաղաքն շարժիլ...» պատուհասի տեսքով է պատկերված Կարսի անկումը Մ. Սարյանի «Երկիր Նաիրի» վեպի իլյուստրացիաներից «Գաղթ» վերնագիրը կրող գործում. տե՛ս լուսանկարը նաև Եժ, 5, էջ 256–257–ի միջև:

Դե՛, Հովհաննես վարդապետի օրինակով **«սուրբ հոգու դրդմամբ»** պոռմանման վեպով Կարսի բնակիչներին նույնպիսի (բայց ընդհատակյա) անեծք է կարդում և Չարենցը՝ Անիի, Մակուի... իմ հայրենի ագուլիսցի–գողթանցիներին հասցեագրած Րաֆֆու դատափետող անեծքին գումարելով «Երկիր Նաիրին», որին տարիներ անց գումարվեց **Գ. Մահարու «Այրվող այգեստանները»** (1966) արժանանալով վանեցիների, մեղմ ասած, «ծաղր ու ծանակին»... «բանադրանքին»...

Եվ ավանդական–արդի հիշատակված–չհիշատակված ամենի պատասխանը եղավ Հրանտ Մաթևոսյանի **«Նա ինքը հայրենիքն է»** անզուգական **«Վարք Մեծացը»**, ահա՛ այսպիսի տողերով. «... Նա (Գ. Մահարին՝ Ալ. Զ.) երբեք չարտաբերեց. օգտվելով երդմնատվության զրնգուն մթնոլորտից. երդման հանդիսավոր տեքստեր, չդարձավ այդպիսով հայրենասեր. նա կատակեց, ծաղրեց, ծիծաղեց, անտեսեց այդ արարողությունը, որովհետև նորակոչիկները և մեկ անգամ դավաճանածներն են երդում տալիս, իսկ նա հայրենասիրության ծանր ուխտի հին ուխտավորն էր: Նա հայրենասիրությամբ գեղեցկանալու կարիքը չէր զգում, այլ զգում էր դժվար հայրենասիրության ծանր տառապանքից ազատվելու կարիքը:

Նրա դիմակի, նրա ծաղրի ու ծանակի տակ, նրա կարոտի անընդհատ մրմունջն էր. և նրա մրմունջների հանրագումարը մի զարհուրելի ճիչ է մեղավոր ու անմեղ, հիմար ու խելացի, պարկեշտ ու հավակնոտ բոլոր–բոլորիս դեմ:

— Ո՞ւր է իմ անփոխարինելին, ո՞ւր է իմ Հայրենիքը»[19]:

Ուրեմն և հնօրյա ժամանակներից պատմության քառուղիներով հայոց բախտում տոհմիկ ժառանգականությամբ այդօրինակ առաքելություն էր վիճակված միմյանց հաջորդած ճշմարիտ մեծերին՝ մտածողներին–գրողներին, առանց արևելահայ–արևմտահայ մենաշնորհի... Ուրեմն և քերթողահայր Խորենացուց սկսած մինչև Չարենց, Մահարի, Սևակ, Մաթևոսյան, Հ. Սահյան պարտավոր են ահեղ դատաստանի առջև հաշվետու լինել, և վերստին ավանդական ժողովրդական ըմբռնման վերին չափանիշներով . այն է. ամեն դեպքում «անիծող անձը էական դեր չի խաղում, այլ կարևորն ու վճռականը անեծքի իրավացիությունն է, արդարացիությունն այն դրդապատճառների, որոնք անիծողին անեծքի են մղել...»[20]:

---

[19] Հայաստանի Հանրապետություն, 1995, 16 հուլիսի:

[20] Նույնը. էջ 23:

Գուցե նվաստիս էլ պատասխանեն Խորենացին կամ Գողթան երգիչները. թե ո՞ւր է իմ անփոխարինելի Գողթան աշխարհը....

Թերևս նկատի ունենալով նաև Չարենցի բանավեճը, Լևոն Սուրմելյանը գրում է. «... Շարունակենք Վարդանանց պատերազմին բանավեճը մեր բոլոր ուժերով, որովհետև, ցորչափ այս կ՚ընենք, մենք հավատարիմ կը մնանք հայ ազգին ու եկեղեցուն և անոնց դեկավարներուն, մինչև անոնց ետևը կը կանգնին չարքայինները, նետաձիգները, հեծյալ կամ հետևակ, ծերերը, կիները և երեխաները, որոնք իրենց ընտրած կենցաղը ավելի սիրեցին. քան ինքը՝ կյանքը: Ահա այս է Վարդանանց պատերազմին դասը». Հայրենիք, 1954, թիվ 10, էջ 91:

Եվ ամենուրեք չարենցյան «պերպետում մոբիլեի» օրենքներով պատասխանը նույնն է. «— **Ո՞ւր է իմ անփոխարինելին, ո՞ւր է իմ Հայրենիքը»...**

Բայց միթե՞ Մաշտոցն ու Խորենացին պետք է պատասխան տան, թե ո՞ւր է իրենց անփոխարինելի օրրանը... **Աստվածային Տարոն աշխարհը...**

Բայց միթե՞ Հայր Ալիշանը պետք է պատասխան տա միլիոնավորների... թե ո՞ւր է **Ակն Հայրենիքը...**

Լրացումներ պոեմանման վեպի ծանոթագրություններին

Բանաստեղծի ԵԺ 5-րդ հատորում զետեղված «Երկիր Նաիրի» հարյուրավոր ծանոթագրություններով արդեն իսկ անվերապահորեն հաստատված է երկի քրոնիկ-իրապատում բնույթը. տեղանքով, դեմքերով ու դեպքերով, հանգամանքներով, անգամ հետին մանրամասներով: Այդուհանդերձ տարիների ընթացքում կուտակվել են նորերը, որոնցից անհրաժեշտություն է զգացվում ներկայացնել որոշ նմուշներ: Ինչպես Դաշնակցության գործիչներից Վահան Փափազյանի գրքին պատկանող վեպի քաղաքական «խորհրդավորությունների» բանալի՝ 1905-ին վերաբերող այս մեկը. «... Կարսի մեջ մեր հին զինվորներեն էր և շրջանի ղեկին՝ Համազասպ Նոհրատյանը: Կ. Կոմիտեի անդամներեն կը հիշեմ Սև Կարոն, Երվանդ Համամջյանը: Բայց գործնական աշխատություններու ոգին Պլո թագավորն էր: Համեստագործ էր, խանութ մը ուներ՝ լեցված բազմատեսակ համեմներով, սանձերով, կաշիե պարկերով և նման իրերով. խանութի մեջեն նեղ սանդուխ մը վեր կը տաներ. հոն պատշգամբի պես բան մը կար. այդտեղ էր, որ «գործերը կեփվեին»՝ գաղտնի խորհրդակցություններ, դավադրական ձեռնարկներ և այլն: Պլոն միջահասակ, լեցունկեկ մարդ մըն էր՝ առողջ բողկի մը պես: Քեֆչի և փիլիսոփա, որ իր շուրջը հավաքած էր դրական միտքով, «կապը կտրած» նվիրվածներ. անոնց միջոցով գործը կը դարձներ, իսկ ինքը միշտ գետնին նստած, ցած սեղանի մը առջևը, հանդարտորեն կաշիներ կը ձևեր: Ժանդարմները վեր ի վերո գիտեին այդ սարսափելի «թագավորի» դերը, բայց կը մտնեին-կելլեին խանութը և մտերմորեն շատախոսելով՝ կմեկնեին: Եթե բանի մը հոտ առած լինեին, կը մտնեին խանութը խուզարկելու... աչքերու առաջ Պլոի ազանդերով և կոնյակներով զարդարված սեղանը պատրաստ էր. լավ մը կը խմեին և լոլիկացուցած ճամփա կը դնեին՝ գրպաններու մեջ թղթադրամ մը խոթելով... Պլոին այդ գործի մեջ կօգներ Տուրպախը, Համամճյան Երվանդը և Ալեքսանդրապոլեն հոն հաստատված մեր վիթխարի Վռամը...

Ու այսպես ամեն վտանգավոր ձեռնարկներ կը պարտկվեին կառավարության աչքեն:

Ջրաբերդի (Կարսի՝ Ալ. Զ.) Կ. Կոմիտեն նույնպես գտավ իրավացի իրենց սահմանները առայժմ հանդիստ թողնելու գաղափարը. որոշվեցին զինամթերքի կենտրոնացման վայրերը, որոնց մեջ նաև Կաղզվանը: Ես նոր մեկնած էի Կար-

սնն. երբ մեր ընկերներին երեք հոգի. ռումբերու բաղդատությիւններ պատրաստած ատեն, կարծեմ ծխախոտի մը կրակին պայթյունի զոհ գնացին[*]:

Անոնցմե մեկը. կը հիշեմ, Ամերիկային եկած աքանչելի երիտասարդ Նահիկյանն էր: Հիացած էի (առանց բան մը հասկանալու) անոր անգլերենի արտասանության վրա. կարկուտի պես կթափեր բերանեն...»[**]:

Եթե հիշում եք պոեմանման վեպում ակնարկվում–հոլովվում են նմանօրինակ «խորհրդավոր դրվագներ» խորհրդավոր անձանցով ու «պայթյուններով»: Հնարավոր է, որ Դաշնակցության գործիչների հուշերում, փաստաթղթերում լինեն հիշատակություններ այս երիտասարդ նահատակի մասին ևս. ինչպես Հ. Նոհրատյանի մասին եղած բազմաթիվ հուշարկումների ու վկայությունների շարքում: Իսկ Հ. Նոհրատյանի բավականաչափ հանդիսավոր լուսանկարը տե՛ս Ս. Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» Բ հատորում:

Եվ սակայն ԵԺ 5–րդ հատորի ծանոթագրություններում տվյալներ չկան վեպում շրջագայող մյուսների վերաբերյալ, որպեսզի բնորդային համընկնումներով գտնվեցին «Кавказский календарь»–ի Կարսի մարզին նվիրված էջերում, իշխանությունների կառույցներում հայերի մասնակցության պատկերը. ըստ այդմ հայերի դեպքում առանց կրճատման: Եվ այսպես.

Карсская область

Военно—народное управление

И.Д.военного губернатора Карсской области, числящийся по армянской пехоте, полковник Алексей Дмитриевич Подгурский.

Канцелярия военного губернатора

Նաև 2–ը Нс Мкртич Оганесович Дохиков, 3) Ттс Карапет Арутюнович Стамбулцев. Кск Назарет Иванович Дохиков.

Строительное отделение

Производитель строительных и дорожных работ Ттс Григорий Герасимович Овакимов.

Управление округов...

---

[*] Եթե հիշում եք. այդօրինակ դրվագ է հոլովվում պոեմանման վեպում նույնպես:

[**] Վահան Փափազյան՝ Իմ հուշերը, Պոսթոն, 1950, էջ 409–410: Ի դեպ Վահան և Վրթանես Փափազյանները Ա. Կարինյանի մորեղբայրներն են:

Պաշտոնավարում էր 3) Младший Кск Рубен Акопович Палянц.

Карсский окружной словесный суд (г. Карс)

Пред. Суда Иосиф Сигизмундович Левицкий...
Депутаты суда — Мартирос Оганезович Кеворков, Арутюн Саркисович Вартанов...

Карсское окружное по воинской повинности присутствие

Կազմում էլ մի բժիշկ врач СС Матоянц.

Карсское городское полицейское управление

Полицмейстер — Лордкипанидзе (Ինչո՞ւ՝ Ալ. Զ.)

Главный народный суд Карсской области

председатель — полковник Эмиль Иванович Шмерлинг.

Врачебное управление при Управлении военного губернатора Карсс. области

Областной врач СС. Алекс. Вас. Грацианский: помощник СС. Армен Аким. Шах—Азиз. Карсский городской врач Ттс. Кар. Армен.Газанджев.

Окружные врачи

Карсского округа Гук. Наз. Матоянц (г. Карс).

Мировой судья СС Андрей Герасим. Тер—Антонов

Мировой судья СС Андрей Михайлович Ветухов...

Судебные приставы: НС. Иван Герасим. Тер—Антонов. КС к Армен Хачатур. Тутунджянц.

Карсское реальное училище

директор СС Николай Степ. Сазонов...

Եվ վերջապես. ինչ եք կարծում—ծխական դպրոցի ուսուցիչ Մարուքե Դրաստամատյան. 2–րդ Ծխականի ուսուցիչ Վառոդյան, Ծխական դպրոցի ուսուցչուհի Սաթո, որ միաժամանակ թվարկվում է «Женск. гимназия»–յի ուսուցիչների շարքում «... –рукод. Сат. Керак. Ванецова.[23]

* * *

Չարենցին մոտ կանգնած մարդիկ, այդ թվում կարսեցիներ,— հաստատում էին, որ վեպի «տիպական» գործող անձանցից պարոն Մարուքեն նույն ինքը Կարսի գործիչներից Մարուքե Դուրգարյանն է: Հենց նա, ով 1920–ի դեկտեմբերին բանաստեղծի հետ նշանակվել է «ժողովրդական լուսավորության կոլեգիայի անդամ»: Ընդ որում ըստ կուսակցական պատկանելության՝ ցուցակում հինգ անդամներից նա առաջինն է, Չարենցն էլ վերջինը (6, 758): Ասել է թե՝ Չարենցը նախատիպին ճանաչել է նաև «համատեղ աշխատանքով»:

Այդ հնոքերով 60–ականի սկզբներին Երևանյան բնակարանում հանդիպել եմ Դուրգարյանին. իր պահվածքից, զրուցելու խուսափողական բնույթից տպավորությունը եղել է այն, որ, իրոք, ինքն է պարոն Մարուքեի նախատիպը:

Մամուլից (1918–ի Մշ, Հզ) ծանոթ. Հ. Նոհրատյանի որդի Գևորգին (հասկանալի է, մահախոսականներով և առաջին տողից մինչև վերջինը գովեստներով՝ հատկապես հոր հասցեին) բնականաբար, թե բնազդաբար մտածել եմ, թե հապա ինչպիսի ժառանգ է տվել իր ժողովրդին Դուրգարյանը: Նրա որդին՝ Սուրեն Դուրգարյանն էլ երկար տարիներ դասախոսել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: Միաժամանակ եղել է Հրազդանի կամուրջի (Կիևյան փողոցի շարունակությամբ) առաջին նախագծի հեղինակը. ինչպես հայտնի է՝ կառուցվածը ավարտին չհասած փլվեց՝ մարդկային և նյութական զոհերով: Ո՞ւմ անեծքով...

* * *

Եվ որ նույնպես շատ կարևոր է հետևյալ լրացումը՝ Եժ 5–րդ հատորի ծանոթագրությունների 564 էջում եղած սույն ծանոթագրությանը. ահա այն ամբողջությամբ. **«Եբրայական Եհովայի նման... կփրկի, ահա Համո Համբարձումովիչը** *– Սուրբ գրքի ավանդությամբ Եհովան երկնքի ու երկրի միակ տիրակալն էր, նա էր օրենքներ տալիս եբրայեցիներին, պաշտպանում օրենքները, պատժում օրինքներից խուսափողներին: Զայրացկոտ էր Եհովան, Ավետյաց երկիր արշավող հրեաները 39 տարի մնում են անապատում. «— Դուք այս անապատի մեջ*

[23] *Որքան էլ զարմանալի, տեսնում եք, գտնվել է և պ. Մարուքեից անբաժան օրիորդ Սաթոյի նախատիպը կամ քնորդը համաձայն «Кавказский календарь»–ի Կարսի մարդին վերաբերող էջերից վերը քաղված տողերի:*

Անկարելի է թե նշված երեքից բացի, քնորդներ չլինեն և թվարկված նախորդ գործիչների շարքում:

պիտի մեռնենք, ջնջվենք, դուք չպիտի մտնեք այն երկիրը, որ ձեզ խոստացել էի, այլ ձեր որդիները»:

Եհովային վերաբերող առումները մեկ–երկուսը չեն, և այս մեկն էլ, ահա, վերաքաղում ենք իր ժամանակին հեղինակավոր «Հոլիտի» 1917–ի թիվ 15–ում զետեղված **«Հրեից կառավարության եղանակը Ս. գիրքը Թագավորների մասին»** *վերտառությունը կրող «Հրապարակախոսական մանրուքից». «Հայտնի է, որ Հրեից կառավարությունը Աստվածապետական էր, այսինքն Հրեացիք միմայն Աստծուն (Եհովային) էին ընդունում իրենց վրա թագավոր, և ամեն մի Հրեա անխտիր Եհովայի թագավորության անդամ էր և համահավասար իրավունք էր վայելում: Իսկ Եհովայի կամ Աստծո թագավորությունը՝ ոչ այլ ինչ էր քան ամենակատարյալ հասարակությունը... Եղիշե ա. ք. Գեղամյանց Հայկունի»:*

Սույն վերաքաղված առումով բացահայտ ելակետեր, երանգներ ու նրբերանգներ ենք գտնում նախ 1920–ի սեպտեմբերին հյուսված «Փողոցային պչրուհուն» շարքի բալլադներում, մասնավորապես «Շամիրամ» բալլադում.

...Մտի՛ր ակումբը հիմա, մտի՛ր թատրոնն ու կաֆեն՝
Հազա՛ր արքա ու Արա կհանդիպեն ժպտադեմ:

Ո՛չ վեճ է էլ հարկավոր, ո՛չ պատերազմ մահաբեր,
Արքաների համար նոր–բավական է մի ժպիտ... (1, 207),–

որին դարձյալ բացահայտորեն արձագանքում–ձայնակցում են պոեմանման վեպի ամենավերջին տողերը. «... ասում են, մի տախտակ են բարձրացնում **երրորդ հեռագրասյան** *մեջտեղը,* **Մազութի Համոյի գլխավերևը,**— *ու գրում վրան,* **երևակայո՞ւմ եք — Նաիրյան տառերով.**

Մ. Հ. Ա. Ն.

որ նշանակում է՝

«Մազութի Համո՝ Արքա Նաիրի»:

......

......[24]

---

[24] *Նվ այս կախման կետ–բազմակետերի վերծանում–մեկնաբանությունն էլ պատկանում է մեր տառապյալներից* **Մուշեղ Իշխանին.** *«Եհովան երկինքեն մանանա տեղացուց, որպեսզի կերակրե իր ընտրյալ հոտը: Հայոց Աստվածն ալ ճառ կը տեղացնե: Ի՞նչ կուզեք՝ նույն բանն է». Մուշեղ Իշխան, Հացի և սիրո համար, Բեյրութ, 1956, էջ 219:*

ՍՏՈՒԴԻԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ...
ԶԱՐԵՆՑԸ ՀԱՆՈՒՆ ՍՏՈՒԴԻԱՅԻ

Օգոստոսի 15–16-ից հետո Ստուդիան մեկնում է Թիֆլիս, և մշակութային ասպարեզը երկար ժամանակ մնում է պրոլետգրողների միանձնյա տնօրինությանը: Ի հեճուկս Ստուդիայի երևանյան անմոռաց ելույթների՝ խմբակցությունը կազմակերպում է Գ. Վանանդեցու «Պրոլետգրական զեկույցները» Հայաստանի շրջաններում, որի ամփոփագրում արձանագրվում էր նաև, թե «... Մասսան ամեն տեղ առաջադրում է մատչելի դարձնելու խնդիրը»[1]. *և առ այսօր պահանջում է...*

Ուստի և՛ ըստ պահանջարկի, որպես մերձակա տասնամյակի նախանշան օծվում է աշուղ Փիլոն, իր հերթին ԽՀ խմբագրատունն էլ տրամադրվում է խմբակցության ամենօրյա ընդհանուր ժողովներին՝ միշտ ապես «բոլորի պարտադիր ներկայությամբ»[2]. *իսկ էջերը Ն. Զարյանի «Կոմսոմոլական» երգերին, ինչպես և կյանքի ու ժամանակների բոլոր երևույթներին ամենավերին բարձունքից «քննախույզ» ծաղրով սակարկող Լեռ Կամսարի ֆելիետոններին: Էլ չենք հիշում Շիրակի ջրանցքին նվիրված չափածո–արձակ հարյուրավոր մեծապես անքանքար էջերը: Անհամ–անհոտ «ներբողյաններ», որոնց հասցեին Ալ. Մյասնիկյանի հիշատակին դրած «Հանդիպումներ» հուշերում պահպանվել է Գ. Մահարու սրամիտ նկատումը.*

«— Շիրկանալը, եթե չբացվեր, մենք զրկված կլինեինք մի քանի բանաստեղծներից...».— Մյասնիկյանի ինքնաբուխ արձագանքով. **«— Նա սրտանց ծիծաղում էր...»**[3]**:**

Այսպես «մատչելիի» պահանջարկով գրական գործը անցնում էր անքանքար–աղքատիմաց «մատչելիների» ձեռքը, և պատահական չէ, որ 1924-ի այդ օրերին էլ պրոլետգրողները իրենց «մայր խմբակցությունից» հեռացնում են Գ. Մահարուն:

Իսկ ահա Ստուդիայի նույն անձնակազմը՝ Արփենիկն էլ նրանց հետ, մեկնում է Թիֆլիս, և Հայարտան թատրոնում (Սբաս–Աբադյան հրապարակ, թիվ 7) «Մեծապատիվ մուրացկանները» ներկայացվում է օգոստոսի 22-ին և 26-ին: Մինչ հայտարարություններին կից ազդարարում էր, թե «Մ. Պ. Հ. Դ. Ստուդիա

---

[1] *ԽՀ, 1924, 30 օգոստ.:*

[2] *Նույնը, թիվ 298:*

[3] *Նույնը, թիվ 224 և այլն:*

մտնել ցանկացողները պետք է ցուցակագրվեն Հայաստանը ամեն օր ցերեկվա ժամը 1–2–ը, Ստուդիայի ղեկ. Ռ. Սիմոնով, ղեկ. գեղ. մասի ղեկ. Գ. Յակուլով»[1]: Եվ սա նշանակում էր, թե կազմակերպիչները նպատակ ունեին երիտասարդ ուժերով այստեղ ևս համալրել ուսանողների կազմը:

Ներկայացմանն արձագանքում է «Заря Востока»–ն (օգոստոսի 26, 31), իսկ օգոստոսի 29–ի թվում «Սատիր» ստորագրությամբ Մոկչ լրագրի խմբագիր **Ս. Խանոյան–Սատիրը «Մի նալը գտել ենք...» կիսալուրջ–կիսակատակ՝ ավելի ճիշտ կիսակծու եղանակով**, ճապես նսեմացնում էր նախ՝ Սիմոնովի աշխատանքը. առաջին տողից սկսած՝ ներառյալ թատերագրերին հասցեագրված ծաղրական վերջին ննդամիտ տողերը: «Մեծապատիվ մուրացկանները», – գրում էր Սատիրը,— ըստ Պարոնյանի տեսանք: Նախ այդ պիեսը ոչ թե ըստ է, այլ դրուստ է – շատ չնչին տարբերությամբ պարոնյանական:

Երկրորդը՝ չգիտենք ինչու 9/10–դը Պարոնյանինը և 1/10 отсебятин լինելով հավասարվում է «ըստ»–ի: Գանք խաղին: Մոսկվա չեկածի, Մեյերխոլդի դրած պիեսները չտեսնողի վրա, միանգամայն իրավացիորեն Ստուդիայի աշակերտների տված ներկայացումը թողնելու է անվայն տարօրինակ տպավորություն. բայց նկատելու ենք, որ մեր ջահելները լավ են յուրացրել նրա դինամիկան,— կիրթ են նրանց շարժումները նույնիսկ շարժի ժամանակ, ու, ինչո՞ւ թաքցնենք, երբեմն անհամ են նրանց անտրամաբանական չափազանցությունները: Ասենք թե աշակերտները ուզում են տալ ռեալ կամ ուլտրա ռեալ կյանքը գեղարվեստորեն, բայց դա հո չի՞ նշանակում, թե պետք է ավելորդ և ոչ մի խիտ գույն չպարունակող շարժում մտցնել գործողության մեջ»:

Ապա թեր–դեմ երերումով անդրադառնալով դերասանական խաղին՝ «առանձին և մասնակի անհեթեթություններով» հանդերձ,— Սատիրը եզրակացնում էր. «... իսկ խաղալիք ու բեմադրվելիք պիեսները, նյութը այլ հարց է... Կարծում ենք ու ընդգծում, որ գալիք տարի գոնե թատրոնական գործիչների բերանից չենք լսի՝ այն միալար գանգատը, թե այսինչ կամ այնինչ պիեսը անհարմար է, **մեր դերասանները չեն կարող խաղալ**: Ահա ձեզ գալար ու ճկուն մատերիալ – ցույց տվեք, որ դուք և ձեր տրամադրությունները հասուն են, ոչ անշարժ, ռուտինայի գերի:

Նոր թատրոնի մին նալը գտել ենք, երեք նալ ու մի ձի էլ գտնենք, գնանք թատերական Երուսաղեմ...»:

Ռուբեն Սիմոնովի կողքին սա էլ երգիծական մարտահրավեր էր նետված թատերագիրներին, առաջին հերթին Դեմիրճյանին ու Չարենցին, որքանով հրապարակի վրա էին «Քաջ Նազարը» և «Կապկապը»:

Այս մարտահրավերն էլ թելադրում է սկսել փոքր–ինչ հեռվից:

Բանն այն է, որ Ստուդիայի ներկայացումներից առաջ՝ 1924–ի ապրիլի 16–ից նույն Հայաստան թատրոնում Ա. Բուրջալյանի և Բ. Մուրադյանի բեմադ-

---

[1] Մոկչ, 1924, 21 օգոստ.:

րուԹյամբ ներկայացվել էր «Քաջ Նազարը» և արժանացել ջերմ ընդունելության: Անմիջական արձագանքով ապրիլի 19-ին Մտկչ Կարա Դերվիշն արձանագրում էր, Թե՝ «... «Քաջ Նազարը» ունեցավ աջողություն, ավելին կասեմ, ունեցավ սովորականից դուրս աջողություն: Հասարակությունն ամբողջ ժամանակ լարված ուշադրությամբ լսում էր ու նայում պիեսը: Եվ պիեսի վերջում, և՛ կեսին մի քանի անգամ հեղինակին դուրս կանչեց բեմ և բուռն կերպով ողջունեց»: Գրում էր և միաժամանակ համարում՝ «... մեր նոր մտքի, նոր ստեղծագործության այժմյան միակ ու փրկարար ուղին»[5]:

Այդուհանդերձ ապրիլի 29-ին Հայարտանը կազմակերպված դիսպուտում՝ Հայ գրողների սեկցիան քննարկելով «Քաջ Նազարը»՝ բեմադրությամբ հանդերձ,— ընդունում է բանաձև, որով **կատակերգությունը «վտարվում» էր Հայոց բեմից:** Դառնացած Դեմիրճյանը՝ 1924, 3 մայիսի Թիֆլիս տարեԹվով Վ. ԹոԹովենցին գրում էր. «Այս «Քաջ Նազարը» նվաճեց մեր հասարակությանը ինտելիգենտից մինչև կոշիկ սրբողը, մեծից մինչև փոքրը ամբողջ օրը պիեսից ցիտատներ են փոխանակում իրար հետ: Շատերը ամբողջ կտորներ անգիր գիտեն: Վերջին ներկայացմանը՝ մեկը, որ հետևս էր նստած, հուշում էր ամբողջ պիեսը: Թուրք դրամատիկ խմբի դերասանները, նույնը և վրացիները եկան բոլոր ներկայացումներին. Թուրքերը ներկայացան և շնորհավորեցին անձամբ. երկու լեզվով էլ Թարգմանվում է: Դարբինյանը ներկայացման հաջորդ օրը համաճեպ դասախոսեց պիեսի մասին և դատափետեց գլխից մինչև ոտները: Կարծեմ պատրաստվում է երկրորդ դատափետումը: Բայց դրա դեմ է հասարակությունը իր բոլոր լավ ու վատ, գիտակից ու անգիտակից մասերով: Մյասնիկյան, Սակինյան հավանել են: Սակինյանը ինքը շնորհավորեց...»[6]:

Դե՛, մի կողմից Թուրքերի ու վրացիների ներկայությունը, մյուսից վերջիններիս հավանել-շնորհավորելը բավական էին, որպեսզի վճռվեր «Քաջ Նազարի» բախտը՝ միրժվածի առ այսօր ձգվող աղեղով...

Այն էլ պատճառակցական հանդամանքների նման ծանրակշիռ գումարելիներով: Փաստացի 1923-ի ամռան ամիսներից սկսած՝ Մտկչ գաղափարական դիրքորոշման մեջ բացահայտորեն գծագրվում էր կողմնորոշում դեպի Հ. Հակոբյան, Գ. Հայկունի, Ա. Վշտունի և այլք: Այդ ընԹացքով և պայմաններում խմբագիրներից **Ս. Երզնկյանը (Ե. Սուրենը) մղվում է հետ,** և ապա հեռանում Բաքու... էլ ուրիշ ինչ կարելի էր անել. **չէ որ հենց նա էր անցյալ ամռանը Մտկչ էջերում հրապարակել Զարենցի խեղդվելու պատմությունը՝ մատնացույց անելով «հերոսին»...**

Ակներևաբար «Քաջ Նազարի», ինչպես և Ստուդիայի ներկայացումների օբերին, ինչպես և հայ գրողների սեկցիան, ամբողջովին հեռացել էին Ալ. Մյասնիկյանի հայեցողությունից և հակոտնյա հրահանգներով գլխավորում էին գաղա-

[5] Դ. Դեմիրճյան, հ. X, 1985, էջ 446–447:

[6] Նույնը, 1924, 19 ապրիլի:

փարական—քաղաքական արշավանքը ինչպես Դեմիրճյանի, Զարենցի, Ստուդիայի... այնպես էլ Մյասնիկյանի ու Մակինցյանի դեմ: Ըստ այդմ պատահական չէ, որ Ստուդիայի և Զարենցի Թիֆլիս հասնելուն պես խմբագիր Ս. Խանոյանը Մոկչ զետեղված ծավալուն հոդվածով ամենայն եռանդով թմբկահարում էր Վշտունու «Սալամնամեն», հասկանալի է զինվորագրված հակոտնյա «ծառայական» դավանանքի. նույն դիրքերից էլ վարկաբեկվում էր «Մուրացկանների» բեմադրությունը և չարախնդորեն մարտահրավեր էր նետվում Դեմիրճյանին, Զարենցին և ոչ միայն նրանց:

Այդ մթնոլորտում Մոկչ սեպտեմբերի 3–ի թիվ 201–ում տպագրում է **«Մոսկվայի հայ թատրոնական ստուդիան» խորագրով անստորագիր այս՝ հետաքրքիր հոդվածը.**

«Մոսկվայի պետական հայկական դրամատիկական ստուդիան հիմնվել է Մոսկվայում մի քանի տարի առաջ, Մոսկվայի գեղարվեստական I ստուդիայի ռեժիսոր Ս. Իլ. Խաչատրյանի և Վահան Տերյանի ջերմ աջակցությամբ[7]: Ներկայումս ստուդիայի ղեկավարն է Գեղարվեստական թատրոնի III–րդ ստուդիայի դերասան Ռ. Ն. Սիմոնովը: Ստուդիայի հիմնվելու օրից նրա նպատակն է եղել ստեղծել հայկական նոր թատրոն, որ կարողանա բավարարել ժամանակին՝ ինչպես գեղարվեստական, նույնպես և հասարակական պահանջներին:

Առաջին տարիները Ստուդիան զբաղված էր իր ներքին կյանքի կազմակերպմամբ և նոր դերասան պատրաստելու լաբորատորիկ կրթական աշխատանքներով: Մինչև հիմա էլ Ստուդիան գտնվում է տնտեսական ծանր պայմաններում:

---

[7] Ի դեպ տարիներ շարունակ հետաքրքրել է այն հարցը, թե այդքան երաժշտական Վ. Տերյանը՝ Թեկուզ հեռվից–հեռու չի՞ իմացել արդյոք Կոմիտասին. վերջապես գտնվեց «1905 5/ԺԱ Ս. Էջմ.» տարեթիվը կրող սույն վավերագիրը.

«Արգո պ. Աղեքսանդր Մյասնիկյան,

Ձեր նամակն ստացա երեկ, բացակա էի. գնացել է Տփխիս՝ **տիկին Մանթաշյանի թաղման:**

Ուսանողական միությանդ հղացած միտքն իսկ և իսկ նպատակներիս է ընդառաջ գալի. մեծ սիրով կուզեի մի այսպիսի կարևոր գործ ուսանողության միջոցով և հօգուտ նորա կատարել, բայց, գոնե այս տարի հանձն առնել չեմ կարող, զի Գ. Ճեմարանում դասերով կապված եմ և Մայր Տաճարի մեջն էլ խմբապետության պաշտոնով. ոչ մի օգնական չունիմ. ուստի ցավելով և ստիպված մերժելու եմ: Ձեր ուզած և իմ ցանկացած համերգը պատվավոր գլուխ բերելու համար, անհրաժեշտ է առնվազն մեկ և կես ամիս՝ գալու–գնալու և պատրաստելու համար. իսկ այդքան երկար ժամանակ ինձ դժվար թե թողնեն բացակայեմ: Բայց և այնպես, փորձեցեք՝ դիմեցեք պաշտոնապես Վեհափառին, գուցե թույլատրում է, այն ժամանակ կգամ. ես պատրաստ եմ ծառայելու:

Եթե այդ չի հաջողվի, կթողնենք եկող տարվան, երբ ես այլևս ուսուցչությունը թողնելու եմ, ազատ եմ և կարող եմ:

Հարգանքներով Կոմիտաս Վարդապետ»: Տե՛ս Ս. Գ. Գասպարյան, Կոմիտաս, 1961, էջ 75–76. «Սովետ. արվեստ», 1956, թիվ 2, էջ 9:

Հետևաբար. եթե Մյասնիկյանը և «Ուսանողության միության» անդամները գիտեին, համոզված կարելի է ասել, որ արդեն իսկ «Մթնշաղի» օրերին Կոմիտասին գիտեր և Տերյանը: Բայց հետաքրքիր է պրպտել «պաշտոնապես» դիմե՞լ են Վեհափառին և ինչո՞ւ է ձախողվել՝ Կոմիտասի «ընդառաջ գնալը» նպատակին... Ավելի ուշ պարզվեց թելերը տանում են դեպի Ալ. Խատիսյան...

Վերջին տարվա ընթացքում Ստուդիան պատրաստեց ստուդիական աշխատանքների երկու երեկո: I Սերվանտեսի ինտերմեդիաները և Լյաբիշի մի ոդևիլը: II–րդ մեծ աշխատանքն էր Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները»:

Երկու աշխատանքն էլ ցուցադրվեցին Մոսկվայում և արժանացան մամուլի և հասարակայնության ուշադրությանը՝ ինչպես հայ, նույնպես և օտարազգի:

Գարնանը Հ.Ս.Հ. Հանրապետության լուսժողկոմի առաջարկությամբ և աջակցությամբ, Ստուդիան իր ղեկավար Ռ. Ն. Սիմոնովի հետ ցուցադրական ներկայացումներ կազմակերպեց Երևանում և վերջերս Թիֆլիսում: Հիմք ունենալով Ստանիսլավսկու սիստեման՝ Վախթանգովի բարեփոխությամբ:

Ստուդիան ունի թատրոնական նոր ֆորմա, թերևս յուրահատուկ:

Ի՞նչ պահանջներ ունի Ստուդիան ներկայիս թատրոնից:

Ամենից առաջ Ստուդիան հաստատում է, որ թատրոնը պիտի լինի թատրոն և այն էլ ժամանակակից: Այսպիսի թատրոն ստեղծելու համար անհրաժեշտ է դերասան–արվեստագետների մի կադր, որ զինված լինի ժամանակակից թատրոնական տեխնիկայով՝ ընդգրկելով իր մեջ իր էմոցիաները ղեկավարելու արվեստը և իր արտաքին մատերիալ–մարմնին տիրապետելու արվեստը (շարժողություն, ռիթմ, ժեստ, առոգանություն):

Ստուդիան գտնում է, որ դերասանը ոչ թե պիտի լինի լոկ միայն մասնագետ դերասան, այլև արժանավոր քաղաքացի: Ամեն մի պիեսի բեմադրության համար ստուդիան որոնում էր տվյալ պիեսի համար յուրահատուկ թատրոնական ձևակերպում: Բեմադրության առանցքն է կազմում միասնական գեղարվեստական սկզբունքը, որ արտահայտվում է ներդաշնակ անսամբլի կոլեկտիվ ստեղծագործությամբ:

Ստուդիայի վերջնական նպատակն է ստեղծել միանգամայն ձևակերպված թատրոնական կոլեկտիվ և տեղափոխել իր գործունեության բազան Մոսկվայից Հ.Ս.Խ. Հանրապետություն:

Ներկայումս Ստուդիայում ուսանում են 20 հոգի: Բացի դերասան պատրաստելուց, Ստուդիայի նպատակն է պատրաստել նաև ռեժիսորներ, դասատուներ և այլ բեմական աշխատավորներ: Ստուդիան ունի իր շկոլան, որտեղ, բացի հրավիրված դասատուներից, դասավանդում են և Ստուդիայի ավագ ուսանողները:

Առաջին ուսման տարում Ստուդիայի շկոլայի առաջին կուրսում կուսանեն 15 նոր աշակերտներ, որոնք ընդունվել են Երևանում և Թիֆլիսում: Շկոլան երեք տարվա կուրս է:

Առաջիկա տարվա ընթացքում Ստուդիայի ռեպերտուարի մեջ են հետևյալ պիեսները. բացի Գ. Սունդուկյանի «Պեպոից» և Ե. Չարենցի «Կապկազից», նաև Շանթի «Հին աստվածներն» ու Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազարը» և մի ամերիկյան օպերետ:

Այս տարվանից Ստուդիան գտնվում է Հ. Ս. Խ. Հ.–ի լուսժողկոմի հովանավորության ներքո»:

Հիրավի. շարադրանքի ու բովանդակության բաղադրիչներով **հոդվածը պատկանում է Ե. Չարենցի գրչին:** *Պատկանում է թե Դեմիրճյանի, նաև Թոթովենցի, հանդեպ պարտավորվածությամբ. որքանով դեռևս Երևանում Թոթովենցից*

տեղեկացել էր Դեմիրճյանի գլխով անցածին, և արդեն իսկ բարկության առաջին պոռթկումով խոստացել էր դրանց «Հախից գալ». պարտավոր էր և իրավա–բարոյական առումով որպես «Ստուդիայի վերջնական նպատակի». այն է՝ «...ստեղծել միանգամայն ձևակերպված թատրոնական կոլեկտիվ և տեղափոխել իր գործունեության բազան Մոսկվայից Հ. Ս. Խ. Հանրապետություն»: Գումարած մյուս փաստարկները. հիմքից Ստանիսլավսկուց ու Վախթանգովից, Վ. Տերյանից և Ս. Խաչատրյանից սկսած Ստուդիայի գործունեության ու նախատեսվող հեռանկարների իմացությունը. հենց ասենք, Հայաստանի լուսժողկոմ Ա. Մռավյանի հետ բանակցության արդյունքով, որի վերաբերյալ «1924. 6. IX, ի. ք. Տփլիսի, Վրաստան» տարեթիվով նամակում գրում էր. «Երևանում տեսա Ասքանազ Մռավյանին. պատմեց <ի> այդտեղի, այսինքն DKCA–ի[*] նորությունների մասին – շատ ուրախ եմ, լիահույս եմ, որ ասկե հետքը անխկա կկրկնապատկե իր գործունեությունը:

Ջուր Հայաստան չեկար: Ստուդիան Երևանում թեկուզ չունեցավ նյութական աջողություն, սակայն անոր ունեցած բարոյական հաղթանակը հույժ նկատելի էր: Լավ է. Մռավյանն ասավ, որ ԴԿՍՍ.–ի հասույթի որոշ տոկոսը Ստուդիայի՛ն տրվելու է. ուրախ եմ և հայտնում եմ ուրախությունս քեզ...» (6, 409):

Պատկանում է և՝ հենց ասենք, ի հեճուկս երդվյալ թշնամիների՝ Վ. Տերյանի, Շանթի, Վախթանգովի... անունների հիշատակումով, որոնց հասցեին այդ տարիներին տեղացող նենգամիտ չարախոսությունների մաշտարները հազիվ թե հաջողվի պատկերացնել այսօրվա ապրողներիս... Ի վերջո՝ չէ որ «նոցա» կամ «նրանց» իրոք, հաջողվեց տրորել Չարենցի արձանագրած այդ «հույժ նկատելի բարոյական հաղթանակը», հաջողվեց տրորել Շանթի, Դեմիրճյանի, Չարենցի–Ստուդիայի թատերգության ու թատերարվեստի միտումները... Ասել է թե՝ իզուր չէր ծանակելով հարցականի տակ դրվում հայոց թատրոնի «թատերական Երուսաղեմ» գնալը...

Հայոց մշակույթի միմյանց հաջորդած յոթանասունամյա ջարդարարները գործում էին անվրեպ...

* * *

Հարանման հոլովումով առաջացող իրադրության մեջ զարմանալի կլիներ, եթե Ստուդիայի գործունեությունը շարունակվեր, և իհարկե, չուտով ընդհատվեց:

1924–ի հոկտեմբերի 7–ին, երբ Մոսկվայում էր գտնվում նաև Չարենցը, «Известия» լրագիրը «В доме культуры» խորագրով հաղորդում էր, թե 1921–ից Լազարյան ճեմարանը՝ Կուլտուրայի տուն դառնալուց ի վեր նրա հարուստ գրադարանի դռները բացվել են բոլորի համար, երեք տարում տպարանում տպագրվել են հարյուրից ավելի քաղաքական ու գեղարվեստական գրքեր, ստեղծվել է դրամատիկ Ստուդիա և երաժշտական խումբ: Թե՝ «Տունը կազմակերպում է երգչախումբ և պատրաստվում է հայկական օպերայի բեմադրում, այլև հրատարակելու է երաժշտական ամսագիր», և որ շենքը անցած տարի հիմ-

---

[*] Ասել է՝ Дом культуры Советской Армении = Խորհրդային Հայաստանի կուլտուրայի տուն:

նավոր վերանորոգվել է և պատրաստվում է բացել «Նաիրի» թատրոն 420 տեղով, որ թատրոնը կից ունի այգի...

Ուրեմն պատկերացնում եք, թե «Հայր Ստալինը» ատելության որպիսի կատաղի նույա պետք է ունեցած լինի. այդ «քուրդ» հայերը այդպիսի մշակութային օջախ ունենա՞ն Մոսկվայում... Ուստի և Կուլտուրայի տան գործունեությունը ո՛չ թե խամրում, այլ Լենին–ստալինյան ոճով, առանց խոսք ու զրույցի, միանգամից ընդհատվում է: Վերջին բեմադրությունն էլ լինում է «Պեպո». կարելի է կարծել, որ Ստալինը ձեռքի տակ ունեցել է բեմադրության նախատեսված «Կապկազը» թարգմանված:

Այսպիսով խափանվում է՝ Զարենց–Ռ. Սիմոնով, Գ. Ցակուլով, Կ. Հալաբյան, Կ. Միքայելյան, Սուրեն–Արամ–Լևոն Խաչատրյաններ և Մարտին ու Միքայել Մազմանյան եղբայրների, դրամատիկ Ստուդիայի և երաժշտական խմբի ուսանող–ուսանողուհիների ստեղծագործական համագործակցությամբ կյանքի կոչված մշակութային մի երևելի նախաձեռնություն, և, դժբախտաբար, մեծապես **հատուկ ծառայության զորահավաքի ազգային նախաձեռնողների թափած քափ ու քրտինքով[°]... ևս...**

Հայտնի է, սակայն, որ հայոց թատրոնին ծառայելու մղումով Ռ. Սիմոնովը այնուհետև 1928–ին երկրորդում, ապա և երրորդում, չորրորդում է հայկական նորոգ դրամատիկ Ստուդիա վերստեղծելու ջանքերը, որ ամեն անգամ ընդհատվում է կես

[°] Ինչպես հայտնի է, «Գիրք ճանապարհին» բացվում է«Պատմության քառուղիներ» շարքի «Սասունցի Դավիթ» պոեմով, որը ծայր է առնում նզովքով: Առ այսօր «ազգային նիհիլիզմ» որակումով պիտակավորված նզովք, որով իբր աններելի մեղք է գործվել էպոսային Ձենով Օհանի հանդեպ: Ըստ երևույթին բանաստեղծը մի այլ միջոց չի գտել ծածկագրով նզովելու ժամանակի համաճարակային չափերի հասած «ձենովություն–մատնչությունը» դատափետելու–նզովելու համար և կանգ է առել Ձենով Օհանի վրա՝ **«ձենովներին» հավասարեցնելով Մսրա Մելիքին.**

Դառնանք–բարբառենք նզովք մենք նախ
Մսրամելիքի՛ն, թագավորի՛ն:
Դառնանք–բարբառենք նզովք ապա
Ձենով–Օհանին, իշխանին նե՛նգ:
Դառնանք–բարբառենք նզովք ապա
Այլ իշխաններին բոլոր այն մեր,
Որ բերին մեզ մահ, ու մուժ, ու նեռ... (4, 174):

Ըստ այդմ, նզովքի այս ալիքը զուգորդվում է Առյուծ Մհերին և Դավիթին հասցեագրված **«Փառք փառաբանող»** ալիքով՝ այն էլ այսպիսի դարձդարձումներով.

...Ձենով–Օհանը, իշխանն այն նենգ,
Գլուխ խոնարհեց Մելիքին նեռ,
Արձակեց ապա հրաման մի գոռ,
Որ ժողովուրդը Սասմա ամբողջ
Գնա, անցնի նրա փայլատակող
Արնահոտ, դաժան թրի տակով:–
Եվ ժողովուրդը Սասմա անկոր՝
Խեղճացած, խոնարհ ու գլխիկոր,
Անցավ Օհանի դժնի կամքով
Մսրամելիքի թրի տակով:–

ճանապարհին չհասած: Ինչպես և հայտնի է Զարենցի մշտանույն հարգալի ջերմ վերաբերմունքը՝ արձանագրված 1928-ին Նորոգած Սիմոնովի Ստուդիայի ներկայացրած «Պաղդասար աղբարի» երևանյան ներկայացման (մայիսի 16–18) առթիվ գրած թատերախոսականում. «Ճիշտն ասած՝ մենք մեծ սպասելիքներ ունեինք այդ խմբից և այդ ընմադրությունից: Բացի այն, որ մենք դեռ մի քանի տարի առաջ տեսել էինք այդ խմբի պարապմունքները Մոսկվայում, բացի այն, որ այդ խմբի առաջին ներկայացումից՝ «Մեծապատիվ մուրացկաններից», մենք ստացել էինք 3 տարի առաջ լավագույն տպավորություն,— բացի այս ամենը՝ մեզ մեծ սպասելիք էր ներշնչում այդ ներկայացման աֆիշը, որի վրա **փայլում էր ռեժիսոր Սիմոնովի, Վախթանգովի այդ մեծահմուտ աշակերտի անունը**[10] (ընդգծ՝ Ալ. Զ.):— Սակայն, դժբախտաբար, մեր սպասելիքները չարդարացան...» (6, 195–196):

Այնուհետև հաջորդում են ներկայացմանը վերաբերող խիստ քննադատական արձարձումներ:

Ակներև է, սակայն, չարունակվող լիակշիռ համաձայնությունը **«մեծահմուտ» Սիմոնովի** թատերարվեստի ուղղությանը: Ինչ վերաբերում է «Պաղտասար աղբա-

---

Մելիքը, չողշող դրահ հագին,
Կանգնեց՝ ահռելի ու ահագին,
Եվ ժողովուրդը, մանուկ ու կին
Անցավ պողպատե թրի տակից:
Բայց հերթը հասավ երբ Դավիթին՝
Զմռսեցա՛վ նա չար թրին,
«Չե՛մ անցնի»–ասաց կամքով անկոր–
«Մսրամելիքի թրի տակով» (4, 181–182) և այլն:

Եվ ոչ թե մեռյալներին, այլ ծայրից–ծայր ապրողներին հասցեագրված սույն և համանման էություն ու բովանդակություն տեսնելու–վերծանելու ու մեկնաբանելու փոխարեն, Զարենցի թշնամիների կոնսպեկտներով «Գիրք ճանապարհին» նկատվել–նկատվում է «ազգային նիհիլիզմով» ներթափանցված գիրք... **Վա՛յ մեզ...Մաքրարյուն ազգայիններն էլ իրե՛նք են... յուրյանք... Մարդակերները:**

[10] Վրճակվել է 1956-ին Մոսկվայի Վախթանգովի անվան թատրոնում իմ ամուսնու և Մ. Սարյանի որդու՝ Սարգիս Սարյանի հետ լինել Սիմոնովի բեմադրած Դե Ֆիլիպոյի «Ֆիլումենա Մարտուրանոյի» հանդիսատեսը: Հետադարձ մտաբերումով բեմադրված «Standard»-ում տպագրված հոդվածի սկզբունքներով. Մ. Սարյանի նկարչական ձևավորումով ընդամենը **եռագույն** (եթե չեմ սխալվում՝ մեր դրոշի) դեկորային–գունային խորհրդանիշը. Սիմոնովի բեմադրություններում սովորական՝ թեթև բեմահարթակ, մեջտեղում սեղան՝ աթոռներով. դերակատարների, ասես նժարավորված «նույնարժեք» խաղ. հատկապես Դոմենիկոյի (Ռ. Սիմոնով) և Ֆիլումենայի (Օ. Մանսուրովա) միջև. վերջինիս խանդոտ խաղի մյուս նժարին՝ առաջինի «Ах как скучно, скучно, скучно мне, грустно мне» կրկներգի հանդարտ կշռույթին համարժեք ապացողությամբ ու խաղով՝ ծալք առ ծալք բացվող կյանքի դրամա. մարդկային կորցրած կյանքի, հոգնության և սերնդապաշտության «նույնարժեք» խորիմաստ տարբերակներով:

Անշուշտ, ամենատարբեր առիթներով մի անգամ չէ, որ Սարյանն ու Սիմոնովը դարձած–անդրադարձած չլինեն Զարենցին: Ուրեմն և հետամուտը շատ ու շատ առումներով մնում է Սիմոնովի ժառանգներին ու սերունդներին. Թերևս Սիմոնովի արխիվում գտնվեն նամակագրական կամ այլ էջեր, հիշատակումներ... Հայ մտավորականության ներկայացուցիչներից... այլև հենց իրեն վերաբերող բազմարնույթ...

րի» ներկայացմանը, ապա այն, թերևս, կարելի է բացատրել կլսով չափ անհաջող բեմադրության և դերասանների խաղով (լավի դեպքում Չարենցը իր վրա այդքան մեղք վերցնողը չէր), մյուս կեսն էլ, թվում է, կարելի է վերապահել 1926–ի Հարկադիր տարագրությունից նոր Երևան վերադարձած բանաստեղծին, որը այդ միջոցին առերևույթ, իրոք ջանում էր եզրեր գտնել պրոլետգրական և այլ սադրիչ խումբ–խմբակցությունների «գաղափարաբանության» հետ: Մինչդեռ իրական–օրգանականը նույն տարիներին ստեղծված «էպիքական լուսաբացի» մաքառման «լուռ պայքարի» անզիջում–աննկուն լիցքերն են, անզիջում էպիգրամները:

Մշտապես Հակոբ Պարոնյանի հետ

Հայտնապես Եղիշե Չարենցը բառիս բուն իմաստով պարոնյանապաշտ էր:

Երբ ճակատագրական բախտ վիճակվեց աշխատանքի ընդունվել Գրականության ինստիտուտում, «հին» աշխատողները պատմում էին, թե Չարենցը (այդ օրերին, իհարկե, արգելված) ուրախ երկյուղածությամբ է թանգարան հանձնել Պարոնյանի «Շողոքորթ»-ը: Պատմում էին, այլև ցույց տալիս **«Մայր մատյանում»** արձանագրվածը, որը քաղում եմ, ահա՛, տառնամյակներ անց. **«Հակոբ Պարոնյանի «Շողոքորթ» կատակերգության ձեռագիրը ստացված է Եղիշե Չարենցից 28 մարտի 1935»:** Պահպանվում է Հ. Պարոնյանի ֆոնդում»: Հիշարժան է, որ նույն օրը բանաստեղծը հանձնել է «Սոմայի» ինքնագիրը: Հիշարժան է նաև այն, որ նույն տարեթվով (Չարենցից անմիջապես առաջ) ձեռագիր է հանձնել և Զապել Եսայանը[11]: Ասել է 1935–ի ծանր իրավիճակում, **այդ օրը եղել են Զապելի հետ** մտերմական և մինչև վերջ սրտաբաց միմյանց մխիթարելով – միասին էլ եկել են թանգարան և միասին էլ հանձնել ամենայն հայոց հանճարեղ երգիծաբանի «Շողոքորթ» երկի ձեռագիրը:

30–ականի կեսերին վերաբերող նույնպիսի պաշտամունք է արձանագրել և Գուրգեն Բեքնազարը իր հուշերում (ՀԵԶմ, 2, 446–452): Բազմակողմանիորեն զարգացած մտավորական, որ այդ ժամանակ աշխատում էր Թիֆլիսում գտնվող Անդրկովկասյան ռուսալեզու պետական հրատարակչությունում (այսպես կոչված «Закгиз»), և սակայն ցավոք, չի հասցրել կամ չի կարողացել շարադրել իր հուշերի նախատեսած բազմաթիվ բաց կետերը: Բարեբախտաբար շարադրել է Պարոնյանին վերաբերող հատվածը. «Թարգմանիչը մշակույթի կողքից լծված ձի է: Ակսել Բակունց «Ալպիական մանուշակ»: Չարենցը և Մայակովսկին: Քափանակյանի թարգմանությունները Հ. Պարոնյանից. ծանոթանալով թարգմանություններին, Չարենցը հայտարարեց. ո՛չ մի, թեկուզ Պարոնյանի հանճարեղ թարգմանություն, չի կարող պահել նրա լեզվի ո՛չ մթնոլորտը, ո՛չ համն ու հոտը: Մինչդեռ նրա երգիծանքի ու հումորի ուժը գլխավորապես նրա կերպարների խոսքային բնութագրերի մեջ է: Այդ հայտարարությունը ինձ գցեց հիմար վիճակի մեջ. կարող էր ինձ

---

[11] ԳԱԹ Մմ (ասել է՝ Մայր մատյան), համապատասխանաբար՝ թիվ 478, 479, 480:

սառեցնել այն գործից, որին կպել էի այդքան տաք: Ես սկսեցի վիճարկել նրա կարծիքը: (Իսկ դե՛, Զարենցը շատ էր համառ, և նրան հնարավոր չէր հաղթել վեճով): Եվ նա կրկնեց. «Ես համոզված եմ՝ Պարոնյանն անթարգմանելի է: Նա դարերով կմնա զուտ ազգային, հայկական գրող: Ամեն թարգմանություն կարող է նրան իջեցնել, սպանել: Իսկ վատ թարգմանիչը արժանի է պատժի գերագույն չափի»: Նա անգամ արտահայտեց այն միտքը, թե՝ եթե Պարոնյանին փոխադրենք արևելահայերեն լեզվի, ապա նույնպես պարոնյանական երգիծանքից կմնան պոչիկներն ու տոտիկները: Զարենցը շատ էր սիրում Պարոնյանին և բարձր էր գնահատում նրա պիեսների բեմադրությունը մեր Պետական թատրոնում:

Այդ կապակցությամբ ես վկայակոչեցի այնպիսի ինքնօրինակ, դժվար թարգմանելի գրողի անչափ հաջող թարգմանություն, ինչպիսին է Շոլոմ–Ալեյխեմը, կամ, նույնպես դժվարընկալ, դարձվածներով լեցուն երկեր, ինչպիսիք են Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուելը», կամ Ռ. Ռոլանի «Կոլա Բրյունյոնը»: Նա ասաց, որ Շոլոմ–Ալեյխեմի համար գտնված է հաջող ժարգոն, իսկ Ռաբլեին ու Ռոլանին թարգմանել են տաղանդաշատ թարգմանիչներ: Նրանք իսկական արվեստագետներ են[12]:

Զարենցը ափսոսաց, որ հայերին անծանոթ է Շոլոմ–Ալեյխեմի ստեղծագործությունը» (ՀԵԶմ, 2, 447–448):

Ինչպես տեսնում ենք, պրծնել չկա Զարենցի անծայր «Գրքերի աշխարհից»... Դե՛, եկ ու որոշիր նրա հետաքրքրությունների սահմանը, գտիր Ռաբլեի ու Ռոլանի, Շոլոմ–Ալեյխեմի թարգմանիչներին. գուշակիր, թե, այնուամենայնիվ, չէ՞ր մտածում արդյոք, թե այդ ո՞ր «տաղանդաշատ թարգմանիչը» կարող էր թարգմանել Պարոնյանին... Թերևս, իր օգնությամբ... Չէ որ «Երկիր Նաիրիում» (հատկապես II և III մասում), ինչպես և «Երևանի ուղղիչ տնիցում» մի զգալի չափով գործում է «կերպարների խոսքային բնութագրերի» սկզբունքը. մանավանդ այն դեպքերում, երբ խոսքը տրվում է Մազութի Համոյին, և ոչ միայն նրան... իսկ հետագայում էլ՝ Թողնենք իր հերթին...

---

[12] «Գարգանտյուայի...» դեպքում նկատի ունի երկի Վ. Պյուստի կրճատ թարգմանությունը (1929), «Կոլա Բրյունյոնի» դեպքում՝ Մ. Լոզինսկու: Որքանով, ցավոք, հնարավոր չի եղել կարդալ Շոլոմ–Ալեյխեմի երկերը, գրականագիտական տվյալների զգացողությամբ, կարող ենք ասել, որ խոսքը վերաբերում է «Мальчик Мотл», «Менехе — Мендл», «Тевье молочник» գործերի թարգմանիչ Մ. Շամրադալին:

Նկատենք նաև, որ ժարգոնը հմտորեն օգտագործված է և Զարենցի «Երկիր Նաիրիում», և որ նույնությամբ պոեմանման վեպին կարող է վերաբերել 1905–1907 թթ. հրեական ջարդերի հետքերով գրված Շոլոմ–Ալեյխեմի ստեղծագործության սույն բնութագիրը. «... Ինչպե՞ս ապրի ժողովուրդը առանց մխիթարության: Որտեղի՞ց կարելի է քաղել մխիթարություն: Հենց այստեղ է Շոլոմ–Ալեյխեմին օգնության գալիս արվեստի մեծ հայտնությունը.— մխիթարություն քաղել հենց իրենից՝ վշտից... քաղել նրանից ժպիտ... ինչպես քարից կայծ...» (ընդգծ.՝ Ալ. Զ.):

Այդպիսին է Շոլոմ–Ալեյխեմի ծիծաղը, դրանում է նրա մեծագույն արժեքայնությունը – ծիծաղ ոչ թե արցունքի միջից, այլ արցունքից...

...Շոլոմ–Ալեյխեմի ժպիտը օգնեց հրեա ժողովրդին խնայել ուժերը ապագայի համար...». տե՛ս Дружба народов, 1959, հ. 3, էջ 227:

Կամավորական շարժման միջոցին՝ գուցե թե նույնպես մտածեին՝ «խնայել ուժերը ապագայի համար...»:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՇԵՄԻՆ

Ինչպես հետևում է նույն «924, 6, IX, ե, ք. Տփլիսի, Վրաստան» տարեթիվով Կ. Միքայելյանին հասցեագրած նամակից սեպտեմբերի 6–ին կամ 7–ին, հավանաբար, Մ. Մազմանյանի և իր տիկնոջ Վարդուշ Ստեփանյանի, այլև Ստուդիայի մյուս ուսանող–ուսանողուհիների հետ,— Թիֆլիսից Մոսկվա է մեկնում Արփենիկը[1]*:*

Մնում է ինքը՝ ինչպես գրում է նույն նամակում,— թե «... մնացել եմ հոս քիչ մը գործ ունենալուս պատճառով. կգամ մի շաբաթ անց» (6, 409): Պատճառը, անշուշտ, արտասահմանյան ուղևորության հարցի անորոշությունն էր՝ բազմապիսի դժվարություններով ու բարդություններով, որոնց շարքը հայտնի է դառնում Միքայելյանին հասցեագրած նամակներից: Այլական արժանապատվությամբ առանձնացող նամակներ, որոնցից երևում է իրենց միջև հաստատված հարգալից–զուսպ ու զգաստ մտերմությունը, փոխադարձ վստահությունը, հավատն ու հավատարմությունը միմյանց... բայց ամենից առաջ, ամեն ինչից վեր հայրենիքին ու ժողովրդին:

Տակավին օգոստոսի 3–ին Երևանից գրած նամակում՝ խոստովանելով արտասահման գնալու իր «վաղեմի» ցանկությունը, առանց «արքունի բանաստեղծ» հորջորջվելու երկյուղի հայտնում էր. «Ինչպես գիտեք, ինչպես ես Ձեզ հայտնել էի դեռ Մոսկվայում, իմ ցանկությունն է գնալ արտասահման և իմ այդ ուղղությամբ ունեցած բոլոր հույսերը հիմնվում են միայն Ձեր դեպի ինձ ունեցած բարի տրամադրության վրա: Երևանից այդ ուղղությամբ ես սպասելիքներ չունեմ, չնայած որ ավելի քան հավատում եմ ընկ. Աշոտ Հովհաննիսյանի նույնպես բարի տրամադրությանը դեպի ինձ. չեմ կարծում, որ նա մենակ կարողանա այստեղ Ցեկայում կամ Սովնարկոմում հաջողացնել ինձ արտասահման ուղարկելու գործը, որ կապված է ֆինանսականի հետ...» (6, 407–708):

Ֆինանսականի հետ կապված անորոշ–որոշակի սպասումներով էլ մինչև սեպտեմբերի 14–ը մնում եմ Թիֆլիսում:

---

[1] Ըստ երևույթին Արփենիկի ձեռքով ուղարկած այս նամակում՝ հետաքրքիր է կենցաղային այս դրվագը՝ Չարենցի ինքնադրոշմ վերաբերմունքով. «Հետաքրքիր է,— գրում է նա,— սկսե՞լ եք արդեն սենյակների ռեմոնտը, թե՞ ոչ. եթե մինչև գալս սկսեք, խնդրում եմ չմոռանաս սենյակիս պատը հաստացնել տաս: Էնքա՛ն: Լուր ունեմ նաև, որ գալուս (ասել է՝ ամռանը Մոսկվայից Երևան մեկնելուց հետո՝ Ալ. Զ.) երկրորդ օրը ավազակները ջարդել են սենյակս, բայց մեծ տարակուսանքի մեջ եմ, թե ի՞նչ են արդյոք թողել սենյակում. եթե գրպաններից բան–ման մնացել է՝ խնդրեմ քո սեյֆերում պահես, որ գալուս հանձնես զիս... Էնքա՛ն» (6, 410):

Անշուշտ, Թիֆլիս հասնելուն պես առանց հապաղելու հանդիպում է Դեմիրճյանին: (Եվ ոչ միայն): Թոթովենցի պատմածով տեղյակ էր «Քաջ Նազարի» հետ պատահած պատմությանը, և հիմա պետք էր զբաղվել կատակերգության նոր բեմադրության հարցերով: Պարզ է, դառնությամբ լի զրույցի ընթացքով որոշվում է դիմել Մյասնիկյանի օգնությանը և գտնել նոր բեմադրող: Իր պես լծվում է գործի, և՝ համոզված կարելի է ասել, մինչև Թիֆլիսից մեկնելը Մոսկվա, արդեն համաձայնեցված էր՝ թե՛ բեմադրիչ Ս. Քափանակյանի[2], թե՛ նկարիչ Գ. Շարբաբչյանի հետ: Այնպես որ՝ հոկտեմբերի վերջերից–նոյեմբերի 19–ը կրկին լինելով Թիֆլիսում, անկասկած Դեմիրճյանին ընկերակցելով, բազմիցս ներկա է գտնվել փորձերին, վայելել կատակերգության երգիծական սլաքների ուղղակի–շեղակի–խոտորնակի հարվածների արդիական ու հավիտենական համալիրը: Ասել է թե, 7. V. 1925 տարեթվով Փարիզից Դեմիրճյանին հասցեագրած նամակի «... Արդեն քո «Քաջ Նազարի» առաջին ընթերցողը և հիացողը – եթե հիշում ես– ես եմ եղել» (6, 419),— տողերը վերաբերում են նաև այդ փորձերին:

Թվում է... գրականության պատմության համար ավելորդ չէ... (Հավելված)

1977–ին Դ. Դեմիրճյանի ծննդյան 100–ամյակին նվիրված գիտական նստաշրջանում «Քաջ Նազար» կատակերգության շուրջը» բանախոսությամբ՝ նախաբանի պես անդրադառնալով Չարենցի և Դեմիրճյանի 20–ական թթ. գաղափարական–գեղարվեստական ընդհանրություններին (ոչ միայն պատմվածքներին, այլև «Ազգային խայտառակություն» (1917), «Հայաստանի դաշտերին, սայլակուլյաններին, գեղծարարներին և ուտողներին» (1918), «Դժոխքի դռանը» (1921) երկերին,— նույն մեկնակետից բնութագրվում էր «Քաջ Նազարը»: Իր իսկ հեղինակի հուշարարությամբ. այն է. «Քաջ Նազարի» իդեան ոչ միայն Դաշնակցությունն է, մենշևիզմը, ցարիզմը և այլն, այլև մարդը, որ լրբորեն դաժան է, երբ իշխանություն ունի և սաստիկ մտահոգ իր անձի (երբ իր անձի վիճակը ուրիշներն են տնօրինում)»: Ըստ այդմ էլ արձանագրվել է եզրակացությունը. «Եթե առաջին տեսարանում գործ ունենք ուտել–վայելելու, ուրիշներին ստորացնելով, չահագործելով իրեն ծառայեցնելու պորտաբուծական չահատակության կենցաղային–առօրեական այն տարբերակի հետ, որը մեր ժողովուրդը կոչում է **գյադայություն**,— ապա հաջորդ տեսարաններում տարբերակ առ տարբերակ ներկայանում են չահատակող ուռած փքված ինքնապաշտը, դավողը, անբանը, մեծագոր–սնապարծը, նենգամիտ–սնանկամիտը, բթամիտը, ամբարտա-

---

[2] Ս. Քափանակյանի բեմադրությամբ «Քաջ Նազարը» Պետական հայ ակադեմիկ դրաման՝ Ռուսթավելու թատրոնում ներկայացվում է 1924–ի նոյեմբերի 23–ին և 26–ին, երբ արդեն Չարենցը Տրապիզոնում էր:

վանը, վախկոտը, անգամ քեֆչին, կնասերը — այս ամենը երանգավորված ինչպես առանձին–առանձին, այնպես էլ միախառնված ու միասին, և վերջապես նման տարողությամբ բնռնավորված չաՀատակող ևսագար քաղաքական արկածախնդիր բռնակալը:

Մի կերպարով ցուցադրվում է չաՀատակողների մի ամբողջ պատկերասրաՀ, ասել է մարդկային–Հասարակական այդ ախտը բացաՀայտվում–դատափետվում է մակընթացության ամենատարբեր աստիճաններով ու երանգներով... գծագրվում է Հասարակական մի ամբողջ միջավայր, մթնոլորտ ու Հոգեբանություն, որտեղ սնվում և ուռճանում է նազարականությունը:

Նազարին շրջապատող, բայց և Նազարից բևկորված տարբեր չափի «թե խոշոր և թե մանր տիպեր», նազարականներ կամ նազարյանք. Դեմիրճյանի բնութագրությամբ բոլորն էլ «Հաճոյակատար, վախկոտ, զարՀուրող, քծնող իրենցից վերևին — և դեսպոտ, անգութ, դաժան իրենցից ստորինների Հանդեպ». **տե՛ս Ալմաստ Զաքարյան, Ավանդների ուժը,** *1981, էջ 101–102:*

Տեղն է ակսել վերջից. «... դեսպոտ, անգութ, դաժան իրենցից ստորինների Հանդեպ...»,— Հիշեցնելով գրողի ճաչակած թեկուզ այս երկու դաժանությունը. էն գլխից այս մեկը. այն, որ Ա. Նուրիջանյանի Հայտնի դաՀճության զոՀերից էր բանտում ցնորված Խաչիկ եղբայրը... վերջիններից, թեկուզ միայն այն, որ Հետևողականորեն «Հալածական» մնաց «Քաջ Նազարը». այնքան որ կինոժապավենը (1940) **Նազարի Հ. Խաչանյանի տաղանդավոր կատարումով այրվեց տխրաՀռչակ կենտկոմական Հայտնի ոմնների ՀրաՀանգով: Հենց** *նրանք, որ ընդունակ էին գաղտագողի ուրիշների ձեռքով կատարելու ամեն ինչ:*

Հասկանալի է, այդ ամենի մեծ–մեծ կամ փոքր կտորներից, բեկորներից կամ փշրանքներից բաժին էր Հասնում և մեր սերնդի «ստորիններից» շատերին. ըստ այդմ, այնուամենայնիվ արժագանքները եղել են այնպիսիք, ինչպիսին՝ մի պատվական արևմտաՀայ Հայկ աղբոր որդի, պատմական գիտությունների դոկտոր, տաղանդավոր Հրապարակախոս, այժմ արդեն ՀՀ Ազգային արխիվային վարչության տնօրեն Հարություն Ֆնլեքյանի գրչին պատկանող սույն քերթվածն է՝ գրված տխրաՀռչակի «թագավորության» օրերին.

A'la Պարույր

Ի՞նչ է պատաՀել, Գարրի Նիկիտիչ,
Էսօր ոնց որ թե Հուզված ես մի քիչ.
Դիմքդ մռայլ է, կեցվածքդ՝ խստին,
Այդպես չէ՞ն գալիս ակտիվի նիստին,—
Գլուխը քարը, ճիշտը միշտ ճիշտ է,
Ակտիվը ակտիվ ու նիստն էլ նիստ է
Զեկուցում, ելույթ, նկատառումներ,
Ինքնադովության դեռ ու առումներ,
Բայց իսկության մեջ կեղծ ու դաղջություն,

Խելքի ճահճություն,
Մտքի դահճություն,
Պառկած հարճություն,
Խարկած քաջություն,
Լավի քչություն,
Վատի աճություն,
Մի համատարած բիճ ու լաճություն...
Այսքանից հետո՝
Իմ այս երգին էլ՝ տեղին կարճություն:

Ինչու թաքցնել. «Քաջ Նազար» կատակերգության շուրջը» բանախոսության սլաքները ուղղված էին նաև մեր սերնդի նմանների դեմ, որոնցից տարբեր խառնուրդի մեկ–երկուսը (և ավելին) յուրյանց կամեցողությամբ և հրահանգով «ջախջախել–հաղթելով» Սևակին 1971–ին և հետո դարձան ակադեմիկոսներ... դե՛ կենտկոմականն էլ, Աստծո կամքով՝ իրեն արժանի վախճան ունեցավ ... Տե՛ս **«Պարույր Սևակ (Անավարտ և կրճատված հուշեր)».** *Ալմաստ Զաքարյան. Գրականության և պատմության ընթացքները, 1990, էջ 447–546:*

* * *

Անցնենք առօրյային... Ասել է բուն խառնարանին...

Եվ այսպես՝ մինչև արտասահման ուղևորվելը (նախ օգոստոսի վերջերից մինչև սեպտեմբերի 13, և ապա հոկտեմբերի 15–ից նոյեմբերի 19), ոչ միայն Դեմիրճյանին առնչվող,— հոգևոր կյանքի լիքը, բուն Թիֆլիսյան օրեր...

Ինչպես 1915–ից հետո շատ տարի–ամիսների՝ Երևանյան հրապարակում վերստին ամեն օր առավոտ–երեկո անակնկալ–ակնկալվող հանդիպումներ բարեկամների ու ծանոթների հետ. դարձյալ օրվա լուրեր. այն տարիներին «Մշակ», «Հորիզոն», «Кавказское слово», *...այժմ «Մարտակոչ»,* «Заря Востока»*...հանդիպումներ, մտաբերումներ, զրույցներ, դատողություններ, ուրախություններ: Ամենից ավելի շարունակվող քաղաքական լուրեր ու դատողություններ. Վրաստանի հարավում «գյուղացիական» ապստամբություն և պարենային ժամեր Թիֆլիսում. նորից բրդական շարժումներ, անգլո–թուրքական բանակցություններ, խառը վեճակ Թուրքիայում Մոսուլի հարցով, և* **Թուրքիային պաշտպանում է միայն ԽՍՀՄ–ը...**[3]

---

[3] *Դե՛, վերստին ընդդեմ «ազգայնականորեն տրամադրված հայերի» «իմպերիալիստական պահանջի», ինչպես շեշտում է Իոսիֆ Ստալինը 1921 փետրվարի 12 թվագրված Լենինին հասցեագրած նամակով. «Ընկ. Լենին, ես միայն երեկ իմացա, որ Չիչերինը իսկապես մի ախմար (և պրովոկացիոն) պահանջ է ներկայացրել Թուրքերին՝ Վանը, Մուշը և Բիթլիսը (Թուրքական գավառներ՝ Թուրք բնակչության հսկայական գերակշռությամբ) մաքրել Թուրքերից՝ հօգուտ Հա-* **յաստանի: Հայկական իմպերիալիստական այդ պահանջը չի կարող մեր պահանջը լինել:** *Պետք է արգելել Չիչերինին նման հայտագրեր ուղարկել Թուրքերին՝ ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով: Ստալին»:*

Եվ ահա, օգոստոսի 30–ին Կ. Պոլսից ստացված հաղորդագրության համաձայն՝ Անկարան «... վճռել է պաշտոնից արձակել Թուրքական կառավարության ծառայության մեջ գտնվող բոլոր քրիստոնյաներին»[1]:

Դիվանագիտական–քաղաքական անիրավությունններին վերջ չկար, վերջ չկար և հայ մտավորականության հուսմաշ կացությանը: «Օրվա մարդը» մնում էր Պ. Մակինցյանը, որ վերադարձել էր Կ. Պոլսից, միաժամանակ ձեռքի տակ ունենալով Տերյանի կյանքի վերջին տարիների նամակները. այլև Տերյանից հետո աշխատել էր Ազգությունների կոմիսարիատում, անցել էր չեկայական դպրոցով, որ պարտադիր անցնում էին բոլշևիկ կոմունիստները՝ մեծագույն մասով: Բնօրինակը էս–էսական–գեստապոյական ծառայությունների, որից անկասկած, հիմնավոր փորձ ու փորձառություն են ժառանգել–ուսանել հիտլերականները:

Մակինցյանի ձգողականությունը անասելի էր. կարելի է պատկերացնել թե քանի՛–քանի՛ անքուն գիշերներ են լուսացրել Մյասնիկյանն ու Մակինցյանը՝ միմյանց պատմելո՛վ–պատմելո՛վ–պատմելո՛վ[2]. մեկը հայության պոլսական ստորացումներից, նաև իր՝ ինչպես Թուրքական կառավարության, այնպես էլ խորհրդային մարմինների՝ անվերջանալի միջնորդություններով. Մյասնիկյանն էլ պատմել է Մակինցյանի բացակայությամբ ստալինյան լայն ճակատով միանձնյա իշխանության հասնելու ծավալումներից, որի դեպքում՝ Տերյանից (նաև Կարախանից) հետո ամենից ավելի հայտնի էր իրենց,— թե ինչ է սպասվում հայ ժողովրդին, մտավորականությանը, ներառյալ բոլշևիկ, մենշևիկ, էսէռ թե դաշ-

---

Ապա հետևում են այս տողերը. «Հատկանշական է, որ Թուրքական պատվիրակության Մոսկվա ժամանելու և Ստալինի հիշյալ նամակի տարեթվերը համընկնում են: Եվ զուր չէ, որ այն ժամանակվա Թուրքական գործիչներն իրենց հուշերում պատմում են, թե այդ տարիներին լուրջ դժվարությունների հանդիպելիս անհապաղ դիմում էին Ստալինի օգնությանը». Գարուն, 1988, թիվ 8, էջ 56:

Եվ զուր չէ, ինչ խոսք, նաև այն, որ փետրվարի 12–ի հաջորդ օրն էլ՝ փետրվարի 13–ին ծայր են առնում խռովությունները Հայաստանում...Հետաքրքիր է. անթել հեռագրով... ո՞ւմ և ո՞ւմ միջև... և երկուսի թիկունքում էլ գործում էր «Պողպատե» Ստալինը...

[1] Մտկչ, 1924, 31 օգոստոսի:

[2] Տակավին «4.10.23» թվակիր նամակով Մակինցյանը գրում էր Մյասնիկյանին. «Дорогой Алеша! Сегодня получил от Мравяна телеграмму, что Совнарком постановил прекратить издательство в Косполи! Сегодня отправляю III Ваана. Допечатываю первый и Чаренца. Надеюсь, за Чаренца не будут скандалить. Присылаю тебе пробные две сугормши (печатные листы) Чаренца. П. Макинц.»

Այս նամակին էլ «27.11.23» տարեթվով հաջորդում է մյուսը: «Սիրելի Ալյոշա, ուղարկում եմ քո զեկույցը և Չարենցի բանաստեղծությունը արտատպված: (Խոսքը վերաբերում է «Ստամբոլին»՝ Ալ. Չ.):

Այսօր կարդացի բոլոր նամակներդ: Բոլորի մեջ գրված է – ե՛կ. քո տեղը գալու է ուրիշը: Իսկ մինչև օրս – ոչ ոք չի գալիս, և անհայտ է, թե երբ պիտի գա:

Չարենցն էլ լույս տեսավ, մնում է Վահանի հատորը: Պատրաստում եմ հաշիվներս և պատրաստ եմ գալու յուրաքանչյուր րոպե... քո Պողոս. (իր ժամանակի Վրաստանի Парт архив... папка 7, стр. 141, 190).

նակ... միևնույն է: Կարելի է պատկերացնել (բայց չեմ կասկածում, որ բոլոր պատկերացումներից վեր է), թե տևական այդ ընթացքով քանի՜–քանի՜ աչք ու ականջ է հետևել–հսկել նրանց:

Հիմա հսկողության տակ էին Մյասնիկյանի հետ և Չարենցի տեսակցությունները. առավել ևս Չարենցի և Մակինցյանի հանդիպումները[6], որոնց միջև մտերմությունը հաստատվել էր դեռևս հունիսի վերջերին. Մոսկվայից վերադառնալիս մի կարճ միջոցով Արփենիկի հետ մնացել էին Թիֆլիսում: Իսկ հիմա արդեն Ստուդիայի հետ Թիֆլիս հասնելու օրից թևակոխել էր լիարժեք մտերմության հունը:

Իսկ հավաստի վկայությունները, ինչպես կտեսնենք, պատկանում են Գուրգեն Մահարուն...

* * *

Երևանից 1924, 3. VIII տարեթվով գրած նույն նամակում Չարենցը Մյասնիկյանին հայտնում էր, թե՝ «Արտասահման ես ուզում եմ գնալ հոկտեմբերին – 5–6 ամսով: Եթե ցանկությունս իրականանա միտք ունեմ գնալ Գերմանիայի վրայով, այնտեղ<ից> էլ, հնարավոր դեպքում, բոլոր եվրոպական կենտրոնները, և ապա անցնել Հյուսիսային Ամերիկա: Կարծում եմ, որ հայկական գաղութներում կարող կլինեմ տալ մի շարք զեկուցներ Հայաստանի կուլտուրական կյանքի և մասնավորապես արդի գրականության մասին: Իմ այս դիմումով շտապելուս պատճառներից մեկն էլ այն է, որ, եթե հնարավոր համարվի գնալս՝ ես հիմիկվանից կզբաղվեմ նյութեր հավաքելով (թվական և այլ տվյալներ Հայաստանի կրթական, շինարարական և այլ կողմերի մասին)– նյութեր, որ կարող են օգտակար լինել իմ հիշյալ զեկուցներիս համար:

Եթե ինձ արտասահման գնալ չհաջողվի – մտադրություն ունեմ սեպտեմբերի սկզբին վերադառնալ Մոսկվա և վերջնականապես հաստատվել այնտեղ՝ հույս ունենալով, որ մեր Կենտկոմը կամ Նարկոմպրոսը՝ որևէ աշխատանք կտան Հայաստանի Պետհրատի Մոսկվայի բաժանմունքում, կամ այլ հիմնարկում» (6, 408):

Այս դիմումի պատասխանը ստացել էր, անշուշտ, Թիֆլիս հասնելու առաջին օրերին, և ահա՛, սեպտեմբերի 10–13–ին «վերջացնելով գործերը», ասել է՝ ձեռք բերելով անհրաժեշտ «թղթերն» ու ստանալով ճանապարհորդության համար

---

[6] Մի կողմ թողած նախկին տարակարծությունները, բանաստեղծի «Պոեմների» ժողովածուի «Եղիշե Չարենցը և նրա պոեմները» վերնագրով առաջաբանում Մակինցյանը գրում է նաև. «Ազգային նեղ սահմաններից դուրս գալու և ավելի լայն ժողովրդական զանգվածների, անգամ համաշխարհային մասշտաբով իրականությունն ընդգրկելու փորձը – մեր գրականության մեջ անօրինակ այդ փորձը, նմանապես բնորոշ է Չարենցի համար»: Իսկ վերջում. «Ինչ նորանոր գրական արժեքներ է ստեղծագործելու ապագայում մեր երիտասարդ ու բեղմնավոր պոետը՝ գուշակել չենք ուզում, մի բան սակայն հաստատ է՝ նրա մինչ օրս արդեն արտադրած արժեքները պատվավոր տեղ են ապահովում նրա համար հայ պոեզիայի պառնասում»: Եղիշե Չարենց, Պոեմներ, 1923, Կ. Պոլիս, էջ 10, 11:

տրամադրվող գումարը՝ «2000 ռուբլի» (6, 412), սեպտեմբերի 13–ին կամ 14–ին մեկնում է Մոսկվա՝: Երևակայե՛ք=Վլ. Մայակովսկու հետ...

Ինչպես հայտնում էր ժամանակի Հայաստանի Կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանին,— արդեն իսկ սեպտեմբերի վերջին մտադիր էր ճանապարհվել արտասահման, այս մարշրուտով՝ Մոսկվա, Բեռլին, Փարիզ, Լոնդոն, Նյու–Յորք, 2–3 ամիս Ամերիկա, հետո հետ՝ Իսպանիա, Իտալիա, Պոլիս, Բաթում,— եթե միայն հաջողվեր ստանալ վիզա, որը միամտաբար կարծում էր, թե.«կախված է Սահակից», ասել է Մոսկվայում Հայաստանի ներկայացուցիչ Ս. Տեր–Գաբրիելյանից: Ավելին. հույս ուներ, «հնարավորություն կունենա գլուխ բերելու» (6, 410) անգամ «Երկիր Նաիրի» հրատարակելը Ամերիկայում, որի համար Հովհաննիսյանին խնդրում է գրել առաջաբան, ինքն էլ իր հերթին «խոստանում է» կատարել «ամենախոշոր շտկումը».— դա պ. Մարուքեի պատմությունն է. վեպի I –ին մասում նա գավառացի հարբեցող վարժապետ է, ծեծում է երեխաներին, և այլն, II–րդ մասում – Դաշնակցության անպրինցիպ հակառակորդ, III–ում – բոլշևիկ... ես հիմնովին կսրբագրեմ վեպս, կանեմ մի շարք կրճատումներ, կավելացնեմ մի շարք հատվածներ՝ ավելի ուռուցիկ դարձնելու համար բոլշևիկների արածները...» (6, 411)[5]:

Եվ սակայն, սպասվում էր հուսախաբություն–հուսախաբության հետևից. վիզա ստանալու հարցերը Մոսկվայում (այն էլ գրեթե ապարդյուն) ձգձգվում են շուրջ մեկ ամիս: Ջղագրգիռ օրեր, շաբաթներ, «վիզա տալու ստորածային իրավունք» ունեցողների հետ անախորժ վեճեր–խոսակցություններ: Առավել տհաճ, արգահատելի լրագրային հաղորդագրություններ, քրդական պարտիզանական ընդհարումներ... «Известия», «Правда»... Չիչերին, Անգլիա... Ռուս–թուրքական «ամրակուռ բարեկամություն»՝ ընդդեմ եվրոպական համերաշխության:

Բայց կողքին Արփենիկն էր, «Գիժ Արփիկը»՝ Պ. Սևակի հայտնի բանաստեղծության տրամաբանությամբ. որքանով այդօրինակ բնատուր նախադրյալով միայն կարելի էր այդպես սիրել ու նվիրաբերվել Չարենցին, լինել նրա «անտակ ցավի» ու «անհատ սիրո» լծակիցը: Կողքին էին հարազատ մարդիկ Մաղմանյան և Խաչատրյան եղբայրները[9], Հալաբյան, Կ. Միքայելյան, Ստուդիայի անձնակազմը տաղանդավոր երիտասարդներով: Եվ հասկանալի է, նույն եռանդով բանաս-

---

[7] 1924–ի Չարենցի այս բացակայության միջոցին Վլ. Մայակովսկուց հետո Թիֆլիս է այցելել Ս. Եսենինը: Հայտնի է առաջին իսկ օրերի հանդիպումը Տ. Տաբիձեի հետ, որից, անշուշտ, բարեկամական շատ տեղեկություններ է քաղել Չարենցից: Կարծում եմ նրա միջոցով էլ թերթել է «Կապկաղը»՝ «Սև մարդու» պատկերով: Ըստ այդմ առաջիկայում առանձնակի անդրադառնալու անհրաժեշտություն՝ Եսենինի «Սև մարդը» մեկնաբանելիս և առհասարակ:

[8] Իր փիրարկումները, դժգոհությունը կամ սպառնալիքները Չարենցը հաճախ արտահայտում էր նման «արձանագրումներով»: Հիշեցնենք. այս պ. Մարուքեի հետ Չարենցը 1920–1921–ին աշխատել է Աշոտ Հովհաննիսյանի գլխավորած Լուսժողկոմատում. երևի թե ակնարկվում են նաև այդ օրերին վերաբերող «արածներ»:

[9] Այնպես որ պատահական չէր տարիներ անց «Պեպո» կինոնկարի «Դամբը ձեռքին...» հանրահայտ երգի առեղծման Չարենց–Արամ Խաչատրյան համագործակցությունը:

տեղծը շարունակում էր մասնակցել «Պեգոի» բեմադրության նախապատրաստությանն ու նախափորձերին... ուրեմն և հոգեպարար զրույցներ Ռ. Սիմոնովի, Գ. Յակուլովի հետ. թատերական և կինո արվեստների շուրջը, քանի որ այլևս անկարելի է պատկերացնել նրանց ընթացքը՝ առանց օգտվելու միմյանցից. ինչպես և լույսի ու լուսավորության խաղ խաղադարձումների շուրջը, որոնց կրակն—երևակայական ցոլացումների տեսողությամբ ու իմացությամբ, այնպես օժտված էր Յակուլովը... Ի վերջո Եվրոպա «շրջագայության» մեկնող Չարենցը կարիք ուներ Եվրոպա տեսած Կարեն Միքայելյանի, Սիմոնովի, Յակուլովի փորձին ու փորձառությանը, ամե՛ն—ամե՛ն բնույթի տեղեկության, և կասկած չի կարող լինել, ստացել է լիուլի: Անշուշտ, նման տարաբնույթ տեղեկություններ էր հավաքում սկսած Երևանից. հատկապես Ամերիկայի մասին.առաջինը Թոթովենցի հետ այսպես ասած՝ հարց ու փորձից, զրույցներից[10]. նաև այն առումով, թե ինչ ճանապարհով կարող է այնտեղ հրատարակել «Երկիր Նաիրին», որով կենսականորեն շահագրգռված էր անկասկած Թոթովենցը. Հասկանալի է, մասնավորապես 1918—ի գարնանը Էրզրումի ճակատում զորավար Անդրանիկին վիճակված ծանր փորձությունների շահախնդրությամբ, որոնց Չարենցը անդրադարձել է վեպի երրորդ մասում: Բայց... գուցե թե հնարավոր լիներ և հանդիպել Արմենուհուն...

Գուրգեն Մահարու հետ... Մահարու գրչով

· *Բայց իսկապես որ չկա չարիք, առանց բարիքի: Թե ինչպիսի «բարիք» կլիներ բանաստեղծի Գերմանիայի վրայով Եվրոպա գնալը, ինչպես և հասնելը Ամերիկա,— դժվար է ասել: Բայց Մոսկվայից «հետ Թիֆլիս» դարձը և ամսից ավելի այնտեղ լինելը՝ նշանավոր է:* **Նշանավոր է Չարենց—Մահարի անեղծ մտերմության հիմնավոր հաստատումով.** *գրապատմական պատճառ—հետևանքային այնպիսի ընթացքով ու եղելություններով, որոնց արժեքը անգնահատելի է: Թեկուզ միայն այն առումով, որ հակառակ պարագայում զրկված կլինեինք «Չարենց—նամեում» Մահարու ներկայացրած Չարենցին, իրեն Մահարուն, Մյասնիկյանին, Մակինցյանին... վերաբերող այն գրավիչ—սրամիտ, բազմերանգ—բազմի-*

---

[10] 1924—ի սեպտեմբերի կեսերից— հոկտեմբերի կեսը Մոսկվայում անցկացրած Չարենցի կյանքի օրերին վերաբերող մեր ունեցած միակ վկայությունը «Պոլիս, 8 հունվարի, 1925 թիվ» տարեթվով Ալ. Մյասնիկյանին գրած նամակի տողերն են. «... Հենց այդ վիզաներն էին, որ ինձ խայտառակեցին.ես նախ գնացի Մոսկվա, մի ամիս մնալուց հետո—հետ Թիֆլիս, ապա այնտեղ 1 ամսից ավելի...» (6, 412):

Անկասկած «վիզաներ շնորհող» և մյուս պաշտոնական ատյանների արխիվներում, ինչպես և հայ մյուս գործիչների, այդ թվում Ռ. Սիմոնովի, Գ. Յակուլովի անձնական և այլ արխիվային ֆոնդերում (բացառված չեն հարազատները, այլազգի բարեկամներ և ծանոթներ),— պահպանվում են բազմապիսի նյութեր, վկայություններ, վավերաթղթեր, պատառիկներ, մասունքներ: Իհարկե, ոչ միայն Չարենցին առնչվող, որոնց որոնելը և Հայաստան փոխադրելը տառացիորեն անհետաձգելի է: Սա վերաբերում է նաև Մ. Շահինյանի և Հ. Խաչատրյանի արխիվներին:

մաստ դրվագներից, որոնցից պարզապես դժվարանում ես պոկվել–զրկվել ինքնաբուխ հիացումից:

Սկսած անակնկալ, ահա՛ այս, հանդիպումից. «1924 թիվ: Թիֆլիսյան պայծառ աշուն: Երևանյան հրապարակ:— Նոր թե՛րթ, «Заря», «Մարտակո՛չ»...Տվեք մի «Մարտակոչ»: Ծանոթ ձայն էր: Նայեցի: Նայեց հանկարծակիի եկած:— Վա՞յ, իսկ ես կարծում էի Մոսկվայումն ես:

— Մինչև Ռոստով հասա:

— Այնտեղ էլ թերթում կարդացիր, որ քեզ հեռացրել են ասոցիացիայից, չհամբերեցիր ու հե՞տ դարձար:

Բթամատը դրեց ճկույթի եղունգին.— Էսքան չմտածես[11]: Գնանք Պաոլո Մակինցյանի տուն: Ծանո՞թ ես: Գնանք, կծանոթացնեմ: Պայծառ մարդ է Պաոլոն» (ՀԵԶԺ, 1, 163):

Բաժանվել էին Երևանում. «Տիտանիկի»՝ «— Լավ տողեր կան, բայց գիրքը հում է: Беда с тобой,— գնահատականով ու գուշակությամբ, ապա հրաժեշտով Արփենիկի հետ ու Չարենցի՝ ի լրումն «Տիտանիկից» մտաբերած այս տողով. «... Ու անունս որպես փուշ պիտի թողնեմ քո փոշում...» (ՉՆ, 36)[12]:

Հիմա էլ այսպիսի հանդիպում: Արտաքնապես սովորական, ըստ՝ «Ամենապոեմին» արձագանքող մահարիական արտահայտման կերպի, որը, սակայն, ներսում թաքցնում է մարդկային ոչ թեթև դրամա: Այսպիսին. «Տիտանիկին» հետևել էր (թերևս, շատը Չարենցի գնահատականի պատճառով) Մահարու վտարվելը պրոլետգրողների Ասոցիացիայից՝ Ն. Զարյանի և Վ. Ալազանի «Մենք քեզ արտաքսեցինք» թայֆայական նախանձոտ, թունոտ քինոտ «Ծիլերի տակ»... և հիմա թափառում էր քաղաքից–քաղաք:

Նույն այս կերպով, բառացիորեն դրամատուրգիական կուռ–հակիրճ մտածողությամբ ու դրվագումով էլ շարունակվում են արտաքնապես «սովորական», խորքում դրամատիկ ծանր լիցքով տրոփող–շարադասվող պատումներ. քիչ է ասել խտացնելով մի ամբողջ ժամանակաշրջանի պատմական մտածողություն, և խստորեն դաս–դասված կարգով Մահարու դրամային այժմ էլ հաջորդում է Մակինցյանի (և ոչ միայն նրա) մարդկային առանձնակի դրաման՝ պատմական ժամանակների միևնույն ողբերգական դրամայի խառնարանում: Ահա այսպիսի շարավոր շարադասությամբ, որի թելադրանքով նախորդ դրվագի վերջում Չարենցի մատուցած՝ **«Պայծառ մարդ է Պաոլոն»**, *այս դրվագի սեմին արդեն ներկայացնում է Մահարին. «Պայծառ մարդ է Պաոլոն: Սլացիկ՝ բարդու նման, մազաղալթե դեմքով[13], սև, երկար թարթիչներով: Խոսեցին Տերյանի մասին:— Բե՛ր, կարդանք Տերյանի*

---

[11] Բուն ժողովրդից առած հարազատ մարդու հանդստացնելու այս եղանակը սիրում էր և Պ. Սևակը՝ «Դարդ չանես» դարձվածի ուղեկցությամբ...

[12] Այսուհետ՝ Գ. Մահարու «Չարենց–նամեից» քաղվածների էջերը բնագրում:

[13] Իմ տպավորությամբ (ազուլեցի է եղել և իմ հոր սրբության–սրբոցը, իմ լուսահոգի Վարդուհի տատը)–ագուլեցի աղամարդիկ ու կանայք բոլորն էլ ունեին նույն այդ մազաղաթյա դեղնա–դալուկ դիմագույնը...

նամակները:— Չի՛ կարելի: Գանգատվեց երեխայի նման:— Մի քանի հարյուր նամակ ունի Տերյանից, չի կարդում: Կարդա՛ գոնե մեկը:— Չի՛ կարելի:

Տխրեց: Ելք փնտրեց: «Գտավ»: Գնա՛նք **«Սիմպատիա»** *(էջ 37):*

Պարզվում է, ինչ խոսք, նաև «Պոեմներին» կցված Մակինցյանի առաջաբանից հետո, խորթության սառույցը նրանց միջև հալել է իսպառ: Մոռացության անդարձ գիրկն են նետվել կուտակված դառնությունը՝ սկզբում Կարսի 1921-ի կոնֆերանսին որպես պատվիրակ նրա մասնակցության համար, ապա դժգոհությունները «Երեքի դեկլարացիայի», «Պոեզոզուռնայի» ու «Ռոմանսի» շուրջը եղած բանավեճերից: Եվ հաշտեցրել-վերին հարազատությամբ մտերմացրել է ինքը Տերյանը... Նաիրյան մորմոքը՝ բազմապատկված Տերյանի հարյուրավոր, մանավանդ կյանքի վերջին տարիներին գրած նամակների սրտակեղեք մորմոքներից ու ծառացումներից''... Մտերմացրել է պոլսահայության թշվառությունը, որ աչքով տեսել-ճաշակել էր Մակինցյանը՝ շուրջ մեկուկես տարի լինելով Պոլսում, և հիմա հորդոր-խնդրանքներով պատմում էր Չարենցին: Եվ այսպես երկու ամսից ավելի նորեն նորոգվել է խոսակցությունը հայրենիքի ու հայության անվերջանալի հոգսերից ու ցավերից՝ մեկը կամ մյուսը, պտտվել մշակութային տարբեր-տարբեր հարցերի ու դեմքերի շուրջը. Տերյանից Մյասնիկյան, Խանզադյան (Ցոլին), Միքայելյան, Յակուլով... «Поэзия Армении», Բրյուսով ամուսիններ... Հուշեր Լազարյան ճեմարանից, Երևանում Տերյանի հետ անցկացրած օրեր... Ի վերջո զրույցները դարձել են Կարսի կոնֆերանսին, և ամեն կերպ արդարանալով, թե որքան են ջանացել, որպեսզի Հայաստանին մնա հայոց հնօրյա մայրաքաղաք Անին՝ իր ավերակներով, և նույնիսկ դա չի հաջողվել... չե՛ն թողել: Դարձել են Կարինյանին, Հայկունուն, նրա և Վշտունու «աշխարհին»... Օրեր-գիշերներ: Մակինցյանենց տանը, Վորոնցովյան կամուրջից ոչ հեռու «Փրանսիա» հյուրանոցում, երբեմն էլ «Կիրովի տանը», որտեղ նույնպես Չարենցը սենյակ ուներ. բայց ազատ-անկաշկանդ ավելու մղումով սիրում էր «Փրանսիայի» նման «էժան հյուրանոցներ», ինչպես և «Սիմպատիա» պանդոկ-ռեստորանի» պես վայրեր... Այնպես որ հազիվ թե Մակինցյանը կարողանար չընդառաջել նրա «դանդաղներին» և օրերից մի օր ցույց չտալ Տերյանի ձեռագրերից: Անշուշտ, բացառյալ Կովկասյան ճակատից զորաբանակի հեռանալ, Բրեստի հաշտություն, Լենին, Ստալին, Տրոցկի... շոշափումներ... դրանք կարելի չէր կարդալ ապարյուն-անհավասարակշիռ երիտասարդներին...

Ներառյալ բազմերանգ և բազմիմաստ, չարավոր սկզբունքով առաջինից սերտաճած, բայց և Մահարու թրթռուն դրչով Չարենցի հոգու և բնավորության թռիչքներին համազոր արամադրությունների չորսից-հինգ տարբերակներով եբանդավորված սույն դրվագը.— Ճանապարհին չէր խոսում: Բժի սակ Տերյան արտասանեց.

'' Ի վերջո այսպես քանի սերունդ «պանդատվելով» սպասենք Տերյանի բաց ու փակ նամակներին, իր ապրած ահավոր ողբերգության «փակ» հանգույցների հայտնությանը...

... Եվ սնաուակ իմ եղբոր հետ, ցանկապատի տակ,
Կուզեի ես մեռնել անբասիր և անհիշատակ:

Նայեց իր ուսերից վեր դեպի Մակինցյանը:— Արտասահմանից նամակ չեմ գրի, չսպասես:— Ինչո՞ւ,— զարմացած կռացավ Մակինցյանը: Չպատասխանեց:

— Ես քեզ չասացի՞... ախր մի քանի օրից արտասահման եմ մեկնում: Ալեքսանդր Ֆյոդորովիչ Մյասնիկյանն է ուղարկում, բա՞ս» (էջ 37–38):

Եվ արտաքնապես դրչի խաղ թվացող այս տողերը բովանդակում են քանի կողմանի, քանի դրամատիկ ճակատագիր՝ հավաքական ու առանձին–առանձին. Տերյանից՝ Չարենց–Մակինցյան–Սահարի–Մյասնիկյան ձգվող «անբասիր ու անհիշատակ» մեռնելու հավաքական հոգնաբեկ հոգեբանություն. դրա ներսում «չար աշխարհի խավար» ժամանակներում անգամ Տերյանի նամակները կարդալու երկյուղ, բայց և չարենցյան չարաճճի–դյուրագրգիռ վարք, բայց և մյասնիկյանական առնացի, «պնդակազմ, հանգիստ ու ինքնավստահ» գործչի դիմապատկեր՝ միանգամից երեք վերաբերմունքով... երեքի համախոհ դաշնությամբ:

Այս ամենը բազմերանգ–բազմիմաստ նոր տարբերակով մի վերջին անգամ էլ ներկայանում է Մակինցյանին առնչվող հիշարժան «Սիմպատիա» «պադվալ–ռեստորանի» մթնոլորտով, որը Չարենցի հետ ու առանց Չարենցի շարունակում էր մնալ հայ մտավորականության = այլև Եսենինի ու Մայակովսկու հավաքատեղին. «Սիմպատիա» պադվալ–ռեստորան:— Ներքնատուն: Պատերի վրա նկարված յուղանկարներ, Շեքսպիր ու Րաֆֆի, Տոլստոյ ու Ադամյան», (էջ 38)– միջավայրային հնօրյա–ավանդական՝ սպառիչ այժքանը[*]. և մանրախոսությամբ՝ Պ. Սևակի ասած «հեքիաթանալականության» երդվյալ թշնամի Մահարին, անցնում է մարդկային մթնոլորտին. մի անասելի նրբությամբ վերակոչել–վերարտադրելով գինովցած Չարենցի ու Մակինցյանի հոգու հուզական–դառնաղի փլվածքները... ապա և յուրօրինակ հառնում–ծառացումները.

«Տրամադրությունը բարձրացավ (ասել է՝ «Բեննեդիկտինից» հետո Չարենցի՝ Ալ. Զ.):— Շուտ–շուտ կգրես Պաոլո ջան:— Անպայման: Դու էլ գրիր:— Կգրեմ:— Հիշից. Բայց դու իմ նամակները փակի տակ մի պահի: Ով ուզում է՝ թող կարդա: Սրտանց ծիծաղեց:— Սույն այս բաժակով թույլ տվեք մեծարելու...» (էջ 38),— և Չարենցին քիչ թե շատ իմացողը պետք է գիտենար «մեծարվող» հասցեատերերին... հենց նրանց, որոնց սարսափից «փակի տակ» էին Տերյանի նամակները...

Հակիրճ ու արագաթռիչ, թաքստոցներով լի վարքագրական մի արվեստ է սա, որով անձնականությունից–անձնականություն փոխադարձվում–բյուրեղանում են մարդկային վարք ու վարքագծեր, ընդհանրական էական և անձնական ինք-

---

[*] Ազատ Այվազյանի «Թիֆլիսի ցուցանակները» պատմվածքում այդ անունների կողքին հիշատակված ենք գտնում Կոպերնիկոս ու Թամար թագուհի. և սակայն բոլորն էլ «դարդիմաններ» այդ «Սիմպատիա» հավաքատեղիում... անդառնալիորեն անցած ավաղի տակ... Կեցցե՜ն...

նորինակ հատկանիշներով՝ ժամանակների էության մութ ու լուսավոր խառնուրդ–խառնարաններով: Այնպես որ առանց Չարենցի կյանքի Թիֆլիսյան այս օրերի (և առհասարակ մյուս օրերի) մահարիական իմաստավորված–բեռնավորված մտաբերումների՝ տառացիորեն բոլորիս համար շատ Թերի կլիներ. երկուսի էլ մարդկային խառնվածքը, տրամադրությունների, զգացողությունների, խոհերի... ամե՛ն–ամե՛ն ինչի դրսևորման կերպը, մարդկային հարաբերությունների փոխադարձման ու փոխակերպությունների տոնայնությունը:

Եվ որ նույնպես կարևոր է, պակաս կլիներ ոչ միայն «Սիմպատիա» պադվալ–ռեստորանի դրվագով, այլև դրա կողքին Թիֆլիսյան հինավուրց, այժմ անդարձ հատակված սրբավայր Խոջիվանքի գերեզմանատան, Սայաթ–Նովայի գերեզմանի դրվագներով. «Կառք վերցրեց–քշի՛ր Հավլաբար, Խոջիվանք:— Երևանում հայկական պանթեոն պիտի սարքել, նշանավոր հայերի աճյունները տեղափոխել այնտեղ: Տերյանին էլ հարկավոր է Օրենբուրգից հանել: Ի՞նչ է անում էնտեղ մենակ[16]*:*

— Ոչ մի տեղ ես էնպես ինձ հանգիստ չեմ զգում, որքան գերեզմանոցում: Մի վերին իմաստություն է իջնում վրաս: Մտածում եմ, ո՛ր վերջը էս է, ու մի տեսակ խաղաղվում եմ:

— Ինչո՞ւ համար գերեզմանատանը չես կարող բարձր խոսել, ա՛յ, ես և դու համարյա շշուկով ենք խոսում. Թումանյանի՞ց ենք վախենում, թե՞ Րաֆֆուց: Փորձիր մի գոռալ: Հազար Թուման տան՝ ես չեմ կարա գոռալ... Այ տղա, ո՞վ հնարեց էս մահը: Շրջեց ամբողջ ժամանակ գլխաբաց» (էջ 40–41):

Եվ ապա Սայաթ–Նովային սեպվող դրվագը. «... Սայաթ–Նովայի գերեզմանի մոտ:— Ի՞նչ պոետ, ի՞նչ աշուղ... մեծությո՛ւն է, մի զարմանալի երևույթ:

Հիդս խոսի, մի մնա խռովի պես,
Դարդս տվիր, դյամիս տարար ծովի պես...
Կմեռնիմ, չիս տեսնի Սայաթ–Նովի պես...

— Դա՛... համ գրել է, համ եղանակ սարքել, համ երգել, համ նվագել: Ուղիղտեղնի քանքար է եղել: Գնա՛նք, **«կմեռնիմ, չիս տեսնի Սայաթ–Նովի պես...»:** *Ձենք էլ տեսնի» (էջ 39): Իսկ դրա կողքին՝ «— Էսօր գնանք գետուղեն քարշ գանք: Իսկ վաղը ժամը 11–ին ժամադրվել եմ Ալեքսանդր Ֆյոդորովիչի հետ: Կդաս, միասին գնանք: Դու ծանո՞թ ես նրա հետ:— Ծանոթ եմ:— Մե՛ծ մարդ է» (էջ 39):*

1914–ի աշնանից հարազատների, ընկերների, Արփենիկի հետ կամ մենակ քանի՛–քանի՛ անգամ ապրված–ունեցած պիտի լինի այս զգացողությունները, տրամադրությունները՝ Խոջիվանքում, ս. Գևորգ եկեղեցու բակում: Ամեն անգամ մտորումների–խոհերի–ապրումների–հուշերի տարբեր շաղախով, բայց և հենց այս, Մահարու մտաբերումով սերունդներին ավանդված միջուկով. **Երևանում հայկական պանթեոն ունենալու երազանքից մինչև օտար ափերում մե-**

[16] Ավելացնենք. ի՞նչ են անում Րաֆֆին, Թումանյանը, Մյասնիկյանը...

նավոր գերեզման գտած–չգտած Հայոց մեծերի համար մորմոք՝ պարուրված մահվան խորհրդներից անտրոհելի զգածածին–միստիկ զգայություններով... Եվ սակայն այսքանով երբեք էլ չի սպառվում քաղված տողերի ներքին տարողությունը. ընդհանրական այս ամենը մտապատկերների արագընթաց հոսքով տողից–տող անձնաբաշխվում են իրենից Չարենց, Չարենցից և իրենից՝ Տերյան, Թումանյան, Րաֆֆի, Սայաթ–Նովա... այլև Մյասնիկյան:

Պատկերի ամբողջական համակարգում հերթագայող բառերը բազմիմաստ, բազմալարի հնչեղությամբ օժտելու կարողություն է սա, որ Աստծու մաքրա–մաքուր պարգևն է հազվագյուտ ընտրյալների: Իրապես բանաստեղծական ամենաարդիական մտածողությանն ինքնահատուկ արտահայտչական թռիչքավոր այլացումների արվեստ, որ հրաշագործ Մահարին վարպետորեն իրացնում է արձակում, հուշագրության մեջ... ներառյալ շարքային նոթերը: Նույն եղանակով, որ դժվար չէ որսալ հենց, ասենք, քաղված վերջին դրվագում, որտեղ Մյասնիկյանին առնչվող առաջին տողից աղեղ կապելով վերջինի հետ՝ Սայաթ–Նովայի տողերի մի տեսակ հարաճուն հենքով դառնում է միասնական շրջանակ թե՛ Չարենցի, թե՛ Մահարու վերապրածի ու վարքի: Այդ շրջանակի չափումներով էլ ներկայանում է Մյասնիկյանի անձնականության ու ճակատագրի տարբերակը:

Այս դեպքում ժամանակների տևական–հավիտենական զուգահեռականների վրա, որին հետևում է նույն երեքի էլ անձնականության նախորդին կամրջող, առօրեական, բայց և իրական–հասարակական տարբերակը,— հարանույն հակիրճ–հավաք, ավելորդաբանությունից զերծ այսպիսի հնչեցումներով. «Երևանյան հրապարակ: Ժամը 11–ը:— Ուշացանք, ո՞վ հնարեց էդ «Բեննդիկտին»–ը: Անդրևիկլումի դռների մոտ, երբ մենք ուզում էինք ներս խուժել, իր ամբողջ հասակով, մոնումենտի նման կանգնեց Ալեքսանդր Ֆյոդորովիչ Մյասնիկյանը: Ձեռք տվեց:— Ինչո՞ւ ուշացար: Ծխամորճից ծուխ էր բարձրանում, որպեսզի նա չզգա «Բեննդիկտին»–ը: Զգաց: Աչքը կկոցեց: Ժպտա՞ց:— Վաղը: Նույն ժամին: Գնաց, որպես քայլող մոնումենտ:— Ինձ էլ կթաղի, քեզ էլ, ինքը կմնա էսպես մեծ ու կուռ[17]: Զարմանալի ամուր մարդ է, թե՛ բնավորությամբ, թե՛ ֆիզիկապես» (էջ 42):

---

[17] Ալ. Մյասնիկյանի մահվան օրերին «Հանդիպումներ» խորագրով հուշերում Մահարին գրել է. «... Երկրորդ անգամ հանդիպեցի 24 թվի աշնանը»:

Չարենցի հետ Զակկրայկոմի ճանապարհը բռնեցինք.— Նա գնում էր իր արտասահման գնալու մասին իմանալու, ես հենց էնպես, «կապ պահպանելու» համար:

Հենց դռան վրա, դեռ ներս չմտած, մենք դեմ առանք նրան՝ պորտֆելը թևի տակ, զինվորական շորերով. այս անգամ նա ինձ ավելի թարմ թվաց և հաղթանդամ:

Բնորոշը այս հապճեպ հանդիպման. երբ նրանից բաժանվեցինք, Չարենցը փիլիսոփայական տոնով.— Գիտե՞ս ինչ, էս մարդը մեր մասին էլ կգրի, մեր երեխաների մասին էլ կգրի, հլա ինքը կմնա. առողջ ու զորավոր մարդ է՝ թե ֆիզիկապես և թե բնավորությամբ:

Դա՛ա՛ա՛... հառաչեցինք մենք հետո, աչքի տակով չափելով միմյանց... դիմացկունությունը»:

Ընտրովի, բազմանշանակ են՝ «... առողջ ու զորավոր մարդ է՝ թե ֆիզիկապես և թե բնավորությամբ». ինչպես և հուշերի վերջին՝ «... Ընկնում են նրանք, իրենց պարտականության ճանապարհին, երեկ Շահումյանը, այսօր Մյասնիկյանը, վաղը ո՞վ գիտի ո՞վ...» տողերը. Մուրճ, 1925, 28 մարտի:

Տարակարգվող փոխադարձումներով՝ գործողության, խոսքի, դիմախաղի, աչք կկոցելու (նյարդայնության միակ չնշված արտաքին նշանը՝ ըստ Մաճարու Մյասնիկյանի պահվածքում), վերաբերմունքի, հոգեկան խլրտումի... և այս դրվագով էլ, ահա՛, մատուցվում է բնույթը, էությունը մի հասարակության կամ «իրավակարգի», որում խեղված է ամենակարևորը՝ ապրել–մեռնելու օրինաչափությունը. հոշոտվում են հենց Մյասնիկյանի պես կարող անհատականություններ... և ինչու չէ. դարերով կողք–կողքի ապրած, այո՛, քրիստոնյա եղբայրական ժողովրդներից մեկի գերեզմանատունը միանգամայն անմեղ տեղը հատակված... և այդ հրեշավոր բարբարոսության համար ներողություն էլ չեն խնդրում...

Կասկած չի կարող լինել, որ արդեն իսկ այդ օրերից Չարենցի ու Մակինցյանի կողքին՝ իր գերադրական զգացողությամբ, խուզարկու մտքով ու խոհականությամբ Մահարին տեղյակ էր «փակի տակ» եղած կամ պահվող շատ ու շատ իրողությունների ու գաղտնիքների, և որ հենց այդ, առավել ևս «Չարենց–նամե» շարադրելու ժամանակ համոզված էր, որ մոտալուտ է «մեծարվող» «մեծամեծների» և նրանց ստեղծած իրավակարգի վերջն ու վախճանը...

Ուստի. հաստատապես կարելի է ասել, որ Անտոնինա Մահարու հսկումով պահպանվող գզրոցներում անկարելի է թե չլինեն նաև Չարենց–Եսենին, Չարենց–Մայակովսկի փոխհարաբերություններին անդրադարձող էջեր: Եվ ոչ միայն...

* * *

Վերը շարադրված ամենը վերաբերում է 1924–ի նոյեմբերի 19–ին նախորդած օրերին:

Վերջապես՝ նոյեմբերի 17–ին Թիֆլիսում Չարենցը ստանում է արտասահման գնալու անցագիր և նոյեմբերի 19–ին ճանապարհվում Բաթում. կրկնում ենք՝ «2000 ռուբլուց մնացած 1/3–ով»: Ծախսել էր, ուրեմն, գնալ–դառնալով մի ամսում Մոսկվայում՝ Արփենիկի հետ և նրա անհրաժեշտ կարիքների համար, ծախսել էր մյուս մասը մի ամսից ավելի Թիֆլիսում: Իմանալով բնավորությունը և չափ չճանաչող առատաձեռնությունը, գերադրական մարդամոտ լինելն ու պատվախնդրությունը, ինչպես և առօք–փառօք սեղան նստելու սերն ու սովորությունը,— համարձակվում եմ ասել, թե գիտեմ, այդ մասի մեծ բաժինը ծախսել է Մահարու ու Մակինցյանի հետ: Վերջինը՝ վերադառնալով Պոլսից, արդեն քանի ամիս աշխատանք չուներ. դե՛, Մահարին էլ թափառական, տարության մեջ՝ մե՛կ օր կուշտ, մե՛կ օր քաղցած: Գիտեմ նաև, որ «Սիմպատիա» պանդոկ — ռեստորանում ավելի հաճախ եղել է Մահարու հետ, իր պես կարգին բնական անբռնազբոս պահվածքով, ուտել — խմելով, ասել — լսելով զրուցել: Նման օրերից մի օր էլ սեղանի շուրջը, ճանապարհին, թե «Ֆրանսիա» հյուրանոցում լսել է Մահարու կյանքի պատմությունը՝ 5 — 6 տարեկան Գուրգենին իրենց հարևանի տղա Ծերունի հայանտը. «Բո խոր քեռիդ սպանեց... հերդ արմենական էր, քեռիդ՝ դաշնակ...» հոգեցունց հանգույցով[18]:

[18] Տե՛ս Ալ. Զաքարյան, Մեր ապրուտական, մեր հրաշալիքը Մահարին... ՀՀ, 1993, 31 հուլիսի:

1920 – ին հյուսված «Պրինցեսա մահը» և ապա 1923 – ին վերաբերող Ս. Եսենինի «Ընկերների» փոխադրությունը արդեն իսկ հուշարձան են մանուկների, նրանց վշտերի հանդեպ չարենցյան գերադրական պաշտամունքի ու ներբազգացության: Ուրեմն և առանց առանձին դուշակումների, ընդունենք և հասկանանք, թե որպիսի սրտառուչ արձագանքով է բաժանել Մահարու տառապանքը, և այդ, այլև շատ օրեր ու շատ–շատ տարիներ անց քանի՛–քանի՛ տարբերակով է դարձել – «մեծարել» – այդ քեռի կոչվածին, այլև կուսակցություն կոչվածներին:

Իսկ հիմա էլ վրա էր հասել Մահարու հետ ծախսելու ժամը. շուրջ երկու օր նոյեմբերի 17–ի կեսից 19–ի կեսը. գերադրական առատաձեռնությամբ, տաղարանային շախով, վերահայերի ու կարսահայերի կոլորիտով... Եվ, ահա՛, Մահարին շարունակում է «թղթերը» ստանալուց հետո **Չարենցի Հրաժեշտը իր Հետ.** Հարափոփոխ – փոխանցիկ քանի հանգով, քանի դույնով, համ ու հոտով, անկաշկանդ ու «դիվանագիտական» երկդիմի վերապահումներով, անցումներով ու խաղերով. «... Ալեքսանդր Ֆյոդորովիչին հրաժեշտ տվի: Մնում է, (ծիծաղեց) որ քեզ...Հրաժեշտ տամ. Ղարսա շաշլիկ կերե՞լ ես, գնանք քեզ Ղարսա շաշլիկ հյուրասիրեմ»: Հաջորդում է հայերի Թիֆլիսի հնօրյա ծանոթ տեղանքի «սեղմագիրը», բայց որպիսի տարողությամբ... «Երևանյան հրապարակում, Թամամշևի «Քարվանսարա» կոչվածն[19] էր: Եռուն մի փեթակ,— խանութներ, ռեստորաններ, Լագիձեի լիմոնատ: Նէ՛պ: Գետնահարկում դուխան: Շիկացած ածուխների դեմ դառնում է մսով խլիկված շամփուրը: «Մանիր, մանիր իմ ճախարա՞կ» թե՞— «Պտտվիր, պտտվիր կարուսել...»[20]: Հերթի ենք կանգնում: Կենսական տարածությունը փոքր է, մարդաբաժինը՝ ոտոչ: «Վարպետը» ճկուն է, արագաշարժ: Տաշում է սուր դանակով. կարմրած միսը լավաշի վրա, մանրած կանաչ սոխով օծում, փաթաթում և պարզում հաճախորդին, հետո էլ... Մի թեյի բաժակ օղի:

— Երկու բաժին... ղարսեցի՞ ես, յարա՛ն...» (էջ 42–43):

Եվ խմում են «մին–մին բաժակ էլ...» ու չիկանում... «Եվ ո՞վ դասավորեց», ինարկե, ինքը, և դասավորում է այնպես, որ ղարսեցու «Ղարսա շաշլիկից» հետո ընկնում են «... մի «ֆայտոն», կառապանը՝ Ղարսեցի:

— Բան ջան, քշի՛ Մուշտայիդ...»: Ապա՝ Շեյթան – բազար, ապա՝ Դվորցովայա... «Ինչ–որ պայուսակ գնեց, սպիտակ վերնաշապիկներ, թանկարժեք փողկապներ. մի քանի տասնյակ տուփ ծխախոտ՝ որոնց վրա նկարված էր գորիլայի գլուխ և կոչվում էր... «Ջենտլմեն»:

— Ֆասոն պետք է պահել... որ չասեն բոլշևիկների բանաստեղծը ակլոր է... բա՞ս»: Եվ դարձյալ.

«— Բան ջան, Վարանցովի կամուրջ...: Կիրովի տուն: Ոչ չքեղ մի հյուրանոց,

---

[19] Թիֆլիսի պատվավոր քաղաքացի **Գաբրիել Թամամշյան**, որի միջոցներով քաղաքի Երևանյան հրապարակում (հետագայում Լենինի) **կառուցվել է առաջին թատրոնը Անդրկովկասում (բացումը՝** 1851–ի ապրիլին), ինչպես և այդ «Քարվանսարա» կոչվածը: Հետագայում հրդեհված...

[20] Դ. Ադյանի «Ծախսարակ» և Վ. Տերյանի «Կարուսել» բանաստեղծության տողերից:

ուր իջևանում են «պատասխանատուները»:— Ամեն մարդ չի կարող հատեղ ընկնել: Ալեքսանդր Ֆյոդորովիչը կարգադրեց» (էջ 43–44):

Եվ այսպես՝ անմեղ – միամիտ, արտաքնապես կցկտուր շարադրանք, բայց ընդերքում ծրարված–պահված պատմա–հասարակական, սոցիալ–քաղաքական որքա՜ն իրողությունների որքա՜ն շերտեր... Հայոց բախտի որպիսի ելևէջներով. Վորոնցով–Դաշկովի կամուրջից ...Կիրովի տուն... և ամենուրեք կրկներգի պես հնչող–ուղեկցող Ղա՛րս, Ղա՛րս... «Թե Կարինե Բոթանճյանին տեսնեք Ղարսի փողոցներում...»:

Եվ նորից. «Յարան, դու էսօր իմ փայտոնջին ես...» —...ուրեմն նոյեմբերի 18–ի ամբողջ օրը. հիմա էլ՝ «քշի «Օրիանտ»: Մի բանաստեղծություն գրեցի տարիներ առաջ, կիսատ մնաց: Առաջին երկու տողն եմ հիշում.

Ես այսօր հիվանդ եմ, հիվանդ,
Դագաղ է օթելը «Օրիանտ»...

— Տերյանակա՞ն է... մենք բոլորս էլ տերյանական ենք...(մաքերը քշեց ուրիշ ուղղությամբ): «Մենք բոլորս–բոլորս մանուկներ ենք որբ»: Մի ժամանակ էդպես է եղել: Հիմա հնչում է որպես չափազանցություն: Ինչո՞ւ որբ, Ալեքսանդր Ֆյոդորովիչ ունենք...» (էջ 44):

Իսկ այդ ե՞րբ է «Օրիանտը» եղել «դագաղ». ո՛չ Չարենցը կարող էր չիմանալ ու չասել, ո՞չ էլ Մահարին մոռանալ... 1921–ի կամ 1923–ի օրերին... և շարունակության հետ սերունդները պետք է որ **ընթեռնեն «դագաղի» պատմական բուն բովանդակությունը...**

Եվ այսպես՝ քշի՛ր, հա քշի՛ր. այս անգամ էլ «երկրորդական մի ռեստորան՝ «Մեֆիստո»[21]: Հայ մատուցողուհու մազերը շոյեց,— «Բուր ջան» ասեց, խորոված պատվիրեց... ներս մտավ ղարսեցի կառապանի հետ, Նատեցրեց, պատվեց...»: Իսկ վերջում. «— Բուր ջան, արի ստացի: Ես էլ քեզ՝ նվեր» (էջ 44–45): Ապա վերստին՝ – «Բշի՛ր, կառապան, քշիր արագ»... Էս տունը տեսնո՞ւմ ես... Ղարսում Արգար աղան թե՝ արի դուքան, գործ կա...

— Առ էս 500 չախուն, տար Թիֆլիս, ծախի, փողերը բե. տեղս նեղ է...

Եկա, էն տունն իջա, մի պուճուր սենյակ վարձեցի... Չախուները ծախեցի... Յարան, քշի Շեյթան–բազար (էջ 45): Ուստի հասկանալի է, որ ցույց է տվել այն օրհնված տունը, որտեղ հյուրվել են «Դանթեական», «Սոմա», «Ամբոխներ»...

Շեյթան – բազարում էլ՝ «մի կեղտոտ գարեջրատուն... նստեցինք: Ոչ թե ներսը: Պատշգամբո՛ւմ:

— Դե, բերել տուր հավլիքը...

---

[21] Անտիպ և չհավաքված երկերի համար կիսաքայքայված ինքնագրերը վերաքաղելիս– տեսքի բերելիս հանդիպել է և մի այսպիսի էջ, այսպես ասած՝ «Նաիրյան «Օվոդներ» շարքից, որի մասին խոսք կլինի տեղում...

«Հալիլիք» – հայնլիններ: Ասուլթը՝ «Պնսլո»–ից:

Թարմ ձուկ: Օղի: Գարեջուր...

Մենք նստել էինք գետնահարկում: Մեր գլխի վրա ճռնչում էր առաստաղը... ուշադրություն դարձրեց:

Մեկը պատուհանից ռուսերեն գոռաց.

— Հորեղբայր, ուտել եմ ուզում:

Կանչեց մատուցողին,— ի՞նչ բան է:

— Նախնական կալանքի տակ առնված անչափահաս հանցագործներ են, կացո՛...

...Ասես երկնքից: Դատարկ զամբյուղ: Աչքերը վառվեցին:

— Դե, հիմա որ՝ բերե՛լ տու հալիլեքը...

Մի տասնյակ վրացական հաց, խաշած միս, ձուկ, մի մեծ, եփած հավ, պանիր...

Ասես երկնքից պարանը քաշեցին... Աղմուկ ու ցնծություն:— Ինչ իմանաս, չելկաշներ ու գորկիներ չկա՞ն մեջները: Ի՞նչ իմանաս, ի՞նչ կդառնան...» (էջ 46–47):

Եվ այդպիսին է հարանուլն հոդածո, այլև քնարական քնքշագին վերաբերմունքը ինչպես հարազատ ժողովրդի հասարակ, անճար, բոլոր տեսակի կարոտյալների հանդեպ, այնպես էլ այլասիրությունը՝ ներառյալ հատակի ու փողոցի չելկաշներ[22] ու գորկիներ...

Եվ այսպես, մարդկային հոգևոր լեցունության մեկը մյուսից վսեմ դրվագներ. մեկ օրվա մեջ քանի՜ տարբերակով: Դրանց կողքին էլ ժամանակի հասարակական–քաղաքական աղտոտության անսքող մերկացում – այն էլ եռակի– քառակի ասելիքով ծանրաբեռնված՝ բառերի նմանօրինակ դինամիկ շուտասելիքով.

«Կառք նստելիս:— Քշի՛, զեմլյակ, Կիրովի տուն...

Զեմլյակը հետ է նայում ժպիտով:— Հասկացանք Աբգար աղի տղեն ես: Հանկարծակիի եկած ինձ է նայում,— որտեղի՞ց...

— Ինչի՞ կզարմանաս, օղուլ, չիդե՞ս որ հիմիկվա ֆայթոնջիներ չպիոն են... ականջս սուր է... *(ընդգծ.՝ Ալ. Զ):*

Եվ պարզություն մտցրեց խնդրում:

— Ես էլ էնորից չախուներ առել–ծախել եմ... չա՛տ...»

Քշիր կառապան, քշիր ձիերը արագ,[23]
Կռա՛ք, կռա՛ք–կռա՛ք... (էջ 47):

Ուրեմն և ասված է ամենակարևորը. **«— Ինչի՞ կզարմանաս, օղուլ, չիդե՞ս որ հիմիկվա ֆայտոնջիները չպիոն են... ականջս սուր է»:** *Եվ պար-*

[22] Մ. Գորկու համանուն պատմվածքի «Հատակի մարդը»:

[23] Հակա–նմանակ ռուսական հանրահայտ «Ямщик» երգի՝ «Не гони ямщик лошадей» («Մի՛ քշիր, կառապան, ձիերին») տողի:

զություն մայրից խնդրում: Իսկ վերջում՝ Աբովից բացի, այլև կարսյան պատանեկան օրերի հուշերը **«Երեք երգից»**, *միախառնված հուշագիրների մտաբերած–վկայած ռեալականի խորհրդանիշ «Կռո՛ւ–Կռո՛ւ»–ն.*

...Եվ կառապանն, օրորվելով դեռ երկար
Երգում էր իր օրերի երգը անգույն:
Գնում էինք: Ո՞ւր—չգիտեմ: Վերջ չկար:
Գնում էինք: Անխոս: Անձայն: Ու անքուն... (1, 11):

* * *

Իսկ ամենավերջում բուն հրաժեշտը նույնությամբ՝ առանց որևէ կրճատման.

Թիֆլիսի կայարանում.— Չէ՛, սրտառուչ ժամանակ անցկացրինք: Մեկ քանի օր հետո պտույտ մը պիտի ընեմ Պոլսո թաղերուն մեջ և քեզի պիտի հիշեմ[21]*:*

Զանգ: «Թիֆլիս–Բաթում»:
Տեղավորվեց, դուրս եկավ:
— Իսկ դու երկիր մեկնիր:
— Երկիր մեկնիր:— Ժպտաց:— Գուրգեն Մասլովին բարևիր: Մասլով, Հը՛մ:
ԺԹ
Երրորդ զանգ:
— Բարի: Շարժվեցինք: Պայծա՛ռ եղիր:
Գնացքը ցնցվեց: Գնացքը շարժվեց: Գնացքն անհետացավ:
Խաղաղ երեկոն՝ Թիֆլիսի վրա» (էջ 48):

Սովորական կամ գրականագիտական հաշվապահական լեզվով՝ այս հատվածները և առհասարակ ամբողջ Զն, կարելի է թե համարվեր **«բառերի ստույգ հաշվարկ» և հաշվարկողները, անշուշտ, կլինեին ակադեմիական նաղլասացներ կամ Դ. Դեմիրճյանի ասած՝ «բայերի սովով» տառապողներ...** *Տե՛րը յուրյանց հետ... Իրականում մեծատաղանդ գրողի աստվածատուր հրաշագործ արվեստ, գեղարվեստական լեզվամտածողության տրվածք, որ ի բնե, ի ծնե չունի և չի ենթադրում չեզոք բառ, բառերի անդեմ, նեյնիմային տափակ դրվածք կամ նստվածք ու կապակցություն: Դինամիկ անհատնելի շնչառությամբ հոսում են գրչի ծայրից բառերն ու հնչյունները՝ կրքոտ ու կորովի, երկիմաստ–բազմիմաստ բեռով, և բառը՝ բառին, տողը՝ տողին տողերի ներսից (ասելը՝ այն չէ) պարզապես խնայելով ամենքին ու սերունդներին, հածում ու թախծոտ ժպտում է աշխարհի ու ժամանակների մթնոլորտով հագեցած հոգևոր–խոհական լեցունությամբ. Ինքը Գուրգեն Մահարին... Գուրգեն Խանը...*

[21] Գնացքը Թիֆլիսից Բաթում էր մեկնում Մոսկվայի ժամանակով 4 անց 30–ին:

* * *

Եվ այս տողերում ամբարված է Թիֆլիսյան աշնանային այդ օրերին երկուստեք փոխադարձված «սրտառուչ» մտերմության, «սրտառուչ» բաժանումի մի ամբողջ դրամա: Թվում է, «Չարենց–Նամեի» դրվագներից ամենից տառապանքով գրվածը հենց սա է. մոռլի–գզածական, արթմնի ու երազներում բյուրավոր անգամ վերապրված բանտերում, աքսորավայրերում, խաղաղ օրերին. «Գնացքը ցնցվեց: Գնացքը շարժվեց: Գնացքը անհետացավ»... մի ամբողջ հավիտենություն... «Պայծա՛ռ եղիրի» ուղեկցությամբ: Նկատենք, որ «պայծառը» Չարենցի, ինչպես և Մահարու ամենասիրած ածական–մակդիրն էր՝ անշուշտ, սեփական ճակատագրի խորհրդանիշ տարողությամբ:

Ուրեմն և չզրկենք ամենքին ու սերունդներին նաև գրողի ինքնագրով պահպանվող սույն ներկայացվող վավերագրից: Անշուշտ, շնորհակալությամբ հանգուցյալ գրականագետ Սուրեն Աղաբաբյանի տիկնոջը՝ գրականագետ Վարվառա Գրիգորյանին (1936–2000)[**] *վավերագիրը տպագրության տրամադրելու համար:*

Մոր կողմից էլ Շուշեցի էր (սերել է՝ Արցախից). **դե՛ եկ ու արևմտահայ–արևելահայ զանազանիր...**

Ինքնակենսագրություն[*]
Գրված Սուրեն Աղաբաբյանի համար

Ծնվել եմ 1903 թվին, Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում (բարով–խերով չծնվեինք): Իմ կնքամայրը, տատմեր Թառիկը, կարմրաթուշ զվարճախոս մի պառավ էր, որը գուշակողի մեծ համբավ ուներ: Նա միշտ գալիս էր մեր տուն, անկախ տարվա եղանակից մի խնձորով ուրախացնում էր ինձ և միշտ կրկնում.

— Բախտավոր տղա կլինի, մենակ... (քթախոտ էր քաշում, մենակ... փռշտում էր) մենակ երբ խելահաս մարդ դառնա, հեռու թող մնա բեղավոր ու գյոզլիկներով մարդկանցից:

Հայրս ուսուցիչ էր. մորս պատմելով, նրա ստացած աշխատավարձը չէր բավարարում ընտանիքի ապրուստին: Տարվա ընթացքում մի քանի անգամ անհետանում էր նրա ժամացույցը. մորս հարցին, թե ո՞ւր է ժամացույցը, նա պատասխանում էր, որ տվել է նորոգելու: Հետագայում միայն մայրս վերահասու է եղել, որ նա ժամացույցը միշտ տվել է գրավ և փոխարինաբար փող է վերցրել սրանից–նրանից:

Հայրս պատկանել է Արմենական կուսակցությանը, լավ տիրապետել է ֆրանսերեն լեզվին և պոլսական թերթերում տպել է կիսագրաբար բանաստեղծու-

[**] *Ի դեպ,* **Վարվառա Գրիգորյանը դուստրն էր՝** *Կարինից Կարս անցած Գրիգորյանների տոհմից՝ (Էջմիածնի Գևորգյան ճեմարանում ուսանած) Սեդրակ Գրիգորյանի Աղասի որդու: Երևանում ճանաչված մաթեմատիկայի ուսուցիչ, սիրահարը Կարսի, իր Աղասի անվան և ....* **«Վերք Հայաստանիի»,** *որ վիպել–պատմել է նախատիպ հետաքրքիր դրվագներ Կարսի առօրյայից: Շատ շնորհակալություն հանգուցյալին...*

թյուններ. 1907 թվին Դաշնակցության հանձնարարությամբ մորեղբայրս իր տանը գնդակահարում է հորս, որը Դաշնակցության ակտիվ հակառակորդներից էր: Մորս արցունքներով է սկսվում իմ մանկական առաջին հիշողությունները, ապա տատիս ժպիտներով, հեքիաթներով, առույթներով և աղոթքներով:

Նախնական կրթությունս տեղի Նորաշեն, ապա Երամյան վարժարաններում: Բոլոր առարկաներից լավ եմ եղել, բացի թվաբանությունից. իսկ հետագայում՝ հանրահաշվից:

1915 թիվ: Գաղթ: Տեղահանություն Կովկաս: Իգդիր–Էջմիածին–Դիլիջան: 1916 թվին մի քանի ընդունակ որբերի ջոկեցին և Երևան ուղարկեցին սովորելու:

Երևան: Թեմական դպրոց: Կարդացի Տերյանի «Մթնշաղի անուրջները»: Ահռելի տպավորություն: Թեմական դպրոց: Արսեն Տերտերյան: Երևան, երրորդ որբանոց: Խմորատիպ թերթ.— «Նպատակ», առաջին արձակ և չափածո բանաստեղծություններ: Առաջին անգամ տպվում եմ տեղի «Աշխատանք» շաբաթաթերթում 1917 թվի նոյեմբերի 23–ին: Ապա Թիֆլիսի «Վան–Տոսպ»–ում, «Հորիզոն»–ում: Երևանի «Ժողովուրդ»–ում: Աշակերտական «Վերածնունդ» շաբաթաթերթում՝ երգիծաբանական նամակների շարք: Թիֆլիսի «Վան–Տոսպ»–ում գրախոսական–հոդված «Հրազդան» գրական ալմանախի մասին «Մեծարենցի» ստորագրությամբ:— Էլի կեղծանուններ – «Գ. Արփունի», «Գ. Դժհուն», «Գուրիս», «Գուրգեն», «Գ. Մահարի»:

18 թիվ: Թիֆլիս՝ մորս մոտ: Խուճապ: Վլադիկավկազ–այժմ՝ Օրջոնիկիձե, Գինեգործարան՝ սևագործ: Թիֆլիս–Երևան:

Երևան, V–րդ որբանոց: Ծանոթություն Չարենցի հետ: Տերյանից հետո՝ երկրորդ մեծ տպավորությունը: Աշխատակցություն տեղի «Հայաստանի ձայն» թերթին: Բանաստեղծություններ: Հոդվածներ՝ Դաշնակցության դեմ:

Խորհրդայնացում: 21 թվի մայիսմեկյան միօրյա թերթում առաջին սովետական բանաստեղծությունը: «Մուրճ»–ի հրատարակությամբ: 1922 թվից: Աշխատակից՝ առաջին համարից: Անդամ Հայաստանի պրոլետարական գրողների միության: Առաջին գիրքը.— «1923 թվին–1920?–1923!»: Երկրորդ գիրքը «3 ագիտ օպերետ» –1) «Խնդիր մ'ալ առեք» (Դաշն. դեմ), «Կովկասի տերերը» և «Խորհուրդ խորին» (հակակրոնական)): Ներկայացվեցին քաղաքային և գյուղական բեմերում, այլև Թիֆլիսում, Բաքվում, Ռոստովում և այլուր: 3–րդ գիրքը «Տիտանիկ» – 1924 թվին: Այս բանաստեղծությունների ժողովածուի պատճառով վռնդվեցի պրոլետ–ասոցիացիայից: Թափառումներ Թիֆլիս–Ռոստով–Թիֆլիս: Հանդիպում Չարենցի հետ: Չարենց=Մյասնիկյան=Մակինցյան: Չարենցը՝ արտասահման = Ես՝ Լենինական:

Լենինական: Տպարանում՝ սրբագրիչ: Հայառում՝ հաշվետար:

Արմենի հետ կազմակերպեցինք Լենինականի բանվորագյուղացիական գրողների «Հոկտեմբեր» խմբակ. հավաքագրեցինք Գ. Սարյանին, Ս. Տարոնցուն և այլն: Հոդված՝ «Ինչո՞ւ անջատվեցինք» «Խ. Հայաստ.»–ում:— Բայց դու չես անջատվել, մենք քեզ արտաքսել ենք,— ճչում են Ալա(զան)–Զարյանը=ո՞ւմ ես ասում, «Հոկտեմբերը»

փաստ է: Արմենի հետ կազմակերպեցինք նմանապես (տ) «Լաւթ» —ի՞նչ,— «Լա՛սթ», «Լա՛սթ»… «Լենինականի ագիտ–սատիր–Թատրոն: Ռեպերտուար՝

1) «Խնդիր մ՛ալ առեք»:— (Գ. Մ.)

2) «Կովկասի տերերը»:— (Գ. Մ.)

3) «Խորհուրդ խորին»:— (Գ. Մ.)

4) «Կապսի–Խաքսի ջրանցքը» (ագիտ–օպերետ. 3 գործ. Արմենի հետ՝ համատեղ) =

Խերասանական կազմը = կոմերիտական Թատերախումբը: «Լա՛սթ»–ը ունեցավ աղմկալի հաջողություն: Քաղաքական–գաղափարախոսական:

«Հոկտեմբեր»–ի հրատարակությամբ լույս տեսան–

1) «Շիրակի ջրանցքը» – Գ. Մահարի, բանաստ. ժող.

2) «Շիրկանալ» – Մ. Արմեն

3) «Շիրակի հարսանիքը» – Գ. Սարյան – պոեմ

4) «Դաշտերը ժպտում են» – Սարմեն – բանաստ.

Զարենցը վերադարձավ արտասահմանից. Լենինականի «Հոկտեմբերը» վերածվեց համահայաստանյան «Նոյեմբեր»–ի. միացան Բակունցը, Նորենցը, Ստ. Մանուկյանը, Տիրան Ղազանճյանը, Անուշավան Վարդանյանը, Հովիկ Մելիքյանը, Գառնիկ Ղազարյանը և ուրիշներ:

«Նոյեմբեր».— պայքար լիրիկայի համար. Պայքար սեր երգելու իրավունք ձեռք բերելու համար= Գրեցի մի սիրային բանաստեղծություն.

Զգիտեմ, քեզ եմ սիրում,
Թե իմ սերը,
Այս սերը, խորախորունկ
Ինձ (անընթեռնելի)

Տվի «Գրական դիրքերում»–ին: Ալազանը տպեց այդ բանաստեղծությունը… «Մտքերի փոխանակության կարգով»: Պատասխանով հանդես եկավ Ն. Զարյանը. նա իր բանաստեղծության մեջ ասում էր հետևյալը.— Ի՞նչ սեր, ի՞նչ բան.— մտա մի մազազին, չիթ էր փաթաթում, ասի՝ արի ամուսնանանք, մերժեց, հանդիպտ հեռացա. մի երկրորդի՝ հանդիպեցի, ուզեցի–ամուսնացանք… և Բոլորը…

Գրեցի մի պեյզաժային բանաստեղծություն «Վերջալույս» վերնագրով. սրան էլ քաղաքական աստառ կպցրին ու էլի հեռացրին միությունից: Սկսեցի ինձ համար գրել լիրիկական բանաստեղծություններ, պատմվածքներ և պահել. տպել ֆելիետոններ, ակնարկներ, կինո–ռեցենզիաներ և գլուխ պահել:

Հայաստան եկավ Ա. Խանջյանը, որի հետ ծանոթ էի մանկությունից: Կենտկոմի II–րդ, հետո I քարտուղար: Հարցրեց,— ո՞նց են գործերս, ես պատմեցի նրան գրական արկածներս… — հավաքիր անտիպներդ, բեր մի նայեմ.— Զարենցին պատմեցի — ուրախացավ:— Բախտդ բացվեց, Գուրգեն խան: Տար ինչ որ ունես= և՛ արձակներդ, և՛ ստիխներդ: Նա ապրում էր այժմյան «Ինտուրիստ»–ի №1 համարում: Տարա: Նա վերցրեց պորտֆելս, բացեց և փակեց.— մնա թող ինձ մոտ, գիշերս կնայեմ. վաղը եկ, կխոսենք:

Մյուս օրը, երեկոյան գնացի՝ Թերահավատ։— Կարդացե՞լ է։

Կարդացել էր։— Կարելի է տպել,— ասաց նա,— ինձ դուր եկան։ Մարդկանց զահլեն գնացել է չափածո ճառերից։ Ինձ շատ դուր եկավ արձակդ։ Մանավանդ «Մանկություն»–ը։ Արձակներիցդ մի գիրք դուրս կգա, նախ արձակդ տպիր, հետո չափածոդ։

Պատմեցի Չարենցին։ Ուրախացավ.— կազմի՛ր։

Երբ գիրքը կազմել, վերջացրել էի («Սիրո, խանդի և Նիցցայի պարտիզպանների մասին») Չարենցը նշանակված էր Պետհրատի գեղ. գրակ. բաժվար։ Տարա նրան՝ պաշտոնապես։ Վերցրեց, թերթեց, կարդաց, նորից թերթեց, հետո թե՝

— Այ տղա, ռիսկովանի բան է, տուր թող Աղասին մակագրի, բեր տպեմ։—

Հետո թե,— լավ ես կտանեմ,— հետո թե՝ — երեկոյան արի, միասին տանենք։

Չարենցն էլ էր ապրում «Ինտուրիստ»–ում. գնացի մոտը։ Ժողովածուս սեղանի վրա էր։ Սպասավորի միջոցով իմացանք, որ տանն է։ Գնացինք։

Նստած պարապում էր։ Չարենցը ժողովածուս դրեց առաջը.— Ստորագրի, պաժալուստա։ Խանջյանը ժպտաց.— մակագրե՞մ.— Մակագրեց,— «Տպագրել՝ Ա. Խանջյան»։ Դուրս եկանք.— Այ տղա, էս քո զեմլյակը զամեչատելնի տղա է, միայն գլուխը չուտեն։ Ես հայտնեցի իմ տարակուսանքը,— Ո՞վ պիտի ուտի, ինչո՞ւ պիտի ուտեն ...Չարենցը.— է՜, Գուրգեն խան, ամեհի բան է քաղաքական պայքարը...— (դրել ջնջել է — անընթեռնելի)։

Լույս տեսավ գիրքը.— Հայաստանում ջարդ ու փշուր արին, Թիֆլիսում՝ գնահատեցին (Մակինցյան, Կարինյան)։

Չարենց.— Դիմացիր։ Բեր ստիխներդ տպեմ։

Խանջյան.— Կարևորություն մի տա։ Շարունակիր «Մանկությունդ»։

«Մրգահաս»։ Ինչպես արձակը, այս էլ խմբագրեց Չարենցը։

— Տանե՞նք Աղասին մակագրի։

— Չէ, ես կմակագրեմ։

Արագ գրեցի «Պատանեկություն»–ը։— Տպվեց նախ «Մանկ. և պատ.» ապա՝ «Մրգահաս»։ Քննադատությունը,— «Տաղանդավոր է, բայց...» — բայց մնացյալն ինձ չէր հետաքրքրում։

Չարենց.— «Մրգահաս»–ը սովետական լիրիկայի առաջին բանբերն է, առաջին սուրհանդակը։— Գրեց իր «Մակագրություն մի գրքի վրա» ջերմ բանաստեղծությունը (տես՝ «Գիրք ճանապարհի» ընագիրը՝ Երևանի պետհամալսարանի գրադարանի հատուկ ֆոնդում, գրված «Մրգահաս»–ի մի օրինակի վրա)։ Այդպե՛ս։

1936 թիվ։ Խանջյանին տարա բանաստ. նոր ժողովածուս՝ «Հնձաններ»։ Հավանեց.— Տպել տուր։ Հուլիսի 10–ին նրա ողբերգական վախճանը։ Օգոստոսի 10–ին (իսկ) վերջացավ իմ կյանքի այն շրջանը, որը կոչվում է երիտասարդություն։ «Հնձաններ»–ը մնաց սեղանիս վրա։ Այդպե՛ս։

Վերադարձա 47 թվին։ Թարգմանություններ – Բելյաևի «Երկկենցաղ մարդը», Կազակևիչի «Աստղը» և «Մարդը տափաստանում». առաջին երկուսը տպ-

վեցին–առաջինն անստորագիր, երկրորդն ուրիշի անունով, իսկ երրորդը՝ մնաց Պետհրատի արխիվում: Այդպե՛ս[*]:

1948 թ. նոյեմբերի 14: Նորից դեպի Սիբիր, հյուսիս ու տայգա: Այս անգամ ցմահ: Ֆիզ. աշխատանք: Գիշերային պահակ: Պահակային ժամեր ձիգ գիշերները կարճելու համար 1953 թվին սկսեցի գրել «Երիտասարդության սեմին»–ը: Ոչ մի հեռանկար: Բանաստեղծություններ: Չէ՛ր լինի չգրել: Այդպե՛ս:

1954 թիվ: Մեծ բեկում: Վերադարձ:

Ողջույն արև ու օր:— «Երկեր» – 1954 «Երիտասարդության սեմին» – 1956: «Детство и отрочество». 1956 – Պատմվածքներ, «Քանդակներ», Բանաստեղծություններ: Պիես՝ «Փորձություն»: Աշխատում եմ «Կոմիտաս» ողբերգության վրա: Վեպի վրա – «Այրվող այգեստան»–ը: Կազմում եմ բանաստեղծությունների ստվար ժողովածու (60% անտիպ, 1917–1957 – «Քառասունք») պատմվածքների ժողովածու:

Ջանսաղությո՛ւն:

13 մարտի 1958 թ.

Երևան: *Գ. Մահարի»...*

* * *

Ուրեմն և, Գ. Մահարու ծննդյան 100–ամյակին՝ ըստ հարկի շարունակելով «ինքնակենսագրությունը»,— Գրողների միության նախագահ **Լևոն Անանյանը «Գրողի Գողգոթան» խորագրով** *իր անբասիր գրչով ու մտածումներով այսպես բնութագրեց ու սահմանեց գրողի տառապալի, արդար ու ազնիվ դիմապատկերը.*

«Ամեն անգամ, երբ խոսք է բացվում Գուրգեն Մահարու մասին, ակամա հիշում եմ Հովհաննեսի ավետարանի հետևյալ տողերը.

«Եվ զինվորները փշերից պսակ սարքեցին, դրեցին նրա գլխին և ծիրանի հանդերձ հագցրին... Եվ նրանք առան տարան Հիսուսին, և խաչափայտն ինքը վերցրած՝ շարժվեց դեպի այն բլուրը, որ Գողգոթա էր կոչվում:

Այնտեղ խաչ հանեցին նրան...»:

Ճիշտ այսպես էլ, ապրելով 66 տարի, Մահարին բարձրացավ ֆիզիկական ու բարոյական տառապանքի իր Գողգոթան, իսկ նրա ազնվական ճակատը, արժանի դափնեպսակի, քանիցս բզկտվեց փշե՛ պսակով:

Ծնվեց դրախտային Վանում, որ դաժան ճակատագրի քմահաճույքով, մտնի դժոխքի բոլոր պարունակները, վաղ զրկվելով հորից, անցնի դաժան ճանապարհը՝ մաքի կամուրջներով և, ինչպես Համո Սահյանը կասեր, որբություն անի որբանոցներում, մինչև որ Եղիշե Չարենցը նրան օծի բանաստեղծ, քանզի նա բանաստեղծ էր ի ծնե.

---

[*] Եղա Երևանում,– այդ էլ հրաշք էր մի.
Թշնամիներ տեսա, ծանոթ ու խնամի,
երգում էր հոգիս մի վիթխարի համերգ
մի՛ նոտայի վրա, և այդ նոտան էր՝ «մի՛»...

Ա՛խ, ծղրիդներ շատախոս
Լուսնկայի հետ,
Ծնվեցի ձեր պատճառով
Այսպես սրտոտ:

Մահարին դեռ պիտի գրեր իր կենսագրական եռագրության առաջին երկու գրքերը՝ «Մանկությունն» ու «Պատանեկությունը», պիտի ամփոփեր իր բանաստեղծական հասուն «Մրգահասը» — ո՛չ ավելին,— քանի որ ժամանակները խառն էին, մտահոգությունը՝ թանկ ու մարդը՝ էժան: Նրա պոեզիայի շքեղ ու գունեղ ծաղիկը պիտի թոշներ սիբիրյան մահաշունչ բուքից, և նրա երգի այգու դռնակը պիտի մնար յոթ փակի տակ... ամբողջ 18 տարի: Մի նոր Գողգոթա, որտեղ Մահարին գրիչը փոխարինեց խոզարածի մահակով,— և այս անգամ նրան փրկեց Անտոնինա Պովիլայտիտեն, աքսորական լիտվուհին՝ խիզախ ու փխրուն, անվեհեր ու ազնվատոհմիկ այդ կինը,— Գուրգեն խանի պահապան հրեշտակն ու անդավաճան հենարանը նաև Սիբիրից հետո, երբ Մահարին գրեց իր նշանավոր «Այրվող այգեստաններ» վեպը,— արդեն երրորդ անգամ բարձրանալով Գողգոթա — ֆիզիկական կտտանքների փոխարեն պատեպատ խփվելով բարոյական կապանքների որոգայթի մեջ:

Թումանյանի խոսքերով՝ գրական մեծությունները սանձահարող անսանձ փոքրությունները, մանր, մաղձոտ ու մութ ամբոխը թունավորեց ու դառնացրեց Մահարու զգայուն ու երիցս խաչված հոգին: Եվ ի գի՛ն իր կերտած հուշարձան—գրքի, իր մարդկային առաքինության ու գրական խիզախության, ծայր առավ գրողի կյանքի ծանր ու հոգեմաշ հերթական դրաման:

Հիվանդ, հյուծված ու հուսահատ՝ նա իր մահկանացուն կնքեց հեռավոր Պալանգայում,— վերջին հանգրվանը գտնելով Երևանի քաղաքային պանթեոնում, ուր տառապանքն ու անհանդուրժողությունը այլևս իշխանություն չունեն:

Ճշմարիտ գրողի պայծառատեսությամբ, իր «Հոգեհանգիստ» բանաստեղծության մեջ Գուրգեն Մահարին մարգարեանում է.

Ես գիտեմ, վերջին զոհն եմ ես երկրիս,
Նաիրյան վերջին փարավոնը,
Կգա մի սերունդ խորթ իմ երգին,
Ու կբացվեն նոր առավոտներ:

Նոր առավոտները բացվել են, եկել է այդ նոր սերունդը, որին, ցավոք, խորթ են ո՛չ միայն Մահարու երգերը, քանզի պոեզիայի փոխարեն նրանք այլ արժեքներ ու աստվածներ են պաշտում...

Այսպես, մեր դռները բախող ոգու սովին հակառակ, նա՛և Մահարիով պիտի հագեցնենք մեր ոգու ծարավը: Սա մեր սիրո ու ապաշխարանքի արժանի տուրքն է մեծ գրողին, մեծ հայրենասերին ու մեծ տառապյալին»:

Եվ դեռ քանի՛—քանի՛ տուրքեր...

ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԸ ՄՈՏԵՆՈՒՄ ԷՐ ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻՆ…

Իր հերթին մամուլի «հուշարարությունն» էլ վկայելով թեկադրում է հոդսերի, մտահոգությունների, եղելությունների… բազմապիսի շարաններ, ամենօրյա–ամենժամյա խոսք ու զրույցի նորոգ առիթներով ինչպես Չարենցի ու Դեմիրճյանի, Մակինցյանի, Մահարու… այնպես էլ Չարենցի և շատ ուրիշների միջև: Ամեն դեպքում հարազատ ժողովրդի կյանքի, ճակատագրի, ապագայի ընդհանուր և հայոց մտավորականության հարաբերության լայն շրջանակով: Առավել ևս, երբ խոսքը վերաբերում էր 1924–ի ամռանից աշուն որոշակիորեն թափ առած բացահայտ–ընդհատակյա հրահրումներով, ոտնձգություններով, հարձակումներով լեցուն ժամանակամիջոցի. ընդդեմ նույն այդ մտավորականության, Մյասնիկյանի և, ինչու չասել, բացահայտորեն ողջ հայության դեմ: Հոկտեմբերից–նոյեմբեր վերջնականապես լուծարվում է Հնչակը: Բնականաբար, անկարելի է թե իր հանդիպումներում ու հոդում Չարենցը անդրադարձած չլինի այդ դեպքերին, վերհիշած–վերապրած չլինի Հնչակին առնչվող կարսյան անցուդարձեր, զինվորի իր սրբազան ծառայությունը **1915–ի Հնչակյան կամավորական գումարտակում…** *«Դանթեականի» ոգով, այլև երկուստեք այլազան հիշատակումներով, լրացումներով, նաև Այդեստաններին վերաբերող ասլիքներով… – Սա, անշուշտ, նույնպես Մահարու հետ զրույցներում:*

Չարենցի արտասահման մեկնելու նախաշեմին թեժացել էր և դրական պայքարը. միանգամից Թիֆլիս էր հասել պրոլետ–«զորագունդը», որոնց «Հայ պրոլետ գրողների երեկո–ներկայացումը «Կարմիր թատրոնի» հայկական սեկտորի մասնակցությամբ» տեղի է ունենում Չարենցի Բաթում մեկնելուց ընդամենը մի քանի օր անց նոյեմբերի 25–ին, սույն օրակարգով. «I. Ընկեր Գ. Հայկունի կը բանախոսե – «Հեղափոխությունը և գրականությունը». II–րդ Արտասանություն և «Կապելլա» դերասանական խումբ. III–րդ Կոլեկտիվ դեկլարացիա հայ պրոլետ գրողների – Ամեռ, Գրիգ, Հ. Հակոբյան, Գ. Հայկունի, Ազատ Վշտունի, Շամունց. IV–րդ «Համաշխարհային բորսա» – Ամո Խարազյան»[1]:

Ուրեմն և տեղին է մտածել, որ արտասահման ճանապարհվելուց առաջ Չարենցը տեղյակ է եղել պրոլետգրողների «Կոլեկտիվ դեկլարացիային» հասկանալի է ընդդեմ ոչ պրոլետարական Չարենցի և կողմնակիցների: Ըստ այդմ Մահա-

---

[1] Մտկչ, 1924, 25 նոյեմբ..

րում՝ «— Իսկ դու երկիր մեկնի՜ր:— Երկիր մեկնի՜ր»՝ հորդորելով, բանաստեղծը միաժամանակ հանգամանալի խորհուրդներով պատվիրել է նախապատրաստվել «Նոյեմբեր» միության ստեղծմանը:

Կարելի է ենթադրել, որ Չարենցի մեկնելուց հետո նոյեմբերի 23-ին էլ դեպի Լենինական է ճանապարհվել Մահարին: Երբ արդեն պարզվել էր, որ հետաձգվել է ֆուտուրիզմի (հասկանալի է գլխավորապես Չարենցի) դեմ նոյեմբերի 22-ին նախատեսված սույն «նախաձեռնությունը». Նոյեմբերի 21-ին Մտէչ տեղեկացնում էր թե՝ «նոյեմբերի 22-ին Հայարտան թատրոնում տեղի է ունենալու գրական դատ՝ Կարա-Դերվիշի «Նախօրյակին» անտիպ վեպի առթիվ. զեկուցելու է **Համազասպ Համբարձումյանը (ակադ. Վիկտոր Համբարձումյանի հայրը**): Դիսպուտին մասնակցելու են Արազի, Դեմիրճյան, Լեոնյան, Կարինյան, Երզնկյան, Մակինցյան, Ե. Չարենց — հասարակության միջից ցանկացողներ»:

Անտիպ երկի շուրջը դրական դատ կազմակերպելը այդ տարիների համար մնում է աննախադեպ. պարզ է, կազմակերպվում էր սադրիչ նպատակներով, և ուշագրավ է. նույն Մտէչ նոյեմբերի 22-ին արդեն հայտնում էր, թե դրական դատը կայանալու է 25-ին: Ուշագրավ է և այն, որ Թիֆլիսում էր գտնվում և Արտ. Կարինյանը՝ Վշտունու «Պրոլետգրողների ասոցիացիայի» ժամանակի ծանր հրետանին:

Իսկ համազոր մյուսը՝ Կոստան Զարյանը, ճանապարհի նոթեր մատակարարելով բոլշևիկյան քարոզչությանը,— արդեն հասել էր Փարիզ և այնտեղից մինչև Ամերիկա լծվել Չարենցի ընդունելությունը «ըստ արժանվույն» նախապատրաստելու ծառայությանը[2]: Ձևկիստական-գաղափարական բազմապիսի հրահանգ-հրահրումների շարքում, ամենահաջողակը, ինչ խոսք, եղավ **Կովկասում լատինական գիր պատվաստելու**՝ էապես մեծ չափով հայության համար նախատեսված սադրանքը: Ըստ այդմ, ուշագրավ է, որ հրահրումները բորբոքվում են հենց այն ժամանակ, երբ Չարենցը ճանապարհին էր, և՝ Պոլսից-Վենետիկ ու հետո վայելում է սպասված պտուղները:

Նշանակետը, իհարկե, նախ Անդրերկրկոմի քարտուղար Մյասնիկյանն էր՝ չարագուշակ մտահղացման այս կտրվածքով. լատինական գիրը ըստ կարգի մա-

[2] ԽՀ 1924-ի սեպտեմբերի 4-ի թվում զետեղված «Նավը և իր աչքերը» նոթում, օրինակ, հույների հետ «վարած» զրույցների տպավորությամբ հայտնում էր. «... Աթենքը, քաղաքական տակնուվրայության մեջ իսկ նոր տնտեսական զարգացման մի շրջան է անցնում և հենց այդ է պատճառը նրա քաղաքական անորոշության: Նա չի կարողանում իրեն գտնել ու խարխափում է Բալկանյան անհանգիստ մթնոլորտի մեջ: Մի քանի տարի սրանից առաջ սոցիալիզմի խոսք իսկ չկար այստեղ, այսօր՝ բանվորությունը կոմունիզմի անունից է խոսում: Աթենքը նոր կյանքով է ապրում. անգլիաիտալական հսկա նավերը նրան հաղորդակից են անում ամբողջ աշխարհին ու երկաթե ձեռքերով ցանում լավագույն կյանքի ուժգին սերմեր:

Պարթենոնը ուժասպառ դիտում է ու սպասում»:

Հետաքրքիր է, իր «կարմիր ու երջանիկ հովերուն» համրավի համար Չարենցին սպառնելիս Հ. Օշականը տեղեկություն չունե՞ր «փառավոր հատկություններով» օժտված Կ. Զարյանի «սոցիալիզմ-կոմունիզմի» նման քարոզչությունից...

տուցվում էր որպես միջոց՝ **«կովկասյան ազգերին միացնելու մի այբուբենի հիման վրա»**—*ուրեմն և դեմ լինել, նշանակում էր դիմադրել այդ միավորմանը՝ պատրաստի նացիոնալիստ—դաշնակցական ցուցանակով: Այս տեսակետից պատահական չէր* **Մակինցյանի Մտկչ տպագրած հոդվածը,** *որում՝ ընդգծելով հրահանգը՝ «Կովկասյան ազգերը միանային մի այբուբենի հիման վրա»,— միաժամանակ փաստարկում էր. «Ուրեմն տեսնում ենք, որ հայերը դեռ հերթական չեն դարձրել լատինական այբուբենին անցնելու հարցը, իսկ թուրքերը (ասել է՝ ադրբեջանցիները՝ Ալ. Ջ.) այնքան էլ առաջ չեն տարել պրոպագանդը՝ հօգուտ նոր այբուբենի:*

Իսկ վրացիք այս հարցը չեն էլ դրել»:

Եվ հենց այդպես էլ ***վրաց գիրը՝ «եղբայրաբար» փրկում է հայոց գիրը...***

Ասել է՝ նույն օրերին վերաբերող Մ. Աբեղյանի անվան հետ կապվող հայոց ուղղագրության փոփոխությունը՝ հիմքում նաև պարտադրված քաղաքական իրողություն էր: Դա, անշուշտ, խորապես հասկանում էր հենց Մ. Աբեղյանը. արմատական «Նորդարական», որը հանդուրժ առ հանդուրժ տեղյակ էր 1903—ի իրադարձությունների ընթացքով տարիներ շարունակ «Նոր դարի» և խմբագիր Սպանդար Սպանդարյանի և իր որդու դեմ ծավալված քաղաքական սադրիչ ծուղակներին... որպիսիք այդ օրերին նույնպես արդիական—առօրեական էին... (Հարցին առիթ կլինի անդրադառնալ այլ առիթներով ևս):

Եվ այդ «նվազագույնով» էլ բավարարվեց «մեծ հայրը», որքանով դրանով իսկ կարող եղավ տասնամյակներ շարունակ գրդռել—սրել հայրենիք—սփյուռքահայություն հարաբերությունները...

Իսկ Մյասնիկյա՞նը...

Հավելված

Իսկ Մյասնիկյանը ջանում էր բարձրացնել Խորհրդային Հայաստան հայրենիքի հեղինակությունը աշխարհով մեկ սփռված հայության միջավայրում՝ համախմբելու հայրենիքում և հայրենիքի շուրջը: Փաստացի. ուրեմն և. 1960—ի ձմռանը գործուղումով, բայց և ծանր հանգամանքներում, մեկ ամիս աշխատել եմ Թիֆլիսում՝ Վրաստանի Պետական արխիվում: Դժվարությամբ (թերևս ընտրությամբ) Անդրֆեդերացիայի արխիվային ֆոնդերից տրվող փաստաթղթերի շրջանակով, ինչպես ասում են՝ այն ժամանակվա իմ խելքով, կարողացել եմ ձեռք բերել սոսկ հաջորդականորեն ներկայացվող որոշ փաստաթղթեր՝ Ալ. Մյասնիկյանի անձնական ֆոնդից վերաքաղված նամակներով հանդերձ, որոնց բնագրերը հետագայում, անշուշտ, ոչ լրիվ հանձնվեցին Հայաստանի համապատասխան հաստատությունների: Օտարության մեջ տառացիորեն ծանր եմ վերապրել նախ այն, որ Մյասնիկյանի «այրվելուց» հետո իր պաշտոնական անկիզելի պահարանում եղել է միայն **Սուսաննա Տերյանի հեռագիրը (իր առողջության վե-**

բաքերող): *Մյուսն՝ առ այսօր անմոռացը, նկարիչ Ալեքսանդր Բաժբեուկ–Մելիքյանի «բնակարանի» ահավոր աղքատությունն էր՝ դետնահարկային պատկերանիի հակադրությամբ: Խե՜ղճ մերոնք... Խե՜ղճը, չէ՛, յուրյանք են...*

Դառնանք ուրեմն փաստաթղթերին. Թարգմանաբար վերաքաղված–շարադրված կամ բնագրով:

Առաջինը «1923, մարտի 14» տարեթվով գործն է: Գործում Անդրֆեդերացիայի Կոստանդնուպոլսի ներկայացուցիչ Վ. Ցյոդրովի նամակի տվյալներով Ալ. Մյասնիկյանը հաղորդում է Պ. Մակինցյանի անելիքների մասին: Կոստանդնուպոլսում. նպատակահարմար է գտնում հրատարակել լրագիր՝ պայքարելու համար Դաշնակցության դեմ, ուժեղացնելու Խորհրդային Հայաստանի հեղինակությունը հատկապես Բալկանների հայության միջավայրում և Ամերիկայում. *«... и работой тов. Макинцяна в Константинополе, на которую всегда реагирует армянская заграничная пресса, в особенности в Америке и в Болгарии».*

Ծանոթագրելու պես ավելացնենք. Չարենցը ցանկանում էր «վիզա»՝ եվրոպական երկրներով՝ Ամերիկա «շրջագայելու» համար, որը և մերժվեց՝ Հունաստանով ու Բուլղարիայով հանդերձ: Եվ ապա. ինչպես հայտնի է, Կ. Պոլսում լրագիր հրատարակել չհաջողվեց. Պ. Մակինցյանի ջանքերով հրատարակվեցին Տերյանի և Չարենցի երկերը:

«1923 մայիսի 14» տարեթվով.

Слушали: Об издании произведений тов. Туманяна.

Постановили:

15. Издать полное собрание сочинений Туманяна на армянском языке и по возможности на других языках. Для издания создать редакционную коллегию из т.т. Макинцяна, Ханзадяна, Геворкяна и Сурхатяна.

Ответственность за работу редколлегии возлагается на тов. Макинцяна и в его отсутствие на тов. Сурхатяна. Предложить комиссии в кратчайший срок представить смету. Зак. Цик 607/60с, опись II 35, 31".

1924, հունվարի 30

Зак. Цик—որոշումով. «Пролетарскому поэту Акопу Акопяну выдавать пожизненную пенсию в размере ставки ответственных работников по 17 разряду с нагрузкой с 1 января 1924 г.»

Зак. Цик 607/60с, опись II 3585"

1924, հունիսի 26

Слушали: Об издании произведений армянского поэта Ованеса Туманяна, переведенных на грузинский язык.

Постановили: Предложить Закнаркомфину выдать госиздату ССР Грузии на издание произведений поэта Ованеса Туманяна на грузинском

языке ссуду в сумме двух тысяч пятьсот руб. Руководство по изданию возложить на редакционную коллегию по изданию сочинений поэта Туманяна, учрежденную постановлением президиума Зак. Цика от 14 мая 1923 г.

1924, հուլիսի 9

Слушали: Ходатайство Наркомпроса ССРГ о выдаче госиздату Грузии на издание произведений поэта Ованеса Туманяна 2.500р. не в виде ссуды (см. пр. Презид. Зак. Цика от 26 (VI. 1924. №18.12), а в виде субсидии.

Постановили: Во изменение постановления Президиума Зак Цика от 26 июня 1924 (пр. №18. II. 12) предложить Закнаркомфину отпустить из общефедеративных средств Наркомфину ССРГ на издание произведений поэта Ованеса Туманяна на грузинском языке две тысячи пятьсот рублей в виде субсидии.

В остальной части постановления Президиума Зак Цика от выше указанного числа — 26. VI–с.г. оставить в силе".

(Հետաքրքիր է, իրագործվե՞ց օժանդակությամբ հրատարակությունը՝ Ալ. Ջ.):

Зак Цик 617/61с. опись II. 97 – համարի տակ պահպանվում էր ընդարձակ ցուցակ, որում նշված էին Անդրֆեդերացիայի դրամական փոխանցումները արտասահման՝ 1923–ից 1926 թվականը: Այդ շարքում Ալ. Մյասնիկյանի միջնորդությամբ փոխանցվածները. Մ. Սարյանին՝ Վենետիկ. մի շարք փոխանցումներ Ս. Հակոբյանին՝ Վիեննա («Արեգին»), մեծ չափով Փարիզ՝ Զորյանին:

1924 թ. ապրիլի 30 տարեթվով կարդում ենք Выд. по поруч. тов. Мясникова, письма от 12 II... 190 америк. доллар, փոխանցումներ՝ Փարիզի Թատերական խմբին, «Բանվոր–Փարիզին», Պատմագրյանին, Արուտչյանին, Արա Սարգսյանին:

Հաջորդ փաստաթղթից պարզվում է, որ 190 դոլլարը անհրաժեշտ էր՝ «Հայկական հարցերի» հոլովումով նախատեսվող նախաձեռնությունների համար: Ինչպես.

Выписка из протокола №20 заседания Президиума ЗКК РКР от 10 декабря 1924...

Слушали заграничные вопросы (т. Элиява) Пр. по армянскому вопросу

Слушали:	*Постановили:*
а) Об организации издательства в Париже,	*а) Ввиду того, что ЦК Армении возбуждает вопрос об издании армян. газеты, вопрос об издательстве в Париже и о журнале „Арек" разрешить в связи с вопросом о газете.*
б) об отпуске 190 долларов в месяц на издание журнала „Арек"	

Сек. ф. 617/61с, опись 11, №78.
По армянскому вопросу

1. Необходимо перенести и организовать типографию для издания в Париже.

2. Продолжить издание „Арек" также в следующем году, снять название журнала не следует, ибо, сохраняя преемственность, сохраняется и широко поставленная сеть подписчиков.

3. Впредь до того, как типография сумеет окупить издательские расходы, продолжать поддержку „Арека" в пределах 100 долларов в месяц и „Бамбер — Парижа" 75 долл. Сметы обоих изданий прилагаются.

Պրոեկտը Зак СН–ին է ներկայացրել Ս. Փիրումովը:

Ըստ Зак СН 617/61с–ով պահպանվող վավերաթղթերի 1924–ի դեկտեմբերին Ֆրանսիայում Անդրֆեդերացիայի ներկայացուցիչ էր Դ. Մդիվանին, Բեռլինում՝ Ս. Փիրումովը:

Протокол №9 малого Президиума Зак Цика 1924 г. 13 декабря

Слушали:	*Постановили:*
Ходатайство гр. А. Амбарцумяна о выдаче пособия сыну его Виктору—студенту Института имени Герцена.	*Принимая во внимание особо бедственное положение студента Виктора Амбарцумяна выдать ему одновременное пособие в размере 100 руб. на приобретение необход. зимнего оборудования.*

607/60с 3596

Մյասնիկյանի արխիվում՝ «Парт—архив 2916—Мясников, Личный архив—И—422» ցուցանակով նամակներ կային. Մ. Սարյանի ծավալուն նամակը, որով հայտնվում էր Ավ. Իսահակյանի Երևան այցելելու ցանկության մասին. Վ. Համբարձումյանի հոր՝ Համ. Համբարձումյանի նամակը (վերը ներկայացված խնդրանքով). Շ. Կուրղինյանի, Լեոյի, Ս. Փիրումյանի, Ս. Հակոբյանի, Ա. Վշտունու, Դ. Անանունի, Ա. Մռավյանի, Կ. Միքայելյանի, Իպոլիտով—Իվանովի, Ելենա Ստասովայի, Կ. Վորոշիլովի, Համլիկ Թումանյանի նամակները: Վերջինս Մյասնիկյանի օժանդակությամբ սովորում էր Փարիզում:

Տարիներ առաջ վերաքաղած թղթերի մեջ նախավերջինը Երևանի «Ժողասն»

(Ազգային օպերայի և բալետի թատրոնի շենքի) համար Ալ. Թամանյանի ներկայացրած նախահաշիվն էր՝ 1927 թվի սեպտեմբերի 20 տարեթվով, ճարտարապետի զեկուցագրով ու բացատրություններով, ինչպես և 1927 հուլիսի 6 տարեթվով ժյուրիի որոշումը: 607, 734:

Վերջինն էլ Зак Цик 607/60с, опись 5204–ի տակ Հ. Սուրխաթյանի ներկայացրած Вокс–ի նյութերն են, Հայաստան ՊԳ ասոցիացիայի վարչության նիստերի արձանագրությունները, այդ թվում՝ 1931–ի դեկտեմբերի 5 տարեթվով Վոկսի գծով արտասահմանում հրատարակելու համար պատրաստվող ժողովածուի քննության նյութեր (զեկ. Մ. Դարբինյան): Կից ներկայացվող հեղինակների ցուցակն է. Զարենցի դիմաց նշված են «Բալլադ քսանվեցի մասին», «Գարուն»...»: Եթե պրպտելու հնարավորություն լիներ, երևի թե, գտնվեր նաև Զարենցի արտասահմանյան ուղևորության գործը՝ Մյասնիկյանի միջնորդությամբ...
Բայց չափազանց անմատչելի էր սպասարկող անձնակազմը...

Այսքանը. ով գիտի, գուցե, օրերից մի օր Հայաստանին վերաբերող բոլոր ֆոնդերը հանձնվեն Հայաստանին կամ հրապարակեն իրենք... Գուցե...

* * *

Ուրեմն և Ալ. Մյասնիկյանի և իր համախոհների ջանքերի արդյունքում՝ արտասահմանյան ուղևորության շեմին 1924–ին՝ նախորդ տարիների համեմատությամբ ինչպիսին էր վերաբերմունքը Զարենցի և իր ստեղծագործության հանդեպ: Բնորոշը և տեղինը Հակոբ Օշականի վերաբերմունքն էր...

Ս. ՀԱԿՈԲՅԱՆԻ «ԱՐԵԳԸ»... Հ. ՕՇԱԿԱՆԸ ԱՑՊԱՆՈՒՄ Է ՉԱՐԵՆՑԻՆ... Ո՛Չ ՄԻԱՅՆ...

1922–1923-ի համեմատությամբ 1924-ի մամուլը (Հայաստանի և Անդրկովկասի) նկատելիորեն սակավախոս է դառնում Չարենցի հասցեին:

Բայց և այնպես, որքան էլ երևանյան մթնոլորտը ողողված մուրճա–դիրքային խմբմբություններով,– ժողովրդի և մտավորականության միջավայրում դեռևս հարգի էր «Պտղատու ծառին քար կգցեն» հնօրյա պատվիրանը, և գնահատողները չարունակում էին գնահատել: Պաշտպաններից հավատարիմը մնում էր Սուրխաթյանը՝ Մաքչ նախորդ էջերում հիշատակված–չհիշատակված արձագանքներով[1]: Սկսած մայիսից կարծես փորձում են ձայնակցել և ուրիշները: Մայիսի 18-ին Բաքվում Կոմ զինեղում է «Հնչում են օրերը, կանչում են» բանաստեղծությունը Անտոն Մայիլյանի ձայնագրությամբ: «Պրիդունների...» երևալուց հետո էլ հուլիսի 19-ին Պ. Ժ. ստորագրությամբ Մաքչ տպագրում է «Մոսկովյան դրական հովերից» («Standard», №1 և «Զարկ» №2) անդրադարձը, որում կողք–կողքի շոշափվում են Չարենցը, Կ. Հալաբյանն ու Գ. Աբովը: Այս «Կորչի պատերազմը» հանդեսների ընթացքով «չնորհազուրկ» բանաստեղծի հեղինակությունն այնքան է բարձրանում, որ Լենինականի «Բանվորը» ծանուցում է, թե տեղի «Պետհրատի դրախանութը» ստացել և վաճառում է «Չարենցի աշխատությունների (՞) ժողովածուն 2 մեծ հատոր. ամեն մեկը՝ 1 ռուբլի և նրա «Կոմալմանախը»[2]:

Փոխարենը լուրջ ուշադրության է արժանանում արտերկրում, ամենից առաջ՝ **«Արեգում»: 1923-ի առաջին համարից** *սկսած սփյուռքահայության ճանաչեցնելու մտահոգությամբ պարբերաբար անդրադառնում է բանաստեղծին՝ տպագրելով առանձին գործեր կամ հատվածներ, գրախոսականներ, տեղեկություններ, հոդվածներ: Հիշարժան է, որ նույն միջոցին «Արեգի» խմբագիր Ս. Հակոբյանը խորհրդային ուսանողների հրավերով Վիեննայում «Եղիշե Չարենց»*

---

[1] *«Մի պատասխանի առթիվ» հոդվածում Սուրխաթյանը գրում էր. «Վշտունու գլխավոր վիշտը Չարենցն է: Հայտարարելով նրան ֆուտուրիստ՝ կարծում է, թե Չարենցի աստղը հանգչում է, իսկ իր պրոլետարական գրող լինելը հաստատվում: «Չարենցը,— ասում էր Վշտունին,—* ֆուտուրիստ Մայակովսկու մոլեռանդ հետևորդն է», Եթե Չարենցը պատճենն է, ապա Վշտունին իր ակամա նմանություններով պատճենի պատճենն է». *Մաքչ, 1923, թիվ 78:*

[2] *Բանվոր 1924, 2 օգոստ.:*

նյութով կարդում է երկու դասախոսություն[3]*: Իսկ 1924–ի մայիսից «Արեգի» 9, 10, 12 թվերում տպագրվում է Հակոբյանի «Նոր բանաստեղծներ. Ե. Չարենց (Համառոտ վերլուծություն)» խորագրով հոդվածաշարը*[4]*, որը լրացումներով «Եղիշե Չարենց» առանձին գրքով լույս է տեսնում Վիեննայում՝ բանաստեղծի արտասահմանյան ուղևորության շեմին: Էապես գրաքննադատական առաջին ծավալուն ակնարկը՝ նվիրված նորամուտ բանաստեղծի վաստակին. ուշադրավ եզրակացություններով ու դիտարկումներով, որպիսիք հետագայում գրականագիտությունը հարկադրված էր մատնել մոռացության: Եվ այսպես Ս. Հակոբյանը գրում էր. «Համաշխարհային պատերազմը, որ տևեց հինգ տարի, որին մասնակցեցին ավելի քան երեսուն միլիոն կռվողներ և որ մինչև օրս շարունակվում է տարբեր ձևի տակ – պատմական այս դարաշրջանին բացառիկ կերպարանք է հաղորդում: ...Արևմտյան Հայաստանի մեջ գյուղերը և քաղաքները դատարկվեցին հայ բնակիչներից, որոնք մահվան սարսափի տակ և մեծ մասամբ իրական մահով տարագրվեցին դեպի հարավային անապատները: Կին, մայր, մանուկ, ծերունի այնպիսի դաժան վախճան ունեցան, որպիսին մեր ամենամռայլ երևակայությունն իսկ դժվարությամբ կարող է պատկերացնել:*

Արևելյան Հայաստանը ուրիշ տեսակետով դժվար դարաշրջան անցկացրեց: Պատերազմը, որ մղվում էր Հայաստանի սահմանների վրա անասելի փորձություններ պատճառեց: Այն պաշտոնական ոգևորությունից անկախ, որով բռնկված էին ղեկավար շրջանները՝ **դաշնակցած ռուսական պետության հետ և ներշնչված նրանից,— ժողովրդական զանգվածները լռության մեջ, բայց իրականի մեջ արյունաքամ էին լինում:** *Եվ «ազատագրական պատերազմը, որ պաշտոնական շրջանների կանխատեսությամբ, թերևս, մեկ կամ երկու յոթնյակ պիտի տևեր, երկարաձգվում էր անվերջ, անվախճան, դատարկելով գյուղացիական Հայաստանը իր ստեղծագործող, աշխատավոր տարրերից» (ընդգծ՝ Ալ. Ձ.):*

Եվ ապա. «... **Հին խոսք է թե՝ «Ինչ որ ծածկվեց իմաստուններից ու գիտուններից, հայտնի դարձավ տղաներին»:** *Եղիշե Չարենցը այդ իմաստուն տղաների մեջ եղավ: Նա ապրեց այդ տղաների ողբերգությունը և իր բանաստեղծության մեջ հետագայում բուռն արտահայտություն տվեց ոչ միայն իր, այլև իր նման շատերի, իր ժամանակի ներքին ապրումներին ու տրամադրություններին»:*

Այնուհետև անդրադառնալով «Ամենապոեմին», Հակոբյանը գրում է. «Միաժամանակ այն ընդարձակ խոսքը, որ դրված է այդ գործի հիմքում, այն մեծ պրոբլեմը, որ արծարծված է գեղարվեստական ու սոցիալական կրկնակի թափով – **«Ամենապոեմը» դարձնում է այն երկերից, որոնցով դարագլուխ է սկսվում...** *«Ամենապոեմը» ոչ միայն մեր երկրի քաղաքական ու սոցիալական պայծառ ապագան է ուրվագծում՝ աշխատավորական հիմքերի վրա, այլև ինքը հանդի-*

---

[3] *ԽՀ, 1924, 3 հուլիսի*

[4] *Թիվ 9–ում զետեղված էր և* **«Ինտերնացիոնալը»՝ Չարենցի թարգմանությամբ:**

սանում է մեր նորագույն բանաստեղծության հրաշալի մանուկը, որ զարգացման ու մեծության սուրբ հեռանկարներ է բաց անում մեր գրականության առջև:

Վաղվան գրականությունը նրանից է սկիզբ առնելու»[5]:

Դրա կողքին նույնքան հետաքրքիր է նույն 1924-ի դեկտեմբեր–1925-ի փետրվարի «Հայրենիքի» թվերում մաս առ մաս տպագրված Հակոբ Օշականի *«Եղիշե Չարենց» քննական ակնարկը: Հետաքրքիր է մանավանդ Ս. Հակոբյանի ակնարկի, դրանից քաղված հատվածների հետ կողք-կողքի: Քանի որ առաջին իսկ տողից երևում է, որ* Օշականը այն տղաներից չէ, որոնց ողբերգությունը Չարենցը ապրեց *և «հետագայում բուռն արտահայտություն տվեց ոչ միայն իր, այլև իր նման շատերի, իր ժամանակի նրբին ապրումներին ու տրամադրություններին». միևնույն է ողբերգորե՛ն, թե՛ հերոսական կեցվածքով: Ուրեմն և* **քաղենք** *Օշականից* **առաջին** *իսկ հատվածը. «Վերջին քանի մը տարիներու ընթացքին, «Նաիրի»-ի «մուժոտ» ու մշուշոտ երկրին մեջ համբավի եկած է երիտասարդ բանաստեղծ մը, որ, ըսելու ու մանավանդ «չափաբերելու» իր դյուրությամբն ու առատությամբը կը գերազանցե մեզ ծանոթ կարևոր «պոետները»: Նոր շարժումներու ատեն, բոլոր արմատական հառաջապահներուն նման, ան ալ քերթելու իր եռանդին կը միացնե անպատասխանատու հանդգնության մը կարգ մը հրապույրները»[6].— և այս հանգի «դյուրությամբ» թերթին հանձնված հեգնական-թեական հատվածներ՝ համեմված «արևելահայերո՛ւն, արևելահայո՛ւն» հոլովումներով. այնքան որ կարծես թուրք լինեն այդ արևելահայերը, որոնց «բերնեն ջուր կը վազե» Չարենցի պոեմների և ոչ միայն պոեմների համար կամ համից: Ինքնաբուխ այս ոճով էլ Օշականը ուղղակի, թե անուղղակի հերքում է թե՛ Չարենցին, թե՛ Աղբալյանին, թե՛ մանավանդ Մակինցյանին՝ Պոլսում 1923-ին հրատարակված «Պոեմների» առաջաբանի համար. թե՛ մանավանդ* Վարսենիկ Բաղեյան անուն-ազգանունով արևմտահայ այն կին արարածին, որը նույն օրերին «Հայաստանի կոչնակում» (թիվ 35, էջ 100) «Կոմունիստ Հայաստանի» վերնագրով տպագրված հոդվածում, դառնալով «Ես իմ անուշ Հայաստանի»-ին, *գրում էր.* «Հայ ասել՝ ազգայնական ասել է. այդպիսին է նույնիսկ ամենամուգ կարմիր Չարենցը»: *Իրոք, տպավորությունը Օշականի հոդվածաշարի ամբողջ ծավալուն մասից այն է, որ տող առ տող վրդովված-բորբոքված հերքում են Մակինցյանի առաջաբանի այս կարճառոտ հատվածի. «Եղիշե Չարենցը ունի ոճավորումներ Սայաթ-Նովայի ոճով, նա ոճավորել է միջնադարը իր «Ասպետական» պոեմով, նա արձակ գրելու փորձեր է անում իր «Երկիր Նաիրի» պոեմանման վեպով – այս ամենը ցույց է տալիս նրա տաղանդի բազմակողմանիությունը: Սակայն նրա փառքը առայժմ պոեմներն են: ...Վերջապես «Ամենապոեմն»*

---

[5] *Սիմոն Հակոբյան, Եղիշե Չարենց, Վիեննա, 1924, էջ 7–8, 10, 67–68:*

[6] *Հայրենիք, 1924, թիվ 2, էջ 52, 67, 63:*

ու «Քապկազը»մարմնացնում են մեր օրերի ժողովրդական, մասսայական ապրումները, առաջինը հայկական, երկրորդը անդրկովկասյան մասշտաբով»[7]:

Բայց քննենք դիտողություններն ըստ կարգի ու էության, ընթացքում գուցե թե. հաջողվի պարզել Օշականի ասես անսպառ, չարախնդության թիկունքում գործող ինչ–ինչ դրդիչներ:

«Ու մի մոռնաք,— գրում է նա,— որ Չարենցի աշխարհի ամենակարևոր գավառները հեղափոխության գոտիին մեջ կ՚իյնան:

Այս է պատճառը, որ նկարները, ինչպես կիները, ինչպես աղջիկները, երբ տեսարան կուգան ազատ խորհրդապաշտ զգեստավորումին, ու չեն նմանիր նորեն կյանքին ու աշխարհին իրական օրինակներուն»:

Բայց հասարակ հարց է ծագում. թե ինչու պետք է այդ «նկարները», «կիները» հանդես գան «ազատ» խորհրդապաշտ զգեստներից ու նմանվեն իրական օրինակներին. արվեստի այդ ո՞ր ըմբռնումով ու օրենքով: Թերևս, «սոցիալիստական ռեալիզմի», բայց այն 1923–ից շատ ավելի ուշ մկրտվեց: Առավել ևս զարմանալի է, որ քննադատը առանձին հետևողականություն չի էլ ցուցաբերում նման զգեստներից ոչ ազատ դիրքերում, ինչպես օրինակ, երբ մի քանի տողից հետո անդրադառնում է յոթը բալլադներից «Շամիրամին». «Կարելի էր հոս արտագրել ուրիշ քերթված մը, որ Շամիրամ վերնագիրը ունի,— հավաստում է նա,— ցույց տալու համար իրական կյանքին դեմ երազով մոտենալու կարողությունը, որ այս տղուն առաջին արժեքն է ապահովաբար»:

Բայց չէ որ այդ բալլադում կյանքին երազով մոտենալու հարկ չկա, որքանով խոսքը վերաբերում է պատերազմական օրհասի մեջ հոշոտվող հայրենիքին, իր գոյությանը:

Ապա համարյա անմիջապես անցնելով «Ասպետականին», ըստ երևույթին «Շամիրամը» ևս համարելով «կիներու» դասին պատկանողներից, Հակոբ Օշականը շարունակում է. «Ոչ մեկ տեղ այնքան հայտնի կ՚ըլլա Չարենցի հիմնական անընդունակությունը կիները տեսնելու, զգալու և զգալը ընելու, որքան այս խոշոր քերթվածին մեջ, որ ասպետական զարդավորումին ու պատմական հեռանկարին բոլոր նպաստն ու առավելությունները պիտի բերեր խղճամիտ բանաստեղծին: Անիկա ասպետ է, որ մուտք կը գտնե դղյակի մը մեջ: Անոր դիմավորումին կուգան

...երկու գեղանի
Աղջիկներ հուր ու հրեղեն»[8]:

Եվ սակայն «Ասպետականում» «դիմավորումի եկող այդ կիները» Չարենցի գեղարվեստական տեսողությամբ, զգացողությամբ և զգալ տալու ունակությամբ

[7] Տե՛ս Պ. Մակինցյանի առաջաբանը. Ե. Չարենց, Պոեմներ, Պոլիս, 1923, էջ 9, 10:
[8] Նույնը, 63, 64, 67:

դիտված են մեկ Ալֆոնս Անդոյի, և ապա խանդոտ մեկ ուրիշի աչքով, և երկու դեպքում էլ «կիները», ոչ այնքան կիներ են, որքան հրաշալիքների խորհրդանիշ՝ վիճակված ընդամենը մի ալֆոնսի, անունը՝ Անդո… **Ասել է՝ մեղմ ասած գավառական Անդո՝ ձևացյալ ֆրանսական դենդի — Ալֆոնս:**

Սա այն դեպքն է, երբ, իրոք, սովորականից—սովորական «տղու» տեղ դրած քննադատը՝ կանխակալ—կանխամտածված ինչ ուզեցել է (ի՛նչ լսել) այն էլ գրել է. Թռուցիկ հայացքով, ինչու չէ նաև «հանդուգն վստահությամբ», պահ իսկ չմտածելով, թե ինչ կարող են նշանակել՝ «իրական օրինակով» պատմում քանիցս հոլովվող Ալֆոնսն ու Անդոն կողք—կողքի…

Ուրեմն հիշեցնենք կրկին, որ **«Ասպետականը» ստեղծվել է 1923—ի օգոստոսի 1–3—ը, երբ բանաստեղծին հայտնի է դարձել «Երեքից» ֆրանսական դենդիի կեցվածքով անքանքար—մակաբույծ մեկի ծառայությունը…** *Մնում է զարմանալ, թե որքան բնական վարպետությամբ է խաղացել նույնանման մեկ ուրիշը «հակասովետական» մարդու իր դենդիական դերը, որի քարոզչությունը այդպես վստահել է անսխալական Օշականը: Անսխալական անգամ իսկ մարդկային—կենսաբանական ամենանուրբ այն կետում, թե արդյոք «կիներու» հանդեպ «զգայություն» ունի՞, թե՞ չունի այդ «տղան»՝ Զարենցը: Եվ ասել է, չզարմանաք նաև կարդալով «կիներուն» վերաբերող այս տողերը ևս. «Ու, երբ հարազատ ու մեծ Սայաթ—Նովայի մոտ զգացում և արվեստ իրար կը լրացնեն, հետևակ Զարենցին մեջ արվեստը կը տառապի հասնելու համար զգայնության մը խաղին, սևեռելու համար գիծերը մեծ զգացումի մը, որ չի կա»[9]:*

Իսկապես ասած՝ **«Առտնին զառանցանք»,— ինչպես կասեր Ավ. Իսահակյանը:**

Այսպես բացասման շնչով հոդվածաշարը շարունակվում է մինչև երրորդ մասը: Այստեղ արդեն նկատվում են որոշ չնչակի զիջումներ, իսկ հարվածի հիմնական ուղղությունն արդեն գործում է ընդհանրապես արևելահայ բանաստեղծության դեմ. ընդհատակյա թունոտ սլաքներով՝ պարզ է, Թումանյանի, Իսահակյանի ու Տերյանի դեմ: Զիջումներն էլ թող չհասկացվեն ինչ—որ չափով բացարձակ. ահա՛ այսպես նալին—մեխին խփելով. «… Անոր տողը երգեցիկ է, ավելի քան մեզի ծանոթ բոլոր արևելահայ բանաստեղծների…». և սրան հաջորդում է բացատրությունը. «Բնազդական է ան: Գրականության ընդհանուր տուրքերեն ու բանաստեղծության անկորուստ հրապույրներեն **շինված մեղեդի,** *առանց որու գոյություն չունի ոտանավորը: Եղանակի այս տաքությունը, քաղցրությունը կ'ընկերանա անոր ամեն տեղ, կանոնավոր, թանձր, քառահատվածյան չափեն մինչև բեկբեկուն, աճպարարական վանկարկումները: Նույնիսկ ամենավերջին կտորները, ուր վանկով մը տող կը շինե (սպասելով որ կետերով փոխարինվեն բառերը) զուրկ չեն հուզման այդ տարրեն»[10]:*

---

[9] *Նույնը, էջ 67:*

[10] *Նույնը, 1925, թիվ 4, էջ 41–42:*

Բայց մեղեդայնություն կոչվածը եթե կա՝ թեկուզ նալի ու մեխի հա*րաբերությամբ, բնազդական, թե՝* «շինված մեղեդի», *այն էլ՝ «տաքությամբ, քաղցրությամբ», ապա ինչպես ընդունենք, թե* Չարենցի չափատողերում «զգացում չկա», չկա «զգայնության խաղ» կամ «զգացում» չի նշանակում: Մի՞թե դրանք միմյանցից անջատ, փշո՛ւր-փշո՛ւր հատկանիշներ են բանաստեղծական հյուսվածքում:

Եվ հետո. հասնելով «Ամենապոեմին» *քննադատը գրում է, թե՝ «Պետք է հանդարտությամբ ընդունել այս ճիգին զառածումները: Ու չզայրանալ «Ամենապոեմի» վրա, որ վրիպած է առավելապես խորքի խեղճութենն, քան ուշադրությունը փշուր-փշուր տարտանող լսելու այդ ձևն»[11]: Վերը քաղված հատվածի «աճպարարական վանկարկումներին» արձագանքող, «... ուշադրությունը փշուր-փշուր տարտանող» արտահայտությունն էլ,— ինչպես կարելի է նկատել, վերաբերում են բանաստեղծական արվեստի մեղեդայնությունից «անբաժան կշռույթային» բաղադրիչին:*

Ուրեմն և հարկադրված ենք դառնալ շատ սովորական ինչ-ինչ հասկացությունների: Ամեն պարագայում ռիթմը, կշռույթը գրականության մեջ և արվեստում համազոր է դրամատիկ բախման-բորբոքմանը, դրամատիկ շարժմանն ու եռանդին, «շարժումնային հարստությանը» – որով և իրապես նշանավորվեց քսաներորդ դարը՝ կինոարվեստի հաղթարշավով. այն էլ Չապլինի հաղթարշավով...

Կշռույթը բանաստեղծության համար նույնքան միջուկային է, որքան երաժշտության, պարի, խաղի... *Ուստի ի պատիվ արևելահայ բանաստեղծության հարկ է շեշտել, որ Հովհ. Թումանյանի «Շունն ու կատվից» ու Ավ. Իսահակյանի «Մանիններից» սկսած,— այլև նրանց կողքին նաև տեսական խորքային ըմբռնումներով արևմտահայ Լևոն Շանթի բանաստեղծության ու թարգմանության մեջ,— սկզբնապես բանարվեստի խորաթափանց զգացողությամբ՝ կշռույթային կարևորության հարցերը մղվում են առաջին գիծ, և, հենց այդ կարևոր առումով էլ* արևելահայ բանաստեղծությունը ոտք-ոտքի քայլեց ու քայլում էր քսաներորդ դարի գեղարվեստական մտածողության հետ:

Հասկանալի է, մշտապես լիցքեր ստանալով նաև արևմուտքից, երբեմն ռուսական միջնորդությամբ: Տասական թվականների նախաշեմին այդօրինակ սնուցող դարձավ ֆուտուրիզմը. երկու հիմնական՝ շարժում=ռիթմ և ուժեղ անհատ հանգանակով, և թվում է, միանգամայն բանականորեն՝ ծագած-ձևավորված ըստ ամենայնի երաժշտական ու բուռն, եռանդաշատ ժողովրդի հայրենիք Իտալիայում: Եվ եթե՝ ի տարբերություն խորհրդապաշտության, որը Ռուսաստան փոխանցվեց նկատելիորեն ուշ,— և Վ. Տերյանն էլ սկզբնապես որդեգրեց Վերլենից, ու լեհական մոդեռնիստական միտումներից,— ապա ֆուտուրիզմը փոխանցվեց, տես, կայծակնային արագությամբ՝ համընկնելով ռուսական կայսրության մո-

---

[11] Նույնը, էջ 42:

ղովրդների հեղափոխական–դեմոկրատական ընդհանուր զարթոնքին: Ըստ այդմ էլ հանդանակների բնույթով դարձավ քաղաքային քաղքենիության ու դեմոկրատական զանգվածների պահանջների ու ճաշակի արձագանքողն ու արտահայտիչը՝ ապրելով գաղափարական գեղարվեստական յուրօրինակ փոխակերպություններ. թե՛ ըստ քաղքենիական ճաշակի և թե՛ ըստ և հանուն քաղաքային խոնարհ խավերի սոցիալական–հասարակական պահանջների: Ամեն դեպքում կոչված հրապարակային հաղորդակցությամբ ծառայելու և՛ մեկին, և՛ մյուսին. որով և՝ տարբերություններով հանդերձ, պայմանավորված էր ֆուտուրիստական բանաստեղծության հռետորիկ մարտական ուղղվածությունն ու արտահայտչականությունը, որի ծանրությունը ընկնում էր կշռույթային բաղադրիչի վրա: Անուրանալի ընդհանրություն Ի. Սևերյանինից... Վլ. Մայակովսկի ֆուտուրիստական տարատեսակների միջև:

Համարյա նույն արագությամբ տասականի նախաշեմին սկզբնապես իտալականից, շուտով և գլխավորապես ռուսականից ֆուտուրիզմը փոխանցվում է հայ իրականություն՝ Կարա–Դարվիշ, Գ. Աբով, Ա. Վշտունի, Ե. Չարենց ուղեգծով ներկայացնելով միջին օղակներում զգալի չափով կրճատված–շրջանցված ֆուտուրիզմի հետաքրքիր ազգային տարբերակներ: Նախ տեսականում որդեգրած շարժումն ու ռիթմը, գործնական գաղափարականում ազատ ու ուժեղ անհատի ինչ–ինչ՝ մեծապես սեռի և «սեռական առողջ բնազդի» արծարծումներ. այսպիսին եղան «կիների» հանդեպ «զգայականության» շեշտված դրդիչներով օծված Կարա–Դարվիշի «Կյանքի ջութակը» և Գ. Աբովի «Միայն կինը» (1919):

Բայց մի՞թե հենց այդ էր պակասում հայ ժողովրդին, և արդյոք նման նկրտումների մերժման նպատակներ չէր հետապնդում դեռևս 1912–ին հրատարակված Լ. Շանթի «Կինը»:

Պարզապես մոտեցումը նույնն է եղել և հարազատ ժողովրդի օրհասական արհավիրքների ճաշակած Չարենցի պարագայում, որի համար կինը իրականում, ինչպես և հիմնավորում է Գ. Մահարին սկզբնապես առանձնանում է Տերյանից տարբեր՝ «... դաժան իրապաշտական գույներով...»[12]:

Չարենցի ֆուտուրիստական գաղափարական–տեսական ըմբռնումների և ստեղծագործական իրացումների հարցերը այլևայլ առումներով բազմիցս շոշափվել են 1917–ից սկսած նախորդ գլուխներում, ինչ վերաբերում է «Ամենապոեմի» Օշականի դիտած «խորքի խեղճությանը», ապա պետք է ասենք հետևյալը. այդ պոեմը ստեղծվել է **հայոց հողի վրա նոր–նոր համահավաքությամբ ձևավորվող մեծագույն մասով անտառաճանաչ քաղաքային աշխատավորության հասարակական պատվերով**, որի համար գերագրական վարձատրությանը բանաստեղծը արժանացավ 1988–ի Հայոց ազգային–ազատագրական շարժման պատմական օրերի արդյունաբերական–գործարանային, ըստ ամենայ-

---

[12] Գ. Մահարի, Կինը Եղիշե Չարենցի երկերում, ՍԳ, 1967, թիվ 9, էջ 43:

նի արդեն դրադեռ աշխատավորական միլիոնավոր զանգվածների ամենօրյա մուտքով Թատերական հրապարակ՝ «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» պաստառներով... **Սա «Հայրենիքի զինվորի» իր միակ «անհուն» երազանքն էր, որը և կատարվեց...**

Եվ սակայն, Պողոս—Սողո, «որ գնաց Հռոմ» հուշարարությամբ նաև Պետրոս առաքյալ, ապա Բարդուղ (ասել է՝ Բարդուղիմեոս առաքյալ)... քրիստոնեական խորհրդանիշներով «Ամենապոեմը» թաքցնում է ազգի ուսյալ խավերին հասցեագրված մի այլ ընդհատակյա բովանդակություն ևս. և, զարմանալի է, որ վրիպել է քննադատ Օշականի ուշադրությունից:

Ավելացնենք նաև, որ տասնամյակներ անց հեռահար բարձրագույն գնահատականի արժանացավ նաև «Ամենապոեմում» իրացված վանկարկումներով ու վանկով մը տող... չլինելը (սպասելով, որ կետերով փոխարինվեին բառերը)» արտահայտչականությունը: Անուրանալիորեն Զարենցի ու Մահարու կարճառոտ խոսքի **«փլվածքների ու կետ գծի»** *վարպետության խորացումներով գնահատության արժանացրեց Պ. Սևակը, հավաստելով, թե՝ «Ես շատ խոսեցի ընդդեմ հասարակի և պարզունակի, ընդդեմ ծամծմվածի ու տափակի, ընդդեմ պատմողական—նկարագրականի՝ հանուն (կարճ ասեմ) փլվածքների ու կետգծի: Ես, այո՛ ոխերիմություն ունեմ դեպի այն գրողը, որը իսկն ասած, գրող չէ,* **այլ քարտուղար՝ ժողովի արձանագրություն կազմողի իմաստով»** *և՝ «որ այլևս չի կարելի ստեղծել, այսպես ասած,* **Թոնրատնային** *գրականություն. տոներդ կախես թոնիրը, քուրսու վրա էլ դնես գիրքը՝ մազա—չարազ—աղանդերի նման ու... կարդա՛ս ուտելու պես»[13]:*

Սա այն է, ինչ Մ. Սարյանը համարում է «ավելորդություններից ազատվել», ասել է, «ըսելու մի ձև է», որը Օշականի պահանջած ուշադրությունը պերճախոս բառերի վրա գամելու փոխարեն հրահրում—բորբոքում է ինչպես ուշադրություն, այնպես էլ երևակայություն, հիշողություն—զգայականություն... այս ամենի միաժամանակյա զուգորդական գործողություն, իմացական ու հոգեկան խլրտումների միասնական համալիրով:

Արդ, այդ փորձերով ևս Զարենցը քսաներորդ դարի բանաստեղծության զարգացման հեռանկարների հետ էր, ինչպես և ապացուցեց ժամանակը:

Անցնելով առաջ, քննության հաջորդ օղակին, Օշականը բարեհաճորեն գտնում է, որ «Զարենցի նշանակությունը կը մեծնա մանավանդ գույնի և պատկերի տեսակետներով», և նորից միանգամից ընթացք է տալիս իր հարձակումներին արևելահայ բանաստեղծության հասցեին. «Ոչ մեկ պարագա,— շարունակում է նա,— այնքան դժբախտ ազդեցություն ունեցավ արևելահայ բանաստեղծության վրա որքան **խելոք գույներու**, *ավելի ճիշտ չեզոք գույներու այն երկյուղած գործածությունը որով գրվեցան համբավավոր պոեմները և քնարական երջանիկ երգերը:*

---

[13] Պ. Սևակ, Եժ. 5, 1974, էջ 271, 264:

Երկար ատեն այս տափակությունը, աժգունությունը բացատրելու համար պարտավոր ունեցանք մեղադրանքը բեռնալ բարբառին ճիտին, որ, կոշտ, բայց առույգ, նախնական ժողովրդի մը բնականոնական զգայությունները ընդունակ էր արտաբերելու և որուն՝ կ'ուրանայինք արևմտյան մտածումին արդի նրբությունները արտահայտելու տաղանդ»[11]:

Օշականի մեծածավալ հոդվածից, հասկանալի է, այստեղ մեջբերվում են միայն որոշ հատվածներ. քաղված այս տողերը, չքաղվածներում հանդիպող «մշուշային շարժականություն», «բառերի խաղարկություն» կապակցությունների հարևանությամբ կասկած չեն թողնում, որ, «խելոք»—«չեզոք» գույներին առնչվող մեղադրանքը նախ վերաբերում են Իսահակյանի ու Տերյանի «քնարական երջանիկ երգերին»: Եվ սակայն, կարելի է կասկածել, թե գտնված լինի մեկը, որ գունային աղոտության կամ «մշուշային շարժականության» համար՝ ասել է մարդուն բնությունից տրված աշխարհատեսության համար,— այդօրինակ ծաղրաթաթախ անհանդուրժողականություն ցուցաբերված լինի, ասենք Վերլենի հանդեպ... կամ ասենք, Հովհաննիսյանի, Թումանյանի, Իսահակյանի «համբավավոր պոեմների» ու բանաստեղծությունների գունային մթնոլորտը հիշեցնող ստեղծագործությունների հանդեպ... Եվ նույնը չէ՞ն արդյոք Լ. Շանթի «Լեռան աղջիկը» պոեմի գույներն ու մթնոլորտը...

Հասկացանք. Վ. Տերյանն (իրապես քաղաքական բախտորոշ նկատառումով) անարդար է գտնվել արևմտահայ հեթանոսականության հանդեպ. բայց այդ նույն Տերյանը՝ Հովհաննիսյանի, Թումանյանի, Իսահակյանի հետ միասին, ի՞նչ եք կարծում, քանի խալվար արցունք—տառապանք թափած—այրած կլինեն արևմտահայության բախտի համար... Եվ հետո. ենթադրենք ինձ բոլորովին դուր չի գալիս աֆրիկյան որևէ ցեղի գրականություն կամ երգ, պար. բայց օրինավորության այդ ո՞ր օրենքով կարելի է առանց հոգնության անընդհատ նվաստացնել, անարգել այդ օտար ցեղախմբի կամ «նախնական ժողովրդի» մշակույթը, «ջենդլիական» այդ ո՞ր վարքով...

Մնում է զարմանալով—զարմանք կտրել, մտածելով՝ թե արդյոք որևէ ժողովրդի կյանքում հնարավոր է գտնել նման երևույթներ...

Եվ այսպես մեկ խրախուսելով, մեկ թեականորեն վերապահել—հերքելով խրախուսածը, ապա կրկին վերապահել—հաստատելով, քննադատը արևելահայերին շնորհած «քաղցրախոսությունից» անմիջապես հետո հավաստում է. «Երկու բանաստեղծ, շատ կարճ շրջանի մը մեջ տապալեցին այն վարկածը (ասել է՝ արևելահայ «բարբառին ճիտին» բեռնված վարկածը՝ Ալ. Զ.):

Կոստան Զարյան, մանավանդ իր արձակովը, այդ նախնական պիտակված բարբառեն, մեզի տված բոլորովին արդիական, ու գույնի տեսակետեն հիմնովին նոր նկարներ, որոնք ոչ միայն առարկաները իրենց երանգի ճշգրտության մեջ կը սևեռին, այլ զանոնք խորհրդի թրթռումին տակն ալ կը հաջողին պահված բռնել:

[11] Հայրենիք, 1925, թիվ 4, էջ 42:

Այս արձակը, նոր, գունավոր ու երաժշտական, որ մտածումը կը սեղմե մտեն և կը հաղթահարե անոր խուսափումները, ապացույց մըն է փառավոր հատկություններու»[15]:

Սույն «փառավոր հատկություններով» էլ, կարծում ենք, կարելի է ընդհանուր հայտարարի բերել Օշականի գեղագիտական ելակետ–հանգամանքների, այսպես ասած բուն «էսենցիան» այն է. առարկաների երանգային ճշգրիտ սևեռում, որպիսիք պահվում են նաև խորհուրդի «թրթռումին տակը». գունայնություն ու երաժշտականություն՝ որպիսիք մտիկից սեղմում են «մտածումը»՝ հաղթահարելով «անոր խուսափումները»:

Բայց մի՞թե, մի՞թե այսքանից էլ զուրկ են արևելահայ բանաստեղծության «համբավավոր պոեմներն» ու «քնարական երջանիկ երգերը»... ինչպես և Զարենցի ստեղծագործությունը:

Եվ որ նույնպես կարևոր է. Օշականի այս քննող հոդվածի առաջին իսկ հատվածից՝ միանգամայն համոզված, սպասում էի Կոստան Զարյանի գրական «փառավոր հատկությունների» սույն գնահատությանը: Գուցե գիտեի, որ արևելահայ բանաստեղծության անարգանքից ինչ–որ վատ հոտ է փչում, ընդհանրապես արևմտահայություն–արևելահայություն հակադրության նողկալի հոտ... Հայության միջև սեպ խրելու, հայության ընդհանրությունը ջլատելու նպատակին ուղղված մի ծառայություն, որը հազիվ թե կատարվեր առանց վարձատրության և կատարողն էլ չլիներ մի առանձնակի «դեղդի»... որը նաև տեղյակ պետք է եղած լիներ, որ իրենից հետո, շուտով արտասահման է ուղևորվելու Զարենցը՝ Ալեքսանդր Մյասնիկյանի հանձնարարությամբ՝ զբաղվելու միանգամայն հակադիր այլ՝ հայահավաք գործով, որը և զգալիորեն խափանվում է...

Արդեն իսկ տարիներ առաջ Զարենցի ուղևորության նյութերը պրպտելիս տպավորությունն այն էր, որ փարիզահայ մտավորականությունը ստույգ գիտեր խորհրդային «ծառայությունների» այդ «նրբությունները»: Կարելի է զարմանալ «Հայրենիքի» հրատարակիչները գլխի՞ չէին ընկնում, որ նման հրապարակումներով վնասում են հայության ընդհանուր և առանձին–առանձին վերցրած շահերին...

Ինչևէ. Կ. Զարյանից անմիջապես հետո Օշականն անցնում է Զարենցին, և վերստին գործում են՝ թեական–անթեական հեղհեղուկ մոտեցումներն ու չափանիշները:

«Եղիշե Զարենցը փորձը խորացուց ոտանավորին մեջ,— շարունակում է նա: — Անիկա մխվեցավ գույներու սենսոլիզմեն ներս գլխիվայր: Զուներ առաջինին (ասել է Կ. Զարյանի՝ Ալ. Զ.) ճաշակը և մարզված երևակայությունը: Զուներ մանավանդ անոր տենդի խղճահարությունները: Այս մկրտու-

[15] Նույնը, էջ 42:

թյունը իրեն արժեց քանի մը ձախող գրքույկ. մյուս կողմին անոր տվավ երջանիկ մարզվածություն մը, որով անիկա կխաղա գույներու հետ ողու անվախությամբ...»:

Ճիշտն ասած դժվար է հասկանալ, թե ինչո՞ւ Չարենցը «մխվեցավ գույներու սենսուալիզմին ներս գլխիվայր» և ինչո՞ւ միայն գլխիվայր, և այդ ինչպես թե՝ Չարենցը չունի Զարյանի «տենդլի խղճահարությունը». անշուշտ, կարելի է ասել՝ «տենդլի» չունի՞... բայց այդ ո՞ւմ է պատկանում «Կապուտաչյա հայրենիքի», «Դանթեականի», «Հատվածի», «Վահագնի»... խղճահարությունը... և այդ ո՞ր համեմատությամբ է, որ Չարենցը չունի «երևակայության մարզվածություն» ...երբ բավական է հիշել «Սոման»...

Եվ բնորոշ է, որ հենց այս հանգույցում էլ հնչում է Օշականի հերթական, այս անգամ արդեն **«Նոկաուտային հարվածը»** արևելահայ ողջ գրականությանը, այն էլ միանգամից այսպիսին. «Եղիշե Չարենցը մինակը տված է արևելահայ ոտանավորին այնքան պատկեր, որքան չէ ըրած ատիկա անոնց քերթողներուն ամբողջ շարանը, սկսելով Աբովյանեն»[16]: Տե՛ր Աստված...

«Անո՛նց, անո՛նց, անո՛նց»՝ իսկապես որ «անո՛նց»... դեղարվեստական բարձրագույնից—գերբարձրագույն չափանիշներով... և նորեն անցնելով «անոնց»՝ Չարենցին, ամփոփում է յուր քննական մեկնությունը ընդհանրական այսպիսի եզրակացություններով. «Անոր հեղինակը կը բերե բանաստեղծի ապահով խառնվածք, երաժշտական ապահով բնազդ, զգայնություն ու որոշ չափի մը վրա՝ երևակայություն: Այսինքն հիմնական տարրերը բոլոր գրական հորինումներուն»:

Թվում է, վերջապես ասվեցին—հաստատվեցին ոչ թեական ինչ-ինչ հատկանիշներ, և նորից հաջորդում են հերքող թեականները՝ երկու այսպիսի տարբերակով. «Եղիշե Չարենց վտանգին կը վազե ամեն ու դյուրին հերոսությամբ մը դարձյալ, երբ ըսելու ձևերը պարզելով, ամբոխին՝ դեպի լեզուն թեքելով, կը մոռնա արվեստին հավիտենական նկարագիրը: Իր նորագույն էջերը արդեն իսկ դուրս են ասոր սահմաններեն»: Եվ ապա. «Տակավին շատ երիտասարդ, անիկա ասով իսկ կը դադարի վճռված ու փակված հարց մը, ըլլալե մեր գրականության համար: Ան մտած է առեղծվածի շրջանին մեջ: Ինչպե՞ս դուրս կուգա անկե: Ապագան պիտի ըսե ատիկա»:

Բայց բանաստեղծի, գրողի, արվեստագետի համար «արվեստին հավիտենական նկարագիրը» երբևէ ենթադրվելի չէ՝ բաժան հարազատ ժողովրդի նկարագրից ու բախտից. և առհասարակ՝ ժողովուրդների, ազգերի նկարագրից ու բախտից վեր որևէ գրականություն չի եղել ու չի լինում:

Բայց հետաքրքիր է, Օշականն անդրադարձե՞լ է արդյոք, թե ինչպե՞ս դուրս

[16] Նույնը, էջ 42, 48, 50:

նկավ Զարենցը «առեղծվածից», և ինչպե՞ս՝ Կոստան Զարյանը... Թաց ու չորի հարաբերակցությամբ, անշուշտ... «տենդիական»:

Ավելացնենք նաև, որ Կ. Զարյանին առիթ կունենանք անդրադառնալու հաջորդ էջերում ևս:

Իսկ Օշականը՝ ի պատի՛վ... որքան գիտեմ՝ հետագա հոդվածներում հրաժարվել է նման բնույթի «Թեականներից»... Իմանալո՞վ ինչը ինչոց է''...

'' *Իսկ մինչ այդ. չէ որ տակավին 1914-ին* Կ. Պոլսում Կ. Զարյանի հետ միասին հրապարակել էին «տենդիական» «Հանդես գրականության և արվեստի (ամսագիր). տնօր.-խմբ.՝ Կոստան Զարյան, խմբագիրներ՝ Գեղամ Բարսեղյան, Հակոբ Քյուֆենյան *(Օշական) (1–7)16 էջ...տպ. Օ. Արզումանի: Տե՛ս Հայ պարբերական մամուլը, Մատենագիտական համահավաք, ցուցակ 1794–1980, էջ 102:*

ՀՕԿ... ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ[1]

Եվ այսպես խորհրդային վերին ատյանների բարեհաճությամբ ստացած ռուսերեն և ֆրանսերեն լեզվով լրացված–հաստատված վիզան այսպիսին էր.

1.


REPUBLIQUE SOCIALISTE FEDERATIVE DES SOVIETS

DE RUSSIE.

Commissariat du Peuple
pour les Affaires Etrangères.

Lettre de Courrier

Le porteur de la présente le citoyen de l'U.R.S.S
Jeguiché Abgarovitch Tcharents
se rend en Turquie - Italie en qualité de Courrier diplomatique
porteur de — deux — paquets
de poste diplomatique, adressés au Consulat général de l'U.R.S.S à Constantinople
et à la Représentation Plénipotentiaire de l'U.R.S.S. en Italie - à Rome.
Les autorités sont priées de laisser passer le citoyen Tcharents
librement avec ses bagages et de lui donner aide et assistance en cas de besoin.

Tiflis, le 17 Novembre 1924

Au nom du Commissaire du Peuple
pour les Affaires Etrangères:

L. S.

Ահա սա էր այն անցագիրը, որ Տրապիզոնում արձանագրվելուց հետո պետք է ներկայացվեր Կոնստանդնուպոլսի և Հռոմի հյուպատոսարաններ: Այդպես էլ լինում է. և սակայն վերադարձին ինչպես Թիֆլիսում, Ալեքպոլում ու Երևանում, այնպես էլ 1934-ին գրողների միության անդամության համար գրված ինքնակենսագրականում հրավարտակվում էր այսպես. «1925 թ. ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի կողմից գործուղվում է արտասահման (Թուրքիա, Հունաստան, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա)[2]: Հերթականությունը փոքր-ինչ խախտված է (այդ մասին հետո), խախտված չէ միայն իր համար ամենակարևորը՝ **«Անդրերկրկոմը»** ասել է Մյասնիկյանը, մինչդեռ մահվան քառասուն օրը չբոլորած Արտ. Կարինյանը հրապարակել-վկայել էր, թե Մյասնիկյանը եղել է **երկու կուսակցության անդամ.** ասել է **այդ ազգանունը արդեն տաբու էր:** Ամեն պարագայում՝ հոգով-մտքով որքան էլ ծպտյալ, Կարինյանը շարունակում էր մնալ Տերյանի ու Մյասնիկյանի աննահանջ կրնկակոխ հակառակորդը. իհարկե, միանգամայն «տեղյակ» Ստալինի վերաբերմունքին՝ ինչպես Տերյանի, այնպես էլ Մյասնիկյանի հանդեպ: Ըստ այդմ հետադարձ հայացքով Շահումյանի և 26-ի «փորձից» հետո միամտություն կլիներ պատահականություն նկատել Մյասնիկյանին գործուղելը լեհական ճակատ (այն ավելի քան վայելում էր՝ հեռանկարում գեներալիսիմուսի հավակնորդին): Ուրեմն և հիշենք. երբեք չար ու չարաբո չնկատվեց **Մյասնիկովը Բելոռուսում,** ինչպես **Ս. Մ. Կիրովը** Հայերիս միջավայրում:

Այնպես որ 20-30-ականի հայ-բելոռուսական, հայ-ուկրաինական գրական սերտ հարաբերությունները լուսավորված էին Ալ. Մյասնիկյանի անաղարտ պահվածքով Բելոռուսում (ինչպես երկրորդ աշխարհամարտից հետո Մերձբալթյան երկրներում Հովհ. Բաղրամյանի): Ըստ այդմ պատահական չէ, որ նույն 1919-ի միջոցին երիտասարդ Յանկա Կուպալան «Топжище» (Շուկա, Վաճառանոց, Վաճառավայր) վերնագրով հոդվածում օրինական կրքով գրում էր. «Եվ դեպի ո՞ւր և ի՞նչ նպատակով եք դուք առաջ տանում այսօրվա պատմությունը. բոլոր դուք անտանտաներդ, անտանտանիկներդ ու ձեր նմանները: Դուք սանձազերծեցիք համաշխարհային պատերազմ ձեր գրպանների շահախնդրությամբ. իսկ այնուհետև այդ պատերազմը երկարաձգվեց հանուն ձեր միևնույն գրպանների շահերի և արձակեցիք լուզունգ, թե պատերազմում եք հանուն ժողովուրդների ազատագրման: Իսկ այնուհետև էլ, երբ սկսեցին ճռճռալ ու կործանվել ձեր արյունալի գահերն ու թագերը, ի՞նչ ասացիք դուք: Եվ ի՞նչ արեցիք: Դուք վաստաբանեցիք և՛ մարդուն առանձին վերցրած, և՛ ամբողջ ժողովուրդների... ինչպես հարյուր տարի առաջ՝ շահագործողների լծի տակ տնքում են Բելոռուսը, Ուկրաինան, Հայաստանը, Հնդկաստանը և տասնյակ այլ պետություն-

[2] ԳԱԹ, Գմ ֆոնդ:

ներ ու ժողովուրդներ: Ուրիշներին ազատագրելու ձեր խոսքերը՝ ծաղր են անմռունչ ազատազուրկների հասցեին»[3]:

Եվ այսպես վիզան ստանալուց հետո...

Երկու օր Բաթումում

Հոգում հազար տեսակ նստվածքներ կուտակած–բարդած Չարենցը հասնում է Բաթում, և նույն օրն էլ տեղի է ունենում այն հանդիպումը, որ քաղվող այս հատվածով մտաբերում է Սուրեն Հարությունյանը. «Չարենցը եկավ Բաթում, գնում էր արտասահման... Այցելեց մեր դպրոցը: Երկու դասարան միմյանցից բաժանող շարժական պատը ծալել էինք, դահլիճ էր ստացվել: Չարենցը երևաց աշակերտներին՝ էլեգանտ հագնված, աչքերը զարմանալիորեն փայլում էին: Արտակարգ ոգեշնչում կար նրա խոսքի մեջ, խոսում էր կրակին տալով՝ պրոլետարական գրականության մասին: 14–15 տարեկան պատանիներս գիտեինք «Ամենապոեմը», անշուշտ, «Ամբոխները խելագարվածը», ռադիոչարքը... Շատ բան դոց գիտեինք և գրում էինք նրա նման. ողբերգորեն սխալված լինելով, թե իբր յուրաքանչյուրիս մեջ Չարենց կա... Արբած էինք, կլանում էինք նրան, և նրա մեջ Չարենցն էր տիրակալը» (ՀԵՉժ, 2, 346):

Երկրորդ վկան բանաստեղծին կրնկակոխ հետևող (երևի թե, հենց նույն գնացքում) ողբերգորեն «անսխալական դենդի» Վշտունին էր, որը Հակոբ Հակոբյանին ուղղած «1925, նոյեմբերի 25» տարեթվով նամակում հայտնում էր, թե **նոյեմբերի 21–ին Չարենցը Բաթումում զեկուցել է** «Հայ գրականության մասին» քարկոծելով Հակոբյանին, և որ ինքն էլ զեկուցելու է նոյեմբերի 25–ին՝ ջարդ ու փշուր անելու համար Չարենցի ֆուտուրիզմն ու «լեֆիստական կարծիքը»[4]:

Ինչպես տեսնում ենք, Հարությունյանի ակնարկները ճշտվում–բացահայտվում են. տեղյակ Վշտունու Բաթում ժամանելուն՝ Չարենցը փայլատակող աչքերով մարտականորեն կրակին է տալիս «պրոլետարական գրականության մասին»: Եվ սակայն, չգիտես ինչու, Վշտունու հակադասախոսության դեպքում հուշագիրը լռում է:

Այնուհետև Պոլիս հասնելուց հետո «Ժամանակ» օրաթերթի խմբագիրներից մեկի «Ի՞նչ վիճակի մեջ են Պոլսեն Հայաստան մեկնող գաղթականները» հարցին տված պատասխանից էլ պարզվում է, որ Բաթումում ինքը տեսակցություն է ու-

[3] Քաղված է ԽՍՀՄ ժողովուրդների գրական կապերին նվիրված Գրականության ինստիտուտի աշխատակից հանգուցյալ Սեդա Ամիրյանի տասնյակ տարիների հանգամանալի–մանրակրկիտ աշխատասիրությունից, որ ժամանակին կարդացել և հրատարակության է հանձնարարել նվաստս. իսկ այնուհետև խմբագրել է գրականագետ Սերգեյ Դարոնյանը և սակայն մնացել է անտիպ: Ռուսերեն լեզվով շարադրված փաստալի աշխատասիրությանը, թերևս, սպասվում է նույն ճակատագիրը, ինչ վիճակվեց 1937–ի զոհերից շատերի աշխատություններին...

[4] ԳԱԹ, Հպգ ասոցիացիայի ֆ., N 107:

նեցել քաղաքապետի հետ, որը «մեծ գյուրություններ» է ցույց տված եղել գաղթականների տեղավորման ու փոխադրման գործին, և որ «... գաղթականներին շատերը իրենց հետ չահու համար ապրանք բերած են և առանց ոևէ դժվարության կրցած են մաքսատունն անցնել» (6, 297):

Մեզ հասած հաջորդ հավաստի «տեղեկությունն» արդեն «1924 թ. նոյեմբեր 20, Բաթում, Ծովափ» տարեթվով «Ծովափին» քերթվածն է. «Ծեր ձկնորսի և երկու կարմիր արմնջցի» զրույցի ձևով և «համաշխարհային հեղափոխության» կոմալմանախային–հակակոմալմանախային ոճաբանությամբ շարահարված ադիտ–չափածո՝ կառուցված ալեծուփ ծովում ձուկ որսացող Իլյիչի կարթի փոխաբերական առանցքով.

— Սպասի՛ր,
Եվրոպի բուրժույը
Որքան էլ արդեկքներ բարդի–
Միևնո՛ւյն է՝
Էգուց ընկնելու է
Մեր ծերուկ Իլյիչի կարթին... (3, 234):

Փոխաբերության–այլաբանության ներսում ակներև է ձկանն առնչվող հայոց հանրահայտ առածների լիցքը՝ այն էլ տարբերակային լայն շրջագծով. այն է՝ «Մեծ ձուկը պզտիկին կուլ կուտա», «Պղտոր ջրի մեջ ձուկ բռնել», «Մինչև ջուրը չը պղտորվի, ձուկ չի բռնվի», «Պղտոր ջրի մեջ թոռ գցել...»[5]: Մանավանդ, որ փոխաբերականը քերթվածում շրջավորված–համեմված է «Հայ–թուրք կռիվների» արծարծումով, որ առնչվում է «մի առ մի» հիշատակվող ձկների ու ձկնիկների այս թվին.

— Առաջին ձուկն աշխարհում–
Ֆորելն է –ասում է – հայերի,
Ֆորելից լավ ձուկ–չի՛ք,
Իսկ հայե՞րը...
Մարդ են: Ոչի՛նչ... (3, 232):

Ասել է թե՝ և՛ պատմող ծերունու, և՛ «կրասնաարմեյցների» ու Իլյիչի համար հայերն իրենց ողբերգությամբ ու բախտով ընդամենը՝ «Մարդ են: Ոչի՛նչ...»: Փոխաբերականի գաղտնախոսական մի այլ տարբերակով էլ առաջինը ներթադրվում է որպես «Իլյիչի կարթին» ընկած «լավ ձուկ»...

Ահա այսպես Բաթումի ծովափին...

---

[5] *Ա. Ղանալանյան, Առածանի, 1960, էջ 192, 237:*

«Դեպի Ստամբոլ»

Եվ ահա, հարանման մտորումներով, հաջորդ՝ նոյեմբերի 21-ին «Բուկովինա» նավով բանաստեղծը շարունակում է ճանապարհը: Անկարելի է, թե լինի չնչին վերապահում, որ նա Պոլիս–Թուրքիա է ուղևորվել ահավոր ապրումներով՝ խեղդելով մոլեգնող դառնությունն ու ցավը. որ ամբողջ ժամանակ մեկ առ մեկ մտաբերել–վերապրել է համաշխարհային պատերազմի արհավիրքները՝ հայոց բախտին վերաբերող ամարդի խարդավանքներով: Ավելին. փոխաբերական–այլաբանական ծածկույթով նույնիսկ ցուցադրել–խարանել է «համաշխարհային հեղափոխության» քողի տակ սքողված գաղութատիրական շարունակվող նկրտումներ: Թեկուզ այս մեկը՝ մարմին առած գիշատչորեն «ցատկելու պատրաստ» նավի փոխաբերությամբ.

Ճեղքում է ջուրը ճղփոցով
«Բուկովի՛նա» նավը...
Ոնց որ դեղին կատու՝
Բաթումը մեր ափից
Թարթում է աչքերը:
Չափում է աչքերով հեռուն:
Պատրաստ է ցատկելու,
Ո՞ւր:
— Մինչև Ստամբոլ... (3, 235):

Եվ սա է առաջին իսկ հատվածով մատուցվող «Դեպի Ստամբոլի» բուն իմաստը. ներկայացվում է ռուսական կայսրության դարավոր «դարդանելյացավը», որի համար ամեն անգամ զոհասեղան էր դառնում հայոց հայրենիքը:

Իմաստալից է և շարունակությունը՝ Մուստաֆա Սուբխիի անվան հոլովումներով: Հիշենք. 1924-ին քեմալական Թուրքիան շարունակում էր համարվել խորհրդային երկրի «հեղափոխական դաշնակիցը»: **Կոմունիստ Սուբխիի** *և ընկերների սպանությամբ* **բանաստեղծը խփում էր սուտ նշանակետին:** *Հիշենք նաև, որ 1924-ի ընթացքում քրդական շարժումների պատճառով, այսպես կոչված Մոսուլի հարցով բավականաչափ սրված էին հարաբերությունները Թուրքիայի և Անգլիայի միջև, և Թուրքիայի համար ստեղծված ծանր իրավիճակում նրա միակ թիկունքը Խորհրդային Միությունն էր:*

Ուրեմն և այդ պայմաններում տեսեք թե ինչպիսիք են Չարենցի խտացրած–խոսուն դարձդարձումները. «Սառել է դեմքին թրքական–Մի ինքնակամ ժպիտ» (վերաբերում է Սուբխիին), կամ՝ «Ներքևում ջրերը պարող Լեդի են երևի, ոնց որ մաղձը» (3, 237, 238): Անշուշտ, այս պատճառով էլ

1924-ի նոյեմբերի 21–22-ին Բաթումից–Տրապիզոն ճանապարհին հյուսած «Դեպի Ստամբոլը» տպագրվել է ուշ՝ Նք 1926-ի երկրորդ գրքում, երբ հանդեսի քարտուղարը Չարենցն էր: Խորհուրդների վարած հայադավ քաղաքականության ըստ ամենայնի հասկացողությամբ՝ հայոց մտավորականության ընդդիմադիր դիրքորոշումը, իհարկե, շարունակվում էր և, բնորոշ է, Իլյիչի կարծի փոխաբերական լիցքով հյուսված «Ծովափին» քերթվածի կողքին Նո- **յեմբերի 29-ին ԽՀ-ի էջերում** *հանդես եկած տասնյակից ավելի մտավորականներից համարյա բոլորն էլ ինչ-որ ձևով արտահայտել են իրենց ընդդիմությունը: Ինչ խոսք, ամեն դեպքում ժողովրդի բնականոն կյանքը վերականգնելու դիրքերից: Ասես, ճիշտ և ճիշտ մեր օրերի մտահոգություններով* **Մ. Աբեղյանը գրում էր. «Գլուխ է գալիս հողաբաժանությունը: Տեղավորվում և հող է ստանում գաղթականությունը: Երկրում այսպիսով սկսվում է բնականոն կյանքը. հետևանքը այն է լինում, որ 1923 թ. արդեն վերանում է սովի ուրվականը** *(հասկանալի է, «Կոմունիզմի ուրվականի» փոխարեն՝ Ալ. Չ.): 1924 թ. լավատեղյակ մարդկանց վկայությամբ, երկրի հին գյուղական բնակիչները արդեն հասել են նախապատերազմական տնտեսական դրությանը»:*

Մ. Ջանանի «Գնա՛ բալամ...» ակնարկով վերաբորբոքվում–հիշեցվում են 1922 թ. սեպտեմբերի հայության հերթական մղձավանջային օրերը Կ. Պոլսում, երբ թուրք–խորհրդային գործակցությամբ «Հունական հաղթական բանակը» մտնվել էր նահանջի՝ նոր խժդժությունների ոգեկոչելով խուժանին:

Համանման շեշտեր ենք գտնում Հ. Աճառյանի, Հ. Մանանդյանի, Ս. Կամսարականի, Ստ. Զորյանի, Լ. Ռոտինյանի, Գ. Արեշյանի, Լ. Քալանթարի և մյուսների խոսքում: Եվ բոլորն էլ՝ ամեն դեպքում ժողովրդի բնականոն կյանքի վերստեղծման միասնական կամք ու հավատով:

Տրապիզոն... «Լենինն ու Ալին»

Իսկ նոյեմբերի 23-ից Չարենցն արդեն Տրապիզոնում էր: Եվ հասնելու օրն իսկ «համամիութենական հյուպատոսը» հասցրել էր պատմել Ալու պատմությունը: Պարզ է. Չարենցին՝ «հեղափոխականացնող» (՞) Թուրքիայի օդում տրամադրելուց ավելի (դժվարանում եմ գտնել անունը)՝ ինչ-որ տեսակի վավերաթուղթ պոկելու նպատակով: Քանի որ իրականում փաստորեն Տրապիզոնում բանաստեղծն անցել է քննա–փորձաշրջան և առանց որոշակի արդյունքի չէր ստանա ճանապարհը շարունակելու թույլտվություն: Պատահական չէ, որ ճանապարհը շարունակելու նշումը անցագրում կրում է «1924 նոյեմբերի 30» ամսաթիվը. սա- ունել է՝ երբ հյուպատոսն արդեն հավաստել էր, որ «Լենինն ու Ալին» ուղարկվել է Հայաստան և պետք է տպագրվի:

Այնպես որ, իզուր չէր բանաստեղծը ադխո–բալլադին կցել Հատուկ Հետգրություն և ԽՀ խմբագրին Հասցեագրած տողեր[6]: Շատափցնելու, արդարանալու (կապես՝ չքմեղանալու) ակնՀայտ նշաններ, որպիսիք Հուշում են նաև, որ Չարենցը Հիմնավորապես ճաշակել և ճաշակում էր խորՀրդային լրանսական–քարոզչական ծառայության վարք ու բարքերը (Թիֆլիսյան կառապանների «չպխոնականից» Հարյուրապատիկ ավելին...): Ուրեմն և պատկերացնել պետք է ՀայՀոյանքներով Համեմված իր սրտնեղության չափը. «լացող Ալի»... մտաբերենք՝ «չէ՛, չէ՛, մի Ալի» «պլոխ», «Ալի աղլխոր... աղլխոր»,— ընդ որում տողատակի ծանոթությամբ էլ՝ «Ալին վատ է զգում իրեն, Ալին լալիս է»՝ թարգմանությամբ... Չէ՛, չէ՛ մի ... **Իսկ եթե առՀասարակ լալիս է մի ամբողջ ժողովուրդ...**

Բայց նոյեմբերի 25–ին Երևան առաքված ադխո–բալլադը օրաթերթը տպագրում է միայն 1925–ի Հունվարի 21–ին... Անբեույթ Հետաձգվել էր Լենինի մաՀվան տարելիցին,— և քարոզչական–գործնական կրկնակի արդյունքով՝ միաժամանակ տպագրվում է թե՛ ԽՀ, թե՛ առանձին գրքով: (Ըստ այդմ տե՛ս նաև բալլադի ծանոթագրությունները ու բնագրային տարբերությունները (2, 350–352):

Իսկ դիվանագիտական խարդավանքների ու լրտեսության տրապիզոնյան բուն իրողությունները՝ այլևայլ կծիկներով վիճակված է վեր Հանելու սերունդներին. Հասկանալի է, բանաստեղծի պաշտպանողական–ցուցադրական բազմասայրի վարք ու պաՀվածքով: Այնպես որ Տրապիզոնը Հիմնավոր սկիզբն էր՝ Պոլիս, Աթենք, Հռոմ, Նեապոլ, Վենետիկ, Փարիզ, Բեռլին... Մոսկվա–ուղևորության ողջ ընթացքով՝ կատարելագործվող, ամենատարբեր փոփոխակներով, դավադիր ծուղակ–ծանծաղուտներով, որպիսիք եղել են բանաստեղծի մշտական ուղեկիցը:

---

[*] «P.S. Պոեմի նյութը վերցված է իրականությունից: Տրապիզոնի մեր Համաժողովրդական Հյուպատոսն ինձ պատմեց, որ Լենինի մաՀվան լուրը Տրապիզոն Հասնելու օրը, կեսգիշերին իր մոտ է գալիս Ալի անունով մի թուրք նավաստի՝ իր վիշտն ու Հարգանքը Հայտնելու: Կարծում եմ դեպքն արժանի է ավելի լավ պոեմի, քան սա է» (2, 350):

[6] Այդ միջոցին Տրապիզոնում «Համաժողովրդական Հյուպատոս» էր Էտինհոֆ (դուցե Էղինով) ազգանունով մեկը:

Ուշագրավ է. Տրապիզոն–Էրզրում–Վան վերջնակետով պեղումների մեկնող Հ. *Օրբելին՝* Էրզրում, 2 օգոստոսի 1911 տարեթվով Նիկ. Մառին ուղղած նամակում գրում է. «... *Տրապիզոնի և այստեղի Հյուպատոսարանում արժանացա այնպիսի բարեացակամ վերաբերմունքի ու աջակցության, որպիսին չէի սպասում: Միայն լակոտ Սերաֆիմովի տիպի սուրյեկտներով լեցուն տխրաՀռչակ դեսպանությունը չցանկացավ ոչինչ անել: Չարժե նրանց մասին գրել, մինչդեռ նրանց մասին շատ ծիծաղելի բաներ կպատմեմ: Նրանցից բոլորն էլ մի–մի դեսպան են: Դեսպանությունը ինձ Հրամցրեց ամեն ինչ. լրացնել մաքուր էջ՝ ստոիկանության, թուրքական իշխանությունների երաշխավորության = ամեն՝ ամեն ինչ: Կոստանդնուպոլսի դեսպանության գյադայական աՀա մեկ որջ ես:*

Ներողամիտ եղեք, որ այսպես ՀայՀոյում եմ, ես անգամ չեմ մտածել, որ կարելի է այդպես վերաբերվել ռուսա–Հպատակին, եթե նույնիսկ նա գնացել է մաքուր օդ շնչելու: Ուղղակի վիրավորական է»:

Տե՛ս Հայագիտական Հետազոտություններ, Ա պրակ, 1974, էջ 267, 268:

ՊՈԼԻ՛Ս, ՊՈԼԻ՛Ս...

Պարզ է... նոյեմբերի 30-ին կամ հաջորդ օրն էլ Տրապիզոնից ճանապարհվում է Կ. Պոլիս՝ հետն էլ հանձնարարական մի ծրար հյուպատոսարանի քարտուղարի բարդագույն ստորագրությամբ «Кур'ерский лист»-ի ճակատին՝ ինքնագիր մակագրությամբ. «Один пакет достовить для Генконсульства в Константинополе...30/09, 1924») «Մեկ ծրար հասցնելու Կոստանդնուպոլսում գլխավոր հյուպատոսին»):

Եվ այսպես՝ Տրապիզոնից Սամսուն, Զոնգուլդակ՝ հնօրյա հիշատակություններով «մռայլ, դաժան» Սև ծովով, ծովային փոթորիկներով հայտնի «Անհյուրընկալ Պոնտոսով», ապա Բոսֆորով՝ Մարմարա ծով... «Բոսֆորի հրաշագեղ ափերով», այսօրինակ խլրտուն «պոնորամայով»՝ երբ նավի հետ մրցելով սլանում էին դելֆինները, երբեմն ջրից դուրս թռչելով: Զառիթափ իջնող ցամաքի ափերը ծածկված էին գեղեցիկ այգիներով»,— 1910-ի մարտի առաջին օրերի Մ. Սարյանի տեսողությամբ ինչպես և տպավորություններով. «... Հյուրանոցի տերը շատ սիրով ընդունեց ինձ: Կարծես վաղուց ի վեր աղ ու հաց էինք ուտում իրար հետ: Չորրորդ հարկում սենյակ հատկացրեց, որի պատուհաններից ներս էր թափանցում փողոցի հոգնեցնող աղմուկը:

Բարեհոգի տերը հյուրասեր ու իր քաղաքավարությունն անընդհատ ցուցաբերող մի մարդ էր: Խոսել շատ էր սիրում: Հայերեն վատ չգիտեր: Անընդհատ ասում էր, թե Կոստանդնուպոլսում հայերը թվով երրորդն են թուրքերից ու հույներից հետո»:

Եվ սրանից հետո էլ նկարչի այս ընդհանրացումը. «Կոստանդնուպոլիսը դեռ բյուզանդական շրջանում խոշոր կենտրոն էր, ուր ձգտում էին նաև բազմաթիվ հայեր: Ըստ էության, քաղաքը Արևմտյան Հայաստանի կենտրոնն էր, ուր և ստեղծվել էր հայկական մեծ կուլտուրա: Պոլիսը տվեց Զուխաջյան, Կոմիտաս, Ադամյան, Սիրանույշ, Պարոնյան, Զոհրապ, Երուխան, Օտյան, Վարուժան, Դուրյան, Սիամանթո, Մեծարենց և ուրիշ մեծություններ: Պոլսի հայ կուլտուրան զարգանում էր Եվրոպայի և հատկապես ֆրանսիական առաջադեմ կուլտուրայի ազդեցությամբ, բայց ֆրանսիականը յուրացնում էին ազգային հիմքի վրա»:

Ժամանակի թույլատրված սահմաններում տեղը-տեղին ընդհանրացում, ան-

շուշտ, ներառյալ «ուրիշ մեծություններ»: Այդ թվում Թորոս Թորամանյան, բայց և Լևոն Շանթ, որոնք տառացիորեն կուռք էին Սարյանի համար[1]...

Պոլսական այս ընդհանրական և այլ իրողությունների մասին խոսք կլինի Սարյանի գրառումներով սկիզբ առնող այս կարճառոտ նախաբանում, որքանով էապես Զարենցի հեռակա տևական Չիչերոնն 1923-ի ծանոթության օրերից (դրանից էլ առաջ) մնում է Սարյանը[2]: Ուրեմն և կարելի է ենթադրել, որ հասնելու օրից Սարյանի հետքերով էլ փորձել է ծանոթանալ քաղաքին: Սկսած՝ «ամենահետաքրքիր մասից»՝ Ստամբուլից, Կենտրոնական մեծ շուկա, Այա-Սոֆիա... Ներա՝ որտեղ և շուտով փոխադրվում է ինքը... Ապա նկարչի նախընտրած«զբոսաշրջության հետևությամբ»՝ կոստանդնուպոլիսյան փողոցներ... նեղ, մարդաշատ ու շներով լի...». սույն նկարագրականով հանդերձ. «... Շները տեղավորվում էին հոտերով, ավելի ճիշտ, ընտանիքներով, որոշակի տեղերում և վարում էին նստակյաց կյանք: Ամբողջ քաղաքում տեղ, անկյուն չկար, ուր շուն չլիներ: Նրանց կողքով, հանդիստ օրորվելով, յուրահատուկ ռիթմով քայլում էին լայն շալվարներով և կարմիր ֆեսերով տղամարդիկ, փայտե քոթիկներով, չադրաններով, սև կամ շագանակագույն գուլպաներ հագած սևաչ թրքուհիներ, երեխաներ: Շներին ոչ ոք ձեռք չէր տալիս: Նրանց մոտ շունը համարվում էր սուրբ կենդանի: Բազմամարդ ամբոխը մեծագույն հմտությամբ հոսում էր փողոցով, որպես կղզյակներ թողնելով շների խմբերին...

Շուկաներում և առևտրական վայրերում ճաշարաններ ու կաֆեներ շատ կային: Անգործ մարդիկ առավոտից երեկո նստում էին ու նարդի չրխկացնում[1]...»

Դե՛, երևակայեցեք, թե մեկամսյա թափառումների ընթացքում Սարյանի պատմած-գեղանկարածի ոգով ու հանդով որպիսի հետաքրքրությամբ է Զարենցը դիտել այդ տեսարանները, խճանկարային-զուգորդական որպիսի համադրում-հակադրություններով, որոնց նմուշներն ու հետքերը, դժվար չէ որսալ «Ստամբուլ» պոեմում: Մի պայմանով միայն. ըստ որի պոեմի քննական մեկնությունը հարկ է սկսել վերջնամասից վերաքաղվող տողերի սույն հաջորդականությամբ.

---

[1] Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, գ. 1, 1966, էջ 86–87:

Թ. Թորամանյանի հետ ծանոթությունը՝ 1902-ին, Անիում: Տե՛ս նույնը, էջ 54–56:

Լ. Շանթի հետ 1915–1917-ին, Թիֆլիսից: 1916-ին Թիֆլիսում լույս տեսած «Կայծերից» գնել և իր գրադարանում ուներ մի քանի օրինակ, որոնցից մեկը (ցավոք, առանց մակագրության) նվիրել է նկատոխ:

[2] Հաջորդ Չիչերոնին եղել է ավելի երկար միջոցով Պոլսում անցկացրած Պ. Մակինցյանը, որից, ցավոք, մեզ են հասել միայն առանձին արդեն վկայակոչված ու վկայակոչվելիք քաղաքական-հասարակական բնույթի նոթեր կամ հիշատակություններ:

[3] Սարյանի և առհասարակ 20–30-ական թվականների մտավորականության գիտակցով արգահատելի երևույթներ, որպիսիք, ցավոք, հետագայում բնավորվեցին նաև Հայաստանում. անգամ գյուղերում. կոլտնտեսական կարգի բերած պարապության արդյունքում...

... Կպարե՛ն դեռ կակուղ ձեր մսերը,
Որ լողում են հիմա Ֆոկստրոտում:
Դեռ կզգան մեր գզվանքը ու սերը—
Մեր սրի համբույրը հատու...

Որ ուռած ձեր բկին նստի՝
Եվ սրբի այս աղբը ձեր բոլոր,— (2, 226):

նկատի ունենալով նաև, որ ընդգծված վերջին տողը բանաստեղծի ինքնագրով արված է Երկերի (1932) սեփական օրինակի վրա՝ «**Հաստատի կենցաղը նոր**», «Ժամանակին չգտնված» տողի փոխարեն, և դա նշանակում է թե՛ պոեմը առաջին տողից վերջինը Թաքցնում–հուշում է հայոց տևական ջարդերի հատուցման պահանջ ու փոխհատուցում... Ըստ այդմ մտաբերելով ևս, որ Կ. Պոլսում առանձին գրքով հրատարակված «Ստամբոլի» (1924) օրինակներից, թերևս առաջինը, ինչ–ինչ ճանապարհներով ուղարկվել է Ալ. Մյասնիկյանին:

Ասել է թե՛ պոեմը՝ միաժամանակ նույն Մյասնիկյանին հասցեագրած նամակի ոգով **բողոք է հայաթափ Ստամբոլի դեմ**, որտեղ հայերը այլևս չէին ապրում Սարյանի այցելած ժամանակվա վարք ու բարքով ու կենցաղավարությամբ: Չկային չա՛ա չատե՛րը, թերևս, Սարյանի հետ ընկերացած Ստեփան Ներսիսյանը[1] (այլև նրա նմանները), որի ուղեկցությամբ նկարիչը շոգենավով անցել էր ասիական ափ՝ Սկյուտար, եղել էր հայաբնակ Գում–Գափույի եկեղեցում ու դպրոցում, բարձրացել Չամլըջա...

Անկարելի է թե՛ Սկյուտար այցելած չլինի և Զարենցը, թերևս, կարճ ժամանակից միասին Աթենք անցած վստահելի մեկի հետ...

Բայց այլևս նույնը չէին Սկյուտարը, Գում–Գափուն. փոխվել, հնամենի եռուզեռը կորցրել էին դպրոցը, եկեղեցին, պատրիարքի աթոռավայրը... իր աչքում մշուշոտ մութով էին շղարշված սարյանական «Չամլըջայի ծաղիկները»... Վայրեր, իրողություններ, տպավորություններ, մարդիկ ու հանդամանքներ, որոնց արծարծումներով տարիներ անց առավել դժնի օրերի պետք է զրուցեր Զապել Եսայանի հետ... Երկա՛ր–երկա՛ր:

Եվ սակայն պոլսական բոլոր փողոցներում ու անկյուններում իր հետ էին և պատանեկան օրերի առաջին անմոռանալի տպավորություններն ու հետաքրքրությունները՝ ոչ միայն «**Խաթաբալայի» էջերից**, այլև բարեբախտաբար մեզ հասած ուշագրավ մի գրքից, որը, անդարձ հուշերով, երևի թե, թերթել էր նաև Պոլիս ուղևորվելու չեմին...

---

[1] Գրառումների էջ 91–ում՝ Ստեփան Ներսիսյան, 92–ում՝ Ստեփանյան. ասել է պետք է ճշտել այդ պատմական անձնավորության ազգանունը:

(Անհրաժեշտ հետադարձ–անդրադարձ)

Առանց որևէ կասկածի. 1912–1913 թթ. պատանի Եղիշե Սողոմոնյանը գիտեր Տերյան ու Մեծարենց, գիտեր Իսահակյան ու Թումանյան... Եվ սակայն ասում–կրկնում–հաստատում ենք առանց այդ օրերից հասած նյութական փաստացի ապացույցների՝ բանաստեղծի հետադարձ «մատնությամբ» կամ վկայությամբ: Այդպիսիք առայժմ ձեռքի տակ չունենք, իսկ թե իրականում այդ թվականներին իր ձեռքի տակ եղել են, չեն եղել, ունեցել է, չի ունեցել՝ Աստված գիտի և քիչ թե շատ գիտեր Եղիշե Հովհաննիսյան անուն–ազգանունով հայտնի մի խորհրդային վստահելի անձնավորություն... Իսկ նա ո՛չ հուշեց, ո՛չ վկայեց...

Եվ սակայն, շատերից ավելի հեռատես գտնվեց, որքանով տարիներ շարունակ հետամուտ էր, և բանաստեղծի մասին հավաքեց մեծարժեք հուշեր, որոնց մի մասը երախտավոր Սողոմոն Սողոմոնյանի առաջաբանով ու խմբագրությամբ «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին» խորագրով լույս տեսավ 1961–ին՝ արժանանալով հասարակական լայն ընդունելության ու հնչեղության, այդ թվում նվաստիս **«Մեծ կյանքի վկաները» վերնագրով** *գրախոսականին (տե՛ս Ալմաստ Զաքարյան, Ավանդների ուժը, 1981, էջ 183–191):*

Ավելի մեծաքանակ մասն էլ՝ լրացումներով **«Հուշեր Եղիշե Չարենցի մասին»** *խորագրով նվաստիս առաջաբանով ու խմբագրությամբ երկրորդ գրքով լույս տեսավ 1986–ին՝ վերստին* **արժանանալով լայն, և սակայն, առանց գրախոսականի** *ընդունելության. բայց և արդեն կուրացող կազմողի սույն տողերին. «Արժանավոր խմբագիր և հմուտ մեկնաբանող Ալմաստ Զաքարյանին կազմողից. 1986 թ. սեպտեմբեր»: (Զարմանք չլինի. ըստ ժամանակի բարքերի գրախոսության արժանանալը նույնպես մենաշնորհ էր, ընդ որում միայն գովաբանական...* **Եվ ամենակարևորը. չարենցասերները վախճանվել էին... ատողները ապրում են առ այսօր... սերնդե՛–սերո՛ւնդ...)**

Բայց քանի որ այստեղ խոսքը վերաբերում է Չարենցի գրադարանին, ավելացնենք. Չարենցի ժառանգությունը՝ գրադարանով հանդերձ, հանձնված է եղել Հովհաննիսյանի տնօրինությանը 1937–ին, և Գրականության թանգարանին է հանձնվել միայն 1940–ին (արխիվային նյութերը դեկտեմբերի 8–ին, գրադարանը՝ 12–ին): Այդ և հետագա ընթացքներով յուրացումներն անպակաս են՝ վերաբերող թե՛ Հովհաննիսյանին, թե՛ ուրիշների: Առաջին դեպքում, ըստ երևույթին, շատ զգալի. ինչպես Չարենցի **կյանքի վերջին տարիների ստեղծագործության վերջնական բնագրերի,** *այնպես էլ նամակագրական և այլ էջերի ու գրքերի: Միանգամայն հավաստի սույն փաստարկներով. 1943–1944 թթ. ուս.տարում Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտի լեզվի և գրականության ֆակուլտետի վերջին կուրսում միանգամից հավելվեց երկու առարկա. ԽՍՀՄ ժողովուրդների գրականություն և Արվեստի պատմություն:* **Ըստ երևույթին դասախոսներ Տ. Հախումյանի ու Ե. Հովհաննիսյանի նյութականը ապահովելու նպատակով,** *որքանով շուտով այդ առարկաները, եթե չեմ սխալվում, հանվեցին:*

Թե՛ Հախումյանի, թե՛ Հովհաննիսյանի դասախոսությունները բավականաչափ թշվառ էին. այնքան որ՝ առաջինի խլությունը չարաշահելով, ձեռքերով աղջիկներս հասկացնում էինք, թե իբր զանգը եղել է, և դուրս էինք թափվում լսարանից (մի անգամ սակայն խիստ պատժվեցինք): Հովհաննիսյանի պարագայում չափազանց գրավիչ էին ամեն անգամ նորացող ալբոմներն ու նկարներով հարուստ գրքերը, որոնց վրա էինք պրծնում դասամիջոցներին... դրանցից մեկի վրա էլ մեզնից Սեդա Պարտիզպանյան անուն-ազգանունով ամենաչարաճճին մի անգամ որսացել էր «Չարենց» գրությունը:

Խոստովանանք լինի նաև, որ մի կարճ միջոցի Գրականության թանգարանում աշխատած համակուրսեցի Քնարիկ Փեշտմալջյանից էլ նույն տարիներին մակագրությամբ նվեր եմ ստացել բանաստեղծի 1932-ին հրատարակած Երկերը, որ ինձ համար եղել է վերին բախտ ամեն առումով, այդ թվում... այլապես, թերևս, վիճակված էր ԵԺ-ի համար արտագրել ևս հազարավոր էջեր. ո՞վ պիտի տրամադրեր ունեցածը, երբ ունեցողի համար սրբություն էր: Հուսով եմ, այդ առումով ևս թանկարժեք հատորյակը կհաջողվի վերակազմելու տալ և հանձնել օրինական տիրոջը՝ Չարենցի տուն-թանգարան: Համոզված կարելի է պնդել, որ այլևայլ ճանապարհներով գրքեր կան և ուրիշների մոտ, որոնք, կարելի է կարծել՝ ժամանակի հետ ունեցողները նույնպես կվերադարձնեն թանգարան:

Ամենադժվարինը, ինչ խոսք, մնում է բանաստեղծի կյանքի վերջին տարիների ձեռագրերի հարցը. ինքնագիր մաքրագրերի կամ վերջնական տարբերակների. որպիսիք գերակշիռ մասով պահպանվել են Հովհաննիսյանի մոտ և անցել ժառանգներին: Փաստացի՝ դրանց թիվը ժամանակին «ի հատուցումն դրախոսականի» «Ա. Բ.»-ին (Ակսել Բակունցին) բանաստեղծության մաքրագիրը Հովհաննիսյանն անձամբ տրամադրել է ինձ, որը և անմիջապես հրապարակվել է Ս. Աղաբաբյանի «Ակսել Բակունց» մենագրության էջերում (1963, 1975, Երևան):

Իրավական տարրական արդարությունը պահանջում էր Չարենցի իրավունքները (և ոչ միայն իր) վերականգնելու օրն իսկ ձեռագրերը վերադարձնել բանաստեղծի ժառանգներին, ապա պետականացնել որպես ազգային հարստություն...

Համենայն դեպս, թվում է, խորհրդային անծայր տարածքով մեկ պետք է որ վաղուց լռվածը բացառված ճանաչել և օրենսդիր հատուկ օրենքով լուծել այդպիսի կարևոր հարցեր: Ընդ որում Չարենցի ձեռագրերը վերադարձնելու պարագայում Հովհաննիսյանի ժառանգները այնքան էլ չեն տուժի... Ավ. Իսահակյանի տան կողքին նա ժառանգություն է թողել մի ամբողջ ապարանք... Այլապես նշանակում է հիմա էլ շարունակել ոտնահարել բանաստեղծի սրբազան վաստակը. ո՞ր իրավունքով...

Բայց դառնանք Զգ. պահպանված առաջին գրքին՝ այն էլ արևմտահայերենով և արևմտահայ բանաստեղծի:

«Խաչված երազներ»... Բողկերից՝ Սամեն, Ռեմբո և Մարինեթի համեմունքով... Ա. Չոպանյան, Ռ. Սևակ...

Բայց ահա, բազմահազար թղթերի բազմազան էջերից, գրքերից, փաստացի նյութականորեն հայտնվեց Զգ. պահպանվող Հրանտ Նազարեանց «Խաչված

երազներ» (1912, Կ. Պոլիս) խորագրով բանաստեղծությունների մի գիրք: Ճակատին՝ «Եղիշե Սողոմոնեանի գրքերից. Կարս 913 թ. 4 փետրվարի» ինքնագիր մակագրությամբ: Խոսուն ապացույց, որ արդեն իսկ 1913-ին պատանին նախաձեռնել և մտածում էր ունենալ գրադարան, և՝ եթե գնել է արևմտահայ ոչ այնքան հանրահայտ հեղինակի գիրք, պետք է որ ունեցած լինի Տերյան ու Մեծարենց, Իսահակյան ու Թումանյան... Մանավանդ, որ Սերոբ եղբոր վկայածով «Աբու-լալան» Սողոմոնյանների տանը եղել է սեղանի գիրք: Տվյալ պարագայում, սակայն, կարևորվում է բանաստեղծական մուտքից սկսած Չարենցի հետաքրքրությունը արևմտահայ գրականությամբ, մանավորապես բանաստեղծությամբ՝ ամեն դեպքում շղարշված դարամուտի ֆրանս-իտալական բանաստեղծական միտումներով: Ուրեմն և ավելորդ չէ հիշատակել, որ տարիներ առաջ Չզ գրքերը մեկ առ մեկ ցուցակագրելիս և որոշակի մասը թերթելիս հանդիպել է նաև Հերանուշ Արշակյանի գիրքը՝ դարձյալ պոլսական հրատարակությամբ, բայց կրկին անդրադառնալու պահին անհետացել էր, կամ դուցե կորցրել էի հետքերը[5]:

Ինչ արած. առանց դրան էլ՝ «Աստեղահե մենություններ, Փառք հայթուածներուն, Լեյլային համար երգեր, Մոխրացանը»,— շարքերից ձևավորված Նազարյանցի ժողովածուն պարունակում է ըստ ամենայնի անշրջանցելի ասելիք: Որը և պարտադրում է փոքր-ինչ հանդամանալի խոսակցություն, որքանով Պշիբիշևսկու կողքին հուշարարն է դրական մուտքից սկսած **Չարենցի եվրոպականամետ մոդեռնիստական համակրանքի ու միտումների:** Հ. Նազարյանցի «Խաչված երազների» միջնորդությամբ՝ դումարած Ղոնդախչյան եղբայրների միջնորդությունը, որոնցից մեկն էլ (թերևս համադասարանցի) սովորում էր Կարսի ռեալականում:

Եվ այսպես մերթ սիրո-կարոտի, մերթ ցավի ու կորստյան, լռության ու մենության... անձկությամբ շաղախված սովորական բանաստեղծություններ, անձկությամբ հանդերձ՝ առաջին իսկ եռթաշարքին կցված Արթուր Ռեմբոյից քաղված տողերով. «Բավ է տեսածը: Տեսիլքը երևաց ամբողջ օդային տարածքում: Բավ է ունեցածը: Քաղաքների խուլ ժխորը, անվերջանալի իրիկնայինն ու ցերեկնայինը: Բավ է ճանաչածը: Կյանքի հանդրվանները: Օ՜, ժխոր ու Տեսիլներ: Մեկնություն նոր սիրո ու մտերմության և նոր ղողանջների: Արթուր Ռեմբո, Մեկնում-Պայծառացումներ»:

Ուրեմն և բնաբանի ոգով շարքի առաջին բանաստեղծությունը նույնօրինակ հայտ է **«Երազին հաղթանակը»** վերնագրով.

---

[5] Գրքի շապիկի հակառակ էջում թվարկված են հեղինակի մինչ այդ հրապարակված գրքերը. **«Հերանուշ Արշակյան իր կյանքն ու բանաստեղծությունները. Եղիա Տեմիրճիպաշյանի սիրային նամակները.** Ց.Թ. Մաուինեթթի և Ապագապաշտությունը... Խաչված երազներ (Քերթվածներ)»:

Նկատենք, որ «... տաճկահայ բավականին հայտնի գրագետ Հրանտ Նազարյանը» տողով Չարենցը մտարերել-որոնել է Նազարյանցին 1925-ի փետրվարին՝ Հռոմում: Հանդամանորեն հետո ու հետո...

Բոցեղեն Երա՛զ, հավիտենացա՛ծ
Նայվածքն հոգիիս. պատուհան զըվարթ՝
Լայն բացված կյանքին դեմ վեհատարած,
Ուրկե կը նայիմ Անհունին՝ անթա՛րթ:

Բոցեղեն Երա՛զ, անծի՛ր շրջանակ
Լինելիությանս տեսլերևույթին,
Ուր իմ իղձերուս գույներն անհատակ
Խոշտանգված դեմքս ցայտել կը ճգնին:

Վաղվան աչքերուն բիբն ոսկեկրակ,
Բոցեղեն Երազ, ներդաշնակ զանգյո՛ւն.
Զանգակերպ, ըմբոստ հոգվույս հափշտակ
Կամքին մեծ թինդերն այգերգող ալյո՛ւն...

Ծիրանի հեղեղ հույզերուս անքուն,
Ուր իղձերս լացող աստղերու նըման
Սրտիս շրջանը կ՚ընեն եռանդուն՝
Ինքնօրինությա՛ն մեջ տարապայման[6]:

Հայտնապես՝ ինչպես քաղված այս, այլև հաջորդական էջերում առանձին քիչ թե շատ հաջողված արտահայտչականությամբ հանդերձ (ասենք այսպիսին. Լիալուսի՛ն, ցնորական մոգություն, Աստեղածո՛պ հողմահար. կամ Իրիկունը կը թավալեր համըընթաց և այլն) Ե. Տեմիրճիպաշյանի փիլիսոփայական «գործնական տեսությանը» համազոր «Ներգո՝ անհատին ու արտաքո՝ բնությանը հատուկ ուժերին»[7] հայեցումներով դաս–դասված–շարակարգված դիմումնային–պատմողական չափածո,— անշուշտ, միանգամայն հեռու Բեմբոյի բանաստեղծական

[6] Հրանտ Նազարեանց, Խաչված երազներ, Կ. Պոլիս, 1912, էջ 7, 9: Այսուհետև էջերը նշված են բնագրում:

Բնաբանների բառացի թարգմանությունը՝ Փիրուզա Գույումջյանի և Մարինե Սարգսյանի. անշուշտ, շնորհակալությամբ հանդերձ:

[7] «Նյութ և գաղափար» վերնագրով հետազոտության մեջ գրականագետ Ստեփան Թոփչյանը գրում է. «Տեմիրճիպաշյանը պոզիտիվիզմի հետևորդ էր և պատահական չէ, որ իր տեսակետները հաճախ հաստատում էր դիմելով Օգյուստ Կոնտին, Հերբերտ Սպենսերին, Թոմաս Բոքլին, Հիպոլիտ Տենին և այլ պոզիտիվիստների, իսկ ամենից ավելի՝ Էմիլ Լիտրեին, որի հետ նամակագրություն ուներ և որը նրա կուռքն էր. «Միայն աստված Լիտրեեն ավելի բան գիտե»,— գրում է նա «Փիլիսոփայական բառարանում»: Պետք է որ փիլիսոփայությունը «գիտական ըլլա, և գիտությունը փիլիսոփայական»՝ սա է Տեմիրճիպաշյանի նշանաբանը: Բնության և հասարակության, իմացաբանության խնդիրների քննությունը գիտության նվաճումների լույսի ներքո... նրա աշխատությունների բնորոշ կողմն է: Հասարակության զարգացման օրենքները, սակայն, նա ենթարկում է բնական օրենքներին: Հասարակության վերափոխումը գիտության միջոցով, հասարակության բնական–օրգանական տեսությունը նույնքան հատուկ է Տեմիրճիպաշյանին, ինչպես պոզիտիվիզմին ընդհանրապես». տե՛ս Կերպ և էություն, 1987, էջ 20, իսկ առհասարակ՝ էջ 3–133:

կրքոտ–ներխուժող պիրկ ուժայնությունից ու պաթոսից: Ասել կուզի, որ շարքերին առանձին–առանձին անդրադառնալը, թերևս, համարվի ավելորդ, առավել ևս առաջին երկքում, որոնցում իշխողը միօրինակությունն է. մանավանդ, եթե գիտենք, որ շոշափելի եզրերը կամ նմանությունները սակավ են Զարենցի վաղ շրջանի (այլև առհասարակ) և Նազարյանցի գրքի միջև: Ըստ այդմ շահեկանը եվրոպականից վկայակոչված դեմքերի տեղեկատվությունն է՝ հերթականորեն: Եվ այսպես «Աստեղահև մենություններ» շարքին կցված Ռեմբոյից քաղված ընդհանուր բնաբանին, հաջորդում է «Կարոտ» բանաստեղծությանը կցված **Ս. Մալարմեի «Մարմինը անհետաքրքիր է, ավա՜ղ...»** տողը՝ համապատասխանությամբ սույն վերջնամասի.

... Լույսերու պես խտեմա՛լ, հուշամա՛լ,
Ու թոթափե՛լ այս ցուրտ պատանքը Մխին... (էջ 19):

Նույն շարքում զետեղված **«Պայրընի հոգին» «Ջութակահար Դ. Դավիթյանի հիշատակին»** նվիրումով և «Amorie dolori gacrum» նշանաբանով հյուսված «Խաչված երազը» և ապա «Հրաժեշտ» վերնագրով «Իտեանվեր ու տարաբախտ քույր հոգիին **Հերանուշ Արշակյանի հիշատակին»** բանաստեղծություններից ամեն մեկը ուշագրավ է յուրովի. առաջինը Բայրոնի հոգու, այսպես ասած՝ յուրատեսակ ձայնա–պարային (թեև բառերի բեռով դժվարահաճ) տեսլապատկերով, հատկապես վերջնամասով.

...Ու ջրանուշներ կը պարեն կարծես
Մայրամուտի նուրբ շողերուն ներքև,
Ցընորատեսի խոկումներուս պես,
Դարձդարձիկ ու խոլ շրջանով թեթև:

Պարապ նավակ մը, միայնակ, լքված,
Կողերը մաշած ծովու խաղերն,
Տժգույն, ապալեր ժայռերուն դիմաց
Չայլտ–Հարոլտի մը կյանքը կ'երազե:

Աշունի՛ ծովեր, աշունի՛ ծովեր,
Ինչո՞ւ կը դողաք այսպես հեշտագին,
Անգութ Պայրընի ուրուն մշտերեր
Ձեր մութ երա՞զը այցելեց կրկին... (էջ 33):

Ամեն դեպքում նկատվում է տողի, հատվածի, հատվածների միջև կուռ–հավաք առնչակցության պատկերավոր թռիչքների պակաս, որոնցով, ասել է՝ բանաստեղծական կառուցիկ ճարտարապետական զգացողությամբ,— այնքան օժտ-

ված էր Զարենցը: Ինչպես, ասենք, կարելի է տեսնել քաղված տողերի հետ հեռավոր նմանություն ունեցող 1916-ին հյուսված «Երգում է քաղաքն իր երգն առօրյա» բանաստեղծության համեմատությամբ (1, 283):

*Հուզական նույնպիսի լիցք ունեն և հաջորդ երկուսը, ի մասնավորի նվիրական երաժշտական հիմնավոր կրթությամբ ու ելույթներով հայտնի ջութակահար Դավիթ Դավիթյանին նվիրված բանաստեղծությունը: Հետաքրքիր է նաև նրանով, որ Բրյուսելի, Փարիզի, Լոնդոնի, Ամստերդամի... կողքին 1906–1910 թթ. Դավիթյանը համերգներով հանդես է եկել Թիֆլիսում, Երևանում, Էջմիածնում, բայց և Կարսում... ու Եգիպտոսում: Ակամա ենթադրում ես մտերմության հետքեր Վենետիկի միևնույն Մուրատ–Ռափայելյան վարժարանում ուսանած Դա-***վիթյանի և Ղոնդաղչյան եղբայրների միջև,** *փոխանցված բանաստեղծի* **առաջին սիրուն՝ Աստղիկ Ղոնդաղչյանին:** *Գուցե թե Աստղիկի վոկալ ունակությունները Կարսում նկատել է հենց Դավիթյանը, և նրա խորհուրդով է Աստղիկը ձայնը մշակել Թիֆլիսում, նվիրվել երգ–երաժշտությանը, ներառյալ գործունեությունը Եգիպտոսում: Հետքեր, հանգույցներ, որոնց կապակցական տրամաբանությունը մղում է ասել, որ հենց Ղոնդաղչյան եղբայրների միջոցով էլ Նազարյանցի «Խաչված երազները» հասել է պատանի Եղիշեին: Հասել է տեղին–ժամանակին՝ «Երեք երգի» տպագրության ավարտին, և այդ գրքից ինքը իր համար և Աստղիկի որպես բնաբան քաղել է ամենասրտառուչը. Ալբեր Սամենից առած «Et ăëtait le dernier amour du soir antique...» («Եվ այդ վերջին սերն էր վաղնջական գիշերվա») «Անավարտ պոեմներ» շարքի «Ամենտի»[8] բանաստեղծությունից, որը գտնելու համար տարիներ առաջ Սամենի հատորները թերթել եմ օրերով): Ըստ հարկի ընտրված–փոխառնված է գրքի «Լեյլային համար երգեր» շարքի «Երթա՛նք, Լեյլա...» բանաստեղծությունը. անպայման սիրահարի «խորամանկությամբ». որքանով Նազարյանցի գիրքը պետք է ունենային Ղոնդաղչյան եղբայրները ևս. ուրեմն և, բոլոր արգելքներով ու դժվարություններով հանդերձ, հաղորդակցությունն Աստղիկի հետ կարելի էր համարել ապահովված: Անշուշտ, հենց քերթվածի ոգով.*

Երթա՛նք, Լեյլա, եղնիկներու պես երկու
Հալածական մեր ըստվերը տանելու,
Այս իրիկուն մենիկ ծոցը սարերու,
Ձար աչքերն մեր սեգ հոգին պահելու:

---

[8] Որքանով ինչպես վկայում է ռեալականի դասընկերներից Աշոտ Փալանջյանը՝ «... Դասատուները բարձրագույն կրթության տեր մարդիկ էին, բոլոր առարկաների, այդ թվում նաև հայոց լեզվի դասավանդումը, դրված էր լավ հիմքերի վրա: Պարտադիր կերպով անցնում էինք ֆրանսերեն և գերմաներեն» (ՀԵԶմ, 1, 46): Վկայում է և իրենց հափշտակությունը ֆրանսիական գրականությամբ՝ նույն Պոլյակովների գրադարանից հիշատակելով «... Ֆրանսուա Վիյոնի փոքրիկ ժողովածուն՝ ռուսերեն թարգմանված». մի այլ առիթով Ստենդալի «Կարմիրն ու սևը» (ՀԵԶմ, 1, 49, 52):

Երթա՛նք, Լեյլա, սարերը մե՛զ կը կանչեն,
Մեր տանջըլված, սեվ երազին մենք հըլու
Ջըղջումի այս քարուղիին տրտմորեն՝
Իրարու մեջ երա՛զորեն մեռնելու...

Երթա՛նք, Լեյլա, մեր հիասթափ հոգիին
Վերջին անեծքն մենք միասին կարդալու.
Այս հուսահատ իրիկունին մեջ խորին՝
Վերջին սիրո կարապներն ենք մենք
երկու... (էջ 51):

Եթե ավելացնենք, որ չարքն էլ ամբողջությամբ կրում է **Տ. Բոդլերից առած՝ «Անուղղելին կրծում է իր անիծյալ ատամով»** *բնաբանը, քաղված բանաստեղծությունն էլ նախորդում է «Ինձ նաև անվանում են. «Այլևս ոչ, շատ ուշ է, մնաք բարով» բնաբանով և «Եկո՜ւր, եկո՜ւր...» վերնագրով համանման բովանդակությամբ մեկ այլը,— ապա պետք է ընդունենք, որ գործ ունենք պատանեկան այդ հասակի համար խորունկ ու տառապալի, ողբերգորեն ապրած–փոխադարձած սիրո հետ... ինչպես և իր սերը ներկայանում է «Տեսիլաժամերում» ու «Ջարենց–նամեում» և ... այլուր, քանի որ, իրոք, «Անհնար է վերախառնել մարդկային խառնվածքը» ինչպես հավաստում է Պ. Սևակը[9]. առավել ես վերախառնել և նորից հունցել...*

Ի՛նչ իմանաս. գուցե թե հենց այդ գարնանն էլ մեջլունապես սիրահար Եղիշեն Աստղիկին է նվիրել այն վարդը, որի թերթիկները մինչև վերջերս էլ մասունքի պես պահվում էին Աստղիկի թաքստոցում... Գուցե թե և՛ ինքը, և՛ Աստղիկը անգիր իմացել են դրքի «Մոխրացան» չարքի «Վարդերուն մահը», և բանաստեղծության խորհուրդներով էլ նվիրել ու պահել է վարդը.

Լուռ գիրքերուս էջերուն մեջ,
Մինավորիկ, սիրակամ,
Իրենց բույրովը թորշամած
Վարդի դողտրիկ թերթեր կան:

Սիրո քանի՜ վարդ, ո՛վ աղջիկ,
Քեզ ձոնեցին, ցանուցի՛ր,
Մոռացության մըթին դրքին
Մեջ ամե՛նքն ալ ցանեցիր:

[9] *Պ. Սևակ, Սայաթ–Նովա, 1969, էջ 144:*

Ծարավահյո՛ւծ վարդերն, անդո՛ւթ,
Դիտե՛ երբեմն դոնե,
Անոնք մեռան՝ պաղատելով
Փոքրիկ համբույր մը քենե... (էջ 74):

Մաքրամաքուր սեր, որ նախնական անրջային քնքշությամբ հետադայում խոստովանել է իրեն ոչ Կարինեին, ապա, անշուշտ, Արմենուհուն ու Լեյլիին...

* * *

Կարելի է ասել ավելին՝ մտաբերելով 1915-ին հյուսված «Տեսիլաժամեր» շարքը: Պատկերավոր հղկվածքով ու շնչառությամբ, իհարկե, հարազատ Տերյանին, բայց և «խաչվածության» միստիկ առնայնությամբ և դեղագիտական հանդանակների ինչ-ինչ եզրերով մոտ Ե. Տեմիրճիպաշյանի «Գեղեցկագիտական» ներշնչանքներին: Գումարած «մատնող» մի տարր, որը, որքան չի դավաճանում հիշողություն կոչվածը, բացակայում է Տերյանի թե՛ «Մթնաշաղում», թե՛ «Բանաստեղծություններում» (1912): Դա «Խաչված երազների» մի ամբողջ շարքի վերնագիր «Մոխրացանն» է, միաժամանակ «Ծովուն առջև» քերթվածի սույն վերջնատող.

...Տո՛ւր ալիքներուդ խըռովքը անվերջ,
Ու հավիտենական դույներդ հոգիիս,
Ձանձրույթդ ալ դաժան, որով կը պառկիս
Վերջալույսներու մոխրակույտին մեջ... (էջ29):

Եվ այդ վերջնա-ներն էլ որպես կանոն նշանավորում են Հոգու և երազների մահ, *որը և լեյտմոտիվն է «Տեսիլաժամեր» շարքի վերջին՝ 6 և 7 բանաստեղծությունների սույն վերջարկներով.*

... Եվ դուցե մի օր, մի վերջին գիշեր,
Երբ վերջին միդում աչքերս մարին–
Արթնանա հանկարծ անիմաստ մի սեր
Ու ասողը ժպտա մոխրացած քարին (1, 39):

Ապա մյուսը.

...Լո՛ւռ ընկնում էին տերևները վար,
Ու ծածկում էին ճանապարհը, քեզ:
Ու ցուրտ պուրակում, մենակ, հոգևար
Մեռնում էր հոգիս ու լուռ էի ես... (1, 38):

Հայտնապես նման հնչեր կամ տարրեր կարելի է մատնացույց անել և «Միածանում» (1916–1917)՝ կրկին սեպվող Տեմիրճիպաշյանի «Համադրական գեղեցկությանը» և դարձյալ վերը քաղված՝

> ...Տո՛ւր ալիքներուդ խըռովքը անվերջ,
> Ու հավիտենական գույներդ հոգիիս (ընդգծ՝ Ալ. Զ.),—

տողերի հուշարարությամբ՝ տեղին բարեբախտությամբ ձեռքի տակ ունենալով Տեմիրճիպաշյանի գեղագիտությանը նվիրված դրականագետ Ստեփան Թոփչյանի «Նյութ և գաղափար» վերնագիրը կրող հետազոտությունը: Էապես Շ. Բոդլերի գեղագիտությանը սեպվող ըմբռնումներ, որպիսիք Տեմիրճիպաշյանը «Վարդեն Աստված» հոդվածում մեկնաբանում–իմաստավորում է այս տողերով. «Ձևը՝ ձևերուն պարզագույնը. բնականագույնն է, քանզի բնության մեջ բոլորակ ձևին կձգտի մարմինն, որ շարժման մեջ կըլլի: Գույնը՝ բացագույնը, դարձյալ բնականագույնն է, քանզի վարդագույն կամ՝ ըստ դասական բացատրության՝ վարդամատն արշալույսն է, որ կծանուցանե, որ ի հայտ կածե բնությունն: Իսկ բույրն ալ պարզագույն բնականագույն կրնա համարվիլ՝ բոլորակ ձևին նման, քանզի բոլոր բուրմանց համադրությունն, համաբուրությունն է վարդին բուրումը»[10]:

Ձերկարացնենք. առաջարկելով մտաբերել գույների առանցքով հյուսված «Միածանը», ընդ սմին պատկերացնելով թե քանի միջնորդված խաչավորումներ են գործում շարքի մտահղացման ընդհատակում. գունա–լուսաստվերային, գունա–ճառագման, գունա–խաղային, գունա–բեկումնային, գունա–բուրմունքային... որպիսի շաղախներով ու ծալքերով...

Ուրեմն և կասկած չի կարող լինել. Ղոնդաղչյան եղբայրների միջավայրում Տեմիրճիպաշյանի «Գեղեցկագիտությունից», առհասարակ իմաստաբանությունից (ներառյալ նիրվանա) ուշիմ լսողությամբ ու խոհականությամբ յուրացրել է շատ ու շատ հասկացություններ: Առավել սևեռումով հետևել է «Վարդեն Աստված» ըմբռնմանը, և՝ իմաստաբանական այդ խորհրդով էլ դավանել է յուր հոգուն վայել սիրո իմաստասիրական տարբերակը, որով և Կարսի փողոցներից ծածուկ մի անկյունում Աստղիկին է նվիրել ցայսօր պահպանվող չբացած վարդը[11]... Վկան «Վարդից Աստված» ձգվող իր մաքրամաքուր սիրո ու տառապանքի երկյուղի, որ հանկարծ կարելի է թե «արթնանա» «անիմաստ մի սեր» (1, 39), բայց և «Դանթեական»–ում արձանագրված հավատով ու հավատարմությամբ իր սիրուն.

[10] Ստեփան Թոփչյան, Կերպ և խնկություն, էջ 23:

[11] Ալմաստ Զաքարյան, Եղիշե Չարենց, կյանքը, գործը, ժամանակը, 1997, էջ 74–84:

...Մնացած քաղաքի մնացած Հարկի տակ
Իմ սգավորի ճրագս վառած՝
Նստել էի ես՝ անՀավոր, մենակ:
Իսկ դուրսը–ծովն էր զառանցում մեռած՝
Խեղդելով իր մեջ ամեն Հիշատակ
Ու ամեն սիրերգ՝ Աստղիկից առած:

Բայց ես գիտեի, որ ապրում է նա,
Ապրում է այնտեղ՝ ջրերի խորքում:
Թող ողջ աշխարհը դառնա–վերանա–
Իրե՞ն ինչ–նա կա՝ անմահ, անՀերքում:
Եվ միշտ գեղեցիկ ու կույս կըմնա՝
Իր աստվածային, անՀուն եզերքում... (էջ 2, 320):

5–6 տարվա տառապանքի, Հավատ–Հավատարմության այսպիսի տարողության գին ունեցող պատանեկան սեր, որի կրող–դավանողը երիտասարդության օրերին էլ պետք է որ Հրովարտակեր «Տաղարանի» ժ թվով մատուցվող «Վարդին Աստված», վարդին՝ Հավիտենություն ձգվող «իմաստասիրական» նույն սերը՝ բայց արդեն իմաստաբանական այսպիսի խորՀուրդներով.

Էլի գարուն կգա, կբացվի վարդը,
Սիրեկանը էլի յարին կմնա:
Կփոխվին տարիքը, կփոխվի մարդը,
Բլբուլի երգն էլի՛ սարին կմնա:

Ուրիշ բլբուլ կգա կմտնի բաղը,
Ուրիշ աշուղ կասե աշխարՀի խաղը,
Ինչ որ ե՛ս չեմ ասե–նա՛ կասե վաղը.
Օրերը ծուխ կըլին, տարին կմնա:

Հազար վարդ կբացվի աշխարՀի մեջը,
Հազար աչք կթացվի աշխարՀի մեջը,
Հազար սիրտ կխոցվի աշխարՀի մեջը–
Էշխը կրակ կըլի՝ արին կմնա:

Ուրիշ սրտի Համար կՀալվի խունկը,
Կբացվի շուշանը, վարդերի տունկը.
Գողալը լաց կըլի, կընկնի արցունքը–
Գիրեզմանիս մարմար քարին կմնա (1, 234):

«Վարդն Աստված», վարդն հավիտենություն ձգվող սիրո ճաշակ, սիրո իմաստասիրական «ուսմունք», որի կիզակետային հաջորդ ղողանջը եղավ ուղիղ գծով բանաստեղծի առաջին, ապա և «Տաղարանի» այս սիրուն սնվող «1933.2.24» տարեթվով գրված «Տող սիրո ձոնված ապագայի պարմանիներին» պատգամը՝ «Իբրև հավերժական խորհուրդ» ամեն «նոր սերնդի». և հիշեցնենք՝ դարձյալ **Վարդի** *ուղեցույց խորհրդանիշով.*

...Եվ դո՛ւ, որ մտնելու ես արևային քո դաշտը՝
Քաղելու վարդեր ու մանուշակներ—
Փա՛ռք քեզ, եթե լինես քո օրերի հետ դաշն
Եվ օրերիդ հանդեպ երկաթյա քղանցք չհագնես...

Որովհետև որքան էլ գարունըդ հուրհրա
Եվ դափնիներ ցանես ճանապարհիդ անցած—
Պարտավոր ես, ո՛վ երիտասարդ, դու ինքդ նրան
Ոսկեզօծել սիրով անապորույն և ընթացքով
պայծառ...,—

որին և հաջորդում է տաղի կիզակետային վերջարկը՝ օրհնության պատգամ–խորհուրդներով. անշուշտ, **«... եթե լինես քո օրերի հետ դաշն. Եվ օրերիդ հանդեպ երկաթյա քղանցք չհագնես...» պայմանով,** *որ բանաստեղծի երազների–երազանքն էր՝ հանապազօրյա.*

Ուրեմն քայլի՛ր թեթևաքայլ քո դաշտով գարնանային
Եվ թո՛ղ գարունը քայլե քո հետքերով,
Եվ անվախ դու, ո՛վ երիտասարդ, ապագային նայիր՝
Վայելելով պտուղը ռոշնական քո առաջին սիրո:

Եվ վայելելով պտուղը ռոշնական քո առաջին սիրո՝
Կարո՞ղ ես չզգալ դու, որ հետզհետե
Հանձնվում է քեզ կյանքը – և դու
Պարտավոր ես քո հաղթ ուսերից այն բեռն
չնետել:—

Որովհետև կամո՛ւրջ է քո սերը և ո՛չ երբեք եզերք,
Եվ վարդերը սիրույդ մարդադեմի խոստումներ են ունայն
Եթե սերը հողե ընկերուհուդ չդառնա ցոլքը սեգ
Այն վիթխարի ու վսեմ ադամանդի,
որ տալիս է մեզ կյանք... (4, 366–367):

Շարունակական հուքով մեկը–մեկից իմաստալի խտացումներ... Ախ, մնում է միայն, որ **երկրի որդիները** *արքայական խորախորհուրդ հայերենով որդոց–որդի դավանեն և* **«պարտավորվեն ... հաղթ ուսերից ... գետին չնետել»– սերը, առաջին սիրո պտուղը... «վիթխարի ու վսեմ աղամանդը»...** *Կյանքի...*

Եվ սակայն, ինչպես հայտնի է, իր «Կինը Եղիշե Չարենցի երկերում» Գուրգեն Մահարին ունի վերապահումներ՝ տերյանական սիրո համեմատությամբ ու համոզիչ տարբերություններով: Սկսած «Երեք երգից» և «Հրո երկրից»՝ «Լիրիկական բալլադների» միջով՝ ներառյալ «Նավզիկեն». ահա՛, այսպիսի փաստարկներով. «Երեք երգի» երազի ճամփա, որից հետո Մահարու քննականով «... Դեռ քանի անգամ պիտի այրվեր նրա երազը, մոխրանար և տաք մոխիրներից պիտի հառներ երեկ պարզ թվացող անհասկանալին և ստիպեր բանաստեղծին բնորոշելու համար բառեր որոնելու և գտնելու.

...Ախ կի՛ն–ցնորք, քո՛ւյր, Շամիրամ ու Աստվա՛ծ («Հրո երկիր»):

Եվ նոթե... տարիների ընթացքում կինը Տերյանի քնարերգության մեջ վերածվում է մարդ արարածի ...Եղիշե Չարենցը, սակայն, կրկնենք՝ դաժան իրապաշտական գույներով կնոջը պատկերելուց հետո, հաճախ յոթն անգամ յոթ տերյանական մշուշներով շղարշում է նրան և ինքն էլ վախենում իր ստեղծածից: Այդպիսի «ահավոր» տոներով է գրված «Երեքը» փակագծերում՝ («Պոեմ հավիտենական»): Ոչինչ չի խնայված այստեղ պոեմը դարձնելու համար ազդեցիկ ու խորհրդավոր»:

Ինչպես միշտ սրամիտ ու դիպուկ բնութագիր, որը՝ առհասարակ լիրիկական բալլադների «ազդեցիկ խորհրդավորության» մթնոլորտով մղում է ենթադրելու, որ երիտասարդ բանաստեղծը, թերևս, ծանոթ է եղել Հրանտ Նազարյանցի աշխատասիրությամբ հրապարակված **«Եղիա Տեմիրճիպաշյանի սիրային նամակները»**[12]*: Ենթադրությունը՝ ենթադրություն, բայց «ազդեցիկի» զուգահեռականով ապշեցուցիչ է և բանաստեղծի միստիկ խոյանքը՝ ներխուժման ուժով և վերապարկումների բազմազանությամբ: Առավել ևս, եթե նկատի ունենանք տարիքը և որքան էլ համարենք դրքային: Ինչպես իրավացիորեն համարում է Մահարին՝ քննականից հետևող եզրահանգումով. «Սակայն շուտ իջավ այս մոլեգին փրփուրը («Լիրիքական բալլադների» և տերյանական սիրո հերքման՝ Ալ. Զ.), որն ավելի շուտ ու շատ դրքային էր, քան սեփական ապրումների արդասիք: Վերջին տարիներին նա իր իմաստուն գլուխը խոնարհեց մեծ սիրո հավերժական գոյության առաջ և երդեց քմահաճ ու կամակոր Նավզիկեին անսանձ կարոտով.—*

[12] Յավոք, չհաջողվեց ծանոթանալ նամակներին:

Նայադների նման, նայադների նման,
Կարոտների ձայնով կանչում է ինձ,
Խոստանալով սիրո անհատնելի հմայք
Եվ թողնելով մորմոք ու կարոտների կսկիծ...»[13]:

Եթե Աստված ուժ տա «Նավզիկեի» վերաբերյալ՝ «Ոդիսականից»[14] հատուկ իմաստասիրական նոր տարբերակով և բանաստեղծի կյանքի վերջին տարիների մթնոլորտով՝ խոսք կլինի տեղում: Այստեղ խոսքը վերաբերում է դեպի Կ. Պոլիս («Դեպի Ստամբուլ») ճանապարհին՝ իր հույզերի, մտորումների, տրամադրությունների, խոհերի ու դատողությունների անեզր–անընդգրկելի տարածքին, որի մի սկզբնածայրում անկասկած տեղ են ունեցել թե՛ Տեմիրճիպաշյանը և թե՛ Հ. Նազարյանցը:

* * *

Բայց տեսնք և վայելենք այս «Վարդից՝ Աստված» աշխարհա–կենսազգացողության, սիրո և հոգու ճաշակի տոհմիկ հարազատությունը (այն էլ վարդ ու Աստղիկ առանցքի համընկնումով) Գրիգոր Նարեկացու «Վարդավառին տաղին»՝ անշուշտ, Մ. Աբեղյանի մեկնության ուղեկցությամբ:

«Նույնպիսի հմուտ արվեստով,— շարունակում է հայագիտության տիտանը,— միայն «հայրենի» կոչված չափով (2–3–2) (3–2–3), հորինված է և նրա Վարդավառի տաղը, որ բերում է այստեղ ամբողջապես.

Վարդավառին տաղ

Գոհա՛ր վարդըն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից՝
Ի վեր ի վերայ վարսից
Ծաւալէր ծաղիկ ծովային:
Ի համատարած ծովէն
Պըղպըջէ՛ր գոյնըն այն ծաղկին.
Երփին երփնունակ ծաղկին
Շողշողէ՛ր պըտուղն ի ճըղին:
Քըրքում վակասիր պըտուղն
Սընանէ՛ր խուռն տերեւով.
Տերեւն տաւիղ Տուողին,
Զոր երգէր Դաւիթ հրաշալին:
Ի փունջ խառներամ վարդից

[13] ՍԳ, 1967, թիվ 9, էջ 43–45:

[14] Պարզ է, խորին շնորհակալությամբ այս անգամ էլ երախտաշատ Սիմոն Կրկյաշարյանին, որի հունարենից հայերեն թարգմանած կոթողների շարքում ունենք Հոմերոսի «Ոդիսականը»:

Գոյնըզգոյն ծաղկունք ծաղկեցան.
Այդ սօս ու տօսախ ծառերդ
Վարդավո՛ն ուստս արձակեցին:
Այդ նոճ ու բողբոջ արաւոդ
Զարդ առեա՛լ վարդըն շուշանին
Շուշանըն շողէր յոլտին,
Շողշողէ՛ր դէմ արեգական:

Այն Հիւսիսային Հովէն
Հով հարեալ դոհար շուշանին.
Յայն Հարաւային լեռնէն
Քաղցր օդով ցողէր շուշանին:
Շուշանըն շաղով լըցեալ,
Շող շաղով և շար մարգարտով.
Ծաղկունքդ ամեն չա՛ղ առին,
Շաղն յամպէ՛ն, ամպն յարեգակնէն,
Աստեղքդ ամեն շուրջ առին,
Դէմ լուսնին գունդ գունդ բոլորին.
Գունդ գունդ խաչաձև դնդակ,
Յօրինուած երկնից շուրջանակ
Փառք Հօ՛ր և որդւոյն, յաւէտ,
Սուրբ Հոգւոյն այժմ և յաւիտեանս[15]:

Այս տաղը՝ բացի վերնագրից ու վերջին երկու տողից՝ ոչինչ կրոնական չունի իր մեջ: «Վարդավառ» անունն էլ իսկապես քրիստոնեական չէ: Այսպես կոչվել է ջրի դիցուհի Աստղիկի տոնը. որովհետև նրան նվիրական է եղել վարդը: Մեծ հանդեսներով կատարել են այդ տոնը, դիցուհուն վարդեր ձոնելով և այլն: Քրիստոնեության ժամանակ այդ հեթանոսական տոնի փոխանակ կատարել են Հիսուսի պայծառակերպության տոնը. բայց անունը և հանդեսները պահել են հեթանոսականը: Մեր հին հեղինակները հիշում են այդ տոնի ծագումը հեթանոսականից: Այդ իմացել է, անշուշտ, և Գրիգոր Նարեկացին: Նա ազդվելով «Վարդավառ» անունից՝ նկարագրել է ամառվա կանաչավառ բնությունը – բողբոջող ու պտղող և ոստեր արձակող ծառեր, փթթող վարդ ու շուշան, ծլող ու բուրող ծաղիկներ, շաղ ու շող, լեռնային քաղցր օդ ու փչող հով, լուսին, աստղազարդ երկինք: Ամբողջական լույսով ու գույնով ու շարժումով հեղեղված, անուշահոտ բուրմունքով լի թարմություն:

Բանաստեղծն այստեղ ոչ միայն բնության զգացում ունի… այլ գիտե դարձ-

[15] Հ. Աճառյանի ընթերցումով՝ «… թեև ժողովրդական լեզվով գրված, բայց դեռ բավականին գրաբար…». Հայոց լեզվի պատմություն. մաս 2, 1951, էջ 230:

նել, տալ այդ մեզ ամեն մի հրապուրիչ արվեստով, առանց որևէ մթնության, ռիթմիկ–երաժշտական ոտքերով ու բաղաձայնների հանդիսությամբ շոյելով մեր ականջը, միաժամանակ և խաղուն դարձնելով ոտանավորը... Եվ այդ լուսավոր պատկերը ոչ թե սառած, մեռած մի վայրկյան է, այլ... է՛ շարժվող կենդանի միություն, մի ներդաշնակ ամբողջություն դառնալիության վիճակի մեջ: Այս արդեն մի նոր արվեստ է և՛ ձևով, և՛ բովանդակությամբ...»[16]:

Ուրեմն և նամօրինակ տոհմիկ երակների հարազատությամբ ու համընկնումներով էլ հարկ է վեր հանել և ներկայացնել բախտի անիրավությամբ արևմտահայ–արևելահայ կոչվող հայոց գրականության օրինաչափություններն ու օրգանական անկապտելի միասնությունը: Առավել ևս բանաստեղծության պարագայում, միաժամանակ նախապայման ընդունելով Աբեղյանի շեշտած՝ «լույսով ու գույնով ու շարժումով հյուսված», «ռիթմիկ երաժշտությամբ» տրոփող, «շարժվող կենդանի միությամբ... ներդաշնակ ամբողջությամբ դառնալիության վիճակի մեջ» պատկերային–համակարգային հատկանիշներով: Ասել է թե՝ այնպիսի նախադրյալներով, որոնց նշաններն արդեն իսկ առկա են Զարենցի հայտնի երախայրիքում.

Ծաղիկները հեզ թեքվում են քամու օրորի տակին–
Եվ լսում Նրա հեւքը բերող երգը տխրադին...
Քամին ծաղկունաց շուրթերն է դողդոջ շոյում,
դուրգուրում
Ու լուռ մրմնջում, թե հեռուներում ինչպես են
սիրում... (1, 269):

---

[16] Մ. Աբեղյան, Երկեր Գ, 1968, էջ 626–628:

Ըստ այդմ. ըստ ամենայնի հետաքրքիր և, մեր կարծիքով՝ ուսույց է Ջեյմս Ռասսելի «Հայերի վարդավառի ստուգաբանությունը» խորիմաստ քննականը.

Արձանագրելով, որ «... ամռանը նշվող հայկական այդ տոնակատարության... ծիսակարգը նկարագրել են ազգագրագետներն ու բանաստեղծները», և որ՝ այնուամենայնիվ այդ «անվան ճշգրիտ իմաստը մինչև այժմ «խուսանցրել է» գիտնականներին», Ռասսելը համապատասխան համեմատական քննություն–մեկնությամբ հանգում է այսպիսի եզրակացության. «Սակայն վարդ–ի հրեղեն կարմիրը, որ նման է արևին՝ պատկերով երկրատարածական կրքի՝ գույնով, կյանքի կենսասիրությանը՝ իր ողջ ծաղկափթթումով,— այդ ամենով գերազանցում է ուրանց երկրի կամ մշակույթի աստվածությունների հետ եղած զուգորդությունները: Վարդավառի ժողովրդական ստուգաբանությունը (վարդ—այրել) բացատրվում է հենց այս նմանությունների հավաքական–բանաստեղծական համալիրի փայլով ու շքեղությամբ, այնպես, ինչպես կյանքի ամռան դառը երկիմաստությունը: Որքանով կյանքն էլ վարդի նման փթթելիս երբևէ զոհաբերություն է պահանջում: Եվ դա ինքնին՝ ճշմարտության անըմբռնելի գաղտնիքով պարուրված հեղինակ է. և դրանով էլ ահա՛, հայ հանճարը Վարդավառը օժտել է ավելի վեհ իմաստով, քան ընձեռում է եղած ստուգաբանությունը: Վարդի անվան և ծիսակատարության համար պրոզային է և պարսիկ. Vardavar «Ծաղիկ բերել»–ը, տե՛ս «Annual of Armenian Linquistics vol. 13, 1992, էջ 63–70:

Անգլերենից թարգմանեց Նազիկ Հովհաննիսյանը՝ իմ դուստրը...

* * *

Տարրական տրամաբանությունը միաժամանակ հուշում է արձանագրել, որ Ղոնդախչյան եղբայրների զրույցների ազդեցությամբ է բորբոքվել—ձևավորվել քայլ առ քայլ պաշտամունքի վերածած իր պատանեկան հետաքրքրությունը Վարդանանց պատերազմով: Քանի որ ինչպես հետևում է Նազարյանցի «Խաչված երազներում» **«Փառք հաղթվածներին»** նշանաբանով Ռ. Զարդարյանին ու Ռ. Սևակին նվիրած բանաստեղծություններից՝ 10–ական թվականների չեմին **Վարդանանց պատերազմի սպասումը օդի մեջ էր:** Բնականաբար, առանձնակի խմորումներով Հայր Ալիշանի ոխտանական ժառանգությանը մոտիկից հաղորդակից վենետիկյան վարժարանի սաների միջավայրում: Եվ Ալիշանի հենց այս տողերով. «... Եվրոպացի ուղևորք ոմանք **Ալզաս** գրեն փոխանակ Սազի. ի ստորև՝ **կոչի Սարը—սու,** և հզօրացեալ խաղայ ընդ արևելս յԱրտազ, ընդունելով օժանդակս աստի և անտի, և Թափի յԵրասխ, ուրոյն կամ խառնեալ ընդ **Ագ—չայ** գետոյ կամ Մակուայ գետոյն, որ նոյն ինքն Թուի **Տղմուտն** նախնեաց մերոց, առ որով մեծ պատերազմն Վարդանանց»[17]:

Ավարայր գյուղով Արտազի դաշտ՝ հին անունով Շավարշան դաշտ, որտեղ և հայերը անձնվիրաբար դիմագրավել են պարսից հզոր բանակին, որը և բանաստեղծորեն արծարծել է դարձյալ Հայր Ալիշանը «Շուշանն Շավարշանա» պոեմում՝ իր հերոսուհուն անվանելով Շավարշան դաշտի Շուշան: Ըստ երախտաշատ Արամ Ինճիկյանի տողերի. «... Սանատրուկ Թագավորի դուստրը» որ՝ «մերժելով աշխարհային բոլոր վայելքները, ընդունում է քրիստոնեություն և Թադեոս առաքյալի հետ նահատակվում է հարազատ հոր ձեռքով: Դա վանական բանաստեղծի կրոնական—միստիկ զգացումների գրական արտահայտությունն է, ոգեշնչված մի ներբող քրիստոնեական հավատի համար նահատակված և եկեղեցական սրբերի շարքը դասված կույսի մասին.

Եկե՛ք կուսանք, ժողովեցեք
Վարդն ու շուշան զուգեցեք,
Դըրեք դալար զայն մարմին
Թ'ադեի հետ ի շիրմին:
Սանդո՛ւխտ, Հայոց կույս քնքույշ
Հանգչե ի հողս այս անույշ.
Կուսանք Հայոց քեզ շուշան
Բերեն ի դաշտ Շավարշան»[18]:

[17] Ղ. Ալիշան, Այրարատ, 1890, Վենետիկ, 19491:

[18] Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, 1962, էջ 497: Երևակայեք, այն օրերին այդպիսի տողեր շատ քչերը կգրեին...

Եվ Նարեկացուց դարեր հետո... վարդ ու շուշան՝ Ալիշանի... Ապա Իսահակյանի շընկշնկալով հանդերձ... հետո տերյանական վարդ ու շուշան... մթնշաղ, աշուն, շրշյուն, գիշեր, հուշեր... վարդավառ ու վարդավառման և այսքանին հավելած մեծարենցյան վարդաբույրը.... շողա՜...շողա՜... և ամեն դեպքում շ–ով՝ «բաղաձայնային հանդիսությամբ» ձայնագրված նվագայնություն...

* * *

Բայց շարունակենք դառնալ Հրանտ Նազարյանցի «Խաչված երազներին»՝ լրացնելու համար պատանի Զարենցի տեղյակության շրջանակը արևմտահայ և ոչ միայն արևմտահայ գրական–մշակութային, հասարակական–քաղաքական մտայնությունների մթնոլորտի:

Ավելացնելով նաև, որ «Ըստ Լենա Մեվերի» («A Lena Mever») նշանաբանով հյուսված «Մոխրացյան» շարքը որոշակիորեն առանձնանում է հածության առավել շեշտադրումներով («Վարդերուն մահի» կողքին «Հովում», «Սիկառը», «Ցայգերգ» և այլն): Առանձնակի թանձրությամբ դրսևորված «Ենովք Արմենին» նվիրումով գրված «Նվագներու հոգին» մտահղացումով հետաքրքիր (տարբերակվելով համադրվում են կիթառների սիրերգ, սրինգների հեծկլտանք, մոգոլինների ցնծություն, ջութակների հառաչ...), վերջնամասով այսպիսի բանաստեղծությամբ.

...Քայքայվա՜ծ, հեք նըվագ մըն է իմ հոգին.
Ո՛չ եղերգ մը կ'ելլե կուրծքեն, ո՛չ ցնծերգ.
Իր երգը ա՜լ լըռությունն է տրտմագին.
Անոր մենիկ թելերուն վրա ո՛չ մեկ ձեռք՝
Թող չի փորձե՜ երգը Սիրո ու Կյանքին (էջ 80):

Ըստ այդմ՝ երևում է, սկզբնական հղացումով շարքը կոչված էր արձագանքելու գրքի առաջին էջի նվիրումին. «Հորս՝ + Տիրան Նազարյանի, անո՛ր որ **թշվառության հետ եղբայրացավ** երբ իմ տարիքս ուներ, որ իր երազներն ունեցավ՝ ապա բախտեն ու բարեկամներեն խաչված, որ իր տառապանքովը գիտցավ սերն ու կեղծիքը նդուրել... բաղձաց որ ինքն իր սի՛րտը մնա իբր կտակ անոնց,— իր սիրտը խոնարհ, իր սիրտը ներող, իր սիրտը միմթիք–զոր խոսեցունել այս էջերուն մեջ և դնել, հա՛յր, քու լույս խոհալիքեդ ճառագա՛յթ մը գեթ իմ հրայրքս եղավ... Հ. Ն. 18 դեկտեմբերի 1911»:

1913–ի այդ օրերին ու ամիսներին՝ Աբդար աղայի դեմ հայտնի դառնությամբ, պատանի Եղիշեն անկասկած հաճախ է անդրադարձել քաղված տողերին ևս. փութանցիկ–տարանցիկ մե՛կ լցվելով հոր դեմ դառնությամբ, մե՛կ լիցքաթափվելով... բայց, երևի թե վերհիշել է և «Կոմիտաս» պոեմում հոր դիմանկարը գծագրելիս՝ **ճիշտ և ճիշտ Հրանտ Նազարյանցին հարազատ հայ ժողովրդի զավակների ավանդական ծնողապաշտությամբ...**

Ըստ էության տոհմիկ պատկանելություն ունի և «Խաչված երազների» վերջին

«Փառք հաղթուածներուն» շարքը: Սկսած «Ռուբեն Զարդարյանին» նվիրումով «Արվեստին Գողգոթա» վերնագրով բանաստեղծությունից (նման հոլովումներով. «Իտեալիդ Գողգոթան կը բարձրանաս խաչվելու» կամ «Անկարելի, չար ձեռք մը կը գամարվի օձի պես՝ Անհուսությամբ նիզակված սիրտիդ վրա անխնա» և այլն), - ներառյալ «Հոգիդ»՝ վերստին տրտմաչունչ սեփական «Հոգեպատկերը»:

Հաջորդը՝ «Ըստ Ֆ. Թ. Մարինեթթի» («A F. T. Marinetti») «Հրձիգները» ծավալուն քերթվածն է. բնականաբար, ըստի պարտադրած «մարինեթթիական» հյուսվածքի «անկապ զուգորդություններով ու պատկերներով», «Ապագա՛ն, Ապագա՛ն» կրկնություններով և ֆուտուրիստական հանդի քանդարարական աղմկարար կոչերով ու սպառնալիքներով և այսպիսի վերջնատողերով.

Հառաջապահ մենք այն դունդն ենք կամավոր,
Որ առաջին բախումին դեմ կը սուրա,
Վըտանգավոր ոստումներով ահավոր,
Ատելությամբ ու վրեժով բեռնավոր... (էջ 87):

Հայտնի է, որ Վլ. Մայակովսկին ֆուտուրիզմը համարում է «պայքարի բանաստեղծություն»: Իսկ ահա Նազարյանցը նո՞ւյնը չի համարում...

Ամեն դեպքում համընդհանուր «անշարժության», «Զառամած ծերության» դեմ Հրձիգների բողոքում զգացվում էր երկփեղկվածությունն՝ հայոց բախտի ու պայքարի ընդհատակով: Ըստ այդմ հաջորդ «Հաղթվածները» արդեն հարձակողական են ոչ միայն դիպուկ ընտրված ու փաթեթավորված՝ «Նրանք ոճրագործներ չեն, վրիժառուներ են.» պատմությունն ավելացնում է՝ սրանք հերոսներ են. Ամիլկար Սպիանի, Պատասխան զրպարտիչներիս, Փարիզ, 19000, «Մանրադրամ» բնաբանով, այլև որոշ սիամանթոյաշունչ ոգորումներով.

Դո՛ւք որ անցաք, դո՛ւք որ մեռաք,
Հուսահատ, լուռ փրփուրին պես...
Ծիտ ծըռելով Թուրքի՛ն, Թագի՛ն,
Շարք-շարք կ՚անցնիք տաժանորեն
Գողգոթանուդ փըշոտ ճամփեն,
Թիապարտի կապված փոկին:
Քանի՛, քանի՛ հիսուսներ նոր
Դուք կը ծընիք ու կը մեռնիք.
Ձեր նոր կրոնքին պես գեղեցիկ՝
Ան մեկ անգամ, դուք ամե՛ն օր
Ձեր արյունովը կ՚ողողեք
Կողկոճ հետքը ձեր քայլերուն.
Խաչերն խաչ կ՚երթաք նըկուն.
Ու ձեր կյանքին բազմակեղեք
Ողբերգության հանդիսանես... (էջ 88-89):

Ոգորումներ, որպիսիք «**Արշակ Չոպանյանին**» *նվիրումով և՝ «Թշվառությունը չափազանց թույլ է, նա ուժ չունի երջանիկների եսամոլ վայելքի վրա դանակ ճռճռելու, ոչ իսկ մեկ ջահ տարուբերելու,* **Օկտավ Միրբո, Լավ է... Կարգը**» *բնաբանով «Մերժվածները» բանաստեղծությամբ թևածում են համամարդկային հասարակական–սոցիալական ոլորտներ. կին–քրոջ «արհամարհված, մարախտացած» խափանիկ կյանքի արծարծումներով, որպիսիք այլ տարբերակով տեսնում ենք* «**Կոստան Զարյանին**» *նվիրումով «Երգչուհին» քերթվածում: Հայտնապես հավատալով «քույր–կնոջ» մտայնության հաղթարշավը՝ միատեղ ու միասնաբար թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ պոեզիայում ու գրականության մեջ: Հաճախ էլ արձագանքելով «Թշվառների» ու «Նանայի» խորհրդանիշներին: Շարքի առավել հաջողված էջը թերևս, մնում է մարտական շնչով հյուսված «Մրրկահավը» քերթվածը՝*

... Հո՛ն, ուր քաղցի թույնին տարված խելագար
Կը գալարվին մութ կիկլոններ մարդկային,
Մրրկահա՛վն–հոգի՛դ–անդուլ քարե քար
Կը թևածեն ըսպասելով փոթորկին... (էջ 95),—

յուրատեսակ արձագանք Մ. Գորկու «Մրրկահավի երգի»[19]*՝ (կողքին էլ «Մայիսի 1–ը», «Դարբնին երգը») և* «**Ռ. Սևակին**» **նվիրած «Կարմիր դրոշակը»**՝ *արդեն միանգամայն բացահայտ ազգային–ազատագրական պայքարի պատումով ու մարտահրավերով.*

---

[19] Կարելի է, թերևս, համոզված ասել, որ Եվգենի Ֆրանցովիչ Կրժիժանովսկու ավանդած ռուս գրականության դասերից Մ. Գորկու անունը՝ (հեղափոխական գաղափարներով հանդերձ) պետք է որ ծանոթ լիներ ռեալականի սաներին, այդ թվում Եղիշե Սողոմոնյանին: Ամեն դեպքում Նազարյանցի քերթվածը գալիս էր բորբոքելու հետաքրքրությունը Գորկու ստեղծագործության, ինչպես և «Մրրկահավի երգով» (1901), որը պաթոսային համարժեք ուժով ու հնչեղությամբ (այլ գործերի հետ շարքով) թարգմանեց, «Մաքսիմ Գորկի, Բանաստեղծություններ և լեգենդներ թարգմ. Ե. Չարենց» խորագրով և Հ. Կոջոյանի հոյակապ ձևավորումով հրատարակեց (1934, Երևան) և Սովետական գրողների առաջին համագումարի օրերին (1934, օգոստոս) անձամբ նվիրեց Գորկուն:

Ահա և թարգմանությունը՝ կիսով չափ կրճատումներով.

Ծովի ալեհեր հարթության վրա
Ամպեր է ահա կուտակում քամին,
Ահեղ ամպերի և ծովի միջև
Ճախրում է հպարտ մրրկահավը՝
Թռչում է՝ մի սև կայծակի նման:
Մերթ ալիքներին թևով դիպչելով,
Մերթ նետի նման ամպերին հասած՝
Ճչում է նա չոր– և խինդ են լսում
Ամպերը խիզախ թռչունի ճիչում...

…Եղի՛ր Նոր խաչն Հալածակա՛ն մեր Ցավին,
Խորհրդանիշ՝ մեր արյունոտ պայքարին,
Կարմիր վկան՝ մեր բազմաթիվ զոհերուն.
Թո՛ղ ծալքերուդ խանձարուրին մեջ օրրուն
Ծընի՛ Մեսիան մեր գերակա մեծ ուխտին… (էջ 98),—

եթե հիշում ենք, այս «Մեծ ուխտը» հոլովվում է և «Կապուտաչյա Հայրենիքում»…

Ուրեմն և չուրանանք. ինչպես 1905–ի հեղափոխության միջոցին, Առաջին Համաշխարհային պատերազմի նախաշեմին՝ արևելահայության կողքին ռուսական հեղափոխության և նրանից անբաժան ազգային ազատագրական պայքարի սպասումով էր ապրում և արևմտահայ հասարակայնությունը՝ ի դեմս մտավորականության: Միաժամանակ արձանագրենք. հասունացող նշված մտայնությունների բերումով՝ արևելահայություն–արևմտահայություն խաչավորող Կարսում ձևավորվող նորօրյա բանաստեղծին միանգամայն օրինաչափորեն վիճակված էր **մշակութային միատեղ ժառանգականություն՝ թե՛ մեկից, թե՛ մյուսից:** Այստեղից Նազարյանցի գիրքը հանգամանորեն ներկայացնելու անհրաժեշտությունը՝ ամենաթռուցիկ շրջագծով իսկ պատկառելի: Թեկուզ միայն նկատի ունենալով Եղիա Տեմիրճիպաշյանի հիշատակությունը: Ամեն պարագայում տպավորությունն այն է, որ Ղոնդախչյան գերդաստանի որդիները ունեցել են դրադարան: Եվ, եթե ընդունում ենք, որ պատանի Սողոմոնյանին տրամադրել են Հայր Արսեն Ղազիկյանի թարգմանությամբ Դանթեի «Դժոխքը», ապա կարող

Ցասման փրփուրում որոտն է թնդում,
Ալիքներն են հորդ՝ վխճում քամու հե՛տ,
Եվ ահա հանկարծ գրկում է քամին
Ամպերի երամն անդուլ գրկանքով,
Եվ շպրտում է ամեհի թափով,
Վայրի բարկությամբ. ժայռերի վրա,
Փշրում է, ցրում, դարձընում փոշի
Նրանց զմրուխտե կույտերն ահագին:—
Մրրրկահավը ճախրում է ճիչով,
Կայծակի նման ամպերը ճեղքում–
Պոկում է թևով փրփուրը ջրի,
Ճախրում է ահա, ինչպես հզոր դև,
Սև, անագորույն ոգի փոթորկի,—
Եվ ծիծաղում է և լաչ հեկեկում
Որոտի ցասման, վրդովմունքի մեջ
Նա–զգայուն դև–վաղուց է արդեն
Հոգնություն տեսնում:— Համոզված է նա,
Որ չեն պարուրի ամպերն արևին,
Չե՛ն ծածկի ընդմիշտ, չե՛ն ծածկի, օ, ո՛չ:—
Ոռնում է քամին… Որոտը թնդում… (4, 495, 496)

էին տրամադրել և Տեմիրճիպաշյան: Համենայն դեպս, Տեմիրճիպաշյանի «Խաչված հոգու» զգայական հայեցումներ կան «Դանթեականի» հետ միաժամանակ հյուսված երիտասարդ Զարենցի «Արտիստը (Պ. Ադամյանի հիշատակին)» բանաստեղծության հենց այս տողում.

«Իմ հոգին–որպես լույսերի տաճար,
Իմ հոգին–որպես երազի խորան:
Բոցերի նման թե Բարի, թե Չար
Խանձեցի հոգիս – Արվեստի՛ համար... (1, 293):

Թվում է նաև, որ այդ ժամանակից իմացել և ողջ կյանքում հիշել–կրկնել է յուր անձին վայելող Տեմիրճիպաշյանի սույն տողերը. «Սպարտա՝ տագնապի մը ժամանակ՝ զորավար մը խնդրեց Աթենքեն. Աթենացիք՝ որք կնախանձեին Սպարտացվոց՝ զորավարի տեղ բանաստեղծ մը հղեցին հեգնորեն: Սակայն բանաստեղծն ըրավ՝ ինչ որ զորավարն անկարող պիտի ըլլար ընել դուցե»[20]*:*

Թվում է նաև, որ իմացել–կրկնել է Ռ. Սևակի ժառանգությունից՝ «Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր» տողով սկսվող՝ բոլոր հասակների համար գրված անմոռանալին... Այդ օրերին Աստղիկի սիրուն, Մեծ Եղեռնից հետո եղեռնյան մռմուռով թաթախված՝ Արմենուհու, ապա Արփենիկի համար:

Իսկ 1913–ի այդ օրերից «Խաչված երազների» միջոցով հեռակա ծանոթությամբ Արշակ Չոպանյանի – ապա և Կոստան Զարյանի պարագայում արդեն՝ Տրապիզոնից Պոլիս և հետո ճանապարհին Զարենցը հաստատ գիտեր, որ հեռավոր Փարիզում առաջինը սպասում է իրեն անձկությամբ ու սիրով, երկրորդը՝ անվանարկելու–վարկաբեկելու հանձնառու ծարավով...

Պոլսական ապրումներ ու վերապրումներ...

Իսկ ահա, ինչպես հետևում է Ալ. Մյասնիկյանին հասցեագրած «1925 թ. հունվարի 8» թվակիրով նամակից, դեկտեմբերի 2–ին կամ 3–ին Պոլիս ժամանած Զարենցը մի ամսից ավելի ապարդյուն սպասում էր նոր վիզայի:

Ըստ երևույթին, վիզան պետք է որ հարմարեցվեր Մյասնիկյանի սպանությանը:

Այդ նամակ–հաշվետվությունը լույս է սփռում ինչպես Զարենցի, այնպես էլ Մյասնիկյանի ազնիվ շահախնդրությանը՝ հարազատ ժողովրդի բախտի ու կացության բոլոր հարցերում: Դա առաջին հերթին վերաբերում է քեմալական Թուրքիայի հանդեպ խորհրդային պետական քաղաքականությանը հակառակ՝ թե՛ մեկի, թե՛ մյուսի կողմնորոշմանը, այն էլ այսպիսի ոգով ու մտահոգություն-

---

[20] *Քաղված է Ս. Թոփչյանի նույն գրքից, էջ 82:*

ներով. «... շուտով համոզվեցի,— գրում է Չարենցը,— որ այստեղ ճիշտ որ չկա, բառացի, ոչ մի հասարակական կյանք (խոսքս հայ գաղութի մասին է). դաշնակցականներն են միայն, որ քիչ–շատ շարժվում են հրապարակի վրա, բայց դրանք էլ ընդհանուր առմամբ քաշ են տալիս ողորմելի, ստվերային մի գոյություն... Անցյալ տարի կարդալով Պաոլո Մակինցյանի ֆելիետոնները, ես կարծում էի, որ նա խտացրել է գույները, բայց այստեղ ես համոզվեցի, որ նա ոչ թե խտացրել, այլ մեղմացրել է և այն էլ բավականին:— Թե որքան ողորմելի է այստեղ հայ գաղութի կյանքը՝ դժվար է պատկերացնել.— մարդիկ պարզապես քաշ են տալիս ստվերային խղճուկ մի գոյություն, աշխատում են որքան կարելի է հաճոյանալ թուրք կառավարությանը, թուրք հասարակայնությանը. մամուլը և այլն, աշխատում են պահել նրանց արհամարհանքի, իրավական տեռորի, պրովոկացիաների, հայհոյանքների այնպիսի մի մթնոլորտում, որից **մարդու մազերը կարող են, ինչպես ասում են, բիզ–բիզ կանգնել...»** (ընդգծ՝ Ալ.Զ.) (6, 413):

Մեկնաբանություններն ավելորդ են: Ավելորդ կարելի է համարել և չեկիստական բարքերին տեղյակ Չարենցի հաջորդ տողերում ձախություն որոնել–դատապարտելը: Առաջին և վերջին հաշվով բոլոր հայհոյանքները, «պոլշևիկյան ագենտ» լինելու ««հավաստումները» պարպվում են՝ հանգելով «... Անհասարակ հարկավոր է ասել, որ Եվրոպայում շրջում է ոչ թե «կոմունիզմի ուրվականը», ինչպես ընդունված է ասել, այլ–կոմունիզմի սարսափը. այնպիսի մի սարսափ կա այս երկրներում բոլշևիզմի հանդեպ, որ անհնար է նկարագրել... Կամ բողոքել «վիզա տալու աստվածային իրավունք ունեցողներից»,— և այլն և այլն (6, 415) տեղեկատվությամբ:

Ուրեմն և էլ ինչ խոսք կարող է լինել համաշխարհային կոմունիզմի հաղթանակից...

Ինչևէ. Հովհ. Թումանյանի հայտնի այցելությունից հետո, 1923–1924-ի միջոցին Պոլիս է գործուղվել Մյասնիկյանի մտերիմներից **Պողոս Մակինցյանը: Մտկչ տպված «Մի տարի Պոլսում»** ակնարկում՝ ներկայացնելով հայության ընդհանուր կացությունը, մամուլի վերաբերյալ գրում էր. «Այստեղ մենք կհիշենք այդ մամուլի կատարյալ անսկզբունք և անբովանդակ վիճակը, որ պետք է բացատրել ոչ միայն մտավորականների բացակայությամբ, այլև գերազանցորեն Պոլսի արդի քաղաքական պայմաններով և ազգային փոքրամասնության ողբալի կացությամբ...

Հույների և հայերի նկատմամբ թուրք թերթերը, առանց ուղղության խտրության, յուրաքանչյուր օր թշնամանքի թույն են ժայթքում»[21]:

Մտավորականությունը վերից վար կենսականորեն մտահոգված էր մշակութային օջախների գործունեությամբ՝ հատկապես Պոլսում, ինչպես և եվրոպական կենտրոններում: Ազգահավաքման–ազգապահպանման համար անհրաժեշտ էր

[21] Մտկչ, 1924, ապրիլ, թիվ 89–90:

չունչ տալ այդ օջախներին, և դա դառնում է Մյասնիկյանի առաջնահերթ խնդիրներից մեկը: Անդրֆեդերացիայի արխիվներում եղած փաստական տվյալներով միջոցներ են փոխանցվում Վիեննա Սիմոն Հակոբյանին՝ «Արեգի» հրատարակության համար[22]: Համանման առաքելություններով Կ. Պոլիս է մեկնում Մակինցյանը, որին այնուամենայնիվ հաջողվում է ինչ-որ չափով աջակից լինել Պոլսում մնացած մտավորականությանը:

Պարզվում է, սակայն, որ Թուրքական մոլեռանդ արհամարհանքի ու թշնամության մթնոլորտում այժմ արդեն բառացիորեն անհնար է իրագործել աննշան որևէ նախաձեռնություն: Նույն հանգամանքներով Պոլսից հեռացել էին արևմտահայ մտավորականներից շատերը՝ Ե. Օտյանը, Վ. Թեքեյանը և ուրիշներ: Ուստի Մակինցյանին հաջորդած Դանուշ Շահվերդյանին, որպես Անդրֆեդերացիայի առևտրական ներկայացուցչի, մնում էր զբաղվել առևտրի ու ներգաղթի հարցերով: Զարենցի այս նամակից հետևում է, որ Մյասնիկյանի հանձնարարությամբ պետք է որ ինքը Պոլսի մտավորականության համար դասախոսություններ կարդար, սակայն Շահվերդյանը խորհուրդ չի տվել: Թուրքական սարսափից իր հետ հանդիպել են «խեղճ, ծեծված» մի երկու խմբագիր: «Նոր լուրն» ու «Ավետիսը» ոչինչ չեն տպել՝ պատճառաբանելով, թե՝ «ոստիկանությունն արգելած է», «Ժամանակն» էլ զետեղել է հարցազրույցի մի չնչին մասը[23]: Այդ չնչին մասի առաջին հատվածը վերաբերում է վերը հիշատակված Պոլսից Հայաստան գաղթածների վիճակին:

Դիվանագիտորեն ճկուն, բայց և կտրուկ են բանաստեղծի պատասխանները հաջորդ հարցերին. «— Ճի՞շտ են Ռուսիո ներքին կացության մասին տարածայնված լուրերը»: Պատասխան. «Մեկ ամիս առաջ, երբ Մոսկվա էի, կուսակցական կյանքը և ներքին կացությունը այնքան գոհացուցիչ էին, որ ապստամբության ոչ մի նշան չէր կարելի տեսնել...»: Ապա հետևում է ամենացավոտ հարցը՝ պատասխանով. որից երևում է, Թուրքական սադրանքներից անմասն չի մնացել Զարենցի այցելությունը ևս.

«— Ճի՞շտ է թե Հայաստանի Թուրքերը հայերու կողմե ճնշումի ենթարկված են, ինչպես գրած էին Պոլսո Թուրք Թերթերը»:

Այս հարցի պատասխանն արդեն ըստ հարկի շեշտված է շեղատառով.

«— Հայաստանի մեջ Թուրք մը չկա, որ դժգոհ եղած ըլլա կառավարութեան արդարութենեն... *Ամեն Թուրք ազատ է այնչափ, որչափ հայ մը կամ ռուս մը... (6, 297, 298):*

Դեկտեմբերի 27-ին արդեն «Ժամանակը» զետեղում է Հայաստանի գրա-

---

[22] *Ինչպես նշված է էջեր առաջ եղած «Հավելվածում»:*

[23] *Բանաստեղծի ուղևորությունը Գահիրեից արձագանքում է* Ցուսաբերը՝ «Ե. Զարենց կճամփորդե» խորագրով *հաղորդելով. «Երիտասարդ բանաստեղծ Եղիշե Զարենց Հայաստանեն Պոլիս հասած է և պիտի մեկնի Եվրոպա: Կճամփորդե պետական միջոցներով». Ցուսաբեր, 1924, 16 դեկտեմբերի: Հիշենք...*

կան–մշակութային կյանքին վերաբերող հաջորդ հարցազրույցը, որը, ամենայն հավանականությամբ, կրկին վարել է օրաթերթի պատասխանատուներից Արտաշես Գալփաքչյանը: Շոշափվել են ուղղագրության, գրական–կրթական հրատարակությունների, մտավորականության ապահովության և այլ հարցեր՝ պետական կարևոր միջոցառումների շեշտադրումներով, ինչպես այն, որ՝ «Հայ լեզուն պարտավորիչ է, որուն համար ռուսերենը գործածությենն դադրած պետք է համարել» (6, 301):

Հարցազրույցից հետևում է, որ վարողը Չարենցին հանդիպել է ոչ մեկ անգամ, և որ՝ մասնակի տարակարծություններով հանդերձ, համակիրներից է Հայաստանյաց իրավիճակի: Իհարկե, **Հայաստանի շուրջը ազգահամախմբման ամենակարևոր առումով,** որը և բազմիմաստ հոլովումով ներկայացվում է որպես **Չարենցի ուղևորության նպատակ.** «Անիկա վերապահ ձևով մը ինձ կը վստահեցնե, թե մասնավոր «միսիոն» մը չունի և թե՛ իր մտադրությունն է շրջագայիլ արտասահմանի զանազան գաղութները և այդ առիթով ծանոթանալ հին թե նոր մտավորականներու հետ ու մոտեն իրազեկ ըլլալ յուրաքանչյուր շրջանակի իմացական շարժումներուն» (6, 301): Այս մտքով էլ ավարտվում է Չարենցի պոլսական վերջին հարցազրույցը: Իսկ բանաստեղծի անձին ու ստեղծագործությանը վերաբերող վերապահն ու անվերապահը ձևավորված է սահմանաբաժան նման գնահատականով. «Հակառակ մեզի դրեթե անհաղորդ իր «պոեմներուն» – տարօրինակ և ըմբոստ նկարագրին, զինքը կը գտնեմ բնավորությամբ դյուրահաղորդ և համակրելի: Սակայն, երբ դրականության մասին է հարցը, անիկա կ՚արտաբերե անմիջապես իր «կարմիր» խառնվածքին հատկանիշները» (6, 299)[24]:

Պոլսում անցկացրած օրերից մեզ հայտնի սակավաթիվ դրվագներից մեկն էլ Չարենցի այցելությունն է Շիշլիի ազգային գերեզմանատուն՝ «գերեզմանատան բոլոր մասերը», նաև Մ. Օրմանյանի, Ասպետ Ջունդիի, Եղիա Տեմիրճիպաշյանի և Տիգրան Եէլքենճյանի դամբարաններին: Ընդ որում ընթացքում «գերեզմանատան կազմակերպության մասին» նրան տրվել են բացատրություններ: Ըստ երևույթին գերեզմանատան և՛ շքեղությունից, և՛ կազմակերպական մակարդակից վրդովված բանաստեղծը **«Տպավորությունների տետրակում» թողել է հանդիմանական տողեր. «Այն խնամքը, որ տարվում է Շիշլիի գերեզմանատան վրա, եթե տարվեր հանդեպ հայ գաղթականների, կարելի է կարծել, որ նրանց շարքերում չպիտի մնային թշվառներ»** (6, 299):

Այս տողերը «Ընկ. Չարենցը Կ. Պոլսում» խորագրով ԽՀ տպագրել էր 1925–ի հունվարի 22–ին: Ավելի վաղ՝ 1924–ի դեկտեմբերի 23–ին զետեղել էր Գահիրեում լույս տեսնող ռամկավարների օրգան «Արևը», որը պարբերաբար

[24] Տե՛ս նաև ԵԺ, հ. 6–ի համապատասխան ծանոթագրությունները:

արտատպում էր Չարենցի ուղևորության արձագանքները[25]: Առաջինը՝ «Տեսակցություն մը պ. Չարենցի հետ» արտատպել է դեկտեմբերի 18-ին, ուրեմն և կարելի է ասել՝ Շիշլիի գերեզմանատուն այցելած պետք է լինի դեկտեմբերի 16–23-ի միջև:

* * *

Կարևոր, չատ կարևոր ամսաթիվ:

Բանն այն է, որ հաղորդման մեջ ասված է, թե Չարենցը գերեզմանատանը «Հարցուցած է նաև, թե ո՞ւր կը գտնվի Մեծարենցի դամբարանը, որը ինչպես հայտնի է կը գտնվի Պալըգլը»: Իր հերթին Թորոս Ազատյանն էլ վկայում է, թե ինքը հանդիպել է Չարենցին, զրուցել են Մեծարենցի մասին, փափագել միասին այցելել Պալըգլը: Սակայն՝ «Հակառակ մեր փափագին՝ անկարելի եղավ իրկործել մեր տեսակցությունը, մանավանդ այցելել Մեծարենցի շիրիմին: Ատոր պատճառ եղան այն զրույցները, թե ան ոստիկանական հսկողության ներքև կգտնվի: Ու երբ հետո զինքը հրավիրելու ձեռնարկեցի, արդեն մեկնած էր Պոլսեն»[26]:

*Մյասնիկյանին հասցեագրած նույն նամակում հետգրությամբ Չարենցը հավաստում է. «... ես այստեղ առհասարակ ինձ հեռու եմ պահում հայ գաղութից, ոչ մի հարաբերության մեջ չեմ մտնում, այսպես կոչված «ազգային մտավորականության հետ» (6, 416): Հասկանալի է, «հեռու պահել» երկուստեք խնայելով թե՛ ազգային մտավորականությանն ու գաղութը, թե՛ իրեն՝ և՛ Թուրքերի, և՛ խորհրդային լրտեսական ծառայության ամենատես աչքերից ու հետապնդումներից: Բանաստեղծն այդպիսի հանձնարարություն էր ստացել Մյասնիկյանից, Մակինցյանից, Պոլսում էլ գումարվում է Շահվերդյանինը: Այս առումով կարևոր է սույն իրողությունը. երբ 1947-ին լույս տեսավ և պետական մրցանակի արժանացավ ռուս գրող Պ. Պավլենկոյի «Երջանկությունը», Գրականության ինստիտուտի և ինստիտուտին մոտ կանգնած տեղյակ մտավորականներ՝ խորհրդավոր ժպտում էին, ասելով, թե՝ Պավլենկոն եղել է Մյասնիկյանի քարտուղարը (թե՞ օգնականը), աշխատակցել է Մյասնիկյանի հիմնած «*Заря Востока*»-յին: Որոշակի ակնարկվում էր Մյասնիկյանին լրտեսելու իրողությունը: Մեր օրերում էլ ռուսական գրական շրջաններում բացահայտ ասվում էր, թե Պավլենկոն եղել է «հայր Ստալինի» հովանավորությունը վայելած անձանցից, և նրա առջև բաց էին արտասահմանյան*

---

[25] Անշուշտ, Ն. Աղբալյանի լանախոսության օրերից Չարենցի համակիր Վ. Թեքեյանի նախաձեռնությամբ: Տե՛ս Գ. 1:

[26] Ե. Չարենցի արտասահմանյան ուղևորության համարյա նույն վերնագրով հաղորդումով առաջինը անդրադարձել է հանգուցյալ գրականագետ Ասատուր Ասատրյանը: Ինչ խոսք, տարիներով հավաքած փաստական նյութով, որոնց շարքում, բնականաբար, գտնում ենք նաև բացթողումներ ու վրիպումներ: Տե՛ս ԳԹ, 1957, 18 օգոստ:

դռները[27]: Ասենք որ քսանական թվականներին էլ կրնկի վրա բաց էին Թուրքիայի դռները՝ անկասկած նաև հայ ժողովրդի և նրա զավակների դեմ դավեր նյութելու, լրտեսելու ու վնասելու ծառայությամբ: Ուրեմն և սկսենք այդ կետից՝ լրացնելով—հաստատելով այդ հին ու նոր խոսակցությունները: 1924–1927 թթ. Պավլենկոն եղել է խորհրդային առևտրական ներկայացուցչության քարտուղարը Թուրքիայում: Ասել է՝ գտնվել է Հայաստանին վերաբերող բոլոր բաց ու փակ գործընթացների կենտրոնում: Կասկած չունենք, որ Չարենցի Կ. Պոլիս հասնելու օրից ամենայն զգոնությամբ հետևել է նրա շուրջը եղած անցուդարձին, և դրանից հետևող մտահոգությամբ էլ Դանուշ Շահվերդյանի խորհրդով բանաստեղծն իրեն հեռու է պահել գաղութից և մտավորական շրջաններից:

* * *

Մտաբերենք պատճառակցական շղթան. Չարենցի արտասահմանյան ուղևորությունից մի քանի ամիս առաջ (1924–ի մարտի սկզբներին) Թիֆլիս էր վերադարձել Մակինցյանը, և շարունակում էր մնալ անգործ: Հրատարակության էր պատրաստում Պոլսում հրատարակած Վ. Տերյանի Եժ չորրորդ հատորը, որի ծանոթագրություններում, ինչպես և «Լենինն ու հայկական հարցը» հոդվածում[28] Տերյանի նամակներից քաղելով հատվածներ, բացեիբաց ցուցադրում էր հայոց հարցում Ստալինի մեղսակցությունները: Ահա այդ հատվածներից կարճառոտ մեկ–երկուսը. «Ներկայացրեցի մի записка,— գրում է Տերյանը,— Հայաստանի (Տաճկ.) մասին և Ստալինը (Ջուղաշվիլի) շատ հավանեց записка—ն և դեկրետի պրոեկտը...

Այսօր զրույց ունեցա այդ առթիվ և ընկ. Լենինի հետ, որին բացատրեցի, թե ինչու՞ անհրաժեշտ է առայժմ զորքերը չհանել Հայաստանից և պայմանավորվել Հայաստանի ինքնորոշումը աքսորվածների և փախստականների վերադարձով և այլ գարանտիաներով...

---

[27] «Лит. энциклопедия», т. 5, М., 1968, с. 525–526:

Որքան էլ ոչնչացված լինեն հետքերը, փակ արխիվները ի վերջո 100–200 տարի հետո կբացվեն, և կգտնվեն հաստատող վավերաթղթեր: Բայց անհերքելի փաստարկն արդեն առկա է նույն կենսագրականում:

Անդրկովկասից փոխադրվելով Մոսկվա, Սուֆի ծածկանունով տպագրած ակնարկ–պատմվածքներից հետո՝ Պավլենկոն հրատարակում է արևելյան ռոմանտիկ գեղգեղուն ոճով ստեղծված պատմվածքների ժողովածուներ. «Азиатские рассказы», «Стамбул и Турция», «Анатолия»: Միաժամանակ մերձենում է «Перевал»–ին, աշխատում Ա. Վորոնսկու հիմնած «Красная новь»–ում: 1927–ին «Վորոնսկիականության» մեղադրանքով արդեն մեկուսացված էր խմբագիրը, բայց կային ամսագրի շուրջը համախմբված Ա. Պլատոնովը, Մ. Բուլգակովը, Ա. Լեժնևը և ուրիշներ, որոնք արժանանում են 1937–ի իրենց բախտին, անշուշտ, նաև Պավլենկոյի «տեղեկատվությամբ», ինչպես ասվում է ռուս գրական շրջաններում: Այս կապակցությամբ տե՛ս նաև Ալ. Զաքարյան, Գրականության և պատմության ընթացքները, 1989, էջ 241–246:

[28] Մշակ, 1925, 20 փետր.

Նա շատ լավ վերաբերվեց և պարզվեց, որ երբ ինքը ասում է զորքերը հանել Հայաստանից, դրանով ուզում է ասել, **թե երբ հայերը պահանջեն այդ...»:**

Այնուհետև կրկին նույն 1917–ի նոյեմբեր–դեկտեմբերին գրված մի այլ նամակից քաղված էր. «Ստալինն ասաց՝ մենք խսկույն ևեթ կկարգադրենք, որ զորքերը հեռանան և հայերին հնար տրվի ինքնորոշվելու: Ես վիճեցի: Դա իմ записка–ն տալու ժամանակ ասաց: Բայց այսօր, երբ արդեն կարդացել էր записка–ս ուրիշ կերպ էր խոսում: Լենինին ես բացատրեցի, և նա, իհարկե, շատ լավ հասկացավ բանն ինչումն է: Տեսնենք ինչ է լինելու...»: Եվ այլն: Այսպես Ջուղաշվիլին նենգորեն կազմակերպում էր ռուսական զորքերը Կովկասյան ճակատից հետ քաշելու հրեշավոր դավադրությունը՝ արևմտահայ գաղթականությանը մատնելով «Ազգային նրազի» ահասարսուռ արհավիրքին և 1918–1920 թթ. իրավիճակով մեծամեծ վտանգների առջև կանգնեցնելով արևելահայությանը:

Միաժամանակ առաջին նամակում Տերյանը գրում էր. «... Շատ հետաքրքիր բաներ կան պատմելու, բայց հնար չկա գրելու այդ ամենը: Չկարծես, թե ես էլ դաշնակցականների նման ավանտյուրաների հետևից եմ ընկել: Երկար պատմություն է սա: Ես քեզ միայն էությունն ասի»[29]:

Երբևէ կմտածե՞ր Տերյանը, որ իր իմացած «երկար պատմությունը» ընդամենը սկիզբն է և դեռ որքան պիտի երկարի...

Այդուհանդերձ, այնքան դաժանորեն էին խորանում իրադարձությունները Հարազատ ժողովրդի բախտի շուրջը, որ պարզապես անհնար էր չզգալ ամբողջ մերկությամբ: Ճիշտ այդպես էլ զգացել–վերապրել, ողբերգորեն տառապել են և՛ Տերյանը, և՛ Մակինցյանը, որը Ազգությունների կոմիսարիատում փոխարինել էր Տերյանին, և կարճ ժամանակից դուրս մղվել: Արևմտյան ռազմաճակատից Մոսկվա վերադառնալուց հետո նաև Մյասնիկյանը, որ Տերյանից ու Մակինցյանից համգամանորեն տեղեկացել էր երկար ու չղթայականորեն երկարող պատմությանը. Հարազատ ժողովրդի դեմ նյութվող, եթե ոչ Լենինի, ապա ստալինյան դավերին: Իմացել են Կարեն Միքայելյանը[30], իրենց շրջանի մոսկվաբնակ և մյուս մտավորները. մշտական հսկողության տակ, ամենուրեք՝ թե՛ Մոսկվայում ու Անդրկովկասում, թե՛ Հայաստանում ու Թուրքիայում, առհասարակ արտասահմանում: Նույն նպատակով արդեն մշակված չարագործ ծրագրով 1922–ից Մյասնիկյանը փոխադրվել էր Թիֆլիս Անդրերկկոմի քարտուղարի բարձր պաշտոնով. բարձր պաշտոնի, առավել ևս «օղանավային վթարի» համար՝ ըստ ամենայնի հարմար վայր...

---

[29] Վ. Տերյան, ԵԺ, հ. 4, էջ 324, 325:

[30] 1938–ին Ալ. Ֆադեևի միջամտությամբ կենտրոնից **Կ. Միքայելյանի գործը՝ վերանայելու** *և բանտից ազատելու առումով,— ուղարկվել է Հայաստանի Ներքգործժողկոմատ: Գործի վրա ժամանակի կոմիսարի* **տեղակալ Սուրեն Թովմասյանի** *(հետագայում Հայաստանի կոմկուսի քարտուղար) մակագրությունն է՝ «Մերժել»: (Գործը իմ աչքով տեսել–կարդացել եմ 50–ական թթ. Մ. Սարյանի տանը):*

Ի դեպ ազուլեցի Կ. Միքայելյանը Քրիստափոր Միքայելյանի տոհմից էր:

1923-ի Ղարաբաղը Ադրբեջանին միացնելու իրողությունից հետո, բնականաբար, ամենօրյա սադրանքները բազմապատկվում էին, և ճակատելը օր առ օր դառնում էր անխուսափելի:

Եվ ահա՛, Մակինցյանը, ինչ խոսք, Մյասնիկյանի գիտությամբ և միատեղ վճիռով, Տերյանի նամակներից հրապարակում է հիշյալ հատվածները...

Գաղափարական մարտահրավերին կարճ ժամանակից հաջորդում է տեռոր-պատասխանը. 1925-ի մարտի 22-ին Ալեքսանդր Մյասնիկյանը զոհվում է «ավիովթարից»: ժամանակի ըմբռնումով ու հոգեբանությամբ դա նշանակում էր գլխատել հայ ժողովրդին:

Բայց հետաքրքիր է հանելուկային այս զուգադիպությունը. ընդամենը երկօրյա տարբերությամբ մարտի 19-ին Մոսկվայի հիվանդանոցներից մեկում մահկանացուն էր կնքել Նարիման Նարիմանովը և թաղվել Լենինի դամբարանի մոտ...

Հատկանշալի է, ի հեճուկս Մյասնիկյանի և հայության. Օ՜, որպիսի քստմնելի հավելյալ մանրախնդրություն, այլև պատեհություն, որով Ջուղաշվիլին միանգամից ձերբազատվում է թշնամուց, միաժամանակ՝ սիրաշահում բարեկամներին: Ապա հաջորդում են զանգվածային դնդակահարությունները՝ Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում. այնուհետև հետևում է Ռիկովի «խաղաղարար» այցը Հայաստան ու Նախիջևան... որի հարցը ևս, անշուշտ, Ստալինը համարում էր Ղարաբաղի հետ փակված-ավարտված... Դե, իհարկե... 1903-ի հեղափոխություն-հակահեղափոխության միջոցին կիսով չափ հայաթափված:

«Լենինն ու Ալին»... հակառակ նժարին «Ծովաինն», «Դեպի Ստամբոլ» և «Ստամբոլ»...

Ահեղ փորձությունների բովով անցած հայ ժողովրդի իմաստնացած մտավորական զավակների, առաջիններից մեկի՝ Չարենցի համար միանգամայն պարզ էր Քեմալի հետ դաշնակցության չարաղետ իրողությունը: Այնպես որ՝

> Դեռ կգա Իլյիչը,
> Որ մտնի համաշխարհային Սովնարկոմ (3, 151),—

— հեռատրիկ հրովարտակին դառնալիս պիտի է տրամաբանական շրջահայացություն. ճիշտ և ճիշտ այնպիսին, որպիսին ուսուցանում էր Մ. Նալբանդյանը: Տվյալ դեպքում **«Մխիթար և Մխիթարյանք»** *աշխատասիրությամբ. մեկնաբանելով-իմաստավորելով Մխիթար Սեբաստացու անգնահատելի ծառայությունը, գրում էր. «... Մենք հավատացած ենք, որ Մխիթարի սիրտը մաքուր է եղած, որ նա՝ ընկնելով պապականության հողի վերա, հարկադրվել է սկզբումը պապական ձևանալ. նորա մեղքը չէ, որ նորա միաբանությունը նորանից հետո նախապատիվ համարելով այս ձևավորությունը, քան թե յուրյանց հիմնադրի բուն խոր-*

հուրդը, դարձել են պապականության մշակներ կամ լավ է ևս ասել՝ արծաթագին ստրուկներ, յուրյանց ազգի մատնիչը և պարսավիչը...»:

Եվ այնուհետև. «... այս բոլոր զոհաբերությունքը հանձն է առել նա հայկական դպրության համար... թող նորա բամբասողքը առավել լավ գործ կատարեն ...»[31]:

Տրամաբանական բոլոր դարձդարձումներով ու շերտերով առավել պարտադիր դաս կամ պատգամ Չարենցի դեպքում, որքանով իր հարկադիր «ձևավորությունը» տառացիորեն վերաբերում էր հարազատ Հայրենիքի գոյությանը: Նույնը և (ավելորդ է ասել) այն դեպքում՝ երբ խոսքը վերաբերում է Չարենցի ժամանակի և հետագա «արծաթագին ստրուկներին» կամ ինչպես բանաստեղծն է որակում՝ «ճորտի սիրով» ապրողներին, առ այսօր...

Մանավանդ եթե գիտենք, կամ պարտավոր ենք գիտենալ, որ այդ հրովարտակից ընդամենը մի քանի ամիս անց հաջորդել են ուղևորության շեմին հյուսված ոչ միայն «Լենինն ու Ալին», այլև դրանից տառացիորեն մի քանի օր առաջ հյուսված «Ծովափին» ու «Դեպի Ստամբուլ», և ապա «Ստամբուլ» քերթվածը, այն էլ բանաստեղծական որպիսի պայծիկ նախշերով ու թափով: Բայց, դե՛, «սոցիալիստական ռեալիզմ» կոչվածի տաղտկալի մեթոդաբանությամբ ու ոճաբանությամբ հազիվ թե հնարավոր լիներ մատուցել երկայրի, բազմածալք նման բովանդակություն: Եվ հենց «Ծովափին» ու «Դեպի Ստամբուլ» բանաստեղծություններում ընտրում է ֆուտուրիստական արտահայտչականությունը՝ դարձդարձիկ ու հատու ոճա—տաղաչափական զինանոցով: Բանաստեղծական հրապարակային մի արվեստ, որ առավել ուժայնությամբ գործում է արդեն Պոլսում հյուսված «Ստամբուլ» պոեմում:

Պոեմի յուրատեսակ նախերգանքում պատմվում է թուրքական սուլթան Մեհմեդ երկրորդի մասին հյուսված լեգենդը, ըստ որի Սուլթանը (15–րդ դար) վաստակել էր Ֆաթիհ՝ նվաճող, անունը ի նշանավորումն Կոստանդնուպոլիսը նվաճել—հպատակեցնելու: Հիշենք լեգենդի կարևոր հանգույցները, որոնց հիմնաթելերով էլ հյուսված է պոեմը. քշել է Սուլթան Ֆաթին ձին՝

...Մտել է Այա-Սոֆիա՛,
Ինչպես մահը՝ դաժան ու ահեղ,
Ինչպես մահը՝ միակ...

Զարկել է սուրը մարմարին—
Ծնկել է սյունը...
Կռացել է Սուլթան Ֆաթին,
Թաթախել է ձեռքը արյան մեջ—
Ու խփե՛լ է մարմարե պատին՝
Տե՛ս:—

---

31 Միքայել Նալբանդյան, ԵԼԺ, Հ.2, 1980, էջ 237–238, 238:

Ահա և Ֆաթիհի ժամանակներից թուրքական ներկա ձգվող կամուրջը.

...Դու մեռել ես, սուլթան Ֆաթի՛հ:
Բայց դարե՛ր շարունակ,
Մինչև օրըս
Կենդանի՛ է, սերած քո կաթից–
Քո դաժան,
Ժանտ թոռանթոռը:

Նստել է այսօր էլ նա այստեղ,
Այս սունկի պես ուռած Ստամբուլում,
Ու չի ընդունում նա քեզ թե–
Բայց ոչինչ–
Ժառանգդ է հլու..., (2, 215–216):

Ավելորդ է ասել, որ ինչպես էլ որոնելու լինենք, հազիվ թե «Ստամբուլում» կարողանանք գտնել ներողամտության հյուլե՝ քեմալական «Ռեսպուբլիկ Թյուրքի» հասցեին, որի ֆաթիհական դիմանկարին այնուհետև պոեմում դաջվում է «միջազգային պոռնիկ» խարանը, մարմին առնում փաշա–էֆենդիների և այս «կլիների» գիրկընդխառն պարով՝ հեշտավետ ջազբանդի թմրտոցի տակ.

...Ու կլինե՛րը,
Կլինե՛րը...
Ռի՛ժ կլիները...
Ռուս կլիները՝ բոլո՛րը պրինցուհի:
Թեկուզ թանկ են... գները,
Բայց արյունը – կապույտ է ու հին... (2, 221),

Եվ սա է հայոց ու հունաց արյան վրա կնքված Թուրքիո և Ռուսիո դաշնակցության Չարենցի գնահատականը... Ինչպես ասում են՝ շատը թողնենք, ասենք քիչը: Շատը ասել է Չարենցը: Իսկ ասելիք ընդհատակյա քիչը՝ ամենակարևորն ու ամենացավածինն է: «Ընկեր Մուստաֆա Սուբխու և ընկերների հիշատակին» ցուցանակով հյուսված «Ստամբուլը»՝ Ֆաթիհից... մինչև նույն «կաթից սերած» «Դաժան, Ժանտ թոռանթոռ» երիտթուրքեր ու քեմալականներ՝ թուրքական արյունոտ բռնատիրության մերկացում է: Պոեմում առիթից–առիթ հանդիպող Սուբխի, «կարմիր բոլշևիկ» հիշատակումները, ինչպես այս մեկը՝

— Որպեսզի
Բարեկիրթ այդ տները – (էլիտայի հասարակաց՝ Ալ. Զ.)
Զմռնեն պռունիկ ու ...կոմունիստ... (2, 221),—[32]

պարզապես ծխածածկույթ են, իրականում առաջին տողից վերջինը թալ-տում–գալարվում է բանաստեղծի շղթայված վրեժխնդրությունը՝ պայմանավոր-ված–բորբոքված 1924–ի վերջերի խոսուն ու իմաստալի հանգամանքներում:

* * *

Բայց և այնպես... Որքան էլ զգուշավոր, չկարողանալով զսպել հետաքրքրու-թյունը Մեծարենցի անձով, Չարենցը (թերևս նաև Թոթովենցի հանձնարարակա-նով) այնուամենայնիվ մեկ անգամ տեսակցել է Թորոս Ազատյանի հետ: Հավանա-կան է, և Մեծարենցի նրախտավոր կենսագրից մանրամասնորեն տեղեկացել է նրա կյանքի ճակատագրական իրողությանը: Թուրքի ձեռքով ավերված Մեծա-րենցի բախտը, ցավն ու կորուստը, բնականաբար, վերապրել է անասելի կսկի-ծով, որից և ծնվել է «Ստամբոլը»՝ չառաչուն ապտակ Թուրքաց չարագործ պատ-մությանն ու գոյությանը:

Կողք–կողքի բերենք և համադրենք խոսուն ամսաթվերը. «Ստամբոլը» թվագրված է «1924, դեկտեմբերի 19–22»: Մեծարենցի գերեզմանն այցելելու նպատակով Չարենցը սխալմամբ Շիշլի է այցելել դեկտեմբերի 15–16–ին, ան-շուշտ, Թորոս Ազատյանին հանդիպելուց հետո: Ուրեմն և «Ստամբոլի» հիշա-տակված–չհիշատակված լեզվական նշանների, պոեմի մտածումների ու աՀռելի թափի ենթաբնագրային խորքում թաքնված է լայնածավալ բովանդակություն:

---

[32] «Ստամբոլից» քաղված ու նույնպիսի՝

> ...Ու պարում են սեր ու մուսյո,
> էֆենդի, հեռու ու փաշա:
> Հարբե՛լ են հարբեցնող մռով.
> Միսը չա՛տ:
> Ու հոսում են շոգ շշուկներ:
> Խոսում են:
> Առնում են ու ծախում:
> Հալվել են իրարու ու չեկնել են
> Լսո՞ւմ ես.
> — Ո՛ղջը ծախու... (4221–222,—

Այլև. «Հրճվել է Թագսիմի սինեման, Թոքատլյանը, Սպլենդիդը եռուն...»2, 224) տողերին համահունչ տողեր ենք գտնում նաև 1922–ի հուլիսից–դեկտեմբեր Ստամբուլում եղած վրաց գրող Նիկոլո Միծիշվիլու «Пережитое» («Վերապրածը») գրքում (1963, Թիֆլիս). ինչպես. «... Հապա «Թագսիմ» կաֆեն, որտեղ օր ու գիշեր այցելուները կլանում են թունդ գարեջրի սվ-կիանոսներ... այստեղ համեստ վարժեռում խեղկատակություն են անում, պարում են ու եր-գում ռուս կոմսերն ու իշխանները և նրանց կանայք ու աղջիկները: Ես երջանիկ եմ, որ այդպի-սի գործ են գտել Ստամբուլում...» (էջ 125–126):

Ասել է ընդհատակյա բոլոր լիցքերով, բաբախումներով ու պոռթկումներով պոեմը հիշատակի տուրք է **մեր հեք Մեծարենցին և հարազատ ժողովրդի բյուրանուն տարաբախտ–անմեղ զավակներին:**

Եվ քանի որ «Միսաք Մեծարենց (Իր կյանքը)» խորագրով Ազատյանի աշխատասիրությունը լույս է տեսել 1922–ին (Կ. Պոլիս), պարտավոր ենք դառնալ և կարելույն չափ վերակենդանացնել Չարենցի արձագանքներն ու վերապրածը նրա պատմած Մեծարենցի կենսագրական հանգամանքներին, վարք ու նկարագրին, նախասիրություններին, ստեղծագործությանը...[33]

Որպեսզի մնայուն անշեջ նստվածքներով բյուրեղանալով վերաիմաստավորվել են հարատևելով–հարատևել մինչև «1929. 10. Լենինգրադ» տարեթիվը կրող **«Մ. Մ.»** *վերնագրով հայտնի քրեստոմատիկ* **«Դափնեպսակը»**... *և հետո՜ ու հետո՜.*

Արյուն է եղել աշխարհում:— Եղել է եղեռն ու կռիվ:
Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամեհի ելած իրար դեմ:
Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ
կտրած,
Արև՜ է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ
պատանին (4, 439):

Դժվար է, իրոք, ներկայացնել քառատողի դեղարվեստական սլացիկ կատարելության և հուզա–խոհական խտացումների տարողունակ չափերը: **Նախ պատումային ռիթմը՝** *ողբերգականի և օրհներգականի դրամատիկ խաչավորումով ու խառնածին մի միասնությամբ, որով ողբերգականի վերհը օրհներգական է, հանճարեղության վեհությունը նույնի տարատեսակ: Տառացիորեն բեռնավորված թե՛ աշխարհի ու մի ամբողջ ժողովրդի, թե՛ նրա վաղամեռիկ զավակի կյանքի ու ճակատագրի խորհուրդներով: Բայց այս դեպքում խոսքը վերաբերում է մարդկային–բանաստեղծական խառնվածքի, նախասիրությունների համընկնումներին. և ոչ միայն Մեծարենցի ու ... Չարենցի:*

Ըստ այդմ չխախտենք կենսագրի սահմանած հաջորդականությունը. Մեծարենցի «Նախահայր Ծատուր (Մեծատուր) Ղարաբաղի մելիքներից» «կկարծվի». այնտեղից վերահաստատված նախ Բինկյանում (Սեբաստիայի նահանգ), և սա 1896–ի կոտորածին՝ Սեբաստիայում: Ուրեմն և անակնկալ չնկատվի. որքանով

---

[33] Ավելին. բացառված չէ, որ Ազատյանը, ընդառաջելով Չարենցի համառ խնդրանքներին, նվիրել է գիրքը: Գուցե թե հասցրել է Աթենք կամ Վենետիկ՝ փոխանցելով Վահան Յարճանյանին, հետո Իսահակյանին ու Հայր Ղազիկյանին, ապա Փարիզում՝ Համլիկ Թումանյանին, Բեռլինում էլ՝ Պատմագրյանին... կամ Նժդեհին: Գուցե թե նրանցից մեկն ու մեկի մոտ էլ թողել է գիրքը, որքանով արտոնված չի եղել մուտքը ԽՍՀՄ՝... Բայց, գուցե, յուրացրել են հաջորդ յուրացնողները:

Ամեն դեպքում, պարզ է. Մեծարենցի կյանքի պատմությունը հերթականորեն կրկնվել է ամեն մեկի հետ... Բայց, դե՛, առավել խոսունը Չարենցի թվերի լեզուն է... և այդ մասին իր հերթին:

ինչքան էլ անուններով տարբեր՝ Մեծատուրյանների ու Սողոմոնյանների տոհմածառի պատմական–կենսագրական հանգամանքները նույնն են: Ասել է՝ հազիվ թե կարողանար առանց զուգահեռի ու հանգստությամբ վերաբերվել իրողությանը Մեծարենցի պես «դյուրազգաց, դյուրահաճ» Զարենցը: Նույնը վերաբերում է երկուսի էլ մայրական սիրուն, և, կարելի է կարծել, ամբողջ կյանքում մոռացության չի մատնել, որ Մեծարենցի մայրը՝ «իմացական կարողությամբ կը գերազանցեր իր ամուսինը»[34]: Իսկ իր «անուշ ու անգին» մա՞յրը…

Հետևում են հապա նախասիրություննե՞րը. ի սկզբանե և մինչև վերջ անբաժան Բինկյանից. «եղեգնյա մի սրինգ»՝ հովվական, որով հոտը իջեցվում էր գետ. «Գե՛տը, իմ սիրելիս, իմ տարփուհիս՝ որ լուսինն արծաթ թառաններ կը քաշե իր ծփանաց քղանցքին համար…»: Եվ ընդհանրությունները այնքան են ակնհայտ ու որոշակի, որ պարտավորեցնում են սկսել տարբերություններից: Ընդհանրության ներսում, անշուշտ, որքանով **սրինգը հայոց արևագալի նվագարանն է**, արևերգությունը գիշերերգում անգամ **«դյութական»**, ցոլքերով՝ «գունագեղ ու փողփողուն»՝ Մեծարենցի գրչով. Զարենցի գրչով «արևի ոսկու» երազ՝ «Գիշերը ամբողջ հիվանդ, խելագար…»: Ինչ վերաբերում է գետ «տարփուհուն», ապա **«Ջուր լսելու»** լողական զգածականության կողքին Զարենցի գունայինը մեծապես տեսլային է: Մինչդեռ Մեծարենցի պարագայում գերադրականը գունայինն է ամենուրեք՝ խառնածին խաղերով, փողփողումներով ու փայլատակումներով, միախառնված լույսին ու բուրմունքին, և հատկապես **«Ծիածանի»** անզուգական գիշերերգերում[35]:

Այդու տեղին է մտաբերել, որ ոչ այլ ոք, քան ինքը Վան Գոգը գրում է թե ինքը՝ «հաճախ մտածում է, որ գիշերը ավելի կենդանություն ունի և որ ավելի է հարուստ, քան ցերեկը»[36]: Եվ դա նշանակում է, թե այդ դեպքում պահանջվում է գեղանկարչական առավել զորեղ երևակայություն ու արվեստ, որով այդպես լիաբուռն օժտված էր մեծարենցյան տեսողական հանճարեղ «գրիչ ներկապնակը»: Բնականաբար, 1902–ի Պոլիս փոխադրվելուց հետո կարելույն չափ հարստացած Միջերկրականի գունային հրաշքներով. վերադիտված–վերավայելած–վերաըմբոշխնված Ղալաթիայից, Սկյութարից, Ենի–Գաբուի «Ծովահայաց տնից», Թոփ–Գաբուի կողմերից… Ցավոք այս առումով երախտաշատ կենսագրի մտաբերումները սակավ են, «տեսակ մը» կցկտուր: Այլապես Սկյութարին դառնալիս պետք է որ դադար լիներ Զամլըջայում. մանավանդ եթե՝ «… իսկ ծաղիկներու հանդեպ իր (Մեծարենցի՝ Ալ. Զ.) ունեցած սերը՝ անբաղդատելիորեն ավելի» էր (էջ 34):

Զգայությունների նույն նրբագույն համալիրով աներկբայորեն «անբաղդա-

---

[34] Թորոս Ազատյան, Միսաք Մեծարենց (Իր կյանքը), Կ. Պոլիս, 1922, էջ 6. այսուհետ էջերը նշված են բնագրում:

[35] Մեծարենցի ստեղծագործությանը նվիրված հետազոտությունը՝ «Մարդերգության խորացող միտումներով» վերնագրով տես Ալմաստ Զաքարյան «20–րդ դարի սկզբի հայոց բանաստեղծությունը» գ. 2, 1977, էջ 178–301:

[36] Винсент Ван Гог, Письма, 1966, Л—М., с. 391.

տկլորեն ավելի» էին և Միջերկրականի յուր իմպրեսիոնիստական տեսողությունն ու ճաշակը, կրկին տառացիորեն հարազատ Վան Գոգի տեսողությանը՝ ըստ սույն խոստովանության. «Միջերկրական ծովը թյունիկի գույնի է, ասել է՝ փոփոխվում է անընդհատ: Այն մեկ կանաչ է, մեկ՝ բաց մանուշակագույն. այս պահին թվում է կապույտ, մի ակնթարթից ստանում է մոխրագույնի կամ վարդագույնի երանգ:

Երեկոյան զբոսնում էի ծովի անմարդ ափին: Այդ ո՛չ ուրախալի էր, ո՛չ տխուր. գեղեցիկ էր»[37]:

Ասել կուզի նույնն է թե՝ մեծարենցյան «Ծիածանի» գիշերերգերի հանգով «Դյութական»...

Այնպես որ այնքան էլ հիմք չունենք բացարձակ ճշմարտություն համարելու **թե՛ Վան Գոգի և թե՛ Մեծարենցի հայտերը, թե իրենք «գյուղացիական» են. մեկը՝ գեղանկարիչ, մյուսը՝ բանաստեղծ:** *Այդպիսիք հայցեագրված են բանաստեղծին «Գավառական քերթող մը» հորջորջվող հոգևոր չքավորությամբ ու չկամությամբ տառապող անոքներին: Դե՛, բնությունն էլ, իհարկե, հավիտենական է և միաժամանակ* **գյուղացիական**...

Բայց լինե՛ր, այնպե՛ս լիներ (Հր. Մաթևոսյան), որ լինեին մեծարենցանման զգածական համակիրով օժտված շատերը, որոնք ի վերջո ներկայացնեին աշխարհին հայոց բանաստեղծության, գրականության ու արվեստների **հանճարեղությունը**... *համապատասխան չափումներով. ո՛չ ավել, ո՛չ պակաս:*

* * *

Եվ սակայն, բնականաբար, ընդհատվեց, և հարկ է վերադառնալ «Ստամբուլին»՝ Ազատյանի աշխատասիրությունից քաղելով հենց այն հատվածը, որ առանցքային-ինքնակենսագրային երես-աստառն է ողջ պոեմի: Այն է. «Իր (ասել է՝ Մեծարենցի – Ալ. Զ.) ազգականներեն Վահան Մեծատուրյան՝ կռիվ մը կունենա թուրք մսագործներու տղոց հետ. առոնք ոխ կը պահին ու նմանությամբ կը հարձակվին Միսաքի վրա. զայն սաստիկ կը ծեծեն ու կը վիրավորեն թևը զմելիով» (էջ 13):

Ապա, դարձյալ բնականաբար, հետևենք և փորձենք պատկերացնել՝ անպատկերացնելին. ղարաբաղյան փորձություններ ճաշակած Զարենցի՝ ոչ միայն սեփական, այլև ավելին. միաժամանակ նույնպես «անբաղդատելիորեն ավելի» ծաղիկների սիրահար (այդ թվում նույն Զամլըչայի) Մարտիրոս և Լուսիկ Սարյանների վիճակված **առավել դաժանագույն վրիժառությամբ** *պատճառված դավ ու ցավից տևական վերապրածը: Արդեն իսկ մշտաբորբոք նման սպառնալիքների սպասումով... որը և եղև՛ ... ի մասնավորի և առհասարակ:*

Ուրեմն և նորից նոր մշտաբորբոք հարանույն կսկիծով էլ թղթին է հանձնել պոեմը, այլև՝ մի կողմ դրած ամեն զգուշավորություն, հենց Պոլսում էլ տպագրել

---

[37] Նույնը, էջ 360:

է առանձին գրքույկով, այլև առաքել է օրինակներ ոչ միայն Մյասնիկյանին... ո-րի պատասխան սադրանքներն ու հետապնդումներն սպասվում էին Հռոմում, Վենետիկում, Փարիզում, անշուշտ, նաև մեծապես հայ գործակալների միջոցով ու օգնությամբ:

Դե՛, իսկ այժմ արդեն, անշուշտ, ժամանակավորապես, կարելի է կարծել, որ «Լենինն ու Ալին» հանրությանը (հարկադիր տուրքերի այլևայլ դրսևորումներով հանդերձ) պետք է որ ներկայացվի «Ստամբուլի» նյութով ու մթնոլորտով. տուրքեր, որոնց խորխորատների միջով բանաստեղծը մշտապես մնաց հայրենիքի ցավերով բյուրապատիկ ողջակիզվող ինքը: Ինչը և արտասահմանյան ուղևորության վենետիկյան հանդրվանի անմիջական տպավորություններով արձանագրել է Հայր Արսեն Ղազիկյանը՝ **«Շիրին տղա է: Պոլշևիկ է, բայց մերն է»:**

Որը և շուտով պետք է հաստատելով—հաստատեր ինքը՝ քրեական հանցագործության գտնված լքով իրեն դնելով «պոլշևիկների» շարքերից անդին:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱԹԵՆՔՈՒՄ

Նախապես ասենք, որ Պոլսից «1925, 8 հունվարի» տարեթվով Ալեքսանդր Մյասնիկյանին հասցեագրած նամակի տարեթիվը ճիշտ չէ.[1] նշված է կոնսուլիրատիվ նկատառումով, որքանով հայտնապես 8–ից առաջ արդեն եղել է Աթենքում: Ըստ այդմ ասենք նաև, որ կոնսուլիրատիվ նկատառումը Աթենքում շարունակվել է մինչև վերջ, մինչև Հռոմ հասնելը, որը և տվյալ դեպքում պատճառել է կառուցվածքային, ինչպես և ապացուցման ու շարադրանքի որոշակի դժվարություններ: Մինչդեռ ինքը ինչպես նամակում. «... Այստեղից վաղը ես մեկնում եմ Աթենք» (6, 412) տողից սկսած՝ բազմիցս Պոլսից հետո հիշատակել, թվարկել է Աթենք:

Բայց ամեն դեպքում, կարծես թե պետք է սկսել Պոլսից Աթենք ուղևորությունից. ուրեմն և՝ ինչպե՞ս... Բոլոր նշաններով դարձյալ ծովով, այս անգամ Միջերկրականով, թերևս Միծիշվիլու առիթով հիշատակված «Ալեքսանդրիա» նավով: Եթե լավ եղանակի, ապա կրկին պետք է որ վերաքաղենք Մ. Սարյանի տպավորությունը. եթե ոչ՝ դարձյալ. քանի որ... դե՛, մի անգամ գոնե, եթե ոչ Պոլսից Աթենք, կամ Աթենքից Հռոմ ու Հռոմից Վենետիկ՝ հետ... չէ որ անկարելի է թե եղած չլինի ճամփորդությունը ծովով. այնպիսին, ինչպիսին խոսքով վրձնել է Սարյանը. «Եղանակը բարենպաստ էր, ծովը խաղաղ: Ցրիվ գալով ծովի մակերևույթին, արևի ճառագայթները խաղում էին նուրբ ոսկե–կապույտ փիրուզյա ջրերում: Շոգենավին ուղեկցում էին դելֆինների խմբեր, իսկ օդում ճախրում էին ճայերը:

Հանդարտ եղանակին ծովագնացության հետ ոչինչ չի կարող համեմատվել: Ես սիրում էի կանգնել նավի ցռուկի մոտ ու դիտել, թե ինչպես կտրելով թանձր կապտա–կանաչ հեղուկը, նավը առաջ էր ընթանում, իր հետևից փրփրացող ջրի երկար հետք թողնելով: Ձախից տեսարան էր բացվում դեպի ծովի անափ հարթությունը՝ նրա մեջ արտացոլված երկնակամարով: Այնպիսի տպավորություն էր ստացվում, թե մեր շոգենավը, կտրվելով ծովից, թռչում էր օդում: Աջից ամբողջ ժամանակ երևում էին Փոքր Ասիայի անտառապատ ափերը...»[2]:

Տեսողական ընտիր զգացողությամբ ու ճաշակով յուր «ծովագնացությունը» այդպես է վայելել և Չարենցը. անշրջանցելի այնպիսի ապացույցով, որպիսին «Ջղրված պոեմի» այս «Լիրիքական շեղումն» է.

---

[1] Փաստարկման վկայությունները տե՛ս հաջորդ էջերում:

[2] Մ. Սարյան, Գրառումներ..., էջ 92–93:

...Հիշում եմ՝ օրը լուսավոր էր,
Երկինքը ջինջ ու անհատակ,
Ծովի պչրանքը ու օրորը,
Գարնան թովչանքը խորը, խորը,
Ինչպես երկինքը կապուտակ...
Ծովում ճախրում էր մի ջինջ ապրիլ,
Թնդացող գարնան անհուն հավատ՝
Եվ, նստած մի պարզ, փոքրիկ նավակ՝
Մենք գնում էինք դեպի Կապրի՛... (4, 65)[3]:

Անխառն զմայլանք, որ Աթենք հասնելուն պես չարունակվում է ի տես հույն ժողովրդի անտիկ հնությունների ու բնաշխարհի: Բարձունքի վրա Ակրոպոլիս՝ խոնարհ փողփողացող ազգային դրոշով,Աթենքի փողոցներ՝ ինչպես Համալսարանի փողոցը՝ մեկը մեկից «Արևի պողոտա», Ստադիկայի Հերոդեսի փողոց, Սինա, Ակադեմիայի պողոտա, Զինոդիոսի փողոց... Բայց ամենից հաճախ, ամեն օր Գոքինիա, Կիլիկյան ընթերցատուն... ամենուրեք մարմարով կանաչապատ–կանաչազարդված փողոցներ և հնօրյա արձաններ. Պարթենոն՝ հեռվում գծագրվող ծովային պանարամայով... իսկ օդում ամենուրեք ազգային հիմնը. «Ողջույն, օ՛, ողջո՛ւյն, ազատություն», *«Հողի երգ», և հոլովվող* «Հելլադա՛, Հելլադա՛», *ապա հնօրյա անուններ, Պերիկլես, Սապֆո, Դիոգենես և նրանց բերանում՝* «Բայց ամեն ինչից ավելի ժողովրդին եմ սիրում ու նրա դատը»... *մտաբերումներ՝ «Մի ցեղ մեկ ուրիշի սարուկը, մի ժողովուրդ մի ուրիշ ժողովրդի բանակալ: Ուժատնիկի մահացու փաթաթման է նման»... տասուլթներ Հյուգոյի գրքից.* «Ամեն տեղ բաց երակներ և ուրվականներ՝ դիակների վրա: Դիակնե՞ր: Ո՛չ, ջնջում եմ այս բառը: Որովհետև ժողովուրդները թափում են իրենց արյունը, բայց չեն մեռնում...»[4]:

Ուրեմն և պատկերացնենք, թե սիրո ու հարազատության, զմայլանքի–խանդաղատանքի որպիսի հարափոփոխ–միախառնված զգացմունքներով ու խոնարհ երկրպագությամբ է շրջել Աթենքի փողոցներում: Հանրային այգում և այլուր...

Այսքանը նվաստիս ծաղկաքաղով ու երևակայությամբ: Բայց դառնանք բանաստեղծի բուն գործունեությանը. անշուշտ, փաստական–ապացուցման մեթոդի թելադրանքով՝ սկսելով փոքր–ինչ հեռվից:

[3] *Վերծանել պատառոտված ծածկագիր «չեղում»՝ Լենինն ու Ալին հիշատակությամբ...*

[4] Էֆի Պանսալինու, *Աթենքի փողոցները. 1968, էջ 71, 12 և այլն. Թարգմ. Ս. Կրկյաշարյանի, որը այս թարգմանությամբ ևս իր ու հայ ժողովրդի տուրքն է մատուցել եղբայրական Հելլադային...*

Բանն այն է, որ Չարենցը հիմնավոր պատճառներ ու նախադրյալներ ուներ ինչպես ռամկավարների հետ համագործակցելու, այնպես էլ լուրջ հիմքեր այն թաքցնելու: Երկու դեպքում էլ պատճառա–հետևանքային շղթայականությամբ միմյանցից անբաժան՝ սնված Խորհրդային Հայաստանի հանդեպ ռամկավարների հետևողական անկեղծ կողմնորոշման: Թաքցնելու պատճառներից առաջինն այն էր, որ պարզապես վիզա չուներ մուտք գործելու Աթենք ու Հունաստան: Հունաստանի հետ խորհուրդները հյուպատոսական կապեր չունեին: Վիզայով սահմանված էր Թուրքիա–Իտալիա, և անկասկած այցը Աթենք կազմակերպված էր Դ. Շահվերդյանի ջանքերով՝ Պոլսի ու Աթենքի առայժմ անհայտ անձանց միջոցով, ուրեմն և գաղտնի, թերևս, մարդկանց նեղ շրջանի իմացությամբ ու ընդունելությամբ: Որքանով Չարենցը բոլշևիկ էր, և «բոլշևիկյան սարսափը»՝ առավել երկյուղալի հունաց միջավայրում: Նույն առումով անհրաժեշտ էր ու հարդի կուսակցական չեզոքությունը, մանավանդ Դաշնակցության շրջաններում հակամետ կրքեր չբորբոքելու նպատակով, որքանով Չարենցի ուղևորությունը մեր օրերի արտոնյալների «շրջագայություններից» չէր, այլ անձնուրաց ծառայություն՝ հանուն Հայաստանի օգնության ու ներգաղթի՝ Հունաստանում և այլուր:

Այստեղից օրեր անց հիմնադրված **«Արարատի»** չեշտված կուսակցական հանդուրժողականությունը՝ առաջին իսկ համարներից սկսած, ինչպես **«Հավաքական աշխատանքի արժեքը» խմբագրականը**՝ կուսակցականության հարցի շուրջը նման դատողություններով. «Եվրոպական կամ այլ քաղաքակիրթ ազգերու մեջ երբեք չեք լսեր ընդհանուր դատողություն մը կուսակցությանց դեմ, մինչդեռ մեր մեջ **ոմանք կսոսկան անոնցմե և առնվազն կպահանջեն անոնց անհետացումը** (ընդգծ՝ Ալ. Ձ.): Մինչդեռ անոնք կկազմեն իրապես համախումբ գործակցության համար դպրոց մը, մարզարան մը և՝ պահելով յուրաքանչյուրի անձի անհատականությունը, երկրին մեջ կստեղծեն ուժ»[5]:

Հետևելով շարադրանքին, թեկուզև քաղվածով, դժվար չի լինի դատել լեզվա–ոճական խառնուրդ. առանձնացնել յուրատեսակ, ասես, Չարենցի անձին առնչվող իմաստային խոսուն բառեր ու բառակապակցություններ. «կուսական», «անոնց անհետացումը», «անձի անհատականությունը» և այլն: Նեղ իմաստով բանաստեղծին՝ լայն առումով ու իմաստով ի մասնավորի Դաշնակցություն և բոլշևիկներ շոշափող խմբագրական՝ **կոչված զգաստացնելու–միավորելու կուսակցություններ, առավել ևս համայն հայություն:**

Իսկ փաստայի որոշակի անմիջական արձագանք էր մեծապես Դաշնակցությանն ուղղած Արշակ Չոպանյանի այն կոչի, որով առաջարկում էր միավորվել և համատեղ

[5] **Արարատ**, 1925, 24 հունվարի: Ստորագրված է Հ. Պողոսյան: Ամեն դեպքում համոզված եմ, որ Չարենցը եղել է՝ քիչ է ասել անմիջական մասնակիցը թե՛ հղացմանը, թե՛ շարադրանքին. ասել է թե՝ մտածել–դատել է ճիշտ այնպես, ինչպես մեջբերված–չբերված տողերում:

ջանքերով զորավիգ լինել ինչպես Հայրենիքին, այնպես էլ աշխարհասփյուռ հայության: Հրապարակման օրից կուսակցական պայքարի անարդար—անխնա թիրախ դարձած վավերաթուղթ, որը պարտադրում է հետադարձ հայացքով դառնալ Լոզանին հաջորդած հայության հուզող որոշ իրողությունների ու մտահոգությունների:

Եվ այսպես «**Քրոնիկ**» ընդհանուր խորագրով Բոստոնում հրապարակվող Ռամկավարների «Պայքար» օրաթերթում 1924–ի օգոստոսին տպագրվում է նախ Զոպանյանի «**Պատմաբան Լեօին նամակ մը**» հոդվածը, որի հարուցած աղմուկին ի պատասխան հետևում է «**Հայաստանի անկախութիւնը**» վերնագրով առավել ծավալունը՝ նման հարցադրումներով ու պատասխաններով. «... Դաշնակցականները կհայտարարեն, թե իրենց օրով Հայաստանը լիովին անկախ էր, ու կհայտարարեն նաև, թե ան բարդավաճ էր ու երջանիկ՝ ըստ իրենց սովետական Հայերը այդ անկախությունը ջնջեցին, Ռուսաց գերի ըրին Հայաստանը, և հոն, ուր ազատությունը ու բարօրությունը կծաղկեին, բռնակալ լուծը, թշվառությունն ու ավերը տիրական դարձուցին, ու դաշնակները կմեղադրեն Ռամկավար—ազատականներուն, որ աչք գոցելով կմեղսակցին այդ հակազգային ոճիրին և կործանիչ սովետականության հլու հետևորդները, կրավորական փաստաբաններն ու գործիքները կդառնան արտասահմանի մեջ»:

Եվ ապա. «Հայ, ինչ կուսակցության ալ պատկանի, պետք է տեսնե և մեր ազգային քաղաքակրթության իբր հիմնաքար ընդունի: Ու Ռուսիո հովանավորությունը Հայաստանի վրա տարածվելեն ի վեր հոն ալ ոչ ջարդ տեղի ունեցավ, ոչ պատերազմ, ոչ սով, ինչ որ ինքնին արդեն արտակարգ բարիք մըն է, որուն հետ բաղդատություն չեն կրնար մտնել Սևրի մեջ թղթի վրա դրված անկախության խոստումները, թղթի մը, զոր հետո պատռեցին զայն խմբագրողներն իսկ»: Իսկ այնուհետև. «Բացարձակորեն անճիշտ են, թե Հայաստանի վարիչները այսօր պարզ «փոխանորդներ» են Մոսկվայի «ռուս կառավարության»...[6]

Ապա հաջորդական վերջին երկու մասից բնորոշ այս հատվածները. «... Մեր կործանված ժողովրդին ամեն կողմ պարզած տեռոր համապատկերին մեջ, միակ լուսավոր կետն է արդի Հայաստանը, որ ինչքան ալ տկար ու խեղճ, մեր բոլոր ապագա հույսերուն կռվանը կկազմե, մեր ժողովուրդն է հոն, որ ավերակներու մը մեջեն ոտքի կանգնելու համար դյուցազնական ճիգեր կընե. օր առաջ հոն կատարված դրական գործը տեսնել ու գնահատել, անոր օգնել մեր բոլոր ուժերով, այս է մեր ստիպողական ու հիմնական պարտքը...»:

Իսկ ամենավերջում. «Ցավալի է, որ Դաշնակցությունը, փոխանակ իր այժմյան դիրքին մեջ համառելով վնասաբեր հանդիսանալու, իր եռանդը օգտակար դարձնե մեր ազգին՝ ընդգրկելով այն ուղղությանը, որուն կհետևե Ռամկավար ազատ կուսակցությունը»[7]:

---

[6] Պայքար, 1924, 22 օգոստ.

Սա այն նամակն է, որից քաղված սրտամաշ հատվածներ կան նախորդ գլխում:

[7] Պայքար, 1924, 6, 7, 9–11 սեպտեմբ.:

Միաժամանակ նույն նկատներով շարադրված Ռամկավար–ազատական կուսակցության հայտարարություն էր՝ և «Պայքարի» 1924–ի մարտի 3–ի թվում տպագրված «Հայ ժողովրդին Ռամկավար ազատական Բ ընդհ. պատգ. ժողովին առթիվ» հրապարակումը, որ ավարտվում էր՝ «Հայ ժողովրդի բնածին առաքինություններուն ու կանոնադրության ապավինելու կոչով ու հավատով»: Էապես ազգանպաստ գաղափարախոսություն ու քաղաքականություն, որոնց ոգով ու նախադրյալներով էլ **պատրաստվել էր Չարենցի ուղևորությունը արտասահման:**

Պարզ է, Ռամկավարները և «Արարատը» նույնպես պաշտպանում էին Զոպանյանի դիրքորոշումը: Առանց վարանելու, կարելի է ասել՝ նույնը և Չարենցը: Մանավանդ, որ բանաստեղծը տեղյակ էր, և, թերևս, տող առ տող անգիր գիտեր իր ստեղծագործության Զոպանյանի հեղինակավոր գնահատություններից հատվածներ: Թերևս այս. «... Չարենցի արտադրած բոլոր բանաստեղծությունները պարունակող երկու ստվար հատորները... իմ մեջ վերջնապես ամրացուց այն համոզումը, թե **Չարենց Հայոց մեծագույն բանաստեղծներեն մին է** (ընդգծ.՝ Ալ. Զ.) ու մին ամենեն ինքնատիպ ու բազմազան բանաստեղծներեն, որ ունէ ազգի մեջ երևան եկած ըլլա»: Եվ ապա. «Բայց եթե Չարենց նույնիսկ գրած ըլլար միայն այն էջերը, որ պրն. Մակինցյանի հատորին մեջ հավաքված են, դարձյալ իրավունք պիտի ունենար Հայոց մեծագույն բանաստեղծներու շարքին մեջ դասվելու: Այդ քերթվածներու խումբին մեջ վերակենդանացած կգտնենք, բոլորովին ուրիշ շեշտով ու տարողությամբ, բայց նույնքան լայն ու հզոր շունչը, որ Նարեկացիին, Աբովյանին և Ալիշանին գործ կ'ուռուցնե, դյուցազներգության թռիչքը Սիամանթոյին, Վարուժանին և Թումանյանին, որոնց վաղաժամ խորտակումը կողբանք, այդ էջերուն մեջ նորափետուր կը թևակոխե ուրիշ խոսքերով, ուրիշ պատկերներով. արտահայտում բոլորովին տարբեր նոր շրջանի մը, բայց որակով ու զորությամբ նույն»[6]:

Այնպես որ կարող ենք ասել. **բանաստեղծը Աթենք էր հասել և ռամկավարների հետ համագործակցել Զոպանյանի լիարժեք երաշխավորությամբ.** փաստացի երկուստեք խորը համակրանքով ու հետաքրքրությամբ, որն իր հերթին արտասահմանյան ուղևորության շեմին Թիֆլիսում բորբոքել էր Պ. Մակինցյանը: Իսկ Աթենքում եղած միջոցին էլ հնարավորություն ուներ նորից նոր ծանոթանալու և՛ Զոպանյանի վաստակին, և՛ գործունեությանը՝ Հովհ. Պողոսյանի «Արարատի» և մյուս մերձավորների տեղեկություններով: Հունվարի 29–ին, օրինակ, հայտնվում էր. Փարիզում լույս է տեսել Զոպանյանի «Դեմքերը» և, անկարելի է թե, ստացված օրինակը կարդացած չլինի նույն օրը, հերթականորեն հիացած չլինի մեկը մեկից տարբեր, մեկը մեկից դրավիչ Աբովյանի, Ալիշանի, Նարեկացու և մյուսների էսսեական դիմապատկերներով: Նույնը և երիցս թերթելով այդ օրերին հրատարակված՝ «La Rosarie d' Arménie» հանրահայտ երկհատորյակը: Ինչպես և Սուրմելյանի «Լույս գվարթը», Թեոդիկի «Ամենուն տարեցույցը», Ս. Հակոբյանի հրատարակած «Արեգը», որոնք, ինչպես Զոպանյանի «Դեմքերը»,

[6] Ապագա, 1924, թիվ 16, 17:

համառոտակի բնութագրված ենք տեսնում «Արարատի» էջերում: Այդ և այլ նախադրյալներով, Չարենցն, անշուշտ, սիրով ու հուզմունքով է ընդունել և «Արարատի» հունվարի 24-ի թվում զետեղված Չոպանյանի շնորհակալական խոսքը, յուր գրական-հասարակական գործունեությանը նվիրված փարիզյան հանդեսին: Խոսքի այս հատվածով հանդերձ. «... Մանավանդ ինչ բախտավորություն, որ հոս այսօր լսվեցավ Հայաստանի կենդանի ձայնը Կոստան Զարյան բարեկամիս բերնով, ինչպես նաև հայ կոմիսարի մը պլն. Ա. Երզնկյանի ներկայությամբ»: (Անել է՝ Արամայիս Երզնկյանի՝ ՀՕԿ-ի ամենագործուն ներկայացուցչի):

Բայց ահա՛, երկու օր անց էլ իմանում է այն, ինչ հունվարի 27-ի թվում **«Մռավյանի խրատը»** վերնագրով տպագրել էր Աթենքում լույս տեսնող մյուս՝ **«Նոր օր»** առևտրական օրաթերթը... այն է, թե՝ «Բարիզի մեջ Չոպանյանի հոբելյանական հանդեսին առթիվ առաջին խոսողը եղած է Կոստան Զարյան, Հայաստանի լուսժողկոմ ընկեր Մռավյանի կողմե, որ **պ. Չոպանյան բարձր ու գեղեցիկ գրականության հետ կապ չունեցող խնդիրներով չզբաղի»** (ընդգծ.՝ Ալ. Չ.)[10]:

---

[9] Տակավին 1912 25/մբ Կ. Պոլիս տարեթիվով Արշակ Չոպանյանին հասցեագրած նամակում Կոմիտասը գրում էր. «Արդեն հայ ազգը քեզ շատ բան է պարտական. դուն էիր առաջինը, որ լավ ըմբռնեցիր, թե մեր ազգդան հարթելու համար պետք էր նախ մեզ օտարներին ծանոթացնել. ցույց տալ, որ մենք կենսունակ ենք, լուսո որդեգիր ու կարապետ ենք խավար վայրերում, շինարար ենք... Եթե մեր մեջ տոհմականությունն ու միությունը պակաս է եղած, պատճառն այն է, որ **ազատ շունչ չենք քաշել, նույնիսկ մեր իբր անկախության օրերումն իսկ՝ հալածվելով ոգիությունեն ու խավարեն»**. ԳԱԹ ԱՉՖ, թիվ 3416:

Եվ ահա Չոպանյանի գրական գործունեության 35 ամյակին նվիրված հավաքույթով (1925 հունվ. 1) հայ մտավորականությունը մատուցում էր արժանին: Երեանից Փարիզ հղած լատինատառ շնորհավորական հեռագիրն ստորագրել են. Հով. Հովհաննիսյան, Լեո, Մ. Սարյան, Ալ. Սպենդիարյան, Մ. Աբեղյան, Դ. Դեմիրճյան, Եր. Լալայան, Մ. Մանվելյան, Ց. Խանզադյան, Ար. Տերտերյան, Ստ. Զորյան, Հ. Մանանդյան, Թ. Ավդալբեկյան, Ռ. Մելիքյան, Կ. Միքայելյան, Արշ. Խոնդկարյան, Մկ. Ջանան, Աշ. Աթանեսյան, Ստ. Կանայան, Մ. Գևորգյան, Ալ. Թամանյան, Ռուբեն Հովհաննիսյան, Գրիգոր Եղանգուլյան... մի քանի այլք ևս, և այդքան **«լուսո որդեգիրներ ու կարապետներ»**, բայց և մի **«Սատանի արբանյակ»...**

Իսկ թվարկված շարքում, անշուշտ, հիշարժան-հետաքրքիր է 1917-ի հուլիսի սկզբներին Կովկասի գործերի հատուկ կոմիսար նշանակված և շուտով Բաքվի մուսուլմանական կազմակերպությունների ոչ միայն բողոքով հրաժարական տված Գ. Եղանգուլյանը: Տե՛ս սույն Եղիշե Չարենց աշխ. գ. 1, էջ 281: Մի քանի տարի առաջ նրա հարուստ արխիվը զարմանալիորեն հանձնվեց Մատենադարան, մինչդեռ որոշակի տեղը ՀՀ Արխիվային գործերի վարչությունն էր, որի առաջին գործն էլ պետք է լիներ հրատապ մշակումն ու պատմաբան-քաղաքագետների ուշադրությունն հրավիրելը:

[10] Զարմանալի զուգադիպությամբ հաղորդմանը կից «Եղիշե Չարենցի նոր քերթվածը» վերնագրով կա տեղեկություն. «Ծանոթ բանաստեղծ Եղիշե Չարենց Պոլիս երթալու ատեն հանդիպած է Տրապիզոն, ուր գրած է «Լենինն ու Ալին» խորագրով պոեմ մը, որ պիտի հրատարակվի Լենինի մահվան տարեդարձին նվիրված «Խորհրդային Հայաստան» թերթին մեջ»: Այնինչ Չարենցը Աթենքում էր... Սա Աթենքի մամուլում Չարենցի ուղևորությանը վերաբերող միակ «բաց» արձագանքն է: Հաջորդ երկուսը նույն «Նոր օրում» տեղ գտած ամբաստանությունններն են, որոնց մասին խոսք կլինի Վենետիկի այցին վերաբերող բաժնում:

Կարելի է թե Մռավյանը տեղեկություն չի էլ ունեցել: Մինչդեռ Չարենցի ուղևորությունը Բեռլինի վրայով, ծվծվում և արգելվում է,— համապատասխան (այդ և այլ) հանձնարարականներով շտապ աճապարում է Կ. Զարյանը: Ուրեմն և հետևենք ընթացքներին և արդյունքներին...

Հայտնի է, որ հանդեսից հետո Զոպանյանը երկար ժամանակով հեռացել է Փարիզից: Պարզվում է **«Մուավյանի խրատով»**... *Ինչ արած. արդեն մեկ անգամ վառվել էր. այն էլ ... Պ. Միլյուկովից... անհնար էր խուսափել հիմա էլ սովետական դիվանագիտական ու կուսակցական խարդավանքներից: Իսկ երկու առումով էլ վտանգը օդի մեջ էր:*

Զոպանյանի պայքարով ձևավորվում էր զգաստ կողմնորոշում Հայրենիքի հանդեպ: «Պայքարը» Զոպանյանի հոդվածներին նախորդած թվերով ևս ըստ հարկի անդրադառնում էր այդ հարցերին, գտնելով, որ՝ «Դաշնակցությունը պետք է վերջ դնե իր գոյության» և այդ նաև Հովհաննես Քաջազնունու գլխատառ վերնագրով ու հրապարակումներով[11]*:*

Իսկ Հայրենիքում. մինչդեռ 1923-ի հունիսյան «պատահարից» հետո վերջնականապես և՛ բոլշևիկներից, և՛ իշխանություններից, անգամ իսկ Հայրենիքից դառնացած խռովքով Մոսկվայում ապաստանած Չարենցը տարված էր ստանդարտա-ունկսային հովերով,— Ալ. Մյասնիկյանը Թիֆլիսյան-Երևանյան համախոհներով որոնում էր ուղիներ աշխուժացնելու ՀՕԿ-ի գործունեությունը, արագացնելու ներդաշնակը, ամրապնդելու կապերը աշխարհասփյուռ հայության, մտավորականության և կուսակցությունների միջև. հասկանալի է, միևնույն ղաբաղյան դաժան պարտության դասերով: Ուրեմն և նախատեսվում-ապահովվում էին անհրաժեշտ լծակներ ու լուծումներ՝ թե՛ ներսում ու ներսից դուրս, և թե՛ դրսում: Արդյունքում Արամայիս Երզնկյանի գլխավորած ՀՕԿ-ի գործունեության թափ առնելն էր արտասահմանում: Գաղափարա-քաղաքական քաղաքականությունն էլ նշանավորվում է նախ Մյասնիկյանի անընդմեջ հանդիպումներով ռամկավար գործիչների հետ, և ապա **«Կուսակցությունները գաղութահայության մեջ»** *գրքով: Երրորդ օղակը Մ. Սարյանի և Ե. Չարենցի ուղևորությններն էին արտասահման, անշուշտ, և՛ մեկ նպատակով, և՛ մյուս: Բոլոր դեպքերում սպվող Մյասնիկյանի գործնական ու գաղափարա-քաղաքական նպատակներին ու խնդիրներին: Հայրենիքի հանդեպ դիրքորոշման հիմնահարցով, որը և իրապես հիմնահարցն էր ժամանակի հայոց ողջ քաղաքականության, ինչպես և Մյասնիկյանի գրքի:*

Գրքում՝ 1923–1924 թթ. ընթացքով դառնալով Դաշնակցության պատգամավորական ժողովների արդյունքներին, հեղինակը վերլուծելով գրում է. «... Վերլուծենք այս խորհրդածությունները: Լինել ընդդիմադիր... ընդդեմ խորհրդային կառավարության, սակայն կռիվ մղել խորհրդային անվանված օտար ուժի դեմ: Կառավարությունն ու խորհրդային ուժը միևնույնն են: Իսկ եթե կռվում եք, ա-

[11] Իսկ ահա՛ Զոպանյանի պայքարով (ընդհատակյա միաբանությամբ Մյասնիկյան-Լեո) ձևավորվում էր զգաստ կողմնորոշում Հայրենիքի հանդեպ: Ընդ որում «Պայքարը» Զոպանյանի հոդվածաշարին նախորդած թվերով ևս ըստ հարկի անդրադառնում էր նույն հարցերին՝ գտնելով, որ «Դաշնակցությունը պետք է վերջ դնե իր գոյության». որը և գլխատառ հրապարակումներով նշանարանն էր Հովհ. Քաջազնունու: Տե՛ս Պայքար, 1924, 11 հունվ. և հետո:

պա ինչպես: Դաշնակցականները մեկ ասում են, թե այդ կռիվը խաղաղ, լոյալ, բայց մեկ էլ վերածում են նրան կատաղի ձևերի: Եվ իզուր չէ, որ այս հուլիսի (1924-ի՝ Ալ. Զ.) 23-ի **«Վերջ տանք խարխափումներուն»** առաջնորդողն սկսում է այսպես.

«Այլևս գաղտնիք մը չէ Հ. Հ. Դաշնակցության Վիեննայի ժողովին մեջ տված որոշումը՝ տապալելու Հայաստանի ներկա կառավարությանը, դարձյալ իր տիրքթաթուրան հաստատելու համար հոն, որը հայտնի է թե ինչ վախճան կրնա ունենալ: Ռամկ. ազատ. պատգամ. ժողովը՝ նկատի առնելով այս անորակելի որոշումին ծանրակշիռ հետևանքները, որոշած է մասնավորաբար Հայաստանի վերաբերյալ ձեռնարկներու մեջ, չգործակցել այդ ազգադավ ծրագրին հեղինակներու հետ, ըլլա նույնիսկ նյութական օժանդակություն ընելու նպատակով եղած ձեռնարկներու մեջ...

Սա մի այնպիսի մերկացում է, որին Դաշնակցությունը պատասխան չունի տալու, եթե չհաշվենք, որ նա ինքը գալիս է այժմ հաստատելու այն, թեև այլ հոդվածներում նա շարունակում է պնդել իր չքմեղությունը, խաղաղասիրական և վերաշինարարական ձգտումները...»:

Եվ այնուհետև. «Մենք նոր ստացանք «Հայրենիքի» վերջին համարները: Այնտեղ ապստամբության հարցը Հայաստանում դրված է միանգամայն հստակ ու կտրուկ ձևով: Այսպես. սեպտեմբերի 24-ի առաջնորդողում՝ «Ծրագիր մը Կովկասի շուրջ և անոր վտանգները» շոշափված է ապստամբության կարելության հարցը Հայաստանում, կապված Վրաստանի վերջին դեպքերին»:

Ապա պատասխանը՝ «Ոչ այժմ» չէ, բայց նպաստավոր պայմաններում»[12]:

Եվ սակայն, հետաքրքիր է. ռամկավարների ու Դաշնակցության դիրքորոշման բաղդատական քննությամբ առաջացող դրքում դաղութահայ կուսակցությունների քննադատությունը Մյասնիկյանը սկսում է առաջինից:

Նույն օրերի «Կոմունիստի մը նամակ պ. Հերիոյին» վերնագրով ասվում էր, որ այդ կոմունիստը հայտնել է թե՝ «... **զգուշացեք պոլշևիկյան ղեկավարներեն, ստախոսությունը անոնց համար առաքինություն մըն է, երբ խնդիրը պուրժուան խաբելու և իրենց գաղափարը հաղթանակելու շուրջը կդառնա»**[13] (ընդգծ.՝ Ալ. Զ.):

Ծայրից-ծայր Եվրոպան ողողած հաղորդագրությունները, որոնց արդեն իսկ Պոլսից տեղյակ Զարենցը՝ պատեհություն ուներ գրելու Ալ. Մյասնիկյանին, թե՝ «... Եվրոպայում շրջում է ոչ թե «կոմունիզմի ուրվականը»... այլ կոմունիզմի սարսափը, այնպիսի մի սարսափ կա այս երկրում բոլշևիզմի հանդեպ, որ անհնարին է նկարագրել...» (6, 415):

Իսկ այժմ էլ, ահա՛, Աթենքում է, և օրը օրին թափ է առնում սարսափը: Հենց

[12] Ալ. Մյասնիկյան, Կուսակցությունները գաղութահայության մեջ, 1924, Թիֆլիս, էջ 62-63, 65:

[13] Նույնը, 24 հունվ.:

այդ մթնոլորտում էլ հունվարի վերջերին Աթենք է հասնում Ալ. Մյասնիկյանի «**Կուսակցությունները գաղութահայության մեջ**»[14] գիրքը՝ *դարձյալ ուղղված Չոպանյանի կոչին, միաժամանակ և Դաշնակցության հետ տարակարծություն–բանակռիվներին:*

Տարրական տրամաբանությամբ ներգաղթի համար նույնպես աննպաստ հրատարակություն, մեկից մեկ իրագործված վերին «պոլշևիկյան ղեկավարի» հռչակավոր հղացումով: Այլապես ինչպես բացատրել հանելուկը. չէ որ ներգաղթը կազմակերպելու համար նույն Մյասնիկյանի ջանքերով Եվրոպա է գործուղվել ՀՕԿ–ի ներկայացուցիչների մի ամբողջ անձնակազմ, ինչպես և փաստացի բանաստեղծ Չարենցը: Իրապես ռամկավարների հետ սերտ գործակցությամբ՝ մեծ ակնկալիքներով Հունաստանում: Իհարկե, Մյասնիկյանի և նրանց ներկայացուցիչների միջև եղած նախնական պայմանավորվածությամբ:

Եվ հիմա իր գրքում գաղութահայ կուսակցությունների քննադատությունը Մյասնիկյանը սկսում էր ռամկավարներից, այն էլ շոշափելով անձամբ Չոպանյանին:

Ուրեմն և քաղենք. «... Նա (ասել է՝ ռամկավարը՝ Ալ. Զ.) գաղութահայ բուրժուազիայի, ասել է թե տաճկահայ, ավելի ճիշտ՝ արևմտաբնակ հայ մեծատնի ներկայացուցիչն է: Արևմտահայ դրամատերը փորձված է. նա շատ բան է տեսել, շատ երկրներ է ման եկել և այսպես, թե այնպես, դիզել է իր հարյուր հազարները և միլիոնները: Նա օտար է այն երկրների համար, որտեղ հարստանում և ապրում է. նա չի կապված նրանց հետ օրգանապես: Եվ այդ տեսակետից գաղութահայ մեծատունը տեղական քաղաքացի, հասարակական տիպ ու քաղաքական մեծություն չի ներկայացնում:

... Եվ որ նշանակալից է, Խորհրդային Հայաստանում տնտեսական խոշոր աշխատանք է տարվում: Սա արդեն իրական գործ է և նաղդ է: Ինչո՞ւ: Մեկ, որ կարելի է այդպիսի երկրում կապիտալ շահեցնել . իսկ ռամկավարը կապիտալ ունի: Երկրորդ, որ խաղաղությունը հնարավորություն կտա արտասահմանյան գաղթականությանն անցնել Հայաստան. իսկ այդ գաղթականությունն անհանգստացնում է հայ մեծատնին: Երրորդ, որ հարստացող Հայաստանն արտասահմանից կընդունի որբերին. իսկ սրանք հոգս են պատճառում հայ հարստին: Վերջապես, ազգասիրական գործ. ռամկավարը... կուզենար, որպեսզի այսօրվա Հայաստանը վաղը դառնա մեծ Հայաստան: Դաշնակցականներն այդ չկարողացան անել, թերևս անեն բոլշևիկները, այն էլ ռամկավարների դեղատոմսով»[15]:

Այս հատվածներում էլ, ահա՛, հիշատակվում է Չոպանյանը. «Վերևի մեջբերումը ցույց է տալիս այն տարբերությունը, որ կա ռամկավարների և կոմու-

---

[14] «7 նոյեմբերի, 1924, Մոսկվա» տարեթվով ավարտված և նույն թվականին անմիջապես Թիֆլիսում հրատարակված Մյասնիկյանի գիրքը բաղկացած է հետևյալ գլուխներից. 1.Ընդհանուր դիտողություն, 2–րդ՝ Ռամկավար–ազատական կուսակցություն. 3–րդ՝ Դաշնակցությունը, 4–րդ՝ Հնչակյաններ, 5–րդ՝ Կոմունիստական շարժումը, 6–րդ՝ Դեպի կոմունիզմ: Գիրքը նույնությամբ հրատարակվել է նաև 1925–ին Բեռլինում. բայց այդ մասին իր հերթին:

[15] Նույնը, էջ 14–15–16:

նիստների միջև: Ռամկավարներն այդ մասին պարզ գրում են: Նրանց խոշորագույն դեմքերից մեկը, Ա. Չոպանյանը, Փարիզի ռամկավարական «Ապագա» թերթի այս օգոստոսի 30-ի համարում հրատարակած իր նամակում նկատում է. «Ռամկավար-ազատական կուսակցությունը, մեր ժողովրդի մեծամասնության հետ համաձայն, այն կարծիքն ունի, թե առանց բոլշևիզմի ընկերական ըմբռնումներուն համախոհ ըլլալու, մենք պարտինք Հայաստանի արդի կառավարությանն օգնել իր վերաշինության գործին մեջ»:

Սա հասկանալի է: Ռամկավարները հայ խոշոր բուրժուազիայի կուսակցությունն է, իսկ բոլշևիզմը պրոլետարական հոսանք է...»: Ապա դառնալով ռամկավարների ամերիկյան «Նոր օրին», օգոստոսի 1-ի առաջնորդողից Մյասնիկյանը քաղում է նման մտքեր. «Արդ հոս է որ ահավասիկ մեր մտքին մեջ բնական ձայն մը կբարձրանա և հարց կուտա թե՝ ի՞նչ **կընե Երևանի մեր կառավարությունը այս մահաբեր իրականության հանդեպ...**

Ինչո՞ւ դոնե իր խոսքը կամ իր միջոցները ի գործ չի դներ հայ տարագիրներու այս կսկծալի վիճակին դարման մը տեսնելու համար: ... Ժամանակն է, որ արտասահմանի հայության ճակատին նետած իր հիմար նախատինքներեն վերջ այժմ ինքն ալ **գիտակցի իր պարտականությունը** և որևէ կերպով օգնության ձեռք կարկառե Հունաստանի հայության և զանոնք դրկաբաց ընդունի իր հարկին տակ»[16]:

Համաձայն լինենք, ուրեմն, որ բանաստեղծի ուղևորությունը արտասահման պատասխան էր արտերկրից լսվող այս և նման կոչերի. Ալ. Մյասնիկյանի հետ համատեղ քննությամբ նախապատրաստված-մշակված «Standard»-ի համարներն այրելու 1924 թ. մայիսի հիշարժանից-հիշարժան օրից: Այնուհետև պատեհ ամեն առիթով՝ Մոսկվայում, թե այնտեղից Թիֆլիս՝ օրեր շարունակ ճանապարհին, ապա Թիֆլիսում անընդմեջ բորբոքված մտահոգություններ, նախատեսումներ. այդ թվում օրաթերթի հրատարակում Աթենքում, «Դեկ»՝ Փարիզում... Լենինի մահից հետո ստալինյան վերահաս-վեհերոտ առավել դավ ու դավադրությունների տագնապներով:

Կասկած չի կարող լինել, որ հանդամանալի խոսակցություններով դարձել-անդրադարձել են նաև կուսակցություններին, և Չարենցը տեղյակ է եղել Մյասնիկյանի մոտեցումներին ու գնահատականներին: Այդ շարքում ամենախիստը, բնականաբար, վերաբերել էր Դաշնակցությանը: Մասնավորապես կուսակցության որոշակի մասին, որի քաղաքական վարքի հասցեին գրքում գտնում ենք դիպուկ բնութագրեր. «... Թրքատյաց դաշնակցական ջոջերն այսօր դիմում են տաճկական օրիենտացիայի, որ նշանակում է՝ թրքական ուժով ընդդեմ Ռուսականի, երջանկացնել Հայաստանը: Բայց ո՞վ կհավատա սրան...»:

Դաշնակցության հասցեին առավել խիստը, սակայն, նրանց և ռամկավարնե-

---

[16] Նույնը, էջ 19-20, 30:

րի միջև դրված Հավասարության նշանն է, կարելի է ասել, «ամենախոցելի» Հանդույցը՝ Մյասնիկյանի դատողությունների շարքում. «Ինչո՞վ է սա (ասել է՝ ռամկավարների՝ Ալ. Ջ.) դաշնակցական Հրապարակախոսների ոճից: Խիստ և որոշակի: Եվ դեռ ավելին: Եթե պաՀանջված պայմանը կատարվի արտասաՀմանն էլ իր Հերթին կօգնի Խորհրդային Հայաստանին: Այլապես կռիվ, նախատինք ու Հայհոյանք: Հիմա այդ արտասաՀմանյան օգնության մասին մի քանի խոսք:

Իսկապես ասած՝ դաշնակցականների փորացավն այդ օգնությունն է: Նրանք շատ են վախենում, որ Հայ մեծատան փողի քսակը կբացվի կամ բացվել է արդեն, Հակառակ իրենց՝ Հօգուտ ու Հանուն Խորհրդային Հայաստանի: Բայց թող նրանք չանՀանգստանան՝ քսակը չի բացվել: Սակայն փաստ է, որ մի շարք ռամկավարներ եկան և անցան Հայաստանից...»[17]:

Մնում է ասել, որքան էլ փորձառու լինենք Հայ ժողովրդի իմաստնագույն առածներով, ինչպես ասենք, այս մեկով՝ «Ավերվի՛ էն խաթրը (Համերաշխություն), որ մեջը քիչ մ'էլ զոռ (բռնություն) չեղնի»[18],— սրբագրել՝ ավելորդ է ասել, որ նման Հարցադրումները ինչ–որ տեղ վերջին Հաշվով կոչված էին ծառայելու ոչ այնքան Հանուն ներգաղթի գաղութաՀայության Համերաշխությանը, այլ Հակառակը...

Ըստ այդմ կողք–կողքի բերելով, այնուամենայնիվ, արձանագրենք, որ ինչպես նույն միջոցին Տրապիզոնում ծուղակ ընկած Չարենցը պարտավոր էր գրել «Լենինն ու Ալին»՝ ճանապարՀը շարունակելու Համար, այնպես էլ Մյասնիկյանի գիրքը պետք է որ Հրապարակվեր ներգաղթը թափ չառած. այդ էր, ըստ երևույթին, վերին կամքը Ղարաբաղի Համար և ոչ միայն դրա,— վրեժխնդիր «պոլշևիկ ղեկավարի»:

Այդպիսին էր դաժան ՀաշվեՀարդարը. սպանությունից առաջ վարկաբեկել, միաժամանակ Հենց իրենց միջոցով, իրենց ձեռքով իսկ սեպ խրել ժողովրդի Հատվածների միջև:

Դառնալով Հնչակյաններին, Մյասնիկյանը, իՀարկե, ողջունում էր նրանց՝ մասնավորապես Մարո Նազարբեկյանի կոմունիստամետ դրսևորումները, իսկ «ողջույններն» արդեն ըստ ամենայնի վերաբերում էին կոմունիստներին: Ակամայից Հարց է ծագում. գիտե՞ր արդյոք Մյասնիկյանը, որ Հայ բոլշևիկների կամ կոմունիստների շարքերում գոյություն ունի երկփեղկվածություն և ապա. գիտե՞ր արդյոք, որ գաղութաՀայության միջավայրում գործում են Հատուկ ծառայության ՀրաՀրիչ ուժեր: ԻՀարկե՛, գիտեր. Գ. Հայկունուց և Ա. Կարինյանից սկսած. գիտեր նաև, որ իր գործուղածների կողքին գործուղվում էին ընդդիմադիր ուրիշներ, և անշուշտ, ճանաչում էր և թշնամական այդ ուժերի պարագլուխներին, առավել ևս ամենավերինին...

Նույն անուն–ազգանուններով գիտեր և Եղիշե Չարենցը, այնպես էլ մտավորականության մյասնիկյանական թևը՝ սկսած Բրեստի դաշնագրից, Վ. Տերյանի Հալածանքներից, Լ. Շանթի դեմ դավադիր խաղերից...

---

[17] Նույնը, էջ 30, 20:

[18] Ա. Տ. Ղանալանյան, Առածանի, 1960, էջ 148:

Եվ սակայն Մյասնիկյանի գրքին անդրադառնալիս՝ լավ կլիներ նկատի առնել նույն միջոցին Մյասնիկյանի հետ չփված ռամկավարներին, այդ թվում Ե. Կարիկյանի արձանագրած խոստումը. «Զինքը իր էության մեջ ճանաչելու է ըսածներն ու գրածները հասկանալու համար»[19] (ընդգծ.՝ Ալ. Զ.):

Բայց սկզբունքայնորեն տարբերելու համար Մյասնիկյանի գաղափարական բանավեճն ու պայքարը՝ քաղենք որոշ էջեր Կարինյանից. «... Մյուս կողմից հայ բուրժուազիան և բուրժուազիա կազմակերպությունները գիտեին, որ Հայաստանը միակ այն հենարանն է, որը կարող է նպաստել միջազգային իմպերիալիզմին արշավելու դեպի Անդրկովկաս: **Հայաստանը, Կովկասյան հակահեղափոխության վերջին այդ հենարանը կորցնելուց հետո՝ հայ բուրժուազիան պիտի կորցներ իր վերջին հույսը՝ երբևիցե ձեռք բերել Թիֆլիսը և Բաքուն, վերահաստատելու իր հին տիրակալությունը այնքան երանավետ նավթային վայրերում:**

Եվ «Դաշնակցությունը»,— կովկասահայ բուրժուազիայի ռազմական այդ կազմակերպությունը, որը իր հրահանգները ստանում էր Փարիզից, Ահարոնյանից, Մանթաշյանից, Դաստակովից և Բաքվի խոշոր ու մանր նավթա–արդյունաբերողներից, իր բոլոր ջանքերը թափում է, որպեսզի միջազգային իմպերիալիզմը կարողանա Հայաստանի միջոցով մտնել Կովկաս և վերադարձնել հայ սնանկացած բուրժուազիային իր հանքերն ու շենքերը:

Քաղաքացիական կռիվը Հայաստանում այդպիսով միանգամայն կազմ ու պատրաստ սոցիալական երկու ներհակ խմբերի պատերազմ էր, որոնցից մեկը կապված էր Խորհրդային Ռուսիայի, մյուսը՝ իմպերիալիստական անտանտայի հետ»[20]: Կեցցե՛...

«Հայկական «ամենովնախականությունը» սկիզբ է առնում 1921 թվից»: Ապա ռամկավարներից անցնելով Քաջազնունուն՝ նույն Կարինյանը գրում է. «Ինչ վերաբերում է Քաջազնունուն, պետք է ասել, որ նա հանդես է եկել բավական մեծ մի գրությամբ, որը չնայած նրան, որ գրված է ուժեղ գրչով, ներկայացնում է իրենից նացիոնալիզմի պաշտպանության մի փորձ:

Ընդունելով Խորհրդային Հայաստանի իշխանությունը և քննության ենթարկելով դաշնակցական կառավարության գործունեությունը, Քաջազնունին կոչ է անում բոլոր դաշնակցականներին, վար դնել զենքերը և ենթարկվել Խորհրդային իշխանությանը:

Բայց այդ բոլորի հետ միասին նա անում է մի շարք այնպիսի հայտարարություններ, որոնք առանձին բնույթ են տալիս այդ կապիտուլյացիային:

Կրկնելով ամենովնախականների սովորական արդումենտներն այն մասին, որ

[19] Պայքար, 1924, 5 մարտի:

[20] Քաղաքացիական պատերազմը Հայաստանում և նրա դրդապատճառները. տե՛ս Ա. Կարինյան, Հայ ազգայնականների ուղին, 1926, էջ 101–102: Սա արդեն–արդե՛ն «անառակ որդի» չէ... Սա արդեն անուն չունի...

հայ բոլշևիկները փրկել են Հայաստանը, հայ ժողովրդին, «ողջ հայությանը», և շեշտելով այն, որ միմիայն իրական այդ Հայաստանի վրա հենվելով կարելի է նոր քայլեր անել դեպի «ազգային» վաղեմի իդեալի վերջնական իրագործումը,— Քաջազնունին հայտարարում է, որ հայ բոլշևիկները միևնույն դաշնակցականներն են, որ բոլշևիկները շարունակում են դաշնակցականների գործը, որ «փրկելով» Հայաստանը՝ իրենց տրամաբանությամբ նրանք պիտի ավելի ևս առաջ ընթանան «ազգային իդեալի իրագործման» ուղիով:

«Հայաստանի միակ orientation*–ը,— ասում է նա,— Ռուսաստանն է. Հայաստանը կարող է ապրել միայն Ռուսաստանին կառչած, ուրիշ քաղաքական հեռանկար չունի նա»: Մի ուրիշ տեղ, կարծես իր միտքը ավելի կոնկրետ շեշտելու համար, նա ասում է. «... նախադասելով միլլիական Թուրքիան բոլշևիկյան Ռուսաստանին... ու մերժենալով քեմալական–մուսաֆաթական–վրաց–մենշևիկյան բլոկի մը հետ, դու չպիտի կարողանաս մնալ լոյալ Խորհրդային Հայաստանի հանդեպ, սիրաշահելու բարեկամներիդ ու միաժամանակ խույս տաս վտանգավոր քայլերից»...*

«Թուրքիայի հետ, ասում է նա իր բարեկամին, հասկացողության գալու կամ այդ ուղղությամբ որևէ փորձ անելու մի սոսկ խոսակցություն սկսելու համար, ամենից առաջ դու պիտի հրաժարվես «Միացյալ Հայաստանից» ու առհասարակ որևէ հողային պահանջներից, գոհանաս ներկա սահմաններով և մի նոր ստորագրություն ավելացնես Բաթումում, Ալեքսանդրապոլում ու Ղարսում կնքված դաշնագրերի տակ»:

...Նա շարունակում է մնալ «հին դատի»–«Միացյալ, անկախ Հայաստանի» պաշտպան: Նա տենչում և երազում է համազգային այդ իդեալի մասին: Նա ապրում է այսօր էլ, նույնիսկ Խորհրդային Հայաստանում, վաղվա այդ նվիրական անուրջներով»[21]: Ամենուրեք՝ ասել է Հ. Քաջազնունին 1937–ի նախօրեին...

Այս համոզմունքն էլ արդեն վերաբերում են Լեոյին. «Որքան էլ Լեոն կամենում է ելնել իրենց դրությունից և հասարակական պայմանների առարկայական վերլուծությունից, այնուամենայնիվ, հակառակ իր ցանկության, նա չի կարողանում վերջնականապես թոթափել վաղեմի իդեալիստական պատմահայեցողության լուծը: Եվ մերթ ընդ մերթ ազգայնական հայեցողության հեռավոր արձագանքն երևում է գրքի այն էջերում, որոնք նվիրված են ազգային հարաբերությունների քննությանը:

Խոսելով, օրինակ, հայ–վրացական և հայ–թուրքական հարաբերությունների մասին, Լեոն՝ առանց նկատելու այդ,— ավելի պասիվ դեր է հատկացնում հայերին, քան այդ գոյություն ունի իրապես: Նա մոռանում է շեշտել այն, որ հայ բուրժուազիան խուսանավել է ադրեսից, հարձակողական քաղաքականությունից ոչ թե նրա համար, որ ավելի «կուլտուրական» կամ խաղաղասեր է եղել, այլ

---

[21] Հայկական սմենովեխականությունը. տե՛ս Ա. Կարինյան, Երկերի ժողովածու, հ. 1, 1934, էջ 353–357:

բացառապես այն պատճառով,— որ **առանց այն էլ հայ բուրժուազիան ավելի հզոր և ուժեղ էր, քան հարևան ժողովրդների իշխող դասակարգերը: Կովկասյան շուկան, ողջ առևտուրը, դրամային շրջանառությունը գտնվում էին նրա ձեռքերում և մագիլներում:** *Խեղդելով տնտեսապես վրաց ու թաթար կալվածատերերին, ջախջախելով վրաց և թաթար տակավին անուժ բուրժուաներին, կովկասահայ բուրժուազիան առերևույթ վարում էր չափազանց «խաղաղ» և հաշտարար քաղաքականություն»*[22]*: Մախլա՛ս... խոսում է աննկուն Կարինյանը...*

* * *

Բայց Աթենքում ո՞վ էր ներկայացնում Ռամկավար ազատականներին. ինչ խոսք, մինչև այստեղ վկայակոչված **Հովհաննես Պողոսյանը:**

Հովհաննես Պողոսյանը՝ ըստ Չոպանյանի հետ նամակագրության

Ուրեմն և հայրենանվեր համատեղ գործունեությունը Հովհաննես Պողոսյանի հետ պարտավորեցնում է ապերախտ չգտնվել և փոքր–ինչ հանգամանորեն դառնալ իր անձին: Գոնե առայժմ այնքանով, որքանով առնչվում է Զարինցին: Այնքան սերտ, որ պարզապես վայելում է կոչել Չոպանյանի աջ թևը. ճշտենք. ՀՕԿ–ի արտասահմանյան լրացուցիչ անդամ Չոպանյանի երաշխավորությամբ ու ընտրությամբ. գործունյա և վստահելի համախոհ Զարինցի՝ իր Աթենքում գտնված միջոցին... Եվ առաջ ու հետո:

Իսկ դրանից առաջ. խոսուն վկայությունները նախ «Ապագա» քաղաքական–հասարակական շաբաթաթերթի հասցեաթղթի վրա 1923–ի մայիսից Չոպանյանին հասցեագրած սույն կարճառոտ գրություններն են. **«Բարիզ, 11 մայիս, 1923** *Ստացա Ձեր հեռագիրը, որով ինձ կը հայտնեիք Ձեր հասցեն: Երեկ նամակ գրեցի պ. Միհրդատյանին և բացատրեցի, թե իր վրդովմունքը՝ «Նորքի» քննադատության առթիվ արդարացի չէր»*[23]*: (Ցավոք առայժմ հնարավոր չէ պարզել, թե Չոպանյանի հոդվածին վերաբերող ո՞ր հարցում. ասել է՝ թողնենք սերունդներին):*

Հաջորդ՝ «Բարիզ, 13 մայիս, 1923» տարեթվով հայտնում է. «Ձեր հոդվածին վարձը կը հուսամ ղրկել Ձեզ չորեքշաբթի կեսօրին, եթե հասնի, Զարինցի կտորին հետ մեկտեղ, որ ուրիշ գիրով... պիտի շարվի»: Ապա. «Բարիզ, 14 մայիս, 1923» տարեթվով. «Առանց սպասելու, որ Զարինցի հոդվածին մեր արտատպումն ալ հասնի, այս իրիկուն (երկուշաբթի) իսկ կը հասցնեմ Ձեզ Ձեր վարձը»:

---

[22] *Հայդուկային էպոպեայի պատմագրությունը (Լեռ–ի մեմուարները) հոդվածից. Ա. Կարինյան, Երկերի ժողովածու, հ. 1, 1934, էջ 242–243:*

[23] *ԳԱԹ, Չոպանյանի ֆոնդ, թիվ 6267:*

Եվ ապա. «Բարիզ, 16 մայիս, 1923». «Արդեն ստացած ենք «Նորքի» վարձը, որմէ մեկ օրինակ ղրկած եմ Պրյուսել...»[24]*:*

Առաջին տպավորությունն այն է, որ գործ ունենք սոսկ սովորական լրագրողի հետ, բայց, ահա՛, «Բարիզ, մայիս 19» և հատկապես «Բարիզ, 21 օգոստոսի, 1923» տարեթվով ավելի հանդամանալի նամակներում՝ Երզնկյան, Մակինցյան, «Մարտակոչ», «Կարմիր խաչ», Կարիկյան– «Խատիսյանը Պերլին կը գտնվի այժմ» և այլ հոլովում–ակնարկներով– գծագրվում են ՀՕԿ–ի գործունեությունից Զոպանյանին առաքվող կարևորագույն տեղեկություններ, ուղղակի հաշ- **վետվություն ներկայացնողի իր գործիմաց–շրջահայաց նկարագրով ու հայրենանվեր վարքով:** *Ասել է, թե՝ ՀՕՀ. Պողոսյանի Զոպանյանին հասցեագրած և առհասարակ իր գործունեությանը առնչվող այլևայլ նյութերը, այդ թվում նամակները՝ կարևոր վավերագրեր են երբևէ*

ՀՕԿ–ին նվիրվելիք հիմնավոր աշխատասիրության համար: *Պարզապես հասարակական–քաղաքական եռանդուն–երևելի գործիչ, որին* **1924–ի մայիսի 5–ից էլ տեսնում ենք Սոֆիայում:** *Զոպանյանի պատվին երեկո, և դարձյալ*

ՀՕԿ–ի առաքելությամբ ու մտահոգություններով. թե Վառնայում «գործիչի մը ներկայությունը անհրաժեշտ է», և որ նույնպես կարևոր է՝ Աթենքին ու Սալոնիկին վերաբերող հանգամանքներ. որ Աթենքում կենտրոնացած են ռամկավարները, Սալոնիկում՝ դաշնակցականները՝ որոշ անդամներով դեմ ներգաղթին:

Հաջորդ նամակից էլ երևում է, որ 1924–ի սեպտեմբերի 9–ից արդեն Աթենքում էր. որոշակիորեն ներգաղթ կազմակերպելու առաքելությամբ և, սակայն, ստիպված էր խոստովանել Զոպանյանին, թե՝ «Զեզմե չեմ ուզեր ծածկել մեր նյութական վիճակին հուսահատական ըլլալը... եթե այսպես Ամերիկա և Բարիզ խուլ մնան...»[25]*: Ամեն պարագայում, պարզ է, հանձնառություն ուներ կազմակերպելու ներգաղթ Հունաստանից, և՛ կարելի է թե, տեղյակ էր նաև, որ* **նույն պատասխանատու հանձնարարությամբ Աթենք պիտի գար Զարենցը:**

Վերջապես պոլսական դժոխքի միջով Զարենցի գալը Աթենք հաջողվում է 1925–ի հունվարի սկզբին. ինչպես և գրում էր Մյասնիկյանին. «Այստեղից վաղը մեկնում եմ Աթենք, ապա կգամ Հռոմ...» (6, 412): Եվ սակայն մինչդեռ նամակը կրում էր «Պոլիս, 8 հունվարի, 1925 թիվ» տարեթիվը, միանգամայն որոշակի հունվարի 4–ին–6–ին Աթենքում էր:

Բացատրության առումը, անշուշտ, կոնսպիրատիվ բնույթի է, քանի որ մեկնում էր գաղտնի, ըստ երևույթին նամակն էլ առաքվել է ձեռքով (թերևս Դ. Շահվերդյանի). ըստ այդմ տարեթիվն էլ փոխվել է՝ մոլորեցնելու նպատակով: Իրականում, ինչպես հետևում է Պողոսյանի «Աթենք, 6 հունվար, 1925» տարեթ-

---

[24] Նույնը, 6277–6279, 6788:

[25] Նույնը, թիվ 6791:

Հիշենք, անպայման հիշենք. 1924–ի մայիսին Հովհաննես Պողոսյանը եղել է Բուլղարիայում, ապա և անցել է Աթենք–Հունաստան...

վով Զոպանյանին հղած նամակից, բանաստեղծը ներկա է եղել Զոպանյանի **պատվին հունվարի 4-ին, ահա՛, այս հայտագրով կայացած հանդեսին.** «Հայտագիր Արշակ Զոպանյանի հոբելյանական հանդեսին Տեղի պիտի ունենա «Օտեոն»-ի սրահին մեջ 4 հունվարի, կիրակի, կեսօրե վերջ ժամը 3-ին»:

Եվ ահա, մինչդեռ հայտագրում արձանագրված է երկու բանախոսություն՝ Հովհ. Պողոսյանի և Սիամանթոյի եղբոր՝ Վահան Յարճանյանի,— «Աթենք, 6 հունվար, 1925» ամսաթվով նամակը սկսում է անանուն մեկով, որը՝ **առ Հոբելյարի «... կարդաց ճառ մը գաղթական և տնազուրկ ժողովրդի մը».** նամակն էլ ուրախալի տոնայնությամբ վերջավորելով՝ «Սիրալիր բարևներով և ջերմագին մաղթանքներով Նոր տարվա և Ծնունդի տոնին առթիվ»[26]:

Այնպես որ հրաշալիքներով լի Աթենքում Ծննդյան տոնին բանաստեղծը շրջապատված է եղել հայրենաբաղձ հայրապատներով, ծպտյալ խոսք ու զրույցի է բռնվել նրանց հետ: Առավել սիրով ու հաճույքով Վահան Յարճանյանի. Մեծարենցից հետո այստեղ փոխադարձելով Սիամանթոյի կարոտ ու սեր, անտակ ցավ ու հետաքրքրություն: Գուցե թե սրտով փլված մի պահի էլ այդ շատ սիրելի Վահանին խոստովանել է յուր ինքնության-ինքնությունը, այլև հայրենասիրական-ստեղծագործական ամենակուլ հավատարմությունը Սիամանթոյին. «Դյուցազնորեն» և «Ափ մը մոխիր» առումներով արտասանել է հուզախռով էջե՜ր-էջե՜ր... Եթե այդպես է, այո՛ այդպես է, ապա Եղեռնի ապրիլյան տասնամյակի օրերին հեռո՜ւ-հեռվի՜ց, բայց անբաժան, մտքի որքան ապրումներ պետք է փոխադարձած լինեն միմյանց... Չարենցն ու Սիամանթոյի Վահան եղբայրը...

Բայց շարունակենք՝ հետադարձ մտաբերելով Աթենքին վերաբերող էջերի առաջին բաժինը, հաստատելու համար, որ էապես ներգաղթի կազմակերպումը Հունաստանում թափ է առնում Չարենցի Աթենք ժամանելուց հետո: Անկասկած ՀՕԿ-ի ծրագրով և Չարենցի մասնակցության պարագայում խիստ գաղտնապահությամբ: Պատճառը, անշուշտ, մի կողմից Դաշնակցության մերձությունն էր Սալոնիկից և այլ վայրերից՝ ներգաղթին դեմ տարրերից, մյուսը՝ վիզա չունենալու հանգամանքը՝ խորհրդային հետախուզությամբ հանդերձ: Ըստ այդմ ուշագրավ է, Չարենցի Աթենքում գտնվելու ընթացքին Պողոսյանի նամակագրությունը Զոպանյանի հետ ընդհատվում է: Դե՛, գոհունակություն և ուրախություն պատճառելով՝ տեղեկատվությունը հեռավոր Անգլիայում ապահովում էր «Արարատը»:

Նամակագրությունը վերականգնվում է, երբ արդեն Չարենցը Հռոմից (վիզա ստանալուց հետո) ժամանել էր Փարիզ. ըստ «Աթենք, 1 մարտ, 1925» տարեթվով նամակի, որով հայտնում էր, թե՝ «Այստեղ մեր ներկայի մտահոգությունը կը կազմի ներգաղթին գործը» և ապա. «Աթենքի ազգային զարթոնքին» կոչված մարմինը ամբարտավան նամակ մը գրած է գաղթականաց կենտրոնական հանձնախմբին: Ատ մարդոց հետ հարաբերություն մտած չէինք: Քանի մը դաշնակցական և Հնչա-

[26] Նույնը, թիվ 6294:

կին տղաքեն և ոչ մեկ համակրանք–վստահություն չեն վայելեր այստեղ: Գործի գլուխ կը մնան անկազմակերպ ու իրական վիճակ... հիշատակությամբ ՀՕԿ–ի փարչության: Ապա հետևում են «Աթենք, 17 ապրիլ», «Աթենք, 18 մայիս, 1925» տարեթվով նամակներ, այնուհետև՝ ճական նման տեղեկություններով «Բարիզ, 17 հուլիս, 1925» և «Բարիզ, 22 հուլիս, 1925» թվակիր բավականաչափ հանգամանալի նամակները. «Ստացա ամսուս 16 թվակիր Ձեր նամակը: Պ. Շահվերդյան մինչև առաջիկա հինգշաբթի այստեղ է,— գրում էր Պողոսյանը: — Իրեն հետ անցած հինգշաբթի հանդիպում մը պիտի ունենայինք... Փիրումյանին ալ պիտի հանդիպեինք, սակայն այդ հանդիպումը տեղի չունեցավ ոմանց (ինչպես Ձեր) բացակայության և ժամադրության անորոշ մնալուն հետևանքով»[27]:

Երկրորդ նամակում էլ գրում էր. «Այսօր գացի Փիրումյանին մոտ, որ խոստացավ ինձ... Մյասնիկյանի գրքույկներն ուղարկել Ձեզ կամ ուղղակի և կամ «Ապագայի» խմբագրության միջոցով: Ըսավ, թե Ձեր նամակը ստացած է և հարկ եղածը պատրաստած` Շահվերդյանի, որ ամսույս 28–ին կմեկնի Աթենք երկու կարավան 1000 հոգի ճամփելու համար Հայաստան»: Այս և «Բարիզ, 30 հուլիսի, 1925»[28] թվակիր նամակների միջոցին Չարենցն արդեն Մոսկվայում էր և ճանապարհվում էր Հայաստան...

Իսկ թե ինչ ճանապարհով է Փիրումյանը ուղարկել (կամ չի ուղարկել) Մյասնիկյանի գրքույկները, չգուշակենք: Իսկ որ Զոպանյանը հատկապես ակնկալել էր ստանալ Ա. Փիրումյանի առաջաբանով Բեռլինում վերահրատարակված Մյասնիկյանի վերջին «Կուսակցությունները դաղութահայության մեջ» գիրքը,— անկասկած է: Կասկածելի է Զոպանյանի ռեակցիան, վերաբերմունքը իր և ռամկավարների, այլև մյուս կուսակցությունների դեմ կամ հետ Մյասնիկյանի մղած բանավեճին: Համենայն դեպս, հակված ենք մտածելու, որ սկզբնապես, իրոք, **եղել է պայմանավորվածություն Զոպանյանի և, ասենք, մյուս ռամկավարների միջև և անձամբ Մյասնիկյանի.** Զոպանյանի պարագայում՝ Կարեն Միքայելյանի միջև փարիզյան հանդիպումների ժամանակ: Ուրեմն հարցը առկախվում է առայժմ:

* * *

Սփյուռքահայ գրականությունը և հասարակական պատմությունը, անշուշտ, նկատելի ասելիք ունի և Հովհ. Պողոսյանի հետագա գործունեության վերաբերյալ: Դարձյալ՝ սերտ առնչությամբ Զոպանյանի հետ. և ոչ միայն: 1926–ին հրատարակված «Արագած» կիսամյա հանդեսով (Փարիզ) հանդերձ՝ սկզբից մինչև վերջին հայրենիքամետ կողմնորոշումով և ճշգրիտ տեղեկատվությամբ, որ շարունակվում է և նամակագրությամբ: «Բարիզ, հոկտ. 13, 1926» տարեթվով, օրինակ, գրում էր. «... **տիկին Զապել Եսայան անցած շաբաթ մեկնեցավ Հա-**

---

[27] Նույնը, թիվ 6296, 6297:

[28] Նույնը, թիվ 6298:

յաստան: *Ուրբաթ երեկոյան թեյասեղան մը տրվեցավ «Բլոսխի» մեջ, որուն ներկա էին բժիշկ Կամսարական, Պապովյան Մկրտիչ, «Երևանի» խմբագիր...»*[29] *և այլն: Տիկին Եսայանը մեկնում էր Երևան՝ հետևելու և ներկա գտնվելու Չարենցի դատավարությանը: Բնականաբար, երեկոյի նյութը՝ տարբեր–տարբեր դատողություններով պատմել է Սփյուռքում ևս աղմուկ հանած այդ «արարքի» շուրջը: Բայց նկատենք, նամակում այդ մասին չկա ոչ մի խոսք: Գրում է նաև, թե՝ «Այստեղ տեսնվեցա պ. Գ. Վարդանյանի հետ» (ՀՕԿ–ի պատվիրակներից) և դարձյալ ոչ մի մանրամասն:*

Նույնը տեսնում ենք հաջորդ նամակներում. «Հունվար 2, 1927, Բարիզ» ամսաթվով հաղորդում է, թե՝ «Պողոս Մակինցյանն այստեղ հասած է և կուզե հրատարակչական կազմակերպություն մը ընել». միայն այդքանը: Մինչդեռ «Բարիզ, 26 մայիս, 1927» տարեթվով ռամկավարներին վերաբերող նամակում ծավալվում է. թե հարկ է դրամապես **«Վերակազմել մեր կուսակցությունը»** ... ***«Պուլկարիա և Ռումինիա,*** *նույնպես պետք ունին գործիչի և թերթի: Առանց խոսքի ու բեմի, առանց ժողովրդին խոսող լեզվի, կուսակցական կյանքը չմնար...»*[30] *և այլն:*

Բոլոր դեպքերում տպավորությունն այն է, որ ինչպես Իսահակյանը, այնպես էլ Չոպանյանը, ինչ խոսք, ուրիշները ևս, համոզված են եղել, որ հետևում են իրենց նամակագրությանը: Համենայն դեպս անկասկած է՝ զգուշավորությունը: Բայց դառնանք 1942–1943–ին վերաբերող Հով. Պողոսյանի երկու նամակին ևս՝ երկու հատվածով, որոնցից հետևում է մի կողմից հարազատ ժողովրդի մեծ երախտավոր Չոպանյանի վարք ու նկարագիրը, մյուսից՝ մշտապես անպակաս այլազան ստահակների: Ահա ստահակներինը. «Չոպանյանը Վիշի գնաց և ծախեց հայերը»: Ահա և հակառակը. «Ուրախ եմ, որ հաջողած եք հարթել դժգոհությունները՝ Ձեր Վիշի մեկնումին առթիվ: Անհամբեր կը սպասեն բոլորն ալ՝ Ձեր գալուստին»՝ տարեթիվը 1942 մարտի 4»: Պարզ է, որ խոսքը վերաբերում է հայ գերիներին, որոնց «ծախել է». ո՞վ–ո՞վ Արշակ Չոպանյանը... Է՜հ:

Այսու արձանագրենք ևս, որ «Գահիրե, 22 հունիս 1932» տարեթվով Հով. Պողոսյանը գրում է, թե՝ զգացված է, որ **իր գործունեությունը արժանացել է «Չոպանյանի շնորհակալությանը»**[31], *մի այլ նամակում էլ հայտնում է, թե՝ «ամուսնացած եմ ֆրանսուհու մը» հետ, ապա որ ունի մեկ զավակ... և այսպես ըստ ամենայնի արժեքավոր նամակագրություն վերջինը՝ «26 հունիսի 1950 Բարիզ» տարեթվով...*

---

[29] *Նույնը, թիվ 6313:*

[30] *Նույնը, թիվ 6317:*

Թիվ 6312–ի տակ էլ «Բարիզ, 30 հուլիս, 1926»–ական այսպիսի տողեր. «... Երևանեն Ձեր հասցեին եկած նամակ մը, որ սխալմամբ բացի, կը ղրկեմ ներփակ. միշտ սիրալիր բարևներով Հ. Պողոսյան»:

Հետաքրքիր է ո՞վ է եղել նամակագիրը:

[31] *Նույնը, թիվ 6342, 6335–6363–66: Շնորհակալությունը վերաբերել է թե՛ այցելությանը Հայաստան և թե՛ հրապարակած գրքին... Տե՛ս հաջորդականությամբ...*

Մնում է ասել, որ հարկավոր է ֆրանսահայերի օգնությամբ գտնել Պողոսյանի զավակին կամ այլ հարազատի. եթե պահպանվել են թղթեր, անկասկած կլինեին նամակներ Զոպանյանից, գուցե և տեղեկություններ–հուշարկումներ կամ այլ մասունքներ Զոպանյանից, Իսահակյանից և շատ ուրիշներից. այդ թվում նվիրական «Արարատից»՝ կնքված «Ես իմ անուշ Արարատի» կարոտով և ազատագրելու երկուստեք երազանքով...

Եվ վերջապես դարձյալ երազանքի կարգով. «Լինե՜ր, այնպես լինե՜ր» (վերստին ըստ Հրանտ Մաթևոսյանի), որ կառուցվեր Գրականության ու արվեստի Թանգարանի չենք. *լիներ այնպես,* որ այդ Թանգարանը ի վերջո ձերբազատվեր՝ տեղի կլանային, դրսի դոլլարադին դրամոլ–արվեստամոլների ներխուժումից, այնքան որ Թանգարանային տարրական կանոնակարգով չնեղվեին արժանավորները՝ ամե՛ն–ամե՛ն տեսակետից: Լինե՛ր, այնպես լինե՛ր... Չէ՞ որ Հայոց գրականությունն ու արվեստները՝ ինչպես հին, այնպես էլ նոր... նույնպես պատկանում են Հայոց եկեղեցիների կարգին...

Բայց դառնանք ավելի հանգամանորեն Զոպանյան–Մյասնիկյան քաղաքական առանցքին, պարզ է. նույն առանցքով Չարենցին ու Պողոսյանին, ասել է՝ ՀՕԿ–ին և ներգաղթին... «Արարատին»...

Որքանով բոլոր առումներով նշանաբանն ու անձնագիր–անցագիրը՝ «Ես իմ անուշ Հայաստանի... Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա» պաննոն էր... Անցագի՛ր:

ՀԱՆՈՒՆ «ԱՐԱՐԱՏԻ» ՈՒ ՆԵՐԳԱՂԹԻ

Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա...

Ե. ՉԱՐԵՆՑ

Եթե Պոլսում հայության հարցերը լուծվում կամ չեն լուծվում խորհրդային դեսպանության կից առևտրական ներկայացուցիչ Դ. Շահվերդյանի ջանքերով,— վիճակն այլ էր Հունաստանում: Ազատ–անկաշկանդ գործում էր ՀՕԿ–ը, և ամենուրեք, հատկապես Աթենքում, նաև Սալոնիկում և այլուր, հայությունն ապրում–շնչում էր դեպի հայրենիք ներգաղթի նյութական–քաղաքական, հոգևոր–գաղափարական մտահոգություններով ու հոգսերով:

Էապես Չարենցի արտասահմանյան ուղևորության բուն նպատակը, ամենակուլ մտահոգությունը սկսած Բաթումից:

Հայտնապես հիմնավոր աշխատություններ պետք է ստեղծվեն՝ նվիրված Ալ. Մյասնիկյանի և Հովհ. Թումանյանի նախաձեռնությամբ ու ջանքերով կյանքի կոչված ՀՕԿ–ի գործունեությանն ու նշանակությանը, առանց որի, կարելի է թե, վտանգվեր հայրենի հողի վրա հայության գոյությունը: Եթե չլիներ ՀՕԿ–ի և դրա կողքին նաև հայ ժողովրդի Մեծ խնամակալ Նանսենի աննահանջ անձնանվիրությունը՝ հանուն հայության ներգաղթի: Պատմական ճակատագրական իրադարձություն, որի անգնահատելի գինը կարելի է որոշել թեկուզ և տեղյակ լինելով մերձակա քրիստոնյա հարևանների հոգացողությո՞ւնն ասենք, թե անհանգստությո՞ւնը. այն է թե՝ հայերին **«շուտով կհաջողվի բնակելի դարձնել Հայաստանը»**[1] (ընդգծ.՝ Ալ. Զ.):

Իրապես առանց այդ երկու գործոնի հնարավոր չէր լինի ապահովել ինչպես Հայաստանի վերաբնակեցումը, այնպես էլ առաջին տարիների վերաշինությունը: **Սարդարապատի ճակատամարտի կողքին հայ ժողովրդի գոյության պատմական բախտորոշ գործոն:** Այդ իմաստով առանձնակի գնահատության է արժանի ՀՕԿ–ի գործունեությունը Հունաստանում, որտեղ և, բնականաբար, կուտակված էր զանգվածային բազմաքանակ գաղթականություն:

1924–ից սկսած Հունաստանից հայության ներգաղթը հայրենիք առաջիններից էր, որը քաղաքական–կազմակերպչական ու բարեգործական առումներով մեծ թափ է առնում 1925–ի հունվարից: Եվ հատկանշական է, փետրվարին ար-

[1] Արարատ, 1925, 23 հունվ.:

դեն խորհրդայնամետ (ավելի ճիշտ՝ մյասնիկյանամետ «Բանվոր–Բարիզին» արձանագրում էր, թե՝ «ՀՕԿ–ը ամեն գործուն դեր կ'կատարե Հունաստանի մեջ»[2]:

Ուրեմն և սկզբից ևեթ հայտնենք, որ այդ «գործուն դերի» մեջ մեծ բաժին ունի՝ ըստ Ալ. Մյասնիկյանին հասցեագրած նամակի (6, 412) հունվարի 8–ին, իրականում ամենաուշը 4–ին Աթենք հասած Չարենցը: Հայտնենք, միաժամանակ ավելացնելով, որ, թեև տվյալներն արտաքնապես անվավեր, **իրողությունն անկասկած է, վարկածայինը բացառված:** Այստեղից էլ հետևում է ապացուցման մեթոդը. նախ իրացումների արձանագրում և հետո միայն՝ ապացույցներով հիմնավորում:

Եվ այսպես շարունակենք բացել–վերծանել «թվերի լեզուն», ըստ որի բանաստեղծի Աթենք հասնելուց շուրջ երկու շաբաթ անց 1925–ի հունվարի 21–ին Աթենքում լույս է տեսնում «Արարատ» անունով չափազանց ուշագրավ մի օրաթերթ. «Հրատ. Հայ Ռամկավար կուսակցություն»[3] ողողված հայրենանպաստ–ներգաղթանպաստ կոչերով ու ամեն տեսակի նյութերով, նախաձեռնությունների արձագանքներով. բարեգործական ամենօրյա միջոցառումներ, բառացիորեն հայաբնակ բոլոր անկյուններում: Ուրեմն և չնշենք Ռամկավար–ազատական կուսակցության չահախնդիր աջակցությունը ներգաղթին ու հայրենիքին, դրա կողքին չնշելով և այն, որ այդ տարիներին Հունաստանում կոմունիստական կուսակցություն չի գործել, ասել է թե՝ չի գործել և հայ գաղթականության շրջաններում:

Անհերքելի իրողություն, որ պարտավորեցնում է լայնորեն անդրադառնալ «Արարատի» էջերում արտացոլված ազգօգուտ գործունեությանն ու քարոզչությանը՝ ինչպես ՀՕԿ–ի շրջանակներում, այնպես էլ նրանից դուրս: Սկսած հունվարի 22–ից, մի այնպիսի նպատակասլաց գործիմացությամբ ու եռանդով, որը, իհարկե, առաջին հերթին պատիվ է բերում Հունաստանի, մասնավորապես Աթենքի հայ համայնքին ու մտավորականությանը:

Արդեն իսկ հունվարի 23–ին «Արարատը» հայտնում էր, թե՝ «Տեղվոյս ՀՕԿ–ի մասնաճյուղի վարչությունը Աթենքի ՀՕԿ–ի շրջանային վարչության կողմե մասնավոր հրահանգ ստացած ըլլալով, սկսած է արձանագրություն բոլոր այն հայերուն, որոնք կ'ուզեն Հայաստան մեկնիլ:

Արդ, կծանուցանենք հարգո հասարակայնության, որ այսօրվանե սկսված ըլլալով փափագողները պետք է դիմեն Գոքինիո Կիլիկյան ընթերցատան մեջ ՀՕԿ–ի քարտուղար պ. Նշան Ծերունյանին ժամը 7–9 կեսօրե հետո:

Դիվան ՀՕԿ–ի Գոքինիո մասն. վարչ. ատենադպիր Ն. Ծերունյան, ատենապետ Գ. Գույումճյան:

Գոքինիա, 22 հունվ. 925»:

---

[2] Բանվոր–Բարիզի, 1925, 22 փետր.:

[3] Նախորդ էջերում վկայակոչված «Ե. Չարենցի արտասահմանյան ուղևորությունը» հոդվածում (Գթ, 1957, 18 օգոստ.) Աս. Աստարյանը գրում է թե «Հունվարի սկզբներին եղել է Աթենքում» և որ այդ առթիվ եղել է միայն մեկ հիշատակություն:»: Ցավոք նշված չէ տեղը:

Այնուհետև ծանուցվում էր, թե «Արձանագրությունները ձրի են և պիտի տևեն մինչև հունվարի 31–ը». մատնանշվում էր և տեղը՝ Համբարձում Պերպերյանի տանը կից:

Նույն հունվարի 23–ի թվում խոշոր տառերով հայտնվում էր նաև՝ «Հրապարակային բանախոսություն՝ կազմակերպված ՀՕԿ–ի մասնաճյուղին Գոքինիո. Հառաջիկա կիրակի հունվ. 25 կեսօրե հետո ժամը 2–ին **ՀՕԿ–ի համար հրապարակային բանախոսություն մը սարքված է ի Գոքինեա Կիլիկյան ընթերցատան մեջ: Պիտ բանախոսեն պ. պ. Վ. Մ. Միրագենց և Հ. Պողոսյան»:** *Եվ դրան կից՝* **«Հունաստան և մենք» խորագրով խմբագրական, որում ասվում էր.** *«... Մերձավոր արևելքի համար երկու անհրաժեշտ տարր են Հունաստան և Հայաստան, և անոնց գործակցությունը ապագայի համար պիտի ապահովե հույն և հայ քույր ժողովուրդներուն իղձերուն իրականացումը»:*

Նմանօրինակ այլևայլ մտածումներ, համեմված պատմական հնօրյա և նորօրյա էքսկուրսներով, բարեկամական դրսևորումներով, տոգորված հույն ժողովրդի հանդեպ արժանապատիվ սիրով ու երախտագիտությամբ, մարդարևական սպասումներով:

Իսկապես ասած, առաջին պահից այդ Վ. Մ. Միրագենցը մղեց մտածելու, որ դա ծածկանունն է Եղիշե Չարենցի, որով հանդես է եկել տարագիր պաղթականության առջև, որին և հաջորդեցին տանջալի պրպտումներ: Օրաթերթի 1925–ին լույս տեսած 1–98 թվերի տվյալներով այդ միջոցին ամենագործունյա ու հեղինակավոր անձը ՀՕԿ–ի լիազոր ներկայացուցիչ Հովհաննես Պողոսյանն էր: Բայց, ահա՛, առաջին բանախոս Վ. Մ. Միրագենց: Եվ դրա կողքին այս վավերական փաստարկը. չէ որ՝ ինչպես գրել էր Մյասնիկյանին, իր հավաքած նյութերով պատրաստվել և «Պոլիս հասնելուն պես» ցանկացել էր կազմակերպել մի երկու դասախոսություն, բայց Շահվերդյանը «պարզն ի պարզ» խորհուրդ չէր տվել (6, 413): Իսկ հիմա այդ հնարավորությունը կարծես ուներ, բայց ինչպես իրագործել. գուցե ծածկանունով:

Գաղտնապահություն՝ պայմանավորված ոչ միայն երկրների միջև եղած ժամանակի բարդ փոխհարաբերություններով, այլև հայոց միջավայրում տիրող միջկուսակցական–ներկուսակցական տարընթացություններով: Ինչ արած, եթե խորհուրդները խորից էլ խոր էին, քանի որ խոսքը վերաբերում էր Հայաստանի օգնությանն ու ներգաղթին: Թող խոստովանանք լինի. հանգամանքների նման բնույթը և «Արարատի»՝ արևմտահայերենի ու արևելահայերենի լեզվա–ոճական յուրատեսակ խառնուրդը՝ այլևայլ մտահոգություններով հանդերձ, հարկադրեցին **երեք անգամ ուշի–ուշով տառացիորեն խուզարկել օրաթերթը.** *մի կողմից ճշտելու համար Միրագենցին վերաբերող սկզբնական զգացողությունն ասենք, թե ենթադրությունը, մյուսից՝ երկգիծ զուգակցությամբ ներկայացնելու ինչպես Չարենցի քաղաքացիական–հրապարակախոսական գործունեությունը, այնպես էլ վեր հանել ՀՕԿ–ի ու ռամկավարների գործունեությունը Հունաստանում:*

Եվ ինչ. առանց չափազանցության, կարելի է ասել, այդպիսի նպատակասլաց, բովանդակալից օրաթերթ, թերևս, մեկ-երկուսը գտնվի ժամանակի Հայոց մամուլի պատմության մեջ: Վկայությունն են նախ խմբագրականները՝ մեկը մյուսին տրամաբանորեն սնվող հարցադրումներով, հստակ, միմյանց լրացնող ամբողջական համալիրով: Արդեն նշված «Հունաստանը և մենք» խմբագրականին հունվարի 24-ին հաջորդում է **«Ներգաղթի գործը»** կազմակերպական հարցերի ու նկատառումների բացատրություններով ու ճշտադրումներով. այդ թվում և՝ «... այն հավանականությունը, որ Հունաստանի կառավարությունը, ըստ իր ազնիվ խոստման ձրի չոգենավ պիտի տրամադրե Հայաստան մեկնող մաս մը գաղթականներու համար» և այլն: Եվ հենց դրան կից կրկին Վ. Մ. Միրագենց ստորագրությամբ հաստատական խոսուն բովանդակությամբ ծավալուն հոդված՝ **«Հրեաստան և Հայաստան ապրելու կարևորություններ ունի՞ն: Բաղդատություն մը երկու երկրներու միջև»** խորագրով:

Ապա մշտապես **«Հայ կյանք»** գլխագրերով վիճակագրական տվյալներ Հայաստանից. աղյուս, բամբակ, պետական դրամատուն, ռռոգում, խոտամշակում, Սարդարապատի ջրանցք... Եվ ամենակարևորը. «Հայաստանի մեջ 1923-ին ծնած են 14.000 մանչեր ու 12.530 աղջիկներ. ըսել է 1000 բնակչեն 26 ու կես ծնունդ: 1924-ի առաջին ամիսներուն մեջ 16.981 մանչ և 14.655 աղջիկ, որ 1924 տարվա ընդհանուր ծնունդին հարյուրին 75-ը կկազմի... Իսկ մեր օրերում...

Այս հաշիվները եղած են այն հասկացողությամբ, թե Հայաստան ունի մեկ միլիոնե քիչ ավելի բնակչություն, որով կտեսնենք թե անոնք հարյուրին 2,5 համեմատությամբ աճած են»[4]:

Ապա տեղեկություն, որ Երևանում ստեղծված է անապաստան երեխաների ընկերություն, երկուսն էլ ներգաղթանպաստ, գաղթականությանը ներգաղթի կոչող իրողություն: Միջընդմեջ էլ տվյալներ Հունաստանի տարբեր վայրերում ՀՕԿ-ի նախաձեռնություններից, մեծապես հանգանակություններից. ինչպես այս մեկը. «Տրամայի մեջ ալ ձեռնարկված ըլլալով ՀՕԿ-ի հանգանակություն, անցյալ կիրակի եկեղեցվո մեջ եղած բանախոսությունն մը ետք հանգանակված է 8000 տրախմի»[5]:

Եվ այսպես հայտարարություններ, ազդեր, տեղեկատվություն և զուգահեռաբար ծավալվող հիմնավոր քարոզչություն: Դրանցից ուշագրավներից մեկն էլ, ահա՛, առաջին թվից սկսած երկրորդ էջի վարից Վ. Մ. Միրագենց ստորագրությամբ տպագրվող՝ **«Թե ինչ կպատմե անգլիացի գերի սպա մը Թուրքիո մասին»** նոթով[6]: Մեկ ամսի չափ որպես թերթոն տպագրված նոթերի շարք, հայ ու եվրոպական հասարակայնության զգաստությունը հրահրող տողատակին

---

[4] Արարատ, 1925, 18 փետրվարի. Հայտնապես վիճակագրական տվյալներ 1924-ի առաջին ամիսների, որը կարող էր ձեռքի տակ ունենալ բանաստեղծը:

[5] Նույնը, 1925, 24 հունվ.:

[6] Ինչպես. «... Ասիկա իրողություն մըն էր Անգլիո համար՝ որուն բովանդակ մամուլը կրակ ու բոց կտրած երկար ատեն գրգռեց անգլիացի ժողովրդին դյուրազգացությունները և պահանջեց, որ այդքան փայլուն ազգի մը զլացվեր ապրելու իրավունքը...

քաղված ընտրովի հատվածների ուղղվածությամբ: Որոշակի նպատակով այն իմաստով, որ ի վերջո Եվրոպան նույնպես, ինչպես **Անգլիան, երբևէ կարող է ճաշակել Թուրքական բարբարոսության պտուղները:**

Եվ այսպես օրաթերթի հաջորդական բոլոր թվերում Վ. Մ. Միրագենց միևնույն հոլովումով թերթոնը շարունակում է տպագրվել մինչև փետրվարի 28-ի համարը և այս՝ «... 1571-ին Լեբանթոյի նավային աղետալի ճակատամարտովը Թուրքիո հետադարձ վայրէջքը ծայր տված» տողերով և (շար.)՝ ասել է շարունակելի, նշումով միանգամից ընդհատվում է՝ տեղը զիջելով Հ. **Դարբինյան** *ստորագրությամբ* **«Քյուրդերը և Քյուրդիստան»** *հոդվածաշարին*[7]*:*

Ընդհատվում է, բայց դրանից հետո, և նույն հունվար-փետրվարի ընթացքով օրաթերթում գտնում ենք նյութեր միայն Վ. Մ. և Վան-Միր ստորագրությամբ: Հանելուկային իրողություն, որն ինչ-որ չափով բեռնաթափվեց, երբ պարզվեց, որ նույն Վան-Միր ստորագրությամբ Հունաստանից առաքված թղթակցություններ են տպագրվել Ռամկավար-ազատականների Բոստոնում լույս տեսնող «Պայքարի» 1924-ի էջերում: Արևմտահայերենի նույն ոճական հյուսվածքով ու արտահայտչականությամբ՝ ինքնահատուկ և՛ «Պայքարում» տպված նյութերին, և՛ թե «Արարատում» զետեղված թերթոնին. ասենք մարտյան թվերում տեղ գտած «Ինչո՞ւ տրախման կ'իյնա», «Ի՞նչ է ներկա գործադուլին շարժառիթը», «Սերպիո ներքին կռիվները կմտնին նոր փուլին մեջ» հոդվածներին:

... Հայկական և հունական ահավոր ողբերգությունները դարերով բավական չեղան այնքան զորավոր կերպով ցնցելու Անգլիան, որքան բրավ ճերմակ ջարդը. քանի մը հազար բրիտաննեբու գերությունն վերադարձող սպաներ և զինվորներ թե բերանացի և թե գրավոր պատմեցին իրենց գեհենական փորձություններով տեսածները և հրահրեցին ատելությունը Թուրքին դեմ». քաղվածք հունվարի 23-ի թվից:

«... Թեև ան ունի գնահատական խոսքեր Թուրքին մասին, սակայն մեծ մասամբ ան անողոք է, երբ կխոսի անոնց նկարագրի այն ահավոր թերությանց նկատմամբ, որոնց շնորհիվ այսօր Թուրքիան ավերակույտի մը վերածված է...

Անգլիացի սպան ապա կ'անցնի նկարագրելու Թուրքը այնպես, ինչպես ինք տեսած ու ըմբռնած է իր գերության շրջանին: Իր ներկայացուցած պատկերին մեջ կճգնի դուրս բերել բուն նկարագիրը ժողովրդի մը որ մահ ու ավերածություն տարածած է հառաջդիմության կարելիություններով լի երկրի մը մեջ...»: Քաղվածք հունվարի 24-ից:

«... Անջրջելի թշնամություն մը կտիրե ուրեմն Թուրքերու և հայոց միջև, որ մշակված է վայրագ արարքովը առաջիններու և հրահրված խորունկ երկերեսանիությամբը վերջիններու...»: Հունվարի 26-ից:

«... Անգլիացի սպան կշարունակե կաշառակերության ուրիշ օրինակներ ևս տալ...». (Հասկանալի է Թուրքերի՝ Ալ. Ջ.). Հունվարի 27-ից:

«... Քութեն Անաթոլիա երկարող գծին վրա ուրկե անցած կերինները (անգլիացի՝ Ալ. Ջ.) մենք հանդիպեցանք մեր զինվորներուն ցիրուցան ինկած ոսկորներու և ծանծաղ գերեզմաններուն, և անոնց, որ մաքառելով դժվարությանց դեմ հետևատն կարեցին Տավրոսը վոհ գնացին սաստկաշունչ ցուրտ հովերուն և բծախտին...». Հունվարի 28-ի թիվ 6-ից:

Եվ անգլիացի սպաների կրած այսպիսի վայրագությունների նորանոր նմուշներ՝ որոնցով մատուցվում էր «մանրապատկերը» հայոց ահավոր ցեղասպանության...

[7] *Արարատ, 1925, 7, 11, 16 մարտի:*

Այդպիսով հանելուկայինը սեւուվեց Վ. Մ. Միրադենց ստորագրությունը կրող օրաթերթի հունվարյան համարներում տեղ գտած՝ արեւմտահայերենի շաղախով առանձնացող խմբագրականներին ու հոդվածներին: Եվ առհասարակ պահանջվեց հետեւել, թեկուզ և, այդ ստորագրությունը չկրող, բայց Հայաստանին, ՀՕԿ-ին և ներգաղթին վերաբերող քարոզչական և այլ նյութերի. ավելի ճիշտ օրաթերթում անդրադարձված ընդհանուր մթնոլորտին:

Բայց ընդհատենք և դառնանք, բուն մթնոլորտին, այն է թե՝ …

Ահա թե ինչպիսին է եղել ընդունելությունը ՀՕԿ-ի ներգաղթ կազմակերպողներին…

Հետադարձ մտաբերումներով. «Շուտով հայ գաղթականներին, այդ թվում՝ աֆիոնա-հայերիս, հայտնի դարձավ Սովետական Հայաստանի գոյությունը: Երբ ստացվեցին «Խորհրդային Հայաստան» լրագիրը, Սովետական Հայաստանի քարտեզը պատկերող փոստաքարտը և Երևանի պետական համալսարանի ու Կոնսերվատորիայի լուսանկարները. անկարելի է նկարագրել, թե ինչ ազդեցություն ունեցան դրանք հայերի վրա: Ուրախությունն ու բերկրանքը համակել էր բոլորին: Յուրաքանչյուրի փոքր տնակի զարդարանքը դարձան այդ փոստաքարտն ու հայրենի երկրի լուսանկարները, որոնցով այնքան էին հիանում, որ նրանց աչքում նսեմանում էին Աթենքի հրաշալիքները ***(Զարենցի հասցրած մասունքները*** *՝ Ալ. Զ.):*

Հայ գաղթականները, որ նոր էին ազատվել կոտորածից, թալանից և իրենք կարեկցանքի և օժանդակության կարիք ունեին, սկսեցին ակտիվորեն մասնակցել նորաստեղծ Հայրենիքի վերականգնման գործին՝ դառնալով Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) անդամ: Հարկավոր էր տեսնել, թե ինչպես էին նրանք հպարտանում՝ իրենց գրպաններում կրելով ՀՕԿ-ի անդամատոմսերը: Աթենքի Սունկուրա արվարձանի (որտեղ կենտրոնացած էր աֆիոնցիների զգալի մասը) ՀՕԿ-ի տեղական մասնաճյուղի նախագահն էր Հարություն Ջերքեզյանը (Զլդզյան)»:

Եվ ապա. «Հետագայում գաղթականների հարցը կապվեց Նանսենյան ծրագրի հետ: 65-ամյա Ֆրիտյոֆ Նանսենը 1925 թ. հունիսի 17-ին եղել էր Սովետական Հայաստանում, հանդիպել կառավարության անդամների հետ… նա Հայաստանի ղեկավարներին հայտնել էր, որ Հունաստանում, Կ. Պոլսում, Սիրիայում և այլ երկրներում հայ գաղթականների վիճակն անասելիորեն վատացել է, պետք է արագացնել ներգաղթը: Այնուհետև, վերադառնալով Եվրոպա, տառապյալ ժողովրդների այդ հետեւողական ջատագովն ու պաշտպանը 1925 թ. սեպտեմբերի 12-ին Ազգերի Լիգայի ընդհանուր ժողովում զեկուցում է, որ հայ գաղթականներին տեղափոխելու ամենահարմար տեղը Սովետական Հայաստանն է, և որ վերջինիս կառավարությունը պատրաստ է սիրահոժար կերպով ընդունել գաղթականներին: Համրահայտ բեւեռախույզն իր խոսքը ավարտում է այսպես. «Մի ռազմանավի կառուցման համար ծախսվում է յոթ միլ. ստերլինգ, որը որեւէ բարիք չի պարգեւում մարդկությանը, մինչդեռ Հայաստանի համար խնդրված մեկ

միլիոն ստերլինգ փոխառությունը պետք է վերաշինի մարդկային օջախներ, երջանկություն պարգևի և ավելացնի աշխարհի ընդհանուր բարգավաճումը»:

Այնուհետև.

... Հունաստանից հայրենադարձների առաջին քարավանը դուրս եկավ 1924 թ. օգոստոսին Սալոնիկ քաղաքից՝ հետը տանելով 1600 մարդ (ներառյալ նաև ճանապարհին Կ. Պոլսից վերցրած հայ գաղթականներ): Նույն տարվա նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին Սալոնիկից հայրենադարձվեց ևս 1247 մարդ: Հաջորդ տարին Պիրեա նավահանգստում խարիսխ գցած «Խարլամբոս» ապրանքատար խոշոր շոգենավը վերցրեց Աթենքի և Պիրեյի հայ գաղթականների մի մեծ խմբի, այդ թվում՝ շատ աֆիոնցիների և 1925 թ. նոյեմբերի 7–ին դուրս եկավ բաց ծով, ճանապարհին Սալոնիկից, Կավալայից, Դրամայից, Դեդեաղաջից վերցնելով նոր ընտանիքներ: 15 օր անց, 3120 հոգուց բաղկացած քարավանը հասավ Բաթումի նավահանգիստ, իսկ այնտեղից երկաթուղով ներգաղթողներն ուղևորվեցին Սովետական Հայաստան: Նրանց ուղեկցելու էին եկել Հունաստանում ՍՍՀՄ դեսպան Վ. Պ. Պոտյոմկինը, ներգաղթի լիազոր Դ. Շահվերդյանը, հայ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ»[8]:

Ուրեմն վերադառնանք Աթենք... «Արարատ»–ին:

---

[8] Տե՛ս Կ. Ա. Ջերքեզյան, Աֆիոն–Կարահիսարի հայ գաղթօջախը (Պատմաազգագրական ակնարկ), 1986, էջ 132–133, 135–136:

Եվ քանի որ այդ գաղթօջախի ծնունդ է և Կոմիտասը՝ վերաքաղենք որոշ հատվածներ ու՝ լրացումներով. «... ավանդաբար մեզ է հասել մի պատմություն,— գրում է Ջերքեզյանը,— ըստ որի յոթ ընտանիք՝ «Էբրեկան Թորոս», «Հասո Պողոս» և այլ անուններով, այստեղ են եկել հավանաբար Ղարաբաղի կամ Նախիջևանի կողմերից, 16–րդ դ. երկրորդ կեսին:

Ուշագրավ է Կուտինայի (–որտեղ ծնվել է Կոմիտասը՝ Ալ. Զ.) և Կարահիսարի առաջնորդ Մկրտիչ վարդապետ Աղունունցի վարկածը, ըստ որի Աֆիոն–Կարահիսարի հայ գաղթավայրը հիմնադրվել է Պարսկահայքից, գուցե և Ղարաբաղից եկած հայերի կողմից, 1576 թ.: Հեղինակն այս կարծիքը հիմնավորում է նրանով, որ քաղաքի հայկական եկեղեցում պահված է եղել մագաղաթե մի հիշատակարան, ուր գրված է եղել Աֆիոն–Կարահիսարի գաղթավայրի հիմնադրման տարեթիվը...

Պատմությունից հայտնի է, որ սուլթան Սուլեյմանը (1520–1566 թթ.) Պարսկաստանի դեմ կատաղի կռիվներ մղելուց հետո 1554 թ. գրավում է Երևանի ու Նախիջևանի շրջանները, բազմաթիվ հայեր տեղափոխում են Կ. Պոլիս և Փոքր Ասիայի արևմտյան մասերը: Սուլթան Մուրադ Գ.–ն (1574–1591 թթ.) դարձյալ պատերազմ մղելով Պարսկաստանի դեմ՝ Ատրպատականից և Վրաստանից բազմաթիվ գերիներ է տեղափոխում Կ. Պոլիս և շրջակայք... (Տե՛ս Հ. Միքայել Չամչյան, Պատմություն հայոց, հ. 3, Վենետիկ, 1786, էջ 529)»:

Նշվում են այլ վարկածներ ևս, որ վերջավորվում է սույն տողերով. «... Աշխատող ձեռքերի, հատկապես արհեստավորների նկատմամբ եղած պահանջարկը միամացրել է տեղացի թուրքերի հայաշինջ մոլուցքը» (էջ 20–21):

Լրացնենք, թե ճշտենք. գաղթել են և Նախիջևանի Գողթան գավառից՝ այդ թվում Ցղնա գյուղից. որքանով Կուտինայում են պապատան գտել Կոմիտասի Գողթան–ցղնացի պապերը: Եվ Կուտինա իր «աչքաղուրկ հորաքրոջ Կյուլլինե Սողոմոնյանին» կամ նրա որդուն՝ գրած է փոխանցում Կոմիտասը՝ տ. Օրմանյանի միջոցով: Տե՛ս Կոմիտաս, Նամակներ, 2000 էջ 179–181: Նույն տեղում Մ. Բարայանին 1910 7 դեկտեմբերի, Զմյուռնիա տարեթվով նամակում էլ Կոմիտասը հայտնում է թե՝ «... ես այս ամառն այստեղ էի սկսելով հայրենիքիցս՝ 5 համերգ կազմակերպեցի» (էջ 25):

* * *

Թվերի նույն հաջորդականությամբ լույս են տեսնում հոդվածաշարեր. **«Ճաշեկան տեսակցություն մը Մոսկվայէ վերադարձող ամերիկացու հետ»** Ա, Բ, Գ մասերով, նույնպիսի մասերով՝ **«Ցեղային հարցը Ռուսիո մէջ և Հայոց դիրքը Խ. Միութեան հանդէպ»**[9] անշուշտ դրական՝ հակառակ ցարական ժամանակների, դրա կողքին էլ **«Քաղաքական պայքարը Ռուսիո մէջ»**: Դրանց ուղեկցող օրը օրին ծանուցումներ «Ներգաղթի գործից». մեկ, որ «Կտեղեկանանք, թե ՀՕԿ–ի Աթենքի վարչությունը իր մասնաճյուղերուն հրահանգ տված է, Սելանիկի կեդրոնեն եկած ցուցմունքին համաձայն հիմնովին պատրաստելու Հայաստան մեկնիլ փափաքողներու ցանկեր: Ասոնք պիտի ունենան միայն վիճակագրական հանգամանք. ուէ հանձնություն չեն ենթադրեր: Սելանիկի կեդրոնը և Աթենքի վարչությունը արդեն դիմած են Երևան և Կ. Պոլիս պր. Շահվերդյանի, որոնցմե գալիք վերջնական հրահանգին վերա է, որ պիտի կրնան Հայաստան մեկնիլ գաղթականները»[10]:

Սրան էլ երկու օր անց պետք է հետևեր այս «Ազդը». «ՀՕԿ–ի կեդրոնական վարչության հրահանգին համաձայն տեղվույս մասնաճյուղը սկսած է Հայաստան մեկնիլ փափաքողներու արձանագրություն: Արձանագրությունները տեղի կունենան ամեն օր կեսօրե վերջ ժամը 3–6: Ամերիկյան վարժարանին կից վրանները. Լիբազմա: Արձանագրությունները ձրի են և պիտի տևեն մինչև հունվ. 31: Լիբազմայի մասնաճյուղի վարչություն»[11] և այլն:

Այսպես օրը օրին ավելի է աշխուժանում–հարստանում լրագրի հայրենիքամետ քարոզչությունը՝ ամեն դեպքում ընդդեմ կուսակցական կենտրոնախույս երկպառակությունների: Լայն զանգվածներին մատչելի՝ Հայաստանի հողի վրա պիտի ապրենք, այդ «հողի վրա ալ վերջին շունչերնիս պիտի փչենք»[12]: 1924–ին Հայրենիք ներգաղթածի նամակից տողեր.

Ո՛վ հայրենիք, ծաղիկ համակ,
Ընդունեն ծոցդ ամենքս անքույթ
Հյուսենք գլխուդ ոսկի պսակ...,[13]–

չափածո կոչերգի կողքին տարաբնույթ թղթակցություններ, հակիրճ ու ընդար-

---

Կ. Ա. Ջիքբեղյանն էլ իր գրքում՝ անդրադառնալով Կարահիսարի դեղատեսիլ եկեղեցուն գրում է. «Այնտեղ հաճախ են եկել բարձրագույն հոգևոր դասի ներկայացուցիչներ և քարոզ կարդացել: Այսօր էլ աֆիոնցի ծերունիները հիշում են 1911 թ. Կոմիտաս վարդապետի այդ եկեղեցում մատուցած պատարագն ու քարոզը» (էջ 96):

Տե՛ս նաև Հ. Գ. Աղայան, Դանուշ Շահվերդյան, 1975, էջ 161 և այլն:

[9] Նույնը, 26 հունվ.:

[10] Նույնը, 25 հունվ.:

[11] Նույնը, 28 հունվ.:

[12] Նույնը, 29 հունվ.:

[13] Նույնը, 21 փետրվ.:

ձակ տեսութիւններ, ինչպես Հ. Մ.–ի՝ լրագրի խմբագիրներից Հրանտ Սամուէլեանի ստորագրութեամբ զետեղված «Հակիրճ տեսութիւն մը Խորհրդային Հայաստանի մասին» (Ա, Բ, Գ, մասերով), որ հայտնապես տեսութիւնն է Զարենցի ու Իսահակյանի վեննաիկյան զրույցների։ Պոլսից սկսած Զարենցի հարցազրույցներին արձագանքող նմանօրինակ ելակետերով ու մտածումներով։ Ահա այսպիսիք, ինչպիսիք հերթականորեն քաղվում են նշված մասերից. «Ա... Մինչդեռ Խ. Հայաստանի ներկա կառավարութիւնը փաստերով ու թվանշաններով կխոսի, ահա, նախորդներու ու այժմյաններու աչքառու ու համոզակիր տարբերութիւնը... ինչ կտեսնենք այսօր. կառավարութիւն մը՝ որ Սովիեթ Ռուսիո միութեան մեջ, անոր կողքին կվայելե բարոյկան ու նյութական օժանդակութիւն, պաշտպանութիւն և ներքին անկախ ինքնավարութիւն...

Բ. Հայ գաղթականը թող վստահ ըլլա, թե իր դատը հանձնված է լավ ձեռքերու, պ. Երզնկյան ինչպես Պրյուքսելի, Բարիզի, նմանապես Մանչեսթրի մեջ գտած է գրկաբաց ընդունելութիւն: Անոր համոզիչ խոսքերը ազդած են մեր բարեկեցիկ ու հարուստ դասակարգին վրա, որոնք շոշափելի կերպով ընդառաջ գացած են պ. Երզնկյանի փափաքներու...

Գ. Երբ Ռուսաստան վերստանա իր կայունութիւնը, բնավ կասկած չկա, թե իրարու ձեռք պիտի կարկառեն Եվրոպա և Ռուսաստան, և այն ժամանակ պիտի բնորոշվի խալամ պետութեանց ճակատագիրը, որոնց կարգին ես Թուրքիա:

Բայց նմանօրինակ մերձեցումի մը պահուն, եթե պատերազմի մը հավանականութիւնը ուրվագծվի, իսկ Ռուսիո պարտականութիւնը պիտի ըլլա պաշտպանողական միջոցներ հայթայթել սահմանագլխի վրա, ամենե ավելի անմիջական վտանգի ենթակա երկիրներուն, որոնց կարգին է նաև Հայաստան:

Հետևաբար՝ ապագա և թերևս հեռավոր ապագայի մը մեջ պատահելիք դեպքերուն մղձավանջովը, այժմեն տագնապելու որևէ տեղի մը չունինք:

Կարծվածեն ավելի երկար շրջանին մեջ պետք է ջանա արտասահմանի հայութիւնը զորացնելու Խ. Հայաստանը, կարելիութիւններ ստեղծելով անոր՝ որպեսզի հետզհետե հաջողի պատսպարել արտասահման դեգերող հայութեանը, որպեսզի երկիրը տնտեսապես բարգավաճի ու հարստանա և ապագա ամեն պատեհութեան առջև հաջողի կուրծք տալ և մի անգամ ընդմիշտ ընդարձակել իր սահմանները դեպի հարավ և արևմուտք»:

Ստեղծված կացութեան մեջ միակ ելքը դա էր, և «Արարատը» ջանք չէր խնայում, որ **ՀՕԿ–ը դառնա «Ամեն հայ գաղթականի խրճիթին մասնաճյուղը», հունահայութիւնը վերադառնա հայրենիք**[11]:

Ուրեմն շարունակենք օրաթերթի հունվարյան համարների ընդհանուր տեսութիւնը՝ պարզ է, մինչև այստեղ ուրվագծված որոշակի պարունակներով ու հետքերով, որոնցով պետք է հիմնավորվի բանաստեղծի մասնակցութիւնը ինչ-

[11] Նույնը, 27, 29, 31 հունվ.:

պես «Արարատի» հիմնադրմանն ու աշխատանքներին, այնպես էլ ՀՕԿ-ի գործունեությանը՝ հանուն հունահայության ներգաղթի:

Թվում է, **Վ. Մ. Միրագենց** ստորագրության նախորդ էջերի ընդգծումները՝ Հայաստանին ու ներգաղթին վերաբերող նյութերի մատուցումով, պետք է որ հուշած-հաստատած լինեն նվաստիս ելակետը: Այն է թե՝ **Վ. Մ. Միրագենց** անվան տակ թաքնված է Զարենցը: Ըստ այդմ, կարելի է կարծել, հասել է փաստարկներն ի մի բերելու պահը, որքանով փետրվարի սկզբներից արդեն **Միրագենցը որպես այդպիսին** անհետանում է օրաթերթի էջերից, և միակ բացառությունը, ինչպես արդեն ասվեց, մնում է Թերթոնի շարունակվող տպագրությունը:

Եվ քանի որ խորապես համոզված եմ, որ մտահղացումներով, սկզբունքային ելակետերով անկասկած է Զարենցի ամենաեռանդուն մասնակցությունը օրաթերթին, հարկ է զգացվում անդրադառնալ ու քաղել ևս լրացուցիչ հատվածներ որոշ խմբագրական էջերից, հոդվածներից և այլ նյութերից: **Հունվարի 27-ի թվում տեղ գտած «Ո՞ր օրվան կսպասենք» խմբագրականում,** օրինակ, կարդում ենք. «... Մենք կսիրենք հաճախ քաղաքականությամբ զբաղվիլ, մեզմե յուրաքանչյուրը իրեն համար դիվանագետ է, և Հայաստանի մասին վճիռներ կարձակե, վախեր կհայտնե կամ հակակրանքներ կտածե[15]: Ասոնք բոլորն ալ անտեղի են: Մեր առջև դրված է ավերակ երկիր մը վերաշինելու աշխատանքը, ուրիշ ոչինչ: Բույն մը շինելու ատեն թռչունը չի խորհիր, թե վաղը փոթորիկ կրնա գալ և ավերել զայն: Թռչունի մը չափ խելք ունենալու ենք, և մեր բույնը շինելու համար երկար-բարակ մտածելու չենք: Ան որ իր բույնը չի շիներ, կմնա թափառական ու անտեր»:

Այս տողերն ընթերցողը անկարելի է թե վայրկենապես հուզականորեն չզգա, որ մակարդանյութը արևելահայաստանյան է, և չհիշի Ղ. Աղայանի «Հիշողությունը».

Ծիծեռնակը բույն էր շինում
Ե՛վ շինում էր, և՛ երգում,
Ամեն մի շյուղ կպցնելիս՝
Առաջվա բույնն էր հիշում...

Մեկ անգամ էր նա բույն շինել
Եվ շատ անգամ կարկատել,
Բայց այս անգամ հետ դառնալիս
Բույնն ավերակ էր գտել...[16]

---

[15] Ըստ երևույթին ազգային քրոնիկ հիվանդություն...
[16] Ղ. Աղայան, Երկեր չորս հատորով, հ. Ա, 1947, էջ 69:

Էապես Հովհ. Հովհաննիսյանի՝

Քեզ ըսպասող չըմընաց,
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն,
Գովքըդասող չըմընաց,
Ջուր ես գալի, ա՛յ գարուն:

Սև–մութ պատեց աշխարհին,
Սար ու ձոր դառան արին,
Մեզ վա՛յ բերեց էս տարին–
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն...–[17]

բանաստեղծական վշտաշունչ արձագանքներ անցած դարի վերջերի հայոց ջարդերի՝ Օսմանյան Թուրքիայում:

Հիշարժան է, որ քարոզչության ծավալման ընթացքով մեկ–երկու անգամ հանդիպում է և **«Ազգային տուրք»** *բառակապակցությունը. Թերևս, փոխառնված հրեաներից, և ահա, միանգամից որպես ծավալուն խմբագրական* **«Ազգային տուրք»** *գլխատառերով հայտնվում է օրաթերթի 1925–ի փետրվարի 4–ի թվի ճակատին. ավետաբեր–հեռահար այսպիսի տողերով. «... Ազգային տուրքի գրությունը ինքնին օգտակար է ազգային շատ մը պետքերու բավարարելու համար: Այս տուրքին ձևը և գանձումի կերպերը չէ որ կշահագրգռեն մեզ այսօր, երբ տակավին, խնդիրը օրինավորապես չէ դրված սեղանի վրա: Կ'ուզենք միայն խոսիլ մեզ ներկայացված իրողության մը մասին և քննել, թե որ աստիճան օրինավոր ու պատշաճ է այսօրու մեր ազգայիններուն պարտադրել «ազգային տուրքը»:*

Եվ սակայն, տակավին օրինավորապես սեղանի վրա չդրված, չպարտադրված **«ազգային տուրքը»** *իրողություն էր, որքանով Հունաստանում հունվարի 30–ին՝ «Բասնթիի մեջ ՀՕԿ–ի ընդհանուր հանգանակությունը հասած է 20.000 դրախմիի: Գավալայի հանգանակության գումարը հասած է 14.000 դրախմիի: Սելանիկի հանգանակությունը բարձրացած է 31, 170 դրախմիի»:*

Հայտնապես այս գումարներից էլ թերևս Զարենցի հրահրումով կամ նախաձեռնությամբ ուղարկվում են Հայաստանի համալսարանին, ի պատասխան որի «Արարատի» մարտի 12–ի թվում գտնում ենք այս վավերագիրը. **«ՀՍԽՀ Պետական համալսարան ՀՕԿ–ի Հայաստանի Կեդրոնական վարչություն**

Ստացանք Սելանիկի երիտասարդական միության թատերական բաժնի կողմից սարքված ի նպաստ Պետական համալսարանիս ներկայացման հասույթը, ասկի 52.18.9 ընկ. Դ. Շահվերդյանի միջոցով, որի համար վարչությունս հայտնում

[17] Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 2, 1964, էջ 60:

է իր անկեղծ շնորհակալությունը, գնահատելով այն սերը և եռանդը, որ գոյություն ունի Հունաստանի հայ աշխատավորության մեջ հանդեպ Հայաստանի Պետական համալսարանը:

Ռեկտոր՝ **Հակոբ Հովհաննիսյան**

Վարչության քարտուղար՝ **Վահան Թոթովենց**»[18]:

Հունվարի վերջի այդ օրերին էլ, բոլոր նշաններով Չարենցը պատրաստվում էր հրաժեշտ տալ Հունաստանին, Աթենքին ու «Արարատին»: Ըստ երևույթին որոշակի պայմանավորվածությամբ կամ Դ. Շահվերդյանի հետ, կամ էլ վիզայի հետ կապված հանգամանքներով, քանի որ, ինչպես կարելի էր նկատել, ներկայացումների ցուցադրումը սկզբից էլ նախատեսված էր մինչև հունվարի 31-ը: Ահա այդ վերջին օրերին էլ վերաբերում են իր երկու ուղեցույցային հրապարակումները «Արարատի» էջերում: Դրանից օրաթերթի հունվարի 29-ի թվում տեղ գտած **«Գրիգոր Էոլմեզյանի հիշատակին»** խոսքը՝ թե՛ վերնագրով, և թե՛ նկատելիորեն անկապ-կցկտուր շարադրանքով, երևի թե գաղտնագիր է նաև տարօրինակ հղացումով՝ որպես մահից առաջ հոգեվարքային հասցեագրված նամակ՝ պատգամանման այսպիսի վերջնամասով. «... Շատ աննպաստ լուրեր կը հասնին մեր քույրերուն ու եղբայրներուն մասին, որոնց տառապանքը միշտ մեր սրտերը կայրուեն. նպաստներ յումպետս կըծախսվին և շատ գաղթականներ թշվառության մեջ կը տվայտին: Ես համամիտ եմ, որ նպաստները ծախսվելին բացարձակապես այս գաղթականները քիչով շատով Հայաստան փոխադրելու, ինծի համար թող Հայաստանի մեջ կորսվին անոնք, եթե կորսվիլ մը կա, քան թե հիվան-

[18] Դրամագլուխը մի զգալի չափով էլ գոյացել էր երիտասարդական թատրոնի «Բաջն Վարդան Մամիկոնյան» պիեսի ներկայացումներից:

Կարելի է ենթադրել, որ Դ. Շահվերդյանի հետ Չարենցը ինքնագոհ տողեր պետք է հղած լինի Հայաստանյաց ՀՕԿ-ի վարչության քարտուղար **«Սիրելի Վահանին»** մեր երևելի Վահան Թոթովենցին,— լեփ-լեցուն մաղթանքներով Մայր համալսարանին:

Ինչ խոսք հանգանակությունը զերծ չի մնում և զեղծարարություններից. այսպես. «Արարատը» մարտի 27-ի թվում **«Հայտարարությամբ»** տեղեկացնում էր. «ՀՕԿ-ի Վոլոի մասնաճյուղի վարչությանը, որ վավերացված էր Աթենքի շրջանային վարչութենեն, անցնելով զանազան անպատասխանատու անձերու ձեռքը, ոչ միայն չարաչար գործած է իրեն տրված իրավասությունը, այլ ՀՕԿ-ի անունով ժողովուրդեն հանգանակած կամ գանձած դրամները ըստ կանոնագրի զրկած չըլլալով Վարչությանս, ավելի զատ՝ փոխանակ իրեն զրկված պաշտոնագրի մը ուղղակի պատասխանելու, մամուլի մեջ անպատշաճ հրատարակություններ ըներուն պատճառով Վարչությունս որոշած է զայն լուծյալ հայտարարել և ձեռնարկված է հիշյալ քաղաքին մեջ ՀՕԿ-ի նոր վարչության մը կազմության և ՀՕԿ-ի դրամները յուրացնողներու մասին իրեն վերապահած է ընել հարկ եղած կարգադրությունը:

Դիվան
Տորթ. Էնֆիենճյան
(կնիք)

Ատենադպիր
Հ. Պողոսյան
Աթենք, 26 մարտի, 1925»:

դութիւններն և օտարանալու պատճառներն, այսօր գաղթականներն մեծ մասը, որոնք իրենց ապրուստը ճարելու համար ասդին–անդին, աննշան գիւղեր ցրւած են, իրենցմէ չեղող, օտար ստվար բնակչութեան մը մէջ, ապահով եղէք թէ անոնք կորսւած են: Դուք ալ միշտ հեռատեսութեամբ ու խոհեմութեամբ գործեցէք այս ուղղութեամբ, այսինքն դէպի Հայաստան, այս պէտք է ըլլա միակ ծրագիրը և կարգախօսը բոլոր սրտացավ և հայրենասէր հայերուն, վասն զի հոն է առայժմ միակ փրկութիւնը»:

Եվ ինչ եք կարծում. ուղիղ էջի կենտրոնական մասում բնագրի–պատգամի պես՝ «… **Դեպի Հայաստան, միշտ դեպի Հայաստան, այս պետք է ըլլա միակ ծրագիրը և կարգախոսը բոլոր սրտացավ ու հայրենասեր հայերուն, վասն զի հոն է առայժմ միակ փրկությունը»** *– առանձնացված–ընդգծված այս «Նամակի» տակ ի՞նչ ստորագրություն լինի դրված. հաջորդ էջի ամենավարի եզրից համեստ աննկատ՝* ***«Ց. Տերենց»***:

Օրաթերթի նախորդ թվերում Վ. Մ. Միրագենց, Վ. Միրագենց… և, ահա՛, այս միակ անգամն էլ ***«Ց. Տերենց»***:

Բայց օրաթերթի հունվարի 30–ի թվում էլ մի վերջին անգամ վերստին Վ. Մ. Միրագենց, և այս անգամ «Նամակի» փոխարեն իբրև ողջ հայությանը հասցեագրված թուղթ՝ «Ի՞նչ է ՀՕԿ–ը և ինչո՞ւ պետք է օգնել անոր» վերտառությամբ:

Ուրեմն խորապես համոզված, որ պատմական այդ վավերաթուղթը պատկանում է Զարենցի գրչին, կարծում ենք պետք է որ քաղվի ու հնչեցվի ամբողջությամբ: Եվ այսպես գրում է Զարենց–Ց.Տերենց–Միրագենցը.

«Ազգային բոլոր կազմակերպութեանց մէջ ՀՕԿ–ը կը գրավէ բոլորովին բացառիկ դիրք՝ իր նկարագրին և առաքելութեան բերումով: ՀՕԿ–ը հայութեան մէջ նոր ճամփա մը կ՚բանա, որ բոլորովին անծանօթ կմնար մեր ազգին՝ երկար ատրեններե ի վեր: Մենք՝ դեպքերի բերումով սորված էինք մուրացիկի կեցվածքով դուռը բախել աշխարհի մեծավորներուն՝ պատառ մը չոր հացի համար՝ փրկելու մեր որբացածներուն, անտեր ու անօթևաններու կյանքը: Դեպքերը այսօր շրջված են, արտակարգ հեղաշրջումներ տեղի ունեցած են մեր ֆիզիքական կյանքի և մտայնութեան մէջ: Այդ փոփոխութեանց հարազատ հայելին է նույն ինքն ՀՕԿ–ը, որ մեզ կբերե իրարօգնութիւն, ինքնապաշտպանութեան վեհմ գաղափար, մղիչ ուժը: Անոր առաջնորդութեամբ ու ներշնչումովը աստիճանաբար մեր ուսերեն վար պիտի իյնան մուրացիկի տոպրակները և պիտի սկսենք շակել մեր կորացած քամակները, որոնց վրա դիզված են արտաքին աշխարհի կողմե արդահատանքով մը մեր երեսին նետված ողորմութեան փշրանքները: ՀՕԿ–ը մեզ կմղե գործել ազատ մարդու կեցվածքով և ճգնել պատվավոր տեղ մը գրավել ազատ ու իրենց ուժին գիտակից ազգերու շարքերուն մէջ: Ահա թե ՀՕկ–ը իր ընդհ. գիծերուն մէջ ինչ բանի կձգտի:

Ամեն հայ պարտավոր է ուրեմն ինքնագիտակցութեան և իրարօգնութեան այս վեհմ շարժումին նպաստել, թե՛ բարոյապես և թե՛ նյութապես: Եթե կա հայ մը,

որ ի վիճակի չէ իր լուման բերել Հայաստանի նյութական վերաշինության գործին, սակայն գոնե կրնա մեկ բան ընել. – սատարել անոր վերածնության իր բարոյական կորովովը: Հայաստան որքան որ պետք ունի նյութապես առատաձեռն զավակներու, նույնքան և թերևս ավելի պետք ունի ուղղամիտ, ճշմարիտ Հայրենակիցներու: Ըլլա Հայրենասեր, մաքրասեր, ընտանեսեր, պարկեշտ, Համեստ, ուղղամիտ, մեծագույն դրամագլուխն է մեծագույն ազգերու: Ընդունված իրողություն մըն է թե անգլիական ազգը բարոյական տեսակետով առաջնակարգ տեղ մը կգրավե ազգաց շարքերուն մեջ, որովհետև անգլիացի ժողովուրդը դարերե ի վեր մեծ կարևորություն տված է իր զավակներուն ներքին կյանքի զարգացման: Նույնպես Հաստատված իրողություն մըն է, թե անգլիացին եղած է բարոյական մեծ ուժ մը ճիշտ անոր Համար, որ ամեն բանե առաջ եղած է նաև կրոնասեր: Եվ ոչ ապաքեն Հայերն ալ սկզբեն ի վեր եղած են կրոնասեր և իրենց Ս. Եկեղեցիին Համար բյուր զոՀաբերություններ ըրած են: Ինչո՞ւ կրկին վերադարձ մը չկատարել բարոյական այդ Հիմին, որուն վրա կարելի է կառուցանել մեր Հայրենի երկրին փառավոր շենքը: Առանց ճշմարիտ բարոյականի ազգեր դատապարտված են անՀայտանալու, ինչպես պատաՀեցավ Հռոմի Հսկա կայսրության: Բարոյական ուժ կը կազմե ներքին ամենաէական զսպանակը բոլոր ազգերուն, առանց այդ զսպանակին՝ ազգեր կդառնան խաղալիք ժամանակի փոթորիկներուն և կկորսցնեն վերապրելու կորով ու ընդունակություն: Երբ ներքին այդ ամրակուռ կյանքին կմիանա և կգործակցի նաև ամրակուռ քսակը՝ այն ատեն ազգ մը ապագա կունենա ընդարձակ կարելիություններ Հրաշալիքներ գործելու:

Հայաստանն այսօր կգտնվի վերաշինության իր սկզբնական շրջանին մեջ և կսպասե որ իր զավակները ՀՕԿ–ի միջոցով բերեն իրենց լումաները, բարոյական ու նյութական՝ սատարելու Հայրենիքին բարօրության: Եվ կարծեմ թե մեր մեջ չկա Հայ մը օր գոնե դույզն չափով մը չի կարենա օժանդակության այս երկու տեսակներուն մեկովը օգտակար ըլլալ մայր աշխարՀին: Սակայն կ՚ըսվի թե ժամանակին մանուկի մը ցույց տվեր են փայլուն ոսկեզօծ թուղթ մը և դեղին ոսկի մը և Հարցուցեր են. «ասոնցմե ո՞րը կ՚ուզես»: Ոսկին կուզեմ թուղթին մեջ փաթթված, պատասխաներ է ուշիմ մանկիկը: Հայաստան մանուկը այսօր մեզմե կը պաՀանջե մեր լումաները փաթթված մեր բարոյական կորովին մեջ, և ով որ չանսար այս Հրավերին ոչ միայն Հավատարիմ չէ իր նորածագ Հայրենիքի նվիրական շաՀերուն, այլ նաև ոտնակոխ կ՚ընե իր և իր զավակներու սեփական իրավունքներն իսկ և կզրկե ինքզինքը Հայրենիք մը ունենալու մեծագույն պարծանքեն ու Հաճույքեն, միշտ մնալով եննթակա օտարներու քմաՀաճույքին: Ով կ՚ըլլա և ով որ Հայրենիքին կ՚օժանդակե ինքզինքին օժանդակած կ՚ըլլա: Այս ճշմարտությունը շրջելով կրնանք ըսել. ով որ կգործե ՀՕԿ–ի դեմ՝ գործած կ՚ըլլա Հայրենիքին դեմ՝ և ով դեմ կելլե Հայրենիքին՝ դեմը ելլած կ՚ըլլա բուն իսկ շաՀերուն դեմ: Աքացիին դեմ կից զարնելը դժվար բան է, ՀՕԿ–ի դեմ գործելը աղետալի ամոթալի է: ՀՕԿ–ը կազմակերպություն մըն է, որ կմարմնացնե Հայաստանը, անոր իտեալները ու բաղձանքները, աՀավոր բան է ազգի խոսալը ընդոստնել, քամաՀ-

րել, ծաղրել և առ ոչինչ համարել: Կուսակցության մը դեմ խոսիլը հասկանալի է, զայն ծաղրանքի նշավակ ընելը կարելի է, սակայն ինչպե՞ս կարելի է խոսիլ ՀՕԿ-ի դեմ, երբ անոր առաքելությունը այնքան թափանցիկ ու մաքուր է և հեռու հատվածական ոգիեն: ՀՕԿ-ի և հայ ժողովրդի շահերը նույնացած են, մեկը մյուսեն կարելի չէ անջատել, անանկ որ մեկուն վնասելով, մյուսին վնասելը անխուսափելի կդառնա:

Ամեն ինչ ՀՕԿ-ի համար և ՀՕԿ-ը հայրենիքին համար: Վ. Մ. Միրագենց»

Այսքան բյուրեղյա, այսքան զուլալ, մաքրամաքուր պատգամներ...

Եվ հաջորդ կամ երկրորդ օրը բանաստեղծը թողնում է Աթենքը, այսպես, թերևս, մեկ-երկու օրով՝ ՀՕԿ-ի Հունաստանյան կենտրոնական վարչության հաշվետվության համար լինելով Սալոնիկում,— ճանապարհվում է Հռոմ: Իր հետ տանելով հերթական հայրենանվեր վսեմաշուք գործունեության գաղտնի այս էջը ևս. Աթենքի Կիլիկյան ընթերցասրահում հավաքված գաղթական բազմության առջև հանուն ներգաղթի հույսի և հավատի անմոռաց բանախոսությամբ, հրապարակախոսական հավետ օրինակելի գործունեությամբ...

Եվ բնորոշ փաստարկ է. պր.ներ Վ. Մ. Միրագենցի և Հ. Պողոսյանի փոխարեն փետրվարի 8-ին կազմակերպված հերթական հրապարակային բանախոսության բանախոսը՝ **ըստ փետրվարի 6-ի «Արարատի» ծանուցման արդեն մեն-մենակ՝ Հովհաննես Պողոսյանն է** (լրիվ անուն-ազգանունով), որ «կբանախոսե ՀՕԿ-ի կազմակերպության և Հայաստանի օգնության գործի վրա»:

Հասկանալի է, **Վ. Մ. Միրագենցի «Ի՞նչ է ՀՕԿ-ը և ինչո՞ւ պետք է օգնել անոր» պատգամային խոսքի եռակետային սկզբունքներով ու ոգով...**

Վկայություն հանուն Հայոց եկեղեցու
(Հավելված)

Հայոց եկեղեցու պատմական դերի գնահատություն են Ջդ. պահպանվող Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանյանի «Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը ու ներկայացությունը» գրքում (1912, Կ. Պոլիս, երկրորդ տպագրությունը) առկա Չարենցի ընդգծումները:

Գրքի վերջին 193—194 էջերում **բանաստեղծը կարմիր մատիտով ընդգծել է** (ամենայն հավանականությամբ երևանյան թվականներին) այս ծավալուն հատվածները. «... Այդ ամեն եղելությունները բացարձակ կերպով կը հաստատեն, որ Հայոց ազգային եկեղեցին եղած է այն միակ հոդակապը, որ Հայկա սերունդին ցրված մնացորդները կրցած են իրարմե անքակտելի պահել, և իբր մեկ ազգ պահպանել: Եկեղեցին եղած է, որ անվիճելի կերպով ներարկած է անոր մեջ ներքին կենսականության տարրերը և պատրաստած է արտաքին միջոցներ և գործնական եղանակներ ու գործառնական ձեռնարկներ՝ հայ ազգության գոյությու-

նը ապահովելու: Եկեղեցվո շնորհիվ է, որ Հայությունը մնացած է իբրև հատուկ ու ինքնուրույն մարմին մը, որ դարերու այլայլությանց և արկածներու բռնության ներքև ալ, ինքն իր մեջ շարունակվելով միշտ նույն մնացած է:

Հայը, դարերն ի վեր քաղաքական միջոցեն զրկված, սերտ փարած է եկեղեցական կյանքին, և զայն ճանչցած է իբրև փրկության խարիսխ մը յուր ալեկոծ կյանքին մեջ: Անոր շնորհիվ է, որ թեպետ վտանգված ու տկարացած, բայց վերջնապես կրցած է յուր գոյությունը պահել, և մահացու արկածներու մեջ կյանքը ապահովել: Այդ մեծ զորությունը, որ Հայուն անցյալին վրա գործունյա և արդյունավետ ազդեցություն ունեցավ, չէ դադարած տակավին յուր կենսական ոգին ներշնչել, և պիտի շարունակե ալ ապագային միևնույն փրկարար դերը պահել, քանի որ նույնը կը մնա քաղաքական ու կենցաղական կացության պահանջը: Փորձառական ճշմարտություն է, որ ուր քաղաքական կուսակցության կապը կը պակսի, եկեղեցական կապակցության կապն է, որ զայն կը փոխանակե, և միության ու գոյության պետք եղած ուժը կ՚ընձեռե: Այս կերպով Ազգային Եկեղեցին կը լինի դարձյալ Հայրենիքին հողին ներկայացնող երևելի նշանը, և սրտի գերազանց ձգտումներուն ոգևորություն բաշխողը:

...Միթե Բարվոքման փափագը՝ ամեն անհատի բնական և անբռնաբարելի իրավունքը չէ՞: Սակայն, եթե փափագը ինքնաբերաբար կը բղխի սրտեն, անոր ընթացքը կը կառավարվի միտքեն: Հայերը իրականության մասին շատ հստակ ու որոշ գաղափարներ ունեին, որ մտացածին եղջերուաքաղերու վտանգավոր բավիղներու մեջ չմոլորին: Անոնք չէին կրնար չտեսնել, թե իրենց հայրենական բնաշխարհային տարածությունը երեք հզոր պետությանց բաժանված է, թե իրենք սփռված ու ցրված են աշխարհի ամեն անկյունները, թե իրենց մտավորական ու նյութական կարողությանց լավագույն կեդրոնները օտար հորիզոններու վրա են. թե իրենց ձեռնարկներուն նպաստող միջոցները բնաշխարհեն դուրս տեղեր են, և չէին կրնար օգտակար կերպով կարծեցյալ նպատակին գործածվիլ: Արդ քանի որ այսպիսի ու այսչափ արգելքներ ունեին իրենց դեմ, կրնա՞ն արդյոք որևիցե կերպով քաղաքական նպատակ մը հաջողեցնելու երազներով ինքզինքնին խաբել: Այդպիսի ենթադրություն մը ընել հնար չէ, առանց Հայ ազգին ողջամտության դեմ ազատասիրական նույնիսկ հայրենասիրական ձգտումներ ունենալու ամբաստանությունները անհիմն և սուտ ըլլան, բայց նա չկրնար ներել, որ իրեն վրա տխմարության միտքեր և ապուշության գործեր ենթադրվին:

Ճշմարտությունն այն է, որ ամեն բարեմիտ Հայ ուրիշ փափագ չունի, բայց եթե իր դրացիներուն հետ խաղաղ ու հաշտ ապրիլ: Հայուն պահանջն է, որ վնաս չհասնի իր կյանքին, իր պատիվին, իր ստացության, իր աշխատության: Հայը կը պահանջե, որ ինչպես ուրիշներ, ինք ալ խաղաղությամբ վայելե յուր գործունեության պտուղը, և իր բնական ձիրքերուն արդյունքները՝ ինչպես կը վայելեն մյուս ազգեր, որոնց մեջ կ՚ապրի: Այս օրինավոր պահանջներու հետ կը փափաքի ալ, որ հաստատուն պահե յուր ազգային ինքնությունը, իր լեզուն ու գրականությունը: Յուր նախնիներեն ժառանգություն մնացած այս բարիքներուն

ստացածությունը պահպանելու համար, ինքն ապավինած է յուր Ազգային Եկեղեցվոյն ծոցը, և կ'ուզե որ անձեռնմխելի մնա այն յուր կանոններով ու ավանդություններով, յուր հաստատություններով և յուր ստացած իրավանց և առանձնաշնորհության ամբողջությամբ:

Հայն այն համոզումն ունի, թե յուր Ազգային Եկեղեցին, որ զինքն անցյալին մեջ պաշտպանեց, ապագային մեջ ալ պիտի պաշտպանե»[19]*:*

Հավելված… «Խիկարի»

Այնուամենայնիվ բանաստեղծի աթենքյան հրապարակախոսական գործունեությունն ամբողջացնելուն պակասում է ևս մի շատ ուշագրավ եղելություն: Օրաթերթի առաջին համարներից սկսած տարբեր հանգի ծանուցումներով տեղեկացվում էր, թե պատրաստվում է և շուտով լույս պիտի տեսնի **զավեշտաթերթ***:*

Փետրվարի սկզբներին արդեն «Արարատում» գտնում ենք հետաքրքրություն բորբոքող հայտեր. «Խիկար». այս շաբթու գլխավորաբար մամուլին ամենեն շատ կամիթներ տված է, որով' ցնծացեք և ուրախ եղեք»: Եվ ապա. «Այս շաբաթ օր ամեն տեղ և ամեն ցրիչներեն փնտռեցեք ծիծաղի շտեմարան Խիկարը և տրամի մը վճարելով կուշտուկուռ զվարճացեք»: Այնուհետև. «... Խիկարը կուսակցական չէ, այլ հայ առաքելական ուղղամիտ եկեղեցու զավակ... է և կհրատարակվի խմբագրությամբ պոլսահայ ծաղրանկարիչ' **Արմենակ Տեր–Հակոբյանի***»: Փետրվարի 25-ի թվում էլ '* **«Խիկար, Խիկար:** *Շաբաթ մը աշխատելե վերջ հոգնություն առնելու համար կարդացեք* **«Խիկարը»** *և պիտի մոռնաք ձեր բոլոր վիշտերը: «Խիկարիս» այս թիվին մեջ կա Արմիկ տուտուին այցելությունը «Արարատի» խմբագրություն, Աթենայի պարահանդեսը, Փիքսի տեղագրականը և աթենահայ դեմքեր ալ:*

Շաբաթ օր ցնծացեք մեկ տրամի' խնդացեք և զվարճացեք»:

Մատենագիտական տվյալներով զվարճաթերթի հավաքածո Հայաստանի գրադարաններում չկա. պահպանվում են Վիեննայի Մխիթարյանների մոտ և Մոսկվայում: Անել է, ցավոք, հնարավոր չի եղել տեսնել ու թերթել[20]*: Սա էլ է մնում գրականագետ սերունդներին, պոլսահայ ծաղրանկարիչ Արմենակ*

---

[19] *Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանյան, Հայոց Եկեղեցին և..., 1912, Կ. Պոլիս:*

[20] **Մանվել Բաբլոյանի մեծարժեք «Հայ պարբերական մամուլը Համահավաք ցուցակում»** *(1986) նշված է* **«Արարատի» խմբագրական կազմը.** *Հրանտ Մամուրյան, Հովհաննես Պողոսյան, Հարութ Դարբինյան: «Խիկար» զավեշտաթերթինը' արտ. Գ. Լազյան, խմբ.' Արմենակ Տեր–Հակոբյան:* **Արդարև պետք է նշվի Զարենցը ևս' երկու դեպքում էլ:**

Ըստ Համահավաք ցուցակի «Արարատը» լույս է տեսել 1–95 (էջ 159) համար. ճիշտը' 1–98–ն է: Անշուշտ, հիշատակված այդ անձանց հետքերով էլ ապագա «խուզարկու» շարենցագետները պետք է հետամուտ լինեն բանաստեղծի գործունեության մանրամասներին Հունաստանում. գտնել «Արարատի» արխիվը' հնչեցնելու համար Զարենցի կյանքի այդ շա՜տ ու շա՜տ հիշարժան դրվագը... Ուրեմն և որոնենք Հ. Պողոսյանին...

Տեր-Հակոբյանի անձնավորության, Չարենցի հետ առնչությունների հետ միասին. թերևս, ծանոթացել են Պոլսում և միասին էլ անցել են Աթենք, հենց նրա ունեցած ծանոթություններով ու կապերով:

Եվ սակայն, ամեն պարագայում «Խիկար» անվանակիցը Հ. Պարոնյանի «Խիկարի», որ հուշում է շատ բան, զավեշտի մեծապես առտնին, կենցաղային բնույթով հանդերձ: Մանավանդ, եթե նկատի առնելու լինենք Չարենցի պարոնյանապաշտությունը փոքր-ինչ հանգամանորեն: Նախ այն, որ «Մեծապատիվ մուրացկանների» Մոսկվայի դրամատիկ ստուդիայի բեմադրության անջնջելի տպավորությամբ, ինչպես վկայում է Մ. Մազմանյանը «... Չարենցը խաղացողներին էր կրկնում, մեջ էր բերում Պարոնյանի դարձվածները և երկար ժամանակ ինձ հետ խոսում էր և նույնիսկ նամակներ էր գրում արևմտահայերեն (ՀԵՉմ, 1, 70): Բնորոշ է, որ արևմտահայերենով դարձվածներ ենք գտնում և Կ. Միքայելյանին ու Մ. Գևորգյանին հղած նույն տարիների նամակներում. էլ չենք խոսում «Երկիր Նաիրիում» սփռված արևմտահայ բառ ու բանից, խոսակցական դարձվածներից:

Հասկանալի է, ամենից առաջ մանկական հասակից յուրացրած անմոռաց պաշարով, քանի որ Կարսի խոսակցական լեզվի խառնուրդում լայնորեն գործում էր արևմտահայերենը, որը նույն խառնուրդով նկատում ենք Սողոմոնյանների ընտանիքում ընդունված-սիրված միակ պարբերական «Խաթաբալայում»: Իսկ «կատարելագործելն» արդեն «Արարատի» էջերում դրսևորված հոդվածների արևմտահայերենի մակարդակով,— «մի ամսից ավելի» ժամանակով Չարենցին վիճակված էր Պոլսում:

«Մի ամսից ավելի» ամեն օր շփվելով-զրուցելով բնիկ պոլսեցիների հետ, ամեն օր առաջին տողից վերջինը կարդալով պոլսական օրաթերթեր, արևմտահայ գրողների ու գրագետների... Բնականաբար ամենից ավելի Պարոնյան. ձեռքի տակ ունենալով նաև «Խիկարի» հավաքածո... պարոնյանական մեկը մեկից անզուգական «կատակներ», արևմտահայերենի հմայիչ-վարակիչ դարձվածներ... դառնաղի-զվարճալի լայնարձակ «Ծիծաղի ասպարեզ»: «Խիկարի» հետ միասին գուցե և Թ. Ազատյանի տրամադրած «Թատրոն», եթե, իհարկե, մոռացելու լինենք շաբաթաթերթի «Մեր վիճակը» (թիվ 136) հանրահայտ առաջաբանի տողերը. «Ընթերցող, աչքիդ առջև բեր ծովն, որ սաստկաշունչ հողմոց առջև տակն ու վրա կըլլա: Լեռնաձև ալյաց ձեռքը խաղալիք եղած նավ մը երևակայե, լեցուր այս նավն ոչխարներով, դիր այդ նավուն մեջ նավապետ մը, որ կըհորանջե, դիր ղեկավար մը ալ, որ **Ղեկը** ձգած գլուխը կը քերե և ահա աչքի առջևը բերած կըլլաս ազգերնուս վիճակը»: Եվ դրա կողքին էլ Փարիզում **«Ղեկ»** անունով պարբերաթերթ հրատարակելու բանաստեղծի մտադրությունը...

Հայտնապես հղացման հետքերը ընդհուպ սեպվում են ակունքին. Հ. Պարոնյանի «Խիկարի» էջերում տպագրված «Խոսակցությունը մեռելոցի», «Խիղճ և գութ», «Գութ և ճշմարտություն», «Գութ և 8/10 կրոնք», «Անկեղծություն, մարդասիրություն» մասերով և «Ժամանակակից ազգային աստվածները ներածությանը» երգիծական նման հանճարեղ փայլատակումներով.

«Ամեն միտք, որ տրամաբանել գիտե՝ կարող է հարցնել յուրովի, թե տգիտությունն բարուց ապականության հետ միանալով, եթե կրնա աստվածներ ստեղծել, գիտությունն արդյոք ի՞նչ աստվածներ կարող չէ ստեղծել, երբ ընկերակցի բարուց ապականության հետ:

Եվ արդարև գիտությունը բարուց ապականության ձեռքեն բռնած, չուշացավ առաջնորդել մեզ առասպելաց դարուն, ուր կապրինք դժբախտաբար...

Այսօր ալ մոլիներն են, որ աստված կըլլան և առաքինիներն արարած, անոնք տեր, ասոնք ստրուկ: Աստվածացումն ապաստարանն է չարերու: Գողություն մը ըրե հետևյալ օրն աստվածացի՛ր. միայն թե կը խնդրեմ, որ գողությունը պզտիկ չըլլա, որովհետև շատ ամոթ բան է, մարդ երեսդ չի նայիր:

Անբարոյականության ծովուն մեջ լվացվե՛ ամեն օր, ամեն ժամ, ջիղերու աստված կը հռչակվիս և անմիջապես արձանդ կը կանգնեն:

Աղքատին իրավունքը կե՛ր, որբոց ժառանգը կոկորդդ անցուր, ախորժակի աստված կը համբավվիս և արձանդ կը դրվի ճաշարաններու մեջ...

Պարտ մի՛ վճարեր բնավ, եթե կըլլաս, ըստ մեզ մոռացության գետ:

Եթե պզտիկ գողությամբ ձերբակալվիս ու նախատեն զքեզ, հայհոյեն ու երեսդ թքեն՝ չըլլա որ կարմրիս. պաղ արյամբ կեցիր, որ համբերության աստված ըլլաս և հուսահատներն ուխտի երթան հանուն քո կառուցված մեհյանը:

Եթե միամիտներն ստակ կորզելու համար սուտ խոսիս ջուրի պես՝ անմիջապես գետի մ’աստված կըլլաս:

Եվ ունինք այսօր այսպիսի աստվածներ, որոնց կյանքը պիտի գրենք հետզհետե, ծառայություն մը մատուցանելու համար ազգին...» և այլն. տե՛ս Հակոբ Պարոնյան, Ընտիր երկեր, գ. 2, 1955, էջ 542–543:

Ըստ այդմ **Հ. Պարոնյանի հանդեպ Զարենցի հակումն ու պաշտամունքը կարելի է որակել** –բնութագրել ճիշտ և ճիշտ այն և այնպիսի տողերով, ինչպիսիք գտնում ենք **Հենրիկ Հովհաննիսյանի «Հայ թատրոնի պատմություն 19–րդ դ.», (1966) աշխատության, («Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը» աշխատության հետ միասին) էջերում.** «Պարոնյանի հայացքը մռայլ է, խոսքը թեթև, տողը լրագրային, որտեղ երբեմն գերակշռում է տրամախոսական տարրը՝ որպես բեմական արվեստից անկախ ձև և ուղղակի անդրադարձ կյանքի թատերայնության: Հայ գրողներից ոչ մեկի խոսքն այնքան խաղացկուն չէ, որքան Պարոնյանինը՝ ոչ մեկ այնքան չի հոլովում «թատրոն» բառը, որքան Պարոնյանը: Ոչ ոք այնքան զգույշ չի անցել թատրոնի կողքով, որքան այս արտիստիկ ու հեգնական մարդը: Նա ստեղծել է խոսքային մի խաղ՝ իր մտահայեցողական թատրոնը, իր ինքնատիպ դրամատուրգիան և կանգ է առել «Արևելյան թատրոնի» ժամանակից շատ խարխլվող շքամուտքի մոտ ու հապաղել: Թատերախոսականներ է գրել, դիմքեր բնութագրել, որակել երևույթներ սպառիչ խոսքերով և հեռու է մնացել կուլիսներից»:

Եվ ապա. «Պարոնյանը հռետոր է, և նրա հռետորությունն ունի պատմա–քաղաքական հիմք: Դա ոչ թե արտաքինից դիտողի, այլ ներսում ապրողի

հայացք է, վիճակը կրողի գեղարվեստական ենթագիտակցություն...»․ տե՛ս աշխատության **«Հակոբ Պարոնյանը թատերագիր» գլուխը,** էջ 306–323:

Միակ վերապահությունը կուլիսներին վերաբերող տողն է․ Չարենցը թատերասեր էր և սիրում էր նաև կուլիսներ․ իհարկե, պայմանավորված իր ժամանակով:

* * *

Դառնաշունչ–խոստումնալի նման մտահոգություններով էլ զոր ու գիշեր մտորել–խորհել է Աթենքում ու Փարիզում հրապարակվելիք պարբերականների շուրջը, մշակել–կազմել է ծրագրեր, գրի առել անելիքներ՝ մե՛կ Աթենքի համար, մե՛կ Փարիզի: Համոզված կարելի է ասել, որ արդեն պատրաստ Պոլսից տարել է վերը շոշափված կլիշով չափ մշակված կամ սևագիր խմբագրականներ ու հիմնահարցային այլ հղացումներ․ անելիքների մի ամբողջ շարան, այդ թվում «Խիկարի» հրատարակությունը՝ զավեշտի կենցաղային «ասպարեզով»՝ միաժամանակ թե՛ եկամտաբեր, և թե՛ հոգևոր բարոյական կենարար սնունդ վհատված գաղթականությանը: Ընտրել–առանձնացրել է «ուշիմ մանկիկի» տիպի առակ–ասացվածքներ, ծիծաղաշարժ սրամիտ դարձվածներ, ի վերջո ընտրել–հերքելով, թերևս, զատել է **Միրագենց, Միրաքենց, Յ. Տերենց, Էոլմեզյան ծածկանունները**․ ամեն դեպքում նախ Չարենց անվան հուշարարությամբ: Սկզբնատառերի ընտրությունը հետաձգելով Աթենքին, որտեղ և, ըստ երևույթին, հարմար է համարվել ու համաձայնեցվել «Վան–Միրը», համենայնդեպս, կիսապատրաստ «Թե ինչ կպատմի անգլիացի գնրի սպա մը Թուրքիո մասին» նոթով, որը կոչված էր երկար միջոցով «Արարատի» էջերից հուշելու **Միրագենցի ծածկագիր ինքնությունը**:

Յ. Տերենց և Էօլմեզ–ծածկագրերն արդեն ընտրված են եղել նախապես՝ կոչված խորհրդանշելու և հուշելու ***Հայրենիքի*** ու ***Արարատի Տեր*** հավատամքը, որը կարճ ժամանակից «Դաշնակցականներին» բանաստեղծության մեջ հնչեցվում է ծառացման հռետորիկ այսօրինակ թափով.

...Ո՞ր դժոխքն է էլ ձեզ այդպես հեգնել
Ու լցրել այդքան անմիտ ցանկությամբ,
Որ տե՛ր եք ուզում դուք այսօր կանգնել
Դարերի՛ ավանդ մեր ժառանգության:—
Դուք տեր եք ուզում ձեզ հայտարարել
Այն հերոսական, հսկա պայքարի,
Որ ժողովո՛ւրդն է իմ երեկ վարել
Ընդդեմ բռնակալ սուլթանի՛, ցարի՛ (4, 22):

Նույնքան ծանրակշիռ իմաստ ու **բովանդակություն է պարունակում Էօլ – ճանապարհ–Մեզ–ճանապարհը մեզ հետ = գաղտնագիրը**: Այն է՝ այսօր և ընդմիշտ՝ «... դեպի Հայաստան, այս պետք է ըլլա միակ ծրագիրը և կար-

դախոսը բոլոր սրտացավ և հայրենասեր հայերու, վասն զի հոն է է՛ առայժմ միակ փրկությունը»: Հայտնապես բացահայտ նախակոչնակ–նախախոսնակ ամբողջ «Գիրք ճանապարհի» պոեմներով, մեկը մեկից վսեմաշունչ քրեստոմատիական «Տաղերով ու խորհուրդներով», հանրաճանոթ «Պատգամով»...

Այս իմաստով, կարծում եմ, նույն կարգի հուշարարություն է և Վ. Նավասարդյանի «Եղիշե Չարենց (Հուշեր և խորհրդածություններ)» գրքում տեղ գտած տողատակի ծանոթությունը. «Ի դեպ մի օր (Հռոմում հանդիպման միջոցին՝ Ալ. Զ.) Չարենցը դարձավ ինձ և ասաց.— Պոլսից սկսելով ճիգ եմ անում հասկանալ, թե ի՞նչ բան է Ռամկավար–ազատական կուսակցությունը, բայց չեմ կարողանում. ամեն մեկը իր ուզած բացատրությունն է տալիս: Խնդրում եմ Ձեզ, եթե կարող եք՝ թղթի վրա գրի առեք Ձեր ըմբռնումը և տվեք ինձ:

Խոստացա անել, բայց չկարողացա. ինչ որ գրեցի, թերի երևաց աչքիս. Չարենցին ձախողանքս խոստովանեցի՝ առաջարկելով առնել Ռամկավարների Ծրագիր–կանոնագիրը և ուշի ուշով սերտել:

— Գիտեմ ասաց,— ինձ Ծրագիրն ու կանոնագիրը տվին, բայց ես այնտեղից էլ բան չհասկացա»:

Այսքանը. և ահա, բուն եղելությունը. Աթենքում ոչ միայն իրենց Ծրագիրն ու կանոնագիրը «տրամադրել», այլև բանաստեղծի հետ սերտ համագործակցությամբ «Արարատի» ճակատին տրամադրել են «Հրատ. Հայ ռամկավար կուսակցության» դրոշմանիշը:

Համոզված եմ, որ Չարենցի հետ հռոմեական զրույցներից, ինչպես հետագայում Իսահակյանի միջոցով,— այդ ամենին տեղյակ է եղել ինքը Նավասարդյանը: Ուրեմն և տողատակի ծանոթությունը զուտ իրողությունը մոռացության չմատնելու ակնարկ է. անշուշտ, հայրենիքի ժամանակի հանգամանքների և ներկուսակցական պայքարի պարտադրանքով:

Դառնանք, ահա, այդ հարցերին:

Քաղաքական հայտնի և կռահելի հանգույցներ...

Տեղին ու բանական քայլ, որքանով հայրենիքից–հատկապես Փարիզ, և հակառակը փոխադարձումով՝ 1925–ի նախաշեմից նկատելիորեն աշխուժանում են համայնավարական հրահրումներն ու խլրտումները թե՛ մեկում, թե՛ մյուսում: Այս առումով անպայման գնահատելի է արտերկրի մտավորական շրջանների սթափ վերաբերմունքը ինչպես ներսի, այնպես էլ արտերկրի նման հրահրումների հանդեպ:

Ներսի, ինչպիսին «ԽՍՀՄ պատմության» էջերում ժամանակին արծարծված վրաց գյուղացիության «ապստամբության» գնահատականն է, հայերի նույն ճշգրիտ ասպեկտով. «Ինչպես ցույց տվեց Վրաստանի փորձը, պոլշեւիկները շատ ուրախ պիտի ըլլային, եթե Հայաստանի մեջ ալ նման պոռթկում մը տեղի ունե-

նար, որովհետև այն ատեն պիտի կարենային դեթ ժամանակի մը համար արյան մեջ խեղդել Դաշնակցությանը: Բայց Դաշնակցությունը այդ առիթը չտվավ խորհրդային կոմիսարներուն: Եվ ատկե դժգոհ են անոնք»[21]:

Բայց ինչու Դաշնակցությո՞ւնը և ոչ **«խորհրդային կոմիսարների» կրնկի տակ ամենօրյա մեծ ու փոքր փորձություն ճաշակող հայ ժողովուրդն ու մտավորականությունը՝ Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ:** *Որովհետև մեկնաբանը՝ դաշնակցակա՞ն կամ դաշնակցականամե՞տ էր... օրաթերթը ինչ–որ չափով նույնպես:*

Իսկ Մարսելում հայ գաղութի առջև իր ծանրակշիռ ելույթում, **Ալ. Խատիսյանը երկար կանգ առնելով՝** *«... Վերջերս Ֆրանսիայի հայ գաղութին մեջ ծայր առած համայնավարական շարժումին վրա»,— պարզաբանում էր. «Մենք հյուր ենք այս երկրի մեջ, իրավունք չունենք Ֆրանսիայի ներքին գործերուն միջամուխ ըլլալու: Մենք կվայելենք առանձնաշնորհումներ, տուրք չենք վճարեր, զինվորական պարտականություն չենք ըներ, բայց շատ խիստ կըլլանք մեր պահանջներուն մեջ: Այսպես ընելով հանդերձ, մեր հայրենակիցներեն կարգ մը մարդիկ կփորձին համայնավարական քաղաքականություն ընել: Ասիկա խիստ մեծ վտանգ մը կկազմե մեզի համար: Կառավարությունը որոշապես ազդարարություններ կընե: Արդեն իր դռները փակեց: Երբոր մենք կաշխատինք կառավարության մոտ: Ֆրանսա մտնելու արտոնություն ստանալու՝ Ֆրանսիայի հայ գաղթականներու մեկ մասին համար, մեզ դիտել կտա մեր անբաղձելիությունը:*

Այս վտանգը կապ ունի ֆրանսահայ գաղութին հետ: Պետք է զգույշ ըլլալ հիմար փորձերե»[22]:

Ամեն պարագայում տարին չբոլորած՝ ճշտվում է թե՛ Չոպանյանի, թե՛ Մյասնիկյանի դիրքորոշումը Դաշնակցության հանդեպ: Հակառակ Չոպանյանի բաղձանքների՝ նախապատրաստման ավելի քան երկամսյա ընթացքով, 1925–ի փետրվարի 10–ին ի վերջո ավարտվում է Փարիզում հրավիրված ՀՀ Դաշնակցության ընդհանուր ժողովը: Հակասական– հակամետ բուռն վեճերով հատկապես «օրիենթասիոնի» շուրջը՝ բախվող երկու կողմերի միջև: Դրանցից Մոսկվայից նոր Փարիզ անցած Դրոն պաշտպանում էր ռուսականը, Սիմոն Վրացյանի գլխավորած մյուսը... քաղենք «Արարատից». «Սակայն ասոր դեմ (Դրոյի կողմնորոշման՝ Ալ. Զ.) թրքական օրիենթասիոնի հոսանքը առաջ քաշած է համաձայնական տերություններու հետ ըլլալ Թուրքիո հետ համաձայնությամբ, նկատելով, որ համաձայնականները միացյալ ճակատ մը պիտի կազմեն պոլշևիկներուն դեմ, իրենց մեջը ունենալով նաև Թուրքիան»: Ուրեմն և ժողովի ընտրած՝ «... պ.պ. Սիմոն Վրացյան, Ռուբեն (փաշա) Տեր–Մինասյան, Դրո, Շահան Նաթալի և Շավարշ Միսաքյան»,— կուսակցության «... մարմնին հանձնված է հետապնդել թրքա-

[21] *Նոր օր, 1925, 3 հունվ.:*

[22] *Նույնը, 22 հունվ.:*

կան օրիենթասիոնի քաղաքականությունը, զոր որդեգրած է կրկին հիշյալ կուսակցություն»[21]:

Ավելացնենք նաև, որ ըստ բյուրոյի «որդեգրածի» «բոլշևիկներուն դեմ» «համաձայնականների» ու Թուրքիայի այդ դաշինքով մոտակայում «միացյալ ճակատով» հնարավոր կլինի ունենալ Կարսն ու Արդահանը:

(Հետաքրքիր է. այդ անձանցից որևէ մեկին հայտնի՞ չէր, որ Թուրքիան ու «բոլշևիկները» վաղուց դաշնակիցներ ու «միացյալ ճակատ» են հայ ժողովրդի դեմ... Միթե՞ հայտնի չէր ո՛չ Վրացյանին, ո՛չ Ռուբեն Փաշային...):

Այդքանը, առանց որևէ ավելորդ քննության ու լուսաբանության, բայց և կարճ ժամանակից «Արարատում» գտնում ենք հրավարտակային այսպիսի տողեր. «Մենք առանց համոզմնավար ըլլալու ուժ կուտանք, որ Հայաստան հառաջադիմե, քանի որ վերջապես մեր հայրենիքն է, և մենք հայեր, իսկ դուք այդ հայրենիքին դեմ կ'արտահայտվիք ու կկռվիք»: «Դուքեր», որոնք՝ «... ամեն ճիգ կթափին, որպեսզի հայությունը ցրվին աշխարհի չորս ծագերուն, ամեն գնով անոնց Հայաստան դաղթը արգելելու համար»[22]:

Անել է թե՝ Աթենքից Զարենցի մեկնելուց հետո էլ «Արարատը» շարունակում էր հավատարմորեն ծառայել առանձնած գաղափարական–քաղաքական հանդամանքներին, բանաստեղծի ավանդներով ջանք ու եռանդ չէր խնայում, որպեսզի ՀՕԿ–ը դառնա «ամեն հայ գաղթականի խրճիթին մասնաճյուղը»:

Եվ ուշագրավ է, սփյուռքի աշխատակիցների թղթակցություններից, հոդվածներից, սովորական նոթերից բացի, ազգանպաստ կարևոր նյութեր էր գետեղվում և դրսից: Այսպես. «2 մարտի 1925, Լոզան» տարեթվով օրաթերթը զետեղել էր **Լևոն Թութունջյանի (Լ. Թ.)** *«Հայասերներն ու հայ հայրենիքը» թղթակցությունը, որով հաղորդվում էր. «Բրաֆթ Բոնարի իր իսկ գրած խոսքերը, որոնք տպված են 1924 մայիսի Ժընևի մեջ հրատարակված իր «Լը պռոպլեմ Առմենիեն» գրքին մեջ, զոր ձրիորեն տրամադրեց ներկաներուն այնքան ազնվորեն: Այդ երկին 31 երրորդ էջին մեջ ահա սա տողերը կկարդանք. «Այսպես, ներկայիս, սովետական փոքրիկ հայ Հանրապետությունը Կովկասի մեջ, խիստ կարևոր կենդրոն մը կը հանդիսանա հայկական կյանքի, և կարելի է հուսալ, թե ժամանակի մը ընթացքին, զոր կարելի չէ որոշել, ավելի մեծ պետության մը կորիզ պիտի կազմե...»: Արդ, արդար չի դառնար, որ մեր զավակները փոխանակ օտարության մեջ ցրվելու, հետևանքները դյուրավ երևակայելի կորստի մը ենթարկելով զանոնք, փափագեցինք մեր Հայրենիքին մեջ տեղավորել զանոնք իբրև կորիզները՝ ապագա այն բոլոր բաղձանքներուն, որոնց իրականացումը կ'ոգեկոչե ՀՕԿ–ը»:*

Մի այլ «Յո՞ երթաս Եվրոպա» վերնագրով հոդվածաշարով էլ եվրոպական տերությունների հասցեին Լ. Թութունջյանը գրում էր. «Արդար թող ըլլան խոս-

---

[21] Նույնը, 11, 20 փետրվարի: Հիշատակված են և որոշ մասնակիցներ Կ. Սասունի, Վ. Նավասարդյան, Ա. Ահարոնյան և այլք:

[22] Արարատ, 16 մարտի:

տալանելու, որ մենք չէինք Եվրոպան Հրաժարողները, և մեր պահանջած գիրը գուցե շատ ավելի համեստ էր, քան այն, որ այսօր մեզի կտրվի:

Նոր փոթորիկին մեջ դարձյալ խաղաղ, մեծ ու շինարար կմնա Հայաստանի դերը, գաղափարական ժողովրդի դերը՝ որ կշարունակվի, գոնե այս անգամ վայելուչ խաղաղության ու արժանապատվության մը մեջ: Վա՛յ ախմարներուն»[25]:

Մի այլ թվում զետեղված է Բեյգրադում մի ճանաչված սերբ պրոֆեսորի բարեկամական Հայանպաստ խոսքը, թե՝ «Մենք Հայերուն շատ բան պարտինք, մեր առաջին նկարիչը և բժիշկը Հայեր եղան, մեր առաջին գիրք տպողը Հայ էր, մեր մեջ ճարտարվեստը և վաճառականությունը մտցնողներն Հայեր էին: Եվ մենք այսօր, շատ ավելի առաջ անցած կըլլայինք անոնց օգնությամբ, եթե Թուրքերու ավերումները վրա չգային: Հինեն ի վեր ունեինք մեր մեջ Հայ գաղութ մը, ինչպես կվկայեն Սոֆիանիայի մեջ մնացած կիսավեր Հայ եկեղեցին և տապանաքարերը: Արարատը, որ մարդկության օրրան եղավ, մեր ալ Հայրենիքն է, և ես ամբողջ Հոգովս անոր կապված եմ»[26]:

Հաղորդվում է, որ ներգաղթին իր եռանդուն մասնակցությունն է բերում Պոլիս Նուպարը: Հաղորդվում էին Դաշնակցության բյուրոյի հերյուրանքների դեմ Ա. Երզնկյանի հայտարարությունները, ամեն թվում տեղեկություններ Հայաստանից, ներգաղթողների թվաքանակից ու վիճակից, այդ թվում ներգաղթողների միջավայրում հայրենադարձության տրամադրությունները բորբոքող նման ավյալներ. թե Թուրքմենիայում կան 74 Հազար Հայ, Տաշքենդում՝ 12 Հազար, Պոլտարեցկում՝ 22, Սամարղանդում՝ 12 – և սրանք էլ գաղթականներ Ռուսահայաստանից[27]: Հավանաբար Զարենցի տրամադրած տվյալներ:

Եվ վերջապես անընդմեջ ներկայացվում էին հաշվետու նյութեր, տեղեկություններ ՀՕԿ–ի գործունեությունից. մեկ. Ա. Երզնկյան ու Ս. Փիրումյան ներկայացուցչությամբ Փարիզից՝ Բեռլին, Լոնդոն, Բրյուսել, Մանչեստր… ուղևորությամբ, մեկ էլ հունվարի 22–ին տեղեկացվում էր, թե՝ **«Մասնավոր հրավերով պ. Ա. Պատմագիրյան Պեռլինե Մարսել գացած է** *և Թարիվերի սինեմայի սրահին մեջ հազարե ավելի ունկնդիրներին խոսած է Հայաստանի վերածննդի մասին», հայտնելով նաև որ Հայաստանը կարող է ընդունել 100 Հազար ներգաղթողներ[28]:*

Զեմ թաքցնում, այս տեղեկությունը մեծ ուրախություն պատճառեց, քանի որ Զարենցի արտասահմանյան ուղևորության վերջին հանգրվանը եղել է Բեռլինը, հյուրընկալողն ու միակ հուշագիրը Պատմագրյանը, ուստի իրեն վերաբերող նման ամեն բեկոր գնահատելի: Մանավանդ ստորև ներկայացվող այսպիսի առնչություններով: Փետրվարի 13–ին հաղորդվում էր, թե՝ «ՀՕԿ–ի նախագահ պ. Ա. Երզնկյանն ու Պեռլինի առևտրական ներկայացուցիչ պ. Ս. Փի-

---

[25] *Նույնը, 18, 19, 20 մարտի: Զհաջողվեց պարզել Լ. Թութունջյանի ինքնությունը:*

[26] *Նույնը, 1 ապրիլի:*

[27] *Նույնը, 28 մարտի:*

[28] *Նույնը, 26 փետրվ.:*

րումյանը, որոնք կարևոր խորհրդակցության մը մասնակցելու համար Մոսկվա գացած էին, վերադարձած են Պեռլին և մոտ օրերին դարձյալ Փարիզ կսպասվին»: Պարզ է՝ մասնակցությամբ պարտադրվում էին նոր հրահանգներ, հետևաբար ապրիլի սկզբներին Բեռլին հասած Զարենցը՝ արդեն մամուլից ծանոթ Պատմագրյանից անպայման հանգամանալի տեղեկություններ է ունեցել այդ խորհրդակցության մասին, և Մյասնիկյանի սպանությունից հետո հետադարձ **հայացքով համատեղ քննության են առել ստալինյան չարագործ քայլերի երես–աստառը,** ինչպես առհասարակ, այնպես էլ ներգաղթի ու ՀՕԿ–ի գործունեության շուրջը: Իսկ որ Մյասնիկյանի սպանության նախաշեմից այդպիսի հրահանգներ եղել են, վկայում են նաև փետրվարի վերջերից տարածվող հաղորդագրությունները, թե Թուրքիայում խորհրդային դեսպան է նշանակվելու Տրոցկին. դրա կողքին էլ՝ Հունաստանում խորհրդային ներկայացուցիչ Ուստինովի նոր հրահանգը, ըստ որի ներգաղթել կարող են միայն Հայաստանում վեց ամսի չափ ապրուստի միջոցներ ունեցողները և այլն: Տագնապալի նշաններ, որոնք շուտով վերածում են ներգաղթն արգելող կրողության, այնքան որ Լևոն Բաշալյանը ստիպված է լինում դիմել այս քայլին. «**Բարիզեն կտեղեկացնեն մեզ.** պ. Լևոն Բաշալյան հուշագիր մը հանձնած է սովետներու Բարիզի դեսպան ընկ. Քրասինի խնդրելով անկե տեղեկացնել, **թե տասը հազար գաղթականներ Հայաստան ընդունելու պայմանները և վեց ամսվան ապրուստը ինչ գումար կներկայացնեն:**

Ընկ. Քրասին խոստացած է խնդրված տեղեկությունը հաղորդել և այս առթիվ հայտնված է, որ գաղթականներու տեղափոխության հարցումը կվստահեն անոնց՝ պետությունների ակնկալած օգնությանը»[29] և այլն և այլն:

Հունահայ մամուլի հետագա դիրքորոշումը

Հունահայ մամուլի ժամանակի նկատելի շրջահայացությունը անկասկած մի մեծ չափով պայմանավորված էր Հունաստանի քաղաքական դիրքորոշումով և հայության հանդեպ առանձնակի բարյացակամությամբ: Զգաստ շրջահայացությունը «Արարատի» կողքին բնորոշ է և հակառամկավար «Նոր օրին». «Առևտրական օրաթերթ», միաժամանակ դաշնակցականամետ, բայց ամեն դեպքում կտրուկ վերապահումներով ինչպես օրինատացիայի, այնպես էլ ներգաղթին ու հայրենիքին վերաբերող այլևայլ հարցերում:

Հատկանշական է, որ՝ անդրադառնալով ՀՀ Դաշնակցության վերը արծարծված ժողովին՝ առանց ծավալվելու, օրաթերթը քաղում է ժողովի բյուրոյի որոշումից. «Ի վի-

[29] Նոր օր, 1925, 13 մայիսի: Ըստ ՀԿ (Հայաստանի կոչնակ) շաբաթաթերթի հաղորդածի (1925, թիվ 29, էջ 91) 1925–ին Փարիզում ռուսական դեսպան էր Լեոնիդ Կրասինը, որի անձնական քարտուղարն էր Մ. Պաթմակյանը ([illegible]):

ճակի ենք հայտարարելու, որ տարակարծություն չկա»: Եվ դրան հակառակ հաջորդ օրն էլ Դաշնակցության **«Հայրենիքի»** հունվարի 1-ի թվից արտատպվում է այս հիմնավոր **«տարակարծությունը»**. «... Այլևս չկա Ռուսահայաստան, Տաճկահայաստան կամ Կիլիկիա, այլ կա միայն մեկ Հայաստան, բոլոր հայերուս Հայաստանը, որին թանկագին կորիզը կապրի ու կամրանա Արարատյան դաշտին վրա:

Այդ Հայաստանն է ամբողջ հայության վարդագույն հույսերու իրականացման միակ նյակետը: Եվ այդ Հայաստանն է արդեն բոլոր հայերու միակ Հայրենիքը»[30]:

Սա նշանակում էր, որ կար երկու Դաշնակցություն, ինչպես և կային երկու կարգի բոլշևիկներ: Իրողություն, որ այդ օրերին Աթենքում հաստատապես գիտեր Զարյանը: «Նոր օրն» էլ համապատասխան տուրք էր մատուցում մերթ մեկին, մերթ՝ մյուսին. բայց և նկատելիորեն մեծ բաժինը հասնում էր հայրենիքին, հայրենիքի հետ կոչողներին: Ինչպես Թաջազնունուն՝ 1925-ի հունվարի 19-ի իր հիշարժան հայտարարությամբ Թիֆլիսում. «Իմ գալու նպատակը Խորհրդային Հայաստանում աշխատելն է. ես շատ ջերմ ցանկություն ունիմ աշխատելու Հայաստանի վերաշինության մեջ իմ մասնագիտության ասպարեզում»[31]: Սրա փոխարեն «Նոր օրը» նկատելի ուշացումով և սառնությամբ է արձագանքում Քրիստափոր Միքայելյանի մահվան 20-ամյակի փարիզյան սգահանդեսին: Ընդամենը՝ «... Սգահանդեսի նախագահ պ. Ա. Ահարոնյան. խոսած են՝ ընկերներ Ա. Ահարոնյան, Ս. Վրացյան, Շ. Միսաքյան»[32]: Եվ սառնությունը, երևի թե չէր վերաբերվում Ք. Միքայելյանին:

Ամեն դեպքում ոչ մի համեմատություն Հայրենիքին վերաբերող—առնչվող օրաթերթի այսօրինակ արձագանքների հետ: Մեկ թե՝ Թիֆլիսից Երևանի հանրային գրադարան փոխադրված են «Արղության, Ղորղանյանի, Մուրացանի, Մատենճյանի, Ներսիսյան դպրոցի, Հ. Առաքելյանի, «Մշակի» խմբագրության»[33] և այլ գրադարաններ. և սա որոշակի առումով կոչնագիր էր՝ ուղղված արևմտահայ մտավորականությանը: Մեկ էլ թե՝ ԽՍՀՄ Տրապիզոնի հյուպատոս Տարունը Թիֆլիսի «Զարյա Վոստոկային» հայտնել է, թե «Չնայելով որ Թուրքիո և ԽՍՀՄ-ի միջև դեռ առևտրական պայմանագիր չէ կնքված, այնուամենայնիվ տնտեսական փոխհարաբերությունները սկսած են աշխուժանալ»:

Եվ սակայն ուշագրավ է Մյասնիկյանի գրքի հայտնվելուց հետո, որ համընկնում է Զարենցի Աթենքից հեռանալու օրերին,— ՀՕԿ-ի գործունեությունը, ինչպես և ներգաղթի եռուզեռը Հունաստանում ունենում է զգալի անկում: Նվազում են հանգանակությունը, բարեգործական միջոցառումները, այդ թվում թատերական ներկայացումները և այլն: Որոշակիորեն մարտյան այս օրերից «Արարատի» էջերում նկատելիորեն սակավ են նման արձագանքները, հունահայու-

[30] Նոր օր, 25 հունվ.:
[31] Նույնը, 13 փետրվ.:
[32] Նույնը, 28 ապրիլի:
[33] Նույնը, 20 փետրվ.:

թյան գործունեության շրջանակն էլ անհամեմատ սահմանափակ. տեղեկություններ որքանով ու որքանով:

Ինչպես և կարելի էր ակնկալել տեղատվությունից հետո օրաթերթը աշխատակիցների կազմով որոշ չափով վերելք է ապրում ապրիլ–մայիսին: Ապրիլի 1–ին Բեմալը հաչակվում է «դիկտատոր», և օրաթերթի հետաքրքրությունը, բնականաբար, գամվում է Թուրքիայի՝ քրդական շարժման հարաբերակցությամբ: Մյուս կողմից օրվա նյութ էին Եվրոպայով մեկ ծավալված համայնավար հրահրումներն ու խժդժությունները: Զարենցին կենսականորեն առնչվող ու հետաքրքրող եղելությունների շղթաներ, որոնք այնուհետև Հռոմից ուղեկցել են Վենետիկ, Փարիզ, Բեռլին... ու Մոսկվա: Եվ որքանով այդ ընթացքով հայկական ամենօրյա պարբերականներ կարդալ այնքան էլ չի վիճակվել իրեն, իսկ ամենօրյա հայկական արձագանքները տեղ են գտել Աթենքում լույս տեսնող այդ երկու օրաթերթերում,— «Արարատից», ապա և մեծապես «Նոր օրից» քաղենք կարևորները. այնպիսիք, որպիսիք, այնուամենայնիվ, այս կամ այն ձևով Զարենցը անպայման իմացել է, ամեն առիթով վերապրել–վերախմաստավորել: Զգարմանանք, բայց այս է իրողությունը. ապրիլի 24–ից սկսել է հայոց Մեծ եղեռնի ոգահանդեսներին ուղեկցող համայնավարական խժդժությունների հերթափոխից բասացիորեն ցնցված էր ողջ Եվրոպան: Ապրիլի 24–ին Լոնդոնից՝ «Հստատ հեռագիրներու համաձայն **անգլիական նախարարական խորհուրդը գումարած է խորհրդակցելու համար համայնավարային շարժումին և բրոբադանդին վրա, որ Պուլկարիո մեջ պայթած է և կ՚սպառնա Եվրոպան»**:

Հրավիրվում են միասնել խորհրդակցելու Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան: Հաղորդվում է, թե՝ «... ձեռքի անցած են վավերաթղթեր», որոնցից պարզվում է բոլշևիկների նպատակն է «պայթյունը» փոխադրել Ռումինիա, Մակեդոնիա, Սերբիա և Հունաստան[34]: Ապրիլի 25–ին էլ Փարիզից հաղորդվում էր, թե՝ «Կարգ մը երիտասարդներ, որոնք Միլլանի կուսակցության պատկանող ընտրական հավաքույթե մը կելլեին, հարձակումի ենթարկվեցան համայնավարներու կողմէ, որոնք դարանակալ կսպասեին: Երիտասարդներեն երեք հոգի սպանված և ութ հոգի վիրավորված են: Երկու ձերբակալություններ կատարված են»[35]: Եվ ապա, որ Կրասինն էլ հայտնում է, թե դեսպանությունը մասնակցություն չունի այդ ամենին: Այսպես խժդժությունների արձագանքներ՝ **«Համայնավար շարժումին դեմ»** խորագրով ձգվում են մինչև հունիս, մեջ ընդ մեջ ուղեկցելով մե՛կ եղեռնի ոգահանդեսներին, մե՛կ Մյասնիկյանի «աղետին», մե՛կ քրդական շարժումների դեմ Բեմալի շահած հաջողություններին վերաբերող հաղորդագրություն–տեղեկություններով:

Այսպես. կիրակի ապրիլի 26–ին եղեռնի ոգահանդեսին «Հույսի և համբերության» խոսքով հանդես է եկել Վահան Ցարճանյանը, իր խոսքը սկսելով Զարեն-

---

[34] Արարատ, 25 ապրիլի

[35] Արարատ, 26 ապրիլի: Ավելորդ չէ նկատել վրաց գրող Ն. Մծիշվիլու արտաքսվելը Փարիզից ու առհասարակ հաջորդ դեպքերը... տե՛ս «Զարենցը Փարիզում» գլուխը:

ցին ծանոթ Աստվածաշնչական սույն մտաբերումով. «Երուսաղեմի մեջ Սողոմոնի տաճարին հնամենի պարիսպներուն առջև, երկու հազար տարիէ ի վեր հրեա ցեղը, ծնրադիր եհովային իր ազատությունը և անկախությունը կպաղատե, արտասվելով և իր մազերը փետելով...»[36]:

Հիշարժան է նույնպես, որ ապրիլի 11-ին հաղորդվում էր, թե՝ **«Շիքակո Թրիպյունի տված տեղեկության համաձայն Թիֆլիսի սավառնակի աղետը պատրաստված է վրացի հեղափոխականներու կողմե»:** Հայտնապես՝ Վեններիկից հետո հանդամանորեն հաղորդագրությունը Զարենցը Պատմագրյանից իմացել է Բեռլին հասնելուն պես: Նույն կապակցությամբ մայիսի 13-ին էլ հաղորդվում էր, թե՝ **Սաղարաձեն «... Վերջին հրաժեշտի օրը... առանձնապես սրտագին կերպով հրաժեշտ տվավ իր հարազատներին».** և որ՝ «Ծանոթ արկածին պատճառներուն քննությանը հետևանքով Թիֆլիսի սավառնորդներու կազմեն ապրիլի 6-ին Անդրկովկասի չեկայի որոշումով երկու վրացիներ գնդակահարված են, վեց հոգի աքսորված են հյուսիսային Ռուսաստան և երկու հոգի պաշտոնանկ եղած են»[37]: Այն ամենն էլ, եթե Բեռլինում իմացած չլիներ, տեղեկացել է Մոսկվայում, ավելի հանդամանորեն Թիֆլիսում. ամեն պարագայում ընդունել ցավատանջ հիշոցներով... վերից վար՝ ում հարկն է...

Ինչ խոսք, անընդմեջ արծարծվում էր և ներգաղթը. մեկ թե Նանսենյան անցագրերը շարունակվում են, մեկ էլ թե ներգաղթն արագացնելու համար դիմել են Նանսենին, կամ էլ հակերով օգնություն են ուղարկել Հայաստան... Եվ սրանց կողքին, թե Տրապիզոնի և շրջակայքի գաղթականներին տեղավորում են Սուխումի շրջանում, «իսկ Հայաստանի մեջ տեղավորելիքներու մասին դեռ վերջնական կարգադրություն չկա», «Հայաստանի մեջ տրամադրելի հող չկա»[38],— և կրկին տառապալի ապրումներ:

Սրանք արդեն մայիսի սկզբների տեղեկություններ են. կեսերին արդեն հաղորդվում էր, որ արտասահմանում Երզնկյանի գործը պետք է շարունակի այլ հանձնախումբ, և որ Հայաստանի հասարակական-գաղափարական կյանքի համար կարևոր է՝ Ալ. Մյասնիկյանի փոխարեն Անդրֆեդերացիայի գործադիր նախագահներից մեկն է դարձել Սերգո Խանոյանը... Պարզ է «առանձնակի» ծառայությունների դիմաց[39]: Այս ոգով էլ «Նոր օրը» անստորագիր «Տեսակցություն մը Հայաստանեն նոր եկած մտավորականի մը հետ»[40] խորագրով տեղեկացնում էր. «... Գրական ասպարեզը չունի արժանավոր ներկայացուցիչներ, եթե չհաշվենք մասի վրա համրվող կառավարության ներկայացուցիչներու հրապարակագրական աշխատանքը — չկան գրագետներ:

---

[36] Նոր օր, 1925, 29 ապրիլի: Բաղվում է ընթերցողներին հիշեցնելու միտումով Մաղութի Համոյի նմանատիպ դիմումները Եհովային՝ «Երկիր Նաիրի» պոեմանման վեպում: Ասել է նաև, որ այդ օրերին Յարճանյանը առավել ուժով է վերհիշել-վերապրել հանդիպումները բանաստեղծի հետ:

[37] Նույնը, 11 ապրիլի:

[38] Արարատ, 1925, 13 մայիսի:

[39] Նոր օր, 1, 8, 12 մայիսի և այլն:

[40] Նույնը, 14 մայիսի:

Սունկի պես բուսող պրոլետարական գրականության մշակներ հրապարակև քաշված են՝ չունենալով տաղանդ և զարգացում գրականություն մշակելու համար: Չարենց չարդարացուց իր վրա դրված հույսերը և վերջնականապես սայթաքեցավ:

Արտաշես Կարինյանը շատ արժանավոր և պատրաստված գրական քննադատ և գեղագետ է: Ներկայիս միայն երկու անուն կարելի է հիշել իբրև գրագետի հատկանիշները մարմնացնող աչքառու դեմքեր, որոնք կլեցնեն մասամբ այդ բացը. Դ. Տեմիրճյան և Ստ. Զորյան»[11]: Եվ սա պարզապես նշանակում էր, քաղաքական–գաղափարական հեղաշրջում՝ Թիֆլիսյան Խանոյան և երևանյան Կարինյան հաղթանակած առաջամարտիկներով...

Նկատենք որ 1925–ի ընթացքով հունահայ մամուլում այս երրորդ անգամն էր երևում Չարենցը, համենայնդեպս երկուսը չրջավորված բացասական վերաբերմունքով: Միայն մեկ անգամ էլ «Նոր օրը» հունվարի 20–ին Մոկչ–ից արտատպել է հատված Ակ. Բակունցի «Կյանքը Գորիսի մեջ» ակնարկից: Գրական այլ արձագանքներ հայրենիքից չկան:

Ի վերջո, նկատենք նաև հետևյալը. այն օրերին, երբ Չարենցը Բեռլինից պատրաստվում էր վերադառնալ հայրենիք, այդ օրերին միայն (մայիսի 20–ից հետո) **ՀՕԿ–ի ներկայացուցիչը՝ եկեղեցական արարողությամբ և Հովհ. Պողոսյանի խոսքով՝ սգահանդեսով հարգում է Ալ. Մյասնիկյանի հիշատակը**[12]: Որին և ««Սգավոր մը» հեգնական ակնարկով անդրադառնում է հակառամկավարական «Նոր օրը». մնում է, ուրեմն, հաշվել–հաշվարկել կուսակցական հակամարտությունների «օգուտները»...

Այնուամենայնիվ, հուլիսին Նանսենի Հայաստան այցելության միջոցին, Հունաստանից արտոնված էր հայրենիք ներգաղթել 10.000 հայեր. հողագործներ, շինարարներ, ձիթագործներ...

Համոզված կարող ենք ասել, որ իր անհատակ հոգու խորքերում բանաստեղծը մի առանձնակի գթառատ գորովանքով է կրել բանախոսու-

[11] Նույնը, 26 մայիսի:

[12] Այնուհետև՝ Չարենցի վերադարձից հետո հայրենիք,— արձագանքներ ենք գտնում Նոր օրի 1925–ի նոյեմբերի թվերում: Նոյեմբ. 15–ի թիվ 651–ում Ա. Կ. ստորագրությամբ (օրաթերթի խմբագիրներից Անտոն Կաչել) «Գրական հարցեր» վերնագրով հոդվածում գտնում ենք այսպիսի տողեր. «... Չարենցները լավագույն գործ կատարած պիտի ըլլային, փոխանակ Ալիին ու Վալիին, չինացի ու մադագասկարցի բանվորի կյանքը երգելու ու անիմաստ ռադիո–ողջույններ ղրկելու աշխարհի չորս ծագերուն, արտահայտեին Հայաստանի աշխատավորության զգացումները, անոր ապրումները և տարփեին անոր որոնումներով»:

Նոյեմբ. 22–ի թիվ 657–ում «Գրական կյանքը Հայաստանի մեջ» հոդվածում էլ նշելով, որ Չարենցի մասին «դաշնութահայաստանում» առաջինը գրել է Զոզանյանը, ապա Օշականը «Հայրենիքում» – երկու հոդվածին էլ վերաբերվում է բացասաբար. ինչպես և Չարենցին ու «Նոյեմբեր» միությանը:

Նույն հոդվածի շարունակությամբ էլ (նոյեմբ. 29, թիվ 663) Ա. Կ–ն հավաստում է, թե Չարենցին Հայաստանում «հավանում են», որովհետև «Հայաստանի կյանքն է չոչափում՝ այսպես, թե այնպես»:

թյան րոպեների իրեն հառած տառապած–հայրենաքաղձ–հուսավառ դեմքերի գաղթականական համապատկերը, առանձնակի վերաբերմունքով է սրբագործել յուր ներգաղթանպաստ ծառայությունը...

Մշտապես անտիկ Հելլադայի հետ

Պլատոնի «Խնջույքից» հետո հաջորդ վկայությունն առայժմ առնչվում է Արմենուհի Տիգրանյանին նվիրած բանաստեղծություններին (Անտիպ և... 27–29): «Նորից՝ Արմենուհի Տիգրանյանին» (թվագրված 9 և 10, 3, 920) շարքի վերջին՝ «Քո դեմքը, թովչությունը դեմքիդ»[13] տողով սկսվող բանաստեղծությանը, որին Վ. Տերյանից քաղված՝ «Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ...» բնաբանին կից երկրորդ բնաբանը սա է՝ Սոֆոկլեսի «Անտիգոնեից». «Как передать мне эту грусть безнадежную»[14].

Փաստացի վկայակոչվածը այսքանն է. իսկ ահա գրադարանը վկայում–հաստատում է, որ Հելլադան մշտապես եղել է բանաստեղծի հետ. անխտիր թե՛ գրական, թե՛ պատմագրական ու փիլիսոփայական կոթողներով՝ հրատարակված թե՛ հատորներով, թե՛ առանձին: Այդ շարքում հիշարժան է նախ այս մեկը: Թեև առանց նշումների, բայց որոշակիորեն օգտագործված պահպանվում են Պլուտարքոսի այս պրակները. «Дешевая библиотека – 171

Плутарх
Сравнительное жизнеописание с греческого перевел В. Алексеев.
С введением и примечаниями.
Том пятый, выпуск второй
Никий и Красс
С. – Петербург, 1892

Այս միևնույն պրակով՝

Выпуск третий
Серторий и Евмен

Առաջինն աներկբայորեն «տուրք» է Խաչատուր Աբովյանին, այլև Սպարտակին. երկրորդը՝ ի՞նչ իմանաս:

---

[13] «Էմալե պրոֆիլի» և «Տաղարանի» ածականամակդիրային մթնոլորտը՝ հոլովվող «մախմուրով» ու «թավիշով», թելադրում է մտածել, որ «թովչությունը», թերևս, սխալ ընթերցում է: Քանի որ ինքնագրերը ձեռքի տակ չեն եղել. հավանորեն գտնվում են Ստեփան կամ Ալեքսանդր Թափչյանների մոտ:

[14] Անտիպ և... հատորյակում երկրորդ բնաբանը՝ «Անտիգոնեից» չկա, բացակայում է. երևի թե դժվարություն է ներկայացրել գտնելը:

Զդ պահպանվում է և Павсания, Описание Еллады, или путешествие по Греции во II веке по Р. Х. (СПб., 1887—1889). «Յեղիշե Չարենց 1929» մակագրությամբ: Մեծադիր, 839 էջանոց պարզապես նախանձելի հրատարակություն՝ 10 ծավալուն գլուխներով, ըստ ամենայնի հանգամանալի, հարուստ բովանդակությամբ ու տողատակերով, որն անկասկած երկար միջոցով եղել է իր սեղանի գիրքը:

Գրքի 1-ին «Аттика» գլխից ընդգծված է այս տողը*.

„...За длинным навесом, который служит рынком для прибрежных жителей, живущие дальше имеют другой рынок, с задней стороны, к морю, стоят статуи Зевса и Народа, работы Леохара, а у самого моря находится храм Афродиты..."(с. 150).

Էջ 153-ում ընդգծված է տողատակի այս երկու տողը.

„В Римские времена стирались прежния надписи и надписывались имена консулов, императоров и. т. п."

Էջ 154-ում. «... у этого Ерихфония не было отца; по сказаниям, родители его были Ифест и Гея (Огонь и Земля)[45].

---

[45] По афинским сказаниям, Имера полюбила и похитила его за чрезвычайную красоту, и имела от него сына Фаефона, которого потом Афродита сделала стражем неба. Так говорят поэты и с ними Гезиоид в своем стихотворении "О знаменитых женщинах".

Նույն գլխից ընդգծումներ կան նույն հատվածներում.

"...Между афинянами — Грил Ксенофонтов, а в Виотийской конниц — фивянин Епаминанд. Эти картины рисовал Ефранор; [46] Его же работы, находящиеся в ближайшем храме Аполлон, под названием "Отцовский" (патроос); а из находящихся пред храмом изваяний Аполлона — одно произведение Леохора, другое с именем "Отвратитель зла" (алексикакос) — Каламиса. Это имя, говорят, дано Аполлону от того, что прорицанием в Дельфах он прекратил опустошавшую город, вместе с пелопоннесским войском, страшную чуму.

Там же храм Матери богов [47], с ея статуей, работы Фидея.

[48] Греки любили производить местныя названия от героев, но, судя по Herod—88, могли не заключить, что название "Керамик" произошло от "Каримос" — глина, из которой делалась лучшая во всей Греции глиняная посуда, вывозившаяся из Афин в оч. древния время".

[49-50] В древности картины этой стои пользовались великой славой.

[51] Он же "митроон", и служил городским архивом. В здании совета находились святилища Зевса Советника, Афины Советницы и Истии Советницы... (с. 155).

[52] 7-րդ "Ахайя" գլխից ընդգծված է (կողքից) այս հատվածը.

"...Возле юноши стоит раб с дротиками и охотничьими собаками. Имен этих людей я не могу узнать, но всякий догадается, что там похоронены муж и жена. Основателем Тритей некоторые называют Келвида, прибывшаго из опикских Кум; другие говорят, что Арей, сочетавшийся с Тритеей, дочерью Тритона, жрицей Афины, имел от нея сына Меланиппа, который основал город, увеличил его и дал ему название матери — "Трития" (с. 585).

Ճիշտն ասած ընդգծված են միայն Имен этих-ից սկսած նախադասության՝ муж и жена — 2 տողը, և արտագրելիս մտածել եմ, որ դրա տակ թաքնված է Արփենիկի կողքին թաղվելու բանաստեղծի երազանքը...

Ամերիկահայությունը հանուն ներգաղթի. արդյունքով... և հանուն Չարենցի

Անօրինություն կնկատվեր, իհարկե, եթե ամերիկահայությամբ ու «Պայքարով» ծայր առած դեպի Հայաստան ներգաղթի ու օգնության պատմական բախտորոշ իրողությունը այս կետում կամ գլխում վերջավորվեր՝ շրջանցելով ամերիկահայությանը: Մանավանդ ստորև մատուցվող նման անշրջանցելի դրվագները: Հասկանալի է, առանց նախորդ մեկնություններն ու հանգամանքները վերակրկնելու՝ փաստական տվյալների ու տեղեկությունների ուղղակի թվարկումով: Այլև՝ միօրինակությունից խուսափելով, բազմազանության համար դիմելով այս անգամ էլ Նյու Յորքում հրատարակվող «Ազգային, քաղաքական, տնտեսական, գրական, գեղարվեստական, կրոնաբարոյական» «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթին: Անշուշտ, ծաղկաքաղով. այն էլ վիճակված Հկ մայիսի 23-ի թիվ 21-ում Վարսենիկ Բավեյան ստորագրությամբ տպագրված «ազգային-քաղաքական» կոչնակով.

Մյասնիկյանի հիշատակին

Օրհնյա՜լ լինի հիշատակդ:
Ողբում է քեզ Հայաստան:
Ողբում է քեզ մանուկն անմեղուկ:
Ողբում է քեզ մշակն հաղթանդամ, որի հետ կողք-կողքի
շինեց իր բույնը հայրենի:
Ողբում է քեզ ուսանողն, որին սովորեցրիր սիրել
Հայն, Հայ լեզուն ու Հայ պատմությունը:
Ողբում ենք մե՛նք, օտար ափերում ցրված զավակները
Հայաստանի՝ մեր սրտի կսկիծների դողդոջ հառաչանքով:

Հայրենի հիշատակների կարոտ մեր կարմրած աչքերից մի քանի կաթիլ արցունք ենք ուղարկում կաթկթելու շիրմիդ վրա. մինչև օրն բերկրառիթ, երբ կիրականան երազներդ: «Մենք պիտ ունենանք այնպիսի մի Հայաստան, որի նմանը չենք ունեցել ո՛չ Բագրատունիների և ո՛չ Ռուբինյանների ժամանակ...» (ընդգծ.՝ Ալ. Զ.):

Հոգիդ սփոփի ի տես Հայաստան աշխարհին, որի ազատ քաղաքացին շիրիմիդ վրա կանգնեցնե պիտի կոթողն սրբազան և ծնկաչոք օրհնե հիշատակդ անմահ»:

Քանի որ տողերն առնված են չակերտների մեջ, նկատենք որ հազիվ թե Մյասնիկյանը գրած լինի այդպիսի տողեր. որպես քաղաքական գործիչ շատ էր զգաստ ու խոհական: Ուրեմն և կարելի է կարծել, ասել է զրույցում՝ նույն Կաբիկյանի, Արտակ Դարբինյանի կամ հեղինակավոր մեկ ուրիշ գործչի հետ, ըստ այդմ էլ շաբաթաթերթը առել է չակերտների մեջ:

Եվ այսպես Հայրենիքի հետ դիրքորոշումը՝ անբաժան է շաբաթաթերթի բոլոր թվերից. մի դեպքում արտահայտված հայոց լեզվին վերաբերող տեղեկատվություններում, ինչպես. «... Հայաստանի մեջ տիրող լեզուն հայերենն է. և պարտավորիչ անոր գործունեությունն ու ուսուցումը: Օտար լեզու խոսացողի չես հանդիպիր, ինչպես առաջ շատ կար... Պետական ամեն հայտարարություն և ազդ հայերեն է...»: Մի այլ դեպքում վերաբերող պետական գործիչներին. «... Արդի վարչապետ Լուկաշին մեծ հայրենասեր մըն է և որևէ գովեստ անբավական է իր զգացմունքներուն ու արժանիքներուն առջև. ժողովրդին ամեն դասը կպաշտեն զինք և իրավամբ: Իսկ մյուս վարիչները ամենքն ալ անկեղծ գործիչներ են, անձնվեր և լի հայրենասիրությամբ հանդեպ հայ ժողովրդին վերածնունդին...»: Ընդ որում սա հաստատվում է մի այլ տեղեկատվությամբ ևս ըստ որի՝ «Նոր լուրի» Բարիզի թղթակիցը տեսակցություն մը ունեցած է վերջերս Էջմիածնեն վերադարձող Եվրոպայի Ընդհանուր առաջնորդ և ս. Էջմիածնի Մայր Աթոռի պատվիրակ տ. Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյանի հետ՝ որ ի միջի հետևյալ տեղեկությունները հաղորդած է...» և թվարկվում են վերաշինության տարբեր—տարբեր օրինակներ (Նույնը, հ. 2, թ. 22, էջ 695):

Նույնն է հաստատում և Մեծ Բրիտանիայի հավատարմատարը Մոսկվայում. «Հայաստանում ես ապշել էի այն եռանդուն գործունեությունից ու էներգիայից, որ ցուցաբերվել են անցյալ տարիներին այնքան տանջված երկրի վերականգնման գործում» (Նույնը, 1925, թ. 30, էջ 949):

Ապա էջեր նվիրված հայոց արվեստին. ինչպես Արամ Երեմյանի «Մարտիրոս Սարյանի նկարչության էտապները» հոդվածը՝ նկարազարդ. այդ թվում Զարենցի դիմակով դիմանկարը (թ. 24. էջ 748–750). ինչպես ֆրանսիացի Անտուան Պորտելի նամակը — հասցեագրված Ար. Չոպանյանին (թ. 24. էջ 743). անգամ խաղեկային հատվածներ, ինչպես սրամիտ այս մեկը.

Արևը մարը մտավ,
Փեշերը կարմիր կտավ,
Ես Ոսկուկը սիրեցի՝
Մաքրիկը ծոցս մըտավ... (թ. 38. էջ 1128):

Միաժամանակ տեղեկություն, որ Հայաստանի կառավարությունը հոգում է Վ. Տերյանի դստեր «ապրուստին ու կրթության ծախքը» (թ.24, էջ 764), որ Շիրվանզադեն գտնվում է Փարիզում (1925 ապրիլ), որ Հ. Աբելյանը Ամերիկայից հասել է Երևան:

Շաբաթաթերթը հետաքրքիր նյութեր է հրապարակել և արտերկրի, ի մասնավորի ամերիկահայության կյանքից ու բարքերից. հասկանալի է ազգադավան ու ազգապահպան մտահոգություններով ու խորհուրդներով: Դաշտահանդեսային անկարգությունների դեմ ուղղված մի հոդվածում, օրինակ, Ս. Բաղեյանը գրում էր. «... Այս պարոնները կը մոռնան, որ մենք իբրև ժողովուրդ այստեղ կշեռքի

մեջ ենք, և մեզ խորթ աչքով նայողներ շատ կան, որոնց առիթներով մեզ քննադատելու նյութ կմատակարարի... (Թ. 25, էջ 788): Մի այլ «**Պարամոլություն**» վերնագրով նոթում էլ՝ այն համարելով ախտ և «հոռի ունակություն», հեղինակը եզրակացնում է. թե՝ հետևանքը կլինի այն, որ՝ «... ասկե տասը քսան տարի վերջ Ամերիկայի հայ գաղութեն պիտի մնա ոչ այլ ինչ՝ բայց եթե հաճոյամոլ և նյութապաշտ սերունդ մը» (Թ. 23, էջ 708): Եվ այդ նոթերի կողքին բարոյա-խրատական այսպիսի դարձվածներ. **«Անհոգությունը վտանգներուն մեծագույնն է». «Երաժշտությունը աղոթքի զավակն է, կրոնը՝ ընկերը». «Անասունները խիստ հաճելի ընկերներ են – հարցումներ, ոչ ալ քննադատություն կ՚ընեն»** և այլն:

Անշուշտ. հաղորդվում էին և լուրեր Պոլսից, Վենետիկից և այլ վայրերից. ինչպես այն, որ Հ. Արսեն Ղազիկյանի թարգմանությամբ 1925-ին լույս է տեսել **«սպանական «Իմ Սրտի երգը» (Թ. 26, էջ 824)**, և սա նշանակում է **թե Վենետիկում եղած օրերին Զարենցը անկասկած կարդացել և թարգմանչի հետ զրուցել է այդ երկի շուրջը:** Բեռլինում գտնված օրերին էլ տեղյակ է եղել այն իրողությանը, ըստ որի, թեև ուշ, դոկտ. Լեփսիուսը Գերմանիայում (ներառյալ երկրորդ համաշխարհային պատերազմի օրերը՝ արաբական աշխարհում) ջանում էր արաբներից և ուրիշներից կորզել հայ որբեր՝ հասցնելու համար նրանց թիվը 4000-ի (Թ. 31, էջ 983): Կողք-կողքի...

Պոլսից էլ ասենք, հաղորդվում էր, թե՝ «Շիշլիի և Պալըքլիի գերեզմանատուներեն ետք Սկյուտարի գերեզմանատունն ալ բարեզարդելու ձեռնարկված է, շնորհիվ հանձնաժողովի մը» (Թ. 38, էջ 1106),

Այս ամենով հանդերձ ամեն դեպքում շեշտադրումները բոլոր թելերով հանգում են հայրենիքի օգնությանն ու ներգաղթին. հայտնվում են ՀՕԿ-ի գործիչների հասցեներ. Ս. Փիրումյանինը՝ Փարիզի, Ա. Բեկզադյանինը՝ Բեռլինի... փոխադրվելը տեղից տեղ. ինչպես հիշարժան այս մեկը, թե՝ «Դ. Շահվերդյան Փարիզեն մեկնել է Աթենք» (նույնը), և թե՝ 1925-ի հունիսի 22-ին Նանսենը Ժնևից մեկնում է Պոլիս[53] այնտեղից էլ Երևան (ինչպես հայտնի է՝ Երևան հասավ Մոսկվայից). ժամանակ անց էլ հաղորդվում էր, թե՝ **Հուլիսի 5-ին Նանսենը մեկնել է Երևանից, և որ եկել էր ներգաղթողների համար բնակատեղեր ընտրելու»...**

Ապա ամիսներ տևած ընթացքներով Հայաստան ներգաղթողների համար հա-

[53] Այդ օրերին Ֆ. Նանսենը արձանագրում էր. «Մենք գնում ենք մեզ բարբարոսություն վերադարձնող ճանապարհով: Եթե դուք գնաք Թրակիա՝ տեսնեք, թե ինչպես է մի ամբողջ ժողովուրդ թափառում ճանապարհներին՝ իր հետ տանելով ունեցած-չունեցածը,— ապա կհասկանաք, որ մենք վերադարձել ենք ժողովուրդների վերաբնակեցման ժամանակներ: Մենք արդեն հասել ենք այն բանին, որ միանգամայն հանգիստ կարող ենք խոսել ժողովուրդներին ամբողջովին ոչնչացնելու մասին». տե՛ս Лив Нансен—Хейер, Книга об отце, Л, 1972, стр. 389.

Հիշեցնենք. այդ գեղատեսիլ լեռնաշխարհը «հույն հեղափոխականների» անցուդարձի (ներառյալ զենք փոխադրելը) ավանդական բանուկ եզերքն էր Հունաստանի և Բուլղարիայի միջև, որից և օգտվում էր տեղահան արևմտահայությունը:

վաքվող հանգանակության ցուցակներ, որոնց շարքում էլ նվիրականից-նվիրական այս մեկը. «Նյու-Յորքեն տիար Արշամ Սարըյանի ամուսնության առթիվ հետևյալ նվիրատվությունները եղած են դեպի Հայաստան ներգաղթի հանգանակության օգտին. տիարք Նազարեթ Սարըյան 25.00, տիկ. Թագուհի Սարըյան 15.00, Արշամ Սարըյան 10.00, Ղևոնդ Սարըյան... *և Վահրամ Սարըյան (ասել է՝ Վիլյամ Սարոյան՝ Ալ. Զ.) 3.00...» (թ. 44, էջ 1293): Ակամա մտածում-ենթադրում ես, որ Սարըյան գերդաստանից մեկի սեղանին 17-ամյա Վահրամը, գուցե թե, թերթել էր ՀԿ այդ թիվ 24-ը, զմայլանքով-զմայլվել Զարենցի դիմակով դիմանկարով, և Հայաստան Հայրենիքը տեսնելու երազանքից անբաժան երազելով-երազել է դեմ-դիմաց տեսնել Սարյանին ու Զարենցին...*[54]

Մյուս անակնկալը ասենք, թե ակնկալը վերաբերում է նույն ՀԿ 24-ում զետեղված (էջ 765) այն տեղեկությանը, ըստ որի 1925-ի հունիսի 4-ին Փարիզում վախճանվել է Կամիլ Ֆլամարիոնը՝ կտակելով մահից հետո հանել կրծքից սիրտը և նվիրել ծննդավայրին: Եթե հիշում եք ֆրանսիացի աստղագետին Զարենցը գիտեր դեռևս 1923-ին (թերևս. ավելի առաջ). ըստ «Ես և Իլյիչը» պոեմի հիշենք.

Զե՛,
Կանգնած եմ.
Ընթանում է – գետինը.
Գետինը սողում է.
Խփում է ուղեղիս արյունը.
— Ա՛,
Հասկանո՞ւմ եմ.
Էդպես էր գուշակում դեռ Կամիլ
Ֆլամարիոնը... (3, 157)[55]:

Եթե սրա կողքին էլ մտաբերենք ՀԿ էջերում տեղ գտած այն տեղեկությունը, որի համաձայն 1925-ի ապրիլ-մայիսին (Մյասնիկյանի հետ հաշվեհարդարի թարմ հետքերով) գործում էր Կարսի շրջանում սահմանագիծ որոշող թուրքա-

---

[54] 1935-ի ամառն այցելության միջոցին Վ. Սարոյանը Երևանում երկար տեսակցություն ու զրույց է ունեցել Վ. Թոթովենցի հետ: Զարենցի հետ ինչպես հայտնի է իր հուշերից, հանդիպել է Մոսկվայում: Իսկ Մ. Սարյանը գտնվում էր Փարիզում, որտեղ և հյուրընկալվելով վրձնել է Ակ. Բակունցի Բախչաղյուլ մոր դիմանկարը: Եղելությունները իրենց հերթին ճշգրիտ... և շարունակվող – լրացվող...

[55] Մեծապես կարևոր տեղեկություններ բովանդակող հին հանրագիտարաններում Կամիլ Ֆլամարիոնի վերաբերյալ կարդում ենք. «... Հայտնի է աստղագիտական իր աշխատություններով և նույն առարկային վերաբերող հանրամատչելի ստեղծագործություններով. «Գեղանկարչական աստղագիտություն», «Անսահմանության ալիքներով», «Աշխարհում բնակեցված բազմաքանակություն», «Աշխարհի վերջը», և այլն, որոնցում դրսևորել է բանաստեղծական զորեղ տաղանդ և զարգացած երևակայություն՝ խոր էրուդիցիայի հետ միասին». տե՛ս Энциклопед. словарь Ф. Павленкова, 1910, СПб, с. 2729.

ռուս խառն Հանձնաժողովը,— ապա պետք է որ ջանանք պատկերացնել Բեռլինում Հարկադիր լրացուցիչ երկու «լենինյան պոեմ» չարակարդող Չարենցի տառապալի մոլեգնության չափը… Չէ որ ինքն էլ կարող էր նրանի տալով ցանկանալ, որ յուր սիրտն էլ նվիրվի ծննդավայրին… Կարսի՞ն լինի, թե՝ Մակո՞ւին…

Մնում է, ուրեմն, ռամկավարների օրգան «Պայքարով» սկսածը՝ ամփոփենք արդեն բացնիբաց «Պայքարում» տպագրված Հոդվածով, քաղելով այսպիսի բնորոշ Հատվածներ. «Բանաստեղծ Եղիշե Չարենց, որ Իտալիաեն Ֆրանսա եկած էր, քանի մը օր Բարիզ մնալե ետք՝ գնաց Պերլին, ուրկե պիտի անցնի Մոսկվա, և, Հավանաբար, մինչև տարվա վերջը Հոն պիտի մնա, Հրատարակելու Համար ընդարձակ գրական Հավաքածո մը, որուն պիտի Հրավիրվին աշխատակցել նաև մի քանի ծանոթ Թուրքահայ գրողներ, առանց առաջին գծին վրա ըլլալով տիկին Զապել Եսայանը»:

Ապա դառնալով փարիզյան ընդունելությանը Ք. ստորագրությամբ գրում էր. «Այս զարմանալի քաղաքին մեջ, ուր այնքան Հաճախ կը փառաբանվեն ողորմելի միջակություններ, և որ ճշմարիտ մեծերը միշտ անբախտ եղած են ոչ իսկ բանաստեղծին ի պատիվ Թեյասեղան մը տալու մտածումը ունեցան: Անցավ անչուկ, ինչպես որ եկել էր…»:

Եվ ապա. «Արդարև արտաքին կերպարանքով Չարենց շատ բան չարտահայտեր… բայց որքան ներքին առավելություններ իր մոտ, բաղդատմամբ մանավանդ իր անբարեխիղճ ու նախանձոտ եղբայրակիցներուն, որոնք սև Համբավ էին չիններ այստեղ անոր Համար և որոնց մոտ ամբողջ եղածը իրենց արտաքին փայլուն երևույթն է…». (անշուշտ, ակնարկը Հասցեագրված է Կ. Զարյանին և Ա.Հարոնյանին): Իսկ այնուհետև. «Շատ Հասուն մտքի տեր, Հետաքրքիր և միանգամայն արևելյան ու արևմտյան Հայ գրականության խորապես Թափանցած մարդու մը…

Եվ նույնիսկ անոնք, որոնք պահ մը վերոՀիշյալ բամբասանքի ազդեցության ենթարկված էին կը խոստովանին, Թե խաբած են զիրենք և Թե շատ Հաճելի տպավորություն մը կրած էին բանաստեղծի Հետ իրենց ունեցած տեսակցութենեն»[56]:

Բայց չէ որ ՀՕԿ–ի և ներգաղթի ամերիկյան նշված–չնշված բոլոր ընթացքների ոգին ու ոգեկոչողը Փարիզից շատալ Ցրեզնո անցած Զորավար Անդրանիկն էր… իր Հետ տարած «Ես իմ անուշ Հայաստանի»–ով…

---

[56] Պայքար, 1925, 19 ապրիլի, Բանվոր–Պարիս, 1925, 12 մայիսի:

ՀՌՈՄ. ՉԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԾԻԿ... ՇՐՋՈՒՆ ԸՆԴՀԱՏԱԿՈՎ

Դառնալով Չարենցի արտասահմանյան ուղևորության Հռոմի՝ որոշ առումով խճճված, այլև ծուղակ–ծանծաղուտներով լի հանգույցին,— նախ ճշտենք, թե ե՞րբ և որքա՞ն ժամանակ է տևել այցը:

Հուշագրերից Հռոմում նրան ուղեկցած Ահարոն Խաչատրյանը գրում է, թե՝ «... 1924–ի վերջավորության բանաստեղծը եկավ Հռոմ» (մի այլ անգամ էլ «1925–ի սկիզբը»). Ճշտելով Խաչատրյանին, ուղեկիցներից մյուսը՝ Արման Սարյանն էլ «հաստատում» է՝ 1925–ի գարնանը: Վահան Նավասարդյանի վկայածով էլ՝ 1924–ի վերջերին Փարիզից Եգիպտոս դարձին, Վենետիկ մտնելուց հետո «Հռոմում մնացի մի քանի օր», և այդ օրերին էլ «դիպվածաբար» հանդիպել է Չարենցին: Ամեն դեպքում հավաստիք մնում է հանդիպմանը վերաբերող բանաստեղծի «Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը» երգիծական ակնարկի տակ եղած տարեթիվը՝ «1925. 16. II, Հռոմ»: Եվ այն, որ 1925–ի մարտի 21–ի թվով ԽՀ–ն հաղորդում էր, թե՝ «Վաղվա համարում կարդացեք Եղիշե Չարենցի նոր պատմվածքը՝ «Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը»: Բայց տպագրվում է ԽՀ ապրիլի 5–ի և 7–ի թվերում, ծանոթությամբ, թե՝ ուշացման պատճառը եղել է Մյասնիկյանի զոհվելուն վերաբերող նյութերի տպագրությունը:

Ժամանակագրական մյուս հավաստի տվյալներից մեկն էլ բանաստեղծի գրադարանում պահվող «Չապլին» հոդվածների ժողովածուի վրա եղած «Ե. Չարենց. 925. II. 24. Հռոմ» տարեթիվն է, որից հետևում է, որ դեռևս շարունակում էր մնալ Հռոմում: Այսպիսով տևողության առումով մոտավոր ճշտվում է Խաչատրյանի մտաբերումը, ըստ որի ինքն ու Սարյանը Հռոմում բանաստեղծին ուղեկցել են 24 օր: Եթե դրա հետ միասին գիտենք, որ այնուհետև Չարենցը Հռոմից Վենետիկ է հասել մարտի 4–ին, ապա կարող ենք որոշակի ասել, որ Աթենքից փետրվարի սկզբին (թերևս Սալոնիկում 1–2 օր հանգրվանելուց հետո) Հռոմ է հասել փետրվարի առաջին տասնօրյակին: Կարելի է դիտել, թե որքան ճշգրիտ էր աշխատում խորհրդային հետախուզական ծառայությունը: Որոշակիորեն նույն ձեռագրով ինչպես Տրապիզոնում. «Հանգուցյալ պարոնը...» Երևան հասնելուց, մարտի 21–ին վերնագիրը հրապարակվելուց, պատասխանը ունենալուց հետո միայն Հռոմում Չարենցին տրվում է ուղևորությունը շարունակելու անցագիր: Հայտնապես այդ պայմաններով էլ թույլատրվել էր գնալ Վենետիկ. ասել է՝ «Հանգուցյալով...» արդեն իսկ Դաշնակցության ու Չարենցի, Դաշնակցու-

թյան ու Իսահակյանի, թերևս և նրանց երկուսի միջև սերմանված հակասության առկայությամբ: Ըստ այդմ պատահական չէր, անշուշտ, որ «Հանդուցյալ պարոնի...» հրապարակվելն էլ համընկնում է ճիշտ և ճիշտ Զարենցի Փարիզում գտնվելու և այնտեղից հեռանալու օրերին:

Իսկապես տասն ամբողջ ուղևորության համար նախատեսված ծրագիր. եթե գիտենք նաև, որ Վենետիկից Փարիզ ճանապարհվելու նախաշեմին **Իսահակյանի հետ առնում են Մյասնիկյանի զոհվելու բոթը... Մնում էր միասին վճռել երկընտրանքը. մնա՞լ արտասահմանում, թե՞ վերադառնալ և դառնալ Հայրենիքի զորացման լծակիցը:** Այստեղից այդ ժամանակներից ծայր առած և առ այսօր հարատևող Իսահակյանի կյանքի ու գործունեության «խորհրդավորությունները»: Այդ թվում, ինչպես Դաշնակցության Փարիզի ժողովից հետո Վ. Նավասարդյանի այցը Վենետիկ՝ Իսահակյանին, և համարյա անմիջապես՝ Զարենցի այցը: **Կենտրոնաձիգ ազգօգուտ վսեմ խորհրդավորություններ ու խորհուրդներ,** որպիսիք լիաձայն–լիակշիռ հնչեղությամբ կարժանան Իսահակյանի հարուստ ժառանգության գլխավոր հրատարակության արդյունքում:

Դառնանք, ուրեմն, Հռոմ ու Զարենցին. իր ինքնագրով **«Հռոմ, 1925, 22 I» տարեթվով Կոստան Զարյանի տիկնոջը հասցեագրած կարճառոտ նամակին:** Քաղենք ամբողջովին. **«Հարգելի տիկին Զարյան,** Խորին շնորհակալությամբ և ուրախությամբ ստացա Ձեր բացիկը. շատ ցավում եմ, որ Կոստանը այդտեղ չէ: Մի ամսից հետո ես Փարիզում կլինեմ, այնտեղ կհանդիպեմ նրան: Իսկ այժմ խնդրում եմ ցույց տաք ինձ հետևյալ աջակցությունը. ես այստեղ միանգամայն մենակ եմ, իսկ լեզու չիմնալս ինձ անտանելի դժվար դրության մեջ է դնում. ես փորձեցի գտնել այստեղ հայերի, բայց չգտա, հիմա խնդիրքս հետևյալն է, եթե Դուք ունեք Հռոմում ծանոթներ՝ խնդրում եմ ինձ գրեք նրանցից մի երկուսի հասցեն, ես կհանդիպեմ նրանց՝ գուցե բարի լինեն ինձ մի քիչ աջակցել քաղաքը և շրջակայքը տեսնելու գործում: Ես փորձեցի այդ մենակ անել, բայց եվրոպական ոչ մի լեզու չիմանալով՝ բան դուրս չեկավ: Խնդրում եմ նաև գրեք ինձ՝ Հռոմո՞ւմ չէ արդյոք տաճկահայ բանաստեղծ հայտնի գրագետ Հրանտ Նազարյանը. եթե Հռոմում է՝ նրա հասցեն ևս խնդրեմ գրեք: Կրկին խորին շնորհակալությունս եմ հայտնում Ձեր բացիկի համար: Ներեցեք, որ անհանգստացնում եմ Ձեզ, իմ միակ արդարացումս թերև[ս] այն է, որ «Օտարության» մեջ եմ գտնվում... Հույս ունեմ, որ նամակիս պատասխանը չեք ուշացնի:

Ընդունեցեք խորին հարգանքներս

Եղիշե Զարենց»:

Հասցես՝ Roma[1]

[1] Հայություն, 1994, հունիս, թիվ 7, հ. 34: Տիկին Թագուհի Զարյանի հետ ծանոթ էր Երևանից: Հասցեն չի նշել:

Կոստան Զարյանի որդու՝ Արմեն Զարյանի, մահախոսականի հետ համարյա միաժամանակ վերջերս «Հայության» էջերում Արմեն Զարյանը նախ հայտնում է, թե նամակը գտել է հոր թղթերում, և որ Զարենցի Հռոմի հասցեն չունենալով մայրը չի կարողացել պատասխանել: Հանելուկային հանգույցներով վավերագիր, որի շուրջը, կարելի է թե, լինեն վարկածներ: Օրինականորեն, նմա-

---

Հավանաբար Զարենցին չհաջողվեց գտնել Հ. Նազարյանցի հետքերը: Տարիներ անց գտավ Անդրանիկ Ծառուկյանը՝ ողբերգական չարունակությամբ ու վախճանով: Իտալիայի հարավում գտնվող Բարի քաղաքում գլխավծով և հայ ժողովրդի զավակներին վիճակված–վիճակվող ճակատագրի հարանույն տարբերակներից այս մեկով. «... Կարդացած եմ Թեոդիկի տարեցույցներուն մեջ,— գրում է Ծառուկյանը:— Բարիի մոտերը հիմնվեցավ հայկական «Արաքս» գյուղը՝ ազնվական իտալացիի մը նախաձեռնությամբ և Մուսոլինիի աջակցությամբ: Գորգի գործարան մը ուներ, ուր քառասունի չափ հայ որբուհի աշխատեին և տնօրենն ալ բանաստեղծ Հրանտ Նազարյանցն էր: Շուտոնց չեմ լսած «Արաքսի» մասին, բայց ինչ եղան աղջիկները, ինչ եղավ Հրանտ Նազարյանցը»...

Եվ հինում գնում է «ընդունելության դրասենյակ». «— Այստեղ Արմենո կա՞...

Արմենոն գտնվում է՝ այն էլ Հրանտ Նազարյանց անուն–ազգանունով, ծնված Թիֆլիսում՝ ամուսնացած իտալուհու հետ, «պատերազմի ալիքներեն հոն նետված»: Որի միջոցով էլ գտնվում է «Տոքթ. Նազարյանցը»: Գտնվելուն պես ցավալի հարց ու պատասխանով. «— Պրն. Նազարյանց ես հայ եմ, Սուրիայեն,— ըսել մտնելս մեկ եղավ»,— մեկ է լինում և պատասխանը. «— Սուրիայե՞ն, ուրեմն Դաշնակցական ես...

— Նստիր, նստիր, հուսամ տարճանակ, ռումբ չկա վրադ... իմացած եմ, որ դուք մարդ կը սպաննեք, հայեր, ճի՞շդ է...

— Հին և տխուր պատմություններ են, հիմա տանկ բան չկա, ներկայիս գալուց կը չինենք:

— Աղե՛կ, աղե՛կ, խելքներդ տուն եկավ ուրեմն»...

Եվ Ծառուկյանը դառնում–նկարագրում է «բարեկեցության մը նշաններ» չունեցող այդ տան ու տանտիրոջ վիճակը. «Զյունի պես ճերմակ և շատ աւատ մազեր ծածկած գլուխը, պզտիկ մորուք մըն ալ կա, որուն մեջ ճերմակը այնքան տիրապետող չէ... Նստած է թուղթերով ծանրաբեռն լայն սեղանի մը առջև: Բացատրեց, թե «Կրաալ» անունով զուտ բանաստեղծական ամսաթերթի մը խմբագիրն է: Թերթը Հռոմ կը տպվի, բայց ինք Պարիեն կը խմբագրե, թերթ մը որուն կ'աշխատակցին Իտալիո լավագույն բանաստեղծները: Հիմնած են ապագայապաշտ բանաստեղծ Մարինեթիի հետ...»:

Եվ այս մթնոլորտում Ծառուկյանը առաջարկում է. «— Հայերեն անտիպ գրություններ չունի՞ք Պրն. Նազարյանց: Ես «Նայիրի» անունով ամսագիր մը կը հրատարակեմ Հալեպի մեջ, կ'ուզեմ այնտեղ տպել:

— Ես մոռցած եմ հայերեն գրածներս: Կը պատկանիմ իտալական գրականության...»:

Բայց արդյունքում... «... Կը հավատայի որ իրեն տող մը, արտասանված իմ կողմես, կրնար «հայացնել» զինք, բայց այդ տողը կը խուսափեր, հուսահատականորեն...»: Ուրեմն և մնում էր շուտափույթ փախուստ տալ դառնությամբ ու ցավով շաղախված այդ տնից:

Հուշագիրն այնուհետև մտաբերում է, որ իրենց հանդիպումից 15 տարի անց Հ. Նազարյանցը վախճանվել է. ինքը խնդրել է բանաստեղծ Արամայիս Սրապյանին հետաքրքրվել հանգուցյալի թղթերով, մանավանդ որ՝ «... Ինծի ըսած էր թե Մուսոլինիին հետ թղթակցություն ունեցած և հայասիրական նամակներ ուներ անկե: Արամայիսին պատասխանը եղավ. «Երեք տարի է վեր Նազարյանց տուն չուներ և կ'ապրեր պետական դարմանատունի մը մեջ: Թուղթ ոչ մեկ կտոր կա իրմե»: Տե՛ս Ա. Ծառուկյան, Մեծերը և...մյուսները, Պայրութ, 1992, էջ 155–160:

Ասել է թե շարունակում է ուժի մեջ մնալ «Կրաալ» իտալերեն ամսագրին՝ (Մարինեթիի թղթերով հանդերձ) և Նազարյանցի բախտին ու թղթերին հետամուտ լինելու Ծառուկյանի պատվիրանը...

տիս սույն վարկածի կողքին և այս հավանականությամբ: Կարելի է ենթադրել, որ իրենց հանդիպման միջոցին Նավասարդյանը տեղեկացրել է Չարենցին, թե Փարիզում որպիսի եռանդով է վարկաբեկում Զարյանը իրեն, և ահա, այս նամակին նախորդած բացիկով դիմել է կնոջը ստուգելու նպատակով: Ճշտելուց հետո, այլևս նամակագրությունը շարունակելու կարիք չկար, ըստ այդմ մոր նամակի տակ բացակայում է իր հասցեն: Վարկածը հաստատող լրացուցիչ փաստարկներ են և. ինքնագրի չարենցյան ծանոթ նյարդայնությունը, սխալմունքը ամսաթվում՝ փետրվարի փոխարեն՝ հունվար (I), և որ նույնպես կարևոր է, որոշ ժամանակ անց՝ Կ. Զարյանի արարքի բացահայտ ակնարկը Նավասարդյանի խմբագրած «Յուսաբերի» էջերում: Բայց այդ մասին տեղում:

Այժմ անցնենք բուն հռոմեական ծուղակ–ծանծաղուտներին՝ բնածին–օծված այնպիսի կատարածույով, որպիսին վերը հիշատակված Ահարոն Խաչատրյանն է: Մեջբերելով Չարենցի մասին հուշերը համարյա ամբողջովին, որքանով վարք ու նկարագրով տիպիկ նմուշն է նմանների:

* * *

Ըստ դոքտոր Ահարոն Խաչատրյանի հուշերի՝ Չարենցը Հռոմում իջևանել է «Լոնդոն» հյուրանոցում և 24 օր բանաստեղծին ուղեկցել են ինքն ու ճարտարապետ **Արման Սարյանը:** Տարիներ առաջ ստացած տպավորությամբ,— ինչպես և կարելի է զգալ՝ ձեռքի տակ ունենալով այս նյութերը,— հատկապես Հռոմից սկսած Չարենցը, պարզապես, հայտնվել է խորհրդային հետախուզության ճիրաններում,— ուրեմն և հարկ է ներկայացնել դրանք նույնությամբ՝ չշրջանցելով մտաբերումի, խուսանավելու, վերապահումի ու հաստատման որևէ երանգ:

Ուրեմն այսպես՝ **«24 օրեր Եղիշե Չարենցի հետ Հռոմի մեջ** (1925–ին)» խորագրին հետևում են հաջորդական այսպիսի ենթավերնագրեր:

«Նախաբան. Եղիշե Չարենցի մասին գրելու մտադրություն ունեցած եմ առաջին անգամ, երբ 1937–ի մաքրագործումներուն ինքն ալ զոհ գնաց:

Եկավ պատերազմը իր արհավիրքներով: Պատերազմի հաջորդ երկու տարիներուն տեղի ունեցավ ներգաղթ: Անձկանոք կը հետևեի սփյուռքի և հայրենիքի մամուլին, եղերաբախտ քերթողին մահվան առնչությամբ ստույգ տեղեկություններ քաղելու մտքով:

Հայրենադարձը կանգ առավ. վրա հասան 1948–1949 դաժան օրերը. հայ ժողովուրդը կրկին ընկած բիրտ և անգութ բռնակալության տակ:

Անձնապես ջլատված տրամադրությամբ՝ չվարուն հոգեվիճակ մը ունեի, որ պիտի փարատվեր ամերիկաբնակ չորս քույրերուս տեսությամբ:

1959–ի սկիզբը, օր մը ճաշի հրավիրված էի Տիթրոյիտաբնակ պարոն Համբեմ Թումասյանի[2] տան մեջ: Ան՝ իր գրադարանի դարակին վերցնելով ցույց տվավ ինծի գիրք մը՝ Չարենց խորագիրը կրող, Հուշեր և խորհրդածություններ ենթան-

[2] Արժէ հետաքրքրվել իր անձով:

կարգըով: Իսկույն գրավեց ուշադրությունս հեղինակին անունը, որ ոչ այլ ոք էր, բայց եթե հանրածանոթ հրապարակագիր և դաշնակցական գործիչ Վահան Նավասարդյանը: Կոչնատերերն խնդրեցի, որ փոխ տար կարդալու համար:

— Թող ըլլա Ձեզի, ընդունեցեք որպես նվեր:

Առի շնորհակալությամբ: Նավասարդյանի մեկ հանդիպումը կամ զրույցը Զարենցի հետ բավական եղած էր որ ան գրեր հատոր մը, թեև փոքրածավալ ինքնին: Նույն հանդիպումը նկարագրված էր նաև նույն ինքն Զարենցի, «Խորհրդ. Հայաստան» օրաթերթի 1925–ի ապրիլի 5–7 թիվերու մեջ՝ «Հանդուցյալ պարոնը կամ պարոն հանդուցյալը» վերնագրի տակ հոդվածով:

Երկուքին ալ գրվածքներուն մեջ չեն հիշատակված իրարու հետ փոխանակված բուն արտահայտությունները: Նույն զանցառումը արդարացուցիչ մեկ պատճառ ուներ. այն, որ երկուքն ալ համաձայնած էին չհրապարակել իրենց զրույցները...

Նավասարդյանի գրվածքին մեջ կային կարգ մը անճշտություններ, որոնց մասին խոսեցանք Արման Սարյանին հետ միևնույն 1959 թվի ապրիլին մեջ, երբ որ Ամերիկաեն վերադարձիս ճամբուս վրա հանդիպեցա Միլանո, ուր կը բնակեր այժմ բարեկամս: Առաջարկեցի որ իր կողմե կատարեր ճշտումը, քանի որ ինքն էր Նավասարդյանի կողմե բնորոշված «Իմ և Զարենցի մեկ ընդհանուր ծանոթը» եղող անձը. մինչև անգամ պնդեցի, որ գրեր իր անձնական հուշերը, որոնք բավ մը և հարուստ ատաղձ կրնային հայթայթել Հռոմի՝ քսանական թվականներու հայ ուսանողական, թե ազգային քաղաքական կյանքին, որուն մեջ ոչ զանցառելի դեր մը խաղացած էր ինքն ալ:

— Չէ՞ որ, ըսի, դուն թղթակիցն էիր «Յառաջ»–ին և Շավարշ Միսաքյան պատվո տեղ մը կը հատկացներ քու թղթակցություններուդ:

— Այդ բոլորը մոռցվեցան, սիրելի՛ս, բացի քեզմե մարդ չի հիշեր:

— Մտիկ ըրե, հարեցի, եթե երեք–չորս տարիվան միջոցին բան մը չհիշես՝ ես պիտի գրեմ:

— Տարբերություն չ'ըներ, գրե, որեն տեղյակ ես. ես առայժմ հոգնած մարդ եմ: Գիտե՞ս, սիրելի Ահարոն, շատ ուրախ եմ, իսկապես եռանդ ունիս, լույս բերիր, այցի գալով ինծի: Բայց լսե իմ անկեղծ խոսքս: Եթե մեռնիմ, բաց աչքով պիտի չմեռնիմ. մեր ներկա Հայաստանը իր ստեղծագործ ճիգով և իրագործումներով կը համապատասխանե մեր իղձերուն, մեր երազածին:

Տարիներ թավալվեցան, ներգաղթը վերսկսավ ավելի լավ պայմաններու մեջ, ավելի լավ կազմակերպված ձևով[1], ու վիճակվեցավ ինծի այցելել Հայաստան, տեսնել հայրենիքիս շոշափելի պայծառ իրականությունը: 1968–ի մայիսին, հայրենի պետական դեմքերու շարքին, սիար Վարդգես Համազասպյանն էր, որ շնորհեց ինծի ամենեն երկար ունկնդրությունը. խոսակցության ընթացքին ան-

[1] Նկատի ունի 1946–ի ներգաղթը, մինչդեռ այցելել է Մեծ եղեռնի պատմական 50–ամյակից հետո...

նարկություն եղավ, թե ինչ պարագաներու բերմամբ ծանոթացած և քսանչորս օրեր անցուցած էի Զարենցի հետ, Հռոմի մեջ, 1925-ի սկիզբը:

— Ուրեմն, հարց տվավ խոսակիցս, անպայման հուշեր պիտի ունենաք:

— Այո՛:

— Բերե՞լ եք միասին:

— Ո՛չ:

— Ուրեմն Ձեզ մոտ պիտի մնան...

— Իմ հուշերը՝ իբր հում նյութ՝ ուրիշներն օգտագործելի տեսակեն չեն, պետք է որ ես ինքս գրի առնեմ...

Վճռական եղավ որոշումս: Ու երբ դեպի Գեղարդ երթալուն ճանապարհին կանգ առինք Եղիշե Զարենցի հիշատակին բարձրացած Աղբյուր հուշարձանին դիմաց, վար իջնելով ինքնաշարժեն՝ հառաջացանք դեպի կամարը, որուն տակ կանգնած մինչ կը դիտեի զույգ Մասիսներու ստորոտը փռված Արարատյան դաշտի համայնապատկերը, հիշողությանս մեջ արթնացան Հռոմի ապրումներս, ու ես ինքս ինձի խոստացա՝ վերադարձիս անպատճառ հուշագրել: Ինչ որ կ'ըներ՝ մղված է հոգեկան անդիմադրելի պահանջե մը և միանգամայն նվիրական պարտականություն մը կատարելու համոզումեն:

Ես և Արման Սարյանը Հռոմի մեջ՝ 1924-ին համալսարան հաճախող երկու հայ ուսանողներ էինք: Արման Սարյանը կը հետևեր ճարտարապետության, որու ընթացքը ավարտելու վրա էր, ես՝ մտած էի բժշկության երկրորդ տարեշրջանը:

Նկարչության ճյուղի մեջ կար Ժիրայր Օրագյանը, տակավին Հռոմ չէին եկած Օննիկ Ավետիսյանը և Աշոտ Զորյանը:

Հաճախ միասին էինք Սարյանն ու ես, խոսակցելով քաղաքական թե ազգային հարցերու շուրջ: Ան կը վարեր Հայ Հանրապետության Լեկասիոն դիվանի քարտուղարի պաշտոնը, որ ավելի անվանական էր և ուներ անպաշտոն բնույթ, քանի որ Ֆաշական Իտալիան՝ ճանչցած ըլլալով Սովետական Միությունը, չէր կրնար իրավականորեն ճանչնալ նախկին Հանրապետության ներկայացուցչությունը. սակայն աչք կը գոցեր անոր դիվանական գործունեության, մինչև անգամ կ'օրինականացներ վավերաթուղթերն ու վիզա ալ կուտար հայկական անցագիրներուն վրա, որպեսզի քաղաքացիություն չունեցող հայրենազուրկ հայեր անտեր ու անպաշտպան չմնային...

Բարձրորեն գնահատելի մարդասիրական նկատումով կը շարժվեր իտալական կառավարությունը. այս բարեացակամ վերաբերումը տևեց մինչև որ Ազգերու ընկերակցութենեն (Ժընևի) ընդունվեցավ Նանսենյան ինքնաթուղթը[1]:

---

[1] Ազգերի լիգայի 1922-ի Ժնևի, ապա և 1924-ի հուլիսի 12-ի և սեպտեմբերի 5-ի որոշումներով Ֆ. Նանսենի նկարներով բազմահազար հայ գաղթականների շնորհված անձնագրեր և ապա Նանսենի գլխավորությամբ ստեղծված հանձնաժողով՝ տեղում ուսումնասիրելու Հայաստանի իրավիճակը՝ արտասահմանյան փոխառություն տրամադրելու և ներգաղթ կազմակերպելու հարցերով: Հանգամանորեն տե՛ս Մ. Արզումանյան, Նանսենը և Հայաստանը, 1977:

«Ի՞նչ պետք էր ըլլայիք և ի՞նչ եղանք» հարցումը դարձավ հաճախանքը մեր զրույցներուն: Երկուքս ալ գաղափարակից և սրտակից Մխիթարյան նախկին սաներ ըլլալով, հոգեկան բավարարություն կը գտնեինք իրարու մոտ գալով:

Օր մըն ալ ընկերս ավետեց, թե Հռոմ հասած էր բանաստեղծ Եղիշե Չարենցը:

— Իրա՞վ կ'ըսես, հարցուցի:

— Ես ալ ատիկա պիտի առաջարկեի:

Չարենցի հետ Չարենցի մասին գիտեի լոկ ընթերցումովը «Ամբոխները խելագարված» բանաստեղծության, խորապես տպավորված նոր օրերու, նոր կարգերու այդ դյուցազներգությանն, որով բուռն փափաքով գայի ծանոթանալու անոր հետ՝ իր իջևանած «Լոնդոն» պանդոկին մեջ: Առաջին այցելությանն իսկ, մի քանի անգամներ ալ տեսնվեցանք իրարու հետ, սակայն մեր միջև սերտ հարաբերություն սկսավ մշակվիլ այն օրեն հետո, երբ տեղի ունեցավ Վահան Նավասարդյանի հետ մեր հանդիպումը: «Ամբոխները խելագարված» երկին ընթերցումը կատարած էի 1923–ի աշունը. ու 1924–ի վերջավորության բանաստեղծը եկավ Հռոմ, պիտի ըսեի հայտնվեցավ ինքը՝ մարդը: Փակագծի մեջ հիշեցնեմ հոս, թե այդ թվականին Արևմտյան պետություններեն միմիայն Ֆաշական Իտալիան էր, որ ճանչցած էր Սովետները: Սովետական անձնագրով եկած էր Չարենց. անոր նպատակը ուղղակի Հռոմ այցելել չէր եղած, այլ Փարիզ երթալ, ուրկե դար ֆրանսական վիզայի մասնավոր արտոնության մը շնորհիվ Արշակ Չոպանյանին[5]: Չարենց՝ բացի հայերենն և ռուսերենն՝ օտար լեզու չէր գիտեր, որով հարկադրաբար ան պետք ուներ Հռոմի երկու հայ ուսանողներուս, Սարյանին և ինձի: Սարյանը հանձնարարված էր (ճշգրիտ ըլլալու համար հայր Տիմոթեոս վրդ. Կյուլյանեն, որ Մխիթարյանց Հռոմի նոր Ընծայարանի մեծավորն էր), Մխիթարյան հայրերեն ծածկելով անոր հայկական դիվանի պաշտոնյան ըլլալուն հանգամանքը, այնպես որ, Չարենց բոլորովին կանգխտանար Սարյանի քարտուղար ըլլալը Վարդանյանին, որ մեկնած էր արձակուրդով՝ չվերադառնալու պայմանով...[6]

Պայմանավորված էինք Սարյանի հետ, որ հերթով պիտի պտտցնեինք մեր հյուրը: Ընդհանրապես Սարյան կը վերցներ մոտակա թանգարանները և նկարչասրահները. ես՝ նախընտրաբար պատմական հնության վայրերը և եկեղեցիները: Այցելած էինք Ս. Պետրոսի տաճարը Վատիկանի կողքին, Սանթա Մարիա Մաճիորեն և կարգ եկած էր Ս. Պողոսի տաճարը այցելելու:

Այդ օր շատ ջղայնացած գտա Չարենցը, առանց իսկ բարևս առնելու պոռթկաց.

— Հավնեցա՞ր սա Սարյանիդ ըրածին:

— Ի՞նչ կա, հարցուցի:

---

[5] Հայտնապես, Չոպանյանի և Չարենցի փոխհարաբերությունը հետաքրքրության առարկա էր... գործակալական շրջաններում....

[6] Խճճված հանգույցներ, որպիսիք վիճակված է տեղը–տեղին պարզել ապագա ոչ միայն իսահակյանագետներին ու չարենցագետներին...

— Ինչպե՞ս, չե՞ս գիտեր:

— Ո՛չ, հարեցի, և իրապես բան մը չէի գիտեր:

Մտիկ ըրե, ըսավ. երեկ Ազգային Թանգարանը տարավ զիս, սրահե սրահ դիտելե հետո, հանկարծ ով տեսնեմ աղեկ,— Վահան Նավասարդյանը, այդ անպիտանը իբր թե բոլորովին պատահմունք եղած ըլլար:

— Ո՛հ, պարոն Զարենց, բացականչելով հառաջացավ դեպի ինձ, ուրկե՞ ուր այսպես Հռոմի մեջ:

— Կյանքի պատահմունք է ըսելով՝ ջանացի խուսափիլ, սակայն, չձգեց օձիքս. մեզի հետ ինքն ալ դուրս ելավ և վիլլա Պորկեզեի մեջ, քայլելով խոսելով իրարու հասցեին հայհոյելու աստիճան բուռն վիճեցանք.— Ախր Սարյանը չի իմանում, որ ոխերիմ թշնամիներ ենք,— ես կոմունիստ, նա՝ դաշնակ,— եվ անդադար մատներուն մեջ դեղին սաթե հատիկներով համրիչը կը դարձներ, ինչ որ սովոր էր ընել ջղագրգռության պահուն:

— Գեշ ըրեր է, հավատա, բանե մը տեղյակ չեմ. եթե կը ցանկաս, ըստ մեր ժամադրության երթանք այցելելու Ս. Պողոսի տաճարը, որ Հռոմի չորս մեծ եկեղեցիներեն մին է, տակավին չեք տեսած:

— Թո՛ղ մնա վաղվան:

Հետևյալ օրվա համար կրկին ժամադրություն առնելով, բաժանվեցա իրմե և առանց ժամանակ կորսցնելու գացի գտա սիրելի ընկեր Սարյանը:

Այդ ի՞նչ ըրեր ես Սարյան, Զարենցի գլխուն:

Սկսավ պատմել եղելությունը իր իսկության մեջ:

— Եղբայր, մտիկ ըրե, երեք օր առաջ Փարիզեն գալով՝ դեպի Եգիպտոս իր ճամփուն վրա Հռոմ հանդիպեցավ Նավասարդյանը. անոր հայտնեցի Զարենցի հոս գտնվիլը: Անմիջապես խնդրեց և պնդեց, որ հանդիպում մը հաջողացնեմ: Ուրեմն, քանի որ ես կանխորոք թանգարան տանելու խոստում ըրած էի Զարենցին, Նավասարդյանին հետ համաձայնեցանք, որ ինքն ալ որոշյալ ժամուն թանգարանի սրահներեն մեկուն մեջ դանդաղեր, ու երբ որ մենք դեպի այնտեղ ուղղվեինք՝ դիմացեն գնալով բարևեր զինքը: Այդպես ալ ըրավ, երբ դեմ առ դեմ գտնվեցան, Զարենցը զայրույթեն դունաթափ եղավ. զգացի որ կաֆ մը ըրած էր, բայց ի՞նչ կրնայի ընել:

— Հետո՞, վրա բերի:

— Մի հարցրու, մահու չափ զիրար ատող ոսոխներ ըլլային կարծես, չավելիք խոսքեր փոխանակեցին: Նավասարդյանը կ'ըսեր.— Գիտցած ըլլաք, որ պիտի գանք, դահիճներ, և ձեր ձեռքեն պիտի փրկենք մեր հայրենիքը, անիկա մերն է, մենք կերտեցինք: Զարենցը կը պատասխաներ.— Հայ ժողովրդին պատուհասը եղած եք դուք, ձեր մտքեն բնավ մի անցնեք, թե օր մը կրնաք ոտք դնել Հայրենի հողին վրա, քանի չեք փոխած ձեր խելքը, այդ օրը չեք տեսներ. Հայ ժողովուրդը ատելով կ'ատե ձեզ:

– Իսկ դուն, խեղճ Սարյան, ի՞նչ կ'ըներ:

— Նախ՝ զանոնք քաշեցի մեկուսի անկյուն մը, ուրկե ճեմողները չէին անց-

ներ, ինչու որ դատաստանի մեջ մտած էինք, և հանդարտեցեք ըսելով նստեցուցի հոն եղող նստարանին վրա և քովնտի կեցած ապշահար մտիկ կ'ընեի անոնց թունալից խոսքերը: Անգամ մը փորձեցի միջամտել, աղաչելով.— Եղբայրներ, մեղք է, մի՛ ընեք, վերջապես հայ եք և մտավորականներ, մեր թշվառ ազգը ձեզմե կ'առնե պատգամ և ներշնչում. հասկցեք զիրար, փոխանակ զիրար անարգելու և խծբծելու: Բայց անօգուտ: Եվ ավելի քան երկու ժամ շարունակեցին լուտանքներ տեղալ իրարու հասցեին. Հազար անգամ զղջացի, որ Նավասարդյանին անսացի, բայց եթե դուն իմ տեղս ըլլայիր, տարբեր պիտի կրնայի՞ր չարժվիլ: Մենք Մխիթարյան դաստիարակություն առած, անոնց ջամբած հայրենասիրական ոգիով թրծված՝ չենք կրնար ատել մեր ազգակիցը, վերջապես «Եղբայր ենք»-ը երգած ենք և կը կրենք նույն արյունը:

Հոս պարտիմ նշել, որ Չարենց նույն պատահարեն ետք միշտ խուսափեցավ Սարյանեն, տհաճություն պատճառելով ինծի՝ իր վերաբերմունքը պիտի փոխեր, սակայն առիթով մը, հանձն առնելով անոր ընկերությունը: Այս մասին քիչ անդին պիտի պատմեմ:

Երկրորդ օրը, որոշյալ պահուն, հանրակացարանի մեջ դտա Չարենցը պատրաստ: Խորազնին նայվածք մը վրաս ձգելով՝

— Տեսնվեցա՞ր Սարյանի հետ, հարցուց:

— Այո՛, ըսի, բայց մտիկ ըրե, եթե ան սխալ մը գործեց,— այդ հանդիպումի ընթացքին երկուստեք փոխանակված խոսքերը ո՛չ քեզի և ո՛չ ալ Նավասարդյանին պատիվ կը բերեն:

Պահ մը մտածեց ու ըսավ.

— Եղածը սարքովի՞ էր, թե–ո՞չ...

— Այո, ճիշտ քու գիտցածիդ պես, սակայն քեզ խաղի բերելու միտումով չէ եղած: Նավասարդյան շատ սնդած, նույնիսկ պաղատած էր Սարյանին, որ սարքե, որովհետև կը ցանկա եղեր քու միջոցով իր խապրիկները ուղարկելու Հայաստան՝ հոն մնացող իր մինուճար մոր: Սարյան կակուղնալով տեղի տվեր է:

— Էդպես ուրեմն:

— Այո՛, էդպես:

— Այն ատեն ի՞նչ կարիք կար ... հարձակումին. թող նամակը հանձներ, ըսելիքը ըսեր, ու պրծավ...

Չմոռնամ ավելցնելու, որ ընկերս պատմեց, թե երբ այլևս իրարմե պիտի բաժնվեին, Նավասարդյան խնդրած է Չարենցին, որ իր գրելիք նամակը հասցնե մորը[7]: Ան կը հավանի, պայման դնելով որ իրենց հանդիպումին շուրջ ոևէ ակնարկություն պիտի չերևի «Յուսաբերի» կամ դաշնակցական մամուլի ուրիշ ոևէ օրկանի մեջ: Սույն նամակը Նավասարդյան հանձնած է նույն օրն իսկ երկրորդ կարճատև հանդիպումի մը ժամադրվելով:

[7] Ըստ երևույթին սեփականը ուրիշի պատմածով մատուցելը տեսակ մը ծածկամտության գործոն է...

Սույն փոխադարձ համաձայնությունը դրժվեցավ Զարենցի կողմե, ինչպես հայտնի է, իսկ Նավասարդյան հարգեց իր խոստումը մինչև պատերազմի վերջավորությունը և հետո միայն խախտեց, հրատարակելով «Զարենց» խորագրով և «Հուշեր ու խորհրդածություններ» ենթախորագրով գրքույկ մը:

Այդ գրքույկին մեջ ճշտվելիք կետեր կան. նախ՝ Նավասարդյան կը հայտարարե, թե Զարենց ինքը բաղձանք հայտնած է տեսնվելու իրեն հետ, ինչ որ ճիշտ չէ, քանի որ Զարենց՝ Նավասարդյանի հանձնվելիք նամակը տանելու հանձնառության պայման կը դնե չարտահայտվիլ հանդիպումի մասին մամուլի մեջ (ուրեմն տրամաբանական է որ բնավ չէ մտածած կամ փափաքած հանդիպիլ Նավասարդյանի դիրքն ունեցող կուսակցական հակառակորդի մը հետ), որով Նավասարդյան իր խոստովանությամբ հակասության մեջ կ'իյնա: Բացի ատկե, Սարյանի վկայությունը մեջտեղն է. ան է որ իմաց կուտա Զարենցի Հռոմ ըլլալը, վերջինս Նավասարդյանի Հռոմ գտնվիլեն անտեղյակ էր բոլորովին: Իսկ ես պիտի ավելցնեմ, որ Զարենց այնքան դառնացած էր եղելությենեն, որ չէր փափաքեր անգամ տեսնվիլ Նավասարդյանին հետ մի քանի անգամներ (ինչպես կը հավաստե վերջինս իր գրքույկին մեջ). Թողունք, որ ան՝ մեկ երկու օր հետո Նափոլիեն չոգենավ պիտի առներ մեկնելու համար դեպի Եգիպտոս, իր պաշտոնատեղին...[8]

Այց Ս. Պողոսի տաճար

Ս. Պողոսի այցը՝ հուշերուս մեջ կը գրավե մասնավոր արձանագրություն, ուստի հոս պիտի չանդրադառնամ հոյակապ տաճարի նկարագրության:

Բացառիկ հիշատակության արժանի կը սեպվին բոլոր սրբազան պապերու դիմաքանդակները ժամանակագրական կարգով կողք—կողքի շինված, որոնք զարդը կը կազմեն ներքնամասի կամարակապին. հոն այցելուներուն ցույց կը տրվին նաև Պողոս Զարի կողմե նվիրված Թանկագին կանաչ մարմարե սեղան մը:

Մինչև Ս. Պողոս հասնելնիս, որ հին Հռոմի պարիսպեն դուրս և հեռու շինված է (այժմ քաղաքի նոր թաղամասերով շրջապատված), Զարենց դժգոհություն կը հայտներ որ Փարիզեն կ'ուշանար ֆրանսական վիզան, զոր Զոպանյան խոստացած էր ապահովել. «Եթե այդ վիզան հասած ըլլար, ոչ կը հանդիպեի, ոչ ալ բախում կ'ունենայի այդ չան հետ»,— կը կրկներ[9]:

— Լավ, որ Հռոմի մեջ տեղի ունեցավ, այլապես եթե Փարիզ ըլլայիր և գլուխդ փորձանք մը բերեին դաշնակցականները,— ըսի կատակելով[10]:

Լո՞ւրջ ես ասում:

— Բան մըն էր ըսի, դուն լուրջ մի առներ:

---

[8] Խնդրում եմ այս տողերը հիշել. «... Զարենց այնքան դառնացած էր եղելությենեն, որ չէր փափաքեր անգամ տեսնվիլ Նավասարդյանին հետ մի քանի անգամներ (ինչպես կը հավաստե վերջինս իր գրքույկին մեջ). **Թողունք, որ ան՝ մեկ երկու օր հետո Նափոլիեն չոգենավ պիտի առներ մեկնելու համար դեպի Եգիպտոս, իր պաշտոնին...»:**

[9] Ինչպես հայտնի է, «Վիզայի» հետ Զոպանյանը առնչություն չուներ: Առնչությունը այլ էր...

[10] Ասես գիտեր, թե ինչ է պատրաստվում Փարիզում... խաղում է հոգու հետ՝ ուսուցողական երկդիմի հրահրումով:

Ս. Պողոսի վեհանիստ տաճարը իմ շատ սիրած ու հաճախած սրբավայրն էր, նախ՝ հեռու ըլլալով քաղաքեն՝ վրաս կը թողուր առանձնության տեսակ մը անմատչելիության հմայքը, կրելով անունը հեթանոսաց քարոզիչ մեծ առաքյալին. նաև նվիրական էր սրտիս՝ ինչու որ հորմես զատ իմ մեծ դերդաստանիս մեջ ամենեն ավելի սիրելի և նվիրական դարձած անունն էր, իսկ այդ օրը՝ մանավանդ մեծ բանաստեղծի ընկերակցության մեջ ըլլալով, բոլոր հմտությունս ու պերճախոսությունս ի գործ պիտի դնեի, վիլլան Պորկեզեի Ազգային Թանգարանին հետ այցելության հանդիպումին հուռի տպավորությունը ջնջելու համար... Չեմ գիտեր, թե բան մը կռահե՞ց: Երբ դուրս ելանք տաճարեն և անոր հետևակողմի սյունազավիթին մեջ կանգ առինք և հանգչելու համար քով-քովի տեղավորվեցանք քարե սեղանի մը վրա:

Հարցուցի թե գոհ մնա՞ց:

— Ոչի՛նչ, հարեց:

Լակոնական ոճով այս բնական երկիմաստ ըլլալուն անտեղյակ՝ վրա բերի:

— Ուրեմն չհավնեցա՞ր ճարտարապետության և քանդակագործության այս հրաշակերտը, գլուխգործոցը... Ինչո՞ւ պիտի հավնիմ, երբ կը մտաբերեմ քու պապերդ, իշխաններդ և բոլոր ազնվականներդ ստրուկի վերածված աշխատավորին ճակտի քրտինքն ու երակներուն արյունը շահագործած են դարերով, պալատներ և տաճարներ կանգնեցնելու համար...

— Համոզվա՞ծ ես ըսածներուդ:

— Այո՛:

— Ուրեմն հոդ կանգ առ և լավ մտիկ ըրե ու մի ընդհատեր զիս: Նախ պարտեիր, սիրելի բանաստեղծ, ուսումնասիրել ու ճանչնալ այն տիտաններուն կենսագրությունը, որոնց անունով հռչակ հանած և պճնված է Վերածննդի դարաշրջանը: Ի՞նչ գիտես անոնց կյանքի մասին, ինչպե՞ս կապրեին անոնք. թերևս ցնցոտի կը հագնեին, գուցե լոլիկով կամ չերտ մը պանիրով և քիչ մը գինիով ու չորաբեկ հացով կը կշտանային... Բայց կը ստեղծագործեին, չէին մտածեր իրենց փորին, իրենց անասնական հաճույքներուն գոհացում տալու մասին, աստվածային տեսիլք, խենթ և հավատք ունեին և իրենց սիրած աղջկան կամ պաշտած մոր և քրոջ դիմագծով չքնաղ մատոննաներ կը նկարեին: Անոնց երևակայության պրիզմային ցոլացող աշխարհը գեղեցկության աշխարհն էր, որուն առջև հիացիկ կը մնանք մենք մինչև այսօր, և զմայլանքով ու հափշտակությամբ կը համակվինք... Անոնք երջանիկ էին, գոհ ստեղծագործ էակներու երանավետ արբշռանքով. իսկ մեր ժամանակակից մարդկությունը ի՞նչ պիտի թողու որպես ժառանգություն հետնորդ սերունդներուն,— մրոտած ծխնելույզներով երկարաձիգ շարքը գործարաններուն և արդիապաշտ ձևընկալ արվեստներուն ծեքծեքումներն ու կապկությունները, ուրկե հավետ բացակա է վերասլաց հոգիի ներշնչումը...

Խո՞րթ կը թվին պրոլետար բանաստեղծի գեղարվեստական ըմբռնումին և ճաշակին համար իմ արտահայտություններս":

Ան՝ բավականացավ ըսելով.—

— Տարօրինակ տղա ես դուն... Գնանք...

Արդեն մթնշաղ էր, երբ հավիտենական քաղաքին պարիսպեն ներս կը մտնեինք, Ս. Պողոս կոչված դռնեն:

Երկու պանդուխտ հայերը, մեկը՝ կարնեցի, մյուսը՝ մշեցի

Այն օրերուն Միացյալ Նահանգներեն Հռոմ հասած էին երկու պանդուխտ հայեր, անոնցմե մեկին անունը Թադոս էր, Կարինի շրջանեն, մյուսը՝ Մշո գավառեն, Միսաք կը կոչվեր: Անոնք՝ Հռոմի ճամբով (ուր միայն գոյություն ուներ սովետական ներկայացուցիչ, և Սև ծովի ու Միջերկրականի միջև կը նավարկեին միայն իտալական շոգենավերը) վիզա ստանալու և Հայաստան երթալու նպատակով ճամբա ելած էին, երթալ միանալու համար իրենց վերապրող ընտանիքներուն՝ հայրենիքի մեջ, ուր ապաստանելով ողջ մնացած ըլլալու լուրը արդեն Ամերիկա լսած էին:

Զարքաշ աշխատանքով դրամ շահած՝ ինքնաբավ մարդոց տպավորություն կը ձգեին: Անոնք՝ սովետական հյուպատոսարանի դիմուց ըրած ատեն հանդիպած էին Եղիշե Չարենցին, որ անխափան ամեն օր կը ներկայանար այնտեղ:

Վերջինս անոնցմով հետաքրքրված և շատ օգտակար եղած էր, թե հարթելով լեզվական դժվարությունը, թե զորավիգ կանգնելով իր ազդու միջամտությամբ:

Բանաստեղծը շատ կ՚ախորժեր իր ժամանակին մեկ մասը անոնց հետ անցնել՝ հաճախ շարժապատկերի երթալով և կամ պտույտներ ընելով, հավանաբար լուսաբանելու համար ամերիկյան կենցաղի և բարքերի մասին... Այս առնչությամբ կարծեմ ոչ մեկ օգտակար ծանոթություն ստացած ըլլալու էր, քանի որ անտաշ և անուս գավառացիներ էին և անոնց ապրելակերպը սահմանափակված էր գործարանի և երկուքով բնակված խուցին միջև. իսկ կիրակի և տոնական օրերուն կուսակցական ակումբներ միայն հաճախած էին... Համենայն դեպս կը ներկայացնեին պրոլետար դասակարգը, որուն նկատմամբ մասնավոր գուրգուրանք ցույց կու տար մեր պրոլետար բանաստեղծը: Անոնց հետ շփում պիտի ունենայի Չարենցի խողովակով, որ բարեխոսեց կարնեցի Թադոսի համար, որպեսզի բերեմ աջակցությունս՝ դարմանել տալու համար զայն:

— Խաչատրյան, ըսավ, աս տխմարը (ակնարկությունը Թադոսին համար էր) կ՚երևի ջերմամիզութենե բռնված է, ճար արա, որ բուժվի և առողջացած վերադառնա իր կնոջ մոտ:

Ուզեց գիտնալ թե Հռոմի մեջ քոնթրոլի տակ չէի՞ն հանրատները:

— Կարծեմ այո:

— Ուրեմն ո՞նց վարակվեր է ան շանորդին:

" Գուցե թվարկեր մի քանի անուն՝ գոնե կիմանայինք ում կտավներն է առավել ուշադիր դիտել բանաստեղծը:

— Պետք է հարցնել նրան, պատասխանեցի հեգնական շեշտով…

— Ախր մի բան արա, թող այդ փորձանքից ազատվի խայտառակը: Շրջուն Վենյուսի (մայթագին) հարաբերությամբ վարակված էր մեր Թադոսը, ինչպես պարզվեցավ բժշկին հարցաքննութենեն, որուն մոտ առաջնորդած էի զինքը:

Անոր պատահած դժբախտութենեն ներքնապես գոհունակ կը թվեր Միսաքը, որ մերժած էր մշեցիի ավանդական մաքրասիրությամբ հետևիլ փորձիլ Թադոսի օրինակին:

— Աստված վկա, կը հայտարարեր, զգուշուցուցած էի անպիտանը, որ շնություն չընե: Դեհ, պուլան գտավ…

Թադոսը բուժվեցավ շուտով, խղճամիտ և ճարտար մասնագետին կատարած դարմանումով[12]: Թշվառականը «Եղածը բան մը չէ, անցավ» ըսելով՝ իր սխրագործության մասին կը պարծենար, թունդ հանելով Միսաքին ջիղերը: «Տես անիրավ, լռե, թե չէ գիտցած ըլլաս քեզ բեզիլ կ'ընեմ երբ երկիր դառնանք»:

Զարենց… Թադևոսի հետքերով

Վերոհիշյալ դեպքը դրդապատճառ պիտի ըլլար հարուցանելու Զարենցի մեջ հետաքրքրություն՝ տեսնելու Հռոմի հանրատուներեն մին: Երբ այս ուղղությամբ խոսք բացավ, զիտել տվի թե կրնար իրեն Թադոսին պատահածին հոսեդույնը պատահիլ…

— Մի՛ վախնար, իմինս պարզապես գաղափար մը կազմելու համար է, ուրիշ ոչինչ:

— Վաղ անցիր և հույս մի դներ վրաս, ըսելով ջանացի խուսափիլ:

Այս խուսափողական պատասխանով օձիքս ազատել չկարողացա. չկամության վերագրելով սրտնեղեցավ, նույնիսկ վիրավորվեցավ:

Շփացած համառ տղու նման, մի երկու օր ետքը, երբ դարձյալ կրկնեց իր առաջարկը, փաստարկելով բժշկական ուսանողի հանգամանքս, իբր թե պետք չէ որ ունենայի ոևէ խրտչում կամ ամոթի նկատում իր առաջարկի կապակցությամբ, որովեն ալ երկընտրանքի մը առջև դրի զինքը՝ հակադարձելով:

— Լավ, քանի որ շատ կը փափաքիս, այդ ուղղությամբ օգտակար կրնա ըլլալ միմիայն Սարյանը (որմե սրդողած էր, ինչպես գիտենք):

— Ինչո՞ւ նա և ոչ դու, հարեց:

— Որովհետև ան գիտե, թե ուր հանրատուն կա, ես անփորձ եմ, անիկա փորձառու է…

Այս կտրուկ արտահայտությանս վրա պահ մը խորհել է ետքը՝

— Լա՛վ, ըսավ, թող ան առաջնորդե զիս:

Ստանձնած պաշտոնիս կատարումը դյուրին չեղավ: Տեսա Սարյանը՝ որ շատ ազդված էր Զարենցի պաղ վերաբերմունքեն և իրավամբ ինքզինք դառնացած և վիրավորված կը զգար իր արժանապատվության մեջ, և զայն հաշտեցնելու անկեղծ փափաքով էր որ բացվեցավ սա ձևով.

— Սարյան, գիտե՞ս, եկած եմ առաջարկելու քեզի որ կնքահայր ըլլաս:

[12] Այսպես անաստվածորեն ծաղրվում–ծանակվում են ներդաղթողները…

— Ի՞նչ կնքահայր:

— Կնքահայրը պիտի ըլլաս, կրկնեցի:

— Ի՞նչ ըսել կ'ուզես, որո՞ւ կնքահայրը, բացատրե միտքդ:

Համառոտ կերպով պատմեցի Թադոսին գլուխն եկած փորձանքը և ատոր իբրև հետևանք Զարենցի... հետաքրքրությունը:

Ապշահար նայեց ինծի:

— Ուրեմն դուն հանձն առիր համոզել զիս...

— Դուն գիտես, որ ես պատճառաբանեցի, ես անփորձ եմ նման բաներու մեջ,— և հետո գիտել տվի թե վերջապես Նավասարդյանի դեպքին մեջ անուղղակիորեն ինքը պատասխանատու էր, թունդ հանելով մարդուն ջիղերը, ինչու պետք չէր նույնպես հաճոյակատար գտնվիլ նկատմամբ Զարենցի: Ի վերջո նժարի մեջ դնելով իր հավատարիմ ընկերն ըլլալու հանգամանքը՝ ձեռք բերի հավանությունը:

Երկու օր ետք անոնք ժամադրվեցան: Մինչև անոնք հետամուտ եղան իրենց արշավին, ես բաժանվելով իրենցմե՝ ուղղվեցա դեպի Պորկեզեի Սիենա կոչված հրապարակը, որ քառակուսի ընդարձակ մարդագետին մը է և ատենոք կը գործածվեր որպես ձիարշավարան: Չորս կողմեն մայրի ծառեր կը շրջապատեին զայն՝ դարձնելով տարորեն գեղեցիկ վայր մը, որուն ի տես մարդ կը մղվի խոկալու և երազելու օրվան այն պահերուն, երբ ամայի է չորս կողմը և մարդ—մարդասանք չկա, դուցե այդ պատճառով շինված ըլլալու է բարձրադիր մատուռ քիչ մը հեռու, ուր կիրակի օրերը պատարագ կը մատուցվի հանրային պարտեզի մեջ շրջագայողներուն և սիրահար զույգերու համար...

Հետևյալ օրը, տեսնվելե առաջ Զարենցի հետ, հանդիպեցա Սարյանին.

— Ինչպե՞ս անցավ, հարցուցի:

— Ձախողեցա կնքահայրության պաշտոնիս մեջ, հարեց ծիծաղելով:

— Ջատրի՞ր:

— Չէ, դացինք,

— Ուրե՞մն...

— Խեղճ աղջիկները հուսախաբ մնացին. թեև ընդունելության պահին մեջ մեկ ժամեն ավելի նստանք, ուրիշ հաճախորդներ ալ կային, խոսեցանք և կատակեցինք քիչ մը:

— Անշուշտ թարգմանը դուն եղար:

— Այո՛, բայց ոչ բաժակ մը ըմպելի կամ զովացուցիչ ապսպրեց[13], և ոչ մեկը գեղուհիներեն անկաժե ըրավ:

— Դավո, բացականչեցի:

— Այսի՞նքն...

— Ըսել կ'ուզեմ, որ Զարենց որպես հետաքրքիր դիտող այցելած է, ինչ որ պատիվ կը բերե և արժանի կը դարձնե զինքը մեր հարգումին:

---

[13] Որպիսի՛ տարբերակ–փոփոխականներ... Այսպես թե այնպես կասկածելի՝ ամեն պարագայում:

Զգաստ՝ սիրո մեջ

Տարիներ անցեր են. անհետ, անշիրիմ մեկնել է աշխարհեն քերթողը: «Իր կյանքի վերջին շրջանին անառակ և ցոփ ապրած է»,— ըսին ու գրեցին. մինչև անգամ գնդակ պարպած է զինքը արհամարհող պատվախնդիր հայուհի մը վրա, որ տեղի չէ տված իր սիրահարի տռփանքին:

Անոր մասին տարիներ հետո Հալեպի մեջ ունկնդրեցի դասախոսություն մը, զոր ըրավ պր. Նշան Հովհաննիսյան[14]: Հիշողությանս մեջ խորապես դրոշմված կը մնա շեքսպիրյան ողբերգության մը սարսուռը սրկող դրվագ մը: Երբ իր կյանքի սիրելի ընկեր Արփենիկը կը մեռնի, անոր ուղղած բոլոր նամակներն ու անտիպ բանաստեղծությունները արկղիկի մը մեջ ամփոփած՝ կը դնե սիրեցյալին դագաղի մեջ, որպեսզի միասին թաղվեն: Գերեզմանոցեն տուն դառնալե և ցավակցության եկողները ճամբելե ետք, Չարենց անմիջապես գիշերանց, առանց մարդու մը բան հայտնելու, կ՛երթա մեռելատուն, խարխափելով կը գտնե հողակույտը ու կը սկսի պեղել. առավոտյան դեմ կը բանա դագաղին կափարիչը ու չի գտներ արկղիկը: Գրեթե խելագար եղածի պես հեկեկալեն կուլա, ճիչեր կարձակե: Կը գտնեն զինքը ինքնակորույս և գիսախռիվ վիճակի մեջ ու հազիվ կը հաջողին զայն հեռացնել... իր կնոջ հողաթումբեն[15]: Բանաստեղծի սիրո գաղտնիքը նվիրական բան մըն է զոր պարտինք հարգել, եթե եղած ըլլան իսկ սայթաքումներ և վաղ անցած քմայքոտ սերեր: Անոր սիրո կյանքը ողբերգություն մը եղած է ինքնին. իրական և միակ մեծ սերը եղավ Արփենիկը, մահեն ալ հզոր: Այս ուղղությամբ խիստ հատկանշական կը գտնեմ մեջբերելու միջադեպ մը, որ զիս անդրադարձուց անոր մեջ թաքնվող խանդոտ սիրահարի բնավորություն:

Երկու Արփիները օրեն մեկը, խոսակցության մը ատեն հարց տվի, թե կը ճանչնա՞ր Արփի Առաքելյան անունով հայուհի մը:

— Ի՞նչ, ի՞նչ, կմկմաց այլայլվելով ու չհանդարտեցավ մինչև որ չպատմեցի թե ով էր իմ ճանչածս Արփին, որուն ինքնության մասին շահագրգռության գոհացում տալու համար էր, որ Չարենցին հարցուցած էի, թե կը ճանչնար զայն:*

---

[14] Եղիշե Չարենց, Կյանքը. Գործը, ժամանակը 1–ին գրքում հիշատակված նույն ինքը Ամերկոմի պարոն Նշան Հովհաննիսյանն է, որը, ինչ խոսք, հազիվ թե կարողանար բարի խոսք ասել բանաստեղծի հասցեին: Ուշագրավ է. 40–ական թթ. Միքոյան կրթարանում աշխատելիս կազմակերպել է Հայաստանյան գրողներից շատերին նվիրված գրական երեկոներ, բացառությամբ Չարենցի. Մահարու, Բակունցի:

[15] Ն. Հովհաննիսյանի և սխալական զգայարաններին ու գրքիններին հարմարեցված մտացածություն. խոսությունը բուն բնույթով ներկայացված է ժամանակակից Մ. Մազմանյանի հավաստի հուշարկումով (ՀԵԶՄ, 1, 75–76)՝ Արփենիկի մահվանը հաջորդած օրերին վերաբերող հերթական 3–րդ գրքի էջերում:

* Ասիկա որևէ կապ չուներ իր կնոջ հետ և կ՛արժեր որ պահիկ մը կանգ առնեմ իմ ճանչածիս վրա, նվիրելով անոր հիշատակին մի քանի տողեր. սիրվելիք և նախանձ չարժող մանկամարդուհի մըն էր Թիֆլիսցի Հայուհին. սիրահարված էր իտալացի նավազ սպայի մը, որուն ամուսնության խոստումին վրա ձգած էր ծնողքը, եկած էր մինչև Հռոմ: Հոկտեմբերյան հեղափոխության ալիքներեն օտար ափեր նետված խղճուկ մըն էր, բայց ինչ զգայուն և վառվռուն հոգի ուներ, ան մի քանի տարիով մեծ էր մեզմե և կյանքի դառն փորձություններեն հասունացած՝ որպես մեծ քույր կը հորդորեր, որ «լավ սովորինք և օգտակար մարդ դառնանք»:

Հետագային բացահայտ եղավ, թե ինչու վրդովված էր այդ աստիճան, իր կնոջ հետ լուկ անունի զուգադիպումով: Ան՝ տակավին չէր համագրավված կատարյալ սիրո գաղափարով: Սերը՝ առաջին փուլին մեջ՝ նախանձոտ է, ծխացող խարույկ մըն է, որ բորբոքելով հետզհետե կդառնա հրավառ, հրաշեկ: Երանի անոնց, այն սիրով բախտավոր էակներուն, որոնց սերը նախանձի սկզբնական շրջանի խանձեն ու ծուխեն շուտով կը ձերբազատվի... Չարենցի նախանձոտ բնավորության մասին ինձմե ավելի մոտեն ճանչցող մտերիմներ և գրչի եղբայրներ անկերպարին պիտի գան վկայելու և համամիտ գտնվին ինձի[16]: Իսկ աղանդամոլ կուսակցական մը ըլլալու ապացույց տված էր Նավասարդյանի հետ հանդիպումը, թող որ վերջինս ալ անկե վար չէր մնար...

Հրաժեշտ

Հակառակ իմ ակնկալության՝ Չարենց չսիրեց Հռոմը, մեծ հեղափոխական ճյուղերն Մածծինիի կողմե հորջորջված՝ Հոգիի քաղաքը[17]...

Ատոր մեջ, իմ համեստ կարծիքով, որոշ դեր խաղաց Նավասարդյանի հետ հանդիպումը՝ որ փոխեց անոր հոգեկան տրամադրությունը: Կը պտըտվեինք ու կ՚այցելեինք թեև հիշատակարանները, բայց իր մեջ չէր մնացած սկզբի օրերու խանդավառ հետաքրքրությունը: Ես ալ տեսակ մը անտրամադիր կը զգայի, և արդեն Ֆրանսա մուտքի վիզան Փարիզեն հասած էր, ու կը պատրաստվեր մեկնելու:

Վերջին հանդիպումը՝ հրաժեշտի ողջագուրանքով եղավ սրտառուչ ու եղբայրական: Անոր հայտնեցի նպատակս անցնելու Հայաստան, երբոր ավարտի բժշկական ընթացքս:

— Ոչ,— ըսավ կարուկ կերպով,— խորհուրդ կը տամ չաճապարել հիմի. սպասիր,ատենը կը գա, կ՚իմացնեմ քեզի...

Արդյո՞ք կը նախազգար գալիք փոթորիկները, թե ոչ իրավակարգին հարմարելու... կրոնական համոզումներուս պատճառով, կը փափաքեր խնայել ինձի անհատական խղճի ազատությունն կորցնելու տանջանքը: Ամեն պարագայի անսացի պատվերին (նույն պատվերը պիտի կրկներ Ավետիք Իսահակյանը 1930-ին՝ Փարիզու մեջ)[18]:

Ասոր փոխարեն չեմ գիտեր թե Չարենց ինչ ստացավ ինձմե: Նման բարեկամական անկեղծ թելադրանք մը չի բացատրվիր իրեն հետ կատարված պտույտներով ու թափառումներով: Իր վստահությունը դրաված ըլլալու չեմ վերագրեր

Ան հուսախաբ եղավ անդրանիկ սերեն և նետեց ինքզինքը մինչև հարավային Ամերիկա. արդյո՞ք կ՚ապրի դեռ, մինթե երջանկացավ նոր հավատարիմ սիրով մը. Աստված գիտե անոր վիճակված բախտը տխրեցուցած էր զիս ու Սարյանը (տողատակը հուշերի հեղինակինն է):

[16] Զգաստ սիրո մեջ նեթավերնագրով այդ խաղը բանաստեղծի հոգու հետ պարզապես վեր է անաստվածության բոլոր չափերից... և տեսեք թե որպիսի ինքնամեծար «իմաստասիրական սիրո» սկուտեղով է մատուցվում... «Խանդոտ սիրո» ոչ մի պատճառ կամ առիթ Արփենիկից չուներ Չարենցը. ուներ սարսափ «դավաճանության ուրվականից», մշտահոլո՜վ ուրվականից...

[17] Տե՛ս. «Հեղափոխական ճյուղերի»՝ «Աստված և ժողովուրդ» նշանաբանով ապրած Ջ. Մածինիի վկայակոչելն էլ ավելորդական առույթ էր...

[18] Հայտնապես թվում է՝ հետադեմել է և Իսահակյանին, որը անկասկած տեղյակ է եղել Խաչատրյանի... այլև այլոց չարերի ինքնության...

տոնից, այլ այն բանին՝ որ իր մասին կազմած խորունկ համոզումն իր եղերական մահին նոր փոխակերպվեցավ ճշմարտության. ու միտքս արտահայտելով ըսի.— Եղբայր Զարենց, ապագային պիտի վերապրի հայության զավակ մեծ քերթողը քեզմե, և ոչ թե համայնավարը:

Անման երգիչը թունդ համայնավար էր և նույնքան թունդ հայ: Այս երկվությունը, որ կար անոր մեջ, չըվերածվեցավ միության—մարդախողխողներ ժամանակ չըտվին: Հազիվ քառասուն տարեկան էր, երբ իր կյանքը կը խլվեր իրմե, և երբ հասուն իմաստությամբ պիտի կարենար ներդաշնակել մին մյուսի հետ, համադրելով երկու հակադիր եզրերը…

«Մահ իմացյալ» եղավ վերջը, որուն կը գիտակցի նոր սերունդը Հայրենիքի մեջ: Զարենցի հիշատակը՝ ողջ երախտապարտության պաշտամունքով պարուրված է: Ան ճակատագիրն ունեցավ մեծ Աբովյանին, որովհետև և նույն անսահման սիրով սիրեց ու ծառայեց հայ ժողովրդին, և հավերժական հայրենիքին, կտակելով մեզի իր պատգամը. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը՝ քո հավաքական ուժի մեջ է…»:

«Սփյուռքի» նույն այս վերջին թվում զետեղված է դիմում, որով խմբագրությունը՝ «սրտագին կը խնդրե նաև միլանոբնակ պրն. Արման Սարյանին գրել հուշերը Զարենցի մասին:

Արման Սարյանի լրացում–ճշտումները՝ մեկնաբանություններով հանդերձ

Եվ ահա շատ շուտով արձագանքում է ճարտարապետ Արման Սարյանը **«Սփյուռքի» սեպտեմբերի 29–ի թվում «Իմ հուշերը Եղիշե Զարենցի մասին** (իբրև լրացուցիչ Ա. Խաչատրյանի հուշերուն)» խորագրով՝ այսպիսի նախաբանով ու ենթագլուխներով հրապարակելով լրացումները[19]:

«Պարտականության առջև չեմ ուզեր դասալիք նկատվիլ: Հակառակ անցյալը մոռնալու որոշումիս, բացառություն ըլլալով պիտի պատմեմ այն, ինչ որ կը հիշեմ Զարենցի մասին: Քառասուն երկար տարիներ անցած են այն օրերեն և հիշողությունս, դժբախտաբար, տկարացած է. ինչ որ պիտի պատմեմ, Ձեզ ալ պիտի համոզե, թե որքան ճշմարիտ էր անցյալ նամակիս մեջ գրածս:

Պատմական ճշմարտության համար

Զարենց Հռոմ ժամանեց 1924–ի կարծեմ գարնանը: Այս եզրակացության եկա պրպտելով հին թուղթերս, որոնց մեծ մասը դժբախտաբար կորսվեցավ շատ մը տեղափոխություններու ընթացքին: Արդարև զիս Զարենցին ներկայացուց **Մխիթարյան հայրերեն Հայր Դ. Տեր–Կյուլլյան,** իբր ուսանող. մինչդեռ համալսարանեն ստացած վկայականս կը կրե 1924 դեկտ. թվականը. ուստի պետք է հետևցնել, որ 1925–ին զիս իբրև ուսանող չէր կարելի ներկայացնել: Բժ. Խա-

[19] Սփյուռք, 1966, թիվ 30, էջ 7–9, թիվ 31, էջ 67, թիվ 32, էջ 6, 8 օգոստոսի 4, 11, 18:

չատրյանին Հարցումին պատասխանելով Հաստատած էր 1925 թվականը, երբ արդեն Համալսարանը ավարտած կը պատրաստվեր Ալպանիա մեկնելու. Խաչատուրյանին սխալին մասամբ ես ալ պատասխանատու եմ»:

Հաջորդ **«Այց սուրբ Պետրոսի տաճարը»** *Հատվածը քաղված է էջ 6–7–ից:*

Բայց մինչ այդ նախ փորձենք վերլուծել մեկը՝ մյուսով և Հակառակը:

Որքան էլ ձգձգված Ա. Խաչատրյանի Հուշերը, այնուամենայնիվ առայժմ միակ ծավալուն վկայություններն են, որոնցով կարելի է գաղափար կազմել, թե Հռոմում բանաստեղծը ինչպիսի Հիշարժան վայրեր է այցելել, ինչպիսի մարդկանցով է շրջապատված եղել, բարոյա–Հոգեբանական որպիսի տրամադրությամբ:

Հայտնապես ամեն առումով նախանձելի, և դա Հետևում է ինչպես Չինարոն–Հուշագրի շարադրանքի զավեշտամետ–բանսարկու տոնայնությունից. ավելին. երբեմն ինքնաբուխ–անվայել քմայքոտ արՀամարՀանքից: Ասես, անպայառ բաժնեմասով Չարենցի, այլև Նավասարդյանի, Ա. Չոպանյանի, նույնիսկ Ամերիկայից Հայրենիք ներգաղթող Թադեոսի և Միսաքի Հանդեպ: Մինչդեռ Հակառակը. օ՛, որպիսի լիաբուռն Հարգանքով լցված՝ երբ խոսքը վերաբերում է «Հայրենի պետական դեմքերու շարքին», իր անձին «ամենեն երկար ունկնդրությունը» շնորՀած «տխար Վարդգես Համազասպյանին»[30]: Ինչպես և պետք էր: Դե՛, ընդունելությունը Համընկնում էր եղեռնի Հիսնամյակին Հաջորդած խորՀրդային Հետախուզության փոփոխվող իրավիճակին, թեև վերանայված և նոր կանոնակարգով, որով Խաչատրյանը Հրավիրվում և պատվեր է ստանում Հուշեր գրել Չարենցի մասին.

---

[30] Այս «Տխար Վարդգես Համզասպյանը» իր «կարեխերան» պատերազմի տարիներին միանգամից սկսել էր Երևանի «շրջաններից» մեկի կուսակցական կոմիտեի առաջին քարտուղարի պաշտոնով: Կրթությամբ Համարվում էր պատմաբան և իր կենսագրության էջերում նկատելի «ծառայություն» արձանագրեց **Դ. Դեմիրճյանի «Վարդանանքի»** *առաջին տարբերակին արած «դիտողություններով»:*

Իսկ աՀա՛, տարիներ անց **Մուշեղ Գալշոյանը** *պետք է գրեր. «Դեմիրճյանը չՀոգաց մարդկանց միտք ու խոսք Հասցնելու մասին, կամ միայն՝ խոսք տեղ Հասցնելու մասին,— դա շատերին է Հասու,— Դեմիրճյանին պետք էր սուզվել մարդկանց երակի մեջ, փոխանցիր ոգի: Եվ այսօր մեր ստացածը ոչ թե Դեմիրճյանի խոսքն է կամ միայն խոսքը, այլև, առաջին Հերթին, նրա մեծ ոգին՝ որպես ժառանգություն, որպես փոխանցվող գին»: Բովտուն, 1982, էջ 512:*

Մինչդեռ նեղմիտ այդ.քանը բավական էր, որ Համազասպյանը 40–ականի վերջերին նշանակվեր Գրողների միության քարտուղար: Գրական կյանքի առումով բավականաչափ ճղճիմ–Հետադիմական տարիներ, երբ ասվում էր, թե՝ **«Գրողների միությունը Քոչարի է պարում»:** *Այդ կարգավիճակով էլ նրա տնօրինությամբ տարբեր գունավորումներով քննվում էր իր բանաստեղծական առաջին՝* **«Անմահները Հրամայում են» գրքի Հեղինակ Գ. Սևակի Հարցը:** *Այնքան որ Սևակը թեկնածուական ատենախոսությունը ավարտ թողած, գնաց Մոսկվա ուսանելու:*

60–ականների սկզբից Վ. Համազասպյանն արդեն տասնամյակներ շարունակ մինչև **խոր ծերություն Սփյուռքի կոմիտեի նախագահն էր,** *և իր զավակներին ժառանգություն թողեց...* **նաև անձնական մեծաՀարուստ գրադարան...** *անպայման նախանձելի, քանի որ գրողներից շատերը ո՛չ գիրք առնելու, ո՛չ ստանալու, ո՛չ էլ պաՀելու Հնարավորություն ունեին...*

...Ինչ արած, ... մաՀվան օրերին ու Հետո արժանանալով–արժանացել է անդին գովեստների՝ **Սփյուռքի ճամփա–ջրի ճամփա Հիշարժաններից...**

«— Ուրեմն, հարց տվավ խոսակիցս (ասել է՝ Տիար Համազասպյանը՝ Ա. Զ.),— անպայման հուշեր պիտի ունենանք:— Այո՛...»,— լինում է պատասխանը:

Ըստ այդմ պատահական չէ, որ նրա հուշերի առանցքը Զարենցի հանդիպումն է Վ. Նավասարդյանի հետ: Իր ժամանակին սարքովի-չսարքված «դիպված» բանաստեղծի հետ, որ վկայում է հուշագիրը՝ երկու տարբերակով: Մեկ Զարենցի պատմածով, մեկ էլ՝ Ա. Սարյանի, միաժամանակ հավաստելով, թե նախապես ինքը ոչինչ չի իմացել. «... Իրապես բան մը չէի գիտեր»: Եվ սակայն եղելությունը ինչ-որ շատ մանրամասնորեն է մտաբերում. չլինի թե իր վրա էլ է դրված եղել հետևել-հսկելու պարտականություն...

Իսկ որ հանդիպումը եղել է կազմակերպված՝ հաստատում է և ինքը՝ Ա. Սարյանը, բայց և անձամբ Վ. Նավասարդյանը: Տարակուսանք է հարուցում հանդիպման բնույթի տարբերությունը:

Վկայակոչելով իբր ժամանակին Սարյանի պատմածը, Խաչատրյանը՝ «դաստիարակված» անձնավորության կարգավիճակով հավաստում է, թե հանդիպումը եղել է թշնամական, թունոտ. «... մահու չափ զիրար ատող ոսոխներ ըլլային կարծես»: Եվ այսպես երկու-երեք էջ շարունակվող երկար-բարակ հոլովումներով: Թող ների ասել, պարզապես՝ հակառակ իր այն վերամբարձ հայտարարության, թե՝ «Մենք Մխիթարյան դաստիարակություն առած, անոնց ջամբած հայրենասիրական ոգիով թրծված՝ չենք կրնար ատել մեր ազգակիցը, վերջապես «Եղբայր եմք»-ը երգած ենք և կը կրենք նույն արյունը»:

Իբր մտաբերումն Սարյանից, մինչդեռ լրջմիտ Սարյանի ճշտումն այսպիսին է. «Խոսակցությունը երկուքին միջև եղավ կրքոտ, թունավոր և թշնամական: Սակայն բաժանումին օրը տեսարանը սրտաշարժ և հուզիչ էր: Նավասարդյանը, երբ Զարենցին առջև փակեց նամակը, որուն բովանդակությանը պետք չէր որ տեղյակ ըլլար նույնիսկ Զարենցը, և խնդրեց զայն հանձնել իր մորը: Զարենցը խոստացավ կատարել իր փափագը, սեղմեցին իրարու ձեռքը և բաժանվեցան: Ես հետևեցա Զարենցին: Զարենցը խոսքը ինձի ուղղելով՝ «Սարյան, այս հանդիպումը պատահմունքի չէ կարելի վերագրել: Այս խաղը դուն սարքեցիր»,— ըսավ: Կը պատրաստվեի ինքզինքելու, երբ Զարենցը ազնվությունը ունեցավ խոսակցության նյութը փոխելու»:

Հիրավի, այս դեպքում վարք ու պահվածքով ազգակից-արյունակիցը Մխիթարյան սաներից իմ ճանաչած ազնվաբարո, վաստակաշատ Արփուն Տայանի:

Արդ, համոզվածության պես կարելի է կարծել, որ Զարենցը զանազանում էր ի պաշտոնե որպես սովետական ներկայացուցչության «Լեկասիոն» դիվանի քարտուղար» Սարյան ուղեկիցը՝ թերևս, շատ տարբեր Խաչատրյանի առաքելությունից: Ուրեմն և Սարյանի հետ կիսանկեղծ էր, իսկ երկրորդի հետ խոսում էր այնպես, ինչպես վերադարձին՝ երբ մշտապես գործ ուներ և արտահայտվում էր ի գիտություն հայրենական առանձին մատնչության: Ահա այս տրամաբանությամբ էլ՝ հակառակ Խաչատրյանի վկայածի, բուն ազնվորեն գործած սցենարով:

Ուրեմն և «Հաջորդ սուրբ Պետրոսի տաճարը» հարցադրումով Սարյանը վկայում է. «Երկրորդ անգամ ըլլալով Վատիկանի Թանգարանը այցելելէ ետք՝ անցանք տաճար այցելելու: Արագօրէն եկեղեցիին շրջանը ընելէ ետք, երբ կպատրաստվէինք դուրս ելլելու՝ Զարենցին ցույց տվի Ս. Պետրոսի արձանը, և իր ուշադրությունը հրավիրեցի արձանին ձախ ոտքին մատներուն վրա, որոնք անհետանալու աստիճան մաշած էին հավատացյալներու համբույրներեն,— Զարենցը ժպտաց ու ավելցուց. «Ահա գեղեցիկ փաստ մը մարդկային ավելորդապաշտության»: Երբ տաճարեն դուրս ելանք, քննադատեց բոլոր եկեղեցիները, և ի մասնավորի Հռոմի եկեղեցին, «որ գրեթե ոչինչ ըրած էր հայ ժողովրդին ողբերգության վերջ դնելու համար, նամանավանդ որ Թուրքիո դաշնակից Ավստրիո կայսրը սերտորեն կապված էր այդ եկեղեցիին»[21]:

«Ամենապոեմի» հայտնի արծարծումից չարունակվող ծառացում քրիստոնեության, քրիստոնեական եկեղեցու դեմ՝ պատմական դաժան ժամանակներում հայ ժողովրդին սատար դարձած չլինելու համար...

Ինչ վերաբերում է վերը հիշատակված «անցյալ նամակին», այդ անցյալ նամակը «Սփյուռքում» տպագրված չգտանք, որը ենթադրել է տալիս, թե պարունակած պետք է լինի որոշ բողոք-առարկություններ՝ ընդդեմ Խաչատրյանի վերագրածների՝ յուր անձին ու Զարենցին: Ուրեմն և համադրելով կարելի է ասել, որ Ս. Պետրոսի արձանի մասին Սարյանի գրած տողերը որոշակիորեն ուղղված են Ա. Խաչատրյանի **«Այց Ս. Պողոսի տաճարը»** ենթավերնագրի տակ եղած երկար-բարակ շաղակրատանքի, նրա ինքնագոհ քարոզչության դեմ, որով բանաստեղծը ճանաչվում էր ոչ ավել-ոչ պակաս՝ **գռեհիկ պրոլետկուլտական ու տգետ:** Կողք-կողքի ամենագլխավոր իր հարցումների և Զարենցի պատասխանների, ահա՛, այսպիսի ըսի-ըսավ խոսակցությամբ. «— Ուրեմն չհավնեցա՞ր ճարտարապետության և քանդակագործության այս հրաշակերտը, գլուխ-գործոցը... Ի՞նչ գիտես անոնց կյանքի մասին...» և այլն և այլն: Իսկ վերջում էլ եզրակացությունը. «Խո՞րթ կը թվին պրոլետար բանաստեղծի գեղարվեստական ըմբռնումին և ճաշակին համար իմ արտահայտությունները»:

Դե՛, ի՞նչ օգուտ մեղադրելուց: **Դանտեապաշտ Զարենցը շատ շուտով Վենետիկում իտալական վերածնությունից պատվով քննություն պետք է հանձներ հայր Արսեն Ղազիկյանին:** Բայց միևնույն է. անվանարկելը վերջ չուներ... Ա. Խաչատրյանին էլ հաջորդելու էր մեկ ուրիշը... այժմ էլ... և այդպես առ այսօր...

Ժամանակներն այնպիսին էին, և մարդկային հասարակությունն էլ, ավաղ, այնպիսին է, որ **ճշմարիտ մեծություններին վերևից նայել — դասեր տալը ինչ-որ մարդկային մի տեսականիի համար դարձել է ինքնահաստատման միջոց,** նույնիսկ դիտվում է որպես արժանավորություն: Զարենցի վրա հայրե-

---

[21] Սփյուռք, 1966, թիվ 32, 38:

նիքում այդպես էր նայում ապաշնորհների մի հոծ բազմություն, հարկադրում համարվել իր ճաշակին: Եվ ահա՛, հիմա էլ այդ հոծ բազմության՝ մի այլ տարբերակով, ձայնակցում էր բանաստեղծին Հունում ուղեկցող Խաչատրյանը:

Էապես Խաչատրյանի հուշերի սկզբունքային, հիմնավոր առարկություն են և Արման Սարյանի հուշերի **«Հայաստան վերադարձող ամերիկահայերը և Զարենց» նախավերջին և վերջին հատվածները:** Հայտնապես թե՛ բանաստեղծի, թե՛ Սարյանի վարք ու նկարագրի հավաստի անդրադարձ, որը պարտավոր ենք քաղել ամբողջովին՝ խղճմտանքով ջոկելու համար չորը թացից: Ուրեմն այսպես.

«Հայաստան վերադարձող ամերիկահայերը և Զարենց»

Այս հայրենակիցները երեք հոգի էին: Հազիվ Հունում հասած դիմեցին Ս. Հայաստանի ընկեր հյուպատոսին, որուն բացատրեցին իրենց նպատակը: Սենյակ մը տեղավորվելեն ետք գիրենք, խնդրեցի իրենց սպասել իմ հրահանգներուն: Գիտենալով Զարենցին լավ հարաբերության մեջ գտնվիլը Խորհրդային միության հյուպատոսին հետ, իր և այդ երեք հայրենակիցներու ժամադրություն մը սարքեցի, որպեսզի Զարենցը ծանոթանա անոնց և բարեխոսե հյուպատոսին մոտ: Այս անգամ ժամադրությունը որոշվեցավ Զարենցին հավանությամբ: Այդ երեք հայրենակիցները, չգիտեմ ինչու իրենց պարտականությունը կարծեցին իրենց առաջին հանդիպումին ինձ հայտնել, թե **մեկը անկուսակցական էր, մյուսը՝ հնչակյան, իսկ երրորդը՝ համակիր Դաշնակցության:** Աշխատեցա հասկցնել մեր հայրենակիցներուն թե ինչպես պետք է արտահայտվեին, եթե Դաշնակցության մասին խոսք բացվեր՝ թե՛ Զարենցի և թե՛ խորհրդային հյուպատոսի մոտ: Հանձնարարեցի նաև զգույշ ըլլալ ինձի հանդեպ իրենց ունեցած վերաբերմունքին մեջ, առանց իմ հանգամանքս մատնելու: Ինչպես նախատեսած էի, Զարենցը հատաքրքրվեցավ բոլորին արհեստով, ուզեց իմանալ Հայաստան ուր մտադիր են հաստատվիլ, և վերջապես ինչ հարաբերության մեջ գտնված են Դաշնակցության հետ: **Մեր ազնիվ, բայց միամիտ հայրենակիցները, հակառակ իմ հրահանգներուս, հազիվ Դաշնակցության անունը լսեցին, անմիջապես հարձակումի անցան Դաշնակցության դեմ:** Բարեբախտաբար այս անգամ իմ միջամտությունը տվավ իր արդյունքը, և երեքը մեկ հասկցան, որ իրենց համար հրաժեշտ առնելու ժամանակը եկած էր: Բարևեցին ու հեռացան: Երբ մենակ մնացինք Զարենցին հետ, Զարենցը այսպես արտահայտվեցավ. **«Սարյան, այս երեքը, այսօր այսպես են խոսում Դաշնակցության մասին, սակայն հազիվ առիթը ներկայանա, առաջին մաուզերիստները պիտի լինեն»:**

Վերջացնելուս առաջ պիտի ավելցնեմ, որ մեր երկրորդ հանդիպումին ձեռքս մեկնելով և խոսքս իրեն ուղղելով՝

— Բարև Ձեզ, ընկեր Զարենց,— ըսի:

Զարմացած գլխեց վեր և անմիջապես հարցրեց.

— Միթե դուք պոլշևիկ եք:

Պատասխանեցի.

— Ո՛չ, երբեք:

— Ապա ուրեմն ի՛նչպես ընկեր եք ասում:

Բացատրեցի մեր սիրելի բանաստեղծին, որ Եվրոպայի մեջ սովորություն էր երիտասարդական և ուսանողական շրջանակներուն մեջ զիրար ընկեր կոչել, ինչպես նաև զիրար կանչելու և փնտրելու համար, նույնպես սովորություն էր «Մեր հայրենիքը» սուլել: Այս անգամ ո՛չ մեկ զարմանք ցույց տվավ:

Մեր պտույտներու ընթացքին մեզի միշտ հետևեցավ գաղտնի ոստիկան մը, առանց սակայն մեզ խանգարելու:

Ես վերջացրի, և կ՛ուզեմ հուսալ, որ պարտքս վճարեցի:

Ընդունեցեք, հարգելի պրն. Սիմոնյան, իմ կրկին շնորհակալություններս և սիրալիր բարևներս»:

* * *

Գումարած մեր ու սերունդների խորին շնորհակալությունը արդարամիտ երախտավոր Ա. Սարյանին և «Սփյուռքի» հարգարժան խմբագիր Սիմոն Սիմոնյանին:

Ապա ընդհատակին հետամուտ՝ դառնանք Վահան Նավասարդյանին և Զարենցի «Հանգուցյալ պարոն...»-ին:

ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ...
ԵՎ ՉԱՐԵՆՑ ՈՒ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Հայու արյուն, հայու վիշտ, ձեզ կրելն հոգնեցա...

Ա. Ծառուկյան

Եվ սակայն, հասկանալի է, այնուամենայնիվ, խորքային կարևորը մնում է «Հանդուգյալ պարոնը կամ պարոն հանդուգյալը» երգիծական ակնարկին. ինչպես և ակնարկի Վ. Նավասարդյանի արձագանքին:

Սկսենք ուրեմն ակնարկից, ելակետ ունենալով Չարենց հեղինակի խոստովանություններից երկուսը. առաջինը. «... Ընդհանրապես խնդրում եմ նկատել, որ ես այստեղ տալիս եմ այդ պարոնի խոսքերը՝ համարյա տառացի ճշտությամբ–» և երկրորդը՝ «... Առհասարակ, ինչպես ես նկատեցի, Պարոնը սիրում էր իր ասելիքը վերջացնել կիսատ նախադասություններով. մի տեսակ ոճ էր դա երևի, որով նա փորձում էր ինձ պահել խորհրդավոր կիսախոսքերի հասկանալի մշուշում» (6, 144):

Իրականում Պարոնին վերագրվողը ժանրային–ոճական յուրօրինակությունն է այս «Արտասահմանցու պատմվածքի» մեջ, եղանակ ու տոնայնության խորհրդավոր կիսախոսքի քողով. մի կողմից ապահովագրելու, մյուսից՝ միստիկ–այլաբանականի ներսում երգիծանքին միախառնված մատուցելու շատ ու շատ տխուր ճշմարտություններ: Այն էլ չքմեղանալուց սկսած քանի՛–քանի՛ դիմափոխությամբ... Բայց և ամեն դեպքում այն նշանաբանով, ինչ **անգիտակի կեցվածքով** *վերծանված ենք գտնում «պատմվածքի» առաջին էջերում. «... դիտում էի մի ինչ–որ հռչակավոր վարպետի ինչ–որ հռչակավոր նկար... հիշում եմ միայն, որ նկարը ներկայացնում էր մի հյուծված, տախտակե, համարյա մեռելային դեմք, որի, ինչպես ընդունված է ասել՝ «ճակատին տանջանք կար, և, միևնույն ժամանակ, անդրաշխարհային կնիք»: Վաղ Ռինաշիմենտոյին (վերածնունդին) նկարած մի ինչ–որ հռչակավոր «Քրիստոս» էր դա երևի և այն էլ, ինչպես երևում էր, ոչ թե վերջացրած նկար էր, այլ էսքիզ կամ էտյուդ: Դեռ նոր էի պատրաստվում ինչպես ընդունված է՝ «խորանալ» այդ ... հռչակավոր հրաշալիքի մեջ, երբ մեկը, հետևից երևի մոտենալով, բռնեց հանկարծ թևս մի անսպասելի փամիլյարությամբ... Ցնցվեցի»: Եվ այնուհետև. «... բայց մի բան հիշում եմ պարզ, ինչպես արևի լույսը, և դա ինձ անակնկալորեն մոտեցած այդ առաջին հայացքից անծանոթ*

բարեկամիս աչքերն էին, որ, երևակայո՞ւմ եք–անչափ նման էին պատից կախված... Հուշակավոր Քրիստոսի ժպտաթախիծ աչքերին...» (6, 136–137):

Զգմեղորեն խուսանավող շարակարգություն, ծածկույթով երգիծական, տարողությամբ **քրիստոսորեն ժպտաթախիծ...** Նայած ընթերցողին, ավելի ճիշտ կարդացող–հասկացողին. «Ճակատին տանջանք կար, և, միևնույն ժամանակ, անդրաշխարհային կնիք» – և այդ նշանառությամբ էլ՝ հեղինակի կարճառոտ միջամտությամբ, խոսքը՝ կիսատ նախադասություններով ու կիսախոսքերով, հանձնվում է դիմացինին:

Հատուկենտ մեջբերումներով անգամ կարելի է պատկերացնել դրանց շղթայական թախծաշունչ դրամատիկ բնույթը. «... քաղցր բան է հայրենիքը, պ. Զարենց... Հիշում եմ՝ վերջին անգամ ինձ տանում էին...

Երևանից դուրս: Տանում էին փակ դրուզովիկով: Մեզ խուզարկել էին, վերցրել էին ունեցածներս, բայց ես կարողացել էի թաքցնել իմ փոքրիկ դրչահատը, որ մինչև հիմա պահում եմ մոտս որպես սրբություն... Հանելով դրչահատս՝ ճեղքեցի դրուզովիկի բրեզենտը և ծակից նայեցի դուրս. ինչ գնով էլ լինեի՝ վերջին անգամ ուզում էի տեսնել Երևանը...» (6, 144): Կամ. «... պ. Զարենց... ինչպե՞ս, ասացեք խնդրեմ, ես կարող եմ ոտ կոխել Երևան, քանի դեռ գոյություն ունի ձեր իշխանությունը, և քանի ես չեմ դրժել իմ սրբազան երդումը՝ **չապրել երկու իշխանության ներքո՝ մեկը–տաճկական, մյուսը–բոլշևիկյան...»** (6, 145):

Բայց և այսպիսին. «— Գիտե՞ք ինչ, ասաց նա՝ ամենայն լրջությամբ աչքերիս նայելով,— մենք ընդհանրապես այն համոզմունքն ունենք, որ ինչ որ շինում եք դուք երկրում, **շինում եք մեզ համար:** Այնպես որ որքան շատ–այնքան լավ (6, 152):

Զգաստ դիրքորոշում՝ հակառակ Դաշնակցության որոշ գործիչների կարճամտության: Եվ ինչպիսի՜ այլախոսությամբ...

Եվ դրանց շարքում կիսաարթմնի–կիսատեսլային՝ թե՛ Նավասարդյանի համար տագնապալի, թե՛ Զարենցի,— մղձավանջային այս պատկերը. «... Ես միշտ ասում եմ կնոջս, որ, ինչ էլ պատահելու լինի, գնալու եմ Երևան: Իսկ նա ինձ համոզում է, որ չգնամ: Իսկ ես ասում եմ նրան, որ կգնամ, թեկուզև ինձ գնդակահարեն...

Թեպետև այսպես եմ ասում, բայց համոզված եմ, որ չեն գնդակահարի. շատ–շատ բանտ պիտի դնեն. է՛, քիչ ենք նստել, պ. Զարենց:— Նստել ենք ցարականում, կնստենք նաև բոլշևիկյանում՝ ինչո՞ւմն է տարբերությունը... Եվ մի անգամ ահա, այսպիսի տաք մի զրույցից հետո, ես քնեցի և, երևակայում եք – տեսա մի տարօրինակ երազ... Երազում տեսա, որ ես Երևան եմ գնացել, բայց ինձ ձերբակալել են ու նետել Չեկա...Շուրջս հավաքվել են 10–12 տարեկան չեկիստներ և չեկիստականներ... և ուզում են հարձակվել վրաս, մորթել ու հոշոտել... Հանում են լեզուները, դիմասներ են անում, բոթում են, քրքջում, հայհոյում, մի խոսքով՝ սովորական–ծանոթ

պատմություն... Քրտինքի մեջ լողալով՝ արթնանում եմ և պատմում եմ կնոջս...» (6, 142):

Ծանոթ տեսիլներ, Արփինեիկի հետ՝ մանավանդ 1923-ի հունիսին «Ամպեր» հիդրոկայանի դեպքից հետո ճաշակելով-ճաշակած հոգեմաշ տագնապներ: Ուրեմն և Չարենցի համար կետ առ կետ նախորդ քաղվածքներին աղերսվող սրտամոտ, ավելին՝ սեփական ապրումների ու մտածումների խոստովանություն: Եվ ոչ միայն Չարենցի. մինչդեռ նա շարունակում էր ուղևորությունը, կասկած չի կարող լինել, որ ԽՀ ապրիլի 5 և 7-ին տպագրված **«Արտասահմանյան պատմվածքը»** *Մյասնիկյանի կորստյան խորհրդավոր-բազմանշանակ մթնոլորտում ընդունվել է որպես ահազանգ, և* **կարելի է պատկերացնել մտավորական ընդդիմության՝ Սարյանի, Մակինցյանի, Դեմիրճյանի, Թոթովենցի, Մահարու ... և շատ ուրիշների, առավել ևս Արփենիկի տագնապների չափը, սարսուռը...**

Առանց վարանելու կարելի է ասել, որ տագնապն ու մտահոգությունները նույնն էին արտերկրի մտավորականության, այդ թվում ***Դաշնակցության ազնիվ ու զգաստ ներկայացուցիչների միջավայրում:*** *Ըստ այդմ բոլորովին էլ զարմանալի չէ Նավասարդյանի անքեն, հավասարակշռված արձագանքը Չարենցի «Հանդուցյալ Պարոնին»: Հայ ժողովրդի արժանավոր, այլև քիչ թե շատ խելքը գլխին զավակների համար պետք է որ հասկանալի լիներ, և ցանկացողն ու հասկացողը հասկանում էր, որ հպատակությունը թուրքին լինի, ցարին, թե բոլշևիկներին, իրենք էլ Դաշնակցական լինեն, բոլշևիկ թե այլական... միևնույն է սեփական ժողովրդի բախտը՝ իրենց հետ էր: Իրապես այդ առանցքի վրա էլ «պատմվածքում» շիկանում է «բանակռիվը» Նավասարդյանի եգիպտահպատակության շուրջը:* **Եվ բանակռվի իմաստն այն է, թե ինչպիսին էլ լինի հպատակությունը, սպասվի լուռ ու մունջ հնազանդություն, բանտարկություն, թե գնդակահարություն՝ պետք է որ հային վիճակվի իր հայրենիքում, պետք է որ լինի հանուն հայրենիքի:**

Արդ, որքան էլ «Հանդուցյալ պարոնը» անզիջում, ինչ-որ տեղ թունոտ, բազմիմաստ՝ բաց նամակ-հորդոր էր ուղղված ինչու միայն մոլորված դաշնակցականներին, այլ ամենքին. առաջին էջերում տեղ գտած՝ «ճակատին տանջանք կար, և, միևնույն ժամանակ, անդրաշխարհային կնիք» և ամենավերջին հատվածում շեղատառերով շեշտված՝ «— **Մեռելը կարոտել է կենդանի մնացածներին և մեռելն ուզում է ուտել»՝** *լծակցության խորհրդանշական բեռով կամ ընդդիմադիր և համերաշխող լիցքերի միության կենտրոնով...*

* * *

Եթե պայմանավորվածություն է եղել, որ հանդիպման մասին խոսք չպետք է լիներ ո՛չ մեկ, և ո՛չ մյուս կողմից, հենց թեկուզ այդ առումով «Հանդուցյալ պարոնը» Նավասարդյանը պետք է որ ընդուներ վրդովմունքով: Բայց Հռոմին նա-

խորդել էր Նավասարդյանի և հաջորդել բանաստեղծի այցելությունը Վենետիկ՝ Իսահակյանին, և անկարելի է թե Իսահակյանը մինչև ապրիլի 5-ը առնվազը հնար գտած չլիներ բացատրություն հասցնել իր բարեկամ Նավասարդյանին: Ըստ այդմ պետք է որ հասկանալի լինի Նավասարդյանի խաղաղ, անքեն արձագանքը: Նախ այնպիսի հավաստի ապացույցով, որպիսին «Գահիրե, 30 ապրիլի, 1925» տարեթվով Նրա Արտաշես Ջիլինգարյանին հասցեագրած նամակի այս տողերն են. «Սիրելի Արտաշես, Հռոմում պատահական հանդիպում ունեցա Եղիշե Չարենցի հետ: Ճիշտը՝ գիտեր որ Թանգարան պիտի լինեմ, եկավ ինձ տեսնելու: Երկու օր առաջ առնում եմ Երևանի թերթերը և «Խորհրդ. Հայաստանի» մեջ գտնում մեր հանդիպումի նկարագրությունը՝ «պատմվածքի» ձևով («Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը» խորագրով): Դեմ չեմ տպագրելուն, թող տեղյակ լինեն մեր մտածումներին: Նրանք մեզնով ավելի են հետաքրքրվում, քան մենք մեզնով: Հարցնում էր քո մասին, և այնպես գիտեր, թե «Հայրենիք»-ը (թերթը) Բյուրոյի օրգանն է...»[1]:

Ապա և նույնքան հավաստի «Չարենց (Հուշեր և խորհրդածություններ)» խորագիրը կրող մի ամբողջ գրքով՝ տպագրված նախ 1957-ին Գահիրեում, ապա 1962-ին Թեհրանում[2], որից քաղվող հատվածներով և ներկայացվում-բնութագրվում է Չարենց-Նավասարդյան փոխհարաբերությունը, «Մահվան տեսիլին» վերաբերող կարևոր դիտարկումներով, կռահումներով ու հետևություններով:

Ճշգրիտ տվյալներով նախ այդպիսին են Չարենցի հետ հանդիպման հանգամանքները:

1924-ի վերջերին... մտա Վենետիկ Փարիզից դարձին Եգիպտոս... անցա Հռոմ, մնացի մի քանի օր... Հռոմ եկավ Չարենցը՝ դիպվածաբար. Մի ընդհանուր ծանոթ մտերմաբար ասավ.

«— Ձեզ մի հետաքրքրական լուր, այստեղ է Չարենցը. իրեն հայտնեցի ձեր մասին. փափագ ունի ձեզ հետ հանդիպելու, բայց չի ուզում, որ Դուք այդ մասին իմանաք. ես խոստացա հանդիպումը գլուխ հանել և իր փափագը Ձեզանից գաղտնի պահել. ինչպես տեսնում եք՝ խոստումիս այս վերջին մասը չեմ կատարում, որովհետև դժվար է առանց Ձեզանից մեկնումեկին մոլորեցնելու՝ դյուրավ Ձեզ քով-քովի բերել, երբ մանավանդ երկուսդ էլ մի քանի օրից պիտի մեկնեք այստեղից. արդ ի՞նչ է Ձեր թելադրանքը:

Անակնկալ լուրը ինձ ուրախություն պատճառեց:

Չարենցին ես ճանաչում էի երկրից. ավելի ճիշտ այն օրից, երբ ընկ. Աղբալյանը նրա ծնունդն ավետեց...»:

---

[1] Հայրենիք, 1963, №5, էջ 8: Բյուրոյի և «Հայրենիքի» տարբերությունը՝ նկատենք և ուշադրություն դարձնենք:

[2] Վ. Նավասարդյան, Չարենց, Հուշեր և խորհրդածություններ, Թեհրան, 1962, էջ 13: Այնուհետև քաղվածքների էջը նշված է բնագրում:

Եվ «Զարենց–Նամեի» տողերով ու ոգով արժևորելով՝ «բերանից բերան, թերթից՝ թերթ և քաղաքից քաղաք, թևածած «Գրագատի ավետիսը», Նավասարդյանը շեշտում–հավաստում է, թե՝ «... այդ օրից մինչև բանաստեղծի եղերական մահը մնացի իր աննման քնարի ջերմ սիրողներից մեկը:

Ուստի հաճելի եղավ ինձ, որ առիթ պիտի ունենամ Զարենցին կրկին հանդիպելու» (էջ 14):

Ուրեմն և՝ «Բարեկամիս խոստացա անտեղյակ ձևանալ պոետի փափագին. պայմանավորվեցինք, որ ես և Զարենցը հետևյալ օրը այցի կգնանք Ազգային Թանգարան, ուր և «դիպվածաբար» Թանգարանի նկարներից մեկի առջև տեսա Զարենցին. ու դրանից հետո այն մի քանի օրը, որ ես մնացի Հռոմ, մենք եղանք միասին» (էջ 14–145):

Ակներևաբար այդ «բարեկամը» Արման Սարյանն է, որի հետ, ինչպես ասվեց, մի այդպիսի գաղտնի համաձայնությամբ Զարենցը օգնել էր ամերիկահայ ներգաղթողներին: Թերևս լինի սխալմունք, բայց ինչ–որ համառորեն թվում է, որ երիտասարդ Արման Սարյանի թիկունքում ու միջոցով գործ ունենք ազգօգուտ ուժերի գործունեության հետ. Նավասարդյանի Փարիզ մեկնելու, այնտեղից վերադառնալու ճանապարհին Վենետիկ և Հռոմ այցելելու, Վենետիկում՝ Իսահակյանին, Հռոմում՝ «դիպվածաբար» Զարենցին հանդիպելու «չվացուցակային» համընկնումներով: Ինչ–որ կասկածելի համընկնումներ, չքմեղանալու այս խոսուն նշաններով. վերը քաղված տողերին անմիջապես հաջորդում է մի տող, որով ասվում է թե «Հանդուցյալ պարոնի» տպագրելը «անսպասելի» է եղել իր, ասել է՝ Նավասարդյանի համար, և դրան կից գտնում ենք այս ակնհայտ «վրիպումը», «Անցողակի հիշատակենք, որ մինչև Հռոմ անցնելը Զարենցն եղած էր Վենետիկ, ուր հանդիպած էր բանաստեղծ Ավ. Իսահակյանին և իր այս հանդիպումը ևս դրի առած էր երգի մեջ, որ կրում էր հետևյալ խորագիրը – «Էլեգիա, գրված Վենետիկում»,— և որ «գրության տակ հետևյալ թվականը կար՝ 1925 փետր. 16, Հռոմ»:

Իրականում այդպիսի տարեթիվ «Էլեգիայի» տակ չի եղել, և, միանգամայն ստույգ Նավասարդյանի այցը Վենետիկ նախորդել է Զարենցի այցին, և, ո՛չ հակառակը: Այս վարկածի օգտին են խոսում և հաջորդ էջերում տեղ գտած տողերը՝ ընդհանուր տոնայնությամբ հանդերձ. այն, որ Զարենցը «սեղմում էր ձեռքս բարեկամական ամենայն քնքշությամբ». սրա կողքին էլ՝ իր գրության,— ասել է «Զարենց» գրքի հրատարակության» անհրաժեշտության շեշտադրումները՝ թե «Զարենցն ընդգծված տողերով վկայում է, որ դուրսը արտասահմանում դեռ կան կենդանի մարդիկ այն կուսակցությունից, որին ներսը հայրենիքում, նա «տեսել է դագաղում», անգամ «ճանապարհ է դրել մինչև գերեզման» և նույնիսկ «մի բուռ հող էլ է ցանել վրան»... և որ՝ «Ահա այս մթնոլորտի մեջ մեր հանդիպումը պատկերելով՝ Զարենցը քիչ հետո, իր նույն «պատմվածքի» շարունակության մեջ, ընդարձա-

կորեն տալիս է **մեկ մասը** այն գրույցի, որ զանազան հարցերի շուրջ՝ դերազանցաբար՝ քաղաքական – նա ունեցավ ինձ հետ...» (էջ 18–19):

Առանց վարանելու կարելի է պնդել, որ զրույցի մյուս մասերը «դերազանցաբար» դարձել են Հ. Քաջազնունու «Դաշնակցությունն այլևս անելիք չունի» (1924) հարցադրման շուրջը, որով և Դաշնակցությունը վերջնականապես տրոհվում է երկու թևով: Հաստատապես կարելի է ասել, որ Քաջազնունու կարծիքին է եղել և Նավասարդյանը, որը և հետևում է իրեն վերաբերող վկայությունից. «Ես չեմ կարծում, թե այդ զրույցից որևէ բան նա թաքցրած լինի իր իշխանավորներից:

Եվ պատճառ չուներ այդպես անելու. լիապես համոզված եմ, որ առանձին գրությամբ նա մեր հանդիպումը իր անխարդախ ձևի մեջ հանձնած է ուր պետք է»:

Խորքին մեջ անճիշտ խոսք չունի Չարենցը մեր զրույցի նաև այն մասի մեջ, որ հրատարակության տված է, բայց միայն, ինչպես ասացինք, դրական ձևի տակ:

Ճիշտ չէ ձևը, բայց ոչ խոսքը» (էջ 20):

Ուրեմն և. ե՞րբ են բացվելու այս և նման հանգույցները:

Մինչդեռ Վ. Նավասարդյանը համոզված է, որ Չարենցը իրենց հանդիպումը՝ «իր անխարդախ ձևի մեջ հանձնած է ուր պետք է»,— կարծելով թե սովետների համար ընդունելին այն է, որ «Դաշնակցությունն այլևս անելիք չունի»,— իրականում այդ սովետներին=հայր Ստալինին հարկավոր էր, որ այդ «Դաշնակցությունը» ծավալի անելիքները. որքան կարելի է թունոտ լեզվով քարկոծի սովետներին, Ռուսաստան, Լենին–Ստալին, ժողովրդների հետ համերաշխություն, որպեսզի բազմապատկվեն հայությանը ազգայնամոլության մեղադրանքով բանտարկելու, Սիբիր քշելու, գնդակահարելու հիմքերը, պատճառ–առիթները... ծավալեն անելիքները՝ ձախողելով հայության ներգաղթը Հայաստան: Այնպես որ պատահական չէ, որ նույնիսկ տարիներ անց հետադարձ վերաբերմունքով՝ նվաստացուցիչ ամենահետին հոլովումներով Ահարոն Խաչատրյանը չարախնդորեն ծանակում է հայրենիք ներգաղթող Թադոսին ու Միսաքին... Իսկ հայրենիքից էլ թնդում–որոտում էր Արտաշես Կարինյանի ձայնափողը. ոչ ավել, ոչ պակաս, թե ներգաղթողները կարող են բնակություն հաստատել միայն Սիբիրում...[3]

Իսկապես, ոչ ոք չի մոռացվում, և ոչինչ չի՛ մոռացվելու: Ըստ այդմ՝ ի հեճուկս Խաչատրյանի և նմանների, այդքան ազնվորեն է հնչում ինչպես Չարենցի հետ դաշնակցած Սարյանի աջակցությունը ներգաղթողներին, այնպես էլ արդար զայրույթը տարիների հեռավորությունից:

[1] Տեղն է մտաբերել հայ ժողովրդի միջավայրում տարածված՝ սովորած արհեստը չի մոռացվում առած–ասացվածքներից հատկապես այն մեկը, որ դժվարանում եմ մատուցել...

Կասկածից վեր է, որ բանաստեղծի հանդեպ Նալբանդյանի անքեն վարմունքը հատուցվել է «անհաշտ—անխնա հակառակությամբ», և բանավեճային խոսքով հոլովվել է Ն. Աղբալյանը՝ «Ռոմանս անսերի» ու «Պոեզոզուռնայի» հայտնի քննադատությամբ: Բնականաբար «Չարենց» գրքում պատասխան—բացատրությամբ շոշափվում է և այդ հարցը՝ սկզբում «տարաբախտաբար» եղել է «գրեթե անտեղյակ» նկատումով, ապա և Չարենցի ու Աղբալյանի անսքող դրվատանքով ու պաշտպանությամբ:

Ավելին. քաղելով «Էպիքականի» «Սիրելի Ա—ին» բանաստեղծությունը (4,115) Նալբանդյանը համանշանակ քնքշանքով գրում է, թե՝ «... Գերազանցորեն մարդկային և այդ իսկ պատճառով խորապես հուզիչ է այս մտերմիկ խոսակցությունը» և որ «... մինչև մահ հոգով ու սրտով նա (Չարենցը՝ Ալ. Չ.) զրույցի նստեց այդ մարդու հետ, որի մեջ տեսած էր իր առաջին ուսուցչին ու գրական առաջնորդին և որին նա միշտ հարգած ու սիրած էր...» (էջ 22): Եվ այնուհետև. «... Ուզում ենք ասել, որ պոետն ընկ. Աղբալյանի հետ բաժանման օրից մինչև իր մահվան օրը՝ հավանաբար նրան հաճախ է հիշել և հաճախ է իր մտքում կրկնել նրա սրտացավ կշտամբանքը: Ստույգ է նաև այն, որ Չարենցին սիրողներից ու չսիրողներից նաև ուրիշներ նույն սաստը (Աղբալյան) — բարի կամ չար նպատակով — արել են պոետին, որոնց բոլորին նա պատասխանում է նույն «Լուսաբացում» զետեղված ու **նույն Թվականները կրող** — տարբեր կտորների մեջ» (էջ 23—24),— և այլն և այլն:

Միաժամանակ հավաստվում է, որ Երևանում իր տեսած՝ ասել է «Տաղարանի», Չարենցի համեմատությամբ,— և դա էլ դարձյալ ի հեճուկս հակառակորդների ու թշնամիների շարունակվող ամբաստանությունների,— Հռոմում Չարենցը «ինձ թվաց ավելի լրջացած և ավելի հասունացած»:

Բայց կիզակետայինը, իհարկե, վերջին պատումներն են՝ սկսած, ահա՛, հուշարկվող այս դրվագից. «Մի օր,— գրում է Նալբանդյանը,— մեր պտույտներից մեկին, Չարենցի հետ համրաքայլ կտրում էինք հնությանց հուշարձաններով այնքան պերճացած Հռոմի չքնաղագույն պողոտան — **«Վիա իմփերիա»:**

Երբ հասանք պողոտայի այն կետին, ուր այդ հին ու պատմական անցքի մեծ պատին բարձրաքանդակ արձանացած էին երեք հսկա քարտեզներ, մի պահ կանգ առինք:

Այս քարտեզները շինված էին Ֆաշական իշխանության շրջանին: Նրանցից առաջինը ներկայացնում էր աշխարհը Հռոմի հիմնադրման թվականին, այսինքն մեր թվականությունից 753 տարի առաջ:

Այդ քարտեզի վրա, Փոքր Ասիո մեջ շքեղորեն փռված էր անմեկնելի խորհուրդներով լի մեր աննման հայրենիքը — Հայաստան»:

Ներիր ընթերցող. ի հեճուկս ոչ այնքան արտերկրի, որքան հայրենիքի մեր օրերի Չարենցի թշնամիների զինակից—զինակիրների,— շարունակությունը արտագրում եմ Նալբանդյանի «Չարենց» հատորից Անդրանիկ Ծառուկյանի ընտրած—սիրով վերաքաղած հատվածը: Սա էլ լինի թող իմ երախտիքի տուրքը Ծա-

ռուկյանին, իր «Հայու արյուն, հայու վիշտ, ձեզ կրնկն հողնեցա» նվիրական տողերի համար[1]*:*

«Պահը, վայրը, մեր Թվականից շուրջ ութը դար առաջ ապրող Հայաստանի քարտեսն էր երբեմնի աշխարհին տիրակալած Հռոմի միակ պատմական պատին, և իր իսկ խելագարված ամբոխների երիտասարդ և հզոր երգչի ներկայությունը,— այս ամենը ինձ տրամադրեցին Զարենցի չքեղ երգը՝ «Ես իմ անուշ Հայաստանի» քաղցրությամբ ու լի հոգիով արտասանելու:

Հայրենասիրական մեկ խոր ու խորհրդավոր զգացման մեջ միացած և մեր աչքերը հառած այն Հայաստանին, որ ապրում էր մեզնից շուրջ 2700 տարի առաջ, ես արտասանում էի «Զարենցը», իսկ Զարենցն էլ լուռ ունկնդրում էր ինձ:

Բանաստեղծը անակնկալի չեկավ, որևէ բառով չընդմիջեց արտասանությունս, սակայն, երբ ավարտեցի, դարձավ ինձ և մեղմ ձայնով ու հայտնորեն հուզված ասաց.

— Եթե իմանայի, թե որքան Դուք պիտի սիրեք այդ կտորը, ես այն չէի գրի...

— Ի՞նչ, չէի՞ք գրի, լո՞ւրջ եք ասում Դուք այդ, իսկապե՞ս չէիք գրի, անկեղծ վրդովումով ասի իրեն:

Զարենցը չպատասխանեց:

Հարցումներս ինքնին կրկնվեցին. տեսնելով որ պատասխանի եմ սպասում, Զարենցը դարձավ ինձ և ավելի քաղցր ու մտերմիկ շունչով ասաց.

— Ո՛չ, կգրեի, բայց չէի հրատարակի...»:

Ապա հաջորդում է «մտքի հոսքով» անակնկալների հակված Զարենցի կիզակետային նոր անակնկալը. «Ահա այստեղ է, որ մեկեն մեր զրույցի նյութը փոխելով, բանաստեղծն ինձ հետևյալ տարօրինակ հայտարարությունն արավ.

— Բարի եղեք, խնդրում եմ, ասել Նիկոլ Աղբալյանին, որ ես իրենից չեմ վախենում...

Այս խոսքից ես կատարելապես անակնկալի եկա. «Պոեզոզուռնա»–«Պոեզոկարծիք»,— այդ ժամին այս բոլորից ոչինչ, ոչինչ իմ հիշողության չեկավ:

Սպառնալի՞ք... Աղբալյանի՞ց... Զարենցի՞ն...– մի պահ ինձ թվաց, թե պոետը զառանցում է:

— Ի՞նչ ես ասում, մեր տղա, ի՞նչ վախի մասին է խոսքը, ո՞ւր և ե՞րբ սպառնացած է քեզ Աղբալյանը. և վերջապես, ո՞վ ես դու, ի՞նչ ես դու – հասկացա՛նք, մեծ բանաստեղծ ես – որ Աղբալյանը սպառնա քեզ...

Տեսնելով, որ տեղյակ չեմ խնդրին և միտքս այլ տեղեր է թևածում, Զարենցը ավելի հարազատ և խոնարհ ձայնով ասաց.

— Նիկոլը կարծում է, որ ես իբրև բանաստեղծ կմեռնեմ, թող չվախենա, չեմ մեռնի...

Ու չգիտեմ, չեմ հիշում, երբ տուն հասա՝ Եգիպտոս՝ ընկ. Աղբալյանին այս ամենը պատմեցի՞...» (էջ 36):

---

[1] *Անդրանիկ Ծառուկյան, Առագաստներ, Հալեպ, 1939, էջ 11:*

Անշուշտ, հետաքրքիր են և իրենց բաժանման վերջին հատվածները, որին անդրադարձել են և հուշագիրները: Սրանք գալիս են լրացնելու կարևոր այլ առումով. «Վերջին օրը, մեր բաժանումին, Զարենցը դարձավ և ասավ. «— Ո՞վ գիտե, հիմա ինչ **բաներ պիտի գրեք մեր հանդիպումի և մեր ունեցած զրույցների մասին...**

Նաև այս հայտարարությունը տարօրինակ եկավ ինձ.— **Չէ ոչ միայն լռջացել և հասունացել եք,—** *ասացի իրեն,—* **այլև անհամեստացել. ի՞նչ պիտի գրեմ Ձեր մասին, և ինչո՞ւ պիտի գրեմ, ի՞նչ նպատակով. որքան մեծ բանաստեղծ եք, այնքան փոքր քաղաքական դեմք եք. ո՞վ է հետաքրքրվողը Ձեր քաղաքական դատումներով. իսկ ինչ վերաբերում է Ձեր գրական տաղանդին՝ այդ մասին Աղբալյանն արդեն խոսել է, ես նոր ինչ պիտի գրեմ[5]:**

Զարենցը չառարկեց և չբողոքեց. իբրև բարեկամներ բաժանվեցինք մենք, և բաժանվեցինք առհավետ...» (էջ 31):

Այնուհետև հայտնում է, որ ամսաթիվը վավերական դիտվելու դեպքում Զարենցը ԽՀ–ի համար «Հանդուգյալ պարոնը» գրել է Հռոմում, և որ, այդուհանդերձ, ինքը խոստումնազանց չի եղել, ոչինչ չի գրել մինչև «Զարենց» գիրքը:

Հարկ է զգացվում կրկնել այն, որ այս վերջին կետում վճռորոշ դեր է ունեցել Ավ. Իսահակյանի «միջամտությունը», և եթե հետադայում էլ հնարավոր եղած լիներ հանդիպել, երևի թե, առհասարակ չգրեր վերջին կես էջը՝ Ն. Աղբալյանի «Գրության վերջավորությամբ» հանդերձ: Ասել է թե՝ բանաստեղծի հերոսա–եղերական կյանքի ու նահատակության դիմաց՝ ինքն էլ կմնար յուր անքեն բարձրության վրա: Սխալ չէր գործի կրկնելով Աղբալյանի «Զարենցը եւ լռեց առհավետ» ճակատագրական սխալմունքը (հիմնավորելու փորձն իսկ սրբապղծություն կլիներ) վեճ չէր բացի՝ «... այնքան փոքր քաղաքական դեմք եք. ո՞վ է հետաքրքրվողը Ձեր քաղաքական դատումներով» հայտարարության շուրջը...

Որովհետև վեճի պատասխանը պարզապես կլիներ այն, թե ոըպես հայրենիքի զինվոր ու քաղաքացի, քաղաքական դեմք՝ «քաղաքական դատումներով» հանդերձ,— **դարի դաշնակցական գործիչներից այդ ո՞վ կարող է չափվել Զարենցի հետ...** *Եվ սակայն խստասիրտ չլինենք, քանի որ, երևի թե, ինչ–որ պահի անհնար է եղել խեղդել գլուխ բարձրացրած վիրավորանքը, մանավանդ որ խոսքը վերաբերում է հայոց սրբադործվելով–սրբադործված ոգեկան ու մայրական սիրուն:*

---

[5] Համապատասխանաբար տողատակին կարդում ենք. «Իր գրության վերջավորության ընկ. Աղբալյանը նկատում է. «Նա մրրկահավ եղավ աշխարհասասան հեղափոխության, որ թռած էր Հայաստան երկրից՝ մասնակցելու «Խելագարված ամբոխների» դղրդին: Երբ ալիքն իջավ՝ մրրիկներին վարժված իր թևերը անփոթորիկ մնացին: **Սողացողներն արծվին չհասան:** *Իր ճախրը հիմա* **խանդարում էր շատերին** *(ընդգծ.՝ Ալ. Զ.): Եվ Կոմոսը կլանեց իր ձագերին... Շատերի հետ, որ դեռ փոթորիկ ունեին իրենց հոգիների մեջ՝ Զարենցն ալ լռեց առհավետ»:*

Բայց հարց է ծագում. այդ ինչու «Խելագարված ամբոխների» դղրդի կողքին երբեք չի մտաբերվում նույն միջոցին սաեղծված «Աթիլլայի» դղրդը... ապա «Կոմունարների պատը Փարիզում» դղրդը... և այդ էլ, ահա՛, նվաստիս հարցն է...

* * *

Այս տեսակետից, անշուշտ, Չարենցին նվիրված Նավասարդյանի «Հուշեր և խորհրդածությունների» քննությունը նկատելիորեն թերի կմնար առանց «Մայրս» վերնագրով գլուխը ներկայացնելու:

«Հանգուցյալ պարոնի» վերջնամասից քաղելով իր մորը ուղարկած նամակին վերաբերող հատվածը,— հուշագիրն ավելացնում է. «Նման խնդրանք, ճիշտ է, ես ուղղեցի Չարենցին և նամակ էլ տվի մորս հանձնելու համար: Եվ պոետն էլ սիրալիր պատրաստակամությամբ նամակն առավ և ծոցագրպանը դրավ»:

Սակայն դեռ Երևան չհասած, նամակը չհանձնած «Երևան է հասնում... «Հանգուցյալ պարոնը» խորերից խոցելով մորս վիրավոր սիրտը»: Միջանկյալ ներկայացնելով Հռիփսիմե Սաֆարյան անուն–ազգանունով յուր մայրիկին՝ «Յոթը պորտով ղարաբաղցի էր և իր հոգու բոլոր թելերով կապված էր հին և հոյակապ ծննդավայրին» (էջ 126), և ապա՝ «այրապաշտ էր. մարդկային առաքինությունները գտնում էր մարդոց մեջ, բայց ոչ կինների» (էջ 130),— որդին քաղում է և միամիտ–հուզական տողեր մոր նամակներից. «— Իմ քաղցր բալա, առաջ չէիր գալիս՝ հասկանալի՛ է, բայց հիմա, երբ մենք այնքան սինթետիկ կաուչուկ ունենք, հիմա՞ ինչու չես գալիս...» (էջ 125):

Հայոց որդեպաշտ–այրապաշտ մայրերի՝ «կարմիր կովին», «ախպեր եզին»... փոխարինած, (ախ ինչ սև՛ս) «սինթետիկ կաուչուկով» որդուն տուն դարձի կոչող նորօրյա մրմուռներ՝ շաղախված նույնքան ծանոթ քաջասիրտ հպարտությամբ ու վեհանձնությամբ,— ինչպես հետևում է Նավասարդյանի շարունակած մտաբերումներից: «Հանգուցյալ պարոնը» կարդալով,— գրում է նա,— մայրս հուզվում է խորապես: Եվ ահա մի օր նամակ եմ ստանում իրենից, ուր մայրս պատմում է, թե ինչպես Չարենցի «պատմվածքում» կարդալով, որ նա ինձ «հանգուցյալ» է հիշակել, մինչև իսկ «տեսել է դագաղում», անգամ «ինձ ճանապարհ է դրել մինչև գերեզմանատուն և մի բուռ հող էլ ինքն է ցանել վրաս» – չի կարողանում դիմանալ այս խոսքերին, գնում է «Խ. Հայաստանի» խմբագրատուն և խնդրում է իրեն տանել խմբագրի մոտ:

Երբ իմանում են Մորս մասին՝ դուրս են գալիս խմբագրական սենյակից, հարգալից ներս հրավիրում իրեն և տանում խմբագրապետին: Իր նամակում Մայրս անուններ չի տալիս:

— Գնացի ներս,— գրում է մայրս,— «Խ. Հայաստանի» 1925 ապրիլի 5–ի և 7–ի թվերը ձեռքիս... Խնդրեցի ցույց տալ ինձ Չարենցին, ասացին, որ Եվրոպա է, դեռ չի եկել. ցավեցի շատ, որ չկա. ոչինչ, ասացի, երբ վերադառնա՝ ես էլի կգամ, բայց կ'ուզեի իմանալ, թե մարդկային ինչ սիրտ եք ունեցել իմ միակ զավակին դագաղ դնելու և գերեզմանատուն տանելու և թաղելու:

Ասացին մայրիկ, պետք չէ վախենալ, գրականություն է, այդ մենք ընդհակառակն, իրեն հարգում ենք, ինքն է, որ իր թերթում ամեն բան գրում է մեր դեմ:

Ասացի, ոչինչ, քանի որ էդպես է, քանի որ գրականություն է, ուրեմն՝ թե «Հանդուցյալը» գրողին և թե տպողին ե՛ս դագաղը դնեմ, ե՛ս գերեզման տանեմ ու ե՛ս թաղեմ:

Ուզեցին խոցված սիրտս առնել, բայց չեղավ, ես իմ ասելիքս ասացի: Պիտի սպասեմ էդ Զարենցին, երբ գա, էն ժամանակ է, որ դատաստանս իմ ձեռքովս պիտի տեսնեմ նրա հետ» (էջ 134):

«Անունները չտալու» զգուշավորությամբ հանդերձ՝ քաղաքական թվականների թե՛ ժողովրդի, թե՛ մտավորականության միջավայրում դեռևս պահպանվող նախանձելի մարդկային հարաբերություններ, նաև որդուն պաշտպանելու մայրական օրինական իրավունք, *որի հետքերն արդեն երևանականներից սկսած չհանդուրժվելով–չմնալով–չմնացին... Ինչ մնում է Զարենցին, ապա, անտարակույս «պատմվածքի» դեմ մայրական ծառացումը՝ ճիշտ նույն կարգով ու հանգով էլ մտահղացման պահից սպասել է ու պատկերացրել: Բայց ինչ արած. եթե ավեր–ամայի «Հայաստանը բնակեցնելու» կոչված ներգաղթը կասեցնելու ամենօրյա ստահակությամբ ու արարմունքներով՝ «մեռելն ուզում էր, ուտել» «կենդանի մնացածներին»...*

Որը և, կրկնենք, *ավելորդն ընդունել–հաստատել է հենց ինքը՝ Նավասարդյանը՝ գրելով.* «Խորքին մեջ անճիշտ խոսք չունի Զարենցը *մեր զրույցի նաև այն մասի մեջ, որ հրապարակության տված է, բայց միայն, ինչպես ասացինք, գրական ձևի տակ:*

Ճիշտ չէ ձևը, բայց ոչ խոսքը» (էջ 120):

Ըստ էության դա հաստատում է և այս էջերի շարունակությամբ. գրելով թե մխիթարական նամակով հանդստացրել է մորը, նա էլ իր հերթին պատասխանել է այս տողերով. «— Մի օր դուռս մեկը ծեծեց, բացեցի ու տեսա, որ երիտասարդ ու կարճահասակ մեկը՝ քաղցր ձայնով ինձ մայրիկ ասելով մի նամակ է տալիս ինձ. Զարենցն էր. մեկ այնպիսի լեզու բանեցրեց, որ ես ամեն ինչ մոռացած՝ կլոլակի հրավիրեցի իրեն. կիրակի օրը եկավ ու կերավ. կարծեմ իր կյանքումը էդպես կլոլակ դեռ չէր կերած:

Ասացի, որ մայրապաշտ է նաև եղերաբախտ պոետը...» (էջ 134–135): Ու քաղում է պոետի «Մորս համար դաղելը»... Ա՛խ, տեսնես որ հազարերորդ անգամ «Հիշում եմ դեմքը քո ծեր, մայր իմ անուշ ու անգին» տողով զրույցի բռնվելով միաժամանակ թե՛ հարազատ մոր, թե՛ Զարենցի հետ...

Այս ամենից հետո, ուզում եմ, այնուամենայնիվ, կրկնելով սերունդներին թողած լինել այս զգացողությունը: Թվում է, Զարենցի հետ մորը ուղարկած նամակով իսկ Նավասարդյանը ինչ–որ ձևով տեղեկացրած է եղել մորը «Հանդուցյալ պարոնի» լրողությանը, հաղորդելով չվշտանալ և այլն: Իսկ դա էլ նշանակում է, թե «Հանդուցյալ պարոնը» ստեղծվել է երկկողմանի պայմանա-

վորվածությամբ՝ ընդդեմ Դաշնակցության այն թևի, որը հակահայաստանյան հետևողական քաղաքականությամբ քիչ է ասել խաղում էր «կենդանի մնացածների» բախտի հետ. ամբողջ հայության բախտի հետ՝ ինչպես հայրենիքի, այնպես էլ՝ ի սփյուռս աշխարհի տարագիր հայության... բախտի հետ... Տերը կների՞ արդյոք...

Շարունակվող արծարծումներ՝ հօգուտ Չարենցի...

Վ. Նավասարդյանի «Չարենց (Հուշեր և խորհրդածություններ)» գրքի երկրորդ բաժինը վերաբերում է **«Գիրք ճանապարհի» «Մահվան տեսիլ»** *պոեմին: Միանգամայն տրամաբանորեն, քանի որ «Հանդուցյալ պարոնը» տեսլային ատաղձով* **յուրատեսակ նախնական էսքիզ է «Մահվան տեսիլի»:**

Քննական էջեր չեն դրանք, այլ 19-րդ դարի հայոց ազատագրական պայքարի պոեմում արծարծված գաղափարախոսների յուրօրինակ վերծանումներ: Հերթականորեն հատված առ հատված պոեմից քաղված չափատողեր և դրանց դիմաց համապատասխանորեն՝ Ղ. Ալիշան... Րաֆֆի... Խրիմյան Հայրիկ... Գր. Արծրունի... Սիամանթո... Վարուժան... Ահարոնյան... Հըդայան – ասել է Հայ հեղափոխական Դաշնակցություն և այլն: Մոտավորապես այն սկզբունքով, ինչպիսին ՀՀ Դաշնակցության հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանին վերաբերող հատված–ծանոթությունը. «Նախքան Քրիստափորին լսելը նկատենք այստեղ, որ պոետը այնքան այլաբանորեն է ներկայացնում Մեծ Հեղափոխականին–«ոսկորի և մսի կույտ»– որովհետև նկատի ունի նրան 1905-ի մարտի 17-ի եղերական դեպքից հետո, երբ Քրիստափորն իր գործակիցների՝ Վռամշապուհ Քենդիրյանի և

Ընկ.-հի Ռուբինա Օհանջանյանի հետ, ռումբի անհաջող պայթյունից, Վռամշապուհի հետ միասին, ոչնչացած գետին փռվեց, Վիտոշի լանջերին, Սոֆիայի մերձակայքը՝ իր մեծ երազը–պատուհասված տեսնել Կարմիր Համիդին–իրեն հետ գերեզման տարավ» (էջ 63)[6]:

Իսկ քննականը՝ Չարենցի «Թուղթ Ստալինին» արծարծումով հանդերձ,— միայն վերջում է՝ «Գիրք ճանապարհին» վերաբերող սույն ընդհանրացումով. «Եվ իրականին մեջ էլ այդպես է. իր այս գրքով Չարենցը, քողարկված ձևի տակ, ճշտում և գծում է իր **ճանապարհը,** *իր* **կյանքի ուղին,** *իր* **հավատքը»** *(էջ 87)[7]:*

Ճիշտ է, «քողարկված ձևի տակ» բնութագիրը, ճշտել–գծելը նույնպես, բայց ոչ երբեք միայն իր, այլ առաջին հերթին ամբողջ հայ ժողովրդի: Այդ

---

[6] *Վ. Նավասարդյան, Չարենց, Հուշեր և խորհրդածություններ, Գահիրե, 1957:*

[7] *Նույնը:*

տրամաբանությամբ էլ առաջին էջից վերջինը «Գիրք ճանապարհին» պատգամային է: Մովսես Խորենացու ավանդներով ազգային գերգաղափարներով ալիքավորվող բանաստեղծական յուրօրինակ ստվարածավալ թուղթ՝ բոլոր էջերով հասցեագրված հայ ժողովրդի բոլոր սերունդներին...

* * *

Ավելորդ է ասել, որ Չարենց—Նալբանդյան չղթայական առնչակցությունը «Չարենց» դրքով չի ավարտվում: Մասնավորապես շարունակվում է Նալբանդյանի խմբագրությամբ լույս տեսնող «Ցուսաբերի» էջերում: Եվ հատկանշական է՝ միշտապես ողբերգորեն սրտացավ արծարծումներով և անխառն բարեբանությամբ: Ուրեմն և ավելորդ է ասել նաև, որ կարիք կա մի քանի էջով անդրադառնալ այդպիսիններին ևս, մանավանդ որ չափազանց կարևոր մեկն էլ պատկանում է Նալբանդյանի որդու՝ Բագրատ Նալբանդյանի գրչին, իսկ հարցն էլ վերաբերում է նրա ճակատագրին:

Բանաստեղծի «խրավունքների վերականգնման» հետ հինականի վերջերից՝ ավելի հաճախակի են դառնում հրապարակումները, արձագանքները հայրենյաց միջոցառումներին և առաջին հերթին անտիպ էջերի արտատպումները: Ինչպես «Չնչին, ինչպես Արարատին նետած քար», «Իմ լուսաստղը» բանաստեղծությունները, պարզ է, համապատասխան ծանոթություն—բացատրությամբ, ինչպիսին ասենք՝

... Այդ ո՜չ թե Արևն էր՝ բարձրացավ—
Եվ սրբեց ոսկեզօծ քո ցոլքը
Իր շքեղ ցոլքերով պայծառ:—

Ո՛չ:— Չնչի՛ն ամպերի սև զորքը
Պաշարեց Արևի՛ց առաջ քեզ,—
Իսկ այնտեղ, ներքևում,—երգի սով էր,—

Բայց ցնծում էր պառնասն առանց քե՛զ... (Անտիպ և...

էջ 138),—և այս տողերին անմիջականորեն արձագանքող Մկրտիչ Պարսամյանի «Եղիշե Չարենցի մահվան առեղծվածը» վերնագրով հոդված՝ ազնիվ զայրույթի ու դառնափեկման այսպիսի հատվածներով. «... Վստահաբար շատ ավելի նյութեր պիտի գտնեինք 1937 տարվա «Գրական թերթի» հավաքածոյին մեջ, երբ ծանոթ անուններ ամենեն զզվելի դերերը կատարեցին Չարենցի անձը կասկածելի դարձնելու և ոստիկանության ուշադրությունը հրավիրելու համար անոր վրա: Մեր հիշած քերթվածները ակնարկություններ են այդ վիճակին ու անհատներուն...»: Եվ այնուհետև. «Եվ սակայն Եղիշե Չարենցի բանտային կյանքն ու մահվան առեղծվածը պիտի մնա առեղծված, և պատասխանատու անձերուն խիղճը պիտի տանջե զիրենք, հակառակ

այսօրվան պաշտոնական հանդիսություններուն և գրողներուն՝ մեկը մյուսը գերազանցող տողերուն»*:

Լրագրի հաջորդ փետրվարի 6-ի թվում արդեն զետեղված է «Մեղադրանքներ...» խմբագրականը, որով քննադատվում էր Հրաչյա Գրիգորյանի Սգ ամսագրում տպված հոդվածը. «... Վ. Նավասարդյանը դաշնակցական գրող է, ինչպես Հրաչյա Գրիգորյանը **համայնավար գրող է**: Անկարելի բան է, որ այս երկուքը համաձայն ըլլան իրարու հետ, իբրև կուսակցական:

Կոստան Զարյանը և Ստեփան Զորյանը **հայ** գրող են: Անկարելի բան է, որ այս երկուքը համաձայն չըլլան իրարու հետ իբրև գրող»: **Իսկապես որ, համեմատությունները կաղում են, տվյալ դեպքում անչափ խի՛ստ.** բուն իրողությունները պարզելու դեպքում համեմատությունը պետք է որ հակադարձվեր. և հակառակորդ կուսակցությունների պատկանող Նավա**սարդյանն ու Գրիգորյանը վստահաբար Չարենցի դեպքում ավելին՝ հայից-հայ կըլլային»...**

Բանաստեղծի ողջ ստեղծագործություններից հետևող այն զգացողությամբ ու խորհուրդներով, որ հորից ժառանգելով զգացել, վերապրել-արձա-

---

* Յուսաբեր, 1958, 5 փետրվ.

Հետաքրքիր է, որ փետրվարի 8-ի թվում արդեն Վ. Լ. ստորագրությամբ լրագրում տպագրվում է **«Եղիշե Չարենցի վերջին օրերը»** հուշը՝ որում 1937 թ. օգոստոս տարեթվով պատմվում է հետևյալը. այն է թե՝ ցնորված Վահան անունով մեկից «... իմացանք, որ չորրորդ օրն է, ինչ Չարենցը գտնվում է մեր սենյակից (103-րդ, ընդհանուր՝ Ալ. Չ.) ոչ հեռու խցիկում... մի քանի օր չանցած միջանցքում երևում է Չարենցը, երկու պահակների ընկերակցությամբ.— Ինչպես եք, ընկե՛ր Չարենց,— գոռում են աջ ու ձախ կողմերի խցիկներից:

Նա աջ ձեռքի բութ մատը վեր ցցելով և ժպիտը դեմքին՝ աջ ու ձախ ասում է:— Այսպե՛ս...

Ապա ավելացնում. — Դուք էլ այսպես կացեք:

Հետո պահակների պահանջով հեռանում է նույն ժպիտը երեսին...

Վահանն ասում է, թե «բանտից դուրս հանեին», և անընդմեջ լսվում են գոռոցներ. «— Իսկ ուր է նա պառկած,— հարցնում եմ նորից:

— Արտաքնոցին կից խցիկում,— ասում է նա»...

«Երբեմն-երբեմն նա հայերեն ու ռուսերեն բղավում է.— Սրիկանե՛ր, գազաննե՛ր, մորֆի եմ ուզում. մորֆի տվեք, որ գոնե մի քիչ հանգստանամ»:

— Եվ այսպես մի օր էլ՝ «Ռուս քույրը հայտնում է.— «Նրան այլևս ոչինչ պետք չէ... Նա վերջապես ազատվեց այս դժոխքից...»:

«Դռնապաններ Սիմոնն ու Արդուլը բերում են մի կեղտոտ ու հին դագաղ, որով, ո՜վ գիտե երբվանից սկսած, այս բանտից մեռելներ են դուրս հանել, անդադաղ փոսը նետել և նույն դագաղով նորեն հետ բերել՝ նոր մեռածների համար:

Նրանք մտնում են բանաստեղծի խցիկը: Երբ դուրս են գնում, նկատում եմ «ընկեր» Գոքորն էլ ինձ չափ հետաքրքիր հետևում է կատարվածին: Չեմ համբերում և ասում եմ նրան.

— Այդպես է գրված եղել ձեր Մարքսի կոտրած ձեռքով:

— Ասա՛, մասաղ, իրավունք ունես,— մրթմրթում է նա՝ աղվեսի նման աչքերը վրաս պլշած:

Թե որքան ճիշտ է չգիտեմ, այն օրերին մեր բանտում խոսվում էր, թե մեռնելուց առաջ Չարենցը իր խցիկի պատին գրել է. **«Սա բանտ չէ, այլ գերեզման է, ուր իրենց մշտնջենական նինջն են գտել հայ մտքի մշակները»**:

Ի թիվս նրանց՝ ամենամեծ մշակներից մեկը՝ Չարենցը,— ավելացնենք՝ թողնելով «Գիրք ճանապարհի» բանտային օրինակը:

նագրել է Վ. Նավասարդյանի որդին՝ Բագրատ Նավասարդյանը, **«Խորհուրդ մեծ և սքանչելի»** հոդվածում տեղ գտած այսպիսի տողերով. «Վերջին կես դարու ընթացքին, թերևս ո՛չ ոք՝ հայ իրականության մեջ՝ ինքն իր դեմ այնքան աՀեղ ու անողոք պայքար մղեց, որքան Եղիշե Չարենց: Ներքին մաղձիլներով փորձեց իր հոգիին արմատախիլ ընել իր ժողովրդի ազգային «փառքն ու պատմությունը անցած» (Օ՛, ոչ երբեք...Ալ. Չ.): Փորձեց ուրանալ խորհուրդներ մեծ ու սքանչելի, ժառանգ մնացած Խորենացիին ու Նարեկացիին, և անոնց տեղ ուզեց պատվանդանը կոթողել կարմիր կուռքերուն Հոկտեմբերյան...»:

Եվ ապա յուրատեսակ հոգեսուզումով զուգահեռներ անց կացնելով Քրիստոսի, Չարենցի ու հայ ժողովրդի միջև եզրակացնում է. «... Հավատացե՛ք է հայը հազարամյակներ անընդհատ, որ խավարի, անարդարության և ատելության հովիտեն անցնելով, մարդկությունը պիտի հասնի լույսի՛, արդա՛ր խաղի և անխա՛ռն սիրո կատարներուն:

Եվ միթե չէ՞ «խորհուրդ մը մեծ ու սքանչելի», որ Չարենցի մը պիտի իյնար վկայել, թե ավելի քան որևէ ժողովուրդ, այդ մե՛նք ենք որ հակառակ Հիսուսի առակին, պիտի անցնինք «ասեղի իսկ նուրբ ծակով» և «պիտի մտնենք ապագայի դրախտը անարատ»...[9]

Հակասական, իրարամերժ զննումներ, որպիսիք իրականում վերաբերում են ոչ թե բանաստեղծի ուրանալուն կամ «ներքին մաղձիլներին»՝ այն էլ Հանուն Հոկտեմբերյան «կարմիր կուռքերի» պատվանդան կոթողելու... Ճիշտ հակառակը. մաղձիլները նաև «արտաքին» էին՝ ուղղված պատմական չարադետ այն ճանապարհին, որի արդյունքը եղավ կամ դարձավ մի բուռ Հայաստան և աշխարհասփյուռ հայություն: Ճշմարտությունն այն է, որ **Չարենցը երբեք և ոչ մի պահ չհաշտվեց այդ իրողության հետ:** Ի լրումն՝ ներքին ու արտաքին մաղձիլներով հոշոտեց իրեն այն բանի համար, որ արտերկրում գտնվում էին գործիչներ, որոնք՝ ինչպես կասեր Միք. Նալբանդյանը «հողմ

---

[9] Յուսաբեր, 1957, 5 հունվ.: Հոդվածին կցված է բնաբան՝ քաղված «Պատմության քառուղիներով» պոեմից.

Մոլորակի վրա այս խայտաբղետ,
Աշխարհի սկզբից մինչև վախճանը
Երևի առաջին ժողովուրդն ենք մենք,
Որ կամենանք անդամ-դավաճանել
Անկարող ենք փառքին մեր ու պատմությանն անցած...

Բնականաբար, կոգքին ծննդյան տոնին նվիրված **«Ծանի՛ր զքեզ»** առաջնորդողն է՝ սույն մեծադոր քարոզչությամբ. «Նույնքան ու ավելի սրբազան կոչ մըն էր, որպեսզի մարդիկ իրենց տկարությունները դարմանեին իրենց զորությամբ»: Այնուհետև «Կարմիր» Չարենց նախանիջից «Նաիրիի» Չարենցին առջև և այն, որ պոետը հաչակած էր որպես «Ձիկցիա, միփ, ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն» իր իսկ հոգիին մեջ վերակենդանացավ, իբրև այդ հոգիի մեծագույն ու ճշմարտագույն իրականություն»,— հավաստում է որդի Նավասարդյանը:

արածելով» քարկոծում էին այդ մի բուռ հայրենիքը, որը առանց այդ էլ հոշոտվում էր «կարմիր կուռքերի» դահճային ճիրաններում:

Ամեն դեպքում պատմության, պատմական ճանապարհի վերանայման տրամաբանությունը նորություն չէր, և իզուր չէ վկայակոչվում Նալբանդյանը՝ 19-րդ դարակեսի մարգարեական դասերով. «... Մարդկությունը մի խմորված վիճակի մեջ է գտնվում ներկայումս, մարդկության մեջ երևում է մեծ գործունեություն, մեծ շարժողություն և այն ազգը, որ չկամեր ինքնուրույնաբար շարժվիլ և գործ կատարել, կուլ կերթա մի ուրիշ ավելի գործունյա և խելացի ազգության. **ով ականջ ունի, թող լսի** (ընդգծ.՝ Ալ. Ջ.)»: Եվ այնուհետև՝ «ընդդեմ զինվորվիլ», իսկ այնուհետև՝ **«Մեր հայրերը ազոխ կերան, իսկ մեր ատամները հարվեցան»**[10] և այլն և այլն:

Եվ սակայն, այդուհանդերձ, թվում է, անկարելի է շրջանցել Բագրատ Նավասարդյանի կյանքի ճակատագրական վերջին դրվագը: Հակառակ իր հոր, բայց, երևի թե, նրա պատվիրանով,— անսաց իր ղարաբաղցի, այրապաշտ—որդիապաշտ, արդեն մահացած տատի բաղձանքը, և, որքան հիշում եմ, 70-ականի մոտերքը եկավ Հայաստան: Եվ ինչ— կարճ ժամանակից տարածվեց, թե գործել է ինքնասպանություն... Դե՛, ընդունված կարգով... հոգեկան հիվանդություն է ունեցել...Հազիվ թե լինի կասկած, որ տարած պիտի լինի իր հետ շատ բան... որոշ գործիչների որոշ ծառայություններից: Հասկանալի է, մեծապես տեղյակ հորից՝ Վահան Նավասարդյանից, որը ՀՕՆ-ի և Չարենցի արտասահմանյան ուղևորության ժամանակներից հրապարակայնորեն զարմանում էր, թե՝ այնուամենայնիվ, ինչպես կարելի է **«սակարկել հայրենիքի հետ»**[11]:

Այդու. սույն ընդդեմ տողերի, իհարկե, չնչինագույն մասն է վերաբերում Վ. Նավասարդյանին, որի քննականը «էպիքականից»՝ «Գիրք ճանապարհիով» էապես բանաստեղծի պաշտպանություն—արդարացում է՝ ներառյալ «Ընտիր էջերում» (1946) զետեղված «Իոսիֆ Ստալինին» վերաբերող պաշտպանական փաստարկները՝ նման վերջնահանգումով. «Եթե Չարենցը այսքան

[10] Մ. Նալբանդյան, ԵԼԺ, 1, 1946, էջ 460, 472, 474:

[11] Հայտնապես հիշարժան է, որ աննահանջ հետևողականությամբ «Յուսաբերը» 1958-ի սեպտ. 2-ի թվում՝ ի պատասխան Ռամկ-ի օրգան «Արևի» օգոստոսի 30-ի թվում զետեղված գրախոսության, «Սրտակից բարեկամուհիի մը մաղթանքը իր ընկերուհիին» վերնագրով գրում էր.

«Իր երակներուն մէջ Հայու արյուն կրող, հայ զգացումի տեր մեկը անպայման կը բաղձա տեսնել Մայր Հայաստանը՝ Հայուն դարերու երազը:

Անհնար է, որ նույն հայ մարդը դժգոհ մնա, երբ ուրիշները «միջոցը» գտած են կամ բախտը ունեցած են երթալ տեսնելու հայրենիքը, թող ըլլա սովետ տիրապետության օրով:

Մենք դարձյալ լռեցինք, գիտենալով, թե Հովհ. Քաջազնունիին, Ավետիք Իսահակյանին, Զապել Եսայանին նման մեծ «գեմքեր» երբ ստիպված էին «տուրք» մը վճարել սովետ իշխանության,— մեր ուխտավորները չէին, որ զերծ պիտի մնային այդ պարտադիր տուրքեն...»: Ապա և տարակուսանքով ավելացնում է. «Եղիշե Չարենցին անասելի մեղքեր վերագրող այս քուրջը, 30 օգոստոսի 1958 թիվին մեջ «աներևակայելի, բայց իրական», գրում է՝ «Իշալլահ կ'երթանք Հայաստան և հոն կը սատկինք...»:

մեծ համարում ունենար **«Իոսիֆ Ստալինի» մասին**, ինչո՞ւ այս համարում հետքը չկա իր բովանդակ գրական ստեղծագործության մեջ. ինչո՞ւ մինչև «Թուղթ»-ը Ստալինի հանճարը նա երբեք չտարափոխեց մինչև իր մահը:

Այս «ինչո՞ւ»-ները իրենց պատասխանը պիտի չունենան, որքան ժամանակ Բոլշևիկյան ծիվաղը կը շարունակի իշխել հայ երկրի վրա» (էջ 103):

Միանգամայն տեղին ու հավաստի եզրակացություն... պատմականորեն հաստատվա՛ծ... Ուրեմն և առկախելով՝ շարունակությունը թողնենք «Իսահակյանի հետ Վենետիկում» էջերին՝ վերջնականապես դառնալու ու փակելու համար... վարկա՞ծը, թե՞ ճշմարիտ եղելությունը: Իսկ մինչ այդ.

Հռոմում գնած միակ գիրքը՝ «Чаплин»

Հիշարժան է, որ Չարենցի Հռոմում գնած միակ գիրքը՝ «Եղ. Չարենց, Հռոմ, 925, II 24» նշումով Վիկտոր Շկլովսկու և այլ հեղինակների «Чаплин» հոդվածների ժողովածուն է (Բեռլին, 1923)[12]՝ վկայությունը յուր առանձնակի հետաքրքրության կինոարվեստով և հատկապես Չապլինի արվեստով, որը և պարտավորեցնում է անդրադառնալ ժողովածուին: Մանավանդ, եթե համամիտ ենք Պավել Անտոկոլսկու այն զգացողությանը, թե՞ կարծիքին,— ըստ որի՝ «... Հիանալի, սակայն հարավային արտահայտիչ շեշտեր ունեցող ռուսերենով Չարենցը պատմում էր մեզ հեռավոր դարերի հեքիաթներ ու առակներ: Խորապես թաքնված էր նրա հումորը՝ առանձնապես փափկանկատ մի հումոր, բայց առավել արտահայտիչ և ինչ-որ բանով Չարլի Չապլին հիշեցնող» (ՀԵՉԺ, 1, 37):

Իսկապես ասած, Հռոմում վիճակված տհաճությունների «անդաստանում» հոգեպարար պարգև՝ Շկլովսկու և մյուսների բնութագրական հետաքրքիր դիտարկումներով, առավել ևս կինոարվեստի չապլինյան մեկնակետերի ու յուրօրինակությունների սահմանումներով, մտածումներով ու ասույթներով, որոնցով հագեցած են գրքի բոլոր էջերը:

Եվ պատահականություն նկատենք, թե փոխառություն, առաջին իսկ էջերից շեշտվում-կարևորվում է հենց Անտոկոլսկու նշած Չապլինի արվեստի «փափկանկատ հումորը»՝ սահմանումներով ու դրսևորումներով: Նախ Շկլովսկու շարադրանքում այսպիսիք. Չարլին հավաստում է, որ ինքը՝ ինչ վիճակում էլ գտնվելիս լինի՝ «... առաջին գործը լինում է այն, որ անմիջապես **բարձրացնում է ձեռնափայտը և ուղղում շլյապն ու փողկապը**» (էջ 17). Նա գտնում է, որ «երբ հարուստ մարդկանց վիճակվում է դեշ բախտ՝ այն գոհացնում է հանդիսատեսին» (էջ 20). և այս՝

---

[12] Պահպանվում է Չդ:

«Իմ «տիպը» իրենից ներկայացնում է անգլիացիների միջավայրում զգալի թիվ կազմող այս կամ այն տեսակի սինթեզը» (էջ 21). «Ես ջանում եմ առանձնապես չըչափազանցնել կամ չընդգծել այս կամ այն առանձին պահը» (էջ 33): Համանման այլևայլ բնութագծեր, որոնց, բնականաբար, Զարենցը արձագանքել է **«փափկանկատ հումորի»** *ու* **դատափետող երգիծանքի** *սեփական բնածին զգայություններով, համապատասխանաբար մոտաբերելով ինչպես մեկից, այնպես էլ մյուսից չափավոր կամ չափազանցված իրավիճակներ, պահեր՝ պոեմանման վեպից, «Կապկազից», և ամենից ավելի այս դեպքում 1923-ի սեպտեմբերի վերջերին ստեղծված «Սնոուդեն ամուսիններ կամ ինքնիրեն կոմունիզմ» կինոֆելիետոն-կինոպոեմից: Հիշեցնենք այս գործի գլխավոր անձանց. Միսիս Սնոուդեն, Միստր Սնոուդեն, Ջիլը, Միստր Մակդոնալդ. գործողության տեղը՝ Անգլիա-Р.С.Ф.С.Р.»-ցանկն էլ վերջավորվում է՝* ***«Ջիլլի դերը կատարում է Չարլի Չապլինը (շաբլոն)»*** *չեղատառ-չեչտադրումով,— ավելացնելով որոշ նկատումներ:*

Ակնհայտորեն կինոֆելիետոնը կառուցված է հարուստ (և ոչ միայն հարուստ) մարդկանց վերաբերող չապլինյան վերը քաղված հանգանակով. այն էլ երկակի շրջուն հակադարձությամբ. որքանով, եթե առերես՝ **«Ջիլլոտ», «Ջիլահալած» դեշ բախտը** *վիճակված է անգլիական կողմին՝ մեծապես Միսիս Սնոուդենին, ապա իրականում այն վերաբերում է Р.С.Ф.С.Р.-ին՝ ի դեմս այս Իլյիչի ու նրա կոմունիզմի ուրվականի.*

> ...Իլյիչը ծիծաղում է.
> Իլյիչը-մասը հեռուն:
> Մշուշ:
> Չէ՛.
> Ինչ որ ուրագան է:
> — Ուրվակա՛ն է թափառում
> Եվրոպայում-
> **Կոմունիզմի ուրվականը** (3, 123):

Ասել կուզի «չապլինամետությունը» փաստացի է. անշուշտ, մեր ժամանակներում մոռացված ծիծաղելիի, երգիծականի հնօրյա չափումների համաձայն, ըստ որի այն **խորապես անձնական է և պատկանում է քնաբերդության ճյուղին:** *Նշատակն էլ մարդկային թուլություններ ու հարաբերություններ ձաղկել-պարսավելն է: Հեգնական-կատակայինի դեպքում՝ զինված ծիծաղով-ծաղրով, մինչդեռ լուրջ, պարսավանքի հիմնավոր զենքը՝ զայրույթ-վրդովմունքն է: Այնպես որ մոտաբերելով սեփական երգիծանքի համապատկերը՝ ներառյալ նույն օրերին գրած «Հանգուցյալ պարո-*

նը»,— բանաստեղծը չափես կարող էր գոհ լինել իրենից, իր ընտրած՝ «խորապես անձնական է և պատկանում է քնարերգության ճյուղին» նկատառումից, ասել է՝ նմանությամբ «**... Հուշակավոր Քրիստոսի ժպտաթախիծ աչքերին**» (6, 136–137)։

Կարող էր գոհանալ և Շկլովսկու ու մյուս հեղինակների արձանագրած հատկանշական այլևայլ բնութագծերի համընկնումներից՝ յուր ստեղծագործական հղացումներին, կոմիկական–երգիծական չեզոք, խնայող ու անխնա դառնաշունչ խաղերին, առավել ևս սկզբունքային այս հանգամանքներին. «**Արվեստը հիմունքով իրոնիկ է և քանդարար**». արվեստի հավերժական թեման «այն մարդն է, որն իր տեղում չէ». վերաբերում է «այն մարդուն, որը չի ճանաչում առարկաները» (էջ 37), **ասել է թե ռեալականությունը**։ Եվ կամա–ակամա աչքերի առջև պետք է որ միմյանց հաջորդած լինեն պարոնյանական ջոջերը, «Քաջ Նազարը», նազարակերպ, Մազութի Համոյակերպ... պարոն Մարութեակերպ... այն էլ ինչպիսի տարատեսակ տրամաչափի երգիծական հերոսներ։

Այնուհետև՝ «Հեգնական–երգիծականը թե՛ կոմիկական է, և թե՛ ողբերգական» (էջ 40). ինչպիսին Շկլովսկու կարծիքով՝ ուժեղի ու թույլի հակադրությամբ զարգացող Չապլինի ամենահաջողված կինոնկարն է՝ «Ոստիկանը»։ Եվ այս դեպքում էլ Չարենցի միտքը թևածելու էր մինչև «Մեծապատիվ մուրացկանների» բեմադրության օրեր, հարազատ դերակատարների կերպարանքով, շարժ ու ձևով, որոնելու էր ինչ–ինչ նմանություն–ընդհանրություններ, գտնվելու էր լրացուցիչ ինչ–ինչ «էֆեկտավոր» շարժումներ, մտովի զրուցելու էր Ռ. Սիմոնովի և Գ. Յակուլովի հետ դեկորների, գույների, լուսավորման այլևայլ հարցերի շուրջը։

Բայց շարունակենք ծաղկաքաղը, թեկուզ և գաղափար տալու համար ընթերցողին, թե գեղարվեստական այդօրինակ կողմնորոշումներով, հետաքրքրություններով ու իմացություններով՝ հայրենիք վերադարձող Չարենցը ինչպես կարող էր չընդվզել գրականության ու արվեստի **պրոլետ–ճիզվիտական առտնին ալքիմիայի դեմ...**

Պ. Բոգատիրևի հոդվածն արդեն «Պատիկի» և «Երևակայական կոմսի» վերլուծություն է, կրկին ողբերգա–կոմիկականի լծակով, Չապլինի դերասանական «դիմակի» բնութագրությամբ։ Դարձյալ բանաստեղծին հարազատ ու հետաքրքրող առանձնահատկությունների՝ այս անգամ էլ մեծապես կապված «Կապկազի» գրական ու թատերական բնույթին. ասենք Ղարայի դիմակ. կողքին համարյա կինոյական անսպասելի ու կոնտրաստային փութանցիկ դիմակափոխություններ. բեմից դահլիճ, և հակառակը փոխադարձվող խաղ ու վերաբերմունքի հերթափոխ, որ հիմնավորվում է նաև

Վյաչեսլավ Իվանովի հեղինակավոր տեսակետով, ըստ որի թատրոնում, ինչպես անտիկ կրոնական ծիսակատարություններին, պետք է մասնակցեն բոլորը:

Ճիշտ այնպես, ինչպես հետագայում ուղղիչ տանը Չարենցի կազմակերպած ներկայացումներին մասնակցում էր կալանավորների բազմադեմ համայնքը:

Նույնը կարելի է ասել՝ դառնալով գեղարվեստի այլ ճյուղերի հետ կինոարվեստի առնչություններին վերաբերող Կ. Տերեչկովիչի նկատումներին. Թատրոնի հետ՝ երեքչափյա դեկորացիա, գեղանկարչության հետ՝ լույս և գույն, լուսային դերադրական էֆեկտներով, գրականության հետ ընդհանրությունը՝ հիմնականում սյուժե. ընդ որում այդ առումով մատնանշվում է անեկդոտները կինոնկարի նյութ դարձնելու Չապլինի առանձնակի հակումը:

Անեկդոտի՝ ասել է բամբասանքի հզոր տեսակի, որով լի են պոեմանման վեպի, «Կապկապի», «Երևանի ուղղիչ տնից» էջերը:

Բազմաբնույթ այս ամենի արդյունքում էլ ի մի է բերվում Չապլինի դերասանական ու ռեժիսորական դիմապատկերը, և ապա արվեստի էությունը: Համարյա մաթեմատիկորեն մշակված դերասանական «դիմակ», նույնպիսի աշխատանք նյութի վրա՝ գույներից, լուսային էֆեկտներից սկսած, շարժումների, անցումների բոլոր բաղադրամասերով: Այստեղից էլ հետևում է արվեստի էության խտացված բնութագիրը. «Խորապես մշակված գեղարվեստական անբնականություն (ընդգծ.՝ Ալ. Զ.), որը հնարավորություն է ընձեռում կինեմատոգրաֆորեն դաս–դասել և գործի դնել շարժումները՝ ինչպես առանձին արտիստի, այնպես էլ կոմպոզիցիոն շարժումները՝ խմբերի» (էջ 104): «Ինքնըստինքյան՝ տարբեր ուժի ու բնույթի երկակի շարժում, որոնցով Չապլինը հասնում է աննախադեպ–անօրինակ արդյունքների (էջ 106). իսկ Մաքս Լինդերի բնութագրով, որով և Չապլինը՝ «... յուր կոմիկական հանդերձանքի ամբողջ փայլով ճանաչվում է «կինեմատոգրաֆի արքա» (էջ 121):

Ժամանակի ճանաչված գեղագետ–կինոգետների ներկայացվող դիտարկումները, ինքնին, թելադրում–պարտադրում են քննության առնել ու մեկնաբանել 20–րդ դարի հայոց գրականության ընդհանրությունները կինոարվեստի հետ: Նորարարական բազմապիսի առումների շարքում արձանագրելու՝ հատկապես շարժման–պլաստիկայի գործոնի հզորացումը ինչպես մեկ անհատի, այնպես էլ խմբայինի բնութագծերով: Սկզբնապես և առավել ուժով արտահայտված դարամուտի պոեզիայում, ապա և այդ ավանդների խորացող–զորացող ընթացքներով Չարենցի ստեղծագործու-

թյան մեջ. Հավասարապես բանաստեղծություն, արձակ, թատերգություն, ներառյալ գեղարվեստական մտածողությունը՝ մեկնակետերի ու հայացքների ամբողջ համալիրով:

Հարցեր, որպիսիք պետք է որ շարունակվեն արծարծվել նաև բանաստեղծի Բեռլինում գնած գրքերի առնչությամբ և դեպքում:

* * *

Մինչդեռ հերթական առաջինը Վենետիկն է... Ավետիք Իսահակյանը... Սուրբ Ղազարը... ապա ո՛չ միայն...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԽՈՍՔԸ 5

1923 ԹՎԱԿԱՆ
ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԻ ԽԱՉՈՒՂԻՆԵՐՈՒՄ 7

Սաղրիչ նոր իրադարձությունների շեմին 7
«Ռոմանս անսերը»՝ գրապայքարի հարկադիր մարտահրավեր 11
«Правдист» Արտաշես Կարինյանը Չարենցի ահեղ քննադատ...
Տիգրան Հախումյանը «զինակից»... 16
Պատասխան ...խուլիգանների «գրական» արշավանքին 22

ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ «ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ»... 25

Տ. ՕԼԳԵՆԻՆԻ «ՓՐԿԱՐԱՐ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՐՁ... 25

ՀԱՆՈՒՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 41

Հովհաննես Թումանյանի մահը... Չարենցի արձագանքները 41
«Ռուսական գրականության երեկը, այսօրը և ապագան»... 47
Գրականության և արվեստի դիսկուսիոն ակումբ 54
Ե. Չարենց և Մ. Սարյան. մտերմության սկիզբը 55
Թատերական կյանքը. մտերմության սկիզբը Ա. Ռսկանյանի
և Վ. Փափազյանի հետ 62

ԳՐԱՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 74

Ծանրակշիռ հանուն... հանուն Չարենցի 78

«ԿՈՄԱԼՄԱՆԱԽԸ» ԸՍՏ ՀԱՐԿԻ
ՏՈՒՐՔ ԱՐՑԱԽԻՆ ՈՒ ՆԵՐԳԱՂԹԻՆ 85

Վերհարնի և Ուիտմենի հետ 92

ԴԱՎ «ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ»...
ՏԵՎԱԿԱՆ ՔՈՒԺՈՒՄ ԹԻՖԼԻՍՈՒՄ 100

Թիֆլիսում–հիվանդանոցում 106
Գրական մթնոլորտը՝ ինչպես միշտ քաղաքականության հայելի . . . 113

«ԿԱՊԿԱԶ»... ԹԱՄԱՇԱ՞... ԹԵ՞ ՔԱՆԱԴՐԱՆՔ 119

Թեր ու դեմ արձագանքներ Թամաշայից 131
«Կապկազին» առնչակից ևս երեք դրվագ... 136
Հավելված. Լենինը և Բրեստի խաղաղությունը
(Համառոտ տեղեկություններ) 140

ԼՈՉԱՆ ... ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ «ԿԻՆ ՃԱՄՓԱՄԻՋԻ» 142

«Սնոտդեն ամուսիններ, կամ ինքնիրեն կոմունիզմ»... 151

ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՕՋԱԽՆԵՐՈՒՄ 154

ՔՈՒԼՈՐԻ՛Ն, ՔՈՒԼՈՐԻ՛Ն, ՔՈՒԼՈՐԻ՛Ն... ԱՊՐՈՒՄ Է ԳՈՐԾԸ 162

Չարենցի, Մայակովսկու և ֆուտուրիզմի ջախջախումը... 165
Հուսախաբ օրեր ու ամիսներ 171
Ճանապարհորդություն Ուելսի ժամանակի
մեքենայով դեպի 2500–ի... Երևան... 172
Ուելսի հետ «Ճանապարհորդություն»...
քաղաքակրթության քառուղիներով .176
«Եվրոպայի մայրամո՞ւտի»՝ թե՞ մշակութային
հարստության հետ... 182
«ՍՏԱՆԴԱՐՏԸ» աջով ու ահյակով 188
Արտասահմանյան ուղևորության նախաշեմին 190

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՕՐԵՐ...
«ՄԻԹԵ ՍԱ՞ Է ԵՐԿԻՐԸ ՆԱԻՐԻ...» 195

«Պրիզունների գյուղում»... 196
Հակապատերազմական շաբաթ Երևանում 201

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ
ՍՏՈՒԴԻԱՆ ԵՎ ՉԱՐԵՆՑԸ 204

Նախապատմությունը՝ Առաջին ստուդիայի 1919-1922 թթ.
գործունեության 204
Դրամատիկական երկրորդ ստուդիա
Ռուբեն Սիմոնով և Չարենց 209
Ստուդիան Երևանում 216
«Երկիր Նաիրի» – «Մասն երրորդ և վերջին»... 217
Լրացումներ պոեմանման վեպի ծանոթագրություններին 225

ՍՏՈՒԴԻԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ...
ՉԱՐԵՆՑԸ ՀԱՆՈՒՆ ՍՏՈՒԴԻԱՅԻ 230

Մշտապես Հակոբ Պարոնյանի հետ 238

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՇԵՄԻՆ 240

Թվում է... գրականության պատմության համար
ավելորդ չէ... (Հավելված) 241
Գուրգեն Մահարու հետ... Մահարու գրչով 247
Ինքնակենսագրություն՝
Գրված Սուրեն Աղաբաբյանի համար 258

ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԸ ՄՈՏԵՆՈՒՄ ԷՐ
ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻՆ... 264

Հավելված 266

Ս. ՀԱԿՈԲՅԱՆԻ «ԱՐԵԳԸ»...
Հ. ՕՇԱԿԱՆԸ ԱՅՊԱՆՈՒՄ Է ՉԱՐԵՆՑԻՆ... Ո՛Չ ՄԻԱՅՆ... 271

ՀՕԿ... ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 283

Երկու օր Բաքումում 285
«Դեպի Ստամբուլ» 287
Տրապիզոն... «Լենինն ու Ալին» 288

ՊՈԼԻ՛Ս, ՊՈԼԻ՛Ս... 290

(Անհրաժեշտ հետադարձ–անդրադարձ) 293
«Խաչված երազներ»... Բողերից՝ Սամեն, Ռեմբո և Մարիների
համեմունքով... Ա. Չոպանյան, Ռ. Սևակ... 294
Պոլսական ապրումներ ու վերապրումներ... 313
«Լենինն ու Ալին»... հակառակ նժարին «Ծովափին»,
«Դեպի Ստամբուլ» և «Ստամբուլ»... 320

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱԹԵՆՔՈՒՄ 328

Ռամկավարների հետ՝
Արշակ Չոպանյանի երաշխավորությամբ... ևս 330
Հովհաննես Պողոսյանը՝
ըստ Չոպանյանի հետ նամակագրության 341

ՀԱՆՈՒՆ «ԱՐԱՐԱՏԻ» ՈՒ ՆԵՐԳԱՂԹԻ 347

Ահա թե ինչպիսին է եղել ընդունելությունը
ՀՕԿ–ի ներգաղթ կազմակերպողներին... 352
Վկայություն հանուն Հայոց եկեղեցու
(Հավելված) 361
Հավելված... «Խիկարի» 363
Քաղաքական հայտնի և կռահելի հանգույցներ... 367
Հունահայ մամուլի հետագա դիրքորոշումը 371
Մշտապես անտիկ Հելլադայի հետ 376
Ամերիկահայությունը հանուն ներգաղթի.
արդյունքով... և հանուն Չարենցի 378

ՀՌՈՄ. ԶԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԾԻԿ...
ՇՐՋՈՒՆ ԸՆԴՀԱՏԱԿՈՎ 383

Արման Սարյանի լրացում–ճշտումները՝
մեկնաբանություններով հանդերձ 399

ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ...
ԵՎ ԶԱՐԵՆՑ ՈՒ ԻՍԱՀԱԿՅԱՆ 405

Շարունակվող արծարծումներ՝ հօգուտ Չարենցի... 416
Հռոմում գնած միակ գիրքը՝ «Чаплин» 421

ԱԼՄԱՍՏ ԳՐԻԳՈՐԻ ԶԱՔԱՐՅԱՆ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Կյանքը, գործը, ժամանակը

Գիրք 2

Խմբագիր՝ Սերգեյ Սարինյան
Սրբագրիչ՝ Վահան Գևորգյան
Համակարգչային շարվածքը՝ Ալիսա Մելքումյանի
Համակարգչային ձևավորումը՝ Լալա Հովսեփյանի

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84/16
Ծավալը՝ 27 տպ. մամուլ, տպաքանակը՝ 500
Գինը՝ պայմանագրային

Տպագրվել է «Զանգակ–97» հրատարակչության տպարանում

A II / 89130

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220089130